

Ս. Վ. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

**ՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Աշխատությունը ներկայացնում է հայերենի ուղղագրության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը: Հնագույն վիմագրության և ձեռագիր մատենագրության ընձեռած հնաբանությունների սահմաններում նկարագրված է մեր ուղղագրության վիճակը հիմ և միջին դարերում, ապա ներկայացված է տպագիր գրության ուղղագրությունը մինչև մեր օրերը: Քննված են ուղղագրական բանավեճերը, 1922 թ. բարեփոխությունը և հետագա մասնակի բարեփոխությունները:

Խմբագիր՝ Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Գ $\frac{704-73}{39, 7-1-1}$ 30-73

© *Նրբանի պետական համալսարանի
հրատարակչություն, 1973 թ.*

ГЮЛЬБУДАГЯН СИРАК ВАГАРШАКОВИЧ

**ИСТОРИЯ ПРАВОПИСАНИЯ
АРМЯНСКОГО ЯЗЫКА**

(На армянском языке)

Издательство Ереванского университета

ЕРЕВАН — 1973

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Մեզ հարկավոր է մի պատմական քարեխիղճ ուսումնասիրություն մեր հին լեզվի ուղղագրության, սկսած Ե դարից մինչև մեր օրերը:

Ղ. ԱՂԱՅԱՆ

Եթե հաջողին բանասերք, այսպես ըսենք հայոց ուղղագրության ժամանակագրական ապահով պատմություն մը գրել, շատ բան շահած պիտի ըլլա նաև հնագիտությունն, ինչպես նաև հայոց լեզվի պատմությունն:

Հ. ՏԱՇՅԱՆ

Հայերենի ուղղագրության պատմության ուսումնասիրության հարցը վաղուց է հասունացել: Դեռ XIX դարի մտածողներն են այդ պահանջը ներկայացրել՝ նրա կարևորությունն ընդգծելով: Մենք էլ, անսպույժ այդ ձայնին, որոշեցինք մեր ուժերի ներածի չափով ուսումնասիրել և ընթերցողին ներկայացնել հայերենի ուղղագրության անցած ուղին:

Աշխատության հիմքում ընկած է հիմնականում բնագրային ուսումնասիրությունը, թեև նկատի ենք ունեցել նաև քերականության գրքերում ասվածը, մանավանդ ուշ շրջանում:

Մինչև ԺԷ դարը ուղղագրությունը ներկայացված է վիմական արձանագրությունների և ձեռագիր մատենագրության ընձեռած նյութի հիման վրա: Օգտագործել ենք Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի Մ. Մաշտոցի անվան ինստիտուտի՝ Մատենադարանի թվակիր ձեռագրերը, ինչպես նաև հին և միջին դարերի մատենագրության հրատարակված քննական բնագրերը, եթե աշխատասիրողները տողատակ տվել են ուղղագրական տարբերակները: Պիտի նկատենք, սակայն, որ քերն են

բնագրերի այդ կողմի վրա ուշադրություն դարձրել: Գիրքը ընթերցողին մատչելի դարձնելու նպատակով սովորաբար բնագրեր կազմողները փոխում են հին ուղղագրությունը, շտկում բնագրի «սխալները»: Օրինակ՝ Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» 1938 թ. հրատարակության ծանոթագրությունում պրոֆ. Հ. Մանանդյանը գրում է. «Ծանոթությունների մեջ չենք նշանակած A ձեռագրի այն ընթերցվածները, որոնք վերաբերում են օ կամ ա, ե կամ է, օ կամ ո, բառի միջուկ՝ ը-երի և յ-ով կամ առանց յ-ի (բառի վերջում) ուղղագրություններին: Օրինակ՝ գրել ենք «սակա», փոխ. «սակօ», «կարօտ են», փոխ. «կարստ են», «ասուլ», փոխ. «ասաուլ», «գտաք», փոխ. «գըտաք», «այլոյ», փոխանակ՝ «այլո» (էջ 3):

Այս տեսակետից անթերի են Մառի աշխատասիրությամբ Ալգեկցուն վերագրվող ստակների, Կ. Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությամբ Կ. Գանձակեցու Պատմության հրատարակությունները, ուր կազմողները ոչ միայն տողատակ ներկայացրել են ուղղագրական տարբերակները, այլև առաջաբաններում անդրադարձել ուղղագրությանը:

Օգտագործել ենք հնատիպ գրականությունը՝ սկսած հալ առաջին տպագիր գրքերից («Ուրբաթագիրք», «Պարզատումար»):

XIX—XX դդ. ուղղագրությունը ներկայացված է զանազան առաջարկների ու բանավեճերի քննությամբ և պարբերականների նյութերով: Նախընտրել ենք պարբերականները և ոչ առանձին հեղինակների վեպերն ու բանաստեղծությունների ժողովածուները՝ նկատի ունենալով, որ պարբերականներում մի կողմից՝ ավելի շատ հեղինակներ են հանդես գալիս, ուստի և շատ մտավորականների ուղղագրությանն ենք ծանոթանում, մյուս կողմից էլ՝ հրատարակության պարբերականությունը հնարավորություն է տալիս տեսնել ուղղագրական փոփոխությունների ընթացքը:

Աշխատանքը չձանրաբեռնելու նպատակով՝ ա) օրինակները բերում ենք առանձին բառերով, բառակապակցություններով և կամ ամփոփ նախադասություններով, բ) հաճախ չակերտների մեջ չենք առնում՝ մտածելով, որ առանց այդ էլ նրանք տարբերվում են սկզբնաղբյուրի նշված էջերով, մեծատառով, գ) միևնույն գրքից բերված օրինակներից միայն առաջինի դիմաց ենք գրում սկզբնաղբյուրը և էջը, մնացածի դիմաց միայն էջն ենք նշում, դ) որոշ գրքերի վերնագրեր կրճատ ենք բերում՝ լրիվը նշելով գրականության ցանկում: Փակագծերի մեջ նշում ենք ձեռագրի համարը, դարը, էջը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիրքը բանավոր խոսքի արտահայտությունն է զծային պայմանական նշաններով: Գրի միջոցով հնչյունային խոսքը դառնում է տեսանելի ու տեական, կարողանում է հաղթահարել ժամանակն ու տարածությունը՝ Նա ամենաուժեղ լծակն է մարդկային հասարակության հանրակեցության, դիտության ու մշակույթի զարգացման և տարածման:

Գրի ծագումը կորչում է մարդկային հասարակության պատմության հնագույն շրջանի մշուշում, ինչպես մարդու, նրա հնչյունային լեզվի ծագումը: Մի բան, սակայն, պարզ է. գիր ստեղծելու համար մարդը պիտի զարգացման մի որոշակի աստիճանի հասած լիներ: Ինչպես որ լեզուն մարդու ոչ ասուն վիճակից ասուն, մտածող դառնալու առաջին քայլն է, այնպես էլ գիրը խթանն է նրա բաղաբակրթության ու մշակույթի զարգացման:

Գիրը կատարելագործվել է աստիճանաբար, մարդկային հասարակության զարգացմանը համընթաց:

Հայ գիրն աշխարհի հնագույններից է, ստեղծել է երանելի Մեսրոպ Մաշտոցը հինգերորդ դարի արշալույսին: Պատմական այդ ժամանակաշրջանում, երբ հայ պետականության, ժողովրդի գոյության հարցը լուրջ վտանգի տակ էր Արևելքի (Պարսկաստան) ու Արևմուտքի (Բյուզանդիա) նվաճողական քաղաքականության հետևանքով, հայ գիր ու գրականություն ունենալը պետականության պահպանության ամենակարևոր միջոցներից մեկն էր: Դա նաև քրիստոնեությունը Հայաստանում տարածելու, միասնական դարձնելու ամենալավագույն միջոցն էր, իսկ քրիստոնեությունը ֆեոդալական Հայաստանի ինքնուրույնության հուսալի հենարաններից մեկն էր: Ահա թե ինչու թագավորն ու կաթողիկոսը գրերի հարցում միասնական էին և գործուն մասնակցություն ունեցան նրանց ստեղծմանը՝ օգնելով Մաշտոցին:

Հայ ժողովրդի գոյատևման համար բախտորոշ, կենսական նշանակություն ունեցավ Մաշտոցի գյուտը. ինչ որ չկարողացան անել զենքն ու զրահը, կատարեցին գիրն ու գրականությունը:

Մեր նպատակից դուրս է քննել գրերի գյուտի, նրա ժամանակի, Մաշտոցի գործունեության մասին եղած տարակարծիքները, այդ մասին շատ են գրել հայագետները (Յ. Մարկվարտ, Հ. Աճառյան, Գ. Տեր-Մկրտչյան, Հ. Մանանդյան, Մ. Աբեղյան, Ն. Ադոնց, Գ. Սեակ, է. Աղայան, Ա. Աբրահամյան և այլք): Ելնելով նրանց ուսումնասիրություններից¹, կարելի է համարձակ ասել, որ հայերենի 36 գրերն էլ ստեղծել է Մաշտոցը, Ե դարի սկզբին: Հնարավոր չէր, սակայն, որ Մաշտոցը Դանիելի գրերը երկու տարի (թեկուզ և երկու ամիս) օգտագործելուց հետո ամբողջովին դեն նետեր և չօգտագործեր իբրև նախատիպար հայ գրերի համար: Զի բացառված, որ Դանիելի գրերը հարավ-սեմական մեռած լեզուների գրեր լինեին, ինչպես ենթադրում է Գ. Սեակը, ուստի և անծանոթ իրենց՝ Դանիելին, Մաշտոցին, Սահակին: Եթե դրանք իրանա-ասորական գրերից լինեին, ինչպես կարծում է Մարկվարտը, ապա Դանիելը, Մաշտոցը և մյուսները կճանաչեին: Մաշտոցը հայ գրերն ստեղծել է՝ հենվելով Դանիելյան գրերի, իրանական, ասորական, հունական այբուբենների վրա: Ըստ որում, չպետք է ամեն կերպ ձգտել ցույց տալու, թե Մաշտոցի ո՛ր գիրը ո՛ր այբուբենից է սերում: Գրերի զգալի մասը նա ստեղծել է իր իսկ ստեղծած տառերի ձևափոխմամբ: Մեծ գիտնականը ամեն կերպ խուսափել է օտար այբուբենների նմանությունից, ստեղծել է միանգամայն ուրույն, ինքնատիպ, հայերենին հատուկ գրեր²:

Մաշտոցի օգտագործած այբուբեններից երկուսը՝ ասորերենն ու պահլավերենը, ունեին կցողական համակարգ և գրվում էին աջից ձախ ուղղությամբ, իսկ հունարենը անջատական էր, գրվում էր ձախից աջ: Կցողականի անհարմարությունն այն էր, որ յուրաքանչյուր բաղաձայն տարբեր դիրքերում տարբեր ձևով էր գրվում, մյուս կողմից՝ դժվար էր ու անհարմար ձախընթաց գրությունը³:

Մաշտոցը գիտակցելով այդ դժվարությունները՝ ընտրեց անջատական համակարգը և գրության ձախից աջ ուղղությունը: Ասորական ու պահլավական գրերի մեջ, իբրև կանոն, ձայնավորներ չկային, Մաշտոցը հունարենի օրինակով տառեր ստեղծեց նաև ձայնավոր հնչույթների համար՝ հեշտացնելով գրել-կարդալը: Մաշտոցին ծանոթ լեզուներում հաճախ միևնույն տառը տարբեր դիր-

քերում տարբեր հնչույթ էր արտահայտում, օգտագործվում էին զանազան նշաններ՝ այս կամ այն տառի ճիշտ հնչումը տվյալ դիրքում արտահայտելու համար: Մաշտոցը խուսափեց դրանից, ստեղծեց մի հնչյունին մի գիր սկզբունքով այբուբեն: Այսպիսով՝ աջընթաց գրությունը, անջատականությունը, յուրաքանչյուր հնչյունին մի գիր համակարգը Մաշտոցի այբուբենը դարձրին կատարյալ³:

Գրերի գյուտի հեղինակը մեծ հմտությամբ ուսումնասիրելով հայերենի հնչույթային համակարգը՝ ընտրում է այն հնչույթները, որոնք ընդհանուր էին հայերի համար, խոսվածքային չէին, ու նրանց համար է տառեր ստեղծում:

Մեր այբուբենի շարքը Մաշտոցի սահմանածն է, իբրև դրա ապացույց Աճառյանը «Հայոց գրեր»-ում (272) վկայակոչում է Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը և Դավթակ Քերթովի «Ողբը» Աղվանից Ջուանշիր իշխանի մահվան առթիվ, որոնց տողերն սկսվում են այբբենական կարգով և համապատասխան են մեսրոպյան շարքին: Այս կարծիքին են և մյուս բանասերներն ու լեզվաբանները: Օրինակ՝ Վ. Հացունին գրում է. «Այբուբենի կարգը նույնն էր միշտ, ինչոր այժմ է», և իբրև ապացույց բերում է Թրակացու Թարգմանության «Յուցակ վախճանական գրոցը», ուր բառերը դասավորված են ըստ վերջավորության գրերի այբբենական կարգի՝ ողբ, ազգ, մարդ, պարզ, բազէ, հաղթ, վարժ, բարի, տալ, խորիս, ինծ, տունկ, մահ, հանդերձ, Մանուկ, կինճ, որմ, խոյ, Տարաւն, ուշ, ունշ, ամպ, որջ, կուռ, հիւս, Խոսրով, կոյտ, այր, ոյց, իրաւ, Թափ, կնիք: Զկան ա, ե, ը, ո տառերը, որոնք բառավերջում չէին լինում⁴:

Մեր այբուբենի 10 տառը ձախաճայաց են (Գ, Դ, Ժ, Ղ, Յ, Զ, Պ, Վ, Զ, Զ), 18-ը՝ աջաճայաց (Ա, Բ, Ե, Է, Ը, Թ, Ի, Լ, Խ, Կ, Զ, Մ, Ն, Ծ, Ռ, Բ, Ք), իսկ 8-ը՝ միջին դիրքով (Ս, Ծ, Ո, Զ, Ս, Տ, Յ, Փ):

Առանձին քննության հարց է մեր տառերի տեսակների ու ձևերի պատմությունը, որով զբաղվում է հնագրությունը: Այդ մասին շատ են գրել (Զ. Տաշյան, Հր. Աճառյան, Ա. Աբրահամյան, Կ. Ղաֆադարյան և ուրիշներ): Մեր նպատակից դուրս համարելով այդ հարցը՝ նշենք միայն, որ հիշատակվում են հետևյալ տառատեսակները՝ մեսրոպյան երկաթագիր (Ե—Ը դար), միջին մեսրոպյան (Ը—Ժ դար), փոքր երկաթագիր (Թ—Ժ դար), բոլորգիր (ԺԲ-ից ի վեր), նոտրգիր (ԺԳ—ԺԸ դար), շղագիր (ԺԸ—ԺԹ դար), նոր շղագիր (ԺԹ դարից մինչև այսօրվա ձևագիրը)⁵:

Մեսրոպյան երկաթագիր տառերը իրար հավասար մեծություն

էին, բացառութեամբ Փ, Ք տառերի: Հետագայում հավասարությունը խախտվում է և նոտրգրում է կարգավորվում: Ձևավորվում են՝ վերնական տառեր, որոնք վերին մասում թև ունեն (Ե, Ժ, Պ, Հ, Ճ, Մ, Ն), ստորնական, որոնք ստորին մասում պոչ ունեն (Բ, Գ, Դ, Զ, Ը, Լ, Ժ, Զ և այլն), միջնական, որոնք գուրկ են թևից կամ պոչից (Թ, Ի, Խ, Կ, Է, Յ): Տառերի անունները հայտնի են Ե դարից, որոշ տարբերությամբ: Օրինակ՝ Ը-ն այսօր կոչում ենք ԸԻ, հնում անվանել են Եթ, Ի-ն կոչում ենք Ինի, հնում անվանել են Ին. Ը-ն կոչում ենք Ըու, հնում կոչել են Ըոյ⁶:

Հր. Աճառյանը մեսրոպյան գրերի հնչումը որոշելու շորս միջոց է առաջարկում. 1. այբուբենի դասավորությունը (հայերեն, վրացերեն և հունարեն այբուբենները գրեթե միևնույն դասավորությունն ունեն), 2. Թրակացու քերականությունը, 3. օտար լեզուներից փոխառյալ բառերի տառադարձությունը, 4. հայերենից օտար լեզուներին անցած բառերի տառադարձությունը⁷:

Ուղղագրություն: Ուղղագրությունը տվյալ լեզվի գրության ընդունված կանոնների համակարգն է: Գրությունը լինում է բառագրային, երբ բառն են արտահայտում մի գրով (օրինակ՝ չինարենում), վանկագրային, երբ վանկն են արտահայտում մի գրով (օրինակ՝ ասորերենում) և հնչյունագրային, երբ հնչյունն են արտահայտում մի գրով (օրինակ՝ հայերենում, եվրոպական լեզուներում):

Ամենակատարյալը հնչյունագրությունն է, որի ուղղագրությունը հիմնվում է հնչական, ձևաբանական և ավանդական սկզբունքների վրա: Հնչյունագրային լեզուների այբուբենն ստեղծվում է սովորաբար հնչույթային համակարգին համապատասխան: Այս դեպքում յուրաքանչյուր գիր մի հնչույթի պայմանական գծանշանն է, և ուղղագրությունը համապատասխանում է ուղղախոսությանը: Ասում ենք պայմանական, որովհետև տառը չի բխում հնչույթի էությունից, ուստի միևնույն հնչույթը տարբեր լեզուներում տարբեր գծանշաններով կարող է արտահայտվել: Այսպես՝ միևնույն դ հնչույթը ռուսերենում արտահայտվում է Զ տառով, իտալերենում, գերմաներենում, ֆրանսերենում, անգլերենում՝ Ժ, հունարենում՝ Ծ, հայերենում՝ դ տառով: Նույնիսկ միևնույն լեզվում միևնույն հնչույթը բառի տարբեր դիրքերում տարբեր տառերով կարող է արտահայտվել: Օրինակ, ժամանակակից հայերենում ՚ հնչույթը կարող է արտահայտվել ք և դ տառերով (թերթ, հարթ, բերդ, մարդ): Գիրը իր պայմանական բնույթով, իբրև հնչույթի

պայմանական գծանշան, նման է բառին, որը հասկացության պայմանական անվանումն է: Բառի ձևը, հնչյունակազմը, նույնպես չի բխում նրա արտահայտած իմաստից, ուստի և միևնույն իմաստը տարբեր լեզուներում տարբեր բառով է արտահայտվում:

Յուրաքանչյուր լեզու իր տառերի ընդունված համակարգն ունի, որ կոչվում է այբուբեն:

Հնչական ուղղագրության սկզբունքն է՝ գրիր այնպես, ինչպես արտասանում ես, արտասանիր այնպես, ինչպես գրում ես: Սա այն հեշտ ու լավագույն գրությունն է, որին ձգտում են ժողովուրդները: Սակայն դա սովորաբար երկար չի պահպանվում: Կենդանի լեզուն, բանավոր խոսքը գտնվում են հարափոփոխ վիճակում, մինչդեռ գրավոր խոսքը մի տեսակ պահպանողական է: Բառը (նրա հնչյունակազմը) բանավոր խոսքում փոփոխության է ենթարկվում, որը գրությամբ հաճախ չի արտահայտվում և առաջանում է խզում բանավորի ու գրավորի միջև: Արտասանությունը նոր է լինում, գրությունը՝ հին: Այստեղից էլ ձևավորվում է ավանդական կամ պատմական ուղղագրությունը:

Եթե հնչյուններն իրենց ներքին օրինաչափությամբ, հնչյունական օրենքով են փոփոխվում, անկախ խոսող մարդկանց կամքից ու առանց նրանց գիտակցական միջամտության, ապա գիրը կարող է փոխվել միայն մարդկանց գիտակցական միջամտությամբ: Ուղղագրության մեջ փոփոխություն մտցնելը դժվար չէ, դժվարը հասարակությանն ընդունել տալն է: Ահա թե ինչու գիրը մնում է, հնչյունը՝ փոխվում, արտասանությունը ժամանակակից է լինում, գրությունը՝ ավանդական, պատմական: Կարիք է լինում կանոն ստեղծել, թե ո՞ր հնչույթը բառի ո՞ր դիրքում ի՞նչ տառով պիտի արտահայտել:

Բայց միայն հնչական ու ավանդական սկզբունքներով չէ, որ առաջնորդվում է հնչյունագրությունը, կա և ձևաբանական սկզբունք: Հաճախ կարիք է լինում հաշվի առնել բառի կազմությունը, ձևաբանական կազմը: Այս դեպքում պահպանվում է քերականական հին ձևը, անկախ արտասանությունից: Օրինակ՝ ֆրանսերենում գրվում են *parlent, elles, թեև կարդացվում են՝ parl, el:* Ռուսերենում *свадил, сдал, сшиб, сжарил, счесал* բառերում պահպանվում է *с* նախդիրը, թեև այդ բառերը արտասանվում են՝ *սվալիլ, գդալ, շշիպ, ժժաբիլ, շշիսալ:* Գերազանցապես այս ձևաբանական սկզբունքով է ռուսերենի գրությունը: Այս սկզբունքը ինչ-որ չափով նաև ստուգաբանական է:

Ուղղագրութեան, իբրև լեզվաբանութեան մի բնագավառի, խըն-
դիրն է՝ սահմանել 1. հնչույթների գրային ճիշտ արտահայտութիւ-
նը ձևույթների ու բառերի կազմում (օրինակ՝ ո՛ր դիրքում ի՛նչ
տառով են արտահայտվում փ, ք, ֆ, օ հնչունները ժամանակակից
արևելահայերենում), 2. բառերի միացյալ կամ անջատ-անջատ
գրելու կանոնները (օրինակ՝ տասնհինգ, հարյուր քսան, տեղ-տեղ),
3. մեծատառի գործածութեան դեպքերը, 4. տողադարձի կանոն-
ները, 5. փոխառյալ հատուկ անունների տառադարձութիւնը:

Ուղղագրութիւնը կախված չէ լեզվի քերականական կառուց-
վածքից, թեև առանձին դեպքերում ձևաբանական փոփոխութիւն-
ները կարող են ազդել նրա վրա: Տվյալ լեզվի քերականական կա-
ռուցվածքը կարող է փոխվել, իսկ ուղղագրութիւնը պահպանվել և
հակառակը, քերականական կառուցվածքը կարող է պահպանվել,
իսկ ուղղագրութիւնը՝ փոխվել: Մինչև 1922 թ. գրաբարի ու գրա-
կան աշխարհաբարի ուղղագրութիւնը նույնն էր, թեև քերակա-
նութեամբ նրանք արմատապես տարբերվում էին: Այսօր էլ սփյուռ-
քահայ գրավոր խոսքը գրաբարի ուղղագրութեամբ է: 1922 թ. մեծ
փոփոխութիւն կրեց ՍՍՀՄ սահմաններում գործող արևելահայե-
րենի ուղղագրութիւնը, թեև քերականութիւնը գրեթե մնաց նա-
խահեղափոխական շրջանի մակարդակին: Ուրեմն ուղղագրութեան
պատմութեան շրջանաբաժանումը կարող է չհամընկնել լեզվի զար-
գացման շրջանաբաժանմանը:

Ահա թե ինչու մենք հայերենի ուղղագրութեան պատմութիւնը
ներկայացնում ենք ոչ թե ըստ հայերենի պատմութեան շրջանա-
բաժանման, ասենք՝ գրաբարի ուղղագրութեան, միջին հայերենի,
գրական աշխարհաբարի, այլ ըստ մեր գրութեան մեջ կատարված
շրջադարձային փոփոխութիւնների, որը կարող է համընկնել կամ
տարբերվել հիշյալ շրջանաբաժանումից: Ըստ այդմ էլ մեր ուսում-
նասիրութիւնը ներկայացնում ենք հետևյալ բաժանումով.

1. Հայերենի ուղղագրութիւնը Ե—Թ դարերում.— Բնորոշ գծե-
րը. գերազանցապես դասական գրաբարի ուղղագրութեան պահպա-
նում՝ գրիւր այնպես, ինչպես արտասանում են և արտասանիւր այն-
պես, ինչպես գրում են սկզբունքով: Գործում է նաև ձևաբանական
սկզբունքը: Կան շեղումներ, որոնք, սակայն, չեն խախտում համա-
կարգը: , ջ , յ

2. Ժ—ԺԷ դարերում.— Արտասանութիւնը հեռանում է գրու-
թիւնից, ձևավորվում է նաև ավանդական (պատմական) ուղղա-
գրութիւնը: Այբբերենում ավելանում են օ, ֆ տառերը: Հնչույթա-
յին համակարգում կատարված փոփոխութիւնները արտահայտ-

վում են նաև գրավորում և դասական ուղղագրության խճողումների տեղիք տալիս: Հանդես են գալիս քերականներ, որոնք ձեռքտում են վերականգնել դասական ուղղագրությունն ու կայունացնել այն: Կատարվում է հայերենի ուղղագրության առաջին բարեփոխությունը: Ստեղծվում է տառադարձության երկու սկզբունք:

3. ԺԸ—ԺԹ դարերում.—Նախորդ շրջանի նման ուղղագրության հիմքում ընկած են հնչական, ձևաբանական ու ավանդական սկզբունքները: Մխիթարյանների ջանքերով որոշ կայունացում է ունենում գրությունը: Սակայն արվում են նոր առաջարկություններ, ինչպիսին, օրինակ, վյունագրությունն է, և բուռն բանավեճերի պատճառ դառնում: Կայունանում են տողադարձի կանոնները, հատուկ անունների մեծատառով գրությունը, տառադարձության արևմտահայ, արևելահայ սկզբունքները:

4. 1922 թ. ուղղագրական բարեփոխման շրջանում.— Ստեղծվում է երկու ուղղագրություն՝ ՍՍՀՄ-ում գործող հայերենի և սփյուռքահայության: Առաջինում հեռանում են դասական ուղղագրությունից, երկրորդում պահպանում են այն: Հայ ժողովրդի երկու հատվածների տարածքային, հասարակական-քաղաքական կյանքի ու լեզվական տարբերություններին ավելանում է նաև գրության տարբերությունը՝ իր հերթին խորացնելով այդ երկու հատվածների միջև եղած բացվածքը:

Այժմ անցնենք այդ շրջանների քննությանը:

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ե—Թ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայտնի է, որ Ե—Ը դարերից թվակիր ձեռագրեր չեն հասել, գոնե առայժմ չեն հայտնաբերված: Այդ դարերի պատմիչների գործերն ու կրոնական գրականությունը մեզ են հասել միջնադարյան արտագրություններով: Ամենահին թվակիր ձեռագիրը առայժմ համարվում է Լազարյան ճեմարանի Ավետարանը, որ 887 թվականի է: Հնագույն է համարվում Մլքե թագուհու Ավետարանը, որ գրությունով է վեներտիկի Մխիթարյանների գրադարանում: Կան և առանձին պատառիկներ, որոնց թվականը որոշվում է մագաղաթից, ձեռագրի տառատեսակներից, բովանդակությունից, բայց դրանք էլ մոտավորապես Թ դարի են: Դժվար է Թ դարի ձեռագրերով որոշել 5—6-րդ դարերի ուղղագրությունը, բայց մեզ օգնում են վիմական արձանագրությունները, որոնք թեև ծավալով փոքր են, բայց հնագույն շրջանից են մնացել. օգնում են նաև հայերենից օտար լեզուներին և օտար լեզուներից հայերենին անցած բառերի, փոխառությունների տառադարձությունը, ինչպես և ուղղագրական առանձին շեղումները: Ելնելով հիշյալ միջոցների ընձեռած հնարավորություններից՝ ներկայացնենք այս դարերի ուղղագրությունը:

ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս շրջանում մեր ուղղագրությունը բնորոշ է իր գերազանցապես հնչական սկզբունքով: Ասել են mard, vard, karg, mirg, ostikan, war, awj, գրել են մարդ, վարդ, կարգ, միրգ, ոստիկան, ար, աւ: Գործել է նաև ստուգաբանական սկզբունքը, որով առաջնորդվել են, օրինակ, վ և է տառերը բառամիջում գրելիս: Գրության հնչական հիմունքի համաձայն եռաստիճան (թ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-շ) և երկաստիճան (զ-ս, Ժ-շ, ղ-խ) բաղաձայնների տեղա-

շարժեր գրավորում չեն արտահայտվել: Գրել են այնպես, ինչպես հնչել են: Այս բանը երևում է փոխառությունների տառադարձությունից. 1. հունարենի խուլերի դիմաց գրված են հայերենի խուլերը: Օրինակներ. Πιστονος — Պետրոս, Αγοπος — Եգիպտոս, Αισωπος — Եսովպոս, Κλεων — Կլիոն, Κωνων — Կոնոփն, Κωκλιος — Կովկալոն, Απειρος — Աստիկացի, Ερωπη — Երոպէ, Απειριος — Անտիփիլոս, Αριστοκρατης — Արիստոկրատես և այլն:

2. Ձայնեղների դիմաց՝ ձայնեղները. Αργος — Արգոս, Μεδεια — Մեդէա, Αυσονος — Ղիւսարգոս, Οδυσσεος — Ոգիսեւս, Ζηρων — Ջենոն, Καρβαντας — Կամբիւսէս, Πισθος — Եսիոգոս և այլն:

3. Շնչեղ-խուլերի դիմաց՝ շնչեղ-խուլերը. Ξεμα — թեմ, Ζημα — կիթար, Ιαφθριονος — լարիւրինթոս, αβριμα — սարիթա, προπισος — պոթիս, Πιστορος — Պիթագորաս, Κερωνος — Կորնիթոս, Թεωνας — Թէոփնա, Πριμων — Պիթոն, Ξενοφων — Քսենոփոն, χερτας — քարաէս (քարոեղ), μεχανη — մեքենա, σερτας — սոփեսոս, քեոսος — փիլիսոփա, χερτοναξιος — քարտաղար և այլն: Հայերեն ամ. սանսկրիտերեն samā, զանդկերեն hama, հայերեն այծ (էծ). սանս. aza, զենդ. izenai, հուն. αἴξ. հայ. աստղ. սանս. դենդ. star, հուն. ἀστὴρ, արժաթ՝ զենդ. erazata, գույն-ը՝ գնդ. gaona, դուստր՝ duchiter, միս-ը՝ mas, ուշ-ը՝ ušl, սուգ-ը՝ sōg, նոր պարսկ. sōg, վարձ-ը՝ նոր պարսկ. varza, բազում-ը՝ պհլ. bāzuma և այլն:

Սրանք ցույց են տալիս, որ մեր նախնիք հետեւել են հնչյունային գրության, խուլ են հնչել, խուլի գիրն են դրել, ձայնեղ են հնչել, ձայնեղի գիրն են դրել: Այս նույն սկզբունքը կիրառվել է նաև ձայնորդների ու ձայնավորների, երկբարբառների գրության, ժամանակ:

Ինչպես բոլոր ժողովուրդների լեզուներում բոլոր ժամանակներում լինում են շեղումներ ընդունված ուղղագրութունից, այնպես էլ այս դարերի մատենագրության մեջ և վիմական արձանագրություններում նկատվում են շեղումներ դասական գրաբարի ուղղագրության կանոններից, որ հետևանք են գրաբարի բաղաձայնների եռաշարք համակարգում սկսված տեղաշարժ-տեղափոխության, որոշ գրիչների անհմտության:

Ի՞նչ շեղումներ են դրանք.

ա) Խուլ հնչյունի գրի փոխարեն օգտագործված է ձայնեղինը: Լազարյան ճեմարանի Ավետարանում (887 թ.) կան ն-ին հաջոր-

դող դիրքում կ-ի փոխարեն գ տառով բառեր: Օրինակներ. «Ձհաց մանգանց (91^Վ): «Ի փշրանաց մանգանց կերակրին» (91^Բ): «Խոնձ արկանել: Արտաքու ժամու խնգոց» (111^Վ): «Անգեալ առ ոտսն Յիսուսի» (127): «Ձի դուրքս փակեալ են եւ մանգունքս ընդ ինեւ կան յանգողնիս» (136^Վ): «Տնգեաց ի ծովու» (155^Բ): «Նայեցեալ ընդ խորամանգութիւն» (164^Վ): Նույն Ավետարանում ն-ից հետո ա-ի փոխարեն դ տառն է հանդիպում. «Իբրեւ լուաւ ի բանդին» (26^Վ): «Ի բանդի եի» (60^Բ): Ագաթանգեղոսի «Պատմության» Թ դարի կրկնագիր օրինակում՝ «Հանել զնա ի խոր բանդէ վիրապին» (136)¹⁰: «Յաւեցան ծունգք նորա» (111): Սրանք հետեանք են նաև առնմանում կոչված հնչյունափոխության, երբ ձայնեղ հնչյունը, սովյալ դեպքում ն-ն, իրեն հաջորդող խուլ հնչյունին մոտեցնում է իրեն, դարձնում ձայնեղ: Գրիչը խուլը ձայնեղ հնչելով, նրա համապատասխան տառն էլ գրում է՝ չիմանալով ուղղագրությունը: Բ) Նույն տեղաշարժ-տեղափոխության հետեանքով ձայնեղի փոխարեն բառամիջում հանդիպում է խուլ հնչյունի տառը: Օրինակներ. «Հունծք կատարած» (Լազ, 27^Բ): «Հնծաւղք հրշտակք են» (ն. տ.): «Եւ գուր հնծան փորեաց» (96^Բ): «Ոչ սերմանեն եւ ոչ հնծեն» (142): Ամպոխ: «Ըմպշամարտ սկայազաւր քաջութիւնս գործէր» (Ագ, 81): «Կանկնեցաւ արծանս»,—գրված է Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու պատին, ՅԽԴ (895) թվականին (Դիվան, 24, 13): Երբեմն միևնույն նախադասության մեջ միևնույն բառը մեկ խուլ, մեկ էլ ձայնեղ հնչյունի տառով է հանդիպում: Օրինակ՝ «Ի հունծս հասեալ են, որ հնծենն վարծս առնուն» (Լազ, 180^Վ): «Սա է ժառանգն, սպանցուք զսա, զի մեր լիցի ժառանկութիւն» (ն. տ. 164^Բ)¹¹: Մանուկ բառը միևնույն նախադասության մեջ թե՛ կ, թե՛ գ տառով է գրված:

Երբեմն բարբառային արտասանության հետեանքով ե-ի փոխարեն իւ. իսկ իւ-ի փոխարեն ն է գրված լինում: Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» պատառիկում (Թ դար) գրված է. «Ջուրն որ ի վիմեն խոսեցաւ» (իմա՝ հոսեցաւ): «Վասն հնամոյն (իմա՝ խնամույն) եւ գթոյն»¹²:

№ 10100 ձեռագրում կան թե՛ Եփրատ, թե՛ Եփրաթ ձևերը:

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ թեև գրության հիմքում ընկած էր հնչական ուղղագրությունը, սակայն մինչև Թ դարը բաղաձայնական համակարգում արդեն սկսվել էր տեղաշարժ-տեղափոխություն, որն իր արտահայտությունն էր գտել գրավորում-

Այդ հնչյունափոխության հետևանքով որոշ խոսվածքներում ձայնեղը խուլի է փոխվել (հունծք, կանկնել, ըմպրունել), իսկ խուլը՝ ձայնեղի (մանդունք, ծունգք)։ Այդ արտասանությունն է արտացոլված մեր բերած օրինակներում։

Մ 6. — Առնմանման հետևանքով շրթնային պայթականին նախորդող ն հնչյունը արտասանվում է մ և գրվում մ (գառանբ—գառամբ, ձեռանբ—ձեռամբ, արեանբ—արեամբ)։ Այն գրիչները, որոնք գրել են ըստ բառի կազմության, ստուգաբանական ուղղագրության, գործիականում պահպանել են ն գիրը. օրինակ՝ Տաթևի հիշյալ վիմագրում կարգում ենք՝ «Յաւժարութեա՛նբ իմոց կրաւնաւորաց»...»։

Առնմանությամբ օտար բառերի ուն նույնպես հայերենում մ-ի է փոխվում՝ zanbil > զամբիւղ, (h)anbar > ամբար, anparist > ամպարիշտ—ամբարիշտ և այլն։

Բ, պ, փ-ին նախորդող ն-ն պահպանվում է, եթե նախածանցին է (անբաւ, անբասիր, անբան, անպաճոյճ, անպատում, անփոյթ, անքիծ, անպարկեշտ, անքարբառ, անպարտ, անպայման և այլն)։

Ռ Դ. — Հայերենում ն-ին նախորդող ր(ք)-ն ու է հնչում ու ո գրվում (դուն, գառն, ձեռն, բեռն, առն, ձմեռն, ամառն, բառնալ, դառնալ և այլն)։ Եթե հնչյունափոխության հետևանքով ո-ին այլ հնչյուն է հաջորդում, փոխվում է ր-ի (առնեմ—արարի, առն—արական, բառնալ—բարձի, դառնալ—դարձի, ձեռն—ձեռքագատ, ձմեռն—ձմերան, ամառն—ամարան, դուռն—դրունք և այլն)։

Ն-ին կարող է ր նախորդել ա) եթե այդ ն-ն հոդ է, քանի որ տվյալ դեպքում այդ երկուսի միջև ը է լսվում, որ չի գրվում (սարն, քարն, դարն, բարն, ջուրն, մուրն և այլն արտասանվում են՝ սարըն, քարըն, բարըն, դարըն, ջուրըն, մուրըն)։ Բ) եթե հնչյունափոխության հետևանքով է ն-ն հաջորդել ր-ին (գարուն—գարնան)։

Մ-ից առաջ միշտ ր է լինում, ոչ ո (զարմ, թարմ, մարմին կարմիր, տարմ, սերմ, արմեններ, արմատ, ջերմ և այլն)։ Հնագույն շրջանում ընդհանրապես բաղաձայնին նախորդել է ր-ն, ոչ ո-ն։ Հնդեվրոպական ծագումով ու իրադաձայն կապակցություններն են։ Ռ-ն այլ բաղաձայնների կողքին կարող է լինել միայն բառակազմական փոփոխությունների (ածանցում, բառաբարդում, թեքում) շնորհիվ։ Օրինակ՝ վառ+ման—վառման, թիռ+չել—թրո-

չել, սառչել, ուռչել: Ըստ որում ենթադրվում է, որ հնագույն ձևերն են թռնում, սառնում, ուռնում¹³:

Բոլոր բաղաձայններից առաջ անփոփոխ է մնում առ նախածանցի ուն (առկայծել, առձեռն, առի, առչեղ, առմտանել, առցեղ, առհապա, առպատրաստ, առփոխել, առժամայն, առթագուցանեմ, առգրեմ, առգնող և այլն)^{13ա}:

Բուն հայկական բառերը Ե հնչյունով չեն սկսվում, ուստի հայերեն բառերի սկզբում Ե տառի չենք հանդիպում: «Առձեռն» բառարանում հիշատակված են մի քանի արմատներ, որոնք հայերենում ետին շրջանում են գործածվել, կազմվել են համառոտամբ, նախահնչյունի անկմամբ: Դրանք են՝ բարունի և սրանով կազմված մի քանի բառեր (բարունեմ, բաբունաբար, բաբունակաե, բաբունապետ և այլն), բազարդ (հրազարդ, հրաշազարդ), բախ (ուրախ), բախալի, բախական, բախնական (խրախճական), բահետ (արահետ), բամ (երամ), բամեմ (ժողովեմ), բամապետ, բամական (երամական), բամօլեն (բոլորով), բազոս (գաւազան), բենական—բենական (աստվածային), բետեմ (կառք վարել), բետոր (հոետոր), բոպլ (նետվածք, կշռի մետ, նաև՝ ակնթարթ), բոտիֆ (նվաստ) և այլն: Ինչպես տեսնում ենք, դրանք բա, բե, բո կապակցություններով մի քանի բառեր են, որոնք հայերենում կամ նախահաղվելվածով են գործածվում և կամ չեն գործածվում: Միայն բոպլ բառն է տարածված, որ հունական փոխառություն է՝ βουτ: Բնիկ հայերեն մի բառ է ուով սկսվում՝ ռունգն: Ռ-ով սկսվող մյուս բառերը փոխառյալ են: Օտար լեզուներից փոխառյալ բառերն էլ հայերենում նախահաղվելված են ստանում՝ rang>երանգ, pyc>բոս, ուռուս: «Առձեռն» բառարանում հիշատակված է 68 բառ, դրանցից մի մասը գրվում է նաև Ե-ով (ռաբբունի, ռամ), մի մասը քիչ գործածական է (ռակայ, ռաքիա, ռեմոն, ռատ): Գործածական են միայն ռազմ, ռանգ, ռահ, ռոշն արմատներով կազմված բառերը (ռազմիկ, ռազմավար, ռահահորդ «ճամփորդ», ռահվիրայ «ճամփա բացող», ռայ «դրոշակ», ռամիկ «կծծի», ռիմ «քենս», ռումբ, ռունգն, ռոճիկ և այլն):

Պետք է ասել, որ այս տառերի (ռ—ր) ուղղագրությունից հիշյալ դարերում շեղումներ համարյա չեն նկատվում: Ազաթանգեղոսի Պատմության կրկնագիր օրինակում հանդիպում են յաբաջ, մեբաւ, ի փաբաց ձևերը, յառաջ, մեռաւ, ի փառաց ձևերի փոխարեն, բայց դրանք խիստ անհատական արտասանվածքի արդյունք են և հազվագեպ են հանդիպում:

Լ—դ. Լեզվաբանների կարծիքով Ե դարում, մեր գրերի ստեղծման ժամանակ, հայերենում կար երկու Լ, մեկը մեր այսօրվա Լ-ն էր (լոյս, լաւ, կալաւ, սալլ), մյուսը մոտ էր այսօրվա ղ-ին, արտաբերվում էր լեզվի ետևի մասով և թանձր էր, նման ռուսերեն ԼԵ-ին, բայց ղատ չէր: Այս երկրորդ հնչույթը Մաշտոցն արտահայտեց ղ տառով, որը համապատասխանում էր հունարեն Ի տառին: Օրինակ՝ հունարեն alekātē՝ հայ. աղեկատ թիւ, իլիկա. alkyōn > աղկիոն (թռչունը), āngelos > անգելոս ճհրեշտակ, ārgilos > առգել Վեպ, balsamon > բաղսամոն Վրուսան, ekklesiā > եկեղեցի և այլն:

Ղ տառին համապատասխանում է նաև օտար այլ լեզուների Լ-ն: Օրինակ. ասորերեն lēgc—հայ. ղեկ, երրայերեն magallaʾā > հայ. մագալաթ, լատիներեն stella հայ. ասող, candela—կանթեղ, պարսկերեն phil—փիղ և այլն: Մյուս կողմից՝ օտարները մեր ղ-ն արտահայտել են իրենց Լ-ով: Հայերեն աղբւս-ը վրացերեն դարձել է alersi, նեղ—neli, Մոշեղ—Mušeli, Շողակաթ—Šulkat', եղվարդ—Elivardi, Մաթուսաղա—Mat'usala, Ծաղկոց—Čalkoti, քաղաք—k'alak'i, պտուղ—ptuli, շիւղ—šūlo, տող—tolo, մանգալ > mankall, տաղավար—talavari և այլն: Հայերեն Ադուանք, Դարանաղիք անունները օտարները դարձրել են Ալվանիա (Ալլանիա), Դարանալիք: Հենց այս տառադարձություններից է, որ ժողովուրդը մեր Մաղխազ, Սաղմաստ, Վաղարշակերտ անունները դարձրել է Մալխազ, Սալմաստ, Ալաշկերտ: Դրանք օտար հնչման հետեանք են¹⁴: Ահառյանի կարծիքով հնում խաղալ, խաղալ, խաղող, ուղեղ և նման բառերն արտասանում էին խաղալ, խաղոլ, ուլել ձևով, բայց այս Լ-ն մեր այսօրվա Լ-ն չէր, այլ հանալեզվալին թանձր Լ [ЛГ]¹⁵: Եթե օտար Լ-ն մենք արտահայտել ենք ղ-ով, մեր ղ-ն էլ նրանք արտահայտել են Լ-ով, ուրեմն մեր ղ-ն Ե դարում ղատ չէր, այլ Լ-ի և ղ-ի միջև ընկած մի հնչյուն:

Լ—դ-ի մասին այս կարծիքին են նաև Գ. Ալվազովսկին, Ա. Այստրնյանը, Գ. Մենեվիշյանը և ուրիշներ: Կան լեզվաբաններ, սակայն, որոնց կարծիքով ղ-ն սկզբից ևեթ ղատ է եղել, օրինակ՝ Ա. Բագրատունին, Վ. Հացունին¹⁶:

Այս հնչյունների հատուկ քննություն է կատարել է. Աղայանը իր «Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից» հոդվածում¹⁷:

Ժամանակակից հնչյունաբանության գիտական մակարդակով մանրակրկիտ քննության ենթարկելով լ—ը հնչյունների նշանակությունը՝ հեղինակը գալիս է հետևյալ եզրակացության. Ե դարի հայերենում լ և ղ հնչյունները կարող էին հանդես գալ և՛ իբրև հնչույթներ, այսինքն իմաստազատիչ, բառակազմիչ դեր ունենալ, և՛ իբրև ենթահնչույթներ (նույն հնչույթի տարբերակներ), և՛ իբրև չեզոք, այսինքն տվյալ դիրքում նրանք կարող էին իրար փոխարինել՝ առանց բառիմաստի վրա ազդելու: Հնչույթային (իմաստազատիչ) դերում հանդես էին գալիս բառավերջում ա. ե, ո. ու, ր ձայնավորներից հետո (տալ—տաղ, գոլ—գող, թել—թեղ, խուլ—խուղ), իսկ բառամիջում՝ ձայնավորներից հետո (ալիք—աղիք, խելաց—խեղաց, մալել—մաղել), ենթահնչույթային էին բառասկզբում, ուր իբրև կանոն լ էր լինում: Չեզոք դերով հանդես էին գալիս բառավերջում ի-ից հետո՝ ջիլ—ջիղ, շիլ—շիղ: Հետագայում այս բաշխումները խախտվում են, երբ ձևավորվում է մեր այսօրվա ղ-ն (ղատը): Դասական հայերենում բաղաձայն լ-ն յ-ի ազդեցության տակ հնչում էր ղ (այդ, փայդ, նշոյդ, թոյդ, սրանց՝ այլ, փայլ, նշոյլ, թոյլ գրչությունը հետևանք է ղ-ի այդ դիրքում լ հրնչելու): Այս հարցում, ասում է հոգվածագիրը, հին լեզվաբանների սխալն այն է, որ նկատի չէին ունենում տառի դիրքային առանձնահատկությունը¹⁸:

Հետաքրքիր հարց է, թե ե՞րբ յե հնչում ունեցող լ-ն ղ(ղատ) դարձավ: Այս մասին է գրում Հր. Աճառյանն իր «Ե՞րբ լ դարձավ ղ» հոդվածում¹⁹: Այս հարցը լուծելու համար հոգվածագիրը երկու փաստ է օգտագործում: Մեկն այն է, որ այսօրվա գրեթե բոլոր հայ բարբառներում այդ հնչույթը (ղատ) կա կոկորդային հնչումով: Այդպիսի ընդհանուր երևույթ կարող էր առաջանալ միայն արտագաղթից (1080 թ.) առաջ, երբ հայերը միասին էին և իրար հետ շփման մեջ, ուրեմն մինչև 1080 թվականը ղ-ն արդեն կոկորդային էր դարձել:

Երկրորդ միջոցը լ-ի տառադարձությունն է: Ղատ-ով ամենահնագույն անունը հայերենում արաբ ոստիկանի Բադա անունն է, որ թուրքերեն buğa (ցուլ) բառն է: Բուդան Հայաստան է արշավել 850 թվականին և նրա անունը մեր մատենագրության մեջ մնացել է Բուդա, Բովսա ձևերով, որ հանդիպում ենք Դրասխանակերտցու, Թ. Արծրունու, Ասողիկի գործերում: Սակայն Աճառյանը հնարավոր է համարում, որ բուդա ձևը հետագայում առաջացած լինի բովսա ձևից և ավելի վստահելի փաստ է համարում Կաղանկատվացու օգտագործած Բադոդի անունը (Թ դարի կեսերին):

Բուլղար անունը խորենացին գրում է Բլդոխ, Բուլկար ձևերով, իսկ Ասողիկը՝ Բուլղար։ Ղատ-ով հնագույն անուններից են Աղսարթան, Պաղտին (Պաղտոյն), Ըռնաղտ (ԺԱ դար), Axsartan (պարսկերեն) և Renald, Balduin (լատիներեն) անուններից։ Արաբական gufl բառը հայերենում պահպանվել է կողպ, կողպանք, կողպես, գրղրանք և այլ ձևերով, բոլորում էլ դ-ն կոկորդային ղատ է։ Ուրեմըն Թ—Ժ դարերում հայերենում դ-ն արդեն կոկորդային ղատ էր դարձել։

1.-դ ստաբերի գրությունն ինչ կարգ կար Ե դարում։

1. Ե դարում հայերենում բառասկզբում լսվող 1-ն գրվում էր 1 տառով (լոյս, լայն, լաւ, լսել, լուր, լուծ, լոգանք, լուրջ)։ Բոլոր ուսումնասիրողներն էլ (Բագրատունի, Այվազյան, Աճառյան, Աղայան) շեշտում են, որ 5-րդ դարում հայերենում դ-ով սկսվող բնիկ հայկական բառ չկար, մի բան, որ երևում է նաև «Առձեռն բառարանից»։ Այստեղ 1-ով սկսվող բառերի քանակը հասնում է շուրջ 900-ի, իսկ դ-ով սկսվողներինը՝ 40-ի. եթե հաշվենք նաև սրանց թեք ձևերը, կստացվի շուրջ 90 բառ։ Այս բառերից մի մասն ունեն նաև 1-ով գրություն, օրինակ, ղապտեր—լապտեր, ղամբար—լամբար (լամպար), ղակիշ—լակիշ, ղաքայ—լաքայ, ղական—լական, եղեկտրիոն—ելեկտրիոն, դեղի—լեղի, ղեգէոն—լեգէոն, Ղիբիտոն—լիբիտոն, Ողիմպիադ—Ոլիմպիադ, ղինգիրոն—լինգիրոն, ղիտր—լիտր, ղոդակ—լոդակ, ղիւղամ—լիւղամ, ցոյլ—ցոյղ, ղաղան—լաղան (18 բառ), ըստ որում սրանց 1-ով գրությունն ավելի հին է։

Այդ քառասուն բառերի մի մասն էլ ուշ շրջանի տառադարձության հետևանք է. արաբական ڤ, ڤ հնչյունների փոխարեն գրել են դ (ղումար, ղանոն, ղապալ, ղուպայ, ղուրան)։ Մի քանի բառերի բառասկզբի դ-ն հնչյունափոխության հետևանք է, օրինակ՝ ուղևոր>ղևոր, ուղորդ>ղորդ, ողորկ>ղորկ, եղունգն>ղունգն և այլն, բոլորն էլ ուշ շրջանի բարբառային ձևեր են²⁰։

Հնդեվրոպական արմատների սկզբի 1-ն հայերենում դ-ի փոխվելիս նույնիսկ նախահավելված հենարան է ստանում (lug²> եղուկ, lorg²> ողորկ)։ Ե դարում փոխառությունների ու հնչյունափոխության հետևանքով դ-ով սկսվող մի քանի բառեր մտան հայերենի մեջ, որոնք, ինչպես նշում է է. Աղայանը, մասամբ են ըստույգ, մասամբ անստույգ են²⁰։

2. Բառավերջում ալ, ոլ, տառակապակցություններից հետո կարող էր լինել դ տառը, որ մոտ էր մեր լ-ին, ետևալեզվային լ էր։ Հետաքրքիր է, որ երբ զանազան պատճառներով լ-ին նախորդող յ-ն վերանում էր, լ-ն փոխվում էր դ-ի (ալ—աղաղակ, նշոլ—

նշողել, փայլ—փաղփաղել, թոյլ—թողուլ): Դա նրանից է, որ այլ, նշոյլ, փայլ, թոյլ բառերը նախապես դ-ով են եղել, ի-ն հետագա փոփոխություն է, և բառն աճելիս ընդունել է իր հին, դ-ով ձևը:

3. Ղ է գրվում նաև իւ-ից հետո՝ իւղ, շիւղ, գիւղ, ճիւղ:

4. Օտարազգի ի-ն հայերենում ձայնավորների միջև, ի. է տառերին նախորդելիս և բառավերջում գրվել է ղ տառով (Աբեղ, էղի, աղեղուիա, Փիղիպպոս, փիղիսոփա, Գաղիղիա, Բաբեղոն, հեղդեն, Իտաղիա, աստղ, արկղ, Հերակղ, Պրոկղ և այլն): Այս դ-ն մինչև Թ—Ժ դարը գրվել է առանց որևէ փշիկի: Ե դարում, սակայն, հանդիպում են՝ Մեղքոն—Մելքոն, մելան, Գալիլիա, Լեւոն, յելուզակ, հելեն, Իսրայէլ բառերը, որոնք ցույց են տալիս, որ այս կանոնը այնքան կայուն չէր: Բազրատունին ճիշտ է ասում, որ հնում այդ երկու տառերի գրությունը շատ է խառնակ եղել: Վ. Հացունի: Կարծիքով փաստերը հերքում են Մեյերի այն դրույթը, թե բաղաձայնից առաջ ղ է գրվել, ձայնավորից առաջ՝ 121:

Այժմ տեսնենք, թե այս տառերի գրության ի՞նչ երևույթներ են նկատվում Ե—Թ դարի ձեռագրերում ու վիմագրության մեջ: Լազարյան ձեմարանի և մյուս ավետարաններում (Թ դար) առանց փշիկի ղ տառով է գրված յ-ին հաջորդող ի-ն, որ Այվազովսկին, Աճառյանը, է. Աղայանը բացատրում են յ-ի առկայությամբ. յ-ն փափկացնում է ղ-ն և ետ տանում դեպի լեզվի ետին մասը: Այդպես են գրված 1. այլ դերանունը և նրանով կազմված բաղադրությունները, օրինակներ. «Այդ ձև է» (Լազ, 55): «Յետոյ գան այդ կուսանքն» (58): «Շահեցաւ այդ եւս հինգ, շահեցաւ այդ եւս երկու, մատոյց այդեւս քանքար» (58^v): «Ստես զնա այդ կին մի» (66^v): «Զայդս ապրեցոյց, գինքն ոչ կարէ ապրեցուցանել» (69^r): «Երթիցուք յայդ մաւտաւոր գիւղաքաղաքս» (75^r): «Այդքն ասէին, թե Եղիա է, իսկ այդքն ասէին, թե Մարգարէ է» (86^v), «Էւ այդինչ բազում» (90): «Մի է Աժ եւ ոչ գոյ այդ բայց ի նմանէ» (98^r): «Ամենայն, որ արձակէ զկին իւր եւ առնէ այդ շնայ» (153^v): «Զայլ ապրեցոյց» (ձեռ. № 10099, էջ 35, Բեզունց ավետարան): «Այդոց, այդ ազգի բիրապատիկ, եթե այդ եւ այդեւայդ մի եւ նոյն, որպէս ցուցանէ գիրն: Այդովքն հանդերձ» (ձեռ. № 10100, էջ 17): «Այդեւս չարք չարագոյնք անցանիցեն ընդ քեզ» (Ագաթ. 96): Այդոց, այդ ազգի, այդովքն (Կիրեղ)²²:

2. Այլ շաղկապը. «Ոչ եկի կոչել զարդարս, այդ զմեղաւորս» (Լազ, 21^r): «Այդ որպէս դու (կամիս)» (63^v): «Այդ առաւել խոռվ-

ութիւն լինի» (68^բ): «Ոչ պիտո՛ւ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց» (77^բ): «Զի ոչ եթե ի սիրտ մտանէ, այլ յորովայն» (91^բ): «Ոչ դուք էք խաւսիցիք, այլ հոգին սուրբ» (100^բ): «Այլ վասն տեղեացն» (№ 10100, էջ 6ա): «Այլ գողակից լինէր» (10100, էջ 8ա): «...այդ բաժանեայ... այլ վարացն արարիչ է» (Կիրեղ):

3. Բայեւր.— «Եւթոյղ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց» (Լազ, 19^Վ): «Այդակերպեցաւ առաջի նոցա» (Լազ, 36^Վ): «Եւ ոչ տայր թոյղ» (75^Վ): «Սուրբ վկայքն այնոքիկ եկեալ դաւղեալ էին յարքայական Կայենի ի նմին թագաւորաց ի Վաղարշապատ քաղաքի» (Ազ, 129): «Եղի, Էղի դամասաբաթթանի» (Լազ, 69^Վ):

4. Ածականներ.— «Լցին դայն մոխրով հնոցի եւ արարին թուղապոյն, զի մի կարի լի իցէ» (Ազ, 108): «Պղնձածոյղ պատկերացդ» (Ազ, 139): «Զործք նորա եղեն փայլուն եւ սպիտակ յոյժ» (Լազ, 95^բ):

5. Գոյական անուններ.— Այս դեպքում ղ-ն հանդիպում է բոլոր դիրքերում: «Եկն ի ծովեզրն գաղիղեացոց» (Լազ, 33^Վ): «Փիղիպպոսի եղբար» (Լազ, 29^Վ), «Ի ձեռն Դանիելի մարգարէի» (55^Վ), «որպես փայլական, որ ելանէ յարեւելից» (56^բ), «առեալ զղապտերս իւրեանց» (57^Վ): «Յիմարքն առին զղապտերսն: Իմաստունքն առին ձէթ մամանաւք ընդ զղապտերս» (58^բ): «Կաղմեցին զղապտերս իւրեանց: Շիրանին զղապտերքս մեր» (58^բ): «Ետուն նմա ըմպել գինի ընդ դեղի խառնեալ (68^Վ): «Մարեմայ առեալ զիտըր մի իւղոյ» (203^Վ): Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի պատառիկում (873 թ.) կարդում ենք՝ գայլոց, փիղիսոփայիցն, Դանիէլ, Փիղիպպոս, Եղեկիւղ գրությունները: Ագաթանգեղոսի կրկնագիր օրինակում՝ «Իջին բանակեցան առ ասին գետոյն զոր Գայլն կոչեն» (Ազ, 91): «Քացախ էւ դեղի դառնութեան» (Ազ, 107): «Մի յաղթահարեսցէ զգառինս հատի քոյ գալղ ապականիչ» (128): «Յերկրէն Բարեղովնի» (160):

Եզր կաթողիկոսի արձանագրության մեջ, որը 630—641 թվականից է, կա Սամէլ գրությունը, որը Սամուէլ անունն է²⁴, հորեւնացին օգտագործում է թե՛ Սամուէլ, թե՛ Սամուէլ ձևերը:

Սրանց պիտի ավելացնել նաև գայթաղել բայը, որ, ինչպես Բագրատունին է ասում, կաղմված է գայթել և գիլ-գլել բայերից՝ «Գիղ՝, գիլ՝ տայ զգայթահեմ»,—ասում է նա (էջ 658): Ուրեմն տեղի է ունեցել լ>ղ հնչյունափոխություն²⁵:

Ե—Թ դարերում պահպանվում է գայթապդել ձևը, որ հետագայում դարձավ գայթակղել. «Եթե աջ ձեռն քո գայթապդեցուցանէ զքեզ, հատ զնա» (Լազ, 11^Վ): «Փարիսեցիքն գայթապդեցին» (32^Վ): «Վայ աշխարհի գայթապդութեանց» (39^Բ): «Գայցէ գայթապդութիւն» (39^Բ): «Գայթապդելոց էք յինէն» (103^Վ): Այս ձեռագրում կա նաև կ-ով ձևը՝ «Այդ որդի մարդոյ ամենեքին գայթակղեցին» (104^Բ)²⁶:

Նայելով բերված օրինակներին՝ դժվար չէ նկատել, որ գերազանցապես յ-ից հետո է ետնալեզվային 1-ն (ղ) հանդես գալիս: Դրան պիտի ավելացնել նաև է-ից հետո և ձայնավորների միջև հանդիպող մի քանի օտար բառեր՝ Աբել, աղեղուիա, Իտաղիա, Փիղիպպոս, Գաղիղեացոց և այլն: Ղիւն-ով սկսվող մի քանի բառեր են միայն հանդիպում՝ ղեղի, ղաղեալ, ղիտր, ղեգէռն, ղապտեռ, ղամբառ, ղական, ղեկան, ղաւա, ղիմոն, ղաբիւրիքոս, ղեպտոն և այլն: Սրանք հունական և-ով գրվող անուններն են՝ Ἰακώβ, Ἰακώβος, Ἰεζεών, Ἰεζερα, λεκάων, Ἰεραον, Ἰαβύριος, Ἰεπεών: Մի քանի բառերում ղ-ն հաջորդում է բաղաձայններին, դրանք նույնպես հունական փոխառություններ են. կղեր (κλήρ), կղիմա (κλήμα), Պղատոն (Πλάτων), ստեպղին (σταχυλίνος), մղոն (μύλον), Պատրոկոկես (Πάτροκλος), Պաւղոս (Πάωλος) և այլն:

Ա—Ա. — Ե դարում վ և ա տառերով տարբեր հնչյուններ էին արտահայտվում: Ահա թե ինչ է ասում այդ մասին Ա. Մեյեն. «Գալով վ և ա գրերուն, ես համոզված եմ, որ ասոնք իրարմէ տարբեր ձայներ էին, առանց որոց այբուբենի հեղինակը զանոնք զանազանած չպիտի ըլլար: Հակամետ եմ կարծելու, որ վ կնշանակեր իսկական բաղաձայն մը, թերևս արդեն շրթնատամնային վ ձայնը: Բայց այս վերջին կետի վրա ապահով չեմ, յամենայն դեպս անշուշտ spirante էր, կրկնաշրթնային կամ շրթնատամնային: Իսկ 1-ն ավելի բաղաձայն ու էր» (1913 թ. դեկտեմբերի նամակից)²⁷:

Ի(ւ) գիրը Թրակացու մեկնիչը դնում է կարճ ձայնավորների շարքը, իսկ վ-ի մասին հիշատակություն չկա, որովհետև հունարենում թավ վ հնչույթ չկա: Այս փաստը օգտագործում է Ղ. Աղայանը՝ պնդելու, թե վ-ն Մաշտոցի աթոռքենում չի եղել, ետնամուտ է²⁸:

Հյուրըմանի կարծիքով բառասկզբի վ-ի և բառավերջի կամ միջձայնավորական 1-ի արտասանությունը նույնական է եղել (վարդ, սեաւ, աւագ), ուստի բանիւֆ և ֆաղաֆաւ բառերում էլ 1-ն բաղաձայն է և դրանք կարդացվել են՝ բանիվֆ, ֆաղաֆավֆ²⁹,

թեև վերջինս հակասում է հայագետի այն կարծիքին, թե բաղա-
ձայնից առաջ աւ, եւ, իւ կապակցությունները երկբարբառ են և Վ-ն
երկբարբառի ձայնորդ բաղադրիչն է:

Աճառյանը ցույց տալով Հյուբշմանի բնորոշման մեջ եղած այս
հակասությունը՝ վ-ն բաղաձայն, իսկ Վ-ն ամենուրեք երկբարբառի
բաղադրիչ է համարում: Ոչ միայն Նին հայերենում, ասում է Ա-
ճառյանը, այլև արդի մի շարք բարբառներում տարբերում են վ-ն
և Վ-ն, երկու հնչյունն էլ ունեն: Սուշավան ունի հաւ, ցաւ, որ առ-
տասանում են հաւո, ցաւո, Մարաղայի բարբառում կան՝ պատու-
քել, վարճրել, կուրսուել, խաւրիծ, փաւրել, ուլանֆ (վանֆ). շու-
ւան, շուաւ և այլն: Աւ, եւ, իւ տառակապակցությունները հնում
հնչվել են աւո, եւո, իւո: Հայերեն Տաւան բառը հունարեն տա-
ռադարձվել է Ταρσαν կամ Ταρσν δևով: Խաւ, ցաւ բառերը
վրացերենում դարձել են խաօ, ցիրաօ: Նշանակում է մեր վերջա-
ձայն աւ-ը 2ւ է կարդացվել: Վերջապես այն հանգամանքը, որ
աւ-ը հետագայում վեր է ածվել օ-ի, վկայում է, որ այն 2ւ է հնչել,
որը կամաց-կամաց շրթունքների.ավելի կլորացումով դառնում է օ:
Ուշ շրջանի հունաբան գրիչները Վ-ն գործածում էին իբրև իւ, գը-
րում էին կւակէ, հւսիս, հւպատոս, փոխանակ՝ կիւակէ, հիւսիս,
հիւպատոս: Եթե այդ կապակցության մեջ Վ-ն վ կարդացվեր, եր-
բեք իւ-ի փոխարեն չէր գրվի: Ուրեմն աւ, եւ, իւ կապակցություն-
ները «ամեն պարագայի մեջ ալ» երկբարբառային են, եզրակաց-
նում է նա³⁰:

Այս հարցին իր ուշագրավ հոգվածով անդրադարձավ լեզվա-
բան Ա. Աբրահամյանը: Աբրահամյանը պարզաբանում է, որ միայն
բաղաձայնին նախորդող աւ-ն է երկբարբառ: Նա գրում է, թե աւ
երկբարբառի Վ-ն բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում
թավանալով՝ նույնացավ վ-ի հետ, որը պատմական հնչյունափո-
խություն է և կատարվել է աստիճանաբար: Աւ երկբարբառը հե-
տագայում փոխվել է օ-ի, բացառությամբ աղաւնի, նաւթ բառերի,
որ բարբառներում դարձան ղօնեգ, ըղօնի, նօթ. իսկ գրականում՝
աղավնի, նավթ: Հոգվածագիրը քերում է Հյուբշմանի կարծիքը, թե՛
նաւթ, աղաւնի բառերը արտասանվել են նաւրթ, աղաւրնի, այ-
սինքն աւ-ին հաջորդել է ը ձայնավորը, իսկ ձայնավորին նախոր-
դող դիրքում աւ-ը օ-ի չի փոխվում: Աւ-ը օ-ի չի փոխվում 1. եթե
քերականական մասնիկ է ափելանում նրա վրա (հող, հոգնակերտ,
հոլովակերտ մասնիկներ), օրինակ՝ զհաւ, զնաւ, զկաքաւ, առա-
կաւդ, համքաւ, կտաւ, 2. շեշտափոխության դեպքում, երբ աւ-ին

հաջորդող ձայնավորը սղվում է և աւ-ը բնկնում է բաղաձայնի կող-
քը (շաւիղ, շաւղաց, Դաւիթ—Դաւթի)։ Այս դեպքում էլ աւ-ը դառնում
է ձայնավորանախորդ, քանի որ ա-ի և բաղաձայնի միջև ընդ
տասանվում (Դաւթի, շաւղի), իսկ ձայնավորից առաջ աւ-ը երկ-
բարբառ չէ, աւն այդ դիրքում բաղաձայն է։ Հոգնակի գործիակա-
նում Բ-ին նախորդող աւ-ը օ է դառնում՝ կաքաւաթ—կաքաւօթ,
ցաւաթ—ցաւօթ, աւրաթ—օրօթ, փառաթ—փառօթ։ Բառապատկերը
պահպանելու համար հաւի-ը չի դարձել հօփ, կափաւի-ը՝ կափօփ,
քաւի-ը՝ քօփ։ Այստեղ դեր է խաղացել նաև ա-ի և Բ-ի միջև լսվող
ը-ն, որ չի գրվում³¹։

Ա. Աբրահամյանը, ելնելով վիճաբանական փաստերից, գտնում
է, որ ձայնավորից առաջ ու>վ փոփոխությունը Թ—Ժ դարերում
արդեն փաստ էր (անդ, էջ 82—84)։ Է. Բ. Աղայանը իր «Գրաբարի
քերականություն» արժեքավոր գրքում (էջ 118—120) գրում է, թիւ
աւն երկու հնչում ունենք՝ բաղաձայնական և երկբարբառի բաղադրիչ
ձայնորդ-ձայնավոր. «Բ-ն (ւ) որպէս բաղաձայն և վ-ն հնչույթա-
բանորեն նույնական են և գրային տարբերությունը միայն ուղղա-
գրական երևույթ է» (էջ 187)։ Գործիական հոլովի աւն (տիտանաւ,
բանիւ, արդեւթ) և վ-ն (գործով, աթոռով, ամպով) նույն հնչեղանք-
ական ԵԻ-ից ստացված վ բաղաձայնն են։ Ի (ւ) բառավերջում՝
ձայնավորից հետո և բառամիջում՝ երկու ձայնավորների միջև բա-
ղաձայն է, ուստի աւազ, աւագ, տիւ, բեւեկն, թեւ, թաւ, դիւաց բա-
ռերի աւն և հով, մով, ծով, կով, գետով բառերի վ-ն նույն բաղա-
ձայնն են։ Ուրեմն ա տառը հանդես է գալիս մի դեպքում իբրև երկ-
բարբառի բաղադրիչ (հիւսիս, առեւծ, աւր, հաւր, զաւրավար, հաւտ,
կաւշիկ, բիւր, ցաւաթ, փառաթ), մյուս դեպքում՝ բաղաձայն վ
(աւազ, թիւ, աւագ, թեւաւոր)։ Նշանակում է վ-ն և աւ-ն ենթահնչույ-
թային հարաբերության մեջ են։ Շարունակելով իր միտքը՝ Աղայա-
նը գրում է, որ երբեմն ու տառն էլ է ներկայացնում վ բաղաձայ-
նը³², Տիւ բառի աւն և տուրնջեան բառի ու-ն նույն վ բաղաձայնն
են, ինչպէս և ֆուեայ, ֆուէ բառերի ու-ն, քանի որ դրանք կարդաց-
վել են տուրնջեան, ֆուէ, ֆուեայ, ուր ու-ն=ւ, իսկ աւ=վ, այսինքն
բաղաձայն է³³։ Ուրեմն ըստ Աղայանի՝ դասական հայերենում աւ-ն
իբրև բաղաձայն հնչյուն կարող էր հանդես գալ։

1. բառասկզբում՝ ձայնավորից առաջ (վագբ, վերջ, վիճակ,
վկա, վնաս, վտառն. վերջիններում վ-ից հետո ը-է լսվում, որ նշա-
նակում է, թե նույնպէս վ-ն ձայնավորին նախորդող դիրքում է
գտնվում)։ Այս դեպքում հնչյունի նշանագիրը վ տառն է, որ պահ-
պանվում է նաև տվյալ բառերի ածանցման ու բարդացման ժա-

մանակ (նաւավար, արագավազք, հոգեվիճակ, անվնաս, անվարձ և այլն):

2. Բառամիջում՝ ձայնավորների միջև, որի նշանագիրն է ու-ից հետո վ տառը, ա, ե, ի ձայնավորներից հետո՝ ա տառը (ծովային. սովորել, բովանդակ, աւազ, թեւածել, դիւական), իսկ գաղտնավանկ ր-ից հետո՝ ու տառը (աստուած, կտրուած, ստեղծուած, հագնուած)³:

Անդրադառնալով Հյուբշմանի և Աճառյանի կարծիքներին՝ Աղայանը նշում է, որ երկուսն էլ յուրովի էին ճիշտ³⁴: Հյուբշմանը ճիշտ էր՝ աւ, եւ, իւ կապակցությունները բաղաձայնին նախորդող դիրքում երկբարբառ համարելով, իսկ ձայնավորին նախորդող դիրքում և բառավերջում՝ ձայնավորի ու բաղաձայնի կապակցություն: Առաջինը (հար, սին, բեր) կարդացվում էր au, iu, eu, իսկ երկրորդը (աւազ, կաքաւ, թիւ, թեւ)՝ av, iv, ev: Մյուս կողմից, ճիշտ էր Աճառյանը, երբ բանիւմ, փաղափաւ բառերում աւ-ը երկբարբառ էր համարում, հակառակ Հյուբշմանի: Եվ դա նրանից էր, որ ա-ն, նայած իր դիրքին, կարող էր լինել թե՛ երկբարբառի բաղադրիչ-ձայնորդ, թե՛ ինքնուրույն բաղաձայն: Եթե բաղաձայնական ա-ն և վ-ն նույն հնչույթն են, ապա ի՞նչ կարիք կար վ տառն ստեղծելու, ինչո՞ւ է Մաշտոցը իր սկզբունքը խախտել և մի հնչույթի համար երկու գիր նշանակել: Աղայանը երկու պատճառ է նշում: 1. Եթե բառամիջում և վերջում ձայնավորից հետո գրեր ա, ապա ու-ից հետո վ չէր կարդացվի, այլ՝ ու, և ծու, կու, մու, հու, զու, սուտրել, կոռուի կկարդացվեին ոչ թե cov, kov, mov, hov, zov, sovorel, korovi, այլ՝ cu, kʷ, mu, iu, zu, suorel, korul, որով կաղավաղվեին բառերը: Իսկ եթե գրեր ո + ու տառակապակցությամբ, երկբարբառ կկարդացվեր: Մնում էր, որ ա-ի վրա որևէ լրացուցիչ նշան դնեն, որին նա սկզբունքորեն դեմ է եղել, կամ նոր տառ հնարեն, որին և դիմել է՝ ստեղծելով վ-ն: 2. Միայն բառամիջում և բառավերջում ու-ից հետո վ-ի գործածությունը քիչ կլինեն, շարժեր դրա համար վ հնարել, ուստի նրան տվեց նաև բառասկզբի դերը: Բառասկզբում այլ տառ չէր կարող գործածել, եթե ն դնեն, կկարդացվեր երկբարբառի ոչ վանկարար, օրինակ՝ եարել, եազկ կկարդացվեին iarel (կամ jarel), iazkh (կամ jazkh), եթե ա դնեն (ւարել, ւիզ) կամ ու (ուարել, ուիզ), կստացվեն երկբարբառ, ուստի ստիպված էր նոր տառ հնարել՝ վ-ն:

Այս ա-ի հարցին դեռ 1904 թ. անդրադարձել է նաև Ն. Ադոնցը³⁵: Հակադրվելով Ա. Բագրատունուն, թե ա-ն մեր յոթ ձայնավոր-

ներից մեկն է, նա ցույց է տալիս, որ *ւ-ն* դործ էր ածվում նաև բաղաձայնական *Վ* հնչյունի որակով: Օտարազգի *Վ-ով* շատ բառեր հայերենում տառադարձվել են *ւ* տառով, իսկ *Վ-ն* բաղաձայն է: Նա վ տառին հավասար բաղաձայն է համարում նաև բառավերջի եզակի գործիական հոլովի *ւ-ն* (հազիւ, արդարեւ, կամաւ և այլն), տօր, լէտ ածանցներում (կարելոր, բուրաւէտ): Յույց տալու համար, որ օտարազգի բաղաձայն *Վ-ն* հայերենում արտահայտվել է *ւ* տառով, բերում է մի շարք օրինակներ: Նշենք դրանցից մի քանիսը. *qենդերեն* svava > սեաւ, daeva > դեւ, dav > դաւ, սանսկ. div > տիւ, ravi > արեւ, ասոր. xašiv > հաշիւ, gelafa > կեղեւ, պարսկ. giriv > գրիւ, girav > գրաւ, gav azan > գաւազան, պահ-լավ. kavet > կաւատ, vavar > վաւեր, avar > աւար, avatch > աւաշ («ձայն»), devān > դիւան: Աւտաւազդը գրում են Artavazd, Շաւասպր՝ Shyavasp և այլն: Ինչպես տեսնում ենք, բոլոր օրինակներում էլ *ւ-ն* կա՛մ ձայնավորների միջև է ընկած, կա՛մ բառավերջում: Մեր գործիական հոլովի *ւ-ն* (հազիւ, վերեւ, կամաւ) համազոր է հնդեվրոպական լեզուների գործիական հոլովի *ծ* հոլովակերտին: Այդ *ծ-ն* պահպանվել է նաև մեր որոշ բառերի գործիականում՝ աղբերք, ձեռք, արեամբ և այլն: Հետո *ծ-ն* դարձել է *վ(ւ)*, օրինակ՝ իրանական tagobar-ը հայերենում դարձել է քազաւօր, ուր *ա-ն* ու *օ-ն* տեղերը փոխել են, իսկ *ծ-ն* դարձել է *ւ*: Այս տօր-ն էլ անջատվելով դարձել է ածանց՝ հեռաւոր, քանաւոր, թեւասոր, զաւրաւոր, հոգեւոր և այլն: Ադոնցն էլ է նշում, որ առանց վ-ի ով կապակցությունը չէր կազմվի: Նա հնարավոր է համարում. որ հնում այսուիկ. այնուիկ ձևերը կարդացված լինեն վ-ով՝ այսուվիկ, այնուվիկ, որովհետև նրանց *ւ* տառը գործիական հոլովի վ հնչյունն է: Այս տեսակետից Ադոնցը կարելոր փաստ է համարում այն, որ սա, դա, նա դերանունների գործիականը *ւ-ով* է կազմվում՝ սովաւ, դովաւ, նովաւ: Մյուս կողմից էլ՝ ով և աւ կապակցությունները լծորդներ են: Սրանք բոլորը գալիս են ապացուցելու, որ բաղաձայնական *ւ-ն* և *վ-ն* նույն հնչյունն են, եզրակացնում է Ադոնցը:

Հիշատակված այս կարծիքներից կարելի է եզրակացնել, որ *օ* դարում *Վ* հնչույթն արտահայտվում էր երկու գրով՝ վ և ւ: Ըստ որում վ տառով էր գրվում 1. բառասկզբում. հայերենում բառասկզբում վ հնչելիս վ տառն են գրել: Օրինակ՝ վախճան, վահան, վաղակաւոր, վասն, վերջ, վէմ, վեղար, վիշտ, վիհ, վիրապ, վկայ,

վհուկ, վճար, վտանգ, վրէժ, վնաս, վրան և այլն: Ըստ «Առձեռն»-ի քառասկզբում վ տառը կարող է նախորդել ա. ե. ու. ի. ո ձայնավորներին, նրան կարող են հաջորդել ք, կ, հ, ճ, ն, շ. ր, ո. և տառերը, որոնցից առաջ, սակայն, ը ձայնն է լսվում, որ Բագրատունին անվանում է անգիր ը, այսինքն տվյալ դիրքում չգրվող: 2. Բառամիջում՝ այն բաղադրյալ բառերում, որոնց որևէ բաղադրիչը սկսվում էր վ հնչյունով: Օրինակ՝ գաւրավարժ, աստուածավախ, անդրավար, անվթար, անվկանդ, գործավար, հողեվիճակ, գետավէժ, կարեվէր, ծանրավիշտ, գեղավարս, անվերջ, արծաթավահան, անվարան, գերեվար և այլն: 3. Բառավերջում և բառամիջում ո տառից հետո, որպեսզի ու չկարդացվի՝ ծով, հով, կով, մտվ, գով, կորով, ժողովեմ, հրովարտակ, դսրովեմ, գլխովին, ով, դործով, գով(ք) և այլն:

V հնչույթը ւ տառով է գրվում 1. բառամիջում, ձայնավորների միջև՝ ապաւէն, աւազ, աւար, գաւակ, աւաշ «ձայն», առհաւատչեայ, արգաւանդ, արշաւել, դիւան, թեւաւոր, ձեւաւոր, ճիւաղ, աւետեմ, աւիշ, աւին, դիւապաշտ, սեւաթոյր և այլն: Այս բոլոր օրինակներում ւ-ին նախորդում են ա, ի, ե ձայնավորները: 2. Բառավերջում, ա, ե, ի, է տառերին հաջորդելիս՝ սեւա, թեւ, թիւ, դէւ, ճիւ, թաւ, արշաւ, խէւ, հաւ, խաւ, համբաւ, բաւ և այլն:

Ձայնավորին հաջորդող ւ տառը (Վ հնչյունը) կարող է լինել՝ ա) գործիական հոլովի հոլովակերտ վերջավորություն, օրինակ՝ գիշերաւ, տիտանաւ, Արշակաւ, իրաւ, բանիւ, տագնապաւ, սրտիւ և այլն, բ) լուր, լէտ ածանցների բաղադրիչ՝ աղանդաւոր, արծանաւոր, բարաւոր, գիսաւոր, խորանաւոր, գլխաւոր, բուրաւէտ, հոտաւէտ, խոտաւէտ, կանաչաւէտ և այլն, գ) իբրեւ բառավերջի ի>՝ հնչյունափոխության հետեանք. օրինակ՝ եկեղեցւոյ, սքանչելւոյ, անձկալւոյ, բարւոյ, թագուհւոյ, գինւոյ և այլն:

Այս առթիվ է. Աղայանը գրում է, թե ի-ով վերջացող բառերը սեռականում ւ-ի երեւալը շեղում է, պիտի լինե՞ր՝ որդի—որդուոյ, թագուհի—թագուհոյ: Մեսրոպը այդ բառերի սեռականը ւ-ով կադմեց, որովհետեւ դրանք ուղղականում ւ չունեին, հակառակ պատիւ, անիւ բառերի, և սեռականում լսվող ւ-ն նա համարեց հոլովական վերջավորության բաղադրիչ (ւոյ), դրանով այս բառերը տարբերակելով ւ-ով վերջավորվող բառերից (պատիւ, անիւ), մեկը սեռականում վերջանում էր ոյ-ով (պատիւ—պատուոյ), մյուսը՝ տյ-ով (հոգի—հոգւոյ)³⁶:

Բառավերջում ւ տառն ունեցող բառերը այդ տառը պահում են նաև ածանցվելիս կամ քարդվելիս՝ հարաւ—հարաւակողմ, բաւ—

բաւական, հաւ—հաւախաւս, արշաւ—արշաւասոյր, թեւ—թեւաւոր, թեւաթափ, սեւաւ—սեւ—սեւաշ և այլն, ինչպէս և հոգնակերտ մասնիկից առաջ (հաւք, թեւք)։

Այժմ տեսնենք, թե նշված ուղղագրական կանոններից ինչ շեղումներ են նկատվում Ե—Թ դարերի մատենագրութեան և վիմագրութեան մեջ։

Մեր ընթերցած ձեռագրերից ու վիմական արձանագրություններից երևում է, որ հիշյալ տառերի ընդունված գրությունից շեղումները շատ չեն։

Լազարյան Ավետարանում, պատառիկներում, Կյուրեղ Երուսաղեմացու «Կոշումն ընծայութեան» մեջ (ձեռագիր № 10100) պահպանված են վերը շարադրված կանոնները։ Շեղումներ նկատվում են վիմական արձանագրություններում, այն էլ ուշ՝ է—Թ դարերում։ Օրինակներ՝ «Ի թվակութ (ե) Կոստանդիանոսի Ապիրատ գրեցի»,—գրված է Սիսիանի վիմական արձանագրություններից մեկում, ըստ Ս. Բարխուդարյանի Զ—է դարերում (Դիվ, II, 87)։ Բագարանի մի արձանագրությունում (631 թ.) Առուեղեան ազգանունը գրված է Առուեղեան ձեռվ՝ «Հայոց ասպետի յԱռուեղեան» (Օրծ, VII դ. 393). Հնարավոր է, որ այստեղ ու տառի ուն վրիպած լինի փորագրողը, բայց այլ փաստերը վկայում են, որ արդեն այդ դարերում ձայնավորին նախորդող ուն վ էր հնչում։ Օրինակներ. «Յիգ (874) թվականութ. Հայոց» (Mapp, 100)։ Գառնիի մի խաչքարի վրա «ՅիԸ (879) թվականին» (Гарни ,84)։ Մազրայի մի խաչքարին՝ «Յլ (881) թվականութեանս հայոց» (Ս. Ավ.)։ Սեւանում գտնված արձանագրություններից մեկում գրված է. «ՅիԳ (874) թ. տվաք վախմ» (ԿՂԶԳ, 68, 88)։ «Զկեանս քաղաքավարեցեր բազում հըրճվանաւք» (Mapp, 90)։ Այս արձանագրությունը Մառը համարում է 8—10-րդ դարերից մնացած։ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոշումն ընծայութեան» Թ դարի մի գրչագրութեան հիշատակարանում գրիչը գրել է. «Թարգամանեցաւ յասորոց ի հայ ի թրականութեանս հայոց ԳԾ և ԻԲ (873)³⁷»։ Ինչպէս վերևում ասվեց, Թ-ով վերջացող բառերը սեռական հոլովոմ տոյ են ստանում՝ հոգի—հոգւոյ, տեղի է ունենում Ի> և հնչյունափոխությունը։ Այս օրենքը, սակայն, միշտ չէ, որ պահպանվում է, կարելի է ասել, որ Ե դարից սկսած այդ ւ-ը և՛ գրվում էր, և՛ չէր գրվում։ Ապարանի Դավիթ Գնթունու տապանագրում, որ Զ դարի է, գրված է «Դաւթի Գթունեաց տնորդո Վասակա» (փոխ. որդւոյ) (ԿՂԳ, 245)։ Բագարանի 631 թ. մի արձանագրությունում՝ «Երեսուն և ութ ամոյն... առն Գրիգորի վա-

նանդացոյ» (Օրժ, 393), Արուճի տաճարի պատին՝ 3ԺԶ (867)՝
թվականին «Մառա Սմբատա Բագրատունո» (Քար, 11):

Յ.—3-ն Մաշտոցի ժամանակ հնչել է յ(y): Այդ տառի
հնչման փոփոխությունները հետագա դարերի հետևանք են: Դա-
երևում է նաև նրանից, որ օտարազգի յ-ով (յ) սկսվող բա-
ռերը հայերեն տառադարձվել են յ-ով: Իսկ հայերենի յ-ով սկսվող
բառերը լատինները տառադարձել են կամ ի-ով և կամ էլ յ-ով: Օրի-
նակներ՝ պահլավերեն vāvet > հայ. յաւէտ, voz > յոյզ, yašt >
յաշտ և այլն: Ազաթանգեղոսի «Պատմութիւն» հունարեն թարգմա-
նութեան մեջ հայերեն Օտայ անունը տառադարձվել է Ὀτάϊα
ձևով, որ նշանակում է, թե Օտայ բառի վերջին յ-ն հնչել է և հույ-
ները այն փոխարինել են ի տառով: Մյուս կողմից էլ՝ պիտի նկա-
տի ունենալ, որ այ-ով վերջացող բառերը սեռականում ունենում
էին այի վերջավորությունը, իսկ ա-ով վերջացողները՝ ալ, ուր յ-ն
հոլովանիշ էր, սեռականի ցուցիչը, նշանակում է Յուդայ, Սաաեայ
ձևերի յ-ն հնչում էր իբրև հոլովական վերջավորություն: Բառա-
վերջում նույնպես ա, ո տառերից հետո յ-ն գրվել ու հնչել է: Թրա-
կացու մեկնիչը նշում է, որ հայերենում բառերը ա, ո, ե, ր ձայ-
նավորներով չեն վերջանում, ա, ո-ից հետո յ է ավելանում, ե-ից
հետո ավելացած յ-ն ե-ի հետ փոխվում է է-ի, իսկ ր, ո-ով վեր-
ջացող բառ չունենք: Այդ է պատճառը, որ օտարազգի ա-ով վեր-
ջացող բառերը հայերենում տառադարձվել են այ տառակապակ-
ցութեամբ: Օրինակ՝ ասորական kahnā > քահանայ, abilā > արե-
ղայ, sitanā > սատանայ, lūmā > լումայ, gadšā > կաթսայ, šūgā >
> շուկայ, amilā > ամիրայ և այլն: Աճառյանը գտնում է, որ, եթե
այս բառերի յ-ն չհնչեին, չէին գրի, իսկ Ադոնցն այն կարծիքի
է, որ դրանք չեն հնչել, գրվել են հայերեն այ-ով վերջացող բա-
ռերի նմանակութեամբ:

Այս առթիվ Գ. Զահուկյանը գրում է. «Պետք է կարծել նաև,
որ Թրակացու քերականութեան թարգմանչի ձևակերպած այս օրեն-
քը, որի համաձայն հայերենում բառերը կարող են վերջանալ բո-
լոր տառերով, բացի ա-ից, ո-ից, ե-ից և ր-ից, 5-րդ դարում ուներ
ոչ միայն ուղղագրական նշանակություն, այլև հնչյունական կա-
նոնի արժեք, այսինքն ա-ից և ո-ից հետո գրում և արտասանում
էին յ կիսաձայնը»³⁸:

Բառամիջում յ-ի հնչելու մասին կասկած չկա: Ընդունված է,
որ ոյ երկբարբառը ձայնավորից առաջ հնչում էր օյ (հոյակապ),

բաղաձայնից առաջ՝ ույ (անոյր)։ Աճառյանի կարծիքով ոյ-ը հետո է ույ հնչել։ Ե դարում նա ձայնավորից առաջ երկբարբառ է եղել, իսկ բաղաձայնից առաջ՝ ոյ, որը երևում է դարձյալ տառադարձությունից։ Հայերեն կապույտ բառը վրացերենում դարձել է kapoeti, խոյրը՝ xhoiri, համբոյր՝-ը ambori, գոյգ-ը՝ zogı, ընկոյգ-ը՝ nigozı։ Նշանակում է այս բառերում ու չի եղել, եթե լիներ, վրացին կարտահայտեր։ Մյուս կողմից՝ պահլավերեն kapōt-ը հայերեն դարձել է կապույտ. օշ-ը՝ ոյժ, anōš -ը՝ անոյշ, bōz -ը՝ բոյժ և այլն։ Իսկ այդ օտար բառերում ու չկա։

Բառասկզբի և և յ տառերը տարբեր հնչյուններ էին արտահայտում։ Օտարազգի yašt-ը դառնում էր յաշտ, hazar-ը՝ հազար։

3 տառը գրվում էր՝ 1. բառասկզբում, իբրև բառի հնչյունակազմի տարր։ Այս տառով սկսվող բառերի քանակը «Առձեռն»-ում հասնում է 1840-ի։ Բառարանից երևում է նաև, որ յ-ն բառասկզբում կարող է նախորդել ա, ե, ի, ո, ու, մ, օ, դ, ս տառերին։ Մի երկու օրինակ յուրաքանչյուրից՝ յագենամ, յագած, յածեմ, յակինթ, յաղազս, յաղթ, յաճախ, յենում, յեղում, յելուզակ, յեղանակ, յիմար, յիշեցում, յոյր, յոռի, յոյլ, յոլով, յուսամ, յուրան, յուռութ, յուշկապարիկ, յօդ, յօն, յօղեմ, յօրանամ, յօրինեմ, յղեմ, յղփանամ, յղենամ, յստակ և այլն։

2. Իբրև նախդիր, երբ համապատասխան բառաձևն սկսվում է ձայնավորով՝ յագգէ, յայգուէ, յարանց, յամէ, յառնէ, յառաջնմէ, յայնկոյս և այլն։ Սրանք էլ նախորդների նման յ-ով են արտասանվում՝ յառանց-ը՝ եառանց, յառնէ-ն՝ եառնէ, յառաջնմէ-ն՝ եառաջնմէ, և այլն։

3. Բառամիջում ա, ո-ից հետո՝ ընծայել, ախոյեան, քահանայի, կային, սատանայական, հոյակապ, խոյակ, գոյակ և այլն։

4. Բառավերջում ա, ո-ից հետո՝ արքայ, լումայ, ծառայ, քահանայ, պաշտանեայ, արգոյ, ձուլածոյ, մարդոյ, խաղայ, երթայ, վերայ, իմոյ, միջօրեայ, վերոյ, հաւատայ, հայ, վայ, բայ, գոյ և այլն։

Սրանցից մի մասը յ-ն ունի իր ուղիղ ձևում՝ կաթսայ, աբեղայ, մի մասը ածանցավոր (եռաբարբառ)՝ գործունեայ, հրաշեայ, ամենօրեայ, անձնեայ, մի մասն էլ թեք ձևերում՝ Աղամայ, մարդոյ, Արշակայ և այլն։

Մյուս ձայնավորներից հետո պարզ բառերում յ տառ չի լինում՝ նստի, հասու, հիւլէ։ Օտար ույaz-ը հայերեն դառնում է

նիազ: Գաբրիէլ, Անանիա, Ուրիել, մարգարէի օտար բառերը գրովում են առանց յ-ի:

3-ով սկսվող բառերը բարդվելիս կամ ածանցվելիս բառամիջում չ տառը պահպանում են (անյողողող, անյաշտ, բարեյիշասակ, անյաղթ և այլն):

Ի տարբերություն 4-րդ կանոնի, բառավերջում չ տառ չեն ունենում՝ ա) հրամայական եղանակի բայերը՝ մատո՛ւ, աւգնեա՛ւ. յիշեա՛ւ, գթա՛ւ, զգեցո՛ւ և այլն, բ) սա, դա, նա, սորա, դորա, նորա. սմա, դմա, նմա, զսա, զդա, զնա, սոցա, դոցա, նոցա և քո դերանունները, գ) ահա, ապա բառերը և եա վերջավորութեամբ մի րանի մակբայական բառեր՝ համարեա, գոնեա, դրեա թէ և այլն, որոնք սերում են հրամայական եղանակի ձևերից, դ) օտարազգի անունները ուղիղ ձևում՝ Գաղիղեա, Յուդա, Եզեկեա, Եւա, Մաղաքեա, Եղեսիա, Եղիա և այլն:

Բառավերջում չ տառը պահպանել են այն բառերը, որոնց ածման, թեքման ժամանակ յ-ն հնչել է: Օրինակ՝ արքայ—յարքայէ, իսկ ա, ր, գ կետերի տակ նշված բառերը այդպիսի փոփոխության չեն ենթարկվում:

Ի՞նչ շեղումներ կան մեր նշած կանոններից:

Ամենից առաջ տարածված է բառավերջի ա. ո տառերին հաջորդող չ տառի անկումը, մի բան, որ վկայում է, թե դեռ Ե—Ձ դարերից բառավերջի յ-ն սկսել էր շհնչել: Ա. Աբրահամյանը հիշյալ հոգնածում գրում է, որ բառավերջի համը յ-ի անկումը Թ դարում փաստ էր, բայց այն սկսվել էր դեռ Զ դարից (էջ 78—82): Անկումը նկատվում է.

1. բառի ուղիղ ձևում: Հնագույն օրինակը Դվինի Կաթուղիկէ կէկղեցու կղմինդրի արձանագրության մեջ հանդիպած «ծառա» ձևն է, իսկ այդ արձանագրությունը ըստ Կ. Ղաֆաղարյանի Ե—Ձ դարի է (ԿՂԳ, 247):

Այդ ձևին հանդիպում ենք նաև Արուճի տաճարի արեւելյան պատի արձանագրության մեջ՝ «Մառա Սմբատա Բագրատունո» (867 թ. Քար, 11): Ինչպես տեսնում ենք, երեք բառում էլ պակասում է յ-ն: Լազարյան Ավետարանում՝ «Խաւար եղեւ ի վերա մաննայն երկրի» (69^Վ): «Դիզանել ի վերա Նորա» (138^Բ): «Զի ոչ է մարթ մարգարէի արտաբո» (147^Բ): Կյուրեղի երկի պատառիկում հանդիպում են՝ իննամսեա, բազմամսեա, ի վերա³⁹:

2. Բառի թեք ձևերում: Արուճի Ս. Գրիգոր կէկղեցու 867 թ. արձանագրությունում գրված է. «Ես Գրիգոր որդի Վառամա, ծառա

Սմբատա Բագրատունո, եկի հրամանաւ Սմբատա» (Քար, 11); Արտավազդ Կամսարականի տապանի վրա՝ «Որդի Հրահատա պատրկի Շիրակայ», որը Ը դարի գրություն է (Քար, 10): «Այս դիր Յոհանայ է Գրիգորո»,—գրված է Դվինի է դարի մի տապանագրում (ԿՂԴ, 244): Գնթունյաց Դավիթ իշխանի գերեզմանաքարին, հիշյալ արձանագրությունում՝ «Որդո Վասակա»: «Այս դիրս Գևորգա քահանայի է»,—գրված է նույն տեղում Գևորգ քահանայի տապանագրում (ԿՂԴ, 244): «Վահրամա բերապետի» (Թ դար, Թալին, Марр, 99): Լազարյան Ավետարանում՝ «Բերեր ընդ միո երէսուն, ընդ միո վաթսուն, ընդ միո հարիր» (80^v): «Պարտ է արդտ մարդոյ» (94^v): «Դուք ի քզենոտ անտի ուսջիք զառակն» (101^r): «Եւ մի ընդ մարմնո զինչ սգենուցուք» (142^v):

3. Բառամիջում, ա, ո-ից հետո: Արուճի հիշյալ տաճարի պատին. «Ի տէրութի Սմբատայ Հաոց ասպարապետի Բագրատունո, եւ ի կաթաղիկոսութի Զաֆառիաի եղեւ կոիւ» (Քար, 11, 867 թ.): Մաստարայի եկեղեցու պատին է դարի 2-րդ կեսի մի արձանագրությունում գրված է՝ «Շինեցաւ ածաին տունս» (Քար, 8): «Ես Կատրանիդէ հաոց թագուհի»,—գրված է Գառնիի խաչքարին, ՅԻ՝ (879 թ., Гарни, 84): «Ազաթանգեղոս ուսեալ հոռմաւեւն» (Ազ, 80): Լազարյան Ավետարանում՝ «Փարիսեցիքն եւ ամենայն հրեաւն» (90^r): «Ի բերանո յերկուց կամ երեց վկայից հաստատեցի» (39^v): «Լուաք զհայհոութիւն ի բերանոյ դորա» (106^r):

4. Սահմանական եղանակի եզակի 1-ին կամ 3-րդ դեմքի բայերի վերջում: Օրինակ՝ «Կամեցա ժողովել զմանկունս քո» (Լազ, 54^r): «Զի քաղցեա եւ ետուք ինձ ուտել» (60^r): «Եթե ձեռն քո կա» (39^r) և այլն:

3-ն կարող է ընկնել նաև բառասկզբում: Օրինակ՝ № 10100 ձեռագրում (Թ դար) յաջողութիւն ձեռի փոխարեն գրված է աջողութիւն (էջ 7):

Նկատվում են յ տառի նաև անհարկի կիրառություններ.

ա) գոյական անուններում, բայերում: Օրինակ՝ Լազարյան Ավետարանում. «Ած և սբ Ածայնին, միալքանեմք» (8^v): «Կերան եւ յալգեցան» (88^v, 53^r): Ուխտատուր վանականի՝ Թալինի մայր եկեղեցու ձախակողմյան սյան արեւմտյան երեսին 783 թ. գրած

արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Ուխտաշտուր վանա-
կ(ա)նս և Տուտի եղբայր իմ բերաք» (Քար, 10):

բ) Հրամայական բայերի վերջում: Սիսիանի մի արձանագրու-
թյունում գրված է. «Ած մարդասէր յիշեայ Աշակի Գրիգորեան»,
իսկ արձանագրությունը Ս. Բարխուդարյանը համարում է 6—7-րդ
դարի (Դիվ, II, 87): Լազարյան Ավետարանում հանդիպում են՝
դարձո՛յ, մատո՛յ, հատո՛յ, գործեա՛յ, կոշեա՛յ շեղված գրությամբ
բայեր, նմայ, սմայ գրությամբ դերանուններ:

Այս օրինակները ցույց են տալիս, որ եթե գրիչը հետևել է
հնչյունական գրությանը, բառավերջի համը յ-ն չի գրել, որովհետև
չի հնչել, իսկ եթե հետևել է ափանդական գրությանը, գրել է, նույ-
նիսկ ծայրահեղության է հասել՝ գրելով նաև այնպիսի դիրքում,
որտեղ հարկ չկա:

Մեր կարծիքով չ տառի անհարկի գրությունը նաև երկու երե-
վույթի հետևանք է. ա) նմանակության, երբ գրիչը ա. ո տառերով
վերջացող հրամայական բայերի կամ դերանունների վերջում յ-ն
գրում է՝ նմանեցնելով դրանք ա-ո տառերով վերջացող մյուս բա-
ռերին (գիտակցաբար կամ շիմանալով): բ) Բառամիջում յ-ն
գրում է, երբ բառը բարդ կամ ածանցավոր է լինում և առաջին
բաղադրիչը ա-ով է վերջանում կամ ա հոդակապ ունի: Օրինակ՝
ուխտաշտուր, միայրանեմբ բառերում գրիչը յ տառը գրել է՝ կար-
ծելով, թե դրանք ուխտ և մի բառերի թեք ձևերն են, ուր յ տառը
պիտի գրվի (ուխտայ, միայ), այսինքն՝ ստուգաբանական հիմուն-
քով է գրել, իր կարծիքով հենվել է բառի կազմությանը, թեև բեր-
ված օրինակներում ա-ն հոդակապ է: Պարզ բառերում (յայգեցան)
յ-ն գրել է, նմանեցնելով այն բառերին, որոնք բառամիջում ա-ն
տառերին հաջորդող յ տառ ունեն (հայոց, գոյութին):

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա, ի ձայնավորների ուղղագրությունը, ինչպես տեսանք վերե-
վում, պարզ է, բոլոր դիրքերում ինչպես լսվում, այնպես էլ գրե-
վում են: Մեր ո-ն համապատասխանում է հունարենի, վրացերենի
և առհասարակ օտարազգի օ-ին: Օրինակ՝ պահլավերեն ročik >
հայ. ոռճիկ, ասոր. tohwa-wōh > թոհուբոհ: Պահլավական
Xvarasā, Xusrev, axxar բառերը հայերը վերցրել են պարս-
կերենի միջոցով, ուր այդ բառերի a, u-ն դարձել են օ և այդ-
պես էլ անցել մեզ՝ խորասան, խոսրով, ախոռ: Հունարեն πῆχονος >

եպիսկոպոս, 'Ομοῦπια > Ուիմպիա (Ողիմպիա), 'Οδοντισ< >
 Ողիսեւս, 'Ο'ρὶνδὸξ< > Որթողոքս և այլն: Հայերենի ո-ի դիմաց
 օտարներն էլ օ են դնում. Մոկս > Moxoene, Մոփ< > Cophene.
 Թորգոմ > Θορζωμ, Նոր-Շիրական > Νορσιρων: Մեր ամբոխ բառը
 վրացերեն նույնպես օ-ով է՝ ambuxi. Խոց > xoci, Խոփ > xophi,
 կոշտ > koshì, ոսպ > ospì. ոստիկան, որ պահպաններեն òstikān
 բառից է, վրացերենում դարձել է ostinagì, հայ. որբ > վրաց.
 oboli, որմն > orme: Հետաքրքիր է, որ հունարեն βεῖ-ը հայերեն
 դարձել է վոռ, վոռեսա, եթե բառասկզբում ո-ն վզ կարդացված
 լիներ, այլևս կարիք չէր լինի վ տառն ավելացնելու: Ուրեմն Մես-
 րոպի ժամանակ բոլոր դիրքերում ո-ն օ է կարդացվել և ո գրվել⁴⁰:

Քերականական մի ձևույթ՝ ենթակայական դերբայի ող վերջա-
 վորությունը, սկզբից ևեթ (ե դարից) գրվել է երկու ձևով՝ ող և
 աղ (հետագայում՝ նաև օղ): Մեր կարդացած ձևագրերում, վի-
 մական արձանագրություններում նույնպես դա հանդիպում է աղ և
 ող գրություններով: Օրինակ՝ Մրենի տաճարի արևմտյան պատի
 ճակատի արձանագրության մեջ (637—640 թթ.) գրված է. «Որդի
 Հերակղի, բարեյաղթող թագաւորի» (Քար, տախտակ Գ), իսկ Արու-
 ճի (Բալիշ) Գրիգոր Մամիկոնյանի արձանագրության մեջ (668 թ.)
 կարդում ենք. «Ի բարեխաւսութիւն շինաւղաց զսա» (Քար, տախ-
 տակ Զ): Հարց է, թե ինչպես են արտասանել գրող և գրաւղ ձևերը,
 երկուսն էլ օ-ով (groγ), թե՞ առաջինը օ-ով, երկրորդը՝ օւ-ով
 (grauγ): Դժվար թե միևնույն բառը երկու հնչում ունենար: Հա-
 վանական է, որ օ-ով են արտասանել: Հետաքրքիր հարց է նաև,
 թե դրանցից ո՞ր ձևն է վաղ օգտագործվել: Ա. Աբրահամյանը վերը
 հիշատակված հոդվածում հնարավոր է համարում, որ զույգ ձևեր
 են եղել և որ դրանք քերականական տարբեր իմաստներ են արտա-
 հայտել, հետո նույնացել են: Ընդհանրապես լեզվաբանները դր-
 անք համարում են հնիս. տարբեր արմատներից ծագած զույգ
 ձևեր:

Ու տառը այբուբենում չկա, որովհետև նրա բաղադրիչները
 (ո և յ) իրենց համապատասխան տեղերում կան: Հնում փորձեր են
 եղել գրել մի տառով (ո ձևով), բայց դա շփոթվում էր ո տառի
 հետ և դադարեցվեց: Ու-ն Թրակացու մեկնիչները դրել են օւ
 երկբարբառի դիմաց, երկբարբառ են համարել: Բայց նա պարզ ու
 է եղել, որ երևում է տառադարձությունից: Պարսկ. Sūrēn >

Պուրեն, Šapuhr>Շապուհ, zūr>զուր, kurra>քուռակ, ասոր.
 kufra>կուպր, հայերեն Արծրունեաց>հուն. Ἀρδύρανος. Խոս-
 րովդուխտ>Χοσροῦδουχία. Խախուտ>վրաց. xaxuti, բուրդ>
 burdi, պտուղ>ptughi (ptuli): Ըստ Աճառյանի մեր նախաշեշտ ու-
 ոյ-ից է: Օրինակ՝ պահլ. anošak>անոյշակ, անուշակ, moča k>
 >մոյճակ>մուճակ, հունարեն σκουτέλα (scutela)>սկուտեղ,
 χαρτολαφός>քարտուղար, μαρτύριον>մատուռն. այսպես են տառա-
 դարձված Յուստոս, Յուդա, յունիս, յուլիս, Երուսաղեմ բառերը:

Ե—է. — Ե-ն Մաշտոցի այբուբենում հինգերորդ տառն է,
 համապատասխանում է հունարեն ε տառին, իսկ է-ն յոթերորդ
 տառն է և համապատասխանում է η տառին: Հունարեն ἐπίσχυρος>
 >հայ. եպիսկոպոս, ἰέρμα>թեմ, ὀλίφιν>դելփին. μέλαν>մե-
 դան, σκουτέλα (scutela)>սկուտեղ. Νεσλος>Նեղոս, ἔβενος>եբենոս,
 ἑπαρχος>եպարքոս, Ἑὸρπίδης>Եւրիպիդէս, Ἑὸρῶπις>Եւրոպէ և
 ալլն: Հունարեն ἀλόη>հալուէ, αἰθέρ>եթէր, χυροαχτι>կիւրակէ,
 ῥοπη>րոպէ, ὠλή>հիւղէ, Ἀριστοχράτης>Արիստոկրատէս, Ἑὸρ-
 πίδης>Եւրիպիդէս, Ἡέρακλῆς>Հերակլէս և ալլն⁴¹:

«Հին հայերենը, — գրում է Աճառյանը, — ուներ երկու տեսակ
 e, որոնցից մեկը այբուբենի մեջ նշանակված է ե ձևով, մյուսը՝ է:
 Թեև այս երկուսի հնչական տարբերությունը մեզ անհայտ է, բայց
 քննությունները ցույց են տալիս, որ ե-ն բաց e էր, է-ն՝ փակ»⁴².
 է. Աղայանն էլ գրում է, թե դասական հայերենում (Ե դարի I կես-
 սին) է-ն եղել է երկբարբառակերպ⁴³:

Աճառյանը բերում է Հյուբշմանի կարծիքը⁴⁴, ըստ որի գրերի
 գյուտի ժամանակ է-ն հավասար էր եյ երկհնչյունին: Դա երևում է
 քայի դիմային վերջավորությունից՝ աղամ, աղաս, աղայ, սրան
 համապատասխան՝ սիրեմ, սիրես, սիրեյ>սիրէ, նույնը և հոգնա-
 կիում՝ աղամք, աղայք, աղան, սիրեմք, սիրեյք>սիրէք, սիրեն,
 այդպես էլ՝ սիրէաք ձևը: Այս ձևով են առաջացել պաշտաւնէի,
 քրիստոնէի և նման ձևերը (պաշտաւնեայի>պաշտաւնեյի>պաշ-
 տաւնէի, քրիստոնեայի>քրիստոնեյի>քրիստոնէի):

Միայն է կարծել, թե Ե դարում էլ ե-ն բառասկզբում ye է կար-
 դացվել: Ե-ն ամենուրեք ē է կարդացվել, ուստի օտարազգի e-ն
 հայերենում արտահայտել են ե-ով, ինչպես տեսանք հունարենի
 օրինակներում: Այդպես էլ ասորական Eliša > հայ. Եղիշա,

պահլավ. Eran > հայ. Երան: Աճառյանը երկու բառ է հիշատակում, որոնց ye-ն տառադարձվել է ե՝ Վերթնիք > Երուսաղեմ, Ἱερουσαλὴμ > Երեմ, դա էլ սեմական ազդեցություն է համարում (303): Մյուս կողմից. մեր ե-ն օտար լեզուները տառադարձում են e (Երասխ— Ἐρασξ, Երևան— Erevan, երդ > erdo և այլն): Իր այս փաստարկներին Աճառյանն ավելացնում է մի երրորդը ևս: Հայերենում Բ-ով սկսվող օտար բառերի սկզբում մի ձայնավոր է ավելանում (ե, ա, ը կամ ու), օրինակ՝ երասան, երանգ, երամ, երակ, առասան (քարբառներում՝ ըռհհան, ըռզակ, ըռահաթ, ուռուս): Եթե ե-ն պարզ ձայնավոր չլիներ, չէր ավելանա Բ-ից առաջ (303):

Վերջապես Ե դարից եղանակ. երկար բառերը մեզ են հասել նաև լեղանակ, լեռկար ձևով: Օրինակ՝ Խենի «Յաղագս ճարտասանական կրթութեան» գրքում՝ «Յեղանակը են սորա նախկին չորք» (էջ 181), «լեղանակարէն» (էջ 40), «լեղանակումն» ակամայ կամ կամաւոր» (էջ 70): Դաւթի Քերականութեան մեջ. «Որպէսզի յառաջիկայսն յիշատակ յերկարաձգեսցի»⁴⁵: Յեղանակ են կոչված Եղիշի «Պատմութեան» գլուխները: Եթէ բառասկզբում ե-ն յէ կարդացված լիներ, կարիք չէր լինի յ-ն ավելացնել, որ Ե դարում, ինչպես տեսանք, ամենուրեք յ(յ) հնչումն ուներ: Զէին գրի յԵգիպտոս, յերկուց, յերազ, այլ՝ ի Եգիպտոս, ի երկուց, ի երազ որովհետեւ երկու յ(յյ), իրար կողքի չէին լինի:

Նկատի պիտի ունենալ նաև այն հանգամանքը, որ ոչ միշտ է հունարեն ե-ի դիմաց հայերեն ե գրվել, իսկ դ-ի դիմաց՝ է: Հաճախ դրանք շփոթել են գրիչները, որ նույնպես բխում է նրանց հնչյունային նմանությունից: Այդ երևույթը երևում է նաև Կ. Բրոկելմանի հոդվածում բերված օրինակներից⁴⁶: Բերենք մի քանիսը լւղւոյ > մեքենա, իւլւոյ > հոետոր, Մղւոյ > Մեղէա. քաղւոյ > եկեղեցի, լաւաւոյ > լապտեր, իւլա > բեմ, լաւաւա > կանթեղ, լաւաւոյ > քարտեւ-քարտեգ, իւլաւոյ > դենար, լաւաւոյ > սատեր, լաւաւոյ > կղեր, լաւաւոյ > մետրոպոլիտ, լաւաւա > կաթողիկեայ, լաւաւոյ > պոետես, լաւաւոյ > Հոմերոս, լաւաւոյ > Զենոն ալլն: Այս բոլոր բառերում հունարեն դ-ի դիմաց գրված է հայերեն ե է-ի փոխարեն: Բայց հանդիպում է նաև հակառակը՝ ե > լ տառադարձությունը: Ալաւոյ > լեզէոն, Մղւոյ > Մեղէա և այլն: Բրոկելմանի հիշատակած 74 բառից 44-ում հունարեն ե-ի է

համապատասխանում է հայերեն Ե-ն, Պ-ին՝ Է-ն, սակայն երեսուն բառերում այդ կարգը խախտված է, ըստ որում հունարեն ϵ , γ -ն հայերենում բառամիջում դառնում են գերազանցապես Ե: Բառասկզբում հունարենից փոխառյալ Է-ով սկսվող բառ չունենք: Սա, ըստ երևույթին, նրանից է, որ հունարենում էլ Պ-ով սկսվող բառերը քիչ են, ինչպես հայերենում է: Գոհե Հյուբշմանը ճիշտ էր, որ Ե դարում մեր այդ տառերի հնչման միջև տարբերությունը գրեթե վերացել էր, բայց մեր կարծիքով դա ուշ է նկատվում, մոտավորապես Է դարից: Այս բանը մենք կտեսնենք նաև քիչ հետո, երբ կքննենք այդ տառերի կիրառությունը մեր մատենագրության և վիմական արձանագրությունների մեջ: Իսկ այժմ ներկայացնենք Ե—Ն հնչույթների գրությունը: Իրանք, թեև գրության մեջ հաճախ խառնվում էին, այնուամենայնիվ գործածության իրենց որոշակի ոլորտն ունեին:

Ե.—Բառասկզբում Ե հնչյունը գերազանցապես և տառով է գրվում: Ըստ «Հայկազեան բառարան»-ի Ե տառով սկսվող բառերը 7 անգամ ավելի են Է-ով սկսվող բառերից: Ե տառով կարող են սկսվել թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերը, զրանց թիվը «Հայկազյան բառարան»-ում հասնում է 1500-ի: Բառասկզբի Ե տառին հաջորդում են հետևյալ տառերը. ա (միայն Լալթե բառում), բ (եբրայեցի, եբրայաւանդ), գ (եգիպտական), դ (եղեմ եղեմական), զ (եզ, եզակի, եզերք), թ (եթեր, եթէ, եթէովպացի), լ (Ել-ը իր բաղադրություններով), կ (եկ, եկեղեցի), ղ (եղանակ, եղբայր, եղեգն, եղծ), ն (ենթադրել, ենթակայ), պ (եպերեմ, եպիսկոպոս), ո (եռ, եռագոյն, եռանդ), ս (ես), տ (ետեղ, ետեղապահ), ռ (երազ, երազահոս, երաժիշտ, երախտիք, երամակ, երան, երանգ, երբ, երփներանգ, երրորդ), յ (եւ), օ (եօթ-ը իր բաղադրություններով): Ուրեմն բառասկզբի Ե-ն նախորդում է հիմնականում գ. ք. լ. կ. դ. պ. ն. ո, ր տառերին, մի երկու բառերում էլ՝ ա. բ. գ. դ. մ. տ. յ. օ տառերին: Մնացած տառերից առաջ բառասկզբում Ե տառ չի լինում:

Ե-ն նաև 1. խոնարհիչ է՝ ածել, ասել, բեկանել, բերել, բուժել. ցանել և այլն:

2. Հոլովիչ է՝ աստեղ, դստեր, աղբեր, ազդեր, անզեղ, արկեղ, եզեր, լտեր, կայսեր և այլն:

3. Բայի անցյալ կատարյալի նախահավելված է, եթե նա բաղաձայնով է սկսվում՝ ետու, եգիտ, եթող, եբեր, ետես, եդին, եհատ, եմուտ, եցոյց և այլն:

4. Ավելանում է Ե-ով սկսվող փոխառյալ բառերին, իբրև հենարան, հայացի դարձնելով նրանք՝ երան(ք) «մեջք», երանգ, երաշխ, երասան, երակ, երամ, երամակ և այլն:

Բառամիջի երկու բաղաձայնի նախորդող Ե-ն գրվում է ե տառով՝ հեղգ, խեղդ, զգեստ, բարձրաբերձ, տենդ, տենշ, շեշտ, հեշտ: և այլն: Բացառություներ են՝

ա) եղէգն, բէշկ բառերը, բ) բացառականի ի մէնջ, ի ձէնջ ձևերը, գ) այն բառերը, որոնց երկրորդ բաղաձայնը Բ հոգնակերտն է՝ դէմք, արէնք, վէրք, շէնք և այլն, որովհետև դրանց է-ն բառն ածելիս փոխվում է Ի-ի (դիմաւոր, արինաց):

Բառավերջի բաղաձայնին նախորդող Ե հնչույթը կարող է գրվել թե՛ է, թե՛ ե տառերով: Այդ դիրքում ե տառին կարող են հաջորդել՝ գ (եզ «մեկ», գեզ «ճեղք», հեզ, բեհեզ, մեզ, քեզ), լ (արգել, ընդել, ընտել, թել, վայել, անել, աւել), խ (զեխ, մառեխ, տառեխ, մարեխ, մորեխ, պարեխ), ծ (ասեղնածեծ, հեծ, ցեծ, մեծ), կ (բեկ, սարեկ, իրազեկ), ճ (գեհ, նժդեհ, հրդեհ, պատեհ), ղ (բեղ, գեղ, քաղցկեղ, ահեղ, փառահեղ, բաղեղ, ուղեղ, տաշեղ, պրղպեղ, սկուտեղ, հանճարեղ), մ (եմ, բեմ, եղեմ, թեմ, դժխեմ, կեմ համեմ, գրեմ և եմ-ով վերջացող բոլոր բայերը), ն (բեն, այբուբեն, դեն, զեն «զոհ», արդեն, գեհեն), ո (եռ, դեռ, գեռ, թեռ, ժեռ), ս (ես, տես, լրտես, տնտես, երես գոգցես համտես), շտ (հրաժեշտ, հեշտ, պարկեշտ, շեշտ, զաւեշտ), ոճ (բեռն, թիթեռն, ձեռն, եղեռն, ձմեռն, լիսեռն, բաստեռն և մնացած եռ-ով վերջացող բառերը), ձտ (զգեստ, պահեստ, համեստ, գովեստ, արուեստ), տ (ետ, գետ, հետ, վարդապետ, ասպետ, անջրպետ, նաև ետղ, տետր, յետս), ր (ե՞ր, այեր, բեր, աղանդեր, թեր, եթեր, մթեր, ընթեր), ց (խեց, հեց, յեց, որմացեց, վեց), Վ (պարգեւ, դեւ, թեւ, թեթեւ, ձեւ, կեղեւեւ, արեւ), փ (եփ, անեփ, թեփ, ծեփ, կանեփ, շերեփ), ք (երբեք, ուրեք, ուստեք, չորեք): Նաև ղբ. րբ, րփ, մբ, րգ տառակապակցությունները մի քանի բառերում (բեմք, դեղք, շեղք, ջերբն (ջնջոց), ցերբ, երփն):

Ե տառով գրվող Ե հնչույթը չի հնչյունափոխվում (պատկեր—պատկերահան, տերեւ—տերեւաթափ, արեւ—արեւածագ, գեր—գերագոյն, թեր—թերահաւատ և այլն), բացառությամբ մի քանի բառերի՝ դեւ—դիւական, ճետ «սերունդ»—անճիտելի, թեկն—թիկունք, լիսեռն—լիսռան, թիթեղն—թիթղան, ասեղն—ասղան, թիթեռն—թիթռունք և այլն:

Երբ երկու ե իրար կողք են ընկնում, նրանց միջև մի հ է ավել-

լանում՝ բեհեզ, գեհեն, մեհեկան, մեհենական, մեհեան, բոլորն էլ փոխառյալ:

Եփրայական անուններում և-ն ու է-ն կարող են իրար կողքի լինել՝ Բեթղեէմ, Բեէզբուդա, գեէզի նաև՝ բեէյմաուն, բեէյսար:

Գրեթե միշտ վերջին վանկից առաջ Ե հնչույթը և տառով է արտահայտվում՝ բացառությամբ մի քանի բաղադրյալ (բարդ կամ ածանցավոր) բառերի, որոնք կազմված են կամ և տառն ունեցող բառերից (անարէնութիւն, տնարէնութիւն, տէրութիւն, ամէնաւր-հնեալ, վրէժխնդիր), կամ միացած են հոդակապի դեր կատարող է-ով, որն առաջացել է ևայ-ից (ալէկաւծ, ոսկէգաւծ, աղէբեկ <ալեայկաւծ, ոսկեայկաւծ, աղեայբեկ):

Է.— Բառասկզբում Ե հնչույթը և տառով է գրվում շատ սահմանափակ միավանկ բառերում, դրանց թիվը «Առձեռն բառա-րան»-ում երեսունից չի անցնում: Այդ բառերում է-ին հաջորդում են հետևյալ տառերը. ա (էակ, էական, էապես, էացուցիչ), գ (էգ), լ (էլի), մ (էմբ, «դռան բանալու անցքը»), շ (էշ), ու (էու-թիւն), ջ (էջ), ր (էր):

Բառասկզբում և տառը գրվում է անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի բայերի սկզբում, իբրև նախահավելված, եթէ այդ բայերը սկսվում են ձայնավորով՝ էառ, էօծ, էած, էանց, էարկ և այլն: Է տառով են սկսվում նաև ևմ բայի անցյալի ձևերը՝ էի, էիր, էր, էաք, էիք, էին:

Բառավերջում Ե հնչույթը միշտ գրվում է և տառով: Օրինակ՝ ի սրտէ, յաստեղէ, ի ծայրէ, յորովայնէ, ի հացէ, յոստայնէ, յարկեղէ, գրէ, հնչէ, շարժէ, գտանէ, գտիցէ, գտանիցէ, շարժիցէ մնացէ, գողանայցէ, հոգնակի հրամայականի շարժեցէ՛ք, գտէ՛ք և այլն ձևերը: Նաև սլարդ բառերը՝ ըոպէ, Սերովբէ, եթէ, թէ, երէ, (էրէ), Վաչէ, հալուէ, Քերովբէ և այլն: Է տառով են գրվել բայի անկատարի ձևերը (գրէի, աղաչէին):

Է տառով է արտահայտվում միավանկ բառերի Ե հնչույթը՝ կէս, գէս, (գիսակ), սէգ, սէզ, կէտ, դէս, դէմ, դէտ, վէժ, տէգ, գէտ (գիտուն), դէզ, քէշ, քէն, վէզ, վէմ, վէտ, հէն, մէշ, վէս, ծէս, մէտ. սլէտ, ջէր, սէր, մէց, մէգ, տէգ, հէգ, ինչպես և՛ ի ձէնջ, ի մէնջ և այլն:

Է-ն ամենուրեք շեշտակիր է: Նախաշեշտ վանկում այն կարող է լինել միայն ձայնավորին նախորդող դիրքում (քնէած, միջարէ-ից, ոսկէօղ և այլն):

Ասացինք, որ բառավերջի մեկ բաղաձայնին նախորդող Ե հնչույթը կարող է և՛ և, և՛ է տառերով արտահայտվել, ու բերեցինք

Ե-ով օրինակներ, այժմ տեսնենք, թե հիշյալ դիրքում ինչ բաղա-
 ձայններ են հաջորդում է տառին: Այդ տառերն են՝ զ (զէզ, կէզ,
 դէզ, բզէզ, արալէզ, մէզ, շրէզ—սինձ, գոմէզ, քարտէզ, պարտէզ,
 ասպարէզ, երէզ), ժ (բէժ, «ծածկոց», խէժ, վէժ, վրէժ, յաւէժ), լ
 (սաղախէլ, Սամուէլ, Դանիէլ, Միքայէլ, Գաբրիէլ, Ուրիէլ, ապրիէլ.
 բոլորն էլ օտար փոխառություն, բնիկ հայերեն էլ-ով վերջացող բառ
 չունենք), ծ (անէծք), կ (շէկ, երէկ, պուտաշէկ), ղ (դէղ, թէղ—ր).
 ճ (գէճ, դառէճ «թռչուն», վէճ, բուէճ), մ (դէմ, ապադէմ. վէմ, էմր).
 ճ (դէն, բադէն, «կտավե շապիկ», անդէն, արդէն, շէն, ապաւէն,
 ասպաւէն), շ (գէշ, գեղուղէշ, գոմէշ, խենէշ, պատնէշ, կիսէշ, հրէշ.
 խերեւէշ), պ (դէպ, հանդէպ, ստէպ, վրէպ), ջ (սնամէջ, անշէջ.
 ամամէջ, առէջ, ելեւէջ), ս (գէս, նարգէս, հանդէս, կրկէս, մողէս,
 աշսպէս և բոլոր պէս-ով վերջացող բառերը), տ (խորագէտ, ադէտ,
 խայտաբղէտ, առնէտ, շահաւէտ, յաւէտ), ր (գէր, ընդէր, հրաւէր,
 փեսաւէր, նուէր, վատշուէր), ց (ընկէց, քաղընկէց, երէց, ձեռնե-
 րէց, եղէց), գ (էղէգ, էգ), ֆ (խաշարհնէք, ջրարհնէք, քաղէք):
 էշտ. էստ. էգ. էփ-ով վերջացող բառեր չկան, որովհետև
 առաջին երկուսում Ե-ն ընկել է երկու բաղաձայնից առաջ, ուր,
 ինչպես տեսանք, Ե տառով է արտահայտվում, էվ-ով չկա, որով-
 հետև վ-ն այդ դիրքում ո-ից հետո է գրվում:

Բառավերջի մեկ բաղաձայնից առաջ լսվող Ե-ն եթե բառը ա-
 ճելիս հնչյունափոխվում է, գրվում է է տառով՝ կէզ—կիզէլ, դէզ—
 —դիզէլ, պարտէզ—պարտիզպան, շէն—շինութեան, կէս—կիսէլ,
 սէր—սիրէլ, իսկ եթե չի հնչյունափոխվում՝ Ե տառով. եթեր—եթե-
 րային, գետ—գետադարձ, գետաբերան, իսկ գէտ—գիտուն:

Է տառով գրվող բառերն աճելիս է-ի փոխարեն գրվում է Ե
 տառը, եթե ի հնչույթի չի փոխվում, օրինակ՝ աղէտ—աղետից,
 եղէզն—եղեգան, Մովսէս—Մովսեսի, հայերէն—հայերենագէտ,
 արէն—տնարենութիւն, տէր—տերութիւն, տանուտերութիւն և
 այլն: Մրենի տաճարի արևմտյան պատին, 639—640 թվականների
 մի արձանագրությունում՝ «Ի տանուտերութեան ներսեհի» (Քար.
 տախտակ Գ): Արուճի Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան պատին Գրի-
 գոր Մամիկոնյանի 668 թվականի արձանագրության մեջ՝ «Ի տե-
 րութի Սմբատա» (Քար, 11):

Այժմ տեսնենք, թե Ե և է տառերի այս ընդունված գրությու-
 նից ի՞նչ շեղումներ են նկատվում Ե—Թ դարերում:

Ամենից շատ տարածված է է տառի փոխարեն Ե-ի գրությու-
 նը: Հռիփսիմեի վանքի պատին Կոմիտաս կաթողիկոսի արձանա-
 գրությունում, որ 618 թվականի է, Հռիփսիմե անունը թե՛ Ե-ով է

գրված, թե՛ է-ով: «Ես Կոմիտաս եկեղեցապան սրբոյ Հռիփսիմէի կոչեցայ», բայց և՛ «շինաւղ սրբոյ Հռիփսիմէի» (Օրճ, 407): Մրենի տաճարի արեւմտյան պատին (638—640 թթ.) գրված է ամեն, փոխ. ամէն (Օրճ, 391), Թալինի մայր եկեղեցու ձախակողմյան սյան արեւմտյան երեսին Ուխտատուր վանականի արձանագրության մեջ (783 թ.) կարդում ենք՝ «թե յիշխ(ա)նաց որ խն» (Քար, 10): «Ես Յովհաննէս վարդապետ, ծառա սրբոյ Գրիգորի, յաղաւթս յիշեցէք իտր»: «Զվարդան մեղաւոր յիշեցեք»: Եւս երկու նախադասություններն էլ բերված են Դվինի Զ—է դարից մնացած արձանագրությունից, ուր է տառի փոխարեն և է գրված (ԿՂԴ, 247): «Յամս տն Թևոդորոսի շինեցաւ»,—գրված է Մաստարայի եկեղեցու պատին է դարի երկրորդ կեսին (Քար, 8):

Է տառի փոխարեն և է հանդիպում հատկապես՝

1. բայի անցյալ անկատարի ձևերում: Ագաթանգեղոսի կրկն... գիր բնագրում հանդիպում են. «Պահին զամենայն անցս ճանապարհաց պողոտայիցն» (Ագ, 130): «Կազմեին զայն» (Ագ, 131): «Զնոսա դատեին, եւ որ լինեին հոգւովն մարգարէութեան» (Ագ, 158): «Իբրև մեռանեին դատաւորքն, տանեին»: «Պատկերաց երկիր պազանեին» (Ագ, 158): Մատենադարանի № 10100 ձեռագրում (Թ դար), որ պարունակում է Կյուրեղի «Կոշումն ընծայութեան» երկը, գրված է. «Յանաւրէն կարծեին հեթանոսքն» (էջ 15բ): Նույն աշխատության Թ դարի պատառիկում, որ հրատարակել է Ս. Քուլանջյանը վերը հիշատակված հոգվածում, հանդիպում ենք դնեին ձևին: Լազարյան Ավետարանից (887 թ.). «Յայն ժամ ելանեին» (6^Վ): «Ոչ երբեք գիտեի» (17^Դ): «Եւ դեւքն աղաչեին զնա ևասեին» (20^Դ): «Եթե գիտեիք» (28^Վ), «Ունեին ընդ իւրանս»: «Տեսանեինն զի համերբ խաւսեին»: «Միակողմանիք բժշկեին» (33^Վ): «Շրջեին նոքա ի Գաղիղեա»: «Պահանջեին առ Պետրոս» (38^Դ): «Այդք հատանեին ոստս և տարածանեին» (46^Դ): «Ուտեին եւ ըմպեին, կանայս առնեին, արանց լինեին» (57), և այսպես՝ ծեծեին, գիտեիր, հայհոյեին, քակիր, շինեիր, նախատեին, զարթուցանեին, աղաղակեիր, լսեին և այլն: Եւ է-ի փոխարեն պատահում է բայի նաև այլ ժամանակներում: «Ոչ կարասցեք ժամ մի արթուն կալ ընդ իս» (63^Վ): Նույնիսկ միևնույն նախադասության միևնույն ձևում հանդիպում են և՛ Ե-ն, և՛ է-ն: «Թ լերինս աղաղակեիր եւ կոծէր» (83^Դ): «Հաց ոչ ուտեին, քանզի ունէին զաւանդութիւն ծերոց» (90^Դ):

Հենվելով այս հնագույն փաստերի վրա՝ Մեյեն այն կարծիքն է հայտնել, որ հնագույն ձեր և-ով է եղել (եի, պահանջին): Է. Աղայանը համաձայն չէ այդ կարծիքին, գտնում է, որ մատենագրության մեջ ուղղակի շփոթված է ե-ի և է-ի գրությունը⁴⁷: Մեր կարծիքով վերջինս ավելի հավանական է, մանավանդ որ է-ով ձևերը հնագույն հուշարձաններում ավելի շատ են հանդիպում, քան և-ով ձևերը:

Թեև հայերենում բառերը, ինչպես տեսանք, և տառով չեն վերջանում, բայց Ավետարանում այսպիսի դեպքեր էլ կան՝ «Զինքն ոչ կարե ասրեցուցանել» (69^բ): «Ողորմութիւն շնորհն» (110^Վ) և այլն:

2. Եւ բայի խոնարհված ձևերում: Ազաթանգեղոսի «Պատմության» կրկնագիր օրինակում. «Արժան էր, թե վաղուց եիր դու վախճանեալ» (110): «Մտեալն եին ողբալով» (125), «քննութեան եին յաշխարհին սահմանացն Հայոց» (129), «մեռեալ համարեալ եի» (147): Կյուրեղի հիշյալ պատառիկում հանդիպում են՝ եիր, չե: Լազարյան Ավետարանում. «կոտորեաց զմանկունս, որ եին ի Բեղղեմ» (5^Վ): «Ոչ ե ծառայ մեծ քան գտր իւր» (208^Բ): «Առն միոջ եին երկու որդիք» (47^Վ): «Զեին արժանի» (49^Վ): «Հիւանդ եի, աւտար եի, մերկ եի, ի բանդի եի» (60^Բ): «Ընդ ձեզ եի ի տաճարին» (105^Բ): «Որք ընդ նմա եկեալ եին» (109^Վ): «Բարւովք ե աղն» (150^Բ) և այլն:

3. Զուգահեռ գործածվում են թե, եթե և թէ, եթլ ձևերը: Աճառյանը, Մեյեն գտնում են, որ թե ձևը հնագույնն է, ծագում է հնիւ. te ձևից⁴⁸: «Գրեալ է եթե ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այդ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Այ» (Լազ, 8^Բ): «Մի՞թե աւծ» (16^Վ): «Եթե ոչ երբեք գիտեի» (17^Բ): «Եթե կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչս քո և տուր զախքատաց» (42^Վ): «Ասեին, թե չիք յարութիւն» (50^Վ): «Ասեին թե» (61^Բ): «Եթե ու մկրտեին, ոչ ուտեին» (90^Բ) և այլն: Ազաթանգեղոսի «Պատմության» կրկնագիր օրինակից. «Մանաւանդ թե ոչ նա, այդ կամք մեծազաւր Թի» (Ազ, 85): «Եթե ոչ առցես դու յանձն» (96): «Զի թե ոչ պատմեսցէ» (135): «Եթե լուիջիք» (143) և այլն: Կյուրեղի պատառիկում նույնպես կան՝ եթե, թե, թեպետ գրությունները:

4. Մի շարք անոճների ուղիղ և թեք ձևերում: Օրինակներ. «Եղերուք այսուհետեւ խորագետք իբրեւ զաւծս եւ միամիտ իբրեւ զաղանիս» (Լազ, 24^Վ): «Ի ընդարձակե դուռնն» (16^Վ): Մատթեոս

(փոխ. Մատթէոս), երկոտասանե (22^բ): Միևնույն էջում Երուսաղեմ անունը մեկ է-ով է, մեկ էլ՝ ե-ով. «Իբրեւ Ելանէր Յս յէմ»։ «Ահա-ւասիկ Ելանեմ յՅմ» (44^Վ): «Թե պարտ ե նմա երթալ յՅմ» (35^Վ): Յովհաննէս (122^բ) և այլն:

Ինչպէս ասացինք, բառն աճելիս կամ թեքման ժամանակ եթե է-ն շի հնչյունափոխվում, գրվում է ե տառով (Ներսէս—Ներսեսի (Ներսիսի), Յովհաննէս—Յովհաննեսի, աղուէս—աղուեսու և այլն): Այս ձեռագրերում դա նույնպէս խախտված է: Հրեա բառը և նրա թեք ձևերը թե՛ ե-ով են գրված, թե՛ է-ով: Օրինակ՝ «Եթե այս է Յս թագաւորն հրեից» (Լազ, 69): «Ջարքայն հրեից» (107^Վ): Բայց նաև՝ «Ողջ լեր արքայդ հրեից» (68^Վ): Ի հրեիցն (203^բ, 204^բ): Այս Ավետարանում կան Հրեաստան և Հրէաստան, Գաղիղէացի և գաղիղեացի: «Եկեալ ի Հրէաստանէ ի Գաղիղէա» (182): «Երթիցուք ի Հրէաստան» (200^բ): «Երթիցուք Հրեաստան ի Գաղիղէէ» (173^բ): «Ի Հրեեստան» (115^Վ): «Ի Հրեաստանի իցէ» (100^Վ): Գաղիղեացւոց (119^բ), գաղիղեացի, գաղիղեացւոցն (204^Վ): 123 էջում՝ փարիսէցի, 139-ում՝ փարիսեցի, 154-ում՝ մարգարեից, 172^Վ-ում՝ մարգարեաց, իսկ 206^բ-ում՝ մարգարէին: Ազաթանգեղոսի «Պատմության» կրկնագիր օրինակում հանդիպում են՝ հռոմայերեն, մարգարեիցն, Լազարյան Ավետարանում՝ որպէս, այնպէս, ապաքեն, պատուեր, գթեն, ի նազարեթե և այլ շեղված ձևեր:

Նկատվում է նաև ե տառի փոխարեն է-ի կիրառութիւն: Օրինակներ. «Խաւսեցի վասն յիշատակի դորին» (Լազ, 102^Վ): «Սիրէն զիս, ոչ սիրէն զիս» (211^բ): «Հայցեցէք» (136^Վ), «Աւզնեցէ ինձ» (135^Վ): «Բերեր ընդ միո երէսուն» (80^բ): Կյուրեղի հիշյալ պատառիկում՝ Էրուսաղեմայի, էսայի: Վերջին ձևը (էսայի) կա նաև Երուսաղեմի Զ—է դարերում գրված մոզաիկ մի արձանագրութիւնում (Քար, 5): «Էթէ այլ ոք հակառակել ջանաւ էհար» (Քար, 11): «Ես Աբիսողոմ վարդապետ, ծառա այ, շինէցի, զէկէղէցիս» (Օրծ., 416): Մաստարայի եկեղեցու պատին է դարում գրված է՝ «էպիսկոպոս Ապահունեաց» (Քար, 8) և այլն:

Ավելորդ չենք համարում տալ մոտավոր ցուցակ ե-ի և է-ի ուղղագրութիւնից շեղված այն բառերի, որ հանդիպել են մեզ:

Է-ի փոխարեն և տառով գրված բառեր.

ամեն (ամիս)	ընդարձակե	մեռունեին
աղաչեին	լմպեի	մտանեին
ասեին	թե	Յովհաննէս
ասե	թեպետ	յիշեցէք
առնեին	լինեին	յայտնեին
աւծանեին	խաւսեին	նստեին
աշխարհեին	խլե	նաւեին
աւրհնեին	խորագետք	նախատեին
աղաղակեին	խնդրեին	շարժեին
անցանեին	խորհեին	շրջեին
արկանեին	ծածկեին	շինեիր
անկանեին	ծեծեին	շնորհ
անգոսեին	ծաղր առնեին	ոչ կադե
բժշկեին	կամեին	պահեին
գիտեի	կարծեին	պաշտեին
գիտեիր	կոծեին	պահանջեին
գիտեին	կարճեին	սլարտե
գովեին	կոտորեիր	պնդեին
գործեին	կազմեին	տանջեին
դտանեին	կարասցեք	տանեին
դատեին	հանեին	տեսանեին
ելանեին	հայեին	տարածանեին
երբեք	հարցանեին	տազնապեին
Նմանուէլ	հապկանեին	տանջեին
եթե	Հոգիսիմեի	տրտնջեին
երկոտատանե	հատանեին	ունեին
եի	հաջհոյեին	ուսուցանեին
եին	հռովմայերեն	ուտեին
եքկնչեին	Մատթեոս	փորձեին
երկիր պագանեի	մխիթարեին	փակեիր
զարթուցանեի	մկրտեին	քակեիր
		քարովզեին

Ն-ի փոխարեն Է-ով գրված բառեր.

աւգնէսցէ	եղէն	էսայի
ասէն	էն	էթե
Գաղիղէա	էրուսաղեմ	էհար

խաւեցի	Հրէաստան	սիրէմ
խնդրէցէ	յայցէցէ	փարիսէցի
կէցէ	Մովսէսի	փարիսէցւոյ
հրէից	մարգարէին	

Ինչ կարելի է եզրակացնել այս և, է տառերի մասին: Գրերի գոյտի ժամանակ և, է տառերը բնականաբար տարբերվել են իրենց արտասանութեամբ, այլ կերպ Մաշտոցը նրանց համար առանձին տառեր չէր ստեղծի: Այդ տարբերութեամբ էլ նրանք ունեցել են գործածութեան իրենց տեղերը: Ե դարից հետո արդեն սկսել է այդ տարբերությունը վերանալ: «8-րդ դարում և դեռ նրանից էլ առաջ,—ասում է է. Աղայանը,— է և և տառերի արտասանությունը նույնացել էր»⁴⁸, է. Աղայանը է-ն երկբարբառակերպ հնչյուն է համարում մինչև Ե դարի առաջին կեսը: Եվ դա ճիշտ է, փաստերը ցույց են տալիս, որ դեռ Զ—է դարերում և, է տառերը գրավորում շփոթված են, նույնիսկ բառասկզբում:

Ը. —Ը-ն այբուբենի 8-րդ տառն է, որ այսօր կոչում են ըր, իսկ առաջ կոչել են եթ (րեթ): Ը տառը գրվում է.

1. Բառասկզբում՝ ձայնորդ-՝պայթական կամ պայթա-շփական հնչյունակապակցություններից առաջ: Այդ դիրքում նրանով կարող են կազմվել հետևյալ տառակապակցությունները. ըղծ (ըղծալի, ըղծական, ըղծամ, ըղծանք), ըմբ (ըմբերեմ, «համբերեմ», ըմբիշ, ըմբշամարտ, ըմբոշխնեմ, ըմբռնեմ), ըմպ (ըմպեմ, ըմպակ, ըմպանակ), ընդ (ընդաբոյս, ընդակից, ընդառաջ, ընդարձակ, ընդդէմ, ընդբերանեմ, ընդվզում, ընդգծել, ընդոստ և այլն), ընթ (ընթանում, ընթաց, ընթեռնում, ընթերակայ), ընծ (ընծաւ, ընծիւղ), ընկ (ընկալում, ընկեր, ընկղմեմ, ընկճեմ, ընկեցիկ, ընկնել, ընկոյգ), ընչ (ընչաքաղց, ընչազուրկ, ընչատեաց), ընտ (ընտանի, ընտանեկան, ընտանեւէր, ընտել, ընտոծին, ընտրեալ), ըռ (ըռասուլ, ըռըմբազակ, ըռընգեղջիր, ընգեղջիր, ըռուպ), ըսր (ըսթափ), ըստ (ըստանձնեմ, ըստգիւտ «մեղադրանք», ըստերիւրեմ «մոլորեցնեմ»):

2. Բառամիջում՝ բաղադրյալ բառերում, որոնց երկրորդ բաղադրիչը ը տառով է սկսվում՝ հարսընծայ, այրընտիր, լծընկեց, բարընկեց, անընտել, անընծայ, երկընտրանք, անընդհատ և այլն:

Մնացած դեպքերում լսվող ը հնչյունը չի գրվում: Զի գրվում նաև բառասկզբում սուլական (կամ շլական)+պայթական հնչյունակապակցություններից (սկ, սպ, ստ, տգ, զք, շպ, շկ, շտ) առաջ, բացառությամբ ըստ նախդրի: Օրինակ՝ սկսել, սկիզբ, սկաւառակ,

սպասել, սպանանել, սպառազէն, սպառեմ, ստահակ, ստապատում, ստացուած, ստեղն, ստեպ, ստորել, զգոյշ, զգալ, զգենում, զգետնել, զբոսանք, զբաղմունք, շպար, շպետ «հովիվ», շկահիւն «նետի ձայն», շտապ, շտեմարան և այլն:

Մեծանուն հայագետ Անտուան Մեյեն անդրադարձել է նաև այն հարցին, թե ինչպես էին հին հայերը հնչում երկու կամ ավելի հաջորդական բաղաձայնների խումբը (գլուխ, ծանր, հարսն, թըր-թըռալ)՝ ր-ո՞վ, թե՞ առանց ր-ի: Մեկնաբանելով Մեյեի բացատրությունը՝ Հր. Աճառյանը գրում է, թե Մեյեն նկատում է, որ դասական գրաբարում միավանկ բայերը անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքում ստանում են ե կամ է նախահավելվածը (եհար, ետու, էառ, էած), իսկ բազմավանկ բայերը չեն ստանում (սիրեաց, շարժեաց): Մյուս կողմից՝ ապառնիում երկվանկ բառերը ներկայացնում են -ցց-, իսկ եռավանկները -սց-, օրինակ՝ բացցես, կեցցես, բայց սիրեսցես, խաւեսցիս և այլն: Արդ՝ զնամ. գրեմ բայերի կատարյալը լինում է զնաց. գրեաց, ապառնին՝ զնասցես, գրեսցես: Կատարյալում ձայնավոր հավելված չկա, ուրեմն զնաց. գրեաց միավանկ չեն, այլ՝ երկվանկ (գրնաց, գրրեաց): Նույնպես ապառնիում չենք գտնում -ցց-, այլ՝ -սց-, ուրեմն զնասցես, գրեսցես ձևերը երկվանկ չեն, այլ՝ եռավանկ (գրնասցես, գրրեսցես): Սրանցից Մեյեն եզրակացնում է, որ բաղաձայնների խմբերը հին ժամանակ էլ ը ձայնավորով էին արտասանվում (Հայոց գրերը, 297):

Մեյեն անդրադարձել է նաև սկ, սպ, ստ, զգ, գր, շպ, շտ կապակցություններով սկսվող բառերի արտասանությանը (Esguisse, 30), որի ընդարձակ բացատրությունը տալիս է Աճառյանը: Ըստ այդ բացատրության սկ, սպ, ստ, զգ, գր, շպ, շտ կապակցություններից առաջ ր-է լսվել: Սպանանել, ստեղծանել և ստանալ բայերից առաջին երկուսի կատարյալը լինում է սպան, ստեղծ, ըստ որում գործածվող եսպան, եստեղծ ձևերը ուշ շրջանից են գալիս. Աստվածաշնչում 77 անգամ սպան ձևն է օգտագործվել, 18 անգամ՝ ստեղծ. ոչ մի անգամ չի օգտագործված եսպան կամ եստեղծ ձևը: Ուրեմն՝ սպան և ստեղծ ձևերը երկվանկ են դիտվել և ե նախահավելված չեն ավելացրել, ուրիշ խոսքով արտասանել են ըսպան, ըստեղծ: Ստանալ բայի ապառնին էլ դառնում է ստասցիս, այսինքն ցց-ն փոխվում է սց-ի, ուրեմն նա էլ եռավանկ է գրեսցես ձևի նման⁴⁹:

Անդրադառնալով գաղտնավանկին՝ է. Աղայանը գրում է (էջ 85), թե հին հայերենում վանկը կարող էր փակվել շփական կամ

ձայնորդ + Բաղաձայն կապակցությամբ, ունենք՝ 6իշտ. Բաստ, արտ, ազգ, զարդ, դեղծ, ունդ, բունդ: Բաղաձայն + ձայնորդ կապակցությամբ փակվող վանկ չունենք, տր, զգ, տշ, տս, կն և նման կապակցություններում կամ ք է լսվում (ակրն, տետրը, զրդել, պատըզգամբ, պատըսպարել, կըրկընել), որ չի գրվում, կամ տարբեր վանկերի հնչյուններ են իրար կողք ընկել, ինչպես՝ անմահ, մատենել, ատուռչան և այլն: Ուստի կարելի է ասել, որ ազդր, դուստր, արկդ, ծանր, ծունկն, մատն, շարժումն և նման բառերում ք է լսվել, նրանք ք գաղտնավանկով են արտասանվել: Գաղտնավանկի ք հնչյունի վաղուց ի վեր գոյությունը վկայում է նաև տառադարձությունը: Մեր գաղտնավանկի ք-ն համապատասխանել է ասորերեն ܩ-ին՝ pərag > փրկել, Məṣlāyanē > մծղնեայք, ܩܪܪܐ > ծրար: Հայերենից վրացերենին անցնելիս գաղտնավանկի ք-ն կամ ընկնում է, կամ դառնում է ու, ի: Սրինակ՝ գծուծ > գծուծի, խրամ > խրամի, հրովարտակ > հրովարտակի, նհանգ > նհանգի, բայց՝ պղինծ > պիլինծի, մշակ > մուշակի, հրեայ > հուրիա: Մեր Աղծնիքը դառնում է Arzanene, Նպատը՝ Nipates և այլն: Ուրեմն գաղտնավանկի ք հնչույթը եղել է, որը և օտարները աշխատել են արտահայտել ըստ իրենց հնչույթային հնարավորությունների⁴⁹ ա: Գլովս, կրակ, մտրակ բառերը բազմավանկ են, որովհետև հոգնակիում նեւ են ստանում, ասում է Աճառյանը:

Հաճախ գաղտնավանկի ք-ն հանգես է գալիս իմաստազատիչ դերով, բառակազմական նշանակություն է ունենում, դա երևում է հետևյալ գույգերից՝ վարդ և վարըդ (քո վարը), կարդ—կարըդ (քո կարը), վարս—վարրս (վարքի հայցականը), սանդ—սանըդ (այդ սանը) և այլն:

Այս տառի գրության ընդունված կանոններից նկատված շեղումները երկու բնույթի են. 1. երբեմն բառամիջի լսվող, բայց մեսրոպյան ուղղագրությամբ չգրվող ք-ն գրված է լինում: Ըստ էության այդ դեպքում գրիչներն առաջնորդվում են հնչական սկզբբունքով: Այս հարցում նրանց շփոթում է բառասկզբի ք-ի գրությունը: Օրինակներ. Գնթունյաց Դավիթ իշխանի տապանազրում գրված է. «Այս է հանգիստ Դաւթի Գըթունեաց տն որդո վասակա բարէպա(շտի)», իսկ դա ըստ Կ. Ղաֆաղարյանի 2— է դարերի տապանագիր է (ԿՂԴ, 245): Բուզանդի «Պատմության» մեջ հանգիստն ենք՝ ակըմքի, մարտընչէր ձևերին (38, 56, 128): Հոփսիմեի վանքի պատին Կոմիտասի հիշյալ արձանագրությունում (618 թ.) գրված է՝ «Սն Կոմիտաս եկեղեցապան սըրբոյ Հոփսի-

մէի շինեցի զտաճար» (Օրծ., 407): Արուճի 668 թ. մի ար-
ձանագրութիւնում՝ «Եւ Հեղինէի նորին զուգակըցի» (Քար, 9):
Մառի բերած մի արձանագրութեան մէջ (Բագարան, Ը—Ժ դար)
գրված է՝ «Վայելուչ ծնընդովք» (Մարք, 90): Ագաթանգեղոսի
կրկնագրում՝ «Այլ զժողովրդին ստացելոյ» (Ագ, 87): «Այրեցից
շիջանուտ հրովն» (Ագ, 115): «Լուսագրնաց շաղաց քոց» (126):
«Արծարծին ի տուրնչենէ» (154): Լազարյան Ավետարանում՝ «Կո-
րնչիմ աւասիկ» (82^Վ): «Եղիցի ամենայն ժողովրդե անդ» (116^Բ).
«Քրթենույս այսմիկ» (155^Բ) և այլն:

Այս օրինակներն էլ բավական են, համոզվելու համար, որ
ընդ ընդմիջումներով միջն լսվել է: Դրանք վկայում են նաև, որ
գրիչները ոչ բոլոր դիրքում են գաղտնավանկի ընդ գրել, գրել են
մեծ մասամբ այն դիրքում, որտեղ ընդ հնչյունափոխութեան հե-
տեանք է. նրանք ը տառով արտահայտել են ու ի ձայնավորների
փոխարեն հանդես եկած ը ձայնավորը՝ սուրբ—սըրբոյ, ծնունդ—
ծընընդոյ, ժողովուրդ—ժողովրդին և այլն, թեև կան նաև՝ լուսա-
գրնաց, կորնչիմ ձևերը:

2. Երբեմն էլ բաղադրյալ բառերի ը-ով սկսվող բաղադրիչի
ը տառը չեն գրում, որ պիտի գրեն, ասենք զուգընթաց գրելու փո-
խարեն գրում են զուգնթաց: Այս դեպքում էլ նրանք առաջնորդվում
են ըստ երևույթին այն սկզբունքով, որ բառամիջի գաղտնավանկ
ընդ չի գրվում, ինչպես գրում են առտագնաց, այնպես էլ՝ զուգն-
թաց: Օրինակներ. «Սիրեսցէս, զնկեր քո, իբրեւ զանձն քո» (Լազ,
51^Վ, 98^Բ): «Ժողովեսցեն զնտրեալս նորա» (56^Վ): «Ընթրիս ուտեն»
(199^Բ): «Եթե հնար ինչ իցէ եւ զնտրեալսն...» (101^Բ): «Ժողովեսցէ
զնտրեալսն իւր» (101^Բ): «Կարդասցեն զնկերս իւրեանց» (123^Բ):
«Ճաշակեսցէ յնթրեաց իմոց» (149^Բ): «Եւս առաւել զնտանիսն նո-
րա» (25), ինչպես և՛ յնչից, յնծայսն և այլն:

№ 10100 ձեռագրից. «Զնթացս, ընթացաք ծերք եւ տղայք»
(7): «Արդ աղաչեմ զնթերցաւդսդ եւ զլսաւդսդ ընթեռնութ զստա-
ցաւդս սորա զտր Գուրգեն Արծրունի եւ զորդի իւր Ատոմ յիշեալ»
(7բ): Ագաթանգեղոսի «Պատմութեան» կրկնագրի օրինակում՝
«Եմուտ ի խորան անդր եւ յնթրիս բազմեցաւ» (էջ 91) և այլն:

ՆՐԿԱՐԱՐԱՌՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկբարբառն ստացվում է վանկարար և ոչ վանկարար ձայ-
նավորների միացումից, միաժամանակյա արտաբերումից: Լեզվա-
բաններն ընդունում են իջնող (au, ay) և բարձրացող (ya, ua)

Երկբարբառներ: Դասական հայերենի երկբարբառներն են՝ այ, ոյ-
աւ, եւ, իւ, եա, ուա, ուի, ուն: Այս երկբարբառները հանդես են գա-
լիս բաղաձայնին նախորդող դիրքում: Է. Աղայանը «Գրաբարի քե-
րականության» մեջ գրում է, թե մեր երկբարբառներում որպէս
վանկարար տարր հանդես են գալիս ա, ու, ի, իսկ ոչ վանկարար՝
ւ, ու, յ հնչույթները, ե-ն կարող է լինել թե՛ վանկարար, թե՛ ոչ
վանկարար, իսկ Ը-ով երկբարբառ չի կազմվում: Այս դասակար-
գումն էլ ընկած է երկբարբառների մաշտոցյան ուղղագրության
հիմքում (էջ 355):

Այ երկբարբառն արտահայտվում էր այ տառակապակցու-
թյամբ (այպանեմ, այսաւր, այգաբաց):

ՈՒ Երկբարբառը՝ ոյ (թոյլ, կոյր), իսկ եի-ն՝ եյ, որը դառնում
է Լ (գրէի, ուտէին, պաշտանէի): Այս երկբարբառները թուլացող
էին, և նրանց ի հնչույթը վանկարար չէր, գրվում էր յ տառով՝ աի
(այ), ոի (ոյ), եի (եյ-է):

Նա ուժգնացող երկբարբառում, եայ եռաբարբառում ա-ն վան-
կարար ձայնավոր էր, նրանից առաջ լսվող ի հնչույթն արտա-
հայտվում էր Ե տառով (դոնեա, հրեայք, վայրկեան, որ արտա-
սանվում էին դոնիա, հրիայք, վայրկիան)⁴⁹: Իսկ եւ, իւ երկբար-
բառների ի-ն վանկարար էր: Ստացվում է, որ ի հնչույթը երկբար-
բառներում արտահայտվել է երեք տառով՝ թուլացող երկբար-
բառում յ տառով (պաշտանեայք, հրեայք, այպանեմ, թոյլ, ծոյլ,
ձայն, փայտ և այլն), ուժգնացող երկբարբառում՝ Ե տառով (սե-
նեակ, վայրկեան, պատեան, մատեան, պատանեակ և այլն), իսկ
իւ, ուի երկբարբառներում՝ ի տառով (ծին, նիւթ, սին, թուի,
առուի):

Ու-ն նույնպես երեք ենթահնչույթ է ներկայացնում. 1. ձալ-
նավոր (տուն, դու, արու), 2. երկբարբառի ոչ վանկարար բաղա-
դրիչ՝ ու և յ տառերով. ու-ն ուժգնացող երկբարբառում՝ տուաւ,
թուին, աստուած, իսկ ւ-ն թուլացող (աւ, եւ, իւ), 3. բաղաձայն՝
վ (վար, վաղք, ծով, նաւավար) և յ (աւագ, կաւահող, սեաւ, թեւ
թիւ) տառերով⁵⁰: Ինչու՞ է Մաշտոցը երկբարբառներում մի հնչյունէ
համար երեք տառ օգտագործում: Այս հարցին Աղայանը պատաս-
խանում է, թե որովհետեւ հին հայերենի ի հնչույթը երեք ենթահն-
չույթ է ներկայացնում՝ ձայնավոր, երկբարբառի բաղադրիչ ձայ-
նորդ և բաղաձայն: Ձայնավորը աթոգրենում ներկայացված է ի
առուով, մյուսները՝ յ տառով, ըստ որում, ձայնավորին նախորդող
դիրքում գործածվում է Ե տառը, յ-ով չէր կարող արտահայտել,
որովհետեւ ձայնավորից առաջ այդ տառը ձայնորդ էր (յաղագս,

տղայի, տղայաք), ի տառով էլ շէր կարող, քանի որ ի-ն ձայնավորից առաջ վանկարար հնչյուն էր (միակ, միութիւն, թիոց), մնում էր վերցնել ե տառը, որովհետեւ այս տառը ձայնավորից առաջ այլ տեղ չի հանդիպում:

Աճառչանի կարծիքով իւ-ն ծագել է իու ձևից, արիուն > արին. ձիուն > ձին, սիուն > սին և այլն:

Եւ, իւ երկբարբառները զուգահեռ կիրառություն են ունեցել, միևնույն բառը գրվել է թե՛ եւ-ով, թե՛ իւ-ով: Մատենագրության և վիճագրության մեջ հավասարապես հանդիպում են՝ առեւծ—առիւծ. բեր—բիր, մեւ—միւ, հարեր—հարիր, ալեր—ալիր, աղբեր—աղբիր, թեր—թիր, գեւղ—գիրղ և այլ զույգ ձևեր: Օրինակներ. «Արձակեցաւ ժողովուրդ ի գեւղս» (Լագ, 88^բ): «Եթէ լինիցին մարդոյ հարիր ոչխար» (39^բ): «Միւս անգամ» (64): «Յամաքեցաւ աղբեր արեան նորա» (84^բ): «Ով ազդ անհաւատ եւ թեր» (131^բ): «Կամ թէ կէցէ արդեւք» (Ագ, 142): «Եւ բիր դէպ է» (122): «Եղջեր եկեղեցւոյ քոյ բարձրացեալ լիցի» (127): Կյուրեղի հիշյալ պատառիկում՝ աղբեր, առեւծուց, նաև՝ երկիր, յուրաքանչիւր: «Պատրաստ է առ հաստատութիւն վկայութեան մարտիրոսութեան եւ այդոց այդ ազգի բիրապատիկ» (N 10100, էջ 17): Միւս ձևը ծագում է մի, եւ բառերից, ե-ի սղմամբ, ունենք մեւ և միւս (մի—եւ > միւ կամ միեւ > մեւ):

Հայագետների կարծիքով հնագույնը եւ ձևն է, որ հնիս ԸԱ ձևվից է ծագում: Հայագետ Ա. Մեյեի կարծիքով էլ քիւ-ր բեր ձևի սեռականն է: Շեշտի տակ բառավերջում սովորաբար լինում է եւ. իսկ բառն աճելիս, երբ եւ-ը շեշտազրկվում է, փոխվում է իւ-ի՝ բեր—թիրոց⁵¹ (բերոց ձև չունենք), հարեր—հարիրոյ, առեւծ—առիւծոյ, գեւղ—գիրղապետ և այլն: Բայց այս կարգը շատ է խախտված ձեռագրերում: Է. Աղայանը եւ-ը իւ-ի տարբերակն է համարում (էջ 109—110):

Առ երկբարբառը արտահայտվել է աւ տառակապակցությամբ՝ աւծ, աւբ, մաւբ, եղբաւբ, ճգաւբ, տաւն, հաւտ, աւբէն և այլն: Դեռ վաղ շրջանից (Ե—Ձ դար) այս աւ տառակապակցության հետ ենթակայական դերբայում հանդես է գալիս նաև ո տառը, կար՝ գրաւղ և գրող: Ինչպես ո տառի կապակցությամբ ասացինք, այդ երկու ձևերն էլ պիտի որ օ կարդացված լինեին, քանի որ միևնույն բառի միևնույն դիրքում նրանք տարբեր հնչում չէին ունենալ: Ուրեմն աւ երկբարբառի օ հնչումը հին պատմություն ունի: Գառ-

նիի մի խաչքարի վրա գրված է. «Ի բարեխոսութիւն ինծ», փոխ-բարեխաւսութիւն (Гарин, 84), իսկ տապանագիրը ՅԻԸ (879) թվականից է մնացել: Ազաթանգեղոսի կրկնագրում ենթակայական դերբայը և՛ աղ-ով է գրված, և՛ ող-ով: «Որք կենդանի են առ Ած եւ քարեխաւս ստացաւդացն» (Ագ, 142), «Կարող իցէ» (74), Սի-րաւդացն, տեսաւդացն (77), բայց և՛ «ուծեղ է պատերազմողն» (81), խոստովանող (87): Մնաւտ բառը գրված է ծնոտ ձևով, որից Աճառյանը եղրակացնում է, թե կրկնագրի ժամանակ (Թ դար) աւ երկբարբառը արդեն օ էր կարդացվում⁵²: Լազարյան Ավետարա-նում նույնպես այդ դերբայը գրված է աղ և ող վերջավորություն-ներով: «Կարող եմք ըմպել» (45^Դ): «Սատակեաց զսպանողսն» (49^Վ): «Մինչեւ ոչ իսկ կարաւդ լինել նմա յայտնապէս» (75) և այլն:

Երբեմն ու տառի փոխարեն հանդիպում ենք աւ տառակա-պակցությանը՝ աւաւիս (փոխ. ոսոխ), պարաւնաց (փոխ. պարա-նոց): Լազարյան Ավետարանի 9^Վ էջում գրված է. «Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասաւրոց», փոխ. ասորոց: Անոյծ և նշոյղ (նշոյլ) բառերը հանդիպում են անաւծ և նշաւղ ձևերով, որոնք առաջացել են ըստ երևույթին անոյշ>անուշ>անաւշ, նշոյղ>նշող>նշաւղ ճանապարհով, մանավանդ որ Լազարյան Ավետարանում կան՝ զգոշ, զշիղս ձևերը, փոխանակ՝ զգոյշ, զշիղս ձևերի: Սրանք ինքնըստինքյան վկայում են, որ գրիչը միևնույն օ հնչումով է ար-տասանել թև՝ աւ երկբարբառը, թե՛ ուն, այլ կերպ չէր շփոթի այդ տառերը: Ավետարանում միևնույն բառերում հանդես են գալիս ա և ով լծորդությունները՝ Յաւհաննէս—Յովհաննէս, Նաղաւրացի—Նազովրացի, քաւանդակ—բովանդակ, ամաւթ—ամովթ, քաւական—բովական, համբաւ—համբով, համբաւել—համբովել, նոքաւք—նոքովք, զնոքաւք—զնոքովք, ղենջական—ղենջակովն, արտա-սուաւք—արտասուովք: Այս ձևերը հանդիպում են նաև Մատենա-դարանի № 10100 ձեռագրում: Ըստ երևույթին այս դեպքերում աւն փոխվել է ու-ի և, որովհետև ու-ից հետո չի գրվում, գրվել է վ տառը (աւ>ով):

Ուա, ուտ, ուե, ուի երկբարբառները միջնադարում (Ժ—Ժէ) արտասանվում էին va, vo, ve, vi և գրվում էին ա, տ, ե, ւի կամ վա, վո, վե, վի տառակապակցություններով: Ե—Թ դարերի վի-մական արձանագրություններից ու ձեռագրերից երևում է, որ այդ երևույթը նույնպես վաղուց է սկսվել, ինչպես աւ>ո փոփոխու-թյունը: Դեռ Զ դարի վիմական արձանագրություններում հանդի-

պում են՝ քվականութեան, քվին, տվաք ձևերը, փոխանակ՝ քուականութեան, քուին, տուաք: Օրինակներ. «ՅԻԳ (874) թվականութեան Հայոց» (Մարր, 100): «ՅԻԸ (879) թվականին» (Մարր, 84): «ՅԼ (881) թվականութեանս Հայոց...» (Ս. Ավագյան): Բագարանի 631 թ. մի արձանագրությունում «Առուեղեան» ազգանունը գրված է՝ Առուեղեան. «Հայոց ասպետին յԱռուեղեան» (Օրճ, 392): «Բագում հրճվանաւք զկեանս քաղաքավարեցեր»,— բերում է Մատր՝ համարելով այն Ը—Ժ դարերի գրություն (Մարր, 90): «Ի թվականութեան» Կոստանդիանոսի»,— բերում է Ս. Բարխուդարյանը, համարելով այն 6—7-րդ դարերի գրություն (Դիվ, 2-րդ, 87): Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» մի գրչագրության հիշատակարանում (Թ դար) գրված է՝ «Թարգմանեցաւ յասորոց ի հայ ի թրականութեանս Հայոց ԳԾ և ԻԲ», որ անում է 873 թ.⁵³:

Նա երկբարբառը բառավերջում փակվում է մեծ մասամբ լ, մ, ն, ր, կ բաղաձայններով՝ անցեալ, դարձեալ, աւրհնեալ, հեծեալ, տուեալ, ատեալ, կեալ, եղեալ, այծեալ, երկեալ, ժողովըրդեան, գրեան, բերդեան, ճանճեան, որեար, վանեար, նաև՝ մեհեան, վայրկեան, վառեակ, սարեակ և այլն: Նա երկբարբառին կարող են նախորդել՝ ու, աւ, եւ կապակցությունները՝ ասուեալ, լուեալ, տուեալ, պատուեալ, քաւեալ, բաւեալ, բազմաթեւեան և այլն: Ա և ու-ից հետո նա-ն չ է ստանում՝ ախոյեան, խոյեանք դայեակ, Եւայեանք, հայեացք, կայեան, երեւակայեալ և այլն⁵³ և, Դասական հայերենում բառերը կարող էին վերջանալ՝

1. ի կամ ու տառերով (այգի, արի, բանի, խաւսի, հեղու, հլու, գանձու, հեռու և այլն):

2. Ա տառով՝ ահա, ապա մակբայները, սա ,դա, նա դերանունները իրենց թեք ձևերով՝ սորա, դորա, նորա, զսա, զդա, զնա. սմա, դմա, նմա, սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա, ա և ե խոնարհման պարզ բայերի հրամայական եզակին՝ զնա՛, աղա՛ գրեա՛, գործեա՛, իմա՛, արա՛, ընթա՛, մի քանի օտարազգի անունների ուղիղ ձևերը՝ Կատինա, Նա, Շաղիտա, Նդիա և այլն:

3. Ո տառով՝ քո դերանունը և պատճառական բայերի հրամայական եզակին՝ մատո՛, հատո՛, փախո՛ և այլն:

4. Ն և Ը տառերով քառ չէր վերջանում:

5. Բառերը կարող էին վերջանալ մեկ քաղաձայն կամ ձայնորդ տառով՝ տուն, աւձ, սար, ատամ, աղայ, գրիչ, խաղ, խալ, թագ, խիճ և այլն:

6. Կարող էին վերջանալ երկու բաղաձայն տառով, եթե նրանք ներկայացնում են՝ ա) ձայնորդ + բաղաձայն կապակցությունը՝ արբ, կարդ, մարդ, երկ, վարձ, վերջ, հինգ, մաղձ, բ) շփական + բաղաձայն կամ ձայնորդ կապակցությունը՝ ազդ, ազգ, սաստ, բաշխ, սոսկ, կուշտ, պատերազմ, բժիշկ, գուսպ, բախտ, յաշմ, գ) դժ կամ բժ կապակցությունը՝ յողմ, կողմ, թարմ, տարմ, ջերմ, սերմ և այլն:

7. Բառերը չէին կարող վերջավորվել ձայնորդ + ձայնորդ հրնչյունակապակցությամբ, բացի դժ, բժ կապակցություններից: Գրավոր խոսքում, սակայն, կարող են բառավերջում երկու ձայնորդ իրար կողքի լինել՝ գառն, ծանր, ասեղն, ատամն, ողն, ծաղր, մանր, ծունր և այլն, քանի որ այդ ձայնորդների միջև լավոր ընդունված չի գրվում, անգիր է:

Նույն այս պատճառով բառերը շփական + ձայնորդ հնչյունակապակցությամբ չեն վերջանում, որովհետև նրանց միջև նույնպես ընդունվում, իսկ գրավորում կարող են բառավերջում իրար հաջորդել, որովհետև այդ ը-ն չի գրվում՝ ճախր, ասր, խաշն, եզր, վասն հաշմ և այլն: Այդպես էլ գրավորում բառավերջում կարող են լինել՝ պայթական + ոչ պայթական բաղաձայն տառակապակցություն (կոճղ, ճիգն, փոքր, մատն, բեռն, իրր), կրկնված բաղաձայնով տառակապակցություն (տարր, անդորր, ինն), երկուսից ավելի բաղաձայնական տառակապակցություն (արկղ, աստղ, կարծր, բարձր, դուստր, գեղմն, հարսն, եռանդն և այլն):

ՈՒՂՎԱԳՐԱԿԱՆ ԱՅԼ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Նկատվում են.

1. Բառերի հնչյունափոխ ձևեր, որոնք դարձյալ գրագիտության պակասի, բարբառային արտասանության հետևանք են: Հանդիպում են ոչ-ի փոխարեն ո՝ զգոչ (փոխ. զգոչ), իւ-ի փոխարեն ի՝ զշիղս (փոխ. զշիղս), հնչյունի անկում՝ զաբիղ (զամբիղ), սկեր (հսկեր), նման սկայ բառին, առաջնգոյն, հրշտակ, յսուն (յիսուն): Օրինակ՝ «Զգոչ լերուք ի դպրաց անտի» (Լազ, 99): «Քանի զաբիղ լի բարձէք» (93^v): «Տեսանես զշիղս»: «Սկեր և ոչ տայր» (52^r) «Յառնգոյն ասացի ձեզ» (101^r): «Առաքեցէ զհրշտակս» (101^r): «Նոքա զանհաւին» (164^r) և այլն:

Աճառյանը նկատում է, որ բառասկզբի յ-ի թուլացումը Ե դա-

րից է, և բերում է յողորմող > յողորմող փոփոխությունը⁵⁴: Այս ձեռագրում կա աջողութիւն ձևը (փոխ. յաջողութիւն):

2. Պատահում է ի պարզ ձայնավորի փոխարեն իւ երկբարբառը՝ ուղիւղ. Մարտիրոս, որ ըստ երևութիւն հունարենի ազդեցութեան հետեանք է՝ գրված կիրակէ, Պիղատոս. Կիրակոս բառերի նմանակութեամբ:

3. Ուն հաջորդող դիրքում երբեմն ավելորդ վ տառն է հանդիպում՝ քարովզեր, ովմանք, որովգայթ: Օրինակ՝ «Զի իբրև որովգայթ հառնիցէ» (Լազ, 168^ր): «Ովմանք ինոցանէ գնային» (Լազ. 202^ր): Բորբովքեր (144^ր): «Գնաց ի նմանէ բորովտութիւն» (75): «Քարովզեր և աւետարանէր» (124^ր): «Քարովզէր զաւետարանն» (73^ր, 75^ր): «Զի են ովմանք» (36^ր):

Սա ևս հունարենի ազդեցութեան հետեանք է: Հունարեն *ω-ն* տառադարձում էին *թե՛* ով. *թե՛* ո տառերով, կային՝ Սողոմոն և Սողովմոն. Հոովմ և Հոմմ, Մովսէս—Մոսէս գույզ ձևերը: Հենց նույն այս ձեռագրում կան՝ Հեռովդիոսի, տրովացոց, Սիմեվովն (117—119), Տիրովս, Սիղովն, Սողովմովն (42), Բարթողեմէոս և Բարթուղովմէոս, սողովմայեցոց գրութիւնները:

4. Սիսիանի, Մաստարայի, Աշտարակի, Կարմրավորի, Հոփսիմեի վանքի է դարի արձանագրութիւններում հանդիպում ենք ի>է>լ հնչյունափոխ բառերի՝ Շեռեանի, Գրէգորի, Գրէգոր «Շերոեանի Բարենի Մամեկոնեան» (Տաթև, Դիվ. 2-րդ, 88): «Կոչեցայ յաթոռ սրբոյն Գրէգորի»,—գրված է Հոփսիմեի վանքի պատին 618 թ. (Օրճ, 407): «Ետ ինձ Գրէգորասայ...» (Մաստարա, է դար, Քար, 8, Ս. Ավ.): «Գրէգորի քահանայի եւ Մանասեի որդիք» (Ս. Ավ. Կարմրավորի վանք, է դար): Լազարյան Ավետարանում կան յուժաւ, յուժաւել ձևերը: Ազաթանգեղոսի «Պատմութեան» կրկնադիր օրինակում հանդիպում են Դայիանէ (131), մարտիայ (137), փոխանակ՝ մարտեայ ձևի: Նշանակում է եա երկբարբառը իա է հնչել: Լազարյան Ավետարանում հանդիպում է Հրեեստան ձևը՝ «Ի Հրեեստան ի քաղաքն Դաթի» (115^ր):

Կան անունների երկակի գրութիւններ՝ Բեթղեմ—Բեղղահեմ, Բարթողիմէոս—Բարդողիմէոս, Սողովմովն—Սողոմովն—Սողոմոն, սողովմայեցոց—սողոմայեցոց, Բեղղերով—Բեհեղղերով. Բաբելովն—Բաբիղովն և այլն: Անունների այս յուրատեսակ գրութիւնները բխում են տառադարձութեան՝ գրիչների ունեցած սկզբունքից: Հունարեն *ω-ն* երբեմն տառադարձել են ո, երբեմն ով տառերով, օտար բառերի եւ տառակապակցութիւնների միջև և են ավելա-

ցըրեկ, երբեմն էլ թողեկ են նույնությամբ: Դ>Ք հնչյունափոխությունն այդ բառերում բխում է արտասանությունից:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Տառադարձությունը, որ հները անվանում էին նաև հարմարագրություն, երկու սկզբունքով է կատարվում՝ հնչյունային և՛ գրային: Ե—Թ դարերում մեր նախնիները հետևել են հնչյունային տառադարձությանը՝ ամեն կերպ ձգտելով բառը հարազատ կամ մոտիկ պահել փոխատու լեզվի հնչմանը: Մաշտոցն ինքը ձգտել է հունական տառի դիմաց մոտիկ, եթե ոչ նույն, հնչյունն արտահայտող տառ դնել: Սահակ-Մեսրոպյան ուղղագրությունն ու տառադարձությունը գործում են մինչև Ժ—ԺԱ դարերը: Այսընյանը հայերենի տառադարձության պատմությունը երկու շրջանի է բաժանում՝ մինչև Ժ դարը և Ժ դարից հետո: Ահա հունարեն-հայերեն տառադարձության ընդունված դասական սկզբունքը, որ գործեց մինչև Ժ—ԺԱ դարերը իբրև ընդհանուր ուղղագրական հիմունք⁵⁵:

α—ա	——ծ	——ջ
β—բ	κ—կ	——ռ
γ—գ(ղ)	——հ	ς—ս
δ—դ	——ձ	——լ
ε—ե (է)	λ—ղ(լ)	τ—տ
ζ—զ	——ճ	ρ—ր(ռ)
η—է(ե)	μ—մ	——ց
——ը	——լ	υ—ւ
θ—թ	ν—ն	φ—փ
——ժ	ξ—ջս, կս, շ	χ—ջ
ι—ի	ο—ո	ψ—փս
——լ	——չ	ω—ուլ, ո
——խ	π—պ	

Հայերեն տառի դիմաց գրված գիծը ցույց է տալիս, որ հունարենում համապատասխան հնչյւթ չէա: Այս տախտակով առաջնորդվելով, մեր նախնիները տառադարձելիս օտարազգի խոսքի դիմաց դրել են մեր խոսքը՝ καλαμάριος > կաղամար, πινακίδιος >

> պնակիրոն, *πηνικ* > տոմ — տոմս — տոմար, *χρονος* > կոմս, *λεπτα* >
 > լիտր, *τράχυντος* > տաղանդ, *πανδραχτιον* > պանդոկ, *παρταγλατης* >
 > ստրատելատ, *χαίμαρ* > կայսր, *πατατος* > հիւպատոս, *πατρωνος* >
 > պատրիկ, *χλειων* > կլիովն և ալլն, ծայնեղնեի դիմաց՝ ծայնեղը՝
αργος > արգոս, *Μηδεια* > Մեդէա, *μαργης* > մագնիս, *βίλα* — բեմ,
λεγειον > լեգէոն, *σύνδου* > սինճոդուս (սինոդ), *αίβων* > ամբիոն և
 շնշեղ խուլի դիմաց՝ շնշեղ խուլը՝ *φελωνης* > փիլոն, *σφιστης* > սո-
 փեստ, *φιδωστος* > փիլիսոփայ, *παχυνθος* > յակինթ, *αφρονθος* > **լաբի-**
րինթոս, *δερμαργος* > Դեմարքոս, *επαργος* > եպարքոս և ալլն:

Էջմիածնի տաճարի հյուսիսային ավանդական պատուհանի վրա գրված արձանադրութեան մեջ, որ 4-րդ դարից է մնացել, հայերեն Դաւեգին անունը փորագրված է Դաւաւոս, Դանիելը՝ Դանիէլ, էլպիսը՝ Է. π. ς, Արքիսը՝ ʾΑρχις⁵⁶, Ագաթանգեղոսի «Պատմութեան» մեջ *γ-ն* արտահայտված է *գ-ով*, *β-ն*՝ *բ-ով* (*μεγαλη* > մեգաղի, *Γρεγορι* > Գրիգորիոս, *βασιλειος* > բասիլիոս, *βαρβαρος* > բարբարոս): Այս օրինակները նույնպէս վկայում են, որ Մաշտոցից առաջ էլ հայերը հունատառ հայերեն գրում էին այնպէս, ինչպէս հետո գրեց Մաշտոցը: Հունարեն որոշ տառեր հայերեն տառադարձել են երկու տառով, օրինակ՝ *β* > *բ* և *վ*: *Βασιλειος* բառը սկզբում տառադարձվել է Բասիլիոս, որից և Բաղսեղ, իսկ հետո տառադարձվել է նաև Վասիլ ձևով: Հնարավոր է, որ վերջինիս գրութեան ժամանակ հույները նույնպէս *β-ն* էին արտասանում: Տառադարձութեան հարցը քննելիս շատ կարևոր է նկատի ունենալ, թե տվյալ փոխառութիւնը երբ է կատարվել: Յուրաքանչյուր ձայնական օրենք, ասում է Աճառյանը, ունի իր գործունեութեան ժամանակը, հնիս. *ρ* ձայնը բառասկզբում տալիս էր հայ. *հ*՝ *πατρις* > հայր, *πατρο* > հուր, բայց այս օրենքը հնագույն շրջանին է պատկանում: Բ, Գ, Դ և մյուս դարերում, երբ հայերը փոխ էին առնում պարսկերենից, լատիններենից, հունարենից, ասորերենից, նրանց նախաձայն *ρ-ն* ն չէին դարձնում: Օրինակ՝ պահլավ. *patkar* > պատկեր, ասոր. *plāṭia* > պողոտա, հուն. *πατριάρχης* > պատրիարք⁵⁷:

Այս ընդհանուր կանոնից, իհարկէ, շեղումներ նկատվում են, բայց դրանք տեղական խոսվածքի ազդեցութեան հետևանք են և ոչ ընդհանրացած երևույթ: Օրինակ՝ Ագաթանգեղոսի «Պատմու-

թյան մեջ, որ ընդհանրապես կանոնավոր ուղղագրություն ունի, հունական $\pi\epsilon\delta\alpha\chi\gamma\phi\omega\tau$ -ը գրվել է պատագրոս, իսկ $\text{Κοινὸτερον}>$ > Կոստանդիանոս, Փարպեցու գրքում $\text{Ἀκείνοιο}>$ -ը գրված է Ալեքսանդրոս, $\text{ὁρθῶς}>$ -ը՝ որկանոն (նաև որգանոն)։

Օտարազգի բառերը երկու ճանապարհով կարող են փոխանցվել՝ անմիջապես փոխատու լեզվից և միջնորդաբար։ Օրինակ՝ արևելյան լեզուներից բառերը հայերենին են անցել կա՛մ անմիջապես, կա՛մ հունարենի միջոցով։ Այս դեպքում բառը շատ և ձևափոխվում։ Արևելյան Նզեբիա, Յորդանան, Միհրդատ, Մեծրայիմ, Յեշու, Նածրացի, Շամուռն, Սենեբիա, Նդիշէ անունները հունարենում դառնում են՝ Նզեկիաս, Յորդանես, Միթրիդատէս, Մեստրայիմ, Յեսու, Նագովրեցի, Սիմէոն, Նդիսէ։ Միևնույն անվան այս երկու ձևերն էլ հայերենում օգտագործվել են։ Մեր մատենագրության մեջ երկու ուղղություն է եղել՝ ասորա-պարսկասեր և հունասեր։ Առաջինները ասորական, պարսկական բառերը փոխ են վերցրել հենց այդ փոխատու լեզուներից, հարազատ նրանց հընչման, իսկ երկրորդները նույն բառերը վերցրել են հունարենից այսինքն՝ հունականացած ձևերը։ Ստացվել են միևնույն բառի գրության զույգ ձևեր։ Ահա թե ինչու Զգոնի ճառերի թարգմանության մեջ Սամուէլ-ը դարձել է Շամուէլ, Սեմը՝ Շեմ, Աբելը՝ Հաբել, Ռաբելը՝ Հոաբել, Յեսուին՝ Յիշուվ, Սիկեմացին՝ Շիղոմացի, Սամարիան՝ Շամրին, Սաուղը՝ Շաուղ և այլն։

ՄԵՄԱՏԱՌԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ գիտնականներ կարծում են, թե Մաշտոցը միայն մեծատառերն է ստեղծել, փոքրատառերը ուշ շրջանում են ստեղծվել։ Ուրիշները սա քիչ հավանական են համարում, մտածելով, որ Մաշտոցի իմացած բոլոր լեզուներն էլ ունեին իրենց երկու տեսակ գրերը, ինչու պիտի նա մի տեսակը ստեղծեր։ Ուստի կարծում են, թե սովորական գրությունների համար պիտի որ օգտագործված լինեին փոքրատառ ձևերը, իսկ մտենագրության ու պաշտոնական գրությունների համար (թագավորական, ռազմական, կրոնական հրովարտական) գլխագիր ձևերը⁵⁸։ Սրանք, սակայն, փաստեր չունեն, հնագույն գրչության մեջ փոքրատառ չկա։

Փոքրատառերի կիրառության հետքերը մեզ տանում են մինչև և դարը։ Դվինի է դարի մի արձանագրությունում կա փոքրատառ

ա, միայն գլխիվայր ձևով (m): «Ես Յովնանես վարդապետ ծառայողի Գրիգորի յաղագրութիւնս յիշեցեք ի տէր» (ԿՂԴ, 247): Նույն տեղում, ներկամանի վրա գրված է. «Որ Գան... ԲԱՆԱՅ այս» (250): Սա էլ առայժմ փոքրատառի հնագույն շրջանի միակ փաստն է:

Ագաթանգեղոսի «Պատմութեան» կրկնագիր օրինակում, ինչպես նշել է Աճառյանը⁵⁹, կան երկաթագիր (մեծատառ) գրերի հետ նաև գլխագրեր: Սովորական S տառի կողքին կա նաև S տառը, Ս-ի կողքին Ս, Ա-ի կողքին Ա և այլն, որոնք իրարից տարբերվում են իրենց գրութեան ձևով: Այդպիսի գլխագրերով են գրված մեկ կամ երկու կետից հետո՝ Ետ, Այդ, Գոհանամ, Արդ. Սկսաւ, Ասէ, Նոքա, Եւ, Յայնմ բառերը, Տրդատ, Հայոց, Յունեաց, Սուրբ, Գրիգորիս, Պաշտօն անունները, Ած, Տր, Այ հապավումները: Ս. Քույնջյանը հիշյալ հոգւածում նշում է, որ Կյուրեղի պատառիկում գլխագրով գրված 45 բառից 20-ը նոր տողից է, 25-ը՝ նոր պարբերութիւնից: Գլխագրեր կան նաև տողամիջում: Ագաթանգեղոսի կրկնագրում երբեմն հատուկ անունը սովորական, ոչ գլխագիր, երկաթագրով է գրված, օրինակ Տրդատ անունը: Ուրեմն գլխագրի գաղափարը եղել է, և գլխագիրը տարբերվել է սովորական երկաթագրից: Այդ գլխագրերի գործածութիւնը, սակայն, վաղելագրութեան նպատակ էր հետապնդում, դա ավելի զարդի համար էր, քան որևէ կանոնի հետևանք: Կարող էր բառամիջում որևէ տառ գլխագրով գրվել, ինչպես նկատված է Կյուրեղի պատառիկում: Որոշակին այս դարերի գրչագրութեան մեջ այն է, որ երկաթագրից տարբերվող գլխագրեր կային, որոնցով սկսվում էին մեծ մասամբ վերնագրերը, նոր տողը (պարբերութիւն), վերջակետին հաջորդող բառը, որոշ անուններ, բայց որևէ բառ գլխագիր կարող էր ունենալ նաև տողամիջում, բառամիջում, բառավերջում, և հակառակը, շատ անձնանուններ, այդ թվում նաև տերունական⁶⁰, հանդիպում են սովորական երկաթագրերով:

Այս դարերի գլխագրով գրութիւնը սկիզբն է մեծատառի հետագայում կանոնական գրութեան: Վերնագրերի, նոր պարբերութիւնների, տերունական անունների, թեև ոչ հետևողական, գլխագրով գրութիւնը հետագայում հետևողական, կանոնական դարձավ:

Տ Ո Ղ Ա Դ Ա Ր Ձ

Աճառյանը հաշվել է, որ Ագաթանգեղոսի «Պատմութեան» կրկնագիր օրինակում կա 712 տողադարձ, որից 505-ը վանկատմամբ է (ա-զատ, թաղու-հի, պատե-րազմ, Գրի-գոր, Հոփի-սիմէ և այլն),

20 օրինակում ձայնավորի և երկբարբառի միջև եղած բաղաձայնը գրիչը հաջորդ տող է տարել (ստի-պեալ, բնա-կեալ, անցու-ցեալ, մե-ռեալ և այլն), թեև կա նաև մեռ-եալ ձևը: Երեք բառ տողում չի տեղավորվել, գրիչը վերջին տառերը տողի վերևում, բառի վերևի անկյունում է գրել՝ յաճախես ⁹և, ճանա ¹⁰լ, արար ¹¹ի): Գրիչը չի սիրում մեկ տառը հաջորդ տող տանել և գրում է բառի վերևի ան-կյունում (ճշմարտութեան , խոստման ⁹, թագաւո՞ւ և այլն): Թեև սովորաբար այս գրիչը տողադարձի ժամանակ գաղտնավանկի ը-ն անտեսում է (ան-դնդոց, սր-տին, քինախն-դիր, զնպատա-կն, եր-կրպագութիւն, փա-խստական և այլն), բայց շորս բառում ը-ն գրել է (մեծա-զընաց, գը-տանել, ճը-տով, լուսագը-նաց): Գրչա-գրում կան նաև սխալ վանկաբաժանումներ (մեղ-ացն, գն-ացին, զծառ-այխս, Տրդ-ատ և այլն), երբեմն գրիչը վերջին երկու բաղա-ձայնը հաջորդ տող է տարել (պատե-րք, ան-ցք, հրամա-նք, մա-րդ, մաղթե-մք, խոստմա-նց և այլն): Կան թե՛ ձեռն-արկութիւն, զա(ստուա)ծ-ասէր, թե՛ տա-րուբեր ձևերը:

Այ, աւ, եա, եւ երկբարբառները ձայնավորին նախորդելիս մասերի շեն բաժանված (գաւ-առ, հայ-ոց, տղայ-աբար, վկայ-իցն. թագաւ-որի, երկնաւ-որս, գաւ-ազան, լուսաւ-որք և այլն), իսկ բաղաձայնին նախորդող դիրքում բաժանված են (աղա-ւթս, ամե-նա-յն, նոյնժամա-յն, աղա-ւնոյ, մարդացե-ալ, տերութե-անն, շինութե-անն, արե-ւք, աւելագո-յն և այլն): Այս դեպքում ինչ-որ սկզբունք կա:

Ու-ն երեք ձևով է տողադարձված.

ա) միացված նախորդ բաղաձայնին (պա-տուական, պա-տուել),

բ) հաջորդող ձայնավորից բաժանված (պատու-ական, անպա-տու-եցէ, նու-աճեալ),

գ) հաջորդ ձայնավորին միացած (ար-ուեստիւ, պատ-ուիրել): Այս վերջին տարբերակը բացատրվում է նրանով, որ գրիչը ձայ-նավորին նախորդող ու-ն վ է կարդում և իբրև բաղաձայն տանում հաջորդ տողը (պատ-վիրել, ար-վեստիւ): Ձայնորդները տողա-դարձ են արված կամ նախորդ բաղաձայնից անջատ (պատ-րաս-տեն, մարմ-նով, ինք-նին, երկ-րածին), կամ նախորդող բաղա-ձայնին միացած (Խո-սրով, ին-քնին, պա-տրաստեն, եր-կրածին և այլն):

Աճառյանի նշած այս դեպքերին ավելացնենք, որ կրկնագրի

գրիչը 1. հաճախ հաջորդ տող է տանում բառավերջի միակ տառը (ծայնավոր կամ բւ.դաձայն), կամ նախորդ տողում է թողնում առաջին բաղաձայն տառը (դպար-տ, նոք-ա, վ-այրակոչ, շ-նորհիւ, մ-արդապաշտութիւն, տե-դ, շնորհե-լ, գրեա-լ և այլն): 2. Ու և ի տառակապակցութիւններէ բաղադրիչները բաժանում է իրարից և մեկը տանում է, մյուսը թողնում (բազու-մս, դանարժանութիւնս): 3. Ո՛րիւն է, որ գրիչը երբեմն բառավերջի տառը չի տանում հաջորդ տող. այլ գրում է յառի վերջում, աջ անկյունում, բայց հաճախ նախավերջին տառն է գրում վերեւի աջ անկյունում, իսկ հաջորդ տող է տանում վերջին տառը (գրե-ւ-լ, շնորհե-ւ-լ, րաջագործութեանն), որը վկայում է, թէ գրիչը տեղ չհանձնելով համար է այդ քայլն անում և ոչ թէ վանկատման կանոնը չխախտելու, քանի որ մի տառը կամ ձայնավորը տանելը ինքնըստինքյան շեղում է վանկատմից:

Ինչպէս երևում է հոգվածից, Աճառչանք հակված է կարծելու, թէ Ազաթանդեղոսի կրկնադիր օրինակում սողադարձի որոշակի կանոններ են պահպանված: Նրա կատարած հաշվումները այդ համոզման կարող են բերել ընթերցողին՝ 700 սողադարձից 500-ը վանկատումով է արված: Սակայն երբ նայում ենք այդ 200 շեղումների բնույթին, նկատում ենք, որ կանոնական սողադարձ կատարող գրիչը այդպիսի շեղում թույլ չէր տա, չէր գրի մա-բոս, գրեա-լ, հրամա-նք, մա-րդ, մաղթե-մք, պատկե-րք, ու-ն, իւ-ն երկու մասի չէր բաժանի (բազու-մս, դանարժանութիւնս): Մի քանի բառերում գրիչը սողադարձի ժամանակ դադարեցնելով ը-ն գրել է, բայց դա նույնպէս վանկատման պահպանման համար չի արված, քանի որ այդ բառերի և շատ ուրիշների գաղտնավանկի ը-ն գրիչը գրում է նաև սողամիջում՝ հրրով, տուրնջեան, լուսագրնաց:

Ոչ բառանջատ գրչության մեջ դժվար է կանոնավոր սողադարձ որոնել: Վանկատման վերը նշված շեղումների հանդիպում ենք այս շրջանի մատենագրութեան համարյա յուրաքանչյուր էջում: Օրինակ՝ Մատենադարանի № 10100 ձեռագրում (Թ դար)՝ եր-կնչիր, սր-անչիլի, մեղադ-իր, ձեւ-ն, յայ-տնի, տղ-այք, կտ-ակարանս, թէպէ-տ, գն-ոյն և այլն: Աճառչանի օրինակով մենք հաշվեցինք Հապարչան Ավետարանի 73—110 էջերում (Մարկոսի ավետարան) կատարված սողադարձի դեպքերը: Գրիչը կատարել է 809 սողադարձ, որից 406-ը կանոնավոր վանկատումով է արված, իսկ 403-ը շեղումներ են: Ինչպիսի՞ շեղումներ են դրանք:

1. Այնպիսի բաղաձայնախումբ է տանում հաջորդ տող, որ վանկ չի կազմում: Օրինակ՝ հանդե-րձ, հե-ղձուցանեմ, գերե-

զմանոցն, աշխատութիւն, վաճառանք, աշակերտութիւն, հրաշտակաք, խորհուրդ, դուստրն, դուստրն, դպիւրքն, առաւնձիւնն և այլն: Ինչպէս տեսնում ենք, հաջորդ տող գնացող բառամասերը գաղտնավանկ էլ չեն կազմում: Այլ բան է, երբ գրիչը գրում է ձկն-որս, վա-սն, բ-ժշկեաց, դ-պրաց, նշ-խաբս, մ-տեալ, զընտրեալս, աղաւթս, մկր-տութիւն և նման ձևերով, այս դեպքում կարելի է մտածել, որ գրիչը սկզբունքորեն տաղադարձի ժամանակ նույնպէս գաղտնավանկի ր-ն չի գրում, ինչպէս տողամիջում (բժշկեաց, գար-տուղ): Ընդհանրապէս ձայնորդի և նրան հաջորդող բաղաձայնի միջև ր չի լսվում՝ Եղ, դձ, Բհ, Բտ, Բդ, Բծ կապակցութիւնները հըն-չում են առանց ր-ի, ուստի և բառավերջում նրանք վանկ չեն կազմում, հաջորդ տող միայնակ գնալ չեն կարող: Սխալ է գրել՝ հանդերձ, բա-ղձալի, աշակերտք, ծնունդ և այլն:

2. Հաճախ բարասկզբի միակ բաղաձայնը թողնում է նախորդ տողում, իսկ մնացած ձայնավորով սկսվող մասը տանում է հաջորդ տող: Օրինակ՝ ք-աղաքաց, հ-ացիւ, բ-անն, վ-երայ, ծ-ովուն, բ-արձեք, ն-ոցա, թ-ողջի, ժ-ողովողենէ, մ-ահճաւ, գ-այթակղեցին, լ-ինէր, կ-անայս և այլն: Այլն՝ բ-ժշկեաց, պ-տուղ, յ-խոր, ն-մա:

3. Հաջորդ տող է տանում վերջին մեկ տառը՝ այդ-ր, անու-ն, ասե-ն, հարճ-ն, ժողովուրդ-դ, բարութ-ք, զմարդ-ն և այլն:

4. Տողադարձ է անում նաև միավանկ բառերը և հաջորդ տող է տանում թե՛ բաղաձայնասկիզբ և թե՛ ձայնավորասկիզբ մասը՝ ր-նդ, տ-ուն, սիր-տ, մե-ղք, վա-րձ, շու-րջ, գ-ի, ձ-եզ, քե-զ, Ըս-տ, մ-էջ և այլն:

5. Չի գրում գաղտնավանկի ր-ն՝ մեռելո-ցն, ին-քն, ծա-ռս, եւ-թն, մ-տեալ, դս-տեր, բժշկ-ել, մկր-տութիւն, մտ-անէ, երկնչի, խնդր-են, դ-պրաց, կո-րնչի, նույնիսկ՝ զն-տրեալս և այլն:

6. Բաղաձայնը թողնում է նախորդ տողում, իսկ ձայնավորը տեղափոխում է հաջորդ տող՝ արմ-ատս, գայթ-ակզին, սերմ-անեցին, ընդ-ունին, պտ-ուղ, ապ-ա, առ-ակի, մեծ-ամեծ, զցեր-եկի, զբ-անն և այլն:

Նկատվում է, որ գրիչը բայական և անվանական վերջավորութիւնները տանում է հաջորդ տող՝ անկախ նրանց ձայնավորասկիզբ կամ բաղաձայնասկիզբ լինելուց: Օրինակ՝ ուսուցան-եր, ժողով-ուրդ, դպր-անոցի, անցան-եր, պաշտ-իլ, աղաղակ-եաց, մաքսաւոր-ութեան, պայթ-ուցանէ, բժշկ-ել, համար-եցաւ, մրր-իկ, մաքս-աւոր, ել-եալ և այլն:

7. Բաղաձայնին նախորդող այ՝ երկբարբառը բաժանում է՝

Արկու-յք, զամենա-յն, մա-յր, տա-յր, մերձեցա-յցի, բա-յց, ա-յր, ա-յսմ, թո-յղ և այլն:

8. Միմյանցից բաժանում է իւ երկբարբառի և ու ձայնավորի բաղադրիչները՝ ի-ւր, զաւրութի-ւնն, խոռվութի-ւնն, ձկո-ւնս, դո-ւք: Այս ձևերը ոչ թե մեկ անգամ, պատահաբար են հանդիպում, այլ՝ հաճախ:

9. Բառից բաժանելով զ նախդիրը, թողնում է նախորդ տողում՝ զ-աւրս, զ-դիւհարս, զ-մաւրէ, զ-նովաւ, զ-հետ և այլն:

Ազաթանգեղոսի կրկնագիր օրինակում տեսանք, որ գրիչը չի սիրում վերջին տառը հաջորդ տող տանել և գրում է բառի նախա-վերջին տառի գլխին (պարտուա՞ւ ալլո՞ս, պործ՞ւ մատուցանե՞ւ պատուակա՞ւ և այլն): Երբեմն էլ բառամիջի այս կամ այն տառն են գրում նախորդ տողում մնացող բառամասի վերջին տառի պրի-խին. օրինակ՝ յաճախե՞-ցես, ճան՞-չել, յա՞-հիցէ և այլն: Այս երևույթը բնորոշուի է գրչագրերում, որ բխում է մեծ մասամբ տեղ շահելու ցանկությունից: Լազարյան Ավետարանում էլ այդ-պիսի բաներ կան: Երբեմն թվում է, թե արված է վանկատման կանոնը պահպանելու համար, ինչպես՝ խա՛-սելն, ամ՛-նայն, վաղ-վ՞-դակի, զց՞-րեանն և այլ օրինակներն են ցույց տալիս: Բայց հենց այդ դեպքերում էլ պատահում է, որ գրիչը հաջորդ տող է տանում բառի վանկ չկազմող մասը, ինչպես, օրինակ, ճանապ՞-րհս, Յա՛վհաննէս, չա՛-եսցի, ե՛-կնչիր, հա՛-ատք և այլն, որը ցույց է տալիս, թե տառի վերևում գրելը տողադարձը վանկատու-մով կատարելու նպատակով չէ, որ արված է, այլ ավելի շուտ՝ տեղ շահելու: Այս և այլ ձեռագրերում գրիչները երբեմն միեմույն բառը երկու-երեք ձևով են տողադարձ արել, բոլորն էլ սխալ վան-կատումով. օրինակ՝ ժողովուրդ-դ, ժող-ովուրդ, ժողով-ուրդս, ժ-ողովուրդ, նմ-այն, ն-մայն, աշակե-րտքն, աշ-ակերտքն, դու-ստր դուստ-րն, դպ-րաց, դ-պրաց, զն-տրեալս, զնտրեա-լս և այլն:

Այսպես, ուրեմն. Ե—Թ դարերից մեղ հասած մատենագրու-թյան մեջ, որ արված է ոչ բառանջատ ձևով, տողադարձի որևէ հետևողական կանոն հնարավոր չէ գտնել. գրիչները հաջորդ տողին են անցել՝ նկատի չունենալով, թե ինչ հնչյունով է սկսվում հաջորդ տող զնացող կամ նախորդում մնացող բառամասը: Հաջորդ տող են տանում կամ նախորդում պահում նույնիսկ մեկ տառը, բաժա-նում են միավանկ բառերը, ու, իւ տառակապակցությունների բա-ղադրիչները և այլն: Վիժական արձանագրություններում առավել ևս տողադարձը կանոնով չի կատարվում, քանի որ քարի վրա փո-

րապրողը ամեն կերպ ձգտել է տեղ շահել, փոքր տարածություն վրա շատ բան գրել: Եվ վերջապես երբեք էլ պատահական չէ, որ այս դարերի վիճադրությունից ու մատենագրությունից մեզ հասած օրինակներում տողադարձի նշան (ենթամենա) չկա:

Ուղղագրության հետ առնչվում է նաև այսպես կոչված համառոտագրությունը, երբ գրում էին բառի սկզբի և վերջի տառը՝ վրան նշան դնում: Մեր այսօրվա հասլավումից դա տարբերվում էր նրանով, որ նշան ունեւր վրան, որն զգուշացնում էր ընթերցողին, թե այդ տառակապակցությունը բառի մաս է, և ընթերցողը կարդում էր բառը լրիվ և ոչ թե տառակապակցությունը, ինչպես հասլավումն ենք կարդում: Եթե գրված էր Ած, պիտի կարդային Աստուած, Քի-ն՝ Քրիստոսի, նման մեր այսօրվա կրճատ ձևերին, երբ գրում ենք ընկ., կարդում ենք՝ ընկեր:

Ե—Թ դարերում համառոտագրությունը պատվի նշան էր, և միայն տերոմական անուններն էին այդպես գրվում, վրան դրվող նշանն էլ կոչվում էր պատիվ(ւ): Գործածվում էին հետևյալ համառոտագրումները՝ Ած—Աստուած, Յս—Յիսուս, Քս—Քրիստոս, Տը—Տէր, Էէմ—Երուսաղեմ, Իէլ Իսրայել և սրանց թեք ձևերը՝ յէմ—Երուսաղեմ, Այ—Աստուծոյ, Քի—Քրիստոսի, Քէ—Քրիստոսէ և այլն:

Ազաթանգեղոսի կրկնագիր օրինակում կա նաև պարկեշտութեան բառի համառոտագրությունը՝ պարկեշտութե ձևով:

Հետագայում գրության այս ձևը տարածվեց նաև մյուս բառերի վրա, սկզբում բառավերջի ձայնավորն էին հասլավում (իւն>ի, եամբ>բ), գրում էին քաջութիւն-ը՝ քաջութի, արեամբ-ը՝ արեր, արիւն-ը՝ արի, իսկ հետո այնքան տարածվեց, որ շատ հասլավումներ անհասկանալի էին լինում, և Մխիթար Սեբաստացին ստիպված սահմանափակումներ է մտցնում:

Ամփոփենք 1. Հայերենի ուղղագրությունը Ե—Թ դարերում գերազանցապես հնչյունային է եղել: Մաշտոցի այբուբենի հիմքում ընկած սկզբունքը՝ յուրաքանչյուր հնչյունին մի տառ, յուրաքանչյուր տառ մի հնչյունի համար, այս դարերի գրության հիմունքն է: Մասամբ էլ հաշվի է առնվել բառի կազմությունը, օրինակ, բաղադրյալ բառերում բառամիջի վ-ի կիրառությունը ստուգաբանական սկզբունքով է: Առանձին շեղումները խոսվածքների հետևանք են:

2. V հնչյունն այս դարերում երկու տառով էր արտահայտ-

վում՝ բառասկզբում և ա տառից հետո ամենուրեք վ տառով, ըստ որում վ-ով սկսվող բառերից կազմված բաղադրյալ ձևերում վ-ն պաճպանվում էր (վար, վազք, վախ, սովոր, զորով և՝ անվախ, նա-ւավար), իսկ բառամիջում ձայնավորների միջև և բառավերջում ա. ի. և ձայնավորներին հաջորդելիս՝ ա տառով (աւագ, սեաւ, թիւ, թեւ): Այս կանոնի խախտումն սկսվում է դեռ է դարից, օրինակ՝ քուականի փոխարեն հանդիպում է քվական ձևը:

3. Հին հայերենում երկու լ հնչյուն է եղել, մեկը մեր այսօր-վա լ-ն է, մյուսը՝ ետնալեզվային լ-ն (մոտիկ ուսերենի լե-ին), որն արտահայտվել է ղ տառով: Մեր այսօրվա դատը ձևավորվել է Թ—Ժ դարերում: Ե դարում ղ-ով սկսվող բնիկ հայերեն բառեր չկային, բառասկզբում այդ տառով սկսվում էին մի քանի օտար բառեր, որոնց բառասկզբի ղ-ն մասամբ էլ հնչյունափոխության հետևանք է: Բառամիջում այդ տառը հանդիպում է գերազանցա-պես այ, ոյ երկբարբառին հաջորդող դիրքում (փայղ, նշոյղ), օ-տարազգի լ. -ի դիմաց՝ ձայնավորների միջև և ե. ի. ձայնավորնե-րին հաջորդող դիրքում՝ Փիղիպպոս, Աբեղ, աղեղուիա, Կաղիղեա: Բառասկզբում ընդհանրապես գրվում էր լ տառը (լոյս, լաւ, լայն, լի):

4. Բառի բոլոր դիրքերում հայերենի Ե հնչույթը Զ—է դարե-րից գրեթե նույն Ե-ի հնչումն է ունեցել, բայց արտահայտվել է և. լ տառերով: Բառասկզբում և բառամիջում արտահայտվել է գե-րազանցապես և տառով, իսկ բառավերջում՝ է տառով: Բառամի-ջում Ե հնչույթը լ տառով է արտահայտվել այն դեպքում, երբ կա-րող էր հնչյունափոխվել:

Ե—է տառերի նույնահնչյուն լինելը տեղիք է տվել գրության գանաղան շեղումների:

5. Բառասկզբի Ր հնչույթը դրվում էր Ր տառով, այդ բառերի ածանցման կամ բարդացման ժամանակ բառամիջում Ր-ն պաճ-պանվում էր: Զգ, գբ, ստ, սկ, շտ, սպ տառակապակցությունների առաջ և բառամիջում լսվող գաղտնավանկի Ր-ն չէր գրվում:

6. Բառասկզբում, բառամիջում և բառավերջում յ արտասա-նելիս գրում էին յ տառը: Հայերենում բառերը ա. ո. և. Ր ձայնա-վորներով չէին վերջանում, Ր-ով վերջացող բառ չունեինք, ա. ո-ին հաջորդում էր յ տառը, իսկ և յ > է: Սակայն դեռ Ե—Զ դարերից նկատվում է բառավերջի յ-ի անկում, որ վկայում է, թե այդ դիր-քում յ-ն այդ ժամանակ համը էր: Հրամայական եղանակի բայե-րում, դերանուններում և մի քանի այլ բառերում ա, ո վերջնա-տառերից հետո յ տառը չգրելը նույնպես այդ է վկայում:

7. Հայերենի երկբարբառ հնչյուններն արտահայտվել են այ, ռյ, այ, եւ, իւ, եա, ուա, ուի, ուե տառակապակցություններով. ի հնչույթը երկբարբառում յ տառով (ծոյլ, թոյլ, հրեայք), ուժգնացող երկբարբառում՝ ե տառով (սենեակ, պատեան), իսկ իւ, ուի երկբարբառներում՝ ի տառով: Առանձին վկայությունները ցույց են տալիս, որ Զ—է դարերից արդեն՝ ա) ալ երկբարբառը պարզ օ էր հնչում, բ) ուա, ուո, ուե, ուի երկբարբառները՝ va, vo, ve, vi, որի հետեանքով էլ հանդես են գալիս այդ երկբարբառների ա, տ, ե, ի կամ վա, վո, վե. վի գրությունները:

8. Այս դարերում դեռ չկա հատուկ անունները հասարակներից գրությամբ տարբերելու կարգը, թեև կան գլխագիր և ոչ գլխագիր տառեր, այդ թվում և փոքրատառ ա (m):

9. Դեռ գրությունը բառանջատ չէ, տողադարձն էլ վանկատմամբ չի կատարվում, դրիչները մեծ մասամբ մտածում են մագաղաթի, քարի վրա տեղ շահելու մասին, ուստի հաջորդ տողին անցնում են բառի պատահած դիրքում:

10. Ընդունված է համառոտագրել միայն տերունակա՞ն անունները, որոնց վրա դրվում է պատիվ (ւ) նշանը:

11. Օտարազգի բառերը փոխ առնելիս հետևել են հնչյունային տառադարձությանը, ձգտել են տառերը հայերենի այն տառերով փոխարինել, որոնց հնչումը նույնն է կամ մոտ փոխատու լեզվի հնչմանը:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ժ—ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ

ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐ

Առաջին գլխում արդեն տեսանք, որ դեռ Ե—Թ դարերի գրավոր հուշարձաններում ձայնավորներին ու ձայնորդներին հաջորդող դիրքում երբեմն ձայնեղահնչյուն տառերի փոխարեն հանդիպում են խլահնչյուն տառեր, իսկ խլահնչյունների փոխարեն՝ ձայնեղահնչյունները, որը վկայում է, թե գրավոր ու բանավոր խոսքի միջև ճեղքվածք է բացվել: Դա հետզհետե լայնանում է, Աճառյանի պատկերմամբ, եռանկյունու ձևով, որի սուր ծայրին Ե դարի գրաբարն է՝ Այդ տարբերությունը մեծ չափերի է հասնում հատկապես ԺԱ դարից հետո, թուրքական արշավանքների ու տիրապետության և հայկական թագավորության վերացման շրջանում: Գրաբարը և ժողովրդական բանավոր լեզուն աստիճանաբար աչքաքան են հեռանում ու տարբերվում միմյանցից, որ այլևս իրար չեն համապատասխանում, գրաբարը դադարում է ժողովրդական խոսակցական լեզու լինելուց և սահմանափակվում, մնում է գրքերի մեջ, դառնում գրոց լեզու:

Ժամանակի պիտույները ժողովրդին հասկանալի լինելու համար ստիպված էին դիմել ժողովրդական բանավոր լեզվին, գրել նրա լեզվով: Այդ ճանապարհով էլ ստեղծվեց միջին շրակաճ հայերենը: Դա, Աճառյանի կարծիքով, մի բարբառ չէր, ուներ իր զանազան ձևերը: Դրանցից մեկն էր Կիլիկիայի բարբառը, որ Ռուբինյան թագավորության ժամանակ հասավ պետական լեզվի աստիճանին: Երկու լեզու, երկու գրականություն ապրում են կողք-կողքի: Նույնիսկ միևնույն հեղինակը գրում է մեկ ժողովրդական լեզվով, մեկ էլ գրաբարով: Շնորհալին առականերն ու հանելուկները միջին հայերենով է գրել, իսկ «Ընթհանրական»-ն ու «Յիսուս Որդի»-ն՝ գրաբար: Միջին հայերենով գրում են գիտական աշխատություններ՝ քիմիա, բժշկություն, անասնաբուժություն, երկրագործություն, ժողովրդական առասպելներ ու առակներ, բանաստեղծություն, նույնիսկ օրենսգիտություն ու դիվանագիտություն:

Միջին հայերենով էին գրվում Ռուբինյան թագավորության հրո-
վարտականները, դիվանատան պաշտոնագրերը, առևտրական դաշ-
նագրերը, մուկահանները: Գրաբարը մնացել էր իբրև եկեղեցու և
պատմագրության լեզու: Պահպանվել էր, սակայն, գրաբարյան
գրությունը: Անանունը, որ մեկնել է Արիստակես Գրիչի ու Գևորգ
Սկևռացու գրքերը, ելնելով բաղաձայնների ուղղապրական շեղում-
ներից, հիշատակում է այն լծորդությունները, որոնց գրությունը
հաճախ գրիչները շփոթել են՝ 1. ք, պ, փ, մ, 2. գ, կ, ք, խ, 3. դ,
տ, թ, 4. զ, ս, ձ, ց, 5. ժ, շ, շ, 6. լ, դ և այլն: Նա ղգուշացնում է
բ-ի փոխարեն պ կամ փ չգրել, գ-ի փոխարեն՝ կ կամ ֆ և այլն,
որովհետև դա փոխում է բառի իմաստը: Այդ բանը ցույց տալու
համար նա բերում է գույգ ձևեր: Օրինակ՝ «Խաբանալքն «գխա-
բեութիւն» նշանակէ, իսկ խափաւնօքն գխափանումն իրի կամ գոր-
ծոյ, փիրիւ ասելն՝ փիթթ, «գփիթթ, գթոյլ և գանարի մարդ» նշա-
նակէ, և բենիւ ասելն՝ «գբիթթ հացի»²:

Եթե Աղեփսանյուրիա բառի ֆ-ի փոխարեն կ դնես, ասում է
Անանունը, կդառնա աղեկ (գեղեցիկ) սանդր, սանդրիա: Առաջար-
կում է գրել թաքեաւ, ոնգունք, գայթագղել, խորամանգ, անգոս-
նեաց, ժանգ, ժառանգ, կնգուղ, կանգուն, խանգարել, ցանգ: Եթե
գ-ի փոխարեն կ գրենք կփոխվեն բառերի իմաստները: Ցանկ-ը
ցանկություն բառի արմատն է, իսկ ցանգ-ը պատ է: Անկողին և
անգողին տարբեր բաներ են, վերջինս ան + գողին կազմությունն է:
Խորքի՝ նշանակում է ոչ հարազատ, իսկ խորդ՝ երամակ կռունկ-
ների: Այդ՝ չորս տարրերից մեկն է, իսկ արք-ը օթևանելու տեղ:
Տարբեր իմաստներ ունեն սգալ և զգալ, ֆաւտէս (թուղթ) և ֆաւ-
տէզ (դրամ) բառերը: Ինչպես երևում է այս բացատրություններից,
Անանունը պահանջում է պահպանել դասական գրությունը:

Միջին հայերենը, որ կիլիկյան հայերենն է, օգտագործում էր
մեսրոպյան աբուբեներ, բայց տարբեր հնչումով³: Տեղի էր ունե-
ցել բաղաձայնների 2-րդ ձայնադարձը, խուլերը (պ, կ, տ, ծ, ճ)
վեր էին ածվել ձայնեղի (բ, գ, դ, ձ, ջ), իսկ ձայնեղները (բ, գ, դ,
ձ, ջ)՝ խուլի (պ, կ, տ, ծ, ճ):

Անփոփոխ էր մնացել սկ, սպ, ստ, շպ, շկ, շտ տառակապակ-
ցությունների և ն-ին հաջորդող ձայնեղների (նբ, նգ, նդ, նձ, նջ)
արտասանությունը:

Կարծառ կիլիկյան հայերենի հնչյունային համակարգը հե-
տևյալ կերպ է ներկայացնում⁴.

ա -a	այ—ai	զ—k	թ—t'
ե—ye, ie, e	ու—ui(u)	ջ—č	փ—p'
է—ē	կ—g	ծ—c	խ—x
ը—ə	ճ—j	դ—t	շ—š
ի—i	ժ—j	բ—p	ս—s
ո—vo, o	տ—d	ք—k'	ֆ—f
ու—u	պ—b	չ—č	դ—γ
իւ—ü	բ—r	ց—c	ծ—ž
ո—r'	ն—n	լ—y	զ—z
մ—m			

Ուրեմն խուլ հնչյունն արտահայտող տառերը այստեղ կարգացվում են ձայնեղ, իսկ ձայնեղ հնչյունն ունեցողները՝ խուլ: Շընչեղ խուլերը մնում են անփոփոխ, դասական գրաբարի ձևով: Կիլիկյան հայերենի այս համակարգը որոշելիս Կարստը հենվում է հին հայերենի արդի արտասանության, արդի արևմտյան հայերեն գավառաբարբառների ձայնական վիճակի, միջին հայերենի բանաստեղծությունների հանգի և երկկողմանի տառադարձության վրա: Կարստը միջին հայերենի գրությունը հնչյունային է համարում: Միջին հայերենի հնչույթային կազմը հանգամանորեն ուսումնասիրելով՝ Հ. Մուրադյանը հանգում է այն եզրակացության, որ բաղաձայնները հանդես են գալիս չորս համակարգով՝ եռաստիճան անտեղաշարժ, եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությամբ, քառաստիճան և երկաստիճան խլազուրկ⁵:

Այսպիսով, բանավոր խոսքում խախտվում է գրաբարի բաղաձայնների եռաստիճան համակարգը, որն իր ազդեցությունն է ունենում նաև գրավորի վրա: Թեև բաղաձայնների գրությունն առաջնորդվում էր մեսրոպյան ուղղագրությամբ, բայց հաճախ գրչագիրների արտասանությունը թափանցում էր գրավոր խոսք և շեղում դասական ուղղագրությունը: Ի՞նչ շեղումներ են նկատվում:

1. Ձայնորդներին և ձայնավորներին հաջորդող դիրքում խուլ հնչյունն ունեցող պ, կ, տ, ծ, ճ, խ կամ փ, ք, ց, չ տառերի փոխարեն հանդիպում են բ, գ, դ, ձ, ղ ձայնեղահնչյուն տառերը, որ հետևանք է հիշյալ հնչույթների ձայնեղացման: Քանի որ դասական հայերենի խուլ հնչույթները միջին հայերենում կարող էին արտահայտվել պ, կ, տ, ծ, ճ տառերով, եթե տվյալ դեպքում պահել էին իրենց հին հնչումը, և՛ բ, գ, դ, ձ, ղ տառերով, եթե փոխվել էին ձայնեղի: Տվյալ դեպքում գրիչները հետևել են հնչյունային

գրությանը, զրեւ են ըստ իրենց արտասանության՝ խուլի փոխարենն ձայնեղ:

Օրինակներ՝ «Արկեալ զՅովհաննէս ի բանդի» (ձեռագիր N 1001, Ժ դար, էջ 74բ): «Խաշինք ըմբել ջուր: Գայցեն ըմբել ջուր» (անդ 37): «Ետես զհանջար» (159 բ): «Ընթերծածն, ընթերծման պանծալով» (ձեռ. N 1007, Ժ դ., էջ 20 բ): «Ի և դեկեմբերի, որ է վերջին ամիս» (2), Գողիադ, Բեղդեմ (10): «Անբրոպաց տեղեալ լերկիր» (ձեռ. N 985, Ժ դար, էջ 194 ա): «Անուամբքն պանծացուցանեն» (ձեռ. N 2684, 973 թ., 147 և): «Առ ամբ: Ըշմարիտ դադիմ» (ձեռ. N 2679, Շիրակացի, 981 թ., էջ 10—28 բ): «Հէք յերկիր ընգենու» (N 988, Ոսկեբերան, 1046 թ. էջ 23): «Ոչ Պաւղոս տնգեաց» (23ե) ձեռնընդել, անընդել (37): Ամբարիշտ (< անպարիշտ), խորամանկ խաբէութեամբ (ձեռ. N 1890, Եղիշե, 1174 թ. էջ 76), ի բանդ (81), ընդանեբար (92), «խորամանկությամբ հանեին» (95), «աշխարհն խաղտեաց» (96), ընդանիք (117), «կապել զնա և զնել ի բանդի» (230), «ի բանդի անդ կայր» (130), «ընդդէմ Գողիադայ» (257): «Ընծայեցաք ի սմա» (Մարմաշեն. 1029 թ. Օրծ, 442): «Իջանել ամբ լուսեղեն» (Կոշ, 1196 թ. Ս. Ա. վազյան): «Խորամանկեալ խուսափեն» (ձեռ. N 4035, ԺԲ դար, Նարեկացի, էջ 272): Բանդսորգելիացն (23), գճշդով պահանջումն, գճշդութիւնն (8), պանծալի խաշիւղ (130, 229, 445): «Հան զիս ի բանդէս» (406): «Եւթն թուղղսն գլխաւորս զՅակովբա: Գլխաւոր թուղղն, ընթերծեալ» (ձեռ. N 975, 1194 թ., էջ 27ա): «Եթող զընդանիս» (31բ) կոշումն ընծաութեան (77), վայելջութիւն (85), պատրիարկութեան (286), «ցանգային տեսանել» (349): «Ընդհանա գհետ քի» (N 777, ԺԲ դար, էջ 76): «Յանգացող էղա ես» (1216 թ., Դիվ, I, 13): Էտու նուէր ընծայից զիմ գեւղն (ԺԳ դար, Դիվ, I, 58): «Խաբանել ջանա, Թվ ՈկԴ—1215» (Դիվ, I, 63), պապենց խանաբարն (1215 թ. Ն. տ.): «Ետու ընծայս ի վանքս» (Անի Ն. տ.): «Մանգարարութեան սկիզբն» լինել (N 468, ԺԲ—ԺԳ դար, էջ 55): Առ ի մանգարարութիւն (55), հեշտ ցանգութեանն (59): Ընդանի պտուղ, ցանգութիւն ըմբելեալք և կերակրաւք (ձեռ. 2101, 1223 թ. էջ 155): Ընդանացեալ (156): Քերդողական, «ի թաւ անդառս մտեալ» (168): «Թարդմանեալ ստուգաբան և անսղալ» (N 416, 1279 թ. Հերացի, էջ 8): Անսղալ բժշկել (9), ցանկութիւն ըմբելոյն (91): «Հոգային ըմբելիք խմէ» (25): «Գարէջրետ շաղաղէ (41բ), N 49 ձեռագրում (1282 թ.) ունգունքն, ընդանէբար, վայելջաբար. ընդորդական, N 488 ձեռագրում (1295 թ. Գոշ)՝ ընգնի, Եզնիկի «Եղծ

աղանդոց»-ի 1280 թ. ձեռագրում՝ ընդրել, ընգենուլ, ըմբեմբ, ան-
գինս, անրնդանի, ընդրեաց, ընգերին, զընդանիս, ընգեսցի, ան-
գաւ, ճանջիւ, զընգերն, ընդրին, տնգեալ, դամբս, խորամանգու-
թիւն, ընգալցին⁶: № 2865 ձեռագրում (հորենացի, Լամբրոնացի)
երկու գրչություն կա, ըստ Աբեղյանի՝ ԺԳ—ԺԴ դարի և ԺԶ դարի:
Բերում ենք օրինակներ ԺԳ դարի ձեռագրից՝ ցանգութիւն, ընդանե-
գոյն, ընծաիւք, «պատւէր ընգալալ ի քէն» (11բ): «Ի կող ընգերի
իւրոյ ձգելով» (13): «Եկեալ հասեալ ընդրիւք» (14), «ընդիրք յաջ-
մէ և ձախմէ», զայս ընդիրս: «Հանգարծօրեն ի վերայ հասեալ
Արամ» (16բ), զկարգաջասահանութիւն գետոյ: Տնգեաց ուխտս (22)
խորամանգութիւն, փաղչէր (65, 72): «Ամպարիւշո շանդահար ե-
ղեալ» (99), որում ցանգայրն (115բ), ի նաղջաւանն (178), Պոն-
դոսի (248): «Ով որ ընդանեաց կամ աւտարաց խաբանել կամենա,
մեր մեղաց տեր լինի» (Տաթև, 1532 թ., Իիվ., II, 27), վարդապե-
ղին, ավարդեցաւ (ն. տ. 34): X 823 ձեռագրում (1266 թ.)՝ ման-
գասպանութենէն (1), ընծայել (4), մանգանց, խնգոյն, ընգալաւ,
գոհս ընդրեաց, ընգալայք, զպանծալի ճեմարանն (40), «Դէմս էր
ցանգացեալն» (153), Հերովդէս մանգասպան (167): X 4066
(1283 թ.), 108 (1322 թ.), 556 (ԺԳ դար) ձեռագրերում՝ դարու-
թեամբ պանծան, փաղչել, ընդրեն, ընծայ, զտնանգսն, ըմբելեաց,
մանգունս, ըմբիցեմ և այլն: X 1747 (1243 թ.), 1746 (1280 թ.),
1748 (ԺԴ դար), 1751 (ԺԴ դար), 1749 (ԺԵ դար) ձեռագրերում, որ
միեւնոյն նյութն են պարունակում, հանդիպում են՝ ցանգութիւն,
ընդորողութիւն, ցանգալ, եռանգիւնին և քառանգիւնին, տունգ, յա-
ղագս վանգի, ոչ ընդրի, վայելչութիւնք, բուղ (= բութ), ընդրեալք,
ամբ, ամբս, ընգալցի, խնգաբեր, պանծասցի, քերդող (և քերթող),
ցանգութիւն, ստորանգանել, Աղլանդական, թաղանդ, ի վաղճանե-
լըն, գտնանգս, անգեան, քառանգիւնին և այլն:

Մաղաքիա Աբեղյայի (Գր. Ականցի) «Պատմութիւն վասն աղ-
գին նետողաց»⁷ (ԺԳ դար) գրքում՝ ի բանդէն, յմբելն, ընդրեալ,
բահադուրս, ետես Ղուլաու Ղանն, խորամանգ և այլն: X 415
(1466 թ.), 994 (1409 թ.), 266 (1468 թ.) ձեռագրերում՝ թոգ, ընդ-
րեալ, խաբանելն, ընբելեաց, ընգնի, ընծայի, մանգութեն խարա-
նեալ, ընծայեցուցանեն, դեբի, զթափանծիկ, փաղչին, բանդ, ըմ-
բէ, զբանդարգեալն, ընդանի, թուլք, խորամանգ, կնջիթ, ընդրեալ,
աղաջէր, գողութիւն, սպիտակամորդ, թաղանձանաց և այլն:

Թլկուրանցու (ԺԶ դար) բանաստեղծությունների ձեռագիր
տարբերակներում՝ սուրաղ, կերդա, շրդունք, զարդիր, անվաղջան,
ներգեվ, ջերմուգ, պիղծ, խաբան և այլն: Սաղմոսում (1565 թ.)

վայելչութիւնս, ընդիրս, ամբհովանի, թաբեսցի, ըմբել, աղաջանքն «Պարզատումար»-ում (1512 թ.)՝ ամբոյ, գիջային: Վարդան Այ գեկցուն վերագրված առականների ԺԶ—ԺԷ դարերի գրչագիր տարբերակներում, որի քննական տեքստը կազմել է Ն. Մառը, հանդիպում են՝ մեղանշեմք, յառաջէր, կարկաջել, դատասդան, զընդանիս, դադիս, խազնադար, գովասանգին, ցանծել (=ցանցել), ձգներէն, ընբել, յամբն և այլն:

Շատ ավելի տարածված է ձայնեղի փոխարեն խուլի գործածությունը, որ բաղաձայնների եռաստիճան համակարգում տեղի ունեցած նշված տեղաշարժ-տեղափոխության հետևանք է, քանի որ միջին հայերենում ձայնեղ հնչյունները կարող էին արտահայտվել մի դեպքում իրենց ավանդական գրությամբ (բ, գ, դ, ձ, ջ), եթե պահպանում էին իրենց հնչումը, մյուս դեպքում՝ պ, կ, տ, ծ, ճ տառերով, եթե վեր էին ածվել խուլի:

Ներքոհիշյալ գրությունները, ուր ձայնեղի փոխարեն հանդիպում է խուլ հնչյունի տառը, հենց բաղաձայնների այդ տեղաշարժի հետևանք են:

Այս փոփոխությունները կարող են հետևանք լինել նաև փոխադեցական հնչյունափոխության: Եթե, օրինակ, ն ձայնորդը առաջին դեպքում իրեն հաջորդող խուլ հնչույթին դարձնելով ձայնեղ՝ մասնակիորեն նմանեցնում է իրեն (ընծայ > ժնծայ), ապա երկրորդ դեպքում դարձնելով խուլ՝ հեռացնում է իրենից (վտանգ > վտանկ): Երկու դեպքում էլ (առնմանում և տարնմանում) նմանեցումը կամ օտարումը կատարվում է ըստ հնչյունի որակի, ձայնի ու աղմուկի մասնակցության չափի: Այդ հնչյունափոխությամբ տվյալ դեպքում միայն որակն է փոխվում, խուլը դառնում է ձայնեղ, ձայնեղը՝ խուլ, չի փոխվում ոչ արտաբերման տեղը, ոչ կազմությունը, ոչ նույնիսկ՝ եղանակը: Օրինակ՝ Ն՝ 1001 ձեռագրում (Ժ դար) հանդիպում է անկոսնեաց գրությունը, ուր գ > կ փոփոխությունն է տեղի ունեցել, երկուսն էլ պայթական, ետնալեզվային, պառզ հնչույթներ են, միայն երկրորդի որակն է տարբեր, խուլ է: Այլ օրինակներ՝ «Շինեցաւ հրամանաւ թագաւորին Սնալատա ի ձեռն Շահանդխտոյ քարեպաշտ թագուհոյ» (1000 թ., Դիվ, I, 100): «Աղնիկ մի» (Ն՝ 1007, Ժ դար, 15): Կոչէ ինծ (5), «որպէս Անտրեաս ստուգաբանէ» (2): «Ի կանկնումն» (99բ), անտրանիկ (11): «Զպատրոյկն առկայծեալ մի շիջուցէ» (Ն՝ 985, Ժ դար, 89ա): «Հնծանացն այն ի ներքոյ ունիլ» (ձեռ. Ն՝ 2684, 973 թ. 56բ): «Ողկոյզն հնծանսն ճմլեալ» (ն. տ.): «Դիպեցին առնոսա յանկուցեալք» (58բ): «Թղենի ընծիղեաց զբողբոջ իւր» (68): «Ամպար-

տաւանութիւն ոչ ասելն է» (№ 988, 1046 թ. 24—25): «Այն է ամ-
պարտաւանութիւն» (37): Զյապշտակողս (61), «միածնին փառաց
կարկելով» (121): «Աւղորդն այտ է» (Տեկոր, 1036 թ. Ս. Ավ.):

Միջին հայերենի հնագույն վկայությունը Աճառյանը համա-
րում է Վահրամ Սպարապետի որդի Գրիգորի ղեղազիրը, որ գրել
է բօիշկ Բուսայիշը 1037 թվականին: Այդ ձեռագրում նույնպես
երևում է այդ տեղաշարժը: Օրինակ՝ «Այտ ցաւտ նմա դիպաւ և նա
ի Մուֆարզինն գնաց»: «Զայտ նուսխաթնիտ զլերդն ուժովացնէ:
Զայն շոֆն»⁸: №№ 1890 (1174 թ.), 4035 (ԺԲ դար), 975 (1194 թ.,
ձեռագրերում՝ ամպաստանութիւնն, հինկ, վտանկեցելոյս, վտանկս,
յանկաւոր ձայնի, բազմավտանկս, անվտանկելի, խառնիճադանն,
չաղկանծողական, մի անկոսներ, միանկամայն, միւս անկամ,
ձկտեցաւ, տիկնոջն և այլն:

ԺԳ դարի №№ 823 (1266 թ.), 416 (1279 թ.), 488 (1295 թ.),
2865 (ԺԳ դար), 4066 (1280 թ.), 1747 (1243 թ.), 1746 (1280 թ.),
556 (ԺԳ դար) և Եզնիկի «Եղծ»-ի 1280 թ. ձեռագրերում հանդի-
պում են՝ զհինկ, խոնհենալն, հինկաւրեայ, կանկներն, աւկտակար
է, հանկիստ առնել, այտ ջրովտ, աղեկ հանկչի, խնծորի, տանծ,
զայտ բանտ (= բանըդ), հապս (hab), ժառանկելոցն, բարբաճանք,
ի բաղթէացոց, թուխթ, յաղակս, թարժանութեան, խառնիճա-
դանն, անպարտակ, Սմպատուհի, ապստամպեն, Անակայ, վտան-
կըս, փափափող, փոխատրելով, նենկութիւն, աղեկանն, աննենկ,
անկամ, ի մէնն, միանկամայն ընդ որթով իւրով, Նախշուանայ,
անկոսնեցաւ, ծանծախամիտ, հնազանտել և այլն: Եզնիկի «Եղծ»-ը
արտագրող գրիշը (1280 թ.) սկզբում գրել է գայթակղութիւն, որ
հինն է և ճիշտը, բայց հետո, տեղի տալով իր ժամանակի արտա-
սանությանը, դարձրել է՝ գայթակղութիւն (էջ 112): № 2865 ձե-
ռագրում (ԺԳ դար) Սմբատ և ապստամբ բառերը ամենուրեք զըր-
ված է տ և պ տառերով: № 556 ձեռագրում (ԺԳ դար) ամենուրեք
հանդիպում են՝ ի մէնն, ի հանկիստ, ժառանկ (իւր բոլոր ձևերով),
նենկ (իւր ձևերով), միանկամայն, յանտաստանս, կամուրն, ըմ-
պըռնեցէ, Պարտողիմոսն, անկոսնեցին և այլն:

ԺԴ դարի №№ 108, 1751, 57 ձեռագրերում՝ աղեկանցն, հանկ-
չի, հինկ, ի հետակայումդ, հանկամանք, հնկեակն, թուխթ, հան-
կանակողս, ձկտիր, պղինծն, թղխտիդ, սնտուկ, քաշալերել: № 57
ձեռագրում օգտագործված են թե՛ բղխումն, թե՛ բխումն ձևերը:

Օրինակներ վիճագրությունից՝ «Ես Վաչէ Անբերթեցի» (Մա-
կարավանք, ԺԳ դար, Ս. Ավ.): «Հինկ աւր պատարաք» (Անի.
1286 թ., Դիվ, I, 36): «Ետու ընծայս ի վանքս» (Անի, 1215 թ.,

Դիվ, I, 63): Այսպես էլ հանդիպում են՝ Սնպատ, Սարհիս, պատարաբ, տարոշն, կնոշ, կարմնճին, Ջաջուո, Ապլխարիպ, կանկնեցաբ և նման գրություններ:

Ժն դարի №№ 415 (1466 թ.), 266 (1468 թ.), 994 (1409 թ.) ձեռագրերում՝ թրշած, շարպաթն, շարպապն, հնտի, սնպուլ, դարցնել, աղընծած, ալկտէ, անհախթ, ասթղ, խնծոր, զերթ (զերդ), պախսեցնէ, լինտթ, վերշքն, յեղեֆն (նաև՝ յեղեգն), երփ, կանկնիլն: մախց (= մաղծ), ալտ (- ալդ), դարցուցանէ, մարդիբ, աւաբ երաֆն, հանֆչի, ճրաֆու, տիապետ, զնթանուր նշանսն, դարց առնէ, տեղոշէ, միոշէ, ալցս, արապկաց երկիրն, ձկտեցուցանէ, ավշեալ, յաղակս և այլն: Վարդան Այգեկցուն վերադրվող առակների ԺԶ—ԺԷ դարերի գրչագիր տարբերակներում հանդիպում են՝ կանկնեցաւ, հանկչիմ, ժառանկեցէք, հանկստեան, մի ձկտիր, անկամ, պազար, սնպակ, բամպասէ, յարապկերէն (արաբերեն), ըմպըռնեալ, գանծով, յաղակս, աննենկ և այլն:

Թլկուրանցու բանաստեղծություններում՝ դատար, թիթելան, պահար, խապար, պաղշա, դարցնէ, թանծր, բարցր, ընծի, զհոթիտ կանկատիմ, կանկնած, կենայ պահար, առոխշութին, զականնա, քաշանց, փունն, կարմունն, կնոշ, պուղար, պլպուլին, եփ, Ստամպուլ և այլն: 1565 թ. մի Սաղմոսից՝ կակնեաց, ժառանկութին և այլն: «Պարզատումար»-ից (1512 թ.)՝ հինկշաթի, հնկաստեղ, քանուհինկ, գանկատի, խանկարի և այլն: ԺԶ դարի նշանավոր բանաստեղծ Հովասափ Սեբաստացին գրում է՝ կենտանի, հանտիպի, զփատիշահ, պաղշահին, պլպուլն, խնտացած, քանտեալ, Կոստանտինի, անհնազանտ, կանկուն, խրխնին, խնտրէիր, կանկնեցուցին, խնտալի: Այս բոլոր շեղումները բխում են միջին հայերենում խուլ հնչույթների ձայնեղացումից և ձայնեղների խլացումից: Այս նույն խլացման պատճառով շատ է տարածված դ հոդի փոխարեն տ—ի գրությունը: Միջնադարի համարյա բոլոր ձեռագրերում հանդիպում ենք այդ սխալին. հոգիտ, որդիտ, խաշիտ (№ 1001, Ժ դար), քաջտ, քրիստոսասերտ, մեծտ, եղբարքտ (№ 823), կաթներտ, գարէջրէտ, գամենտ, հոգիովտ, հուկնայտ, ալտ պատճառանացտ, դեղերովտ (№ 416), յառաջտ, ալտ մաղծտ, զալտ գործտ, զգուներտ կերակրոյտ, պատճառնիտ, ալտ ցաւտ, ի յինքտ, մատամբտ (№ 415): Քահանայք սբ փրկչիտ (Անի, 1050 թ., Դիվ, I, 42): Մատտ, ի բերանտ (№ 266, 1468 թ.) և այլն: Հովասափ Սեբաստացու ժողովածուն կազմող Վ. Գևորգյանը գրում է, թէ հեղինակային ինքնագրում, որպես կանոն, երկրորդ դեմքի ստացական հոդը գրված է տ և ոչ թե դ տառով և բերում է օրինակ-

ներ՝ տեսովտ, սիրովտ, սիրատ, խօսքտ, այլև՝ սիրուտ, սերքտ, ձևովտ, վզիտ և այլն:

Նկատելով, որ դ հոգը տ տառով են՝ գրում, Արիստակես Գրիչը գրում է. «Իմա և զայս, յորժամ ասես թէ աստուածդ բան, բանդ աստուած, գառնդ անարատ, դուռնդ կենաց, երանելիդ, զարեղդ, էդ, բնտրեալդ, որդիդ, հոգիդ, ի դա պիտի որ անպատճառ դիպի, որ ցուցական առնէ և ոչ ի տին»⁹:

Երբեմն Բ. Գ. Վ ձայնեղներին նախորդող դիրքում զ տառի փոխարեն հանդիպում է ա-ն: Ձայնեղը փոխվում է խուլի: Դա կարող է երկու պատճառի հետևանք լինել: Առաջինն ըստ Երևույթին ստուգաբանությունն է: Գրիչը բառը գրելիս նկատի է ունենում նրա արմատը: Օրինակ՝ գրում է սկիսք, սկսբնաւորաց, սկսբունք՝ մտածելով, որ դրանք սկսել բառի սկս արմատից են ծագում: Երկրորդ պատճառը ձայնեղների խլացումն է, գրիչը ս է արտասանում, ս էլ գրում է¹⁰: Օրինակներ՝ «Պիտոյ էր հանդերձ սգեցուցանէր» (Ն՝ 1890, 1174 թ., 106): «Մեր սգաութիւնք» (№ 823, 1266 թ., 12բ): «Մինչև ի դնացս և ի սգեստս» (31բ): «Սկիսբն շարեաց զնախանձն ասեմք» (Եզնիկ, 1280 թ., 26): «Ոչ ապի» (=ազդի, 46) «Ոչ յումեքէ առեալ սկիսբն լինելո, այլև սկսբնաւորացն» (48): «Բագում անսգամս տեսանեմք» (65): «Ասդ(=ազդ) արար Յուդա» (74): Ասդեցութիւնք, ասդեցութեամբք, ասդեցութենէ, ասդեցութեամբն (78): «Ըսբոսնուլ կամելով ի հովիտս» (№2865, ԺԳ դար. 19բ): «Ըսգեցուցանել ծիրանիս» (81ա): «Սգեստուն զկարծրութեանն վիմաց բերին» (109բ), խարազանսգեստք (115բ): Ի սգայութիւն (№ 1746, 1280 թ., 187բ) պարտ է սդուշանալ (№ 556, ԺԳ դար, էջ 151): Այս ձեռագրում կա նաև ասպարես գրութիւնը՝ «Տեսարանն ասպարէս» (97): «Ընթացս ասպարիսաց» (N 1746, 261): Ասպարէս և ասպարէզ զույգ ձևեր են, պարսկերեն asbrez և asnres ձևերից¹¹: Զ տառի փոխարեն ս տառն է հանդիպում նաև միջնադարի այլ գրչագրերում: Նույնիսկ Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» գրչագիր տարբերակներում հանդիպում են՝ աստուածազեց, աստուածազեստ, ի սկսբանս և այլն: Ըստ որում, այս օրինակները հանդիպում են գլխավորապես Ը ձեռագիր տարբերակում, որը համարվում է 1307 թվականի գրչագրութիւն, երբ դեռ կենդանի էր Նչեցին¹²:

* Դեռ ԺԲ դարում Արիստակես Գրիչը նշել է, որ ցուցական հոգերը տարածական հարաբերություն են արտահայտում, ա-ն խոսողին մոտիկ, իսկ և-ն՝ հեռու առարկա: «Ոչ միայն դայն առնէ ցուցական, այլև սեն ի մոտոյ և նուն ի հեռուստ» (անդ, էջ 243):

Այդպիսի ձևեր կան նաև Վարդան Այգեկցու առակների ԺԶ—ԺԷ դարերի տարբերակներում՝ սբաղեցան, սգաստացաւ, սգաստ լեր, սղեցաւ, սղեսաւ, ասղն և այլն:

Ամփոփելով սլաշթականների գրության շեղումների մասին մեր ասելիքը՝ ընդգծում ենք, որ այդ շեղումները հետևանք են մի կողմից խուլ հնչյունների ձայնեղացման, մյուս կողմից ձայնեղների խլացման, որ կոչվում է տեղաշարժ-տեղափոխութիւն բաղաձայնների եռաստիճան համակարգում:

Շրթնային ք, պ, փ հնչյուններին նախորդող դիրքում մ—փոխվում է ն—իւ Այս դեպքում նույնպես գործում է հնչյունափոխության տարնմանման օրենքը, միայն ոչ թե ըստ երանգի, այլ ըստ տեղի, շրթնային ք, պ, փ հնչյունները իրենցից հեռացնում են շրթնային մ—ին՝ դարձնելով ռնգային, և գրիչը ն հնչելով՝ ն էլ գրում է՝ հետևելով հնչյունային գրությանը, որով խախտում է բառի կազմութիւնը, երբեմն ազդում նրա իմաստի վրա, մթաւնում այն: Այդ է պատճառը, որ մատենագրության մեջ հանդիպում են՝ անփոփ, անպարտակ, բանբասել, փանփուշտ, Սևպատ, խնքի, անբ, կաղանքն, բանբակ: Օրինակներ՝ «Շինեցաւ հրամանով թագաւորին Սևպատա ի ձեռն Շահանդխտոյ բարեպաշտ թագուհոյ» (1000 թ., Դիվ, II, 100): «Պարոն Սևպատին իշեցէք» (1494 թ., Դիվ, II, 104): Անփոփեսցին (նդնիկ, 40): «Զփանփուշտ յորժամ փշել կամիցիս» (անդ, 85): Ընպէ և ուտէ» (№ 108, 1322 թ., 267): «Առ բանբակ, առ ձաղառ մի» (№ 415, 1466 թ., 92): Ընպելով (78): «Զսև մաղձն ընձայեցուցանեն ոսբն, կաղանքն» (54):

Ուղղագրական այս շեղումը կարող է հետևանք լինել նաև ստուգաբանության: Գրիչը մտածելով, որ գործիական հոլովը կազմվում է սեռական հոլովից, գրում է արեանք: Այս է պատճառը, որ հորենացու Պատմության արտագրողը (XIII դար, ձեռ. № 2865) սխալ է կազմում գործիական հոլովը՝ «Աթանագենէս կոչին անուանք» (էջ 99), բայց հաճախ գրիչը նկատում է իր սխալը և ուղղում, ուստի այդ գրչագրում կան միևնույն բառի և՛ ճիշտ, և՛ շեղված ձևերը: № 415 ձեռագրում (1466 թ.) գրիչը գրում է. «Յերփ մատմբտ սեղմես» (90), «Յերք սեղմես մատմբտ, կակուղ լինի» (106, 107, 171, 199): Նշանակում է գրիչը նկատել է իր սխալը և ուղղել: Բառի կազմությանն է հետևել նաև Դատաստանագրքի գրիչը (1264 թ.) գրելով՝ ճանպա, նաև՝ ճանփա:

Հանդիպում է վաքսուն բառի վացսուն գրութիւնը՝ «Ի տարումն վացսուն սպիտակ կա» (Դիվ, III, 234, ԺԳ դար): № 266

ձեռագրի (1468 թ.) բառարանում գրված է՝ ընդբոշխնել և բացատրված՝ «վայելել», ուր նույնպես պահպանված է բառի նախնական ձևը, որը հետո դարձավ ըմբոշխնել: Այսպես էլ ձեռագրերում պահպանված են սեպհական (= սեպուհ և ական), սեփական, նահ սեփական ձևերը: Հաճախ գրիչը միևնույն գրչագրում օգտագործում է թե՛ մեկ, թե՛ մյուս ձևը: Օրինակներ. «Լինել ժողովուրդ սեփական» (N 1001, 34): «Սեպհականութե՛ն զարութե՛քն» (N 49, 1282 թ., էջ 66): «Ժառանգորդ սեփհական հայրենի աթոռոյս» (Դիվ, 14, 1216 թ.): «Իր սեփական» (Դատաստ, էջ 21): «Սեփհականել բաժինս» (N 4035, էջ 340): «Սեփհական ազգաց» N 2865 7բ): «Տացէ ի սեփհական գոյիցն» (N 556, 11): «Ի սեփհական ընչից կարող է տալ» (անդ, 185բ): «Սեփհական ընչիցն առնումն (Մաղ. Աբեղա, 11)¹³: «Սա ի հաւրէն իւր սեփհական առնու ըգթագն» (Շնորհալի, Յս Որդի, 1643, էջ 32ե):

Հնչյունային գրությանը հետևելով՝ հաճախ գրիչները վատբար բառը գրում են վաթբար ձևով, ընդհանուր բառը ընթհանուր, ընթանուր ձևով: Օրինակ՝ «Ծածկելով զլաւագոյնն վաթթարան» (N 168, 60), վաթթարացն (ն. տ.): «Առաջինն զնթանուր նշանսն ցուցանէ (N 415, 123բ): «Ընթանուր լերինք» (N 266, 123): «Ընթհանուր արարածս հաւատացեալ» (N 994, 100): «Վաթթար վարուք» (N 2865, 26բ), «վայելմամբք զվաթթարագունիցն» (93բ): Առաջին դեպքում (վատթար > վաթթար) տեղի է ունենում ետընթաց լրիվ առնմանում, ք-ն նախորդող տ-ին նմանեցնում է իրեն մինչև նույնություն, երկրորդ դեպքում (ընդհանուր > ընթհանուր > ընթանուր)՝ առաջընթաց տարնմանում, ն ձայնորդը իրեն հաջորդող ձայնեղ դ-ին հեռացնում է իրենից: Այստեղ դեր է խաղում նաև դ-ին հաջորդող հ շունչը, չէ՞ որ ք-ն բաղկացած է տ և հ հնչյութներից, իսկ տ-ն արտաբերման տեղով ու եղանակով մոտ է դ-ին: Իկդ է պատճառը որ կատարվում է դհ > ք հնչյունափոխությունը:

Ինչպես որ ք, պ, փ-ն մ-ին իրենցից հեռացնում են դարձնելով ն, այնպես էլ կարող են ն-ին իրենց մոտեցնել՝ դարձնելով մ: Այս դեպքում տեղի է ունենում առնմանման երևույթը, շրթնային ք-ն առաջնալեզվային ն-ին դարձնում է մ՝ մասնակիորեն նմանեցնելով իրեն (նբ > մբ): Օրինակ՝ «Գիրս մի ամբիծս այլ գրէ Սմբատ» (N 2865, 193բ): «Ամենայն վարս ամբիծս» (անդ, 191բ): N 4035 ձեռագրում կան՝ ամբիծն, ամբծութեամբ ձևերը: Ընդհանրապես տարածված են այս գրությունները:

Ուղղագրական այս բոլոր շեղումները, ինչպես տեսնում ենք, հետևանք են կա՛մ արտասանական փոփոխությունների, կա՛մ էլ

ստուգաբանական նկատառումների Գրիչները, հիմնականում պահպանելով դասական ուղղագրությունը, տեղ-տեղ տուրք են տալիս իրենց արտասանությանը, որ արդեն փոխվել էր Ե դարի արտասանությունից: Այդ է պատճառը, որ ընդհանրապես ճիշտ գրելով տվյալ բառը, երբեմն սխալվում են: Հաճախ տվյալ բառի ճիշտ ու սխալ գրությունները հաջորդում են իրար: Օրինակ՝ № 823 ձեռագրում (1266 թ.) գրիչը միևնույն էջում գրում է թե՛ ցանկություն, թե՛ ցանգություն: «հոցեցաւ ցանգութի», «նախ քան զցանկութիւն» (էջ 14): «Ձպանծալի ճեմարանն» (էջ 40) և «պանծացեալ» (172բ): № 975 ձեռագրի (1194 թ.) 27 էջում գրված է՝ «գըլխավոր քողղն», իսկ 27բ-ում՝ «չորեքտասան քողղսն»: 27 և 77 էջերում՝ «ընթերնեալ», իսկ 85 էջում՝ «ընթերցուածոց»: № 416 ձեռագրում (1279 թ., Հերացի) հանդիպում են՝ գիջութիւն և դիճութիւն, ջրովտ և դեղերդ, ալդ և ալտ, աւգուտ, հաւկտակար զույգ ձևերը, № 49 ձեռագրում՝ ձկտեսցուք և ձգտեսցանէ, № 2865 ձեռագրում՝ մանգունք և զմանկունս, մանկիկ, № 57 ձեռագրում միևնույն 89 էջում կա՝ թղթոյ բո և թուխթս, իսկ 78 էջում՝ ի թղխտիդ: Այս գրիչը գրում է բոլորումն և բխումն: Օրինակ՝ «Այլ է բղխումն ի հարէ: Խոստովանիմք բղխումն ի հարէ», բայց նաև՝ «հոգին բխումն է» (98բ): № 1746 ձեռագրում օգտագործված են թե՛ ընդհանուր և թե՛ ընթանուր գրությունները: Օրինակ՝ «Ունին ընթհանուր (մի այլ տեղ՝ ընթանուր) բացորոշողութիւն» (էջ 8) և՝ «Ձի ընդհանուր գիտութիւն է» (8բ): Հենց միևնույն նախադասության մեջ լինում են ճիշտ ու շեղված ձևեր: Օրինակ՝ «ընթհանուր գիտութիւն և՝ ընթհանուր պատահման և՝ ընդհանուր իմաստասիրութեան» (№ 1747, 8): Այս ձեռագրի միևնույն 23բ էջում՝ «ընթհանուրն մասնականին գոյ նախադասիլ» և՝ «ընդհանուր էական նախադասիլ»: № 1751 ձեռագրում՝ ընթհանուր բացորոշութիւն (8), ընթհանուր գիտութիւն է (8), ընթանուր գիտութիւն է (8), բայց նաև՝ մտօք դբանն ընդհանուր է (8բ): «Եթե ընդհանուր սպիտակն գոյնն է» (8) և այլն:

Այս զույգ գրությունները ցույց են տալիս, որ գրիչները գիտեն և պահպանում են ավանդական ուղղագրությունը, նրանց երբեմն շեղում է տվյալ բառի արտասանությունը: Եթե մենք բերում ենք միայն շեղումն արտահայտող օրինակներ, դա չի նշանակում, թե դրանք ճիշտ գրություններից շատ են: Մեր նպատակն է շեղումները ցույց տալ, ուստի համապատասխան օրինակներն ենք հավաքել: Հասկանալի է, որ եթե տվյալ էջից մի շեղում ենք բերել, մնացածը ճիշտ գրություններ են, հաճախ տասնյակ էջեր

շեղումներ չեն ունենում: Իսկ եթե ավելացնենք նաև այն գուգահեռ գրությունները, պարզ կդառնա, որ գրիչները հիմնականում հետևել են դասական գրությանը: Շատ հաճախ նրանք, զգալով իրենց թույլ տված սխալները, նույնիսկ ձեռագրի կեղտոտությունն ու անընթեռնելիությունը, հիշատակարանում մեղա են գալիս ընթերցողի առաջ, թողություն խնդրում:

Միջին հայերենի հնչյունային համակարգում խուլ հնչյունի ձայնեղ դառնալը և ձայնեղիներ՝ խուլ, ընդհանուր օրենք չի եղել գրավորի համար, գրավորը արտասանության ետևից չի ընթացել, գործել է պատմական ուղղագրությունը: Այդ է վկայում նաև ուշ միջնադարում հրատարակված դրականությունը: Մեր ձեռքի տակ են՝ «Տոմար Գրիգորեան» (1587), «Առաւել պարզաբանութիւն» (1630), «Խորհրդատետր պատարագին Հայոց» (1641), «Նորագոյն ծաղիկ գօրութեան» (1685), հաշատուր Արզրումեցու «Գիրք քերականութեան» (1696), Ղ. Վանանդեցու «Գանձ չափոյ...» գրքերը, որոնք գրված են բաղաձայնների դասական ուղղագրությամբ: Թվում է, թե ժէ դարում, երբ արևմտահայ հատվածում ընդհանրական էր դարձել խլազուրկ արտասանությունը, պիտի այն արտահայտվեր վենետիկում, Ամստերդամում հրատարակված գրականության մեջ, բայց հիշյալ գրքերում մենք զրեթե չենք հանդիպում $h > պ$, $g > կ$, $d > տ$ հնչյունափոխությունն արտահայտող գրությունների, մանավանդ ոչ փոխառյալ բառերում:

Բաղաձայնական համակարգում եղած փոփոխությունը արտահայտվել է այն գործերում, որոնք գրված են միջին հայերենով կամ բարբառախառն են:

Ղ-Լ. — Առաջին դիտում մենք տեսանք, որ դասական գրաբարում այսօրվա ղատ հնչույթը չի եղել: Աճառյանը ցույց է տվել, որ այդ ղատ-ը ձևավորվել է Թ—Ժ դարերում: Մենք ունեցել ենք լ, որ այսօրվա լ-ն է (լոյս, լայն, կալաւ, ել) և ղ, ոտ այդ լ-ի ետնալեզվային արտահայտությունն է հունարեն λ . հրնչույթի դիմաց, մոտ ոռութեան $\lambda\beta$ -ին: Ե—Թ դարերի գրավոր հռչարձաններում այս ղ-ն (λ , $\lambda\beta$) օգտագործված է հունարեն տառի տառադարձության համար և հայերեն ալ, ոլ տառակապակցություններից հետո: Միջին դարերում արդեն ձևավորվել էր այսօրվա ղատ հնչույթը և լ-ն ու ղ-ն տարբերվում էին իրարից թե՛ արտաբերման տեղով, թե՛ որակով, ինչպես ցույց են տալիս Աճառյանը, Աղայանը: Կարստը իր հիշյալ տախտակում (տե՛ս այս աշխատության 68-րդ էջը) միջին հայերենի ղ-ն դնում է հունարեն

ի դիմաց, իսկ գիտենք, որ դասական հայերենում ղ-ն լ-ի դիմաց էր գրվում: Ղատ-ի ձևավորումը, իբրև պատմական հնչյունափոխություն արտահայտություն, միանգամից չկատարվեց, այլ՝ դարերի ընթացքում: Դասական հայերենում որոշակի էր լ-ի և ղ (l, ll)-ի գրության սահմանը, որը հետո խառնվեց: Երբ մեր ղ-ն համապատասխանում էր հունարեն *λ* -ին, *Πρωτο-*ը տառադարձում էին Պրատոն, բայց երբ ղ-ն հետագավ *λ* -ից, գրիչների մի մասը շարունակեց գրել Պրատոն ավանդական գրությամբ, մի մասը սկսեց գրել հնչյունային գրությամբ՝ Պրատոն: ԺԱ—ԺԳ դարերում առկա էին հին ղ-ն () և նոր ղատ-ը իբրև հնչյունային տարբերակներ: Արիստակես Գրիչը փշիկով ղ-ն () տարբերում էր ղատ-ից: Ղ-ն ըստ նրան կացու երկու հնչյունի տեղ էր ծառայում՝ ղատ-ի և ղյուն-ի: Ուրեմն ղատ-ը արդեն կար, բայց մարդիկ չէին անտեսում ղ-ի նաև հին նշանակությունը՝ ղյուն: Այս ղ-ի հին և նոր նշանակությունն է պատճառը, որ գրության մեջ բառամիջում ու վերջում լ և ղ տառերի գործածության սահմանները վաղ միջնադարում այնքան անորոշ են, որ միևնույն հեղինակը միևնույն բառը և՛ լ-ով է գրում, և՛ ղ-ով:

Լ և ղ տառերի մասին ամենահնադույն տեղեկությունը Թրակացու մեկնիչներն են տալիս՝ այբուբենում հայերեն ղ-ն տեղադրելով հունարեն *λ* -ի դիմաց, իսկ լ-ն 12-րդ տառն էր, 30-ի նշանը, որի դիմաց հունարեն տառ չկար: Այնուհետև տեղեկություն է տալիս Արիստակես Գրիչը. «Եւ միւս նշանն որպէս փշիկ է () և է ի վերայ այնց գրից, որոյ գլուխն որպէս ղատի է, և չէ ղատ և ոչ լիւն, որ ի համարողականն գերեսներորդ թիւն ունի, այդ ղ՝ իւն է սա, որ ի ղատինաց անունս և յէղիս էղիս և ի ղամա, և յաղեղուիայս, և ի նաթանայէղս, և յիէղս, և որ այլ սոցին նմանս ուղղակի և նուրբ բերէ. զի որք որպէս զդատ զնա խաւսեցնեն, այն աւէր է և շաղփաղփ, և որք որպէս զլիւն խաւսեցնեն, այն թանձր է և անյարմար: Իսկ այս ղիւն է սրուկ և նուրբ քան զլիւնն, որպէս զարինակդ ցուցի, և ոչ ղատին պէս, որ բնամին անկերպ է և անհեթեթ»¹⁴: «Զի ղատդ լծորդ է լիւնիդ, հերիք համարեցան սուրբ թարգմանիչքն ղատի գլխով գծագրել և ոչ մերով թանձր լիւնին, որպէս էղի-էղի և ոչ էլի-էլի, զի այս թանձր է և յախնթոր, այլ և ի յուղութենէ գրոյ խոյս կամեցան տալ, վասն այնր սմին որիշ գիր շահմանեցին»¹⁵:

Ավելի ուշ նրանկացին գրում է. «Զի որ յայլ ազգ լիւնով է անուն՝ ի մեզ ղատով սահմանեցին, վասն թանձրութեան լեզուիս»:

«Ղատն երկու գրոյ տեղի լնու, մին զղատն և մին ղ'իւնի»։ «Եւ է լիւնն թանձր և ղ'իւնն նօսր ի ձախնս, յորժամ ասես լաւ, լար, լոյս ուղիղ է և ղ'իւնով անհամ երեւի»։ 'Ղիւնի բառ դամբար, դասինացի, ղակոնացի, էգ'ի, էգ'ի, որք խանգարին 'ի լիւնով ասելն էլի, էլի։ Քանզի էգ'ի, էգ'ի աստուած իմ, աստուած իմ լսի, իսկ ելի, էլի այլ իմն ասէ, թէ՛ ել ի հօրէ և եկ ի յաշխարհ կամ՝ էլի, շէ թերի։ Լիւնիւ ասել լալ՝ զսուգ ցոցանէ, իսկ ղ'իւնիւ զ'աղ՝ զանուն մարդոյ և կամ զպատուական ակնէ յայտ առնէ։ Քան զի ղ'իւնն կէս լիւնի է քստ ձախին։ Լիւնն երեսուն է 'ի թիւս և ղատն, որ է ղ'իւն, իննսոսն ձախակից է»¹⁶։

Արիստակես Գրիշը այնքան է տարբերում ղատ-ն ու ղյուն-ը, որ կարծում է, թե որանք Մաշտոցի ժամանակ էլ տարբեր են եղել, և Մաշտոցը նրանց համար առանձին-առանձին տառեր չի ստեղծել, որպեսզի այբուբենը չմեծանա, տառերի քանակը չշատանա։ Սուրբ Թարգմանիչք բավարարվեցին ղատ-ի գլխին նշան դնելով։ Նրանք «ի հոլովութենէ գրոյ խոյս կամեցան տալ վասն այնր սմին ուրիշ գիր չսահմանեցին»։

Լյուն-ի և ղյուն-ի մասին այս նույնն են կրկնում հետադայում Անանունն ու Նշեցին։ Անանունը նույնպես առաջարկում է ղ-ի վրա կետ դնել, որ ղյուն կարդացվի և բերում է՝ ղասինասի. իէ՞ղ, ղամա, ղեղի, կիղիկէ. ղալալ. ղեղակ։ Նա ամփոփելն է համարում «զղեղին ղեղի ասեն», «է ղեղին կարի դառն և ղեղին անոյշ իւղ։ 'Ղաղ-ալն մեծագին կամ անուն, իսկ լալ-լացել»¹⁷։

Ուրեմն վաղ միջնադարում¹⁸ գրիչները տարբերակում էին լ-ը և ղ՝ տառերը։ Հենց Գրիչի խոսքում կան ուղղակի, շաղփաղփ բառերը, ուր ղ-ն այսօրվա ղատն է, յաղ'նդ'ուիա, էղ'ի բառերը, որոնց ղ-ի վրա նշան է դրված՝ տարբերելու համար ղատ-ից և այլ, էլի, յոլովութենէ, խոյս տալ բառերը, որոնց լ-ն այսօրվա լ-ն է։ Ինքն էլ պարզաբանում է, որ էղ'ի, էղ'ի, ղամա բառերի ղ-ն, որ կոչում է ղյուն, ոչ ղատ է, ոչ էլ լյուն. ղատ-ով արտասանելը «աւէր է և շաղփաղփ», իսկ լյուն-ով արտասանելը՝ «թանձր է և անյարմար»։ Ծիշտ է, այբուբենում ղ-ն թե՛ Գրիշը, թե՛ Երզնկացին դրնում են ձ տառից հետո, իբրև 18-րդ տառ և 90 թվի արժեք ունեցող, բայց որովհետև որոշ բառերում այդ ղ-ն պահպանել էր իր հին հնչումը, հատկապես փոխառյալ բառերում, ստացվել էր այդ տառի երկու հնչում՝ ղյուն և ղատ։ Այդ ղյուն-ը ղատ-ից տարբերելու համար վաղ միջնադարում ղյուն-ի վրա փշիկ նշանը դրեցին, գրում էին՝ աղմուկ, բայց՝ այդ, ղիւղ, իւղ, բայց՝ փայղ, բաբեղացուց և այլն։ Հենց այն հանգամանքը, որ դասական հայերենում և մինչև

Թ դարը այդ փշիկը շի եղել, հնարվել է միայն միջնադարում և տևել է մինչև ԺԵ—ԺԶ դարերը, լավագույն վկայությունն է այն բանի, որ ղյուն—ը մի միջանկյալ շրջանում է եղել։ Ուշ միջնադարում այլևս այդ նշանը չէին օգտագործում, որովհետև լ-ի ու ղատ-ի սահմանները որոշակի էին և դրանց միջև այլևս ղյուն չկար։

Այս տարբերությունը, սակայն, կարող էին գիտակցել լեզվին հմուտ մարդիկ, որոնք ոչ միայն հայերեն լավ գիտեին, այլև օտար լեզուներ, հատկապես հունարեն, լատիներեն։ Ավելի պակաս հըմ-տություն ու լեզվական գիտելիքների տեր գրիչները խառնում էին այս ղիւնի և լիւնի գրությունը։ Դեռ միջնադարից շատ առաջ, VI—VII դարերում, իսկ վաղ միջնադարում հատկապես, որոշ բառերում միևնույն գիրքում հանդիպում են թե՛ ղ, թե՛ ղ տառերը՝ այլ—այդ, լուսափայլ—փայլակն, Դանիէղ—Դանիէլ, բաբեղացւոց—բաբելացւոց, փայղածուն—փայլածուն, դոյղ—դոյլ, մոայլ—մոայդ, թուղացեալ—թուլացեալ, Սամուէղ—Սամուէլ, դատինացի—լատինացի, գաղիղացիք—գալիլացիք և այլն։ Միջնադարի գրչությունից բերենք օրինակներ։ «Ու թղփատութիւն եւ ոչ անթղփատութիւն» (N 1001, Ժ դար, 53)։ «Մառախապատ լերինն ցուցէր փայլատակմամբ» (62)։ «Դու ես որդի իմ սիրելի եւ լուսափայլ» (63)։ «Հովիտք մաքրափայլեալ երևեն» (66)։ Իսկ N 1007 ձեռագրում (Ժ դար) «գալիլեացիքն խաւսէին» (32), այլ, փայլատակեալ (61)։ N 985 ձեռագրում սրանց գրությունը զուգահեռ է։ Օրինակ՝ «Ես Դանիէղ տեսանեի» (32)։ «Արարէք ձեզ ձուղածոյ» (75ա)։ «Թղփատեաց սանթղփատութիւն, արիւն թղփատութեան» (86ա), «Դուստր բաբելացւոց» (91ա), «Դանիէլի մարգարեի» (109բ)։ «Ու թլպատութիւն ինձ է եւ ոչ անթլփատութիւն» (159ա), «օրհնեցէք ամպք եւ փայլատակունք գտր» (203բ)։ «Փայլեաւ առնէր զնշոյլս» (N 2684, 973 թ. 2)։ Լուսափայլս, փայլեալ (13)։ «Սեաւ գինքն արար ծուղանալով յայգւոյն պահպանութիւնն» (43)։ «Ալղալեցար, ըստ նմին եւ այլայլի» (44)։ «Զիւնափայլ գեղեցկութիւնս փայլատակէ» (102 ե), N 2679 ձեռագրում (Շիրակացի) կան թե՛ փայլածուն (6), թե՛ փայլածուն (7)։ Ապրիլ—ը միշտ գրված է ապրեղ ձևով։ «Ի Զ ապրեղի առնեն» (26)։ Օտարազգի բառերը (անունները) գրված են ղ-ով՝ Ղիզոտիանոս, կեղտ, ղիբացիք, կաղաբրացիք, ղիսիտանացիք (31բ), բաբելղովնի, պամփիւղացիք, ղիբիացիք, ղիկիացիք, տրիպոլիտք, փիղիստիմացիք, հեղենացիք, Դիոկղեոտիանոս, Վաղենտինոս, Վաղես, Դանիէղէ, փիղիսոփայէ, իսմայէղացի, Գաբրիէղ և այլն¹⁹։ Պետք է նկատել, որ ոչ բոլոր գրիչներն են օգտագործում ղ-ի գլխի փշիկը (^ կամ ^)։ N 822 (1266 թ.) ձեռագրում,

Օրինակ, օգտագործված է. «Քանդի ոչ թուղացուցանէ» (9բ): «Մա-
ռայելով ասորացն դաբանու» (153), Բեղդէնմ: Փշիկն օգտագործ-
ված է նաև № № 2865, 1746, 1749 ձեռագրերում, իսկ № 4035 ձե-
ռագրի գրիչը գրում է ղ-ով՝ և ուսնց փշիկի: Օրինակ՝ «Եթէ ատնոյ
Դանիէղ զայս եղեկիէղ մարգարէ» (276), «Հիջեալ դամբար» (304):
«Այս նշոյղ լուսո ոչ թուղացուցանէ» (336): «Ոչ նշուղից ազաճո-
թին» (315): «Թմբրեցոյց ծուղութիւնն» (101): Իսկ № 468 ձեռագր-
քում լ-ն ու ղ-ն գուգահեռ են օգտագործված: Օրինակ՝ «Աղ դին:
կամի» (14), «այլ ոչ ինչ է զծուար» (15), «Պեղուոյն դառնութիւն»
(26): «Այլ բազում ինչ յառաջիկայիցն մոլորեցար» (45): «Առանց
այլայլելոյ յգոյնանան» (53): «Այլ եւ այլ իմն դիտեմ» (63): «Այլ
են սմանք» (86):

Եղնիկի հիշյալ ձեռագրում հիւլէ-ն գրված է հիւլէ. լոյսոգ-ը
դաւոսոգ. Խաւայէլ-ը՝ Խաւեղ (նաև Խաւէղ): «Պարզ բնութիւն էր
հիւղն» (20): «Երբեմն փոկ լինէր և դաւոսոգաց ընդ ոտս անկեալ
հեղձուցանէր» (50): Խորենացու «Պատմության» արտագրող գրիչը
օգտագործում է փշիկը (ԺԳ դար): Օրինակ՝ «Ի բաջացն եղ՝ ղ՝ ենաց-
ւոց»: Պաղ՝ ղ՝ ոս, թուղ՝ ղ՝ ա (23): «Յորժամ Յուղ՝ իանոս ի Տիգ-
բուն չոգաւ» (74բ): Նկատվում է, որ Խորենացին գրել է պահաւ,
իսկ ԺԳ դարի գրիչը՝ պահաւ (էջ 75): Ընդհանրապես գրիչը հետև
վողականորեն չի պահպանել «Պատմության» դասական ուղղա-
գրությունը՝ երբեմն գրում է ղ-ով՝ այդպիսով արարելով յաճախ,
չտայ թոյղ, Բաբեղովն, այղ, հեղեհաց, սայղաւք և այլն, երբեմն
էլ՝ լ-ով՝ Երակլի, Հերակլէ, մետրապոլիտ և այլն: Միևնուրէն բառը
երկու ձևով է գրված՝ այղ և այլ, Յուլիանոս և Յուդիանոս: Հուշար-
ձաններում լ տառի փոխարեն ղ տառին ենք հանդիպում նաև այն-
պիսի բառերում, որոնք դասական հայերենում միայն լ-ով են
գրվել: Օրինակ՝ «Որ եր որդիացեալ եւ սիրեղի ճորտ Սարգիս, վեստ
և դուկ Արևելից» (Խժկոնք, 1033 թ. Քար, 14):

Գրագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԺԳ—ԺԺ
դարերում բանավոր խոսքում այս լ-ն ու ղ-ն իրենց գործածության
որոշակի սահմանն ու դիրքն արդեն ունեին, և այն ձեռագրերում.
որոնք միջնադարի հեղինակներին են ու ժողովրդական լեզվով են
գրված, լ—ղ-ի գրության այնպիսի շփոթ չի նկատվում, ինչպիսին
նկատվում է ավետարանական գրականության ու դասական պատ-
միչների գործերի արտագրություններում: Օրինակ՝ № 415 ձեռա-
գրում (1466 թ.), որ բժշկաբան է, բուն հայերեն բառերում այլևս
վերը նշած գուգահեռ ձևերի չենք հանդիպում, գրիչը գրում է՝ լե-
ղութիւն, այլ, նույնիսկ՝ գալիանոս, ջիլ, նշոյլ, փայլ և այլն:

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև այն փաստը, որ 1468 թ. № 266 ձեռագրի բառարանում բոլոր ղյուն-ով բառերի դիմաց հոմանիշները գրված են լյուն-ով՝ ղեղի—լեղի, ղուղան—լուգարան, փաղ-փաղել—փայլել, կլայեկ և այլն: Գրիգորիսի բժշկարանում հունարեն լ-ն տառադարձված է լ տառով (փոխանակ ղ-ի) և *φλῆγος* բառը հայատառ գրված է ֆելղամանի, փղղամանի, ֆիլամունի ձևերով, բոլոր ձևերում էլ լ տառադարձությամբ: Այդ գրքում՝ փիղ և փիլ—ֆիլ, փղացալ—փիլցալ, ֆիլցալ գույգ ձևերին ենք հանդիպում:

Ինչ ընդհանուր բան կարելի է ասել միջնադարում լ և ղ տառերի գործածության մասին: Դասական հայերենի ետնալեզվային լ-ն (λ, λν) փոխվել է ղառ-ի, բայց դեռ որոշ, հատկապես օտար, բառերում պահպանում է իր հին հնչումը՝ ղյուն: Վաղ միջնադարի գրիչները ղառ-ը ղյուն-ից տարբերելու համար երկրորդի վրա փշիկ նշան են դրել, գործածության մեջ են եղել լ, ղ և ղ՝ տառերը (լոյս, թոյզ՝ ուղիղ): Մինչև ԺԴ—ԺԵ դարերը գրիչները շարունակում են օտար բառերի λ-ն և այլ, ոչ երկբարբառներին հաջորդող լ-ն արտահայտել ղ տառով, թեև դրան զուգահեռ գործածվում է նաև լ-ն՝ թոյզ—թոյլ, Գաղիղիա—Գալիլիա և այլն: Բանավոր խոսքում սկսած ԺԶ դարից այլևս ղյուն ենթահնչույթ չկա, ուստի այն գործերում, որոնք գրված են ըստ ժամանակի արտասանության, որոնց հեղինակները հետևել են բանավոր խոսքին, ղյուն-ի փոխարեն օգտագործված է լյուն-ը: Դյուն-ը ավելի շատ հանդիպում է ավետարանական գրականության և դասական պատմիչների գործերի արտագրությանն: Լ, ղ, ղ տառերի առկայության պայմաններում գրիչները շփոթում են նրանց գործածությունը, հաճախ միեւնույն բառը միևնույն գործում հանդիպում է թե՛ լ-ով, թե՛ ղ-ով: Նրբեմն ղ-ով են հանդիպում նաև այնպիսի բառեր, որոնք դասական հայերենում լ-ով են գրվել (սայղ, հեղուզակ): Ուշ միջնադարում այլևս փշիկով ղ՝ (դյուն) չի հանդիպում, նույնիսկ հունական λ-ն տառադարձվում է լ տառով: Իբրև բացառություն ղ-ով շարունակում են գրվել մի քանի հին օտար անուններ՝ Հեղղեն, Բաբելովն, որոնք, սակայն, ունեն իրենց լ-ով զուգահեռ գրությունները:

Ֆ.—Այս տառի մասին Աճառյանը գրում է, թե փոխ է առնված հունարենից, ԺԲ դարում²⁰, բայց հենց Բուսայիդի դեղագրում (1037 թ.), որ բերել է ինքը, կա Մուֆարզին քառու: «Գնաց ի Մուֆարզին ի նՁՁ (1037) թուականին»²¹, Աշոտ Ողորմածի պարգևա-

գրում (Ժ դար) գրված է. «Ըստ մեծի մերոց տէրութեան Արևելից և հարաֆայնոյ» (Հիշ. 139): Բայց այս վերջինս հավաստի չէ, ըստ երևույթին հետագա արտագրողներն են ֆ-ով գրել: Մեր կարդացած գրավոր հուշարձաններում առաջին անգամ ֆ-ն հանդիպում է Տաթևի վանքի Զեմ, 1295 թ. մի արձանագրությունում. «Զտէր Ստեփաննոս մետրապոլիտ Սիւնեաց, որ է պռաւտաֆրանսես» (Դիվ, II, 25): Մաղաքիա Արեղայի «Վասն ազգին նետողաց» պատմության մեջ (ԺԳ դար) հանդիպում են Ֆնտուխտար, Ֆրանք անունները: Օրինակ՝ «Այս եղեւ օգնութեամբ Ֆրանք հեծելոյն» (36): «Միոյն անուն Ֆնտուխտար և միոյն Սղուր, Ֆնտուխտարն էր մօրուօք» (38): 1466—68 թթ. № 415 ձեռագիր բժշկարանում հանդիպում են՝ զաֆրան, աֆիոն, Թաֆէի: 1468 թ. № 266 ձեռագրում (նույնպես բժշկարան)՝ «Գէճութեան պատճառն ի սաֆրայէն է» (160բ): «Նշան է ֆալճի: Մութաֆայութիւն ասեն» (164): Գրիգորիսի բժշկարանում (ԺԵ դար)՝ փիղ, փիղցաւ բառերը գրված են նաև ֆիլ, ֆիլցաւ ձևերով: Հունարեն φ -ն տառադարձված է ֆ տառով (φ > ֆիլամունի), գրված են փիլէնը և ֆէլիքն զուգահեռ ձևերը: Ռիվոլայի բառգրքում ֆ-ով մի քանի օտար բառեր են և ձայնարկություններ՝ ֆոանկ, ֆոանցա, ֆանաչի, ֆասաղ, ֆուրգոն, ֆլան, ֆլֆլ (բիբար), ֆչալ, ֆոալ, ֆոֆոալ, ֆսոց, ֆսսալ և այլն: Նկատենք, որ Ռիվոլայի բառարանում չկան օ և ւ տառերով սկսվող բառեր:

Կան նաև ո, ւ տառերի փոխադարձ կիրառություններ, մի սխալ, որ երբեմն բխում է առանձին գրիչների մասնակի արտասանությունից և բնորոշ չէ ընդհանուրի համար: Հանդիպում են՝ մագիստոս, ձագառ, եռորդ, դառձաւ, օհհեալ, շոթունք, առքաութիւն, առք, լոտես, շոջել, խառտոց, շոջոնք, պաճաւ, աւոդը և այլն: Օրինակ՝ «Ինչ պաճաւ եղեն» (№ 468, 61): «Դեռ ոչ զեռսուն տարին մարդն չէ լցել, նա երէց շանեն» (Դատաստ., 39): «Ծն Գրիգոր Մագիստոս որդի Հասանա շինէցի գէկէղէցիս» (1051 թ., Քար, 13): Պաճաւս (№ 4035, 170): «Գոյականի սեւք (իմա՝ սեռք) են»: Աղագս երկրառառացն (№ 108, 162): «Հանէ զանդամսն աւոդըութենէ» (№ 415, 69): «Ի յաւոդըութեան» (85), «աւոդը մարդիկ ուտեն» (85), «մարդ աւոդը կենայ» (91բ), «առ ձագառ մի» (92): Գրում է՝ «եռորդ և եւրորդ»: «Դառձաւ կոսփար»: «Դառձուց զերեսս իւր» (№ 266, 151), «Կարեն Սախառունի» № 994, 424) և այլն:

Բարբառային արտասանության հետևանքով հանդիպում է հ—խ տառերի փոխադարձ կիրառություն: Օրինակ՝ 1409 թ. № 994

ձեռագրում հանդիպում են՝ նախատակութիւն—նաճատակեցաւ, խաթուն—հաթուն, Սախառունի—Սաճառունի, Գրիգորիսի բժշկա-
րանում՝ հալ և խալ զուգահեռ գրությունները: Մասնակի բնույթ
ունեն ձեռագրերում հանդիպող սանդուղիք, պառչարեալ, ընդէմ,
թմբրութիւնսն, նետրապաւղիտ, բղխեցուցանէլ սխալագրություն-
ները:

Ժողովրդական կենդանի խոսքում կարող է բառերի վրա թե՛
հնչուն ավելանալ, թե՛ պակասել: Այս պատճառով էլ մեզ
հանդիպում են մի կողմից՝ Ովանէս, Օվանէս (Հովհաննէս),
անդուզն (յանդուզն) գրությունները, մյուս կողմից՝ քմբրել-
զլտոբել, ծանդր, մանդր գրությունները: Սխալները հաճախ
նաև նմանակության (անալոգիա) հետեանք կարող են լինել:
Իմանալով, որ ձայնավորից ու Բ-ից հետո գ-ն և է հնչում (միրգ>
միրք, մարգարէ>մարբարէ), գրիչը սխալմամբ գրում է նաև՝
գրգոյս, ներգել, արգունիք, տագութիւն, արգայական, որոնք ինքր
Բ-ով է կարդում: Այդ պատճառով էլ գրում է թուղդ՝ դ-ն ք կար-
դալով:

Հիմնական պատճառն, իհարկե, մնում է այն, որ գրիչը ընդ-
հանրապես ձայնեղ հնչյունները խուլ է արտասանում:

Վ—Ի.—Նախորդ գլխում տեսանք, որ Վ հնչույթը Ե—Թ դա-
րերում երկու տառով էր արտահայտվում՝ վ և լ: Վ-ով գրվում էր
բառասկզբում (վարդ, վերջ, վիճակ), բառամիջում, եթե բաղադրու-
թյան մի բաղադրիչը սկսվում էր վ տառով (նաւավար, անվերջ,
հոգեվիճակ) և ու տառից հետո բոլոր դիրքերում, որպեսզի ու չկար-
դացվի (որովայն, ծով): Մնացած դեպքերում Վ հնչույթը գրվում
էր լ տառով՝ թիւ, անիւ, աւազ, թել, բնաւ, նաւ:

Ուա, ուե, ուի, ուո տառակապակցություններն իբրև երկբար-
բառ կարդացվում էին ua, ue, ui, uoi: Սակայն, ինչպես ասված է
վերևում, այս կապակցությունների հնչումը վաղուց էր սկսել
խախտվել: Բառամիջի ձայնավորանախորդ ու տառը սկսել էր Վ
հնչել, և թուփն, անուամբ, տուաբ, տուեալ, թուոյ բառերը, որ ա-
ռաջ կարդացվում էին thuih, anuamb, tuakh, tueal, thuo, միջ-
նադարում արդեն կարդացվում էին thvin, anvamb, tvakh, tveal,
thvo: Այսպիսով ու տառը երկու հնչույթի որակ է ստանում՝ ձայ-
նավոր (տուն, ջուր, ուղի, ունայն) և բաղաձայն (անուան, թուի,
տուեալ), ուստի Վ հնչույթն ունենում է երեք տառ՝ վ, լ, ու:

Այդ պատճառով էլ գրիչները, սկսած ԺԲ դարից, ու-ի վրա

դրվող հատուկ նշանով (= կամ —) գոուշացնում են ընթերցողին, որ ձայնավորանախորդ ու տառը վ կարգան: Ըստ Ավետիքյանի այդ թավանշանը դրվել է 1294 թվականից, բայց մեր ձեռքի տակ ավելի վաղ օրինակներ կան: Այդ թավանշանը օգտագործել է Մ 1890 ձեռագրի գրիչը 1174 թվականին: Օրինակ՝ «լուա դայս գինուորն» (12): Այս նույն գրչագրության (Նղիշե) 1569 թվականի արտագրողն օգտագործում է = նշանը՝ առտասուփեցին, ի տուփ, լուան: նույնը և Մ 485 ձեռագրում՝ ընդ հառուածի: Մ 8443 ձեռագրում (1687 թ.)՝ լուա, Կղեմես Գալանոսի քերականության մեջ՝ նուազ և այլն: Ձայնավորանախորդ ու, վ և տառերի հնչույթային նույնությունից էլ բխում է այն երևույթը, որ վահնչույն ու-ի փոխարեն մատենագրության մեջ հանդիպում է տառը, իսկ հիշատակարաններում ու վիմագրության մեջ՝ մեծ մասամբ վ տառը: Բանավոր խոսքում վ հնչող ու-ն արտահայտվում է նաև գրավորում: Միևնույն թուի բառը հանդիպում է նաև րի (թրի) և րվի գրություններով: Բերենը օրինակներ բոս դարերի ժ դարից.— «Ի նհ (991) թակ (անութեանս) Սիմեոն հայր և Տիրանուն երեց շինեցաք զեկեղեցիս» (Հաղբ, 141): «Թվ նհ—991» (Տաթև, Դիվ, II, 32): Ապարակում Սահակ իրիցորդու գերեզմանաքարին՝ «թվական 39—941» (Քար, 12): «Կամ եղև իմ Մխաչեի... Ես Դավիթ» (Թաթև, 953 թ., Ս. Ավ.): «Երեստ Աշոտ յկվանէ ջաղացան» (Կոշ, 981 թ., Ս. Ավ.): ԺԱ դարից.— «ՇԺՀ (1067) րվ(ին) ևս հայր և եղբարս գրեցաք» (Հաղբ, 157): «Իրեանց հալալ ընչիդ ընծայի են տվեալ Ո (600) դահեկան» (ն. տ.): «Թւն ԴՃՀԱ—1022» (Օրճ, 475): «Ի թվ հայոց ի ՇԺԱ (1062)... հիմնարկեալ եկեղեցիս» (Դիվ, II, 45): «նՀԴ (1025) էր թվականս կատալեցաւ եկեղեցիս» (Հաղբ, 255): «Ի նԿն (1016) թվիս ես Մուկն որդի Հոնովարա նորոգեցի» (Հաղբ, 145): «Ա(յ)ս է հա(ն)դիստ Սոճահին, ի թվ(ին) ՇՀԸ—1029» (Դիվ, III, 112) և այլն:

ԺԲ դարից.— «Ի ՈԼԳ (1184) թվիս շինեցաւ բուրջսն» (Կարս. Օրճ, 470): «Գոյնրդգոյն օրինվածօք դարդարեցի ըզպահարանս» (1147 թ., Քար, 19): «Թվին ՌՃԾԴ նորոգեցաւ» (Դիվ, II, 18): «Թվ. ՈհԸ—1199» (Դիվ, III, 35): «Տվի վասն ծովացեալ մեղաց: Տվի գիմ իգին: Ես էտվի սբ...» (ԺԲ դար, Դիվ, III, 153): «Ջառաքումն Սարգսի՝ վերակացվի», ՇՀԸ—1149 (Դիվ, III, 49): «Ի թվ. ՈԼԳ»—1184 (ձեռագիր № 975, էջ 27), «Թվովքն հանդերձ» (ն. տ.): Գարեգին Հովսեփյանը իր «Յիշատակարանք ձեռագրաց» մեծարժեք զբրքում վերականգնում է նախտ և նման բառերի ո-ն՝ ղնելով այն

փակագծերում: Օրինակ՝ «Փառք և զոհութիւն նմա ի ն(ո)ւաստ վաստակաւորէ ներսիսէ» (1195 թ. Յիշ, 587): «Օրհնեաց զմիւս ք(ո)ւերորդին իւր զտէր Բարսեղ» (ԺԲ դար, Յիշ, 420): «Որոց ևս եպիսկոպոս զք(ո)ւերորդին իւր» (ն. ա.): «Ետ մահ(ո)ւանն Վասիլի և եղբօր Թագաւորեաց Մօնոմախ» (ԺԲ դար, Յիշ, 418): Կարծում ենք, որ գրիչները հենց առանց ու-ի են գրել, ու-ն վ՛ հնչելով՝ դրն էլ են և տառով, թեև Հովսեփյանը նախօրոք հայտնում է, որ կրոր փակագծերի մէջ առնված տառերը ջնջված են ևղել, ինքը վերականգնել է, մի՞թէ հենց միշտ այդ ու-ն է ջնջված եղել, իսկ գուցէ հենց գրիչն է ջնջել:

ԺԳ դարից. — «Տվի, որ ուրախանան, ի թվի: ԶԻԲ» — 1273 (Օրճ, 453): «Ի թվին ԶԻԲ (1273 թ.) միաբանեցաւ և տվի այգի մի» Օրճ, 466). «Իմ մուլըն դամէն տվի ի դուռն սուրբ Գեղարդին վախմ» (Օրճ, 472), — վերցված է Այրիվանքի կառուցման մասին Պոռշի արձանագրությունից (ԺԳ դար): «Ի թվ. ԶԽԴ» — 1295 (Դիվ, II, 25): «Ես նվաստ քահանա Հովհաննէս գնեցի և նիւրեցի իւրեանց» (ԺԳ դար, Դիվ, II, 33): «Թվ. ԶԼԸ (1289) կանգնեցաք զխաչս հար և մար» (Դիվ, II, 61): «Ի թիս ՈԿԹ» — 1220 (Դիվ, I, 16):

«Դիվանի» III պրակում՝ «Ես նանես տվի Ածածնիս ի Թ. ԶԽԶ» — 1297 (35): «Տվաք հերևիքս. տվի յիշատակ հոգո իմս» (1259, 51): «Հողն տվաք ի սբ ուխտս միայրանքս» (1297, 52): «Գիր տվի վարդապետին» (1296, 69): «Փառքն է փառավորին», — զրված է 1244 թ. Սմբատ Գունդստաբլի ձեռքով (Յիշ, 954):

Ի(ւ) տառի բաղաձայնական հնչման պատճառով երբեմն գրիչները ու տառի բաղադրիչ ա-ն նույնպես բաղաձայն V են համարում և վ՛ տառով փոխարինում: Օրինակ՝ «Հասի ի վերջին դիծս զրոցս ի Թովիս ՈՀԲ» — 1223 (Յիշ, 828): Սրանից պիտի եզրակացնել, որ որոշ գրիչներ ա-ն ամենուրեք բաղաձայնական V կարծելով, այն փոխարինել են վ-ով, թուիմ բառը քովիմ են կարդացել, որ բխում է ուղղագրությունը շիմանալուց, թեև կարող է լինել և բարբառի հետևանք:

ԺԴ դարից. — «Թվի ԶԾ (1301) տվի զիմ այգին» (Մարթ. 95): «Ընծայ տվաք մեր հոգոյս համար» (1320 թ., Մարթ. 89): «Այս է հանկիստ Սարգսի, թվ ՊԴ» — 1355 (Քար, 18): «Թվ ԶՂԱ» — 1342 (Օրճ, 445), «թվ. ԶԿԵ» — 1316 (Դիվ, II, 22), «թվ. ՊԷ» — 1358 (Դիվ, II, 23): «Ի թվ. ԶԿԵ» — 1316 (Դիվ, II, 26): «Զմեր բաժին հասն տվաք ի պէտս պանդոկին: Զունի որ հրաման զմեր տվածս ի սբ ուխտէս հանել: Թվ ԶԶԵ» — 1326 (Դիվ, II, 101): «Դիվանի» I

պրակից՝ «ԹՎ ԶԿԹ»—1320 (27), «ԹՎ ԶԿԷ»—1318 (287), «ԷՃ (700) սպիտակ տվի: Ի Հովթըթվանց գնել էի» (1348, 29): «Դիվանի» III պրակից՝ «ԹՎիս ԶՂԷ տվաք այգին»—1348, 109): «Մին կով տվի Ի սբ Ածածնիս, ԹՎ ԶԶԱ»—1322, 36):

Այս նույն տվի գրությունը կա 56, 76, 77, 145 և այլ էջերում: Ինչպես տեսնում ենք, վիճադրության մեջ Վ հնչյույթը մեծ մասամբ արտահայտվում է վ տառով, երբեմն միայն՝ և և ու տառերով: Այդ նշանակում է, որ փոքրագրողներն առաջնորդվել են հնչյունային ուղղագրությամբ, ինչպես արտասանել են, այնպես էլ գրել են:

Փոքր-ինչ այլ է վիճակը մատենագրության մեջ: Այստեղ այս կարգի շեղումներ ուշ են հանդիպում, այն էլ ավելի շատ հիշատակարաններում: Բուն մատյաններում կա՛մ պահպանված է ձայնավորանախորդ թավացյալ ու-ն (տուեալ), կամ նրա փոխարեն հանդիպում է և տառը (տուեալ, Թույ, Թույ):

Գրիչները մատյաններն արտագրելիս ամեն կերպ աշխատել են պահպանել նրա ուղղագրությունը, շեղվել գրությունից, արտագրել են տառ առ տառ՝ հաղթահարելով բանավոր խոսքի ազդեցությունը, մինչդեռ հիշատակարաններում, վիճական արձանագրություններում իրենց ազատ են զգացել, չի եղել մատյանի կաշկանդումը և գրիչները գրել են հաճախ այնպես, ինչպես արտասանել են: Մի դեպքում առաջնորդվել են ավանդական ուղղագրությամբ, մյուս դեպքում՝ հնչյունային: Այդ է պատճառը, որ վահրնչուն ու-ի փոխարեն վ կամ և տառերին վիճադրության մեջ հանդիպում ենք դեռ 2 դարից, իսկ մատենագրության մեջ՝ մոտ ԺԲ դարից: Մեր ձեռքի տակ եղած Ժ դարի №№ 1001, 985, 1099, 5547, 2684, 1958, 2679, ԺԱ դարի №№ 10434, 988 ձեռագրերում այդպիսի շեղումների չենք հանդիպել, նրանցում պահպանված է թավացյալ ու-ն, ամենուրեք, հանդիպում են՝ բուի, տուաֆ, խառնուածոց, ստուեհացն, հրնուելեացն, պատուանդան, նախապատուութիւն, ստացուածն, յառաջատուութեամբ և նման գրությունները:

Մատենագրության մեջ թավացյալ ու-ի փոխարեն ւ-ն հանդիպում է մոտ ԺԲ դարից: № 1007 ձեռագրում, որ համարվում է ԺԱ—ԺԲ դարերի ճառրնտիր, հանդիպում ենք՝ բանսարկին, հովւապետին, զարթաթոխ, Ծմմանելն, լեղանք, ստերն, զհերձածն, լաւ, մահւամբ, զինուորին և նույնիսկ՝ աննաս (փոխ. անվնաս) գրություններին: Օրինակ՝ «Արձան հաւատոյ անանեցին» (5բ): «Եւ լաւ Դաւիթ» (6բ): «Եւ յնաւ հայածեց զՅակոբ» (8), «անրստեշ լուսոյն» (16բ), «Թւի թէ արարին բուռարս» (20): «Անցին ամբ հինգ շինւածոյ տաճարին» (26): «Հովեւսցէ զիս, հովէր գնոսս»

(63): «Ով պատեալ եղբարք (236), ըստ մերում լեզւի» (382) և այլն: Այս ձեռագրում 75 բառում թաւացյալ ու-ի փոխարենն ւ տառն է գրւած, ըստ որում թե՛ բառի ուղիղ (ստւկեր, յունւար, զինւոր, զարթ, նազ), թե՛ թեք (լաւ, լեզւի, հովին, պատի, տաք) և թե՛ բայերի կրաւորական ձեւերում (զհերձածս, ընթերցւածոցն և այլն):

Եզնիկի «Եղծ»-ի հիշյալ՝ 1280 թվականի ձեռագրում (№ 1097) թաւացյալ ու տառը պահպանւած է 10 բառում (ազնուագոյն, աստուածապաշտութիւն, Զրուանայ, պատուելո և այլն), իսկ նրա փոխարենն ւ տառն է օգտագործւած 110 բառում (անւանի, պատւիրանաց, մահկանացիս, մահան, ստեղծածոյ, թւի, ստացւածս, տեալ և այլն):

Խորենացու «Պատմութեան» հիշյալ գրչագրում (№ 2865, ԺԳ—ԺԴ դար) թաւացյալ ու տառը պահպանւած է 47 բառում (նուազ, թուոց, անուամբ, արուեստ, պատուած և այլն), նրա փոխարենն ւ տառն է գրւած 74 բառում (մահան, կուոյն, պատուէր, զկալածսն, շինւածս, դժարաւարժ, հաշին, տարույն, Աղանից, ցրեսցին, դիպւած և այլն): Այս № 2865 ձեռագիրը երկու իրարից հետո ժամանակներում է արտագրւած, նրա մի մասը, ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը, արտագրւած է ԺԳ—ԺԴ դարերում, իսկ մյուս մասը՝ 1567 թվականին: Եվ հետաքրքիր է, որ ԺԳ դարի գրիչը ամեն կերպ աշխատել է թաւացյալ ու-ն պահպանել, հարազատ մնալ բնագրի դասական ուղղագրութեանը, ուստի գրում է՝ նուաճեալ, գուարճանայցէ, թուէր, շատրուանաւք, պատուել, արծուոյ, աւտուածոցն, տուեալ, աղուանից, դիպուածս, թշուառ, սպառուած, անուանեալ և այլն: Այս մասում թաւացյալ ու-ի փոխարենն ւ տառը քիչ է հանդիպում (արուութիւն, թրաց, պատուէր և էլի մի երկուսը): Իսկ 1565 թ. արտագրող գրիչն ավելի շատ ւ-ն է օգտագործել, քան թաւացյալ ու-ն (տրեալ, պատուով, զանւանեալսն, թշառութեանց, աղանից, խնդրածս, պատուոյ, լեզւի, զինւորօք և այլն): Միևնույն քառոր ԺԳ դարի գրիչը գրել է թաւացյալ ու-ով, իսկ ԺԶ դարինը՝ ւ-ով: Ստացվել են միևնույն արտասանութեան համար գրութեան զույգ ձեւեր՝ պատուել—պատուով, աղուանից—աղանից, դիպուածս—դիպածոյ, անուանեալ—զանւանեալս, համանուանն, անուանից—անւանեաց, տուեալ—տրել, պատուէր—պատուերից, արուեստաւոր—արեստից, թուոյ—թուով և այլն: ԺԳ դարի գրիչը գրում է. «ստեալ բազմութիւն զանձաց»: (28բ), ԺԶ դարի գրիչը՝ «խրատ տրեալ» (46բ), առաջինը՝ «անուանեալ կոչի Շարուրայ» (31բ), երկրորդը՝ «զանւանեալն մեծաւ պատուով» (107) և այլն: Սա վկա-

յում է, թե ինչպես մատենագրության մեջ թավացյալ ու-ի փոխարեն տարածվում էր ւ տառը: ՄՆ 1890 (1174 թ., Եղիշե), 823 (Ճառերտիր, 1266 թ.), 4035 (Նարեկացի, ԺԲ դար), 1097 (Եզնիկ, 1280 թ.), 468 (Նյուսացի, ԺԲ—ԺԳ դար), 2865 (Խորենացի, Լաստիվերտցի, ԺԳ և ԺԶ դար), 2101 (Ժողովածու, 1223 թ.), 49 (Ժողովածու, 1283), 108 (Ժող. 1322 թ.), 1747 (Ժող. 1243 թ.), 1748 (Ժող. ԺԴ դար), 1751 (Ժող. ԺԴ դար), 1920 (Եղիշե, 1569 թ.) և ուրիշներում կամ պահպանված է թավացյալ ու տառը (խառնաձուց, անուան, մահականացուաց, նուաղեցուց, եղջերուաքաղն, թուոյ, զուարճութիւն և այլն), կամ էլ այդ տառի փոխարեն գործածված է ւ տառը (թուվ, նազ, մահան, լեզին, մահականացին և այլն): Եվ ոչ մի բառ չկա, ուր թավացյալ ու-ի փոխարեն վ տառը գրված լինի: Ն 994 ձեռագրում (1409 թ.) կամ պահպանված է վահնչյուն ու-ն, կամ նրա փոխարեն գրված է ւ տառը (հովւացն, հովուական, թշուառ, տեալ):

Միջնադարի այն գործերում, որոնք ունեն աշխարհիկ բովանդակություն, որոնց հեղինակներն աշխատել են ժողովրդին հասկանալի ու հարազատ լեզվով գրել, թավացյալ ու տառի փոխարեն հանդիպում է վ տառը, ինչպես այդ տեսանք վիմագրության մեջ: 1283 թ. Ն 4066 ձեռագրում, որ պարունակում է Վարդան Արեւելցու, Շիրակացու, Գոշի աշխատանքները, հաճախ է վահնչյուն ու-ի փոխարեն վ տառը հանդիպում: Օրինակ՝ «Պատվին ի մարդկանէ»: «Պատվիրէին զգուշանալ» (392): «Մինչ ի պատվողացն ձեռանէ սողոսկեալ անկանիմ յերկիր» (395): «Պայծառացեալք լուսով պատվիրանին» (396): «Իբրեւ զպատվական ակունս» (396բ): «Երբ փոխվին, ճշմարիտ լինի» (2): «Պատվիրանացն այ սբ: Այսպեւ մի մի թվո աճմամբ յկե» (3բ): Հետաքրքիր է, որ ձեռագիր արտագրողը 412 էջում գրել է պատմութեան, հետո տ-ի գլխին ու է ավելացրել, դարձրել պատմութեան նմանեցնելով բնագրին, որ նշանակում է, թե այդ ժամանակ (ԺԳ դար) այդ դիրքում ու-ն վ էր կարդացվում:

Իր Դատաստանագրքի առաջաբանում 1265 թ. Սմբատ Գունդրստաբլը գրում է, թե բազում աշխատություններ Դատաստանագրքի հին, դժվարաբառ ու անհասկանալի լեզուն փոխել, դարձրել է հեշտալուռ ու սովորական: Այդ նպատակով էլ նա հետևել է հնչյունային գրությանը, վահնչյուն ու-ի փոխարեն օգտագործել վ տառը: Օրինակ՝ «Զինչ որ Աստուած տայ, հարկատվին ի հինկէն մեկն է» (18): «Ամէն վայելածք երազի նման է»: «Եթէ ոսկէհանք գրտվին, նա թագավորին է» (19): «Թէ ի գողութիւն բռնվի, նա զկարգն

առնուն» (22): «Տեսող պահվէին այլ դատաւորք եկեղեցւոյն» (38):

Ինչպէս երևում է օրինակներէց, հաճախ վ-ով են գրում նաև կրավորական բայերի վ ածանցը, թեև ավանդական ուղղագրութեամբ բաղաձայնի և ձայնավորի միջև լսվող Վ հնչյունը գրվում էր ու կամ լ տառերով, ուրեմն պիտի գրեին՝ պահւէին, զրկւին դրւի, բաժնւէր, վճարւի, ուտւի կամ ու-ով (բաժնուէր), բայց գրում են նաև՝ պահվէին, զրկվին, դրվի, բաժնվէր, վճարվի, ուտվի և այլն, որը ավանդական ուղղագրութեան խախտում էր, որովհետև այդ դիրքում վ չէր գրվում: Դատաստանագրքում վահնչյուն ու տառը ինը բառում է պահպանված (ուղարկուեցաւ, մահուամբ, կոռւին, աստուած, ծեծուեցաւ), 20 բառում ու-ի փոխարեն լ է գրված (թող տողն, խնամէ խօսած, պատով, դժարաբառ, թականութեանս, զօղածքն և այլն), իսկ 65 բառում՝ վ, ըստ որում՝ թավացլալ ու-ի փոխարեն վ-ն հանդիպում է թե՛ բառի ուղիղ ձևում (թագվոր, հեծելվորք, վարձվոր), թե՛ թեք (տվել, մահվանէ, հարկատվին) և թե՛ կրավորական բայերում (վճարվի, ընդունվի, բրոււմի, խեղդվի, շինվի և այլն):

№ 415 ձեռագրում, որ 1466—68 թվականների բժշկարան է, թավացլալ (վահնչյուն) ու-ն պահպանված է 11 բառում (անուան, կալուի, լցուի), 32 բառում նրա փոխարեն գրված է լ տառը (թիւ, լացուքս, նաղէ, լնի, կցուի, կերւի և այլն), իսկ 75 բառում՝ վ տառը (արծրվիքն, զակընջվին, արվեստաւորի, թրջվի, ձվին և այլն): Երբեմն միեւնոյն բառը պատահում է թե՛ մեկ, թե՛ մյուս գրութեամբ՝ լացուին—լվանալն, լցուի—լըցի, ուտի—ուտվի, նվաղ—նաղ, արծրիքն—արծրվիքն և այլն: Երբեմն էլ գրիչը իրար կողքի դնում է թե՛ վ-ն և թե՛ լ-ն: Օրինակ՝ «Ջրավ շաղղէ» (գր): «Թրչէ աւշակն քացախավ» (50բ): «Քամէ և այնավ շաղղէ» (6բ), «գինավ եփած» (4) և այլն: Ըստ երևույթին գրիչը այս բառերի աւ-ը օ է կարդում ու հետո էլ վ-ն ավելացնում, գինավ-ը կարդում է գինով: Այսպիսի կրկնակ գրություն պատահում է նաև այլ գրւղագրերում: Օրինակ՝ «Իմ որդաւքն ու տընալն եկաք» (հաշ, 369, ԺԴ դար):

№ 415 ձեռագրի գրիչը ցավ բառն էլ է լ և վ տառերով գրում: Օրինակ՝ «թէ ցալն ի չէն է, ոչ կարէ վարեղ ջիլն ցալն: Թէ կարէ զցալն հանել» (57բ): Այստեղ հանդիպում է նաև իջվուածք ձևը. «Ի տաքութենէ լինի այս իջվուածքս» (61): «Պատճառքն իջվուածքն է» (62): Կարծում ենք, որ այստեղ դեր է խաղացել հին ու նոր գրութեան (լ-ով և վ-ով) շփոթումը, գրիչը խառնել է բառի հեն՝ ցաւ, իջուածք և նոր՝ ցավ, իջվածք գրությունները: Արդյո՞ք

այդ չէ պատճառը, որ ԺԴ դարի մի հիշատակարանում կարդում ենք՝ «Հինգ յունուվարի Թարվեզ մտան» (հաշ, 272): «Ի մեծ թուվականիս ՊՁԶ—1437» (հաշ, 478): Գուցե սա նաև բարբառային արտասանությունից է: Վահնչյուն ու-ի փոխարեն վ տառին ենք հանդիպում №№ 1746 (1280 թ.), 556 (ԺԴ դար), 57 (ԺԴ դար), 266 (1484 թ.) ձևագրերում (ստեղծվածոյ, պատվականութեան, գրվի, յունվար, փետրվար, տվել, խոցվածո, արտասվեսցուք, մատրովակեն, թվական, թշվառ, գործանկվածոյ, տվեալ, ճանաշվի, ի ճրագվէն, ծնկվին, ցրվածն, շինված, ի մահվանէ, հիվընդին, զաղվածքն, ինշվի, տված լինի, թվականն, կիշովի և այլն): № 1746 ձևագրի գրիչը միևնույն հնչույթ համարելով վ-ն ու ձայնավորանախորդ ու-ն՝ մեկ ու-ով է գրում, մեկ էլ վ-ով: Օրինակ՝ «Եթե ասիցի ստեղծվածոյ և կազմուածոյ» (176թ): «Ոչ ըստ պատվականութեան» (179): «Յերկուց խառնուածոց ունի պատուականութիւն» (181թ):

№ 485 ձևագրի (ԺԴ դար) գրիչը գրում է՝ կովին, թվեսցի, դովարին, թվով, հերձվածս: Մնացած վահնչյուն ու-երը, թվով շուրջ 50, փոխարինված են և տառով (պատարանաց, զրարճացայ, նրաստ և այլն): Ինչպես ասացինք, միջնադարի վիմական արձանագրություններում ու հիշատակարաններում թավացյալ ու-ն մեծ մասամբ վ տառով է փոխարինված: Գարեգին Հովսեփյանի «Յիշատակարանք ձևագրաց» գրքում բերված Ժ—ԺԳ դարերի ձևագիր հիշատակարաններում վահնչյուն ու-ն պահպանված է 19 բառում, նրա փոխարեն և տառն է օգտագործված 7 բառում, իսկ վ տառը՝ 107 բառում:

Լ. հաշիկյանի «ԺԾ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ»-ի I և II մասերում, ուր ներկայացված են 1400—1480 թվականների ձևագրեր, վահնչյուն ու տառը պահպանված է 261 բառում (արուեստ, քուերցն, թուի, փետրուար, անուամբ, բաղցրանուագ, կոշուիմ և այլն), 255 բառում նրա փոխարեն հանդիպում է և տառը (մահամբ, անամբ, ալուէր, յունուար և այլն), իսկ 270 բառում՝ վ տառը (ի թվին, լեզվէ, արվեստի, սարկավաք, սեվերեւ, սեվացեալ, տվաղն, Մակվայ, մեղավոր, նվիրեցաք, կարավան, յունվար, քվերն, աստվածատուր, ավետարան, փետրվար, ավրելոյ և այլն):

Նախորդ էջերում վիմական արձանագրություններից ըստ դարերի բերված քաղվածքներից արդեն երևում է, որ վահնչյուն ու-ի փոխարեն տարածված էր վ տառի գործածությունը: Եթե «Դիվան»-ի երեք մասերում ամփոփված Ժ—ԺԶ դարերի վիմական ար-

ձանագրությունների փաստերը գումարային տեսքի բերենք, կրստացվի հետևյալ պատկերը: Առաջին մասում վահնչյուն ու-ն պահպանված է 18 բառում, նրա փոխարեն և տառն է գրված 9 բառում, իսկ վ-ն՝ 37: Երկրորդ մասում այդ ու-ն պահպանված է 2 բառում, նրա փոխարեն և է հանդիպում 2, իսկ վ՝ 29 բառում: Երրորդ մասում թավացյալ (վահնչյուն) ու-ն պահպանված է 2 բառում, և-ով փոխարինված է 2, իսկ վ-ով՝ 247 բառում: Հաղբատի վիմական արձանագրություններում (նույն դարերի) այդ ու-ն պահպանված է 2 բառում, 2 բառում փոխարինված է և տառով, իսկ 50 բառում՝ վ-ով: Սանահինի արձանագրություններում այդ ու-ն պահպանված է 12 բառում, իսկ նրա փոխարեն վ տառն է գրված 55 բառում:

Վ տառի գործածությունն այս դարերում տարածվում է ոչ միայն վահնչյուն ու-ի փոխարեն կիրառվելով, այլև՝ բաղաձայնական և-ի: Ա, ի, ե տառերից հետո պարզ կազմություններում սովորաբար գրվում է և տառը՝ թեւ, թիւ, աւաղ, սեւա և այլն: Ահա այս դիրքում նույնպես հաճախ հանդիպում է վ տառը և-ի փոխարեն: Օրինակ՝ «Մեռաւ Տավուս խաթունն» (Մաղարիա, 1251, էջ 37): «Անխախտ և անղավի... ի թվիս Չեւ—1298» (Նորավանք, Դիվ, III, 216): «Փառքն է փառավորին» (Գունդստ., 1244 թ., 3իշ, 954): Թլկուրանցու բանաստեղծություններում հանդիպում է դիվական գրությունը:

Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռգրերի հիշատակարաններ» գրքի 1367 թ. № 582 հիշատակարանում գրված է. «Ի քֆարերութեանս Հայոց ՊժՁ: Ի հավաք մարաջախտութեանս հայոց Լիպարիտ պարոն Թորոս ավաք մարաջախտուն որդոյն: Բազում հիծման հիծելով և այլ շատ հետիվաւաւք, որ էին իբր ժԲՌ (12000) մարդ և այլ ավելի: Ելաւ թագաւորն ընդդէմ նորայ և դրին կռիւ՝ հողմն կռիւ: Ուզէր դաւաճանել զբաղաքն: Ի յավուրն կերպի շաբաթ, իւր իջվանքն էր իվերա գետին Մախթլու» (էջ 477): «Զսեվացեալ (փոխ. սեւացեալ) հոգով, աշօք կուրացած աղաչեմ: Ի թվ. ՊԿԵ»—1416: «Սեվերես դիմալք կամ յաշխարհիս: Զսեվացեալ հոգով աղաչեմ» (Խաչ, 184—185): «Զտառապեալ և սեվաց հուրով գործով թափուր, աղաչեմ յիշել: Թվիս ՊԿԼ—1419» (Խաչ, 229): «Ի գեղէն Բերդավան» (Խաչ, 305): «Եղեալ արժանավոր պարոն էվաչաս (Խաչ, 345): «Գնեցի զսուրբ ալետարանս: Ետու դավետարանս յԱստուածածին: Գրավկանէ: Գրեցաւ թվին Հայոց ՊՇԴ»—1425 (Խաչ, 345—46): «Եկաք ի զավագանին բերթն ի վրացտուն, կու գայաք բազում կարավան» (ն. տ. 461—463): «Հայ մեղավորս

յիշեցէք, ի թվին ԲՃՀԶ»—1437 (հաշ, 369): «Յիշեա զամբիծ սարկավաքն» (1421 թ. հաշ, 270) և այլն:

Վահնչյուն ու տառի փոխարեն վ է հանդիպում նաև ուշ միջնադարում (ԺԶ—ԺԷ դարեր), դարձյալ ոչ այնքան ավետարանական, դավանաբանական, որքան աշխարհիկ դրականության մեջ, որոնց հեղինակները ձգտել են հարազատ մնալ ժողովրդի լեզվին նրա արտասանությանը: Սրինակ՝ «Յունվար եոսունումեկն աւր է»։ «Յունվարի վեցն երեքշաբթի է»։ «Փետրվար քսան և ութ աւր է»։ «Յորժամ պատոված լինի երկինս»։ «Թէ ասին խաղայ, ծեծվի ի կոխն»։ «Հեր մարդոյ կովի» («Պարզատումար», 1512):

«Տոմար Գրիգորեան» գրքում (1587) հանդիպում են՝ դրժուարին, հովապետութեանս, թվին, պատուիրելով, զինւորք, տրաւ, կամեցածուց գրությունները, որ Ն՝ հնչյունն արտահայտված է թե ու, թե Վ և թե վ տառերով: Կղեմես Գալանոսը (1645) վահնչյուն ու-ն և՛ պահպանում է, և՛ Վ-ով է փոխարինում, և՛ վ-ով (նուազ. թույն, նրազ, թվի): Եթե այդ ու-ն պահպանում է, վրան նշան է դնում, որ վ կարգան (նուազ), ինչպես որ ձայնավորանախորդ աւ տառակապակցության վրա նշան է դնում, որ աւ վ կարգան (նուազաւոր): Այս (ւ) նշանը շատերն են օգտագործել, գրանցից է նաև № 8443 ձեռագրի գրիչը (1687), որ գրում է՝ հաւատաւոր, ողջացաւ, լուաւ, շահաւետ և այլն:

Ռիվոլայի բառգրքում (1633) համարյա ամենուրեք թավադյաւ ու-ի փոխարեն հանդիպում է վ տառը (ազնրվական, ազնվութիւն. ալրրոտովիլ, էղվրնիկ, աղավնի, աղվէս, աղվոր, ալլալլիլ, առձըն վոտ, անվանակից, ապականվի, ապավինել, արեվ, գրգվել, դատվան, թափվածք, դավթար, դաւղցվոր, զինվոր, զվարդանալ, թավրէզ, թիվ, թլվատ, մեղվի, պառվիլ, ձավրել, թթվաշ, հավնիլ, կոշվիլ և այլն): Դրանցից շատերը գրքում ունեն իրենց նաև զուգահեռ գրությունները՝ աղուէս, աւելի, թիւ, անուամբ, աղաւնի, լուանայ, թշուառ, թուոյ և այլն:

Այսպես վ-ով է գրում Զաքարիա Ագուլեցին: Նրա օրագրում (1630—1680 թթ.) հանդիպում են՝ կամիվն, ալլվի, դավտարս, յարեվել, թվին, փետրվարի, տված, շտվեց, շառավիղ, յունվար, Սալվինազ, բացվեցավ, Ղազվին, Կարճվանայ, քվեր, դավին, դիվան և այլն: «Կամիվն աստուծոյ նորոյցեցի ալլվի Դավտարս: Գործս շահավոր է իմացողին» (6): «Գա յարեվել» (24): «Եկի Երեւան, փող շտվեց» (38): «Քիչ քիչ բացվեցավ» (67): «Դավին արարին, դիվան գնալ» (98) և այլն:

Երբ թափացալ ուն պահպանում են, վրան ու նշանն են դր-
նում՝ տուէ, պատուական, լեզուովն, հանդիպուածք, պատուիրեցիր:
Այս նշանը դնում են նաև ձայնավորին նախորդող աւ-ի վրա, ոո
ավ կարգան՝ մարմնաւոր, մեղաւոր, դատաւորացն: «Արհեստ հա-
մամարողութեան» գրքում (1675) հետևողականություն չկա, երբե-
մբն ւ է օգտագործվում, երբեմն՝ ու՝ ու-ի վրա նշան: Օրինակ՝
թոոց, թուերէն: Երբեմն միևնույն բառը միևնույն նախադասու-
թյան մեջ և՛ վ-ով է հանդիպում, և՛ ու-ով: Օրինակ՝ «թին թվի տա-
կին» (18): «Գիրն քանի թով պակաս է» (33): «Կտրատած թին
սաղ թվի կտորն է» (80): «Ինչ է սաղ թվի բարդելն»: (15): «Թվերն
մին տեղ դրինք»: «Թվերն դուրս ձգել» (9): Ղանթարով կու ծախ-
վին» (144) և այլն: Այսպիսի գրություններ կան նաև «Առաւել
պարգաբանութին» գրքում (1630)՝ պատվիրանաց, ավետարան,
գրվաւոր, առավել, ամբուրվան, դէվք, քավարան, կիրակնավորն.
մեռաւ, կամեցաւ, հավատոյ և այլն: «Առ սեղանավորս» (36):
«Շնթեռնումք յավետարանին» (39): «Որպէս դատավոր, որք էին ի
քավարանին» (39): «Վասն էր քրիստոս ի նմին ժամոյն ոչ յարեաւ,
երբ մեռաւ, այլ կամեցաւ յամել էրիս օրս» (41): Նստաւ (44),
կարգավորութին, հանգեաւ, հավասար (46) և այլն: Ղուկաս Վա-
նանդեցու «Գանձ չափոյ...» (1699) գրքում՝ թիվ, թվոյ, դիվան,
շինվին, գրվին, ավել, ծախվի, փաստաւ (= փոստով): Այստեղ
վ-ով են գրված օտարազգի բառերը՝ իվօոնօ, Սիվիլիա, Անվերս,
Լօվանդ, Նորվէջի և այլն: Այսպես է գրում նաև Յովհաննէս Կոս-
տանդնուպոլսեցին «Նորոգոյն ծաղիկ զօրութեան» (1685) թարգ-
մանության մեջ (Աքվինացոյ, Սաղվէստոս. Ավիճեննոս) և «Զտու-
թին հայկաբանութեան» (1674) գրքում:

3. — Ն. Ադոնցը գրաբարի ուղղագրության երեք շրջան է հի-
շատակում՝ նախաբազրատունյան (մինչև Թ դար, երբ գրությունը
հիմնականում հնչյունային էր), բազրատունյան (Թ—Ժ դար, երբ
այդ գրության մեջ նկատվում են շեղումներ) և ետբազրատունյան
(երբ այդ շեղումները բնորոշակ ծավալ են ստանում):

Առաջին գլխում մենք ներկայացրինք հայերենի ուղղագրու-
թյան վիճակը նախաբազրատունյան և բազրատունյան շրջանում
(Ե—Թ դարեր): Այժմ տալիս ենք ետբազրատունյան շրջանի (միջին-
դարերի) ուղղագրության քննությունը:

ԺԱ—ԺԲ դարերում մեծ ծավալ է բնորոշում գրչությունը: Ամե-
նուրեք սկսում են արտագրել ավետարաններ, կրոնական ճառերն-

տիրներ, սաղմոսարաններ, պատմիչների թողած պատմագրություններ: Ձեռագրերի ճիշտ ընթերցման, արտագրության համար շատ կարևոր էր կայուն ու միասնական ուղղագրություն ունենալ, գիտական հիմքի վրա դնել գրավոր խոսքի կանոնները: Ուստի պատահական չէ, որ ժամանակի մտածողները (Ստեփան Սյունեցի և ուրիշներ) քերականության գլխավոր հարցերից մեկը համարում էին ուղղագրության կանոնների մշակումն ու կայունացումը: Ոչ միայն լեզվի և գիտության առաջադրած պահանջներն ընդհանրապես, այլև ձեռագրերի մասսայական արտագրությունը նպաստում են քերականության և ուղղագրության հարցերի նկատմամբ հետաքրքրության բուռն աճմանը²²:

Գրչության լայն ծավալման հողի վրա ստեղծվում է, այսպես կոչված, գրչության արվեստը, որն արժարժում էր ոչ միայն տառատեսակների, գեղագրության, զարդերի, կազմարարության հարցեր, այլև՝ քերականական, ուղղագրական²³:

Այս շրջանում քերականությունը համեմատաբար քիչ վերացական բնույթ ունի՝ ձեռք բերելով գործնական մեծ նշանակություն: Կիլիկիայում քերականության նկատմամբ հետաքրքրության աճը մեծ չափով բխում է հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից: Այս հողի վրա հանդես են գալիս «գրչության արվեստի» վերաբերյալ աշխատություններ, որոնց հեղինակները գլխավոր նպատակ ունենալով ուղղագրության և կետադրության կայունացումը՝ միաժամանակ հաղորդում են քերականական այլևայլ արժեքավոր տեղեկություններ²⁴:

Գրչության արվեստը կոչված էր ծառայելու հիմնականում հին ձեռագրերը, մշակութային հուշարձանները գրի առնելու, պահպանելու և սերունդներին հանձնելու մեծ գործին: Քերականներն սկսում են քերականությունը մաքրել հունաբան, հայերենին խորի՞ ձևերից՝ նրանց փոխարեն տեղ տալով ժողովրդական կենդանի խոսքի ձևերին: Բարձրանում է քերականության նշանակությունը: № 2371 ձեռագրի հիշատակարանում գրիչը գրում է, թե քերականութիւնն է ռթանոն և զաղափար ամենայն արհեստից ևս առաւել որք փութան ձեռնարկել արհեստ գրչութեան: Հետաքրքիր համեմատություն է անցկացնում գրիչը, ասում է՝ ինչպես որ անհնար է թռչուններին լուծ լծել ու ակոս անել և եզներին հօդս բարձրանալ, ադպես էլ անհնար է հասու լինել գրչության արվեստին, առանց քերականության:

ԺԲ դարում մի կողմից մեծ ծավալ էր ընդունել ձեռագրերի արտագրությունը, գրչությունը, մյուս կողմից միջին հայերենը (ասել է թե բանավոր լեզուն) հեռացել էր գրաբարից (գրավոր լեզվից), որի պատճառով խաթարվել էր դասական գրությունը:

Այս հակասական իրադրությունը թելադրում է ժամանակի գիտուններին՝ մտածել գրավորի նորմերի մշակման և դրանք կայունացնելու մասին: Այս հողի վրա առաջացավ ուղղագրական բարեփոխման պահանջ²⁵: Գրավոր և բանավոր խոսքի խզումը, սակայն, շատ ավելի վերաբերում էր դասական մատենագրությանը, բան ժամանակի աշխարհիկ բովանդակություն ունեցող գործերին, քանի որ առաջին դեպքում դրիչը ձգտում էր պահպանել մատյանի գրությունը, երկրորդ դեպքում նա ազատ էր զգում իրեն: Այլ բան է, երբ Շնորհալին, Գունդստաբլը, Վարդան Արևելցին և մյուսները ձգտում էին դրել ժողովրդական լեզվով, օգտագործել ժողովրդական ձևեր, հասկանալի լինել նրան, իսկ այլ՝ երբ մի գրիչ արտագրում էր որևէ ավետարան կամ սաղմոս, մի պատմիչի թողած պատմություն: Այս դեպքում գրիչը շափազանց զգույշ էր, ամեն կերպ ձգտում էր պահպանել նախօրինակ ձեռագրի տառը: Արդ բուխյամբ պահպանել գրավոր ժառանգությունը և այն սուրածել ժողովրդի մեջ, դարձնել ժողովրդի սեփականություն՝ այս էր զբոլության նպատակը: Այստեղից էլ բխում էր գրոց լեզուն անաղարտ պահելու, նրա խաթարումները վերացնելու պահանջը: Ահա թե՛ ինչու ԺԲ դարում ուղղագրության կանոններ գրող Արիստակես Գրիչը հենվում էր ոչ թե իր ժամանակի բանավոր խոսքի, այլ դասական գրաբարի վրա, ձգտում էր վերականգնել դասական ուղղագրությունը: Նրա ուղղագրական կանոնները ավանդական սկզբունքով էին և ոչ հնչյունային, եթե նկատի չունենանք մի երկու բացառություն: Ուրեմն միջին հայերենի առկայության պայմաններում, երբ ստեղծվել էր երկու գրական լեզու՝ իրենց քերականական, բառապաշարային տարբերություններով հանդերձ, գործում էր մի միասնական ուղղագրություն՝ դասական գրաբարի ուղղագրությունը: Այս երևույթը շատ լավ է բնութագրել Ն. Ադոնցը: «Կիրիկյան շրջանում, — գրում է նա, — երբ խոսակցական լեզուն համարձակ կերպով իր համար ճանապարհ էր բաց անում գրականության մեջ, թվում է, թե պիտի հաղթանակեին ուղղագրության այն նորմաները, որոնք համապատասխանում էին հնչյունաբանությանը: Սակայն ինչպես նոր լեզվին չհաջողվեց բարձրանալ մինչև գրականության բարձունքը, այնպես էլ նոր նորմաները պիտի իրենց տեղը զիջեին հին կարգին: Մի շարք աչքի ընկնող գրիչներ, որոնք դուրս էին եկել Սկևռյան դպրոցից, սովորելով հնա-

գույն ժառանգությունները ամենալավ արտահայտություններով, շրջվեցին դեպի հինը և վերականգնեցին գրության իրենց օրն ապարած նորմաները»²⁶:

Ուղղագրության բարեփոխման ու կայունացման պահանջը կար, բայց այն բավարարվեց դասական ուղղագրության վերականգնմամբ: Գրավոր ու բանավոր խոսքում եղած լուռ պայքարում հաղթանակեց գրավորը, ավանդականը, դրանում արտահայտվում էր ժամանակի գիտունների վերաբերմունքը դասական գրականության նկատմամբ:

Հայերենի ուղղագրության մասին մեզ հասած առաջին աշխատությունը Արիստակես Գրչի «Վերլուծութիւնք բացերեւապէս բազմազան բառից եւ բայից յոգնախումբ շարագրութեամբ» գիրքն է: Ձեռագիրը թվական չունի, պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № № 7123, 2382, 3917, 2526 և այլ ձեռագրերում: Գրիչը համարվում է ԺԲ դարի հեղինակ: Մենք օգտվել ենք Մատենադարանի № 7123 ձեռագրից, որը բերականական աշխատությունների հավաքածու է, արտագրված 1357 թվականին: Քննական տեքստը հրատարակել է Լ. Խաչերյանը, որից և բերում ենք օրինակները:

Արիստակես Գրչի ժամանակ ամենից շատ խախտվել էր դասական հայերենի չ տառի ուղղագրությունը, հատկապես բառասկզբում և բառավերջում: Այդ պատճառով էլ նրա աշխատությունը մեծ մասամբ վերաբերում է չ տառի գրությանը: Արիստակեսը շարադրում է ուղղագրական ինը կանոն և մի համառոտ ուղղագրականբացատրական բառարան:

Առաջին կանոնով բնութագրվում են ա, ո-ով վերջացող այն բառերը, որոնք չ չեն ստանում, թեև Թրակացու մեկնիչը նշում է, որ հայերենում բառերը ա, ո տառերով չեն վերջանում: Այդ բառերն են 1. անկատար (հրամայական) բայերը՝ աւգնեա՛, առաքեա՛, դասեա՛, ողորմեա՛, աճեցո՛ւ, դարձո՛ւ և այլն (Գրչ. արվ., 230), 2. սա, դա, նա դերանուններն իրենց թեք ձևերով, 3. կա, ապա ահա, հա եղանակավորող բառերը (հա երթամ, կա գիր քո):

Երկրորդ կանոնով նշվում է, որ ա-ով վերջացող հատուկ անունները չ չեն ստանում, երբ գործող անձ, ենթակա են, օրինակ՝ Յուդա մատնեաց գտէր (232): Յ-ն սեռականի հոլովակազմիչն է (Բառնաբայ առաքելոյ ազգ, Մատաթիայ հայրենիքն): Բառեք կան, որ բառամիջում էլ չ ունեն՝ Ռաֆայել, Բեթսալիդա, Միքայել (233):

Երրորդ կանոնը նշում է, որ ներգոյականի իմաստով և ուղեվորման տեղի պարագաները²⁷ չ չեն ստանում (երթամ ի Կիլի-

կիա, ինչ դիրագին է յՈւտհա): Իսկ եթե գոյականը ելման տեղի պարագա է, յ է ստանում (գամ ի Դենայ, յԱտանոյ, ի Սիսոյ, յԱնեոյ ի Սեփաստիա որքա՞ն է):

Չորրորդ կանոնը շեշտից կախված հնչյունափոխության մասին է. 1. Խ-ով վերջացող բառերի ի-ն հոլովման ժամանակ փոխվում է Վ-ի (բարի—բարւոյ, գերի—գերւոյ), 2. եա>ե (աշխատեալ—աշխատելով, երանեալ—երանելի), 3. աւ>ու (գոշաւդ—գոշողի, աշխատաւդ—աշխատողի), 4. ոյ>ու (բույս—բուսոյ, թոյլ—թուլակազմ), 5. եւ>իւ (բերւ>բիրաւոր, գեաւդ—գելդ—գիւղից):

Հինգերորդ կանոնը անորոշ դերբայի սեռական հոլովի մասին է, որ ■ վերջնատառից հետո յ է ստանում (առնելոյ, կամելոյ): Բերում է իմանալ—իմանալոյ, իմանալի—իմանալւոյ, հայել—հայելոյ, հայելի—հայելւոյ զուգահեռները և բացատրում դրանց տարբերությունը: Այս կանոնի տակ բացատրվում է նաև վերա բառի ուղղագրությունը, որ բաղադրության կազմում յ չի ստանում (վերաստեղծողից, վերաբերաւդ), իսկ ինքնուրույն գործածվելիս ստանում է (եկեսցէ ի վերայ մեր ողորմութիւն): Գրիչը նկատել է, որ շատերը բաղադրյալ բառերում յ են գրում (վերայբերեալ) և զգուշացնում է, որ չգրեն: Այս կանոնի տակ հեղինակն զգուշացնում է նաև, որ դ հոգը տ տառով չգրեն:

Ըստ վեցերորդ կանոնի յ ստանում են՝ 1. անցյալ կատարյալի բայերը (արմատացայ, անկայ, բարկացայ), որ գրիչը բացատրում է բայի շեղոք սեռով ու I դեմքով, 2. Ա խոնարհման շեղոք սեռի բայերը՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի III դեմքի եզակի թվում (արդարանայ, անմահանայ, ամրանայ): Հրամայական բայերն էլ են անցյալ կատարյալի բայերի նման հնչվում, բայց յ չեն ստանում (լու՛ա զքո երեսդ և լուայ զլուր քո, ջանայ մեծանալ՝նա և ջանա՛ մեծանալ դու, ցանկանայ անձն իմ և ցանկա՛ դու):

Յոթերորդ կանոնն է «վասն նոյն կատարեալ յիերոյ անշարժք եւ անփոփոխք», օրինակ՝ քահանայ, քահանայից, քահանայապետ, վկայ, վկայից, փեսայ, փեսայէ, փեսայեացեալ և այլն:

Ութերորդ կանոնն այն բառերի մասին է, որոնք ուղիղ ձևում ի-ով չեն վերջանում, ուստի սեռականում էլ Վ չեն ստանում, ու-ից հետո ստանում են յ: Օրինակ՝ մարդկային—մարդկայնոյ, աստուածային—աստուածայնոյ, այդպես էլ՝ երկնայնոյ, ցամաքայնոյ, հրեշտակայնոյ և այլն: «Սոցա ամենեցուն անպատճառ յիեար պիտոյ է»,— ասում է Արիստակեսը:

Իններորդ կանոնում ասված է, որ բառերը հոգնակիում յ-ն պահում են (հրեայ—հրեայք, այծեայ մորթ, այծեայս զգեցեալ,

այսպես էլ՝ միաւրեայ, երկաւրեայ), իսկ երբ սրանցից նոր բառեր են կազմվում, յ-ն ընկնում է, եա-ն փոխվում է է-ի (հրեայ—հրէ-աստան, հրէից, հրէութիւն, պաշտաւնեայ—պաշտաւնէից, քաղ-դեայ—քաղդէութիւն, բաղդէից, քաղդէացի, բրիստոնեայ—բրիստո-նէական, բրիստոնէից, բրիստոնէութիւն և այլն): Կատարվում է եայ>եյ>է հնչյունափոխությունը:

Տասներորդը բառարան է, հայերեն ուղղագրական առաջին բառարանը, ուր տրվում են նաև բառիմաստի բացատրություններ: Հեղինակն զգուշացնում է, որ եթէ որոնելի բառը ե-ով է սկսվում, բայց ե-ի շարքում չկա, փնտրել է-ի շարքում, սա վերաբերում է նաև գ. ա-ով սկսվող բառերին: Նշանակում է հիշյալ տառերը (նաև բ-պ-փ, դ-տ-թ, գ-կ-ք) գրչության մեջ արդեն հաճախ էին միմյանց փոխարեն գրվել:

Արիստակեսը սահմանել է նաև ստացական դերանունները՝ ուղղագրությունը. իմ, քո, նորա, նոցա և այս շարքի մյուս դերա-նունները հոլովված գոյականների հետ գործածվելիս հոլովվում և յ են ստանում, օրինակ՝ հոգւոյ իմոյ, հոգւոյ քոյ, հաւր սոցայ. աստուծոյ նորայ և այլն: Եթե գոյականը հոգնակի թվով է, դերա-նունը յ չի ստանում (անձանց նոցա): Գոյականների ուղիղ ձևի հետ գործածվելիս՝ եթե նախորդում են գոյականին, յ ստանում են (նոցայքն մերձաւորք), եթե հաջորդում են, չեն ստանում (մերձա-ւորքն նոցա): Այս դերանունները յ են ստանում նաև ա, դ, ն հո-դերին և ք հոգնակերտ մասնիկին նախորդող դիրքում, օրինակ՝ սայն, նայն, նոցայն, սոցայքն և այլն (Գրչ. արվ. 267—268):

Այսպիսով, ի տարբերություն մեսրոպյան ուղղագրության, ըստ որի հայերենում բառերը ա, ո (նաև ե, ը) տառերով չէին վեր-ջանում, ԺԲ դարում կանոնական է դառնում որոշ դեպքերում բա-ռերի վերջանալը ա, ո տառերով: Այստեղ կա մի օրինաչափու-թյուն, որ հետագայում նշում են լեզվաբանները (Աբեղյան, Աղոնց, Աճառյան), այդ այն է, որ բառավերջում այն բառերն են ա, ո տառերից հետո յ ստանում, որոնք ածանցման կամ բարդացման ժամանակ պահպանում են այդ յ-ն: Օրինակ՝ տղայ—տղայոց, քա-հանայ, քահանայական և այլն:

XIX—XX դարերում շատերը մերժում էին բառավերջի համը յ-ն չգրելու առաջարկը՝ ելնելով հենց հիշյալ փաստից: Եթե տղայ. սատանայ բառերի յ-ն չգրվի, ինչպե՞ս, հապա, պիտի պատճառա-բանվի տղայոց, սատանայի բառերում յ-ի առկայությունը, ասում էին նրանք:

Արիստակեսը, գրչության մեջ նկատելով ուղղագրական այն խաթարումներն ու աղավաղումները, որ կատարվել էին շուրջ յոթ

դարի ընթացքում, նպատակադրվում է վերականգնել դասական հայերենի ուղղագրությունը՝ հենվելով քերականական ձևերի ու հնչյունթային կազմի վրա: Սակայն մաշտոցյան ուղղագրությունից որոշ շեղումներ այնքան էին տարածվել ու արմատացել, որ Արիստակեսը ստիպված էր հաշվի առնել, ուստի օրինականացնում է բառավերջի ա, ո տառերից հետո որոշ դեպքերում համը յ-ն չգրելու սովորությունը: Այսինքն թույլ է տալիս բառերը փակել ա, ո տառերով, մի բան, որ շեղում էր դասական գրությունից, եթե հավատանք Թրակացու մեկնիչին, թե հայերենում բառերը ա, ո, ե, ը տառերով չեն վերջանում:

Յ-ի գրություն շեղումներն օրինականացնող հիշյալ կանոնները կարելի է համարել հայերենի ուղղագրության բարեփոխման առաջին արտահայտությունը, առաջին բայը, որ կատարեց Արիստակես Գրիշը:

Յ-ի ուղղագրության հիշյալ կանոններին ԺԳ դարում անդրադառնում է Գևորգ Սկևռացին: Նա նույնպես գրում է, թե իբրև ենթակա, ուղևորման և ներգոյականի իմաստով տեղի պարագա²⁸ օգտագործված գոյականները բառավերջի ա, ո տառերից հետո յ չեն ընդունում, իսկ սեռական, տրական, բացառական հոլովներով դրված գոյականները ընդունում են: Դարձյալ բայերը բաժանում է երկու խմբի՝ «կատարեալ», որոնք բառավերջում ստանում են յ տառը, և «անկատար», որոնք չեն ստանում: Յ-ն երկու քերականներն էլ համարում են բայի ժամանակի ցուցիչ՝ գնայ (կատարյալ), գնա՛ (անկատար): Յ-ի կանոնները սահմանելիս երկու քերականներն էլ նկատի են ունեցել ավանդական ուղղագրությունը, մասամբ էլ հենվել են ժամանակի արտասանության և բառերի ձևաբանական կառուցվածքի վրա:

«Արիստակեսի և նրա հաջորդների կողմից մշակված ուղղագրությունը հետագայում ճանաչվեց Մխիթարյանների կողմից, ընդհանրացավ և ընկած էր հայոց լեզվի ուղղագրության հիմքում մինչև 1922 թ., երբ ուղղագրական բարեփոխում կատարվեց»²⁹:

Այժմ տեսնենք, թե յ տառի ուղղագրության ինչ շեղումներ են նկատվում Ժ—Ժէ դարերի մատենագրության մեջ և վիմագիր հուշարձաններում: Շեղումներ ոչ միայն դասական ուղղագրությունից, այլ նաև Արիստակեսի հիշատակած բացառություններից, որոնք այս շրջանում արդեն կանոնական էին, օրինական:

Ամենից առաջ շարունակվում է բառավերջի համը յ տառի անկումը հատկապես բառերի թեք ձևերում: Բերենք հարյուրավոր օրինակներից մի քանիսը, ըստ դարերի:

Ժ դարից.— **Ե՛ի Թագաւորութեան Սնպատա**, որդո Վասակա,

ի ձեռն Գրգորկա: Թվ. ՆՆԹ—990 (Դիվ, III, 41): «ՆԺԶ (967) թ. կանգնեցի (խաշս) ի փրկութիւն հոգւո իմո, որ կարդա զիս հիշեցէ» (Դիվ, III, 122): «Իսկ եւ իսկ եղեւ տ ն իմո Աշոտի ելանել ի մարմնո աստի» (Դիվ, III, 206): № 2679 ձեռագրում (981 թ., Շիրակացի) հանգիպում են՝ երորդո, Եբերա, Եղիսա, Քուշա, Աբեկութա և այլն: «Ի վերա այսր ամենայնի անսաս տր» (ձեռ. № 1001, Ժ դար, 28 բ): «Ի վերա անցելո» (անդ, 4): «Հեղիով զարիւն քո ի վերա խաշին» (45) և այսպես ամբողջ ձեռագրում: «Կորգէի ի բերանո նորա» (№ 1007, 8): Այս ձեռագրում այսպես էլ չ տառը շի գրվել քառի ուղիղ ձևում՝ ի վերա, ծառա, զսատանա, զփեսա, սկա, վկա է, սեռական-տրական հոլովով դրված բառերի վերջում՝ ի պտղո, Սաւուդա, ի Դաւթա, բարո, սրբո, ի բերանո, ամուսնո, ի տապո, Յակոբա, մարմնո, մերո, ձերո, հրո, հաւո և այլն, բայերի վերջում՝ տեսանելո, մարմնացելո, վճիո տա, թաղեալ կա ոչ հաւատա, վասն կենսագործելո: «Ողորմեա Գրիգորո ծառաի ք (Ժ դար, Քար, 12): Այսպիսի բացթողումներ կան նաև Ժ դարի № 985 ձեռագրում (ընթանա, ի Հոռմա), Տիմոթեոս Կուզի գրքում՝ Հոռվմա, Մարիամա, լուա, գո, Յովբա, Աթանասեա և այլն:

ԺԱ դարից.—«Դատող նորա սատանա լիցի» (1029 թ. Օրճ. 442): «Ի վերա տանս Հայոց» (ն. տ.): «Ես Մարիամ Ափխազաց և Հայոց թագուհի, դուստր մեծին Սենիքերիմա եւ թոռն Գագկա ետու վասն Գագկա, իմ պապոյն մեղաց թողութեան: Ընկալա զեկեղեցին: Եթե ոք հակառ կա» (1029, Օրճ, 444): «Ի թագաւորութեանն Գագկա..., որդի Հասանա» (1051—1054, Քար, 13): «Ես բարեպաշտ թագութիս դուստր Աբասա... հզուրի և արքաի (1028, Քար, 13): «Հաոց տն Պետրոսի Հաոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սմբատա շահանշահի որդւո Գագկա... որդոցս Եզրու Ապլ Հասանա եւ Խատապա... յեզերն Երասխա ի վանքս Տեկորո, ... թե ոք հակառ կա... Կաինի, Յուդաի... զանէծս նա աոցլ (1033, Քար, 14):

ԺԲ դարից.—«Զձայն բարբառո լուա» (№ 1890, 1174 թ., Եղիշե, 14բ): «Վկա ունիմ» (35): «Իբրեւ տղա մանկան» (36): «Ի ձեռն Վարդանա զաւրաւարին գումարէին զնա» (75բ) և այսպես՝ խաբեբա, սատանա, ակամա, արքա, զնա, հեռանա, բազմանա, ոչ ծերանա, հնանա, Զարաւանդա, Վարդանա, Վահանա, Վասակա. իւրո, Յովսեփա և այլն: «Թէ որ կարդա» (№ 4035, ԺԲ դար, 5): «Վերացո խաշիւդ լուսո» (48), «զտիւն լուսո, սրբոցն յուսո» (58): «Վերանա մութն» (63): «Զսխալելն Ադամա» (120): «Վասն որո էւ եղծ ալ» (126): «Ոչ երբեք հարթ ընթանա երիւար» (153): № 975

ձեռագրում (1194—95 թթ., Կյուրղի «Յակաճառութիւն») հանդիպում են՝ ի վերա, ցնդիա, յետո, մերո, ի բերանո, ի մսո և ի գինո, զՅակովբա, զՅուդա, իւրո, մարմնո, մեռելո, պիտո է, ի հրոսոխո:

ԺԳ դարից.—№ 2865 (ԺԳ—ԺԴ դար/հորենացի) ձեռագրում ոչ լինելո, ձերո, Արշակունո, Շապհո, կա, թախանձելո, եղելո, Մեսրոբա, խաբեբա, ամիրա, Շամիրամա, հոգասցա, գնա, կանգնել տա, Արտաշատո, Երուանդա, հրեա և այլն:

№ 556 (ԺԳ դար) ձեռագրում՝ Սիրաքա, ի վերա, գոհանա, սիրո, արժանանա, իւրո, գա, դառնա, մնա, վկա, տարո, արտաքո, ծառա, տեղի տա, որդւո, ստանա, յակամա և այլն: № 4066 ձեռագրում (1283 թ.)՝ ի վերա, փախստեա էր ի Սաւուդա, Կորխա, անխնա, վերիվերո, հաճո, գաւրանա, արհամարհելո, պատուո, մնա, իմանա և այլն: № 823 (1266 թ.) ձեռագրում՝ արտաքո, ամբառնա, Յովբա, լցա, ի վերա և այլն:

Եզնիկի «Եղծ»-ի 1280 թ. ձեռագրում կա յ տառի ուղղագրության շուրջ 990 շեղում, ըստ որում 796 բառում չի գրված բառավերջի յ-ն: Օրինակ՝ բառի ուղիղ ձևում՝ վկա, գո, զծառա, ի վերա, սատանա, պիտո, արտաքո, հրեա, հազարամեա, դժնեա և այլն, թեք ձևերում՝ որո, հրո, իւրո, հողմո, միայնո, ի միջո, աւդո, բարո, զրուանա, զՅակոբա, դաւթա, Յոբա, Աքաբա, զԱդամա, Յաւանա, մարդո և այլն, բայաձևերում՝ լինելո, էանալո, յայտնելո, լլկելո, անսալո, շրջելո, մնա, գա, երթա, տա, դառնա, ջանա, ոչինչ կա, խոստացա և այլն: Անիի ԺԱ—ԺԲ դարերի վիմական արձանագրություններում (Դիվան, I պրակ) 115 բառում բառավերջի յ տառը չի գրված, 33 բառում՝ բառամիջի, 4 բառում անհարկի յ է օգտագործված և միայն 33 բառում է յ տառը ճիշտ օգտագործված: Օրինակներ՝ Առճո, Գրիգորո, ծառա, Գևորգա, Վահրամա, ստացա, մերո, անւո, որդո, ակամա, քահանա, իմո, Դվնա, Տիրանա:

Սիսիանի, Գորիսի, Ղափանի Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում (Դիվան, II պրակ) 176 բառի բառավերջի յ-ն չի գրվել, 47 բառի՝ բառամիջի յ-ն, 12 բառում անհարկի յ է օգտագործված և միայն 22 բառում է այդ տառը ճիշտ օգտագործված: Օրինակ՝ Վարդկա, Գառնո, սրբո, որո, Արտաւազդա, հոգո, մերո, Մխիթարա և այլն: Այսպիսի օրինակներ շատ կան նաև Դիվանի III մասում, որ պարունակում է դարձյալ Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններ:

№ № 2101 (1223 թ.), 468 (ԺԲ—ԺԳ դար), 777 (ԺԲ դար) ձեռագրերում հանդիպում են՝ կա, մնա, վարեցելո, արտաքո, ադամանտեա, ի միո, տկաքանա, երկարանա, կուրանա, սկսա, բա-

նա, Յեսէա, Ադամա, ի վերա, Արամազդա, № 216 ձեռագրում (1279 թ., Հերացի)—բազմանա, յեփելո, փորանա, երևենա, ի վերա. կենա, տաքնա, մնա, ջերմանա, շորանա, չկա և այլն: 1746 ձեռագրում (1280 թ.) 166 բառից 81-ում չկա բառավերջի համը յ տառը, իսկ 40 բառում՝ բառամիջի հնչվող յ-ն, 12 բառում անհարկի յ է օգտագործված և միայն 33 բառում է ճիշտ օգտագործված: Այս ձեռագրի բովանդակությունն ունեցող № 1747 ձեռագրում (1243 թ.) 101 բառից բառավերջի յ-ն չի գրված 53 բառում, բառամիջինը՝ 29, մի բառում անհարկի յ է գործածված, իսկ միայն 18 բառում է յ-ն տեղին օգտագործված:

Հաղբատի վիմագիր արձանագրություններում (ԺԱ—ԺԳ դարեր) 118 բառի վերջի յ-ն չի գրված, 24 բառի՝ միջին յ-ն, 6 բառում անհարկի յ է գրված: Սանահինի արձանագրություններում 62 բառ ներփակող յ տառը չունեն, 22-ը՝ բառամիջի, 10 բառում անհարկի յ կա:

ԺԴ դարից.— № 108 (1322 թ.) ձեռագրում՝ չհատատա, կա. միանա, Յակորա, մոռանա, դառնա, անախորժանա, ի վերա, մարդո, իւրո, մերձակա, սատանա, քաղուածո, յետո, երթա, վկա, տա, միանա, իմո, դարձո և այլն:

№ № 57 (ԺԴ դար), 1748 (ԺԴ դար), 1751 (ԺԴ դար) ձեռագրերում՝ Հոռմա, ի վերա, գողանա, Գէորգա, անուանեցա, ի ներքո, կենդանանա և այլն: Նույնիսկ Եսայի Նչեցու քերականության ԺԴ դարի ձեռագիր տարբերակում են հանդիպում բառեր, որոնց համը յ-ն գրված չի լինում, օրինակ՝ ենթակա, պանծա, արտաքո, նաւեա, կաղմեա, Սահակա, Մեսրոպա, Հոմնիսա, պիտանանա. հմտանա, վայելչանա, միո, զկապա և այլն³⁰:

ԺԵ դարից.— № 266 (1468 թ.) ձեռագրում՝ մերո, թուլանա, աղա և այլն: № 994 (1409 թ.) ձեռագրում՝ բանա, Եսայեա, որպէս ծանեա, քառասնամեա, Պաղեստինեա, ի վերա և այլն: № 485 (ԺԴ դար) ձեռագրում՝ որո, ի քնո, վերա, բարո, իւրո, եկեղեցո, երեխա, գերիվերո և այլն: № 415 (1466 թ.) ձեռագրում՝ լուսանա. անդ կենա, ի վերա, երևնա:

Շատ ձեռագրերում բացակայում է բառամիջի յ տառը, որ արտասանվող է, համը չէ: Այն գրիչները, որոնք բառավերջի համը յ-ն չեն գրում, հաճախ բաց են թողնում նաև բառամիջինը: Գրելով սատանա, տղա, Երեմիա, ընծա, նույն ձևերը պահում են նաև թերման ժամանակ՝ սատանաի, ընծանցաք, տղաի, Երեմիաի: Հաշվի չեն առնում արտասանությունը: Սա գրագիտության պակասությունից է բխում: Երբ բառավերջի ա, ու-ին հաջորդող յ-ն չեն գրում, հասկանալի է. այդ դիրքում յ-ն համը է, բառամիջի յ-ն չգրելը

ոչնչով չի պատճառաբանվում, քանի որ այդ դիրքում նա արտասանվում է: Կուցե մտածել էն, որ առանց գրելու էլ յ-ն բառամիջում արտասանվում է, ինչպես դադունավանկի ր-ն, և ավելորդ են համարել գրելը: Օրինակներ № 1001 (Ժ դար) ձեռագրից՝ ծառաութենէ ապատեսցէ (65), տեսեալ զմարդկաին բնութիւնս: № 1007 (Ժ դար) ձեռագրից՝ Հոռմաեցոց (3), գրեաց հահոութիւն (4), հաւութիւն, հայհոական (5բ), ծառաութիւն ածեալ եղէ նմա (7), յածաին, ածմ, ածմ կուրացեալ է ի տապոլ արեղական (12, 18), և այսպէս՝ զկողնիաի, արքաութեան, վկաութբ, ի սատանաէ, վկաի, տղաաբար, Լկանիաի, արեգականաին, ի սղաութի, ծառաեացն, զգաութբ, րահանաիցն, զգաարանս, հրամաեալսն, Լբրաեցոցն, քահանապետն, յուդաի և այլն:

Կարելի է ենթադրել, որ գրիչները Երբեմն բառամիջի յ-ն նույնպես չեն արտասանել, ասել են i satanae, vkai, hranael և այդպէս էլ գրել են, հետեւելով հնչյունային դրոշմանը, ինչպէս բառավերջի համար յ-ի դեպքում, բայց դժվար թէ կարելի լինի հայ մարդու համար ձայնավորի կրկնությունն արտաբերել առանց յ-ի տղաաբար, Բահանաապետ բառերի կրկնակ ա-Լրի միջև անսլայման չ էլ լսվում:

№ 2679 (981 թ.) ձեռագրում՝ «Ժողովրդանաին ի Բեթղեհէմ գալով» (15): «Նիւթ ձախողական վերջնաին փորձեսցի» (27բ): «Ասէ Իսմաէղացին» (98), «Որդի Լկանիաի» (156) և այլն: «Որ հակառ կա. . Կաինի, Յուդաի...» (1033, Քար, 14): «Կարգեցար ի ձեռն սուրբ հաւր Երեմիաի» (Մարմաշեն, 1029, Օրճ, 442): «Ընծաեցար Լկեղեցոյս զմեր հայրենիքն, որբ հակառակ կան ընծաիցս. դատին» (1271, Օրճ, 474): «Միաբանեցաք ընծաիւք Զալալա» (1252, Օրճ, 476): № 1894 (1174 թ.) ձեռագրից՝ այրուծիոյն հաոց և վրաց (19), հրամաց նոցա (20բ), թշնամեացն արքաի (21), կար ի ծառաութեան (22), ծառաից, զարմանաին, խաւարաին յարքաէ, կաին (30) և այլն: Այս ձեւերը կան և այս նույն նյութի (Եղիշեն) 1569 թ. (№ 1920) արտագրության մեջ՝ հրամաէր, դողաին, Լրկնաին, յերկրաինս, բռնանաին, բառնաին, բացահաեաց, ծառաէլ և այլն:

№ 975 (1194—95 թթ.), 4035 (ԺԲ դար) ձեռագրերում՝ ծառաիս, ածաին, քոին, վկաութի, Եսաեա, արքաութեանն, վկաից, հաեաց, յերախաութեան, հրամաէ և այլն:

ԺԳ դարի №№ 823 (1266 թ.), 2101 (1223 թ.), 416 (1279 թ.), 49 (1282 թ.), 4066 (1283 թ.), 1746 (1280 թ.), 1747 (1243 թ.), 2865 (ԺԳ դար) ձեռագրերում՝ զԵրեմիաի, հաեւով, վկաեցէք, մի

խնաներ, հրամաէք, բաղձաիր, վաեւել, ի փեսաէ, ածաին, ծովաին, ազգահնք, զմարդկաին և այլն:

ԺԻ—ԺԾ դարերի № № 415 (1466 թ.), 57 (ԺԴ դար), 266 (1468 թ.), 994 (1409 թ.), 108 (1322 թ.), 485 (ԺԴ դար), 1748, 1751 (ԺԴ դար) ձեռագրերում՝ վկայիցն, ածաին, գոացեալ, ի քահանաէն, հրամանեցաւ, խնաէ, Յուդաի, սատանաի, Գողգոթաի, հոռմանցիք. ծառաից, ծառանեսցէ, հահուել, վկանեսցէ, փեսաին, հանեսցուք, նաէր և այլն: Անիի Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում 115 բառի բառամիջի յ-ն չի գրված (Դիվ, I մաս), եզնիկի «եղծ»-ի հիշյալ ձեռագրում (1280 թ.) 203 բառամիջի յ-ն չի գրված, այդտեղ սովորական գրություններ են՝ հաել, գոութին. առ ի շգոէ, վկանալ, խնաիցէ, վայելչութեամբ, պիտոիցն, ծառանա, ծառացեալս, զսատանաէ, ախոանին, դանակ, գաին, տղանոցն և այլն: Հաղբատի վիմական արձանագրություններում (Ժ—ԺԳ դար) 24 բառում չի գրված բառամիջում ա, ո տառերին հաջորդող յ-ն (քահանաի, Յուդաի, Կաննի, վանելուչ, ընծանեցաւ), իսկ Սանահինի արձանագրություններում՝ 22 բառում (հաոց, արքա, ծառաիցն, ծառանելո, Եսաի, Զաքարիաի, Յուդաի, Կաննի և այլն):

Եսայի նշեցու քերականության ԺԴ դարի ձեռագիր տարբերակներում էլ հանդիպում են բառեր, որոնց բառամիջի յ-ն գրված չի լինում՝ ցամաքաին, ջրաին, երկրաին, ներկաին, յարակաին, աւդաին, ենթակաի, ծովաին, բաածական, նորաում, նորաովն, բաի, ի բաէն, զարբաութին, հրաին և այլն:

Կան գրիչներ, որ հետևում են ավանդական գրությանը և բառավերջի համը յ-ն հետևողականորեն գրում են: Նրանց գրչագրում բառավերջի համը յ-ի բացակայությունը վրիպակ է, օրինակ՝ № 415 ձեռագրի գրիչը ընդամենը 5 տեղ է բառավերջի յ-ն բաց թողել, իսկ 1468 թ. № 266 ձեռագրի գրիչը բոլոր բառերի վերջի համը յ-ն գրել է:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ գրիչները բառամիջում կամ բառավերջում ա, ո տառերից հետո անհարկի յ տառն են գրում: Դա հետևանք է երկու պատճառի: Առաջինը ստուգաբանությունն է: Որովհետև ա, ո տառերով վերջացող բառերը յ են ստանում, որը պահպանվում է նաև նրանցով կազմված բաղադրության մեջ (քահանայ—քահանայական, սատանայ—ի սատանայէ), ուստի որոշ գրիչներ կարծում են, թե բոլոր դեպքերում բառամիջում նույնպես ա, ո տառերին պիտի յ-ն հաջորդի և գրում են՝ բացալկա, հովուալպետի, մեղսայմարդ, Ասայտուր և այլն՝ չիմանալով, որ բառամիջի ա-ն հոդակապ է և ոչ թե բաղադրիչի վերջածայնը:

Օրինակ, № 266 ձեռագրի սկզբի էջերում կարդում ենք՝ կատարելայ հասակ, երախտայ մոռաց, ուր յ-ի կիրառությունը տրամաբանական է: Հետագա էջերում գրիչը միացրել է այդ բառերը՝ պահպանելով, սակայն, յ տառը: Այս պատճառով էլ այդ ձեռագրում հանդիպում են՝ կատարելայհասակ, երախտայմոռաց, պրտղայբեր, կոպպաշտ, քաղցրաշձայն, զկիսայմահ, գլխալցօտթին, գվարդայակտութին, սիսեռնալջուր և այլն:

№ 57 ձեռագրում (ԺԴ դար) գրված է վերոյ ասացաք (25), իսկ այնուհետև՝ բնայխօսից, պահապանն, ամենալշար, գձեռայգիր և այլն:

№ 1001 (Ժ դար) ձեռագրում՝ հովուայպետի, բացայկա, գըլխացաութին, պտղայբեր և այլն, **№ 415** ձեռագրում (1466 թ.) **73** բառամիջում անհարկի յ է գրված՝ միաշափ, լերդացաւ, վերոյգրեալդ, անուշայհամ, գլխալցաւելոց, ձինալջուր, ակոպմիջերն, զխոշալզուխ, խոշալփող, կանաշալզոյն և այլն:

3 տառի այսպիսի անհարկի գրություններ կան նաև **№№ 975** (1194—1195 թթ.), **416** (1279 թ.), **2865** (ԺԳ դար), **1097** (1280 թ.) և այլ ձեռագրերում: Գ. Հովսեփյանի «Յիշատակարանը ձեռագրաց» գրքի Ժ—ԺԳ դարերի ձեռագրերում (սկզբնագիր) **65** բառում անհարկի յ է օգտագործված: Նսայի Նշեցու «Վերլուծութին բերականութեան» Ը տարբերակում, որ **1307** թվականի ձեռագիր է, երբ Նշեցին կենդանի էր, հանդիպում են՝ աճալպարեսցեն, բղջալխոհ, ճշմարտալպէս, հարկալտրաբար, երկոյտասան և այլն³¹:

3 տառի անհարկի գործածության երկրորդ պատճառը նմանակությունն է: Արիստակես Գրչի կանոններում մենք տեսանք, որ յ տառը չի գրվում հրամայական եղանակի բայերում, որոշ դերանուններում, ապա, զոնեա և մի շարք այլ դեպքերում: Սակայն շատ գրիչներ ա. ո տառերով վերջացող բոլոր բառերին յ են ավելացնում: Այս դեպքում նրանք, ցանկանալով միասնական գրություն ստեղծել, գրում են ավանդական ուղղագրությամբ: Նա բառը միջնադարում կարող էր հանդես գալ և՛ շաղկապի, և՛ դերանվան գործածությունում: Շաղկապային կիրառության դեպքում ստանում էր յ. որն ըստ երևույթին նաև հնչվում էր: Օրինակ՝ «Երբ իւր փութսն շատ լինի, նայ ուռչի» (**№ 416, 53**): «Յերբ խմելու տաս, նայ ի վեր գա» (**№ 415**): **3** տառի հավելագրություն նկատվում է ամենից շատ հրամայական եղանակի բայերում ու դերանուններում: Օրինակներ՝ «Դարձոյ նմա եւ զմիւսն» (**№ 5547, Ժ դար, 17ա**): «Ողորմեայ ի քո ի միւս անգամ գալրստեան մար Շահանդիստո եւ Կատարին» (1086, Դիվ, II, 138): «Տարածեալ զասացեալն զեղեցկապէս եւ սփռեալ» (**№ 988, 1046 թ., 19բ**), զսալ (18): Առ

նոսայ, գտղիսութիւն նորայ, առնէ նմայ, ապայ ասեմք (X 416, 1279 թ., 53բ): «նման էն սոցայ»: Պատրաստեցոյ, շորացոյ, նրստոյ, պառկեցոյ, հանդիպիք նմայ, կակղացոյ և այլն (ն. տ.), «նայ ծանուցէ քեզ»: «նայ ասաց ոչ» (X 57, ԺԴ դար, 162): «Տացի ի նայ ուսանել» (163բ): «Թողէք զդայ» (166): «Ապայ մինն յոյժ էր նախանձ» (178): «Կորուսէր զդայ» (168): «Իսկ նայ աննենդ է» (234) և այլն:

Եսայի նշեցու «Վերլուծութիւն քերականութեան» ԺԴ դարի ձեռագիր տարբերակներում նույնպէս հանդիպում են բառավերջի ա, ո տառերից հետո յ տառի անհարկի գործածութեան դեպքեր: Օրինակ՝ սայ, նորայ, գնոսայ, ապայ, նմայ և այլն (անդ, 109, 111, 123 և այլն):

Յ տառի ուղղագրութեան պատկերը պարզ երևում է ԺԳ—ԺԴ դարերի մի քանի ձեռագրերի ու վիմական արձանագրութիւնների տվյալների հետևյալ տախտակից.

Ձեռագրի №-ը. Ժողովածուն	Թվականը	Յ-ով բառերի քանակը	Յ-ով բառերի քանակը 1 տառով չունեն	Յ-ով բառերի քանակը 1 տառով չունեն	Յ տառն ան- հարկի դեպ- քանակը 1 տառով չունեն	Յ-ով բառերի քանակը 1 տառով չունեն
1097 (եզնիկ)	1280	1089	796	203	25	65
1747	1243	100	53	29	1	18
1746	1280	166	81	40	12	33
1751	ԺԴ դ.	50	10	18	2	20
Սիսիանի արձ.	ԺԶ—ԺԳ դ.	27	176	17	12	22
Հաղբատի արձ.	ԺԽ—ԺԳ դ.	168	118	24	6	20
Սանահինի արձ.	ԺԽ—ԺԳ դ.	119	62	22	10	25
Գ Նովս. Յիշատակարանք	ԺԽ—ԺԳ դ.	372	74	65	182	51
Խաչիկյանի հիշատակարաններ	1400—1480 թ.թ.	933	260	108	453	112
		3264	1630	556	713	366

Այս թվերը վկայում են, որ յ տառի գործածութեան խախտումները շատ ավելի են, քան նրա տեղին գործածութիւնը, ըստ որում ավելի շատ նկատվում է բառավերջի ա, ո տառին հաջորդող համը յ-ի անկում:

Ինչպէս երևում է օգտագործված գրականութեան ցանկից, յ տառի ուղղագրութեան խախտված է գերազանցապէս աշխարհիկ կյանքը բովանդակող հուշարձաններում՝ վիմագրութիւն, հիշատակարաններ, ժողովածուներ: Ավետարանական և քերականական գրականութեան մեջ խախտումներն անհամեմատ քիչ են:

Այդպիսին է վիճակը նաև ԺԶ—ԺԷ դարերում լույս տեսած աշխարհիկ գրականութեան մեջ: Այս դարերում էլ քերականութեան

գրքերում (Հովհաննես Կոստանդնուպոլսեցի, Կղեմէս Գալանոս, Ոսկան Երեանցի, Խաչատուր Արզրումեցի և այլն)³², ավետարանական գրականության մեջ³³ մեծ մասամբ պահպանված է յ տառի և ընդհանրապես ավանդական ուղղագրությունը, շեղումները քիչ են: Հովհաննես Կոստանդնուպոլսեցին, Կղեմէս Գալանոսը քերականության իրենց վերոհիշյալ գրքերում կրկնում են Արիստակես Գրչի կանոնները յ տառի ուղղագրության մասին: Ըստ Գալանոսի անունների ուղղական հոլովը, կրողականը, կոչականը, նախդիրի տրականը «ոչ առնուն յի», օրինակ՝ եկն Յուդա, զՅուդա, ով Յուդա, ասէ զՅուդա և այլն: Մնացած հոլովները առնում են, ինչպես՝ զստերքն Յուդայ, որդի Ադամայ, զԱդամայ, յԱդամայ (էջ 7բ): Առասական (հասարակ) անունները, թե՛ ուղղական, թե՛ հոլովականք, վերջում «միշտ առնուն յի», որպէս՝ ծառայ, քահանայ, հոգւոյ: «Գերանունք նախագաղափարք (իմա՝ արմատներ) ոչ առնուն յի»: Օրինակ՝ քո, սա, սմա, սորա, սոցա, նա: «Ածանցականքն առնուն, օրինակ՝ իմոյ, մերոյ, սորայ, դորայ, նորայ»: Հրամայական բայերը ոչ առնուն՝ սիրեա, սիրեցո, «ընդունելութիւն առնու»՝ ասացելոյ, ստորոգելոյ: Որոշ մակբայներ, նախդիրներ, միջարկություններ ու շաղկապներ յ տառն ստանում են (վերայ, ներքոյ, յետոյ, յառաջոյ և այլն), իսկ կան էլ, որ չեն ստանում (ահա, հա, այո, հապա, ապա և այլն): Հովհաննես Կոստանդնուպոլսեցին ավանդական օրենքով Ձափաբիա, Մաղաբիա ձևերը համարում է ուղղական, իսկ Ձափաբիայ, Մաղաբիայ ձևերը՝ սեռական:

Այսպես չէ, սակայն, աշխարհիկ կյանքը վերարտադրող գրականության, բանաստեղծության մեջ: Այստեղ յ տառի գրությունը շարունակում է նախորդ դարերի նման մնալ խաթարված՝ բառավերջի համը յ-ի, բառամիջի յ-ի անկում, հավելագրություն:

Կ. Մելիք-Օհանջանյանը Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութեան» ներածական մասում գրում է, թե Գանձակեցու պատմութեան որոշ ձեռագիր տարբերակներում (ա—1594 թ., Բ—1597 թ., Գ—1616 թ., Դ—1647 թ.) խախտված է յ տառի ուղղագրությունը: Հաճախ բացակայում է բառավերջի համը յ տառը՝ դառնա, տա, քառասնաւրեա, Միհրանա, Աշոտա (ա ձեռագիր), Կիրժանա, Գագկա, սրբուհո, միո, կա, կամա, արքա, դա և այլն (Բ ձեռագիր), զեկեղեցո, Սահակա, խորհրդո (Գ, Դ ձեռագրեր): Բաց են թողել բառամիջում ա, ո տառերին հաջորդող յ տառը՝ գահն, հարավին, սկաաբար, Անանիաի և այլն (Բ ձեռագիր):

16-րդ դարի բանաստեղծ Հովասափ Սեբաստացու բանաստեղծությունները խմբագրող ու հրատարակող շնորհալի բանասեր

Վախթանգ Գեորգյանը գրքի ներածականում բանաստեղծությունների ուղղագրության մասին արած արժեքավոր դիտողությունների շարքում նկատում է նաև, որ Սեբաստացին հաճախ բառամիջում և վերջում յ տառը անհարկի է գրում, և բերում է օրինակներ՝ ծաղկաշծաւալ, խաշայնման, զնայ, նորայ, սորայ³⁴: Մենք կավելացնենք՝ բռնայդատական, ապայ, զնայ, սոցայ, գետնայ, խիշտ, ժահայհոտ և այլն: Սեբաստացին երբեմն էլ յ տառը բաց է թողնում՝ խոստանաին, տեսա, մէջ պախշաին: «Տեսա զնայ խընտալի» (78): «Շատ պարգեք խոստանաին» (89) և այլն:

Ն. Մառը Վարդան Այգեկցուն վերագրվող առակների ձեռագիր տարբերակների ուղղագրության մասին հետևյալ դիտողություններն է անում³⁵: A ձեռագրում (1617 թ.), որ գրված է ընդունված ուղղագրությամբ, երբեմն ա, ո ձայնավորներին հաջորդող յ-ն գրված չի լինում, օրինակ՝ լուա, ողջանա, կա, գա, 'ի միջո, մարդո, սատանա, խորհեցա և այլն: Նույնը և B ձեռագրում (1628 թ.)՝ երթա, խորհեցա, տա, ողորմեա և այլն: C ձեռագրում (Ժէ դար) անհարկի օգտագործված է յ տառը: Օրինակ՝ զցորենայհատն, որովայնայմօլ: Մառը նշում է, որ այս երևույթը նկատել է Բրոսսեն էջմիածնի 1393 թվականի մի ձեռագրում: Առակների D ձեռագրում (1669 թ.) յ-ն և՛ անհարկի է օգտագործված (զնայ, նմայ), և՛ բաց է թողնված բառավերջում (բառնա), ըստ որում հետաքրքիր է, որ գրիշը, նշում է Մառը, յ տառի փոխարեն վերջին ա-ի վրա շեշտ է դրել (ջանա՛, տա՛):

Այսպիսի նշան կա նաև I ձեռագրում (1666 թ.)՝ խորհեցա՛, ջանա՛, ասա՛, Ադամա՛, կենա՛, վկա՛, հպարտանա՛: Նույնիսկ այն բառերի վրա է դնում, որոնք յ շեն ստանում՝ նա՛, ցնա՛, ապա՛, ողորմեա՛, լուա՛, ահա՛, արա՛, կարծելով, թե ա-ով վերջացող բոլոր բառերը յ են ստանում: Այս ձեռագրում ընդհանրապես բառավերջի համար յ-ն բաց է թողնված և երբեմն նույնիսկ հիշյալ շեշտը չի դրված (երթա, քաղցրանա), երբեմն էլ շեշտի փոխարեն հարցական նշան է դրված (յետո՞, սիրո՞):

Մառի հրատարակած ժողովածուի հիմքում V ձեռագիրն է (1615 թ.), ուր նույնպես խախտված է յ-ի ուղղագրությունը: Մի կողմից բաց է թողնված բառամիջի ա-ից հետո լսվող յ-ն (կար, գար, երթար, գալոց, փոխ. կայր, գայր, երթայր, գայլոց), մյուս կողմից անհարկի տեղը յ է գրում (նայ, նմայ, նորայ, ահայ, ապայ, մեծալտուն, քարայգործ, բարձրաչոյն և այլն): I (1666 թ.) ձեռագրում մի կողմից հանդիպում են՝ շուկաին, երթաին, հպարտանա, պարծենա գրությունները, ուր բաց է թողնված յ տառը, մյուս կողմից էլ՝ ապայ, մարդաչսպանք գրությունները, ուր ան-

հարկի է յ-ն, թեև ընդհանրապես 1 ձեռագրի գրիչը ճիշտ է գրում:

Անհամեմատ հետևողական են C (Ժէ դար) և C² (Ժէ դար) ձեռագրերի գրիչները: C ձեռագրի գրիչը ա, ո-ից հետո, տեղին, թա անտեղի, յ է գրում և ստացվում է թե՛ ճիշտ (սատանայի, լուսոյ, ծերանայ) և թե՛ սխալ (մարդասէր, քաղցրայհոտ, անուշայհամա, ապայ) գրություն:

C² ձեռագրի գրիչը սրան հակառակ է վարվում, ամենուրեք յ-ն համը համարելով՝ չի գրում, և էլի ստացվում են թե՛ ճիշտ (ապա, զնա, մարդասէր, անուշահամ, քաղցրահոյս), թե՛ սխալ (հանցեալ, սատանաի, շլանա, լուսո, ծերանա, հաի, սատանա) գրություններ: Մի գրիչը հետևել է ավանդական, մյուսը հնչյունային ուղղագրությանը, երկուսն էլ ծայրահեղության հասնելով:

Յ տառի ուղղագրության խախտումներ կան նաև ուշ միջնա դարի այլ ձեռագրերում (N^o 8376—Ժէ դար, 6800 (1475 թ.), 3179 (1449 թ.) և տպագիր գրականության մեջ: Այսպես, «Առաւել պարգաբանութիւն» (1630 թ.) գրքում կան յ-ի և՛ անհարկի գրություններ (վարդայեատութիւն, քրիստոնեական, հոչգով), և՛ անհարկի բացթողումներ (արքաին, մոլորեցուցանելո, վանելութեան, որդո):

Օրինակները ցույց են տալիս, որ այդ գրիչը գրագետ չէ, սկզբունք չունի: Այս նույն ծայրահեղությունները նկատվում են նաև Հովհաննես Տերզնցու «Տոմար Գրիգորեան» (1587 թ.) գրքում:

«Պարգատումար»-ի (1512 թ.) հենց վերնագրում անհարկի է գրված յ տառը (Պարգատումար): «Մենդեան տղայոց» մասում գրված է՝ «Երեք շաբթի աուր տղայն ստախօս լինի, հինգշաբթի աուր տղայն առաքինի լինի, բարեսէր, բարեխօս»:

Ազդվեցու օրագրում (Ժէ դար) նույնպես հանդիպում են յ-ի անհարկի գրություններ՝ նորոյգեցի, Աղջալղալի, վեր կալլայ, սեւալլուիս, սորայ, սոքայ, սայ և այլն:

Շնորհալու «Յիսուս որդի» (1643 թ.) գրքում՝ «Երեւեցոյ գերեսս քո», սիրեցելո, հրամայեա, արիացա, մերկացա, երկնաին, կտակալգրին, նմայ, ապագաին, քոին: Որտեղ գրվում է, բաց է թողել (ապագաին, մերկացա), որտեղ չի գրվում, գրել է (նմայ, կտակալգրին): Նույնպիսի երևույթ տեսնում ենք 1565 թ. տպագրված մի «Սաղմոսարանում»: Մի կողմից հանդիպում են՝ ձեռագործ, շանայճանճ, լիալճիգ, պնդալճիգ, մյուս կողմից՝ Խարաէլ, խաղաին, ի վերա, Յակոբա, ծառաելոց, վկա գրությունները, ուր ա տառից հետո լսվող և գրվող յ-ն բաց է թողնված: Նույնպիսի վիճակ է ներկայացնում նաև Ռիվոլայի բառգիրքը: Մեկ գրում է՝ այոյ, ապայ, ապալքէն, ապագայն, թերալհաւատութիւն, իրաւարայ, լորայմարգ, մեկ էլ՝ հրամաել, գաի, խնաէլ, մէկտարո, նաիլ, էրեխաութիւն, ջրաին:

Հետաքրքիր է, որ Ռիվոլյան երբեմն բառամիջի յ հնչույթն արտահայտում է ի տառով: Նրա բառգրքում հանդիպում են կախսր, կախսրանիստ, լուսնիակ, Զեիթուն, պաիծառ, պաիծառութիւն. պաիծառանալ, մէիդան, մէիմուն, հաի, Հաիաստան, հաիերէն. Հաիկ, հաիկագինք, նույնիսկ՝ իախա «օծիք, փողպատ», որ վկայում է, թե հեղինակը այդ գիրքում յ-ն ի է արտասանում:

«Արհեստ համարողութեան» (1675) գիրքը գրված է յ-ի ավանդական ուղղագրությամբ, շեղումներ գրեթե չկան: Սկզբունքով օ-ից հետո լսվող յ-ն չի գրված (գերօին, գերօով): «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի Մարգարէի» գրքում հեղինակը հետևում է ավանդական ուղղագրությանը, միայն հետևողական չէ քո դերանվան գրության հարցում: Նրա գրքում քոյ և քո ձևերը հանդիպում են հավասարապես, նույնիսկ միևնույն նախադասության մեջ, միևնույն կիրառությամբ:

Յ-ի ուղղագրության շեղումներ կան նաև Թլկուրանցու բանաստեղծությունների ԺԶ—ԺԷ դարերի գրչագիր տարբերակներում (գալրնանային, կառնու գալլար, նմայն, ձայդերն, այնմահոթիւն, սիրալմարգ, խելալզնաց և այլն)³⁶, Հայոց կանոնագրքի ԺԶ—ԺԷ դարերից մնացած ձեռագրերում ու պատասկներում³⁷:

Յ տառի գրությունն ավելի է դժվարանում, երբ բառասկզբում սկսում է և արտասանվել, որի պատճառով բառասկզբի յ տառի փոխարեն երբեմն հանդիպում ենք և տառին: Գրիչները մի դեպքում պիտի իմանային, թե բառասկզբի և հնչույթը ո՞ր բառերում է և տառով գրվում, ո՞ր բառերում՝ յ, մյուս դեպքում՝ ե՞րբ է բառավերջի ա, ո տառերից հետո յ տառը գրվում, ե՞րբ չի գրվում: Այսինքն, գրիչներից պահանջվում էր պահպանել ավանդական գրությունը՝ հաղթահարելով ժամանակի արտասանությունը:

Թե ե՞րբ բառասկզբում յ տառը սկսեց և հնչել, դժվար է ասել. լեզվաբաններն ու բանասերներն այս մասին լուծմ են: Աճառյանը գրում է, թե միջնադարում բառասկզբում յ-ն հնչում էր և: Բացատրում է դրա առաջացման ուղին, ըստ որի յ > և հնչունափոխության պատճառն այն է, որ այդ երկու հնչույթների միջև ընկած է շնչեղ յ-ն (շ): Ինչպես որ շնչեղ թրթռուն օ', ց', ժ', յ, լ հնչույթները մի շարք բարբառներում դարձան փ, ք, ք, ց, չ. այնպես էլ շնչեղ յ-ն (շ) դարձավ և, երկու դեպքում էլ պատճառը և շունչն է: Մեյեն հենց այդպես էլ և-ն համարում է խլացած յ-ի³⁸ արդյունք:

Ժէ դարի քերականներ Կղեմէս Գալանոսը, Հովհաննես Կոստանդնուպոլսեցին արձանագրել են, որ բառասկզբում յ տառը և է կարդացվում:

Կարստը նույնպես նշում է, թե միջին հայերենում «կհնչվին

յարմար> harmar, յապաղել> hapaγῆ, անյապաղ> anhapaγ,
թերահոյս> t'erahuis: Բերում է կրկնակ գրությունների օրինակ-
ներ՝ հետ—յետ, յետի—հետի: Տրապիզոնի բարբառում յալիտեանը
արտասանում են՝ հալիտեան. Յակոբը՝ Հակոբ. յոյսը՝ հոյս. Մուշի
բարբառում՝ յաջողութիւնը՝ հաջողութէն. Յարութիւնը՝ Հարութէն և
այլն:

Բառասկզբի յ և հ տառերի միմյանց փոխարեն գրությունը
սկսվում է մոտ ԺԳ դարից, ուրեմն մոտավորապես այդ ժամա-
նակ է բառասկզբում յ-ն հ հնչել: Մեր մատենադարանի 1279 թ.
№ 416 ձեռագրում (Հերացի) օգտագործված է հայնց բառակը,
«այնպես» իմաստով: «Երբ հիվանդին ուժն զարաւոր լինի հայնց,
որ վայել կարէ զնիթն և հանել քրտամբ» (55): «Հայնց, որ իմա-
նա հիւանդն» (37բ): Այս բառի հ-ն ի նախդիրն է, որ ձայնավորին
նախորդող դիրքում դառնում է յ: Ըստ երևույթին այդ դարում բա-
ռասկզբի այդ յ-ն արդեն հ է կարդացվել ու գրիչն էլ հ է գրել:
1209 թվ. մի հիշատակարանում գրված է. «Կազմեցաւ գիրքս
առաքելական և մարգարէական՝ ձեռամբ իմոյս (տ)խմար հետի(ն)
Սուրիասի» (Յիշ, 739), փոխանակ՝ յետին:

№ 49 ձեռագրում (1282 թ.) գրված է. «Հոֆնատեսակ զանա-
զանութեան հրշտականացն կերպագործութեանց» (69), փոխանակ՝
յոզնատեսակ:

Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքում» (1264 թ.) գր-
ված է. «հետ թագաւորին մահուան զայն դնեն յաթոռն», փոխ. յետ:
Այստեղ էլ օգտագործված են՝ հայնց, հանչաք գրությունները: Օրի-
նակ՝ «Այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյ:
հայնց, որ իսկի չէին ի հասկանալ» (15): «Ունի հանչանք մի
ստացուածք» (50), ուր կատարվել է՝ ի այն շաք(ի)> յայն շաք>
հայնշաք>հանչաք փոփոխությունը:

Բառասկզբում յ—հ տառերի փոխադարձ կիրառությունը շա-
րունակվում է և հետագա դարերում: Օրինակներ՝ «Հապա գիտե-
նաս» (№ 266, 1468 թ., 163), փոխանակ՝ յապա: «Որ թարգմանի
անհախք» (№ 415, 1466 թ. 8բ), փոխանակ՝ անյաղք: «Հանկարծ
կանկնիլ» (64), փոխանակ՝ յանկարծ: «Այն որ շատ ուտելու է,
հանկարծակի գայ» (194): Թլկուրանցու տաղերի տարբերակներում
նույնպես բառասկզբում յ-ի փոխարեն հանդիպում է հ-ն: «Գունդ-
քն ծաղկին ու հետ կապին» տողը Տ ձեռագիր տարբերակում (Ժէ
դար) գրված է՝ «գունդքն ծաղկին ու յետ կապին» (Թլկ., 139):

Մառը իր հիշյալ գրքի ներածականում գրում է, որ Վարդան
Այգեկցուն վերագրվող առակների Շ ձեռագիր տարբերակում (Ժէ—
ԺԸ դար) բառասկզբի հ հնչող յ-ն փոխարինված է հ տառով, օրի-

նակ՝ գրված է շնաջողի, փոխանակ՝ շնաջողի, անհուս լինի, փոխանակ՝ անյոյս լինի, հաղթեաց, հանկարծակի, անհուսացուց և այլն: Այսպիսի գրություններ կան նաև D (1669 թ.) տարբերակում՝ հանդէպ, հետեն անցաւ (փոխ. յետեն), զհետ (փոխ. զյետ) և այլն: Գալանոսի բառարանում հանդիպում են յանգէտս և հանգէ. զույգ ձևերը, գրում է անհայտ, փոխանակ՝ անյայտ: Մատենադարանի № 8376 ձեռագրում (Ժէ դար) հանդիպում են հուրք (անձրև) և յուրք գրությունները: № 2188 ձեռագրում (Ժն դար) գրիչը գրել է հաւարտ, հետո նկատելով իր սխալը, հ-ի կողքին յ է ավելացրել, ստացվել է հյաւարտ երկտակ գրությունը: Հովասափ Սեբաստացին նույնպես օգտագործում է հանցեղ բառակը, որ առաջացել է յանցեղ ձևից, որ նշանակում է այնպես, այն տեսակ: Պատահում է նաև հ-ի փոխարեն յ տառը:

Գ. Հովսեփյանի հրապարակած հիշատակարաններից մեկում (ՈՍԸ—1169 թ.) գրված է. «Երանելի աստուածասէր թագոյի», փոխ. թագուհի (Յիշ, 398): «Ի թագաւորութիւն Շաշինշայի» (Յիշ, 401): Օձունի վիմագիր արձանագրության մեջ (ՈԶԴ—1235 թ.) գրված է. «Պատրոն մեծին Շաշանշայի» (Ս. Ավ.): Այլ օրինակներ. «Ես Շահանշայ որդի Զոհի կանգնեցի զխաչս» (ԶԺԲ—1263 թ. Ս. Ավ.): «Ես Շարվենշահ և Շայ կանգնեցաք զխաչս» (ԶԼԱ—1282 թ. Դիվ., 2-րդ, 60):

Հր. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» 6-րդ հատորի հավելվածում հանդիպում են բահ—բայ, գրահ—գրայ, շահեմ—շայեմ, պահեկ—պայեկ և յովատակ—հովատակ զուգահեռ ձևերը: Այս շեղումները հետևանք են այն բանի, որ գրողները բառամիջի և բառավերջի հ-ն յ են արտասանել (Zray, Şayem) և գրել են ըստ արտասանության: Բարբառներում (օր. Արարատյան) հիմա էլ բառամիջի հ-ն յ են արտասանում (Շայվալադ, պայեմ, շայեմ, շայի—շահի՝ 5 կոպեկանոց, սայման և այլն)³⁹:

ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱԻ—Ո—Օ.—Առաջին գլխում տեսանք, որ Ե դարում աւ տառակապակցությունը բաղաձայնին նախորդող դիրքում երկբարբառ էր և կարդացվում էր աու (աւձ—awj, աւր—awr, աւրէնք—aw-rēnk), բացառությամբ նաւք, աղաւնի բառերի: Տեսանք նաև, որ այդ ընթերցումը երկար չի տևում, արդեն է դարից փաստեր կան բաղաձայնանախորդ աւ տառակապակցության օ ընթերցման, որի հետևանքով երբեմն այդ տառակապակցության փոխարեն հանդիպում է ո տառը և ընդհակառակն:

Գրության փոխադարձության ուղղագրական այս երևույթը, որ արդյունք էր աւ>օ հնչյունափոխության, ժ դարից ավելի է տարածվում⁴⁰։ Անիի Ապուղամբենց Ս. Գրիգոր եկեղեցու պատին Գրիգոր Համզե Պահլավունու ժ դարի արձանագրության մեջ գրված է. «Քս ան յորժամ գաս փառոք (փոխ. փառաք) հաւր ի նորոգել զերկիր» (Քար, 13, նաև Դիվ, I, 31)։ «Ի բարէխոսութիւն» (փոխ. ի բարեխաւսութիւն), կարդում ենք Սանահինի 1011 թվականի մի արձանագրության մեջ (Սան, 18)։ Այս նույն «Բարեխոսութիւն» գրությունը հանդիպում է նաև Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի 1003 թ. փորագրված տողերում (Կեշառիս)։ Մատենադարանի 981 թ. №2679 ձեռագրի (Շիրակացի) 25-րդ էջում գրված է Կոստանդնուպոլսի, իսկ 48-րդ էջում՝ Կոստանդնուպոլսի։ ԺԳ դարի № 556 ձեռագրի 56-րդ էջում՝ «Ի կադիկաւէն», իսկ 58-րդ էջում՝ «Ի կադիկոսէն», ԺԳ դարի (1280 թ.) № 1746 ձեռագրում հանդիպում ենք որգոն և որգաւն զույգ ձևերին (էջ 68)։ Կ. Ղաֆաղարյանի «Հաղբատ»-ի 175-րդ էջում գրված է Բաւրինայի (1212 թ.), իսկ 176-րդ էջում՝ Բորինայի (1200 թ.)։ ԺԳ դարի № 57 ձեռագրում հանդիպում ենք Պողոս գրությանը, փոխանակ Պաւղոսի՝ «Պողոս մեզ սաստէ» (313)։ Պատահում է, երբեմն, և հակառակ գրությունը՝ ու-ի փոխարեն աւ են գրում։ Օրինակ՝ «Յասպարապետութեանն Գրիգարոյ» (981 թ., Ս. Ավ.)։ «Վասն իմ հաւրն հաւգոյն... եւ մեղաց թաղութեանն» (987 թ., Ս. Ավ.)։ «Ես Կիրակոս վաճառական յազնամեղ և անարժան» (988 թ., Յիշ, 153), փոխանակ՝ Գրիգորոյ, հոգոյն, թողութիւն, հոգնամեղ։ ԺԶ դարի (1556 թ.) մի վիմական արձանագրությունում հանդիպում է «Զաւհրապ» գրությունը (Դիվ, III, 31)։

Լ. Խաչիկյանի հրատարակած ԺԵ դարի հիշատակարաններում Տաւռն անունը գրված է նաև Տաւաւն ձևով։ Օրինակ՝ «Ուխտին սուրբ Առաքելոցն Տաւռնուոյ» (Խաչ, 69), բայց նաև՝ «Ուխտին Առաքելոցն Տաւաւնուոյ (անդ, 71)։ Վերը բերված օրինակներում՝ հաւգոյն, հազնամեղ, Զաւհրապ, Բաւրինա սխալագրությունները, հոգոյն, հոգնամեղ, Զոհրապ, Բորինա ճիշտ ձևերի փոխարեն, ցույց են տալիս, որ գրողը աւ տառակապակցությունը բաղաձայնախորդ գիրքում օ է կարդում։ Այլ կերպ գրիչը չէր գրի Դաւթաթաւ պարզ է, որ նա աւ-ը օ է կարդացել՝ Dovathchar։

Ինչպես գրում է պրոֆ. Ա. Աբրահամյանը իր վերը հիշատակված հոդվածում, աւ երկբարբառը նախ բանավոր խոսքում է փոխվել օ հնչյունի և, քանի դեռ օ տառը չեն ունեցել, արտահայտվել է ո տառով։ Հատկանշական է, որ Գրիգոր Մագիստրոսը զարմա-

նում է, թե ինչու Մաշտոցը օ հնչող աւ-ի համար առանձին տառ չի ստեղծել՝ կարծելով, թե բաղաձայնին նախորդող աւ-ը միշտ է օ հնչել։ Ուրեմն Մագիստրոսի ժամանակ (ԺԱ դար) արդեն բաղաձայնանախորդ աւ-ը օ էր հնչում (Ջահուկյան, 219)։ Այդ ուն մինչև ուշ շրջան բառասկզբում նույնպես օ էր կարգացվում։ Ոսաննա, Ովանէս, Ոհան, Ովիդիոս անունների բառասկզբի ուն օ էր կարգացվում։ Օրինակներ. «Թ տէրութեան տէր Ովանիսի ևս Յոհանէս քահանա եւ եղբարք իմ կանգնեցաք զխաչս ի թվին ՉիԲ»—1273 (Օրծ, 453)։ «Կատարեցաւ բրջներս ձեռամբ Ընձկանն Գազ(ա)նին և Ոլտին» (1224 թ., Օրծ, 470), իսկ Ոլտաւն ըստ Օրբելու Օլտանուն է։ «Ես Ոհանէս կանգնեցի ի թվ. ՉիԲ»—1283 (Գիվ, II, 121)։ «Ես Ոհանէս փակակալ Սանահնո» (ԺԵ դար, Հաղբ, 172)։ «Այս է տապանն Մելիք Ոհան Մալխասին, ամին ՌիԱ»—1572 (Գիվ, II, 80)։ Ուրեմն մինչև ԺԸ դարը այդ անունների բառասկզբի ու տառը օ է հնչել, պարզ է, որ Ոհան-ը Վոհան, Ոհանէս-ը՝ Վոհանէս չեն արտասանել։ Այսօր էլ ով. ովֆեռ բառերի սկզբի ուն օ է կարգացվում։

Հետաքրքիր է, որ երբեմն երկբարբառային աւ տառակապակցության փոխարեն հանդիպում է ու տառը, որը աւ>ո>ու հնչյունափոխության ճեմանք է⁴¹։ Օրինակ՝ «Սմբատ շախանշահանի հզուրի» (1028 թ., Քար, 13)։ «Ձիս յաղութս (= յաղաթս) յիշեսցիք։ Զուգնական եղև» (Ժ—ԺԱ դար, Ս. Ավ.)։ Nopa բառը Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» գրքում (ձեռ. № 416, 1279 թ.) հանդիպում է՝ նոպա, նապա, նուպա ձևերով։ «Նապային ժամանակ բնիկ կարճ լինի» (էջ 55բ)։ Այս նույն էջում բառս հանդիպում է նաև նոպային, նուպային ձևերով։ Պարզ է, որ աւ-ը փոխվել է օ հնչյունի, իսկ օ-ն՝ ու-ի, տեղի է ունեցել աւ>ո>ու հնչյունափոխությունը, որը և արտահայտվել է գրության մեջ։ Ուն բարբառներում կարող է փոխվել ու-ի։ Այս երևույթը Աճառյանը վերագրում է ԺԱ դարին նախորդող շրջանին⁴²։ Հիշենք թեկուզ Թիֆլիսի բարբառում՝ վուր, շուր, փուր, վուտ, նուր, հուտ՝ որ, շոր, փոր, ոտ, նոր, հոտ ձևերի դիմաց։ Ուն էլ կարող է ո-ի փոխվել։ Ռիվոլայի բառգրքում (1633 թ.) հանդիպում են՝ ոժով, ոժով էնել, ոժովնալ, ոժով մարդ, ոլոյ (ուլոյ), ողափառ, ոխտադրոժ, ողադաւան, ոսմով մարդ, ոսին դրած և այլ նման գրություններ։ Պարզ է, որ Ռիվոլան բառասկզբի ուն օ է կարգացել, չէր կարող ասել վոժով, վոսմով, վոսին դրած և այլն։

Ըստ Բագրատունու ուն աւ-ի հետ շփոթելու պատճառը երկաթագիրն է, ուր այդ երկուսը իրար նման էին։ Մուլակը դառնում է

ծաղակ, մուրուֆը՝ մաւրուֆ, հետո՝ մորուֆ, ուժանդակը՝ աւժանդակ, հետո՝ ոժանդակ, յունֆը՝ հաւնֆ, հետո՝ հոնֆ, ինչպէս և Յովսէփը>Յուսէփ, Թովմաս>Թումաս, որիշ>ուրիշ, Քերովբ>Քերոբ>Քերուբ, Հովնան>Հունան, Տրովագա>Տրուագա (Քեր., 646):

Այստեղ, իհարկե, ճշմարտություն կա, ոժանդակ բառը ծագում է ուժանդակ-ից: Բայց մեր կարծիքով միջնադարում աւ>ու փոփոխության բուն պատճառը բարբառային արտասանությունն է: Տվյալ դեպքում մենք նկատի չունենք հենց Թիֆլիսի բարբառը, որ ուշ շրջանի արտահայտություն է: Նման ձևեր կարող էին լինել և կան վաղ ժամանակից⁴³, թեև չի բացատրվում նաև տառերի ձևի ազդեցությունը:

Արդյո՞ք արտասանությունը չէ պատճառը, որ Գէորգ անունը այս դարերի գրչագրության մեջ հանդիպում է Գորգն, Գաւգն գրություններով: Օրինակ՝ հաշիկյանի հիշյալ հիշատակարաններում հանդիպում են՝ «զտեր Գորգն» և «Գաւրգուն» բառաձևերը (էջ 70): Գոհաւ-ը հանդիպում է Գաւաւ, Գոււաւ ձևերով:

Եթե բերված այս օրինակներին ավելացնենք և այն, որ մինչև օ տառի մուտքը լենթականական դերբայի օղ վերջավորությունը նույնպէս արտահայտվել է աղ և ող զուգահեռ տառակապակցություններով, պարզ կդառնա, թե որքան հաճախ էին օՆնչուն աւ տառակապակցությունն ու ո տառը միմյանց փոխարեն գործածվում:

Այսպէս, ուրեմն, աւ երկբարբառի փոխվելը պարզ օ հնչույթի ժ դարում արդեն փաստ էր: Օ հնչույթն արտահայտվում էր կա՛մ աւ տառակապակցությամբ (քաղաձայնին նախորդող դիրքում), կա՛մ ո տառով:

Ե՞րբ սկսեց օ արտասանվող աւ տառակապակցության փոխարեն օ տառը գրվել, դժվար է ասել:

Մեր ուսումնասիրած ժ դարի ՌՌ 2684 (973 թ.), 2679 (981 թ.), 1001, 10099, 5547, 1958, ԺԱ դարի ՌՌ 1034, 1007, 988 և այլ ձեռագրերում, Գարեգին Ա կաթողիկոսի, Մառի, Օրբելու, Կ. Ղաֆադարյանի, Ս. Բարխուդարյանի, Լ. հաշիկյանի, Ս. Ավագյանի և այլոց ընթերցած ու գրի առած հիշատակարաններում ու վիճական արձանագրություններում մինչև ժԲ դարը օ տառին չենք հանդիպում: Աշոտ Շահնշահի դատեր 971—981 թվականներին գրած կտակագրի հետագա արտագրողը մի քանի տեղ օգտագործել է օ տառը, բայց նկատելով, որ քնագրում աւ է գրված, ուղղել է՝ օ-ի գլխին գրելով աւ տառակապակցությունը: «Ես Հոփսիմէ դուստր բարեպաշտ թագաւորին Աշոտոյ շահանշահի, յետ Ե ամաց

շինութե հօրն իմոյ զսբ նախավկաի: Զի գրից բժշկութիւն ի սբ նախավկայէն եւ Գէորգայ զօրավարէն: Հանդերձ զօրաւք»^{աւ} 44: Այս կտակագիրը բերել է նաև Գարեգին Ա կաթողիկոսը իր «Յիշատակարանը ձեռագրաց» գրքում (Յիշատակարան № 64), ուր Հովսեփյանը նշում է, որ արտագրողը թույլ է տվել սխալներ ու վրիպումներ:

Կարծում ենք, որ այդ սխալներից մեկն էլ օ տառի առկայութիւնն է կտակագրի՝ օրհնեալք, զօրաց, դօլվաթաւօր, օրհնակաւ բառերում: Փաստորեն վերը մեր նշած մի քանի բառերում օ-ն աւ է դարձրել, մյուսները թողել է: Գարեգին Ա կաթողիկոսի հիշյալ գրքի № 84 հիշատակարանում, որ համարվում է 1007 թվականի ձեռագիր, գրված է. «ԶՊողոսիմոսն յաղօքս յիշեցէք» (201): Այդ նույն հիշատակարանը հրատարակել է նաև Բ. Սարգիսյանը, բայց այնտեղ բառս տպագրված է յաղաւթս ձեռվ (Մայր ցուցակ, էջ 517):

Գ. Հովսեփյանի հրատարակած № 103 հիշատակարանում, որ 1046 թ. սկզբնագիր է, մի բառ կա օ-ով «մեծաւ փափագանօք ետ գրել» (էջ 231): Հիշատակարանը վերցված է Թաշյանի «Յուցակ»-ից (էջ 604), ուր նույնպես բառս տպագրված է օ-ով: Այդ հիշատակարանի մնացած բառերում օգտագործված է աւ-ը, այդ թվում և՛ «փափագանաւք»:

Հ. Մուրադյանը, հենվելով այս երկու փաստի վրա, գտնում է, որ օ-ն մուտք է գործել ԺԱ դարի սկզբին^{աւ}: Փաստերից առաջինը, ինչպես տեսանք, վստահելի չէ, երկրորդ փաստը, սակայն, հաշվի պիտի առնել, քանի որ երկու խոշոր գիտնականներն էլ հրապարակել են օ-ով ձևը: Մի այդպիսի օրինակի էլ հանդիպում ենք ԺԲ դարի № 4035 ձեռագրում՝ ցօղ բառաձևը: Ուրեմն կարելի է ենթադրել, որ հայ մատենագրության մեջ օ տառն սկսել է գործածվել ԺԱ—ԺԲ դարերից, բայց սկզբում այդ տառը հազվագեպ է հանդիպում, նրա գործածությունը տարածվում է ԺԳ դարից: Հովսեփյանը սույն գրքում բերելով էջմիածնում գտնված բյուրեղյա խաչի 966 թվականի մականգրությունը, ուր օգտագործված է նաև օ տառը, դրում է, թե «սա բոլորովին վավերական չի թվում մեզ» (հիշատակարան № 52): № 27 հիշատակարանում, որ հնագույն է համարվում, մի բառ կա օ տառով՝ յանօք (էջ 167): Այս հիշատակարանը, սակայն, հեղինակը վերցրել է Ալիշանի «Հայապատում»-ից (էջ 309), ուր աւ երկբարբառային տառակապակցութիւնն ընդհանրապես օ տառով է փոխարինված: Հովսեփյանը բոլոր բառերում վերականգնել է աւ-ը: Բերում ենք համապատաս-

խան օրինակներ՝ առաջին փակագծերի էջը «Հայապատում»-ից է, երկրորդինը՝ «Յիշատակարանք»-ից: Զօրէն մեծին Մովսիսի (309) — զաւրէն Մեծին Մովսիսի (165), ընդ Աստուծոյն խօսել (309) — ընդ աստուծոյն խաւսել (165), ես եմ Սիմիւովն նուաստ և անպիտան կրօնաւոր (309) — ես եմ Սիմիւովն նուաստ և անպիտան կրաւնաւոր (165), այդպէս էլ՝ օրինակէ (310) — ւարինակէ (166), կարճառօտ, եղբորորդոյ, կուսակրօն (310) — կարճառատ, եղբարորդոյ, կուսակրան (166), օգնականութեամբ (310) — ազնականութեամբն (167), յաղօթս (312) — յաղաթս (168), Վասնզի թէ տայցես յանօթ այլում ումեք (312) — յանօթ (167): Միայն այս մի բառում է մնացել օ, որ փաստորեն վրիպել է: Այս գրքի Ժ դարի և ավելի վաղ համարվող մի շարք հիշատակարաններում՝ № № 52 (966 թ.), 56 (976 թ.), 59 (976 թ.), 65 (983 թ.), 64 (981 թ.) և այլն, հանդիպում են օ-ով բառեր (օրհնեալք, գօրօք, կրօնաւորաց, Սիմէօն, հօր, հօտապետի, աղօթս, թագաւորանօք, իշխանօք, կրօնաւորս, օրհնութեան, օրէնս, կարօտելոց, օծութեան, օրհնեն, շնորհօք և այլն), բայց դրանք անթվակիր են, և Հովսեփյանը նրանց ժամանակը որոշել է ըստ նրանց բովանդակութեան: Մինչդեռ Ժ դարի № № 63, 67, 69, 70, 71, 72, ԺԱ դարի № № 94, 95, 100, 107, 109 հիշատակարաններում, որոնք սկզբնագիր են և որոշակի թվագրված, ամենուրեք աւ տառակապակցութիւնն է հանդիպում, օ տառ չկա: № 142 հիշատակարանում հանդիպում են՝ անօթոյն, օծմամբ, տօնս, տօնախմբութիւն, գհօտս, օրինի, խօսեցան, շնորհօք, զգօն գրութիւնները, բայց այս ձեռագիրն էլ սկզբնագիր չէ, անթվակիր է, և Հովսեփյանը բովանդակութիւնից ելնելով է համարում 1105 թվականի: Այսպիսի դեպքերում, երբ գրութիւնն անթվակիր է, և ժամանակը որոշում են ըստ նրա բովանդակութեան, երբ վիճաբիրը վերցված է հրատարկված գրքերից և չկա նրա լուսանկարը, սխալ կլինի նրանց ուղղագրութիւնը հիմք ընդունել և ընդհանրացումներ կատարել, քանի որ հրատարակողները սովորաբար «ուղղում» են գրութիւնը ըստ իրենց ժամանակի ուղղագրութեան:

Ավետիքյանը գրում է, թե «օ նշանագիրը տասվիրեք դարուն մտաւ, կիլիկեցոց ժամանակը, իսկ հնչյունը աւելի առաջ էր մըտել» (Քեր., 180): Կարստը գրում է, թե աւ-ը կիլիկյան հայերենում բաղաձայնից առաջ օ-ի ձայնն ունի: Հին ֆրանսերեն *otrier* բառը միջին հայերենում դառնում է աւրել, *otrei* > աւդրէ, *conse* > գանց, հունարեն *ἀρχατον* > լեղատան: Այս փոփոխութիւնը ճիշտ արտահայտւելու համար ԺԹ դարում վերցրին օ-ն, որը, ասում է Կարստը, թեև միայն միջին հայերենի համար էր հարմար, բայց դասական գրականութեան ձեռագրերում էլ է օգ-

տագործվել: Ելնելով «Սիսական», «Շիրակ» ժողովածուներից՝ Կարստը գրում է, թե արձանագրություններում հին աւ-ն է շարունակվում գործածվել, չկա օ-ն: Բերելով փոխառյալ մի քանի բառեր, ցույց է տալիս, որ օտար օ-ն հայերենում տառադարձվել է թե՛ աւ. թե՛ օ: Որինակ՝ sol > սօլեր, սալ, օսլոս > սինօս, օսլոս > նօտար, montfort > մունֆորդ, օսետոս > օսետնց, baberon > պապեռան և պապոսն, այսպես էլ՝ տիպան և տիպոն, լադադիաս և լօդօդիաս, ադրիել (< otreier)⁴⁶ և այլն:

Հր. Աճառյանը օ տառի գործածությունը վերագրում է ուղղակի միջնադարին: Աւ-ը բաղաձայնից առաջ դարձել էր օ, ձայնավորից առաջ՝ ալ. ուստի այդ օ-ի համար առանձին տառ էր պետք կամ նշան, որ տարբերեին ու-ից, սկզբում օգտագործեցին օ նշանը, բայց դա երկար էր, ուստի փոխ առան հունարեն օ-ն⁴⁷:

Օ տառի գործածության տարածման սկիզբը որոշելու համար կարևոր ենք համարում բերել նաև հետևյալ փաստը: 1280—1286 թվականների մի ձեռագիր 1848 թ. արտագրել ու հրապարակել է Պողոս Պետրոսյանը, որը հիշյալ ձեռագրում հանդիպած օ-ն ժ-դարի համար «նոր հնարեալ» է համարում:

«Ի ժամանակի գրչությանս երեւի յոյժ նոր հնարեալ տառ օ, որ ուր ուրէք աւ գտանէ դարձուցանէ ի օ, որպէս հօ, նօ, նօօն, այսինքն հաւ, նաւ, նաւան եւ այլն»⁴⁸: Եթե Պետրոսյանը 1280-ական թվականներին օ տառը համարում է «յոյժ նոր հնարեալ», ապա դրա գործածության տարածման սկիզբը մատենագրության մեջ ժ-դարից այն կողմ չի անցնի, ինչպես ասում է Ավետիքյանը: Նույնիսկ ժ-ժ դարերի այն մատյաններում, որոնք դասական շրջանի գործերի արտագրություն են, օրինակ՝ ՄՄ 823 (1266 թ.), 975 (1194 թ.), 468 (ժԲ—ժԳ դար), 1746 (1280 թ.), 1747 (1243 թ.), 777 (ժԲ դար), 2102 (1223 թ.) օ տառին չենք հանդիպում, որովհետև գրիչներն ամեն կերպ աշխատել են հարազատ մնալ նախնաց գրությունը:

Այս տառի գործածությունը բխում է նաև գրչի սկզբունքից և նյութի բովանդակությունից, նաև նրանից, թե տվյալ, գործը, մատյանը դրողի ստեղծագործությունն է, թե՞ արտագրություն է: Մ 416 (1279 թ.) ձեռագրում ընդհանրապես օգտագործված է ա տառակապակցությունը, բայց դեղերի ցուցակում մի քանի օտար բառեր գրված են օ տառով՝ սարգօգալա, տրագօնիս, կօղմօրուէ, սրանց թվում նաև մեր չոք և բարբառային ղոզ բառերը («Հով է և չօր: Աւշնէ—կաղնի ծառին ղօզն»): Բայց սրանք դեղացուցակում են հանդիպում, որ կարող է ուշ գրություն լինել, և ոչ թե բուն շարադրանքում: Հետաքրքիր է, որ շարադրանքում ամենուրեք գրված

է ամենէ, իսկ 29-րդ էջում, հետագա արտագրողը ստղամիջում գրել է օձնէ: Նշանակում է դա ուշ շրջանի արտագրութիւնն է: Կարստը, Աճառյանը գտնում են, որ ձեռագրի ժամանակաշրջանը որոշելու միջոցներից մեկն էլ գրութեան աջգլխի շեղումներն են: Հիշյալ ձեռագրի առաջին էջում կան օձ, օր, շփով գրութիւնները, դրանք էլ, սակայն, նոր են գրված, ժԼ դարում:

Վերը հիշատակված աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ օ տառի գործածութիւնը նկատվում է ԺԱ—ԺԲ դարերից, բայց նրա ընդհանրական կիրառութիւնը սկսվում է ԺԳ դարից: Որինականեր մատենագրութիւնից. «Ըստ այսմ օրինակի արասցեն» (N 488, 1295 թ., էջ 15բ): «Զօրինակս յաւելումք»: «Վարեմք շատորք» (16բ): Հրամանօք, համառօտ, աշխատանօք, մտօք (Գունդըստաբլ, 1264, էջ 15), օտար, օրհնած, հօրն (16), «Օրինաւոր է: Ի շաբաթն օր մի՛ պարոնին բանի» (18): «Ինչո՞ւի գտին ու սուրբրն» (31): N 556 (ԺԳ դար) ձեռագրում՝ լիղատօնի, ծնողացն, վարդապետօք, գողօնս և այլն: N 4066 (1283 թ.) ձեռագրում՝ «շրնորհօքն ողորմութեամբ» (2բ): N 1097 (1280 թ., Եզնիկ) ձեռագրում՝ «Զբիբօքն շողայցեն» (5), «գօրութենէն ճառիցէ» (5): Մաղաքիա Աբեղայի «Վասն ազգին նետողաց» գրքում (ԺԳ դար)՝ «Զօրօք իւրովք զնաց ընդդեմ տաթարին» (6): «Իւրովք աշակերտօքն տարան» (11): «Կոտորելով անխնայ զքննայս և կրօնաւորս» (11), բայց կա նաև՝ «քահանայից և կրօնաւորաց» գրութիւնը (15): «Գ. օր անօթի կենամ» (27): «Մէկ դեօղ թափես հերիք է» (45): «Խօսօք զնացին էլլիքն առ Մանկու դանն» (29): N 57 (ԺԴ դար) ձեռագրից՝ «Ի հօրէն գօրի (=գօրաւարի), «գիտի օգտեաց» (2): «Ըստ Պօղոսի մեզ անծանօթս գոլ» (2): Աղօտ, օրինակաց, յօդի բազմօրհնեալ, ըստ գօրաց, յօրինէ զքահանայապետն (3): «Քօղ ձգեն ի վերայ մեռոնին» (14), կարօղք, օժանդակ, օրէնս: Բայց այստեղ հանդիպում են նաև՝ յաղթող, ծնողացն, աւր, աւժանդակ, արինակ և այլն:

Դժվար չէ նկատել, որ գրիչը տարբերութիւն չի դնում բաղաձայնին նախորդող աւ տառակապակցութեան և օ տառի հնչման միջև: Նույնիսկ միևնույն քառը գրում է մեկ օ-ով, մեկ էլ՝ աւ-ով՝ աւրինակ—օրինակ, աւզնական—օզնական, ծնաւղ—ծնօղ, դիմադրաւղ—դիմադրօղ և այլն:

Հետաքրքիր է, որ ԺԳ դարի N 1746 և 1747 ձեռագրերի բովանդակութիւնը պարունակող ԺԴ դարի N 1748 ձեռագիրը ուղղագրութեամբ տարբերվում է նախորդ երկուսից: Եթե նրանցում օ-ն հազվադեպ է հանդիպում (1280 թ. N 1746 ձեռագրում միայն

մի բառ է օ-ով՝ զօգտակարսն, այն էլ հետագա գրությունն է), ապա № 1748-ում աւ երկբարբառի փոխարեն մեծ մասամբ օ տառն է գրված՝ գիտողին, կարող, բաղկացող, համառօտ, իրօք, օրէնսդիր, կարօտութիւն, յօդի, անծանօթ, համազօրք, օդ, քօղ, շօշափել և այլն: «Ըստ այսմ օրինակի արտաբերի» (5): «Վասն որոյ գիտօղին», «գի արդ ոչ կարող գոյ միտք» (9), «բաղկացող մեզ ենթակա իրն» (12), «համառօտ ասին» (12բ), «նւազ է իրօք» (15բ): «Օրենսդիրքն էին» (16): «Քանզի պարտ է մօրն զայս տեղօք» (24), զառաջածանօթ (25): № 485 (ԺԴ դար) ձեռագրից՝ «Առանց ծնողաց են»: «Մնօղք կենդանի ունիցին» (78): «Վասն թողլոյ լիղատօն» (74), այսպես էլ՝ օր, մօրն, յօժարեցան, պաշտօնեայս, զօրէնս, օրինաւոր, հօրն, զօրութեանց և այլն: «Զսայ փցուն և դողդոջեալ ձեռօք» (1303 թ. հաշ., Հիշ., 18): «Զխելաց զօրութիւնն տանի»: «Յօրինակն տար»: «Յիշեցէք յաղօթս ձեր, ի մաքրափայլ յաղօթ» ձեր, սրտի մտօք» (1303 թ. ն. տ.): «Զաւրաւիգ եւ օգնական ունելով զսբ նշանս հոտակերաց: Նախնիքն իմ զօրացան» (1300 թ. Քար., 18 նաև՝ Դիվ., III, 208): «Եթող սուգ մեծ ի վր ծնողաց»: «Մեր տեսեալ զթախանձ ծնողաց» (1315 թ., Мapp, 11): Ավելորդ չենք համարում ավելացնել, որ շատ ձեռագրերում պահպանվում է ավանդական ավ-ով գրությունը: Օրինակ՝ № 2371 ձեռագրում, որ քերականական աշխատությունների ժողովածու է և պարունակում է Վարդան Արեւելցու, Արիստակէս Գրիչի և ուրիշների գործերը, օգտագործված է միայն աւ տառակապակցութիւնը, և օ տառին չենք հանդիպում:

ԺԵ դարից. № 415 ձեռագրում (1466 թ.) պատահում են՝ զօրութիւն, մօտ, նօսը, օգտակար, օձ, շօշափես, նօթութենէ, հօքն, օր, զօդուածն և այլն: «Այս բոլորօ ցուցանէ, թէ այս գիրքս որչափ զօրութիւն ունի» (1): «Բուսնի միս մօտ ի յայն ակռայն» (58բ): «Նայ լինի նօսը» (67): «Օգտակար են մարմնոյն» (80): «Օձն էր անկեալ ի ներս» (82): «Յերփ շօշափես, տաք լինի» (82) և այլն:

№ 266 (1484 թ.) ձեռագրում՝ անամօթ, անշօշափելի, ուրացօղ, օրն, աղօթից, օծնէ և այլն: Ենթակայական դերբայն այս ձեռագրում հանդիպում է նաև ող, աղ վերջավորութիւնով՝ հետևող, սիրող, բուժող, դաւաճանաւղ, խարդախաւղ, հակառակաւղ, բաժանաւղ և այլն: № 994 (1409 թ.) ձեռագրում՝ միամօր, այսօր, արհամարհանօք նաև՝ կաշիկ, կարաւտացար, ծնաւդին, յաղթող, զրստացող և այլն: «Ի փրկութիւն հոգո եղբար իւրոյ Դանէլին եւ հօրեղբար իւրո, թվ. ՊԶԲ»—1423 (Դիվ, II, 110): Լ. հաշիկյանի «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» Ա և Բ մասերում

(1400—1480 թթ.) օ հնչող և տառակապակցութիւնը պահպանված է 717 բառում, ըստ որում և՛ բառասկզբում (աւրինակ, աւուրձ, աւգուտ, աւրհնեալ և այլն), և՛ բառամիջում (յաղաւթս, անաւրէն, զաւրութիւն, կարճառատ և այլն), 932 բառում նրա փոխարեն օգտագործված է օ տառը՝ բառասկզբում (օր, օրհնեալք, օգտին, օհան և այլն), բառամիջում (մօր, հօր, յաղօթս, զկարօտութիւն, զօրօք, և այլն), բառավերջին վանկում, գործիական հոլովի և ենթակայական դերբայի կազմում (մտօքն, ծնողօք, ազգականօք, զստացող, զծնող և այլն); 252 ենթակայական դերբայի վերջավորութիւն արտահայտված է ող տառակապակցութեամբ (յիշողացող, հուսացողացող, ամենակարող, ստացող, ծաղկող, գծագրող և այլն): Այս դերբայի ուղղագրութեան առթիւ Արիստակես Գրիշը ցուցում է տալիս, որ ուղիղ ձևում գրեն ևս զ վերջավորութեամբ, իսկ թեք ձևովում՝ ող (արբեցաւղ—արբեցողաց, աւցտաւղ—աւցտողաց, ազդաւղ—ազդողութիւն): Բայց, ինչպես երևում է մեր բերած օրինակներից, այդ կանոնը չի պահպանվում:

Օհնչյուն և տառակապակցութեան և ո. օ տառերի միմյանց փոխարեն գործածելը շարունակվում է նաև ԺԶ—ԺԷ դարերում, մինչև ԺԸ դարի կեսերը, երբ տպագրութեան շնորհիւ և Մխիթարյանների ոչ պակաս ջանքերով որոշ ժամանակահատվածում կայունացավ մեր ուղղագրութիւնը:

Օրինակներ ԺԶ դարից: «Պարզատումար»-ում (1512) պատահում են՝ գոգոզ, բարեխօս, անօթեց, հզօր, զօրք, հարկօք, օր, կօլընճի, ընչօք գրութիւնները: Հովհ. Տերզնցու «Տոմար Գրիգորեան» (1587) գրքում՝ օրինօք, տօմար, ամօթէ, Պօղոս, ֆլօրա, օր, հօր և այլն: Թեև կան նաև՝ ճրգաւր, ըզտաւնիցն ձևերը: Հովասափ Սեբաստացին, որ ԺԶ դարի հայ նշանավոր գրողներից ու գրագետներից մեկն էր, իր բանաստեղծութիւններում բաղաձայնանախորդ և տառակապակցութեան հետ զուգընթաց օգտագործում է նաև օ տառը: Այս բանը ներածական մասում հիշատակում է նաև ինքը՝ Սեբաստացու բանաստեղծութիւնների քննական բնագիրը կազմող ու ծանոթագրող Վ. Գևորգյանը: Բերենք օրինակներ այդ գրքից⁴⁹: «Անուշ խօսքտ ում հանդիպի» (73): «Այսաւր տեսա զինք զարդարած» (72), աղաթիւք, (76), մսօք, խելօք, մտօք և այլն: Հետևելով ընդունված ուղղագրութեանը գրում է՝ ստեղծաւոն (114) և՛ ծնողիւն (108): 1565 թ. հիշյալ սաղմոսարանում գրված է՝ «Գնան յանօրէնութեան», «զօրացոյ զայս» (224): «Մինչև երբ բարկանաս յաղօթս ծառայից քոց» (286, 288) և այլն: «Կանգնեաց սբ յեկեղեցիս տր Լուստակէսն յիշատակ յփռոյն իւր եւ ծնողաց իւրոց, թվին ՌԼԸ»—1589 (Դիվ, II, 142):

Ժէ դարից: Շնորհալու 1643 թ. «Յս որդի» գրքում՝ աղոթիւք, օծցես, հօգորիդ, համբերող, հօրն, կառօք, օրինի, թօթափեցին, զօրութիւնք, դնօղն, թեօք, շնորհօք, զհօտն, հովուօք, ալեօք, օրհասն, Պօղոս և այլն:

Քանի գնում օ տառն ավելի է իր դիրքերն ամրացնում, ավելի է տարածվում: Դա այնքան ուժեղ է արտահայտվում, որ Ժէ դարում արդեն օ հնչյուն ունեցող ևս տառակապակցությունն է հազվադեպ հանդիպում, ամենուրեք նրա տեղը զրավում է օ տառը: Օրինակ՝ Ոսկան Երևանցու քերականության մեջ (1666) օհնչոն ևսին համարյա լրիվ օ-ն է փոխարինել: Այդտեղ օ հնչյունն արտահայտված է ո և օ տառերով:

«Արհեստ համարողութեան» գրքում (1675), որի առաջաբանում հեղինակը նշում է, թե «աշխարհականօրէն շարագրեցեալք», գերազանցապես օ տառն է օգտագործված օհնչուն ևս-ի փոխարեն (զվայելօղս, ի յաղօթս, բաժանօղս, բազմացնօղս, աշխարհականօրէն, օրինակումս, խօսիլ, օր, օխայով և այլն): Այդ տառն է օգտագործված Զաքարիա Ագուլեցու օրագրում (Ժէ դար)՝ օգոստոս, պաղատանօք, բովանդակ, խօջայ, օվի, ըստմբօլ, զօրօք, հօր, մօր և այլն, 1687 թվականի № 8443 ձեռագրում՝ քոշկուսարայ, մեղօք, քերօբէք, սերօբէք, բարեխօս, տօնողացն, օրհնութեամբ, աղօթի, օր, փառօք, ամօթի, ի զօրութենէ, կօշիկ, կարօտ և այլն: 1687 թ. լույս տեսած «Պարզաբանութիւն հոգեհոսագ սաղմոսացն Դաւթի մարգարէի» գրքում, ուր օ-ով է զրված հոգեակի թվի գործիական հոլովի վերջավորությունը (շնորհօք, թախանձանօք), ենթակայական դերբայի վերջավորությունը (պաշտօղքն, կարօղ, դնօղ, սաստօղ) և այլ բառեր (զօրեղ, օգտի, օժանդակ, կարօտ, պարզախօս, տօն, օրէնք և այլն): № 607 ձեռագրում (Ժէ դար)՝ հարկանօղ, մնացեալօվքս, աղօթիք, ժողօվուրդ, օգտակար, պահօք, փարաւօն, շօշափելի, շարժօղ, համբերօղ և այլն:

«Ես խօճայ Թէհօտս վախմ տվի... յիշատակ ինձ, հօրն՝ Բայսօղօլին և մօրն՝ Թէթրօին, ևղբօրն Խտրին, Ռօտէվանին: Փվ. ՌՃԴ» — 1655 (Հաղբ, 224): Աղաչեմ յ(ա)ղօթս ի մէջ տաճ(ա)րիս յ(ի)շելի ղծնօղսս (1676 թ., Դիվ, II, 58):

Օհնչյուն ևս տառակապակցության փոխարեն գերազանցապես տառն է օգտագործված ուշ միջնադարի գրեթե բոլոր տպագիր գործերում՝ և՛ գրաբար, և՛ միջին հայերեն, և՛ աշխարհաբարախառն լեզվով գրված, անկախ գրքի բովանդակած նյութից՝ կրօնական, պատմաբանական, բժշկական, թվաբանական և այլն: Օրինակ՝ «Առաւել պարզաբանութիւն» գրքում (1630)՝ խօստովանիլ, օրի-

նակ, աշխատանք, բովանդակ, զօրութիւն, առաւօտ, զօրութեամբ, հօր, շնորհօք, հօգով, փօրց և այլն, «*Խորհրդատետր պատարագին Հայոց»* գրքում (1641)՝ պաշտօն, փառք, շնորհօք, փրկող, հօր, հօր, տեսանողք, զաղօթս, յօրինող, պատերազմող և այլն: «*Նորագոյն ծաղիկ զօրութեան»* (1685) մեջ՝ ծնողք, օթեանել, յաղօթս, ամենագօրին, ծանօթութիւն, շօշափուկ և այլն: Ղուկաս Վանանդեցու «*Գանձ շափոյ...*» (1699) գրքում՝ արօտ, մրգօք, բնակօղքն, հօր, բազմացնող և այլն: Խաչատուր Արղրումեցու «*Գիրք քերականութեանց»* (1696) մեջ՝ քերթող, ստացողն, անօգուտ, անծանօթ, արդեօք, խօսս, զօրութիւն, զորօրինակ և այլն: Կիրակոս Գանձակեցու Պատմության քննական տեքստը կազմող պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը գրքի ներածականում գրում է, թե մոսկովյան-թիֆլիսյան քննարկածներն ավելի հնատիպ են, քանի որ պահպանել են աւ (փոխ. օ), եւ (փոխ. իւ), եւ, եին (փոխ. էր, էին), այդ և այլ ձևերը: Գրության այդ ձևերի պահպանությունը Գանձակեցու ձեռագրի ժՁ—ԺԷ դարերի ընդօրինակություններում վկայում է, որ Գանձակեցին հենց այդպես էլ գրել է, դրանից էլ Մելիք-Օհանջանյանը հղրակացնում է, որ ԺԳ դարում շատ է տարածված եղել հին ուղղագրությունը: Նույնիսկ պատմիչը իր անունը գրում է «Կիրակոս» ձևով: Գանձակեցու վենետիկյան հրատարակություններում Ալիշանը սրբագրել է պատմագրին, ուղղագրական շտկումներ կատարել, մի բան, որ տեսանք նաև վերևում: Գանձակեցու Պատմության Ա ձեռագրում (1594 թ.), սակայն, կան թե՛ օ-ով, թե՛ աւ-ով գրություններ, Ը ձեռագրում (1666 թ.) համատարած օ է հանդիպում, մեկ-մեկ էլ՝ աւ, նույնը և Ո (ԺԸ դար) ձեռագրում:

Ոպտակար, կողմնորոշող տեղեկություն է մեզ տալիս միևնույն մատյանի տարբեր ժամանակների ձեռագրերի համեմատությունը: Եղիշեի «*Պատմության»* 1174 թ. ձեռագրում (N 1890) օգտագործված է միայն աւ տառակապակցությունը, իսկ 1569 թ. ձեռագրում (N 1920) բաղաձայնին նախորդող աւ տառակապակցության փոխարեն հաճախ օգտագործված է օ տառը: Պատմահայր Խորենացու «*Հայոց պատմութիւնը»* N 2865 ձեռագրում, ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը, տարբեր գրիչների ձեռքով է գրված, տարբեր ժամանակներում: Մի մասը համարվում է ԺԳ—ԺԴ դարերի գրություն, մյուսը՝ ԺՁ (արտագրողի կողմից թվագրված է 1565 թ.): Հին ձեռագրում բաղաձայնին նախորդող դիրքում գերազանցապես աւ տառակապակցությունն է հանդիպում, իսկ նորում այն փոխարինված է օ տառով: Օրինակներ հնից՝ «*Հաւշելով վարակս արեան ի վայր հոսեցուցաք, զինչ աւգուտ ինձ»*: «*Աւգնականութեան յայ-*

սոսիկ արգտակարագոյն բանս մտածութի» (28): «Ապա թե բոց ունէր մարութս» (31բ): Մանաւթութիւն, արժանդակ, աստանար, արգոստոս, զարք և այլն: Նորից՝ «Գտանէ զՕտայ՝ սնուցեալ զքոյո իւր Խոսրովիդուխտ յօգնական վիրաւորաց» (81): «Տայ զսպարապետութիւն զօրացն հայոց» (81): «Բազում վիրօք, ծնողաց իւրոց» (100), «Ընդ հօր և այլ օտար» (107ա): «Շողեր զօրինակ յԱղրիանուպօլիս»: «Հզօր զնդան զօրուն պարսից»: «Ղօղկել ուրեք օրինակաւ» (107բ) և այլն: Հնում՝ հաւր, եղբար, զբաւթ, ընտանեալքն, զարք, նորում՝ սպառնալեօք, անարգանօք, խօսեցաւ, օգնեսցէ, մեծատանօք և այլն: Ստացվել է միևնույն մատչանում միևնույն բառի երկակի գրություն՝ աւ-ով և օ-ով (զարք—զօրք, արգոստ—օգոստ, խաւսիք—չարախօսէին, արտար—օտար, զայսար զօր, արգնականութեան—օգնականութեան, ծանօթ—ծանաւթութիւն, զարավիւզն—զօրաւիգն, մատաւորաց—մօտաւորաց, եղբար—եղբօրէն և այլն):

Այս բոլորին պիտի ավելացնել նաև օտարազգի բառերում օ տառի կիրառությունը: ԺԳ—ԺԷ դարերում համարյա օրինականացված, կանոն դարձած սովորություն էր. փոխառյալ բառերում օտարազգի օ հնչույթն արտահայտում էին օ տառով: Օրինակներ՝ Պօղոս, Պօլիս, գօնտօֆրէ, Սօֆի, Մօսկօվ, Լստամբօլ, Ամի-դօլ, դօմինիկոս, Բօնօֆացիոս, Սիօն, Ֆլօր, Շամօն, սօլթան, Գօրգի (ԺԴ դ. Խաչ), Լստամպօլ, Լօմպիաս, յօշինթոս (ԺԷ դար, № 1749), Ռօվալն, Գրօս, Յրանկֆօրտ, Գրօտ, Կօմպայնուց, բանքօ, Լիվօնօ, Լօնդրա, Համբօրգ, Լիգբօն, Թևտօն, Դօշ, Լսկլաւօն, Նօրվէգի, Յւրօպա («Գանձ շափոյ»):

Հովհաննէս Կոստանդնուպօլսեցին «Զտութիւն հայկաբանութեան» մեջ ամենուրեք օտարազգի օ հնչույթը հայերեն տառադարձում է օ տառով՝ nox>նօքս «գիշեր», moeror>մէրօր «տխրութիւն», leo>լէօ «առիծ», pons>փօնս «կամուրջ», oratio>օրացիօ «աղոթք», թեև Athos-ը գրում է Աթոս, Helicon-ը՝ Հէլիքոն: Զմոռանանք ասել, որ Հովհաննէս Կոստանդնուպօլսեցին ընդհանրապես օգտագործում է օ տառը:

Այսպիսով՝ հնագույն շրջանից բաղաձայնանախորդ աւ տառակապակցությունը, որ դասական գրաբարում երկբարբառ էր (aw). սկսել է օ հնչել: ԺԲ դարում այդ հնչումն այնքան էր տարածվել, որ կարիք զգացվեց առանձին գծանշանով զանազանել, և վերջրեցին հունարեն օ տառը: ԺԲ դարից օ հնչյունն սկսեց արտահայտվել աւ, օ, ո տառերով, առաջին երկուսն օգտագործում էին բաղաձայնին նախորդող դիրքում, իսկ ո-ն՝ իր հին գործածությամբ:

Այդ օ-ն արագ տարածվում է նախկին երկբարձառային ա-ի փոխարեն և ժէ դարում ամենուրեք բռնում է նրա տեղը: Նույնիսկ ավետարան արտագրողը աւ-ն փոխում էր օ-ով: Ս-ով են արտահայտում նաև օտարազգի օ հնչյունը: Այսպիսով, խախտվում է օ հնչյունի դասական գրությունը, ու տառի կողքին ավելանում են աւ-ն ու օ-ն, որ բխում էր ժամանակի արտասանությունից: Գրողից պահանջվում էր տարբերել օ և ո տառերի գրության տեղը: Սրան ավելանում է և այն հանգամանքը, որ միջնադարում լեզվաբանների վկայությամբ ո-ն բառասկզբում սկսել էր ոօ հնչել: Բառամիջում էլ ո-ն այսօրվա օ-ի նման չէր հնչում, այլ՝ ու-ին մոտիկ: Դեռ XIII դարի մտածող Վարդան Արևելցին, որին Կարստը համարում է արևելահայերենի նախակարապետը, գրել է, որ բառասկզբում ո-ն ոօ է կարդացվում (ձեռ. № 2371): Այս մասին հիշատակում է պրոֆ. Զահուկյանն իր հիշյալ գրքում (էջ 251): Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» II մասում գրում է, թե միջին հայերենում միավանկ բառերի սկզբում ո-ն ոօ էր հնչում, իսկ բազմավանկ բառերի սկզբում և բառամիջում՝ օ: Օրինակ՝ ուր-ը կարդացել են ոօր, ուրբ-ը՝ vorb, ոխ-ը՝ vox, իսկ ուրբեր-ը՝ orber (անդ, էջ 239): Կարստը նույնպես գրում է, որ միջին հայերենում ո-ն սովորական օ ձայնը չունի, շատ անգամ օ-ի և ո-ի միջինն է, բաց օ: Օտարազգի Rupinns բառը կիլիկյան հայերենում դառնում է Ռոբեն, Gurchus -ը՝ Կոռիկոս, հին ֆրանսերեն bouteille -ը՝ պողիեր, compte -ն՝ գունթ, chalonge-ն՝ ջալունջ, բայց նաև՝ baron -ը՝ պարոն, caperon -ը՝ չաբրոն: Ուրեմն օո արտահայտվել է թե՛ օև, թե՛ ուն տառակապակցություններով: Մի կողմից montfort-ի դիմաց գրել են մունֆորտ, մյուս կողմից՝ յուֆորոս -ի դիմաց՝ սինոս, losselin -ի դիմաց՝ ձօսլին⁵⁰:

Պետք է նշել, որ միջնադարում բառասկզբում չենք հանդիպում ո տառի փոխարեն վո, վօ սխալագրությունների, որով կերևար, որ բառասկզբում ո-ն վօ է կարդացվել: Կարստը, Աճառյանը այս մասին խոսում են՝ ելնելով տառադարձությունից և միջնադարի քերականների (Վարդան Արևելցի) վկայություններից կամ արդի արտասանությունից:

Կղեմես Գալանոսը իր քերականության մեջ պահանջում է պահպանել բառի աճման դեպքում կատարվող օղ>ող հնչյունափոխության կանոնը և գրել ծնօղ. բայց՝ ծնողաց: «Օ փոխադրի յո, սիբար՝ սիրօղ—սիրողի, լսօղ—լսողի, ամենակարօղ—ամենակարողի—ամենակարողութիւն», այդպես էլ՝ ըմբռնողական, իմացողական, իմացողութիւն, կազմողական, կարողութիւն, արարողութիւն, շարժողական և այլն: «Սխալ է նոցա, որ սիրող գրեն և ոչ սիրօղ

(էջ 7): Բայց Գալանոսի այս զգուշացումը մեր կարծիքով բխում է ոչ թե նրանից, որ նա ու կ ո տառերի հնչման տարբերություն է տեսնում բառամիջում, այլ նրանից, որ ուզում է հետևել Արիստակեսի սահմանած կանոնին, ըստ որի՝ բառի ուղիղ ձևում գրվում էր աւղ (ծնաւղ), իսկ թեք ձևում՝ ող (ծնողաց): Մեր կարծիքով՝ բառամիջում ո—ո-ի միջև տարբերություն չի եղել, այդ էն ցույց տալիս այն բազմաթիվ շեղումները գրավորում, որ կտեսնենք հաջորդ էջերում:

Ո տառի բառասկզբի և բառամիջի արտասանական տարբերությունները շատ թյուրիմացությունների և ուղղագրական շեղումների տեղիք են տվել: Ի՞նչ շեղումներ են դրանք:

1. Շատ գրիչներ չեն ջոկում օ հնչող ա տառակապակցությունը (զար>զօր) ձայնավորից ու բաղաձայնից կազմված ա տառակապակցությունից (աղանի, աւաղ), որի հետևանքով հաճախ վերջինիս փոխարեն, որ հնչում է av, գրում են օ. Թագաւոր, լաւ, ցաւ, բաւական գրելու փոխարեն գրում են Թագօր, լւ, ցօ, բօական: Օրինակներ. «Ոչ գիտէք գիտորհուրդ Թագօրի» (1283 թ., N 4066, 392): «Արդարացուցէ զպարտօրն» (ԺԴ դար, N 485, 54): «Եթէ գիրօն և զարդարն խնդրէ դատաստանն» (85բ): «Բնօին ոչ էր կարծիս» (119բ): «Ի մերձօրաց շիշխէ հեռացուցանել զհող» (122բ): «Յաւիտեանս յօիտենից ամէն» (141բ): Պարզ է, որ երկու դեպքում էլ գրիչը av է կարդում, hoityan չի կարդում: Օ, ո տառերը շփոթելու բնորոշ օրինակ է այս ձեռագրում հանդիպող հօւ բառակեր, հօր կամ հաւր ձևերի փոխարեն՝ «Գոդանան զինչս հօւ իւրեանց» (176), ուր գրիչը տառի կեսը նոր ուղղագրության համաձայն է գրել, կեսը՝ հին: N 57 ձեռագրում (ԺԴ դար) նույնպես միևնույն բառը միևնույն նախադասության մեջ թե՛ աւ—ով է գրված, թե՛ օ—ով: Օրինակ՝ «Աւաւղ, սօւղ զի հայածես զիս» (167), նման N 485 ձեռագրի «յաւիտեանս յօիտենից» գրության: Այսպիսի շեղումներ կան N 415 (1466 թ.) ձեռագրում՝ «Մեռաւ կարօտեալ ջրի և ալ ծարօս» (82): «Նեղութիւն լինի և օտրումն քաղաքաց գլխօրաց» (218բ), «շնահօորէ: Թէ արեգակն խօաբի» (219): «Տարին արդիւնօր լինի» (220): N 108 (1322 թ.) ձեռագրում՝ «Ահա խաղացօ» (14բ): «Ի դիւացն լկեցօ» (252բ): «Գոչեմ որպէս զմաքսօրն» (270): «Արբո զծարօաց» (270): «Արժանօրեա զիս, երկնօրիս» (273): N 266 (1484 թ.) ձեռագրում՝ առօել, դարօանդ, որդի աղօնոյ (127բ), Թագօր, անիրօութիւն, հօատով (157) և այլն:

ԺԵ դարի հիշատակարաններում՝ «Ի ծագմանէ բանին աստուծոյ լուսօրեալ» (Խաչ, 15): «Զանունս միայն ունիմ կրօնօրի»

(անդ, 15): «Տէրն այց առնէ մեղօորիս» (27): «Յիշեսցիք ի մեղ-սաքօիշ յաղօթս զԹումայ», «ի թվին Հայոց ՊԼԵ (1386) Լանկ Թա-մուրն եկն ի Թաւրէզ և Նախջուան և անտի կալօ մինչև Կարս և ի Բճնի, ի Գառնի և ի Սուրմարի, ի Կողբ: Յօուր աւագ զատկին ել ի Սիւնիս: Խսատեաց զնա զօուրս քսան և հինգ և առել զնա յօուր ԻԶ (26)» (անդ, 52):

Ինչպէս արդեն ասել ենք, Նղիշէի Պատմության 1174 թ. ձե-ռագրում (№ 1890) օ տառի շէնք հանդիպում, իսկ 1569 թ. ձե-ռագրում (№ 1920) ամենուրեք օ տառն է և նույնիսկ ոչ տեղին կի-րառված: Առաջինի՝ փառաւորաւն, անձաւացեաց ձեւերը երկրոր-դում դարձել են փառօրօն, անձօացեաց: Այստեղ հանդիպում են՝ մեծօ, Շօասպ, փութացօ, օերէր, զօառս, դարձօ, զիջօ, կարօանին, գրօեալ, խօարշտին, օուրս և այլն: Այս ձեւը (Դօիթ, բօիդ, ծարօ) պրոֆ. Ա. Աբրահամյանը հիշյալ հոգւածում համարում է գրային բաղարկության հետեանք: Հնչումը պահպանվել է, Դօիթ-ը Davith են կարգում և ոչ թե Doith, տառերն են միայն շփոթվել: Գրու-թյան այս շեղումը շարունակվում է նաև ուշ միջնադարում:

«Պարգատումարի» (1512) 86 էջում գրված է՝ «Մեղր սակօ լինի», իսկ 86բ-ում՝ սակաւ: «Մանր ժամանակագրություններ»-ում հանդիպում են՝ սպանօ, թագօորաց, նստօ, փոխեցօ, մեռօ և այլն: Շնորհալու «Յս որդի» գրքում (1643 թ.) «Զ լուսաւորք խօարանան» (էջ ՆԺԲ): «Դուռն դժոխոց խորտակեցօ» (ՆԻ): Աստանաւր սկզբնօ-որեալ բանի» (էջ, ՆԻԶ) և այլն: Հենց այս նշանը (—) վկայում է, որ Շնորհալին տվյալ դեպքում օ-ն ավ է կարգացել:

1565 թ. լույս տեսած Սաղմոսարանում՝ անիրօութին. թերայ-հօատութին, թագօորս, նալեցօ, մեղօորի և այլն:

Մառ Այգեկցու առակների վերը հիշատակված բնդարձակ ուսումնաօրության մեջ, անդրադառնալով ուղղագրության հար-ցերին, նշում է, որ Շ ձեռագրի (Ժէ դար) գրիչը հաճախ ձայնա-վորի ու բաղաձայնի աւ (av) տառակապակցության փոխարեն օգ-տագործում է օ տառը և բերում է օրինակներ՝ անշնչացօ, հանդի-պեցօ, ձանձրացօ, յարեօ, ելօ, փախօ, հպարտացօ, անհօատարմու-թին, միօորին և այլն: Նույնը տեսնում ենք նաև Ն ձեռագրում (1666 թ.)՝ բնօ, յարեօ, փախեօ, զլարօ, քաղցեօ, ծնօ, մեռօ, հասօ, իրօունք, կտօէ, մեղօորաց, փառօրեալ, զօառիս և այլն⁵¹:

Հովասափ Սեբաստացու (ԺԶ դար) բանաստեղծությունների հիշյալ գրքում հանդիպում են՝ գովեցօ, հանճարօր (էջ 92—97), փառօրեմք (101), սակօ (65), ծաղկածօալ (66) և այլն: № 1887 ձեռագրում (Ժէ դար)՝ երկնօոր, կարքօոր և այլն:

Ուղղագրական այս շեղումը նկատել են ժամանակի քերականության գրքերի հեղինակները և զգուշացրել են գրիչներին: Օրինակ, Գալանոսը իր քերականության մեջ զգուշացնում է՝ չշփոթել ձայնավորի ու բաղաձայնի աւ տառակապակցությունը օ հնչող աւ-ի հետ և աւ (av)-ի փոխարեն օ շգրել: Պահանջում է գրել աղանի և ոչ՝ աղօնի. Դաւրի և ոչ՝ Դօրի (էջ 7):

2. Չեն տարբերում, թե որտեղ կարելի է օ գրել, որտեղ ա. խառնում են նրանց գրության տեղերը: Երբեմն միեւնույն բառում, միեւնույն դիրքում հանդիպում է թե՛ ա, թե՛ օ. նույնիսկ՝ աւ: Լ. Խաչիկյանի հրատարակած ԺԾ դարի հիշատակարաններում հանդիպում են կրոնատոր (փոխ. կրանատոր, կրօնատոր), եղրոր (փոխ. եղբար, եղբօր) ձևերը: «Յիշեսցիք զեղրայր կրոնատոր» (Խաչ, 136): «Եջրորն հիշատակ» (Խաչ, 226): Գրում են՝ Սիմէոն և Սիմէօն. վանօրայս և վանորայս: Այս նշանակում է, որ բառամիջում ո և օ տառերի հնչումը նույնն է, գրողները զրանք իրարից չեն տարբերում: Այլ կերպ ինչպե՞ս բացատրել, որ հաճախ գոյականի եզակի թվի գործիական հոլովի վերջավորությունը նույնպես օվ-ով են գրում: Օրինակ՝ «Զտկարս մարմնօվ և դմեռեալս հոգօվ» (Խաչ, 15): «Բաղդատ ճոթն էլ քուռօվ կու խօսին» (1687, № 8443, 158): Օրերօվն (անդ, 223բ): Կամ Գոհաւ անունը գրում են նաև Գօհաւ. երբեմն էլ Դաւհաւ ձևով: «ԶԳաւհար մելիքն» (Խաչ, 81): № 266 ձեռագրում հանդիպում են ցօվ, օվ գրությունները: «Զրօվն ծեփարա» (էջ 203): «Օվ գայս ուտէ», «Օվ գայս առնու»: «Օվ գինքն առնու» (անդ, 295):

Արարատյան բարբառում լաաշ բառի լօշ (լոշ) ձևն է տարածված, որ լաաշացել է լաաշ > լաւշ > լօշ փոփոխությամբ: Խաչիկյանի հիշյալ հիշատակարաններում (ԺԾ դար) հանդիպում ենք թե՛ լաւշ, թե՛ լօշ ձևերին: Օրինակ՝ «Յամէն օր ինձ Ժ (10) լաւշ կու բերէր» (292), իսկ 87-րդ էջում գրված է «լօշ»: Երբեմն բառավերջում էլ են օ գրում՝ զեօ, ուղօ և այլն:

3. Ու տառի փոխարեն գրում են աւ տառակապակցությունը: Այս տեսակետից բնորոշ է Ռիմսլայի Բառգիրքը (1633), ուր գրեթե բոլոր ո տառերը, անկախ դիրքից ու հնչումից, փոխարինված են աւ-ով: Նա գրում է՝ լաւղ, լաւղնորդ, խաւշոր, խաւհօւրդ, կաւխել, հաւրդ, մաւրեխ, մաւրթ, մաւմ, կաւկեմ, Սաւկարտ, Սաւղալ, փաւշի, փաւրել, փաւխել, փաւրձել, գաւրձ, դաւրծատուն, գաւվ, նույնիսկ՝ դաւցա, դաւրա, դաւղալ, գաւացուցել, ժաւղաւարան: Ամենուրեք ո-ն աւ-ով փոխարինելու հետեւանքով և վ տառերն իրար կողքի են ընկնում՝ գաւվանալ, հաւվիվ, թաւվիշ, ժաւղաւել, ժաւղաւարան և այլն:

Այլ օրինակներ՝ զԹարոսս (փոխ. Թորոսս) (հաշ, 441), զՀա-
ռոփսեմն (հաշ, 611), վերքստին նաւրադել (հաշ, 318): Աւար-
տեցաւ ի գեղանունս յԱշական (հաշ, 162): Զտէր Մեսրապ (հաշ.
630), նույն էջում նաև՝ Մեսրոպա ձեն է գրված, իսկ հնագույն
ձեն է Մեսրոպ: «Աստուածարնակ վանօրէիցս Մեծաւփա» (փոխ.
Մեծոփայ) (հաշ, 379): Այդպես էլ՝ կուսակրան Աւբէնդիոս (19),
Անոփրիոս, Աբսէնդ (նաև Օրսենտ) (հաշ, 459—460) և այլն, բո-
լորն էլ ժն դարից:

4. Բառասկզբի ո տառի փոխարեն, որ արդեն վօ է արտա-
սանվում, նույնպես երբեմն հանդիպում է աւ տառակապակցու-
թյունը: Քանի որ բառասկզբում ո-ն օ են արտասանում, այն փո-
խարինում են աւ-ով: Նթե ոտ բառը vot կարդան, չեն կարող աւտ
գրել, որովհետև աւ-ը օ է, նշանակում է օտ են արտասանել, աւտ
գրել: Այդ է պատճառը, որ գրում են՝ աւսոխ, ախակալ, աւրովայն,
աւտնին, փոխանակ՝ ոսոխ, ռխակալ, որովայն, ոտնին: Օրինակ-
ներ. «Վատ է արովայնն» (N 415, 1466, 78): Այս ձեռագրի գրիչը
բառամիջի ո-ն նույնպես երբեմն վօ է կարդում, ուստի գրում է՝
«Աւգաէ ուոեցորին» (61), փոխանակ՝ ուոեցորին: Թեև դա կարող
է նաև բարբառային հնչման հետևանք լինել, սեփօրին ասում
է, ուոեցորին էլ գրում: Գրիգորիսի բժշկարանի A ձեռագիր տար-
բերակում հանդիպում ենք աւղնաշարին, աւտնին, աւրովանն, իսկ
A տարբերակը մեր հիշատակած N 415 (1466) ձեռագիրն է:

Այդպիսի ձևեր հանդիպում են նաև «Տոմար Գրիգորեան»
(1587) գրքում: Օրինակ՝ «Դարձեալ ևս օրաւնել պարտեմք» (25):
«Հին և նորս արօնելով» (3): Ռիվոլայի հիշյալ Բառգրքում՝ աւրդի,
աւրոնել, աւրոտ, աւակի (փոխանակ՝ որդի, որոնել, որոտ, ոսկի):
Ռիվոլան օտար անունները, որ ընդունված էր օ-ով գրել, նույնպես
աւ-ով է գրում՝ Մաւսկով, Մաւսկովցի, Հոաւմ: Այս վերջին ձևին
հանդիպում ենք նաև «Մանր ժամանակադրության» մեջ՝ «Հաւ-
ռամկայն էաո» (էջ 106):

Ինչպես նկատել է Ա. Բագրատունին, այս բոլոր շեղումներում
չի պատահում, որ օ հնչող աւ տառակապակցության փոխարեն ավ
գրված լինի: Այդ են վկայում նաև մեր բերած օրինակները: Նույ-
նիսկ վրիպակի կարգով չեն հանդիպում, ասենք, ավր (օր),
ավրհնել, տավն և նման ձևեր: Դա նրանից է, որ ավ-ը միշտ հան-
դես է գալիս իբրև ձայնավորի ու բաղաձայնի տառակապակցու-
թյուն, իսկ աւ-ը թե՛ այդպիսին է, թե՛ ձայնավոր օ: Վ տառը ամե-
նուրեք բաղաձայն է, իսկ ա-ն՝ և՛ բաղաձայն է, և՛ երկբարբառի
բաղադրիչ ձայնորդ:

Աճառյանը գրում է, թե օ հնչվող աւ-ը և ձայնավորի ու բա-

ղաձայնի աւ տառակապակցութիւնը իրարից տարբերելու համար որոշեցին ձայնավորին նախորդող աւ (av) տառակապակցութեան լ-ի վրա դնել թավացման նշան, իսկ բաղաձայնին նախորդող օ հնչող աւ-ի վրա՝ պտուկած ութի (∞) նշան: «Բայց որովհետեւ այս նշաններն ավելի երկար էին, ուստի վճռեցին, շատ իրավացի կերպով, առաջինը պահել անփոփոխ աւ, երկրորդի համար փոխ առնել հռն. օ տառը»⁵³: Սա, իհարկեւ, տրամաբանական է և հավանական: Բայց մեր կարդացած ձեռագրերում, վիմագրութեան մեջ չի նկատվել, որ այդ նշանները (∞ կամ $\sim$) ժամանակով նախորդած լինեն օ տառին: Դրանք՝ այդ նշաններն ու օ տառը, միաժամանակ են հանդես գալիս: Մինչև ժԲ դարը ոչ այդ նշաններին ենք հանդիպել, ոչ էլ օ տառին, թեև մեր բերած օրինակները վկայում են, որ աւ-ը բաղաձայնին նախորդող վիճակում վաղուց էր օ հնչյունի փոխվել, և գրչութեան մեջ հանդիպում էին աւ—ո զուգահեռ գրութիւնները:

Ամենատարածված նշաններն էին՝ ∞ և $\sim$: Եթե աւ-ը պիտի օ կարդացվեր, վրան դնում էին ∞ կամ $\sim$ նշանը, իսկ եթե ավ՝ $\sim$ նշանը: Օրինակները. Աւգոստինյան, աւգուստ, աշխարհականաւք, աւրինաց, բայց՝ ասաւ ($\mathcal{N}$ 556, ԺԳ դար): Այս նշանի (∞) առատ գործածութեան ենք հանդիպում Եսայի Նչեցու քերականութեան ձեռագիր տարբերակներում, օրինակ՝ B (1633 թ.), Y (անհայտ ժամ.), C (1360 թ.) տարբերակներում: Ըստ որում, այդ նշանն այստեղ դրված է ոչ թե աւ-ի վրա, այլ ուղղակի նրա փոխարեն, իբրև տառ, այդպիսով այդ ձեռագրերում օ հնչյունն արտահայտված է ու, աւ, օ, ∞ , $\sim$ գծանշաններով: Օրինակ՝ անբաղձողք, բաղձողք, օրինակ, յագել, ի ստացողէն, դաւա, յաբի, յօրինեալ, յարուետախ $\sim$ սից, հաւր, այս ∞ ր, փոխանակ $\sim$ րի, ի վերայ մեծ $\sim$ -ին դնեն: Հանդիպում են նույնիսկ Մաշդոց, Յսէփոս, Ստեփան ∞ ս գրութիւնները⁵⁴: Այս նշանը օ տառի կամ աւ-ի փոխարեն հանդիպում է նաև E (ԺԴ դար), D (ժամ. անհայտ), A (1330 թ.) ձեռագիր տարբերակներում և նույնիսկ G ձեռագրում, որ Նչեցու կենդանութեան օրոք է գրվել, 1307 թվականին: Այստեղ հանդիպում ենք՝ Մաշդոց, Յսէփոս, Յ հաննէս ձեւերին (անդ, էջ 183—185): Աւ-ի փոխարեն ∞ նշանն է դրված $\mathcal{N}$ 2371 (1357 թ.) ձեռագրում, որ պարունակում է Արիստակես Գրիչի, Վարդան Արեւելցու, Գևորգ Սկևռացու և ուրիշների քերականութեան գրքերը: Այդ նշանը (∞), որ դրված է օ հնչող աւ-ի փոխարեն, անվանված է երկար օ: Գևորգ Սկևռացին երկու օ է ճանաչում, մեկը ու է, մյուսը՝ ∞ : Նչեցին նույնպես Սկևռացուն հետևելով՝ հռնարեն օ-ի դիմաց հնագույն

անուններում ով է դնում՝ Մովսէս, Ահարովն, իսկ մնացած բառերում՝ (աւ) և զարմանում է, որ այդ աւ-ի փոխարեն մի հատուկ տառ չի հնարվել տառերի գլուտի ժամանակ: Ըստ երևույթին նշեցին էլ Երզնկացու պէս կարծում է, թէ աւ-ը Ե դարում էլ օ հընչումն ունենի:

Այս նշանի գործածությունը շարունակվում է նաև ուշ միջնադարում:

№ 1749 (Ժէ դար) ձեռագրում՝ համառաւօտ, կարճառաւօտ, րնտրաւղ, արդեաւք, արարաւղք, բամբասանաւք, աղաւտ, աւտաւրաց և այլն: Շնորհալու 1643 թ. «Յս որդի» գրքում՝ յաւժար, զարտաւար, ծնաւղին, բայց՝ խաւարեցաւ, երևեցաւ, բազմեցաւ: Հետաքրքիր է, որ երբեմն ձայնավորի ու բաղաձայնի աւ տառակապակցություն (av) փոխարեն գրում է օ տառը և որպէսզի ընթերցողները օ չկարդան, այլ՝ ա՛վ, վրան թավաքման նշան է դնում՝ խօարանան, խորտակեցօ, սկզբնօորեալ և այլն: Երկու նշան է օգտագործված (○, ×) Տերգնցու «Տոմար Գրիգորեան» (1587 թ.) գրքում՝ տաւմար, տաւմարի, աւրօնելով, օրաւնել, ղգտաւն և այլն:

Գրության այս ձևերը, ինչպէս ասվեց, ունեին միայն ուղղագրական նշանակություն, ինչպէս էլ գրեին բառը՝ լօ, թէ լաւ, թագօոր, թէ թագաւոր, կարդում էին՝ լավ, թագավոր: Յաւժար գրեին, թէ յօժար, թէ յօժար. կարդում էին հոժար (hožar), բառի արտասանական պատկերը չէր փոխվում:

Ե—է.— Այս տառերի գրությունը շարունակվում է դասական հայերենի ուղղագրության կանոններով, որ նշված են նախորդ գլխում՝ բառասկզբում և բառամիջում գերազանցապէս Ե տառն է գործուն, քիչ բառերում՝ է-ն, բառավերջում միայն՝ է-ն, հնչյունափոխության ենթակա Ե-ն՝ է տառով:

Սակայն այս տառերի ուղղագրությունը Ե—Ձ դարերից սկսեց խախտվել: Թեև ԺԲ դարից բերականները ձգտել են վերականգնել դասական ուղղագրությունը, այդ թվում նաև Ե, է տառերի, սակայն նրանց զրավոր միջամտությունն օրենքի ուժ չի ստացել: Նրանց շարադրած կանոնները, ճիշտ է, ընդհանուր առմամբ պահպանվում էին, բայց հաճախ էլ խախտվում էին: Արտագրող գրիչները, քարի վրա փորագրողները երբեմն հետեւել են արտասանությանը և համապատասխան տառը գրել: Ասել են apstambēlnkh, nstēln, linēin, ēi, ēakn, řamkē, ēař, գրել են նույնությամբ՝ ապրստամբեինք, նստեին, լինեին, եի, եակն, դամկե, եառ, չէ՞ որ բառասկզբում Ե-ն դեռ ē էր արտասանվում: Այդ նույն պատճառով էլ գրել են՝ կէնդանի, վխեցայ, ասէն, էն և այլն:

Ե—Է տառերը հնչմամբ իրարից շտաբերվելու հետևանքով երբեմն միևնույն գրիչը միևնույն բառը մեկ ե-ով է գրում, մեկ էլ՝ է-ով: Օրինակ՝ «Եթե սա թագաւորն է հրեից» և՝ «հրեից է սա թագաւոր» (973 թ., № 2684, 112բ): Այս նույն ձեռագրում հանդիպում են միջաւրէի և միջաւրեի, № 1001 (Ժ դար) ձեռագրում՝ մարգարեից և մարգարէի, հրեից և հրէից, Սերովբեից և Սերովբէից: № 1007 (Ժ—ԺԱ դար) ձեռագրի միևնույն 21-րդ էջում դրված է թե՛ «ոչ կարեին» և թե՛ «ոչ կարէին»: Ներկայացնենք այդ շեղումները մասնաւորապէս:

Է տառի փոխարեն հանդիպում է ե-ն բառասկզբում՝

1) Եմ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի և անցյալ ժամանակի բոլոր ձևերում՝ ե, եիւ, եին և այլն: Օրինակներ՝ «Ըմբռնեալ եին» (№ 1007, 2): «Խոնարհ եին» (4բ): «Թև արմատացեալ եին» (5): «Մանուկ եիր» (36): Մնունդք եին» (236բ): «Գրեալ եին» (60) և այլն: «Առանց արմատոցն եին» (№ 2684, 14բ): «Իբրև դձեղ եի» (14բ): «Ոչ եիր գեղեցիկ» (44): «Սառուցեալ եին» (75): «Պարտական ե» (1033 թ., Քար., 15):

«Ես չեի անդ»: «Բազում ի հրեից անտի եկեալ եին» (№ 985, 2ա): «Եթե միայն ես եի» (29ա): «Ընդ Յի եին» (218ա):

Հետաքրքիր է, որ Արիստակես Գրիչը օրինականացնում է եմ բայի թեք ձևերը ե-ով գրելը՝ ելնելով այն ընդհանուր կանոնից, որ բառն աճելիս է-ն փոխվում է ե-ի, ուստի գրում է՝ ասէ. բայց՝ ասեին, ինչպես՝ ամէն, բայց՝ ամենակալ: Այդպես էլ գրում է՝ «առեալ եիք, առեալ եաք, ազահ եիր» (անդ, 255): Բայց այդ կանոնն էլ չի պահպանվում ձեռագրերում ու վիճադրերում: Օրինակներ. «Եւ սգայութեամբ եից տրամակայիլ» (1046, Յիշ, 226): «Որ ե մեր Դվին քաղաքը» (1184, Յիշ, 501), «Աւր Ա եր» (1185, Յիշ, 509): «Անհնար ե» (1191, Յիշ, 557): «Զինչ որ իւր կարողութիւն ե: Մասնակից ե» (1217, Յիշ, 791): «Զի ոչ եր կարդացած» (1229 Յիշ, 856): «Անդր եին ժողովեալ» (№ 2679, 15բ): «Որ ի կարգեալ եին» (24բ): «Մըւր եիր» (№ 1958, 100): «Բազում եին» (№ 1001): «Այդ արտաբոյ տեղի եին» (№ 10099, 10): «Ընդ նմայն եին» (12): «Զկնորսք եին» (№ 5547, 93): «Ժողովեալ եին ատեանն», «Որոյ նշանակեցելոյ ե բանն» (№ 1747, 7բ): «Անուն ոչ ե» (№ 1748, 204): № 1749 ձեռագրում, որ պարունակում է 1746⁵⁴, 1747, 1748 ձեռագրերի բովանդակութիւնը, Ե—Է տառերը չեն շփոթված, բոլոր երևույթին դա նրանից է, որ ուշ է արտագրված (Ժէ դար), և գրիչն էլ գրագետ է եղել, ուղղել է նախորդների սխալները: № 2865 ձեռագրում (XIII—XIV դդ.) հանդիպում են՝ «Առ իւրովքն եին» (28):

«Եին ոմանք ի հեթանոսաց» (61բ): «Նոքա այսմ եին» (106) և այլն, իսկ 1567 թ. արտագրությունում դրանք ուղղված են:

2. Անցյալ կատարյալ ժամանակի ձայնավորով սկսվող միավանկ բայերի սկզբում, իբրև նախահավելված: Օրինակներ. «Յինքն եառ» (№ 2684, 25): «Առ ինքն զիս եառ» (63): «Զմեռն եանց» (68ա, 73բ): «Յորժամ եանց ժամանակն» (107բ): «Յ Դ ժամու եառ զհողն ի ձեռն ած եւ ի Զ ժամու ստեղծաւ մարդն» (156ա):

Հետևաբար է, որ երբեմն ձեռագրերում ե նախահավելված ե: ունենում ձայնավորով սկսվող նաև բազմավանկ բայերի անցյալ կատարյալի ձևերը (Նարար, եասաց), մի բան, որ քերականական համակարգից շեղում է ու հազվադեպ է պատահում: Օրինակներ. «Այսուհետև Նարար զհանդերձեալսն ունել զխոստումնն» (№ 1958, Ժ դար, 26): «Զայս Նարար» (26գ): «Եթե գործ եարար ծառայի» (26գ): «Որպէս եասաց առաքեալ» (29գ): «Զարութիւն Նարարին» (42): «Ինքն էր, որ եասաց Յովբայ՝ ուր էիր» (100): «Նարար գերկին եւ գերկիր»: «Մեղքսեղեկ բարձեալ եասաց զբոլորեցունն աստուած» (47): «Զամենայն հարկապահանջութիւն եբարձին» (ԺԴ դար, Դիվ, I, 1): Այսպիսի դրություն հանդիպում ենք նաև նշեցութեականության E տարբերակում (ԺԴ դար), օրինակ՝ էկտրեցի էսարկեցի (անդ, 137, տողատակ ծանոթությունը)⁵⁵:

Արիստակես Գրիշը նույնպես եառ է գրում: Նա գրում է. «Առեալք եիր, առեալ եաք, եառ նա, եառ սա, իսկ է-ով է առ սա, է առ իս, է առ բեղ, որպէս ասես թէ՛ այս իրքս առ իս է, առ բեղ է, է երով իմցիր»: Եւ բայի անցյալի թեք ձևերը, ինչպես նշեցինք, գրում է ե-ով, «Վասնզի եգերովքն ի հոլովեն, վասն այնորիկ եշ անպատճառ պիտի նոցա» (անդ, 257):

3. Ե նշույթով սկսվող մի քանի այլ բառերում՝ էութիւն, էակ, էգի և այլն: Օրինակ: «Եակն ի վերա ամենայնի աստուած բարեբանեալ» (Ժ դար, № 1958, 48): «Ետու զիմ եգիս» (ԺԲ—ԺԳ դար, Մարր, 96): № 1007, 1958 ձեռագրերում, Արիստակեսի գրքում գրված է Նմանուէղ կամ Նմանուէղ, այլ տեղերում՝ Նմանուել, սրան զուգահեռ կա նաև Էմանուէլ գրությունը:

Բառամիջում.— 1. Բայի անցյալ անկատար ժամանակաձևերում, որ դարձյալ հնուց է դալիս, ինչպես եւ բայի գրության շեղումները: Օրինակ՝ № 1001 ձեռագրից (Ժ դար)՝ ծնանևիր, մատչեին, կարեին, ասեին, աղաղակին, մարտընչին, դնեին, պատառեին, վաճառեին, ԺԱ—ԺԲ դդ. № 1007 ձեռագրից՝ «Հարկաննին զնա» (8): «Վամեին հրո ճարակ լեալ» (68): Հաճախ միևնույն նախադասության մեջ միևնույն ձևը թե՛ է-ով է հանդիպում, թե՛ ե-ով: Օրինակ՝ «Ունեի զփողիցն նորա եւ սպանանէի զնա» (8) «ուտէին և

ըմպեին» (242): «Ոչ կարեին», նաև՝ «ոչ կարէին» (21): Այդպես էլ՝ երկիր պագանեին, սկսաներ, առնեին, խոնարհեին, հարկանէի, կոխեին, շարժեին, բամբասեին, հնարեին, ամաշեին, 973 թ. № 2684 ձեռագրից՝ հովուեիր (14բ), լինեին, լինեի, ունեին (21—22). մտանեին (75), խոցոտեիր (62), շրջեին, դիտեին, նստեցուցանեին, ճանաչեին (101, 148), Թ—Ժ դարի № 985 ձեռագրից՝ խնդրեին (1), համարեին (7), աղաչեին, ասեին, խաւսեին (9բ), փութացուցանեին (118ա), հարկանեին (144), 981 թ. № 2679 ձեռագրից՝ տաւնեին, ունեին զաթոռ սրբոց (15), եթէ գիտեիր (91), Ժ դարի № 1958 ձեռագրից՝ «Ոչ լուան նմա Հրեայք, այլ եւ խաչելով այպանեին զգեցաւդին» (45): «Հազարք հազարաւորք պաշտեին զնա» (49): «Ձայնք զնոցանէ ի ժողովոյն լինեին» (45) և այլն: № 10099 (Ժ դար, Բեզունց ավետարան) ձեռագրից՝ «Սպասեին նմա» (12): «Իբրև լսեին» (13): «Որք ունեին ախտս ինչ տեսանեին, առաջի նորա աղաղակեին եւ ասեին, թե դու ես որդին աստուծոյ» (13ա), ծեծեին, թքանեին, երկրպագանեին (19), բակեիր, շինեիր (35): Այսպիսի օրինակներ շատ կան ԺԱ—ԺԲ դարերի X № 10434 (1069 թ.), 988 (1046 թ.), 1890 (1194 թ.), 975 (1194 թ.), 777 (ԺԲ դար) ձեռագրերում՝ ասեին, խնդրեին, աղաղակեին, շրջեին. աղաչեին, հասաներ, մխիթարեր, ունեիր, ուղղեին և այլն: ԺԳ—ԺԴ դարերի №№ 1097 (1280 թ.), 2865 (ԺԳ—ԺԴ դարեր), 468 (ԺԳ դար), 488 (1295 թ.) ձեռագրերում՝ դնեին, տեսանեին, վայելէին, ոչ առնեին, երեւեին, առնեին, հարցանեին, պատահեին, ունեին և այլն: Այսպիսի ձևեր շատ են հանդիպում նաև Գ. Հովսեփյանի «Յիշատակարանք ձեռագրաց» գրքում հրապարակված Ժ—ԺԵ դարերի հիշատակարաններում: Արիստակես Գրիչի գրքում հանդիպում են՝ զարդարեիք, զարդարեին, զգացուցանեին, աւետարանեաք, աւետարանեիք, աւետարանեին և նման գրությամբ այլ բայեր (անդ, էջ 269):

2. Բայի հրամայական եղանակի հոգնակի թվում (պատրաստեցէք) և մի բանի այլ բառերում (որպէս, ամէն, պէտք, Կայէն. հրէա, Տիմոթէոս, Թէոդոս, միջաւրէ, Եղիսէէ և այլն) է-ի կանոնական գրության կողքին հանդիպում է նաև ե տառը:

Օրինակ՝ «Եւ ասեն արք ցնդիսէն», փոխ. ցնդիսէէ (ձեռ. № 1001, 57): Թեև գրում է նաև՝ «ըստ բանին Եղիսեի» (57բ): «Թե ի նազարեթե ասեին» (№ 1007, 23), Թեոդոս (6), Բեթղեմ (10) և այլն:

Խոսելով է-ի գրության մասին՝ Արիստակես Գրիչը զգուշացնում է, որ գրեն մարգարէէ, Եղիսէէ, որովհետև առաջին է-ն բառահիմքինն է, երկրորդը՝ հոլովական վերջավորությանը: «Իսկ ոչ 136

զմին ևչ դնէ, այն բնաւին խոտան է և ալլախաւսից բառ և ոչ սեպ-
 հական հայեցի» (անդ, 236): Նա նշում է, որ բառն աճելիս է-ն
 փոխվում է և-ի: Ամէն իմաստ, ամէն ողորմ է-ով են, իսկ ամե-
 նակալ, ամենագաւ. ամենից, ամենախնամ, ամենագով, ամենա-
 բաւ. ամենապարգև եղբուով են, նույնպես և յոլոված ձևերում՝
 Կայենի, Յովհաննեսի, Մովսէսի, հրեից և ալլն (անդ, 256): Բայց
 այս հնչյունափոխական կանոնի կիրառությունը հաճախ ենք խախ-
 տրված տեսնում: Ն՝ 1001 ձեռագրում (Ժ դար) գրված է թե՛ հրեից,
 թե՛ հրէից, Ն՝ 1007 ձեռագրում՝ Մովսէսի, իսկ Ն՝ 1001-ում՝ Մովսե-
 սի: Ն՝ 1007-ում՝ մարգարեից (22), քայց և՛ մարգարէանաս: Ն՝ 1958
 ձեռագրում մարգարէին, զմարգարէն, ի ձեռն մարգարէից:
 ԺԲ դարի Ն՝ 4035, 1266 թ. Ն՝ 823, Ն՝ 2101 (1223) և ալլ ձեռա-
 գրերում հանդիպում ենք՝ Իսրայելի—Իսրաէլի, Միքայելի—Մի-
 քայէլի, Դանիէլի—Դանիէլի, Մովսէսի—Մովսէսի, Կայենի—Կայէ-
 նի, Անդրեաս—Անդրէաս, Թևոդորոս—Թևոդորոս գույգ ձևերի:

Հենց Արիստակեսը մի կողմից պահանջում է թեք ձևերում և-ի
 փոխարեն ե գրել, մյուս կողմից նրա գրքում կան Իսրայէլացի,
 Իսրայէլի, Իսրայէլեան, ի Մատթէի, հրէից, հրէիք, հրէի, մարգա-
 րէացան և ալլն (անդ, 279): Ուշադրության արժանի է Գրիգոր
 Տաթևացու (ԺԴ դար) կարծիքը ե, է-ի գրության մասին: Բառամի-
 ջի ե. է տառերի գրությունը նա կապում է հնչյունափոխության
 հետ: «Զորրորդ՝ հայտ է, զի ուղղականն էովն է, զի յորժամ հոլովի՝
 ին փոխի: Զի թէ եչ էր, որպէս՝ թեւ, նետ, գետ, ի հոլովն նույնպես
 եչն մնայր, որպէս՝ թևով, նետով, գետով, իսկ գէտն գիտուն հո-
 ւովի և կէտն՝ կիտի» (Գրչութ. 358): Մարմաշենի 1029 թ. մի ար-
 ձանագրությունում հանդիպում է. «Առ ի լնուլ... զպետս», փոխ.
 զպէտս (Օրծ, 443): Ամէն բառը Գ. Հովսէփյանի «Յիշատակա-
 րանք»-ում հաճախ է ե-ով հանդիպում (տե՛ս էջք 412, 379, 737,
 738, 753, 760, 777, 804, որոնք ԺԲ—ԺԳ դարերի ձեռագրեր են):
 Այստեղ շատ է հանդիպում հրամայականը ե տառով: Օրինակ՝
 «Զգրիչս յիշեցեք և խնդրեցեք մեղաց թողութիւն»: «ԶՊոռփսիմոսն
 յաղօթս յիշեցեք»: (1007 թ., Յիշ, 201): Ալլ օրինակներ՝ «ընթերձ-
 ւածին Դանիէլի» (Ն՝ 1007, 69), մարգարէանաս (8), պետք էին
 (20բ), Կայենի (6): «Աղուես փոքունս» (Ն՝ 2684, 68), «ըստ մար-
 ցարէական բանին թաւալին» (111բ), իսկ 211բ էջում՝ ըստ մար-
 ցարեական ձայնին: Ամեն, Տիմոթէոս (23), Մովսէսեան (3բ),
 միջարէի և միջավրէի (14), միջարեացն (15): «Եւ այնպէս յարու-
 ցեալ սերն եւ՝ զարթուցեալ» (67): Ուրեմն գրիչը խառնել է բառա-
 միջի է-ն տառերը, 98բ էջում գրված է՝ «արդար ասացէր», իսկ
 107բ էջում՝ «ուղիղ ասացեր»: «Ի մեջ է: Ի մեջ բանականն» (Ն՝ 468,

134): «նոյնպէս և զնշանքն» (N° 416, 8), «նոյնպէս եւ ձեռքն» (23): «Մարեայ կաթն կնս լիտր առ» (48): «Զաչս ամէնս ի յաման մի արկ, զաչս ամենս եփէ: Ամեն մեկէ ափ մի» (48բ): 52բ էջում՝ «ամէն մէկի, մէկն այն է», իսկ 57-ում՝ «ամեն մեկի բորբոսնիլն»: «Պետոս ունի» (84), «կես դրամ» (85բ): Բայց այս դրիչը գիտի կանոնը, ուստի գրում է նաև՝ «բսա որպեսութեան» (84բ) և՝ «որպէս լինի ջերմն» (5բ), N° 49 ձեռագրում՝ Թևոս, բնակցւալես. որպէսզի (12), «որպէս ոչ արժան զու» (12բ), այսպես (14), նոյնպէս և այլքն (50բ), ածանմանապէս (57): V 1747 ձեռագրում՝ որպէս բերթողական, այսպէս (11), թե ոչ զյոքնագետն (11), N° 1748-ում՝ որպէս (202), ընդդէմ փշելով (282): «Զանեծս նա աոցէ» (1033, Քար, 14): «Թեպետ և առատ են պարգևք քո» (ԺԲ—ԺԳ դար, 3իշ, 286): Այս «Յիշատակարանքում» հանդիպում են նաև Գևորգ սրբասեր, աստուածասեր, թեպետ, կեսք ուսումնասեր, աշխարհես, նոյնպէս, աղուես, ընդդէմ, Թաղեոս և նման գրություններ: Այսպիսի սխալագրություններ կան գրեթե բոլոր պրագրերում: N° 985-ի գրիչը թե՛ հրեից է գրում, թե՛ հրէից, թե՛ հրեայ, թե՛ հրէայ: Օրինակ՝ «Բագումք ի հրեից անտի եկեալ եին» (2): «Ե հրէիցն երթային» (92բ): Նույնը տեսնում ենք N° N° 2679, 1958, 1890, 4035, 4066, 975, 468, 415, 266, 994 ձեռագրերում, Հաղրատի և այլ վիմական արձանագրություններում, ուր կան՝ Մովսէսի—Մովսեսի, մարգարէիցն—մարգարեիցն, Անդրեաս—Անդրէաս, թեպետ—թեպէտ, Թէպետ, Մարգարեի—մարգարէի, Իսրայելի—իսրայէղէ, մարգարէին—մարգրանին, ամէն—ամեն, աւերեր, հպարտութենեն, միաբանութենեն, սբ ուխտեն, տեր, մեր, ամեն, յԱւարայրեն, ընդդէմ, Յովսէփայ—Յովսէփայ, Դանիել—Դանիէլ, Սամուէլ—Սամուել, զԲաբելոնի, ամէնունակ, ամէնառատ, թեպետեւ, դեմ, խնդրեցեք, ասացեք, աղուես, ներսես—ներսէս, այսպէս—այսպէս և այլն: Զմոռանանք հիշել, որ ամեն բառը իբրև գերանուն գրվում է և տառով՝ ամեն տարի, ամեն աւր, ամենունակ և այլն:

1174 թ. N° 1890 ձեռագրի գրիչը նույնիսկ միևնույն նախադասության մեջ կրկնվող բառերից մեկը է-ով է գրում, մյուսը՝ ե-ով: «Ստէպ—ստեպ ընթանայր» (69): Հատկապես շատ է մեղանշել 1194 թ. N° 975 ձեռագրի գրիչը: Օրինակ՝ «Ասէ Մարգարեն» (6): «Դաւիթ թեպետ եւ լուաւ, թե տր անցոյ զմեղս քո» (7բ): «Աղաչեին դեմ յանդիման» (7բ), «այսպէս, եւ ասե այսպէս տր» (10բ), «ընդդէմ ընթացելոց» (10բ): «Դարձեալ ասե, պատրաստեցեք» (17): Մովսէսի—Մովսեսի (20—26), Եզեկիէլ, Դանիէլ, առաւելապէս

(28), «որպես պարտ և պատշաճ իցե հաճութիւն» (30), «որպես անհաւատ ուղղելին» (35), հրէութիւն և Հրեաստան (52բ), «նոյնպէս և ի պէս-պէս պատուոյս» (81բ), գրեցեք, մարգարէն (295) և այլն:

Հովասափ Սեբաստացին, ինչպէս նշում է Վախթանգ Գեորգյանը, «հաճախ է Լ-ի փոխարեն օգտագործում և տառը (սեր, դեմ, Ե՞ր, ինչպէս), դա առանձին գեպքերում այնքան հետևողականորեն է արվում, որ կարծես կանոնի է վերածվում» (անգ, էջ 60): Գրինակ՝ «Հապա զքո սկրբա փորձեցի» (Սեբ, 72): «ՀԵ՞ր խոցեցար խեղճ և գերի» «Սեր աշխարհիս շուտով անցնի» (73): «ՅԵ՞ր կոնայիս» (8): «Ամաց եր երկոտասան» (110), Էհան (86), Լառ (87) և այլն: Այս խախտումները նկատելով՝ միջնադարի քերականները՝ Գալանոս, Կոստանդնուպոլսեցի և ուրիշներ, նորից են շիշեցնում, որ բառը աճելիս է-ն փոխվում է ե-ի, որպեսզի գրեն՝ Հոփփսիմէ, բայց Հոփփսիմեայ, Վառվառէ—Վառվառեայ, Հեղինէ—Հեղինեայ, Կատարինէ—Կատարինեայ, Ներսէս—Ներսեսի, Յովհաննէս—Յովհաննեսի և այլն:

Թեև ե—է տառերի այս խառնակ գրությունը շարունակվում է նաև ուշ միջնադարի գրչադրերում ու տպագիր դրականության մեջ, բայց ոչ այսչափ տարածված: Ուղղագրությունը հետզհետե կայունանում է, որի համար հսկայական նշանակություն ունեցավ տպագիր գրականությունը՝ իր կազմակերպող, համակենտրոնացնող, հաղորդակցումը հեշտացնող ու համապարփակ դարձնող ուժով: Հանդես են գալիս հայերենի քերականության ուսումնասիրություններ, որոնց հեղինակները (Գալանոս, Հովհ. Կոստանդնուպոլսեցի, Խաչատուր Արղրումեցի, Ոսկան Նրեանցի և այլք) լուրջ ուղղորդություն են դարձնում ուղղագրության հարցերին: Ժէ դարի այդ քերականության գրքերում՝ «Խորհրդատետր պատարագին Հայոց» (1641), «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» (1685) և այլոց մեջ մենք այդպիսի շեղումների գրեթե չենք հանդիպում: Որոշ գրքերում կան շեղումներ, բայց քիչ: Օրինակ, «Պարզաստումար»-ում (1512)՝ «Նշան է այն երկրին աւեր», փոխանակ՝ աւէր: Ռիվոլայի Բաղդրում (1633)՝ գահավեժ, չերի (=չարեցի), պետք: Զաքարիա Ագուլեցու (Ժէ դար) օրագրում՝ Դաշտեն, Իգմիրեն: «Տոմար Գրիգորեան» (1587) գրքում՝ հոկտեմբերոյ, հոկտեմբէր, յայսմ հէտէ ապրիլէյոյ, չորէք, մէրոյ, հոռմաէցոց և այլն:

Ն, է տառերի ուղղագրության խախտումները շատ են «Առաւել պարզաբանութիւն» (1630) գրքում, որի պատճառը մեր կարծիքով միայն հեղինակի գրագիտության պակասն է, քանի որ այստեղ հանդիպում ենք այնպիսի շեղումների, որոնք բնութագրական չեն ժամանակի գրությանը: Օրինակ՝ էրէք, էկէղեցն, էրկրորդ, է-

ըորդ, Էրթան, ամենևիքին, Էրկնի, Էթէ, Էրէկոին, ամենէքեան, Էկհս-
ցե, մէք և այլն:

Բառաձևերում.— Դասական հայերենի ուղղագրության համա-
ձայն բառերը և տառով շեն վերջանում: Այս կանոնը պահպանվում
է և հետագայում, քերականներն էլ կանոնով այն օրինականացրե-
ն: Բայց այս դարերում (Ժ—ԺԷ) պատահում են նաև և տառով
վերջացող բառեր: 1. Թէ, Էթէ, շաղկապներում: Օրինակներ: «Եթե
»ք պակասեցանէ» (1029, Օրճ, 442): «Եթե ոք հակառ կա» (անդ,
444): «Թե ամի ի Ժ ապրիելի, գի թև երիս էր» (№ 1007, 2): «Եթե
ոչ ծանիցես» (№ 2684, 3բ): «Եթե խոցոտեր» (62բ): «Եթե զամառն
եւ զգարուն դու ստեղծեր» (74): № 985 ձեռագրից՝ «Եթե ոք» (1),
«Եթե նրնջեաց», «համարեին թե» (7ա), «միթե ոչ ունիմք» (25):
«Հրեա իցեմ» (150բ): «Թե ոք հակառ կա»: «Թե ոչ» (1033, Քար,
14): Այսպիսի գրություններ կան №№ 2679, 1958, 988, 10434, 4035,
1097, 2865, 4066, 975, 468, 777, 2101, 416, 49, 488, 1746, 1747,
1748, 57 և այլ ձեռագրերում, որոնք, ինչպես նախորդ էջե-
րում ցույց են տրված, Ժ—ԺԴ դարերի գրչությանն են: Ավելի
ուշ, ԺԵ—ԺԷ դարերում շարունակվում է այդ սխալ գրությունը,
բայց ավելի քիչ, մանավանդ ԺԷ դարում: Օրինակ՝ 1466 թ. № 415
ձեռագրից՝ «թե որոտայ, խաշանց մահ լինի» (221): «Թե արեգակն
խաւարի» (220) և այլն: «Առաւել պարզաբանութիւն» (1630) գր-
քում՝ «Միուս անգամ ասի թե հայր ած կայ ընդ աջմե որդո: Տէր
ընդ աջմե քումե» (45): «Թե որ ասե» (48): Էկեսցե (49) և այլն:

2. Բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի
թվի երրորդ դեմքի վերջավորությունում: Օրինակ՝ «թե փոխե»
(№ 1007, 23): «Քանզի ասե էսայեան մարգարէի ի նմին կատա-
րածի» (№ 1958, 37): «Որչափ եւ կամիցե քեզ» (№ 4066, 392):
«Եւ ասե ցնա» (№ 975, 7բ): «Եւ ասե այսպես տր» (10բ), յառ-
նիցե (32բ), տեսանե (36), «մարգարեն գոշե» (280բ), «ասե պատ-
րաստեցեք» (17, 30բ, 290): «Եթե ոք ասե գոլ զիմաստութիւն»
(№ 1747, 17): «Յիշատակարանք»-ից՝ «Ննջեցելոցն ողորմութիւն
շնորհե» (Ժ դար, 86): «Թե այնպէս իցե» (988 թ., 153): «Կամա-
կատար եղե բանսարկուի» (988 թ., 154): «Զձեզ յիշե» (1111 թ.,
161): «Առ որս ասե Դաւիթ»: «Եղե մեծաշահ վաճառական» (1046
թ., 229): «Յանկացաւդ եղե» (1071 թ., 252): «Ի գաւառե եւ ի դղե-
կէ Բարձրաբերդոյ» (1273 թ., 971): «Մինչև յեթե ամ մի՛ առցե
այր» (№ 488, 21):

3. Եզակի թվի բացառական հոլովի վերջավորությունում: Օրի-
նակ՝ «Ի մարդկանե» (1194 թ., № 975, 37բ), յառաւելութենե (ԺԹ

դար, N 777, 64), «ի քահանաութենէն» (1295 թ., N 488, 18): «էրնդ աջմն կամ ի ձախմն միմիանց» («Առաւել պարզաբանութիւն», 45):

Վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ է տառի փոխարեն է տառն է գրված այնպիսի բառերում, որոնք ձևաբանական տարբեր խմբերի են պատկանում՝ գոյական, բայ, շաղկապ, դերանուն: Այս բազմազանությունն ասում է այն մասին, որ ե. է տառերի ուղղագրությունից վերոգրյալ շեղումների պատճառը քերականական կառուցվածքը չէ, այլ՝ հնչյունային: Հիմնական պատճառն այն է, որ ե. է տառերը այս դարերում շատ գրիչներ դեռ միատեսակ էին հնչում, լինի դա բարբառային, թե անհատական հնչման հետեանք:

Ե տառի փոխարեն լ-ի գործածության ինչ դեպքեր են նկատվում:

1. Բաղաձայնասկիզբ միավանկ բայերի անցյալ կատարյալի սկզբում՝ իբրև նախահավելված: Օրինակներ: «էտու (փոխ. ետու) գիմ դրամագին» (1273, Օր6, 469): «ի վերա էթող եւ փախեաւ» (N 1890, 82): Այդ նույն տեղում՝ էհան, էմուտ: «Իբրեւ էտես զաւրաւոր» (116): «էտու գինչ ունէի» (ԺԳ դար, Դիվ, III, 128): «Ինձ սուգ մեծ էթող» (1208, Սան, 103): «Ամէն միաբանքս էտուաք զամէն էկեղեցիքս նացա...» (ԺԳ դար, Սան, 123): «էցոյց զթուղթն Պօղոսի» (1468 թ., N 266, 158): Էբաց, Էբեր, Էգիտ, Էդեր, Էդիշ (Ռիվոլա): «էհաս այսմ ամի» (Զաք. Ագուլեցի, 96): «էհաս հողին» (անդ, 96): «ի վերա գլխո քահանայն էհեղ» (1266 թ., N 823, 13բ): «Պարտիս Էդեալ» (Ժէ դար, Դիվ, I, 34): Եսայի նշեցու բերականության ձեռագիր տարբերականերում նույնպես խառնված են բայի սկզբի ե, է նախահավելվածները: Այնտեղ հանդիպում են՝ եթող—էթող, եգիտ—էգիտ, եհար—էհար գուգահեռ գրություններ:

2. Եմ բայի ներկա ժամանակի եզակի ու հոգնակի I, III դեմքերի ձևերում: Օրինակներ: «ի հարս էն սիրեցեալ» (973 թ., N 2684, 118բ): «Պատմելս ինձ էն զանձինս իմոյ բիծ» (N 4035, 117): «էն ապիրատ» (անդ, 168): «Զոր ինձ էն մուկալ շարաշար» (անդ, 269): «Որում չէն մարթ լինել» (1280 թ., N 1097, 96): «Զինչ էն» (1243 թ., N 1747, 4): «Ասեմք թե ըստ տասն նշանակելոցն էն բէրի» (անդ, 7բ): «Բանականք էն, որք էն համասեռք, քերականութենէն, որ էն այլասեռք» (19բ), էմ, էս (73): «Եթէ ոչ էն ի հոմանուանցն» (ԺԴ դար, N 1748, 5): «Ինչ էն» (56բ): «էս (-ես) ետու զայս իրքս ապրուղնայիս» (1468 թ., N 266, 203): «Որպէս եւ էն իսկ» (ԺԱ—ԺԲ դար, N 1007, 378): Զաքարիա Ագուլեցու օրագրից՝

«Ուզում էն» (1667 թ., 72): «Ամէն դրած էնք» (1671 թ., 98): «Մարդիք էն (1671 թ., 99): «Ուզում էմ, տալիս չէն» (104): «Գնում էմ, դիվանս անում չէն» (1671 թ., 105): «Փոքր փոքր շինում էն» (1679 թ., 143): «Գլխագիր էն» («Առաւել պարզաբանութիւն», 12): «Փոքր էն» (անդ, 13):

3. Մի շարք բառերի սկզբում, որոնք դասական ուղղագրությամբ գրվում էին և տառով (եկեղեցի, էթէ, եպիսկոպոս, Նրուսաղեմ և այլն):

Օրինակներ: «Լնուլ զպետս կտակարանաւք էկեղեցականաւք»: «Եւ զմեր պապէնի հայրենիք էկեղեցին»: «Որ ոք շորթել ջանայ ընչից էկեղեցոյս» (1029, Օրծ, 443): «Հռէփսէմեալ: էկեղեցիս Ղազարոյ» (1273, անդ, 468): «Եւ տը 3ովանէս էրէցս կանկնեցի զխաշս ի թւ ԶԽԸ»—1499 (Mapp, 98): «Լիւնի յամենայն էկեղեցիքս: էթէ ոք հակառակի» (1214, Քար, 17): «ԶՍարգիս էրեց յիշեցէք: Թվ ՊԾԶ»—1407 (Դիվ, II, 50):

4. Մի շարք բառերի բառամիջում: Օրինակներ: «Կէնդանի եմ» (1029, Օրծ, 444): «Ած ձէզ ողորմէցի» (1015, Օրծ, 445): Արդէն (N° 2684, 145, N° 823, 128): «Մանկութենէ ստեպ ստեպ ընթանայր» (N° 1890, 69): «Գոհանամք, որ յայտնէն զծածկեալ խորհուրդս» (N° 2684, 67): «Որ փրկէն, զոր խնդրէն, լսէ, որ զնոյն կոչէն» (145): «Շինէցի զէկէղեցիս ինձ ի բարէխօսութի» (1003 թ., Քար., 13): «Քրիստոնեայք ասէն» (N° 1890, 25բ): «Հաւանեալք երանելոյն Պաւղոսի որ ասէն» (N° 988, 270): «Կանգնէցի իմ խաշ, գնէցի, ի սբ Առաքելքս էկէղեցական (1058 թ., Դիվ., I, 13): «Զոր ինչ տեսանէն» (N° 468, 161): «Օգնէն ամէն իրօք» (Գունդստաբլ, 19): «Ի նա իջանէն» (N° 1748, 282): «Մէծէ և մաղէ» (N° 415, 2). «բակլալ կէղէված» (3բ): «Մի եղէն գիտութեան հաստատոյ» (N° 57, 56): «Կու խօսէն» (N° 8443, 223բ): Ռիվոլայի Բառգրքում՝ քէրել, ծէթել—հէծնել, ձմէռնիլ, շէրտել, պարծէնող, պտղաբէրել: «Խոստովան եղէց» («Պարզաբան. սաղմոսաց», 504): «Կարդալով կամ լսելով տաք ողորմի: Ականատէս չէլա, գրէցի: Տէսած տէղն գրեցի, անտէսն ոչ գրեցի: Սհաթ չկէր» (Ագուլեցի, 6): Անց կէնայ, կու բերէն (անդ, 25) և այլն:

Բառակազմության (բառաբարդում, բառածանցում) ժամանակ նախորդ բաղադրիչի վերջնահնչյունն ի-ն և հաջորդ ա հոդակապը վեր են ածվում e հնչույթի, իա>ե, որը դասական ուղղագրությամբ գրվում է և տառով՝ բարի-ա-գործ=բարեգործ: Այս մասին ականարկել է նաև Արիստակես Գրիչը: Սակայն միջնադարի ձեռագրերում ու վիմագրության մեջ հոդակապի դեր կատարող այդ

Ե հնչույթը հանդիպում է և՛ ե, և՛ է տառերով, նույնիսկ միևնույն ձեռագրում, երբեմն էլ միևնույն բառաձևում, որի հետևանքով ստացվել են հետևյալ զուգահեռ գրությունները՝ բարեկենդան—բարեկենդան, բարեպէս—բարեպէս, բարեսէր—բարէսէր, բարեխօս—բարեխօս, բարեպաշտ—բարէպաշտութիւն, որդեգրութիւն—որդէգիր, ոսկէփետուր—ոսկէգօծ—ոսկէհանք և այլն: «Դիվանի» I պրակի 68-րդ էջում միևնույն վիմագրության (1291 թ.) մեջ զըրված է և՛ բարեպաշտ, և՛ բարեպաշտ, «Դիվանի» III պրակի 50-րդ էջում 1283 թ. մի վիմագրության մեջ գրված է՝ «Բարեպաշտ, բարետօճիկ արիորդ ետուն նուէրս», իսկ 190-րդ էջում՝ «Ի բարեխաւսութիւն հոգո իւրո, խաչս բարէխօս նդիշին, բարէխոս Մարտիրոսին» (1558): Մաղաքիա աբեղայի Պատմության 19-րդ էջում՝ «Բարեպաշտ պահէին զբարեպաշտ թագաւորն»: ԺԴ դարի X 57 ձեռագրի 86-րդ էջում՝ «բարեկաց, բարէփորձ եղեալ», 163-րդ էջում՝ «Առ բարեկամս իւր»: Ռիվոլյայի Բաղդրքում՝ բարեսէր—բարէսէր, բարեբար—բարեբար, զարեջուր—զարէջուր: 1409 թ. X 99 ձեռագրում՝ բարեխաւսութեամբ, բարեպաշտ, բարեպատեհութեամբ ճիշտ ձևերի կողքին կան նաև՝ զբարեհաղթող, զբարեկամ շեղված ձևերը: Այս զուգահեռ գրությունները կան նաև Գարեգին Հովսեփյանի և Լ. Խաչիկյանի հրատարակած հիշյալ հիշատակարաններում: Նրանցում էլ հանդիպում ենք՝ բարեպաշտ—բարէպաշտ, բարեգործ—բարէգործութիւն, բարենշան—բարէգութ, բարեբանել, բարեհամբաւ, գտարէգիրքն, բարեսէր, յորդէգիր ձևերի:

Ե, է տառերի ուղղագրությունից հիշյալ շեղումները երկու պատճառի հետևանք են: Առաջին պատճառը արտասանությունն է, բայց ոչ թե բարբառային, այլ՝ գրական: Եմ բայի խոնարհված ձևերի բառասկզբի է-ն ու ե-ն հավասարապես հնչում են Ե: Եմ, ես, է, էի, էիք, էինք, եմք, եք, են արտասանվում են Ե-ով: Ուստի ովքեր ավանդական ուղղագրությունը չգիտեն և կամ գիտակցաբար հետևում են հնչյունային գրությանը, խառն են գրում, որովհետև նրանց համար երկու ձևերն էլ Ե են: Բառամիջում և բառավերջում է-ի փոխարեն ե, ե-ի փոխարեն է գրելու բուն պատճառը հենց այդ արտասանությունն է: Ասեմ և ասէմ, գրէի և գրեի, Յովհաննեսի և Յովհաննէսի, գրէցի և գրեցի ձևերում գործ ունենք Բառամիջի միևնույն Ե հնչույթի հետ, և պակաս գրագիտություն ունեցող գրիչը կամ փորագրողը կարող է սխալվել: Այդ տառերի հիշյալ դիրքում արտասանությունը այսօր էլ նույնն է և այսօր էլ մեր աշակերտները նման կարգի սխալներ կարող են թույլ տալ: Ահա թե ինչու միևնույն բառը հանդիպում է միևնույն գրչի, հեղինակի գրքում թե՛ ե, թե՛ է տառերով: Ռիվոլյան գրում է՝ աղեկ—

աղէկնալ, աղէկցուցել, այրել—այրէջեալ, փեշ—փեշին, փէշաքար, փէշա, փէշի, Եփրեմ—Եփրէմի: Նա հետևում է բառի արտասանությանը և գրում է՝ անէրես—անէրեսութիւն, անէրեվոյթք—անէրէվոյթ, արևելեան—արևելցի—արևելէցուց—արևելից, նաև՝ արեւիք, արթևափսկոպոս, ցարէկ (բարբառային՝ ցօրեկ) և ցէրեկ, ցէրեկվան, ծաղրէրես: Հաշվի չի առնում բառի կազմությունը, որ այդ բառերի երկրորդ բաղադրիչը ե-ով է սկսվում՝ երես, երևոյթ, ելք, եպիսկոպոս, և է-ով է գրում, որովհետև բառամիջում ե-ն է է հնչում: Նույնիսկ գրաբար գրականության մեջ հանդիպում ենք նման շեղումների: «Այսմհէտէ... շմտանէ» (Սան., ԺԳ դար, 125). «չորէքկուսի, երէկ և այսաւր ամէն և ամէնեքեան, ամէնէսեան, «ի սուրբ երրորդութէնէն որոշեալ եղիցի» (1303, Դիվ, III, 222): № 468 ձեռագրում՝ գոյութէնէ, զանտեղեկութէնէ, տրտմութէնէ և այլն: «Պարզատումար»-ում ամիսների անունները գրված են թե՛ է, թե՛ ե տառերով՝ սեպտեմբեր, բայց՝ սկպտեբեր, հոկտեբեր, նոյեբեր, դեկտեբեր:

Գալանոսի անունը գրված է Կղէմէս, Կղեմէս ձևերով: Սանահինի 1652 թ. մի արձանագրության մեջ դրված է՝ յիշեցէք (Սան, 40), Ագուեցին գրում է՝ երէխայ, տէղ: Սրանք բարբառային արտասանություն չեն, նա չի գրում՝ էրէխա, որովհետև առաջին ե-ն է չի արտասանում, երկրորդը է է արտասանում և այդպես էլ գրում է: Գրում են Երեմիա, բայց՝ յէրեմիաս (№ 823, 15), եպիսկոպոս. բայց՝ արհիէպիսկոպոսի (Դիվ, I, 14), որովհետև բառամիջում ե-ն Ե է հնչում:

Ուրեմն ուղղագրական շեղումների առաջին պատճառը գրական արտասանությունն է, քանի որ բառամիջում ու բառավերջում ե և է տառերը միատեսակ հնչում ունեն, Ե են հնչում:

Շեղումների երկրորդ պատճառը բարբառային արտասանությունն է, դա լինում է գերազանցապես բառասկզբի դիրքում: Արտասանում են՝ ēthē, ēkēꝛēci, ērēm, ēreꝛ, ērēvançi, ēki, bnuthē-nēn և գրում՝ էթէ, էկէղէցի, էրէմ, էրէց, էրէվանցի, էկի, բնութէնէն: ԺԵ դարի № 2188 ձեռագրում կարդում ենք՝ ձէնեց, էլան, էրէկ: Նույնպիսիք կան և № 2226 (1450 թ.) ձեռագրում, որոնք բարբառային արտասանության հետևանք են: Այլ օրինակներ: «էկի վանքս» (ԺԳ դար, Սան, 125): «էպիսկոպոս տր Յովանէս» (1261, Հաղբ, 167): «Կու դնեմք վէրէն» (Արհեստ, 63): «Բերթէն դուս էկաւ» (Ագու., 142): «Ես Սգիս բէրդկէցի միաբանեցա եւ էտու զիմ այգին: ...Հեթէնի էգոյն, ի թվ 28»—1291 (Սան, 166):

Ինչպես երևում է օրինակներից, բարբառային արտասանու-

թյան հետևանքով առաջացած շեղումները հանդիպում են գերազանցապես վիմագիր արձանագրություններում, մատենագրության մեջ նման շեղումներ գրեթե չկան, միայն հիշատակարաններում են պատահում և մեկ էլ այն գեղարվեստական ստեղծագործություններում՝ առակներ, տաղեր, որոնք միջին հայերենով են գրված կամ բարբառախառն են։ Քերականության գրքերում, ավետարաններում, սաղմոսարաններում, պատմական աշխատություններում այնպիսի սխալների չենք հանդիպում, ինչպիսիք են՝ էկէ-դեցի, էպիսկոպոս, էկաւ, էլաւ։ Բարբառային սխալներ կան Ագուլեցու օրագրում, Եգեվի «Спошение...» գրքում, Այգեկցու առակներում, Թլկուրանցու, Հով. Սեբաստացու տաղերի տարբերակներում, «Առաւել պարզաբանութիւն» գրքում և այլն։

Կարստը կիլիկյան հայերենի հնչյունային համակարգը ներկայացնող տախտակում ե-ի դիմաց դնում է ye, ie, e տառերը, իսկ է-ի դիմաց՝ ě։ Նա նույնպես գրում է, թե ձայնավոր է-ն ունի երկբարբառային ծագում։ Ըստ Կարստի միջին հայերենում է-ն ä -ի նշանակություն ուներ, որ երևում է տառադարձությունից։ Օրինակ՝ արաբ. պարսկ. tādībīr -ը միջին հայերենում դարձել է թէտպիր, արաբ. sārāf > սէրէֆիկ, պարսկ. kārvan > քէրվան, gumbād > գումբէթ, caryāk > չարէկ, հին ֆրանս. barnais — harnes > հառնէզ, chastel > չաստէլ, Isabelle > Զապէլ։ Այս բոլոր ձևերում է-ն բաց e-ի հնչում ունի։ Այդ է պատճառը, որ հանդիպում են՝ գէդ(տ), ամէն, մէն, մէկ, աղէկ, քաւէլ, զարթէլ(դ), վգէն, սամարչէք, ֆրէր, պողլէր, փոխանակ՝ ամեն, գեդ, մեկ, աղեկ, քաւել, զարդել, ֆրեր, սերեֆիկ։ Բացի ě ձայնից, «կիլիկյան ե-ն կը ներկայացնէ մի քանի տեղեր ie, ye հնչումը», որ երևում է օտար բառերի տառադարձությունից։ Օրինակ՝ μαρνειναιερα < Մաւնածկերտ, ասսպետ, Barone Ossino Bassiliensi > պարոն Օշին Վասիլենցի։ Հին ֆրանս. banier > պաներ, solier > սոլեր, chancelier > չանցլեր և այլն⁵⁶։

Աճառյանն էլ է գրում, որ ե տառը միջին հայերենում շեշտի տակ հնչում էր ie, շեշտից առաջ՝ ě, ինչպես՝ ընկեր—Ingier, մեռնիմ—mecnim⁵⁷, ե-ի ie արտասանությունը երևում է նաև Ռիվոլայի բառարանում, ուր նա գրում է՝ հիեր, զիետ, փոխանակ՝ հեր. գետ⁵⁸։

Սակայն ավելորդ չենք համարում նշել, որ մեր ուսումնասիրած մատենագրության մեջ ու վիմական արձանագրություններում չենք նկատել որևէ գրավոր փաստ, որ վկայեր, թե բառամիջում ե-ն շեշտի տակ ie է հնչել։ Նույնիսկ բարբառով գրված որևէ գոր-

ծում չենք հանդիպել այնպիսի սխալի, որ շեշտի տակ եղած ե-ին նախորդած լինի յ տառը: Հակառակը, մեր բերած փաստերը ցույց են տալիս, որ բառամիջում ամենուրեք ե, է տառերը նույն հրնշումն են ունեցել: Մեզ դժվարություն առաջ են կանգնեցնում այս հարցում տառադարձությունը, երբ օտար լե-ի դիմաց հայերեն գրել են ե տառը, և մեկ էլ Ռիվուլայի օգտագործած ճիւր, զիւտ ձևերը: Վերջինս հակված ենք բացատրելու Արարատյան բարբառի որոշ խոսվածքների հնչման ազդեցությամբ, ուր իսկապես որ բառամիջի բաղաձայնին նախորդող դիրքում ե-ն լե է հնչում՝ բեր, կեր, մեր հնչում են՝ բլէր, կլէր, մլէր:

Փաստեր կան, որ մինչև ուշ միջնադար բառասկզբի ե-ն օ է հնչել: Մենք տեսանք, որ Աճառյանը Ե դարում բառասկզբի ե տառի է հնչման ապացույցներից մեկն էլ այն է համարում, որ ե-ով սկսվող բառերը ստանում են յ նախդիրը, նշանակում է, ե-ն բառասկզբում է հնչումն ուներ, եթե ye հնչումն ունենար, ի տառը կստանար, և բերում է յերագ, յեղիպտոս ձևերը, մի բան, որ նկատել է Քարտաշյանը⁵⁹:

Այս երևույթը շարունակվում է նաև միջնադարում, որ տևում է քնդհուպ մինչև ԺԸ դարը: Օրինակ՝ № 485 (ԺԴ դար) ձեռագրում կարդում ենք՝ «Եթէ ոչ վայրապար եղև յերկոտասան զըլուխս, հաստատելով յեկեղեցի խաղաղութիւն» (8): Նշանակում է գրիչը եկեղեցի բառը կարդում է օկօ: Չե՛լ, դրա համար էլ ձայնավոր է-ից առաջ ավելացնում է յ նախդիրը: «Գանձ Արամեան լեզուիս» (1711) գրքում գրված է՝ «համբարձեալ յերկինս, համբառնայ յերկինս» (298): «Ինչի յեպիսկոպոսէն և ի վարդապետէն» (Գունդրստաբլ, 69): Մյուս կողմից՝ կան բառեր, որոնց բառասկզբի ե-ին նախորդում է յ տառը, որ նախդիր չէ, ինչպես յերկաւ, յեղանակ, յեւ բառերը Ե դարում:

Օրինակ՝ «կառուցեալ, յեղանակեր» (№ 4035, 212): Այսպիսի յեղանակաւ (4066, 393բ): «Ոմանց պատահի երթալ և դժուար և յերկար» (412բ): «Բայց իւր յետին սահմանս տասնուչորս ար լինի» (№ 416, 83): «Ըստ այսմ արինակի յերկարաձգեցի նահմանն» (№ 556, 38): «Մի զհաւոր անիրաւել յուզել զյեղանակ արդարութեան» (3բ): «Վասն սուր և յերկայն նեղերոյն» (№ 415, 125): «Յերկար նեղն այն է, որ ժամով մահ բերէ» (անդ, 125բ): «Յերբ յգանան» (79): «Կարմրեն այտքն և յերկայնանան եղրնկունքն» (69բ): «Որոյ ձեռն ու ոտքն յերկան է»: «Որոյ վիզն յերկան է, շատահաչ լինի» (№ 266, 178): «Յերբ թուխմայ լինի, յերբ հիւանդնայ» (Գրիգորիս, 84): Գալանոսի բառարանում հանդիպում են անյերկրայաբար և անյերկրայ ձևերը:

Անկախ նրանից, թե ե-ին նախորդող յ տառը վերը բերված օրինակներում ինչպե՞ս է հնչել՝ յ, թե՞ ֆ, ինչպե՞ս են կարդացել՝ yerkaýnanan, yerb, yetin, yēyanak, թե herkaýnanan, herb, hetin, heryanak, տվյալ դեպքում դա կարևոր չէ, բոլոր դեպքերում յ-ի առկայությունը վկայում է, որ հիշյալ բառերում ե-ն է հնչումն է ունեցել։ Եթե yerb արտասանելու համար ե-ից առաջ յ են ավելացրել, նշանակում է ե-ն առանց յ-ի է հնչումն է ունեցել, յ-ն ավելացրել են, որ ye դառնա։ Չենք կարծում, որ Գալանոսի բառարանում տեղ գտած անյերկբայաբառ, անյերկբայ ձևերը ձո-herkby կարդալիս լինեին, կամ յերեկի-ն՝ hereveli, յերանեկի-ն՝ heraneli։ № 1920 ձեռագրում (Եղիշե, 1569 թ.) հանդիպում են՝ «Եւ գերկուս յերանեկի կապելոցն ընդ իւր խաղացոյց» (319բ)։ «Զի յերկարեսցի իմ պարծեալս ի նեղութիւն ցանկանացս» (23)։ Դրժվար է պատկերացնել, որ գրիչը Եղիշեի պատմությունն արտագրել է բարբառով, ուստի ավելի հավանական է, որ արտասանել է yvan el y revell ու այդպես էլ գրել է։ Իսկ նախորդ օրինակները, ուր յ-ն նախդիր է, ցույց են տալիս, որ ե-ն պարզ է ձայնավորի հնչում է ունեցել, ուստի յ նախդիրն է ստացել և ոչ ի։ Հետագայում, երբ յ նախդիրը մթագնվել է և չի գիտակցվել իբրև նախդիր, ավելացրել են ի նախդիրը, որով ստացվել են կրկնակի նախդիրի ձևեր։ Օրինակ՝ «Զի միութի ի յերրորդութի և երրորդութի ի միութի վերաբերեալ լիցի» (№ 485, 234)։ «Ի երկիր ծնել» (ն. տ.)։ «Ի յերկկամացն զգոզն ի փաղայբուշտն թափէր» (Գրիգորիս, 158)։ Հետաքրքիր է, որ այս բժշկարանի A տարբերակում գրիչը ի-ն չի գրել, բավարարվել է մեկ նախդիրով՝ յերկկամացն։

Ուրեմն, մինչև ուշ միջնադար ե տառը թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում ունեցել է օ հնչումը, պահել է օ դարի որակը, թեև տեղ-տեղ էլ հնչել է ye, ie ձևով։ Բառասկզբի ե-ն միանգամից չի դարձել ye, ունեցել է իր փոփոխման աստիճանական ընթացք՝ եղել է ժամանակ, որ նա ունեցել է և՛ օ, և՛ ye հնչումը, որն արտահայտվել է միջնադարի վերը բերված օրինակներում։ Եթե ընդունենք էլ, որ միջնադարում յերբ, յերկաբ, յերիկամ ձևերում յ-ն ֆ է կարդացվել (herb, herkar, herikam), միևնույն է, յ-ի առկայությունը վկայում է, որ բառասկզբի ե-ն պարզ ձայնավոր է եղել և ստացել է յ նախդիրը, չէ՞ որ դասական հայերենում այդ բառերը գրվում էին ե-ով (երբ, երկկամ)։ Միջնադարում այդ բառերի յ նախդրի իմաստը մթագնել է, և յերբ, յերկաբ, յերիկամ ձևերը դարձել են բառի ուղիղ ձևեր։

Ը.— Դասական հայերենի ք տառի ուղղագրության կանոն-

ները շարունակում են գործել նաև միջին դարերում: Ը-ն գրվում է բառասկզբում ն, մ նայ հնչյութներից առաջ լսվելիս (ընկեր, րմբրոնել, ընծայ, ընդունել, ըմպել), մի քանի բառերի բառասկզբում՝ հնչյունափոխության հետևանքով առաջացած (ըղձալի, ընչաքաղց): Ը-ով է սկսվում նաև ըստ նախդիրը: Ը-ով սկսվող բառերը բարդվելիս կամ ածանցվելիս ր տառը բառամիջում պահպանում են: Ուղղագրական այս կարգը նշում են նաև միջնադարի քերականները (Կղեմես Գալանոս, Հովհ. Կոստանդնուպոլսեցի և ուրիշներ): Սակայն այդ կանոնի շեղումները, որ սկսվել են շատ վաղուց⁶⁰, շարունակվում են նաև միջին դարերում: Նշենք այդ շեղումները:

1. Գրիչները շարունակում են Ը-ն գրել բառասկզբում սկ. ստ. սպ. շտ, շպ. զբ, զգ տառակապակցություններին նախորդող դիրքում, ուր մի թույլ Ը է լսվում, բայց դասական ուղղագրությամբ չի գրվում: Օրինակ՝ Բսկզբունս (1243, № 1747, 72բ): «Ըսկիզբն և կատարումն մեզ եղիցի» (80բ): «Ձեղջերուաքաղն ըստեղծանիցէ» (82): Ըստացուածք (№ 485, 206): «Ըսկիզբն առնել կամիմ» (220), ըստիպաւ (№ 1890, 17բ), ըսկզբնական (1266, № 823, 5բ), «Վասն ոչ Բսկիզբն ծըննդոց, Բսկսեալ» (ԺԳ դար, № 2865, 6), «Բսկսաք գրել» (10), «Բսքանչելի իմն, ըստորոտով պարըսպին (16բ), «Բստուգեալ հաւաստի», Բսպանեալ (22), Բսկսաւ, Բոշտունոյ (108): «Հոգի ըստացեալ» (117), Բստանալոյն (155), «Բստոյգ կող ցաւէ» (1466, № 415, 70), Բստորադասք—կրտսերադասք (1468, № 266, 23), Բստրջանալ—զրդջանալ (33), զանձինս Բզգասցուք (1409. կիզբն իմաստութեան» («Գիրք այբուբենից», 13), Բսպանել, Բսպառնալ, Բսպանախ, Բսկըսել, Բշտըպան (ն. տ.):

Ը տառի այսպիսի կիրառությունը ավելի շատ տարածված է այն գործերում, որոնք գրված են միջին հայերենով կամ բարբառախառն: Դասական պատմիչների, ավետարանական գրականության մեջ ավելի քիչ է պատահում: Այս տեսակետից բնորոշ է, որ «Պարզաբանութիւն սաղմոսացն Դաւթի մարգարեի» (1687 թ.) գրքի գրաբարյան բաժնում բառասկզբի թույլ լսվող Ը-ն չի գրված, իսկ աշխարհաբարյան բաժնում գրված է: Օրինակ՝ «Սպանանել զամբիծն» և «Բսպանանել զանմեղ և զամբիծ մարդն» (46), «սքանչելի ես» և «դու այլ առաւել Բսքանչելի ես» (503) և այսպես՝ «Բստացած ժառանգութիւնն անտես չի առներ» (255), «Բստեղծօղ, ես եմ ըստեղծեր, գնացէք, մտէք ձեր ըշտեմարանն» (485), «Բսպանեցին ցաւօք» (505), «դու տր ստեղծող ամենայն գոյից» (486) և այլն: Այսպիսի դիրքում Ը-ն պատահում է նույնիսկ հատուկ

անուններում: Օրինակ՝ «ԸՍտեփանոս Կոթայ, Ղուլիկն Գետկայ իւրեանց ձեռայգիրով գիր տվին... թվակ. ԶՂԱ»—1532 (Դիվ, II, 27): «Տր ԸՍտեփանոս Սիւնեաց արհիեպիսկոպոս» (1501, Դիվ, II, 103):

Երբեմն այս շարվող ր-ն պահպանում են նաև բառամիջում՝ հիշյալ բառերի ածանցված կամ բարդված ձևերում: Օրինակ՝ Գալանոսը գրում է՝ անրգգա, անրսկիզբն:

Մի թույլ ր է լսվում նաև բաղաձայնասկիզբ բառերի վրա զ նախդիրն ավելանալիս, որը դասական ուղղագրությամբ՝ չի գրվում: Մինչդեռ այս դարերում հաճախ ենք հանդիպում այդ ր-ի գրությանը: Օրինակ՝ «ըգբանական տունգս» (№ 988, 284), ըզմեղ (№ 985, 201), «ըգբանն ասացան» (№ 1747, 80), «որպէս և նա ըզմարմնոյ» (№ 488, 22), «գրեցաք երբեմն ըզդատաստան» (31),

«ըզսբ եկեղեցւոյ» (37), «ըստեղծեց ըզմարդն, ըզհաւասարութիւն» (86բ): Այսպես էլ №№ 1748, 1751, 556, 485, 4035, 1920, 994, 985, 2679 ձեռագրերում, Շնորհալու «Յն որդի», Գալանոսի քերականության, «Գիրք քերականութեան» մեջ հանդիպում են՝ ըզտարբերութիւն, ըզկենցաղս, ըզկենդանւոյն, ըզհոտն, ըզմշտաբոխ աղբիւրն, ըզմովախական, ըզպատճառն, ըզբանն, ըզճմարտութիւնն, ըզբովանդակն, ըզկենդանի, ըզբնութեան, ըզշարշարանս, ըզզօրութիւն, ըզսկզբունս և այլն: Երբեմն ր տառը պատահում է և այնպիսի բառերի սկզբում, որոնց զ նախդիրը ձայնավորին է նախորդում: Օրինակ՝ «Կեցուցանել ըզամենայն արարածս» (№ 985, 192ա): Պատահում է, որ ր-ն ավելացնում են զ-ից հետո:

Օրինակ՝ զըխրաքանչիւրսն (№ 485, 11) զընախաթոռս, զըքեզ, զըսպանակն, զըպաշտամունսն, զըդատապարտութիւն, զըբազուկս, զընախատինս (№ 2679), զըմեռեալս, զըկենդանիս (№ 1958, զըՅակոբ, զըփարես (№ 5547), զըհարկաւորութիւն (№ 988), զըզգեստս (№ 1890), ըստ որում վերջին օրինակի ր-ն զգեստ բառի նախահունչ ր-ն չէ, այլ զ նախդիրնը, քանի որ գրիչը գրում է զգեստյր և ր-ն չի դնում:

Ը-ն բառասկզբում երբեմն երևում է բարբառային արտասանության հետևանքով: Օրինակ՝ «Ոտիցն ըղունկն ճեղքին» (№ 415, 174): «Ըղորդ պահէ» (188բ): «Յըղղէն գայ» (170): «Ըղորդ լինի» (218բ): «Կու բարդեմք ըննին հետ» (Արհեստ, 24) և այլն, որոնք առաջացել են ե>ը, ու>ը, ի>ը հնչյունափոխությամբ:

Հայր դժվարանում է ու-ով բառեր սկսել, ուստի օտարազգի ու-ով սկսվող բառերի սկզբում կամ ր է ավելացնում և կամ էլ որևէ այլ ձայնավոր (ըռուս, ուռուս, ըռամ): Այդ պատճառով էլ միջին

դարերում հաճախ բառասկզբի ու-ին նախորդում է ը տառը: Օրինակ՝ «ողորմութեամբ թագաւորին ըմբուսեալնայ: Ի թագաւորութեան ըմբուսեալնայ» (1234, ՕրԾ, 471): «Ըռանկ ունի» (N° 415, 7): «Ըռնդամբ խանձառեալ ծծեն» (N° 2101, 167): «Պատմութիւն Բոսստակէս Հաստիվերցոյ վարդապետի» (N° 2865, 242բ), Ըմբուսուն (ն. տ.): «Որ կոչի ըռուզք» (243բ): «Ըռմաթ-աշքացաւութիւն» (N° 415, 198), «Տր Ըռստաքիսի» (217), ըռուզեկն (190): Ռիվոլան գրում է՝ ըռես, ըռզակ: Հովհ. Կոստանդնուպոլսեցին՝ ըռունդն, ըռնգան, N° 8443 ձեռագրում (1687 թ.)՝ ըռադամ, ըռուփի, ըռասաթն և այլն:

2. Գիտենք, որ բառամիջում ը տառը գրվում է միայն բաղադրյալ բառերում, երբ բաղադրիչներից մեկը սկսվում է ը տառով (նախորթաց, գործընկեր), իսկ մնացած դեպքերում լավող ը-ն (գաղտնավանկ) չի գրվում: Այս կանոնը ևս խախտվում է, սկսած է դարից: Միջին դարերում այն ավելի է տարածվում: Ժ դարի միայն մի ձեռագրում (N° 985) հաշվեցինք գաղտնավանկ ը-ով գրված 118 բառ, չհաշված նրանց հաճախականությունը: Բերենք դրանցից մի քանիսը՝ վաղընջոց, դրմա, դրժնդակ, փըշրեցից, քըլխոյ, հընագանդ, զճըշմարիտս, դընեցէր, Եւփըրատ, փըրկեսցէ, ալրստամբ և այլն:

Այստեղ ը-ն հանդիպում է նաև վերջին բաղաձայնից առաջ, նրան սովորաբար հաջորդում են ս, դ, ն հոդերը և ք հոգնակերտ մասնիկը՝ պատարապրս, շնորհրս, գարծաթըն, կարպըք, հրեշտակըք, աշակերտըք և այլն:

Իբրև կանոն գրված են բառամիջի բոլոր այն ը-երը, որոնք հնչյունափոխության հետևանք են՝ ժողովըրդոց, գալրստեան, ցըրուեցան, ի սկրգբանէ, նըշան, դըստերաց, նըստել, խըցան, նընջել, ստընտուաց, անդընդոյ, ձըգեցեր, խընդութիւն, տընանկ, գըտեալ. շարդացն և այլն:

Նկատվում է նաև, որ գրիչը խուսափում է միևնույն բառում երկու ը դրելուց, ուստի գրում է՝ մշտընջենաւոր, զճըշմարիտս, հրեշտակըն, զդրուես, խընդըեցէք, ստընտուաց, սրամըտութեանն և այլն, ուր երկու գաղտնավանկից միայն մեկի ը-ն է գրել:

Գաղտնավանկի ը-ն գրում են նաև այլ գրիչներ: Օրինակ՝ խընձորն, ի տուրնջեան, ժողովըրդեանն (N° 2684), մարտընչին, ծնընդեան, բժըշկեցան (N° 2679), վերըստին, կարմընջէն (1029 թ., ՕրԾ, 443), գըթըշկէ, անդընդոց, մըտաք, դժընդակութեանց, գալրստեան (N° 988): N° 4035 (ԺԲ դար) ձեռագրի գրիչը գրեթե բոլոր գաղտնավանկի ը-երը գրել է շուրջ 120 բառում, չհաշված հաճա-

խականությունը: Այդ գրիչը նույնիսկ գրում է՝ սբրբ, բարամբրբ, երարբ, որոնց վերջնահնչյուն է-ին նախորդող դիրքում Բ չի էլ յսվում: № 5547 (Ժ դար), 1958 (Ժ դար), 988 (1046 թ.), 10434 (1069 թ.), 1890 (1174 թ.), 975 (1195 թ.), 777 (ԺԲ դար), 164 (ԺԲ—ԺԳ դար), 1097 (1280 թ.), 2865 (ԺԳ—ԺԴ դար), 4066 (1283 թ.), 2101 (1223 թ.), 416 (1279 թ.), 49 (1282 թ.), 438 (1295 թ.), 556 (ԺԳ դար), 1746 (1280 թ.), 1747 (1243 թ.), 1748 (ԺԴ դար), 1751 (ԺԴ դար), 108 (1322 թ.), 485 (ԺԴ դար), 57 (ԺԴ դար), 415 (1466 թ.), 266 (1468 թ.), 994 (1409 թ.), 2188 (ԺԵ դար), 3179 (ԺԵ դար), 5800 (ԺԵ դար), 2226 (ԺԵ դար), 1887 (ԺԵ դար), 8376 (ԺԵ դար) ձևագրերում, Գունդստարի «Դատաստանագրում» (1261 թ.), Մաղարիա արեղայի «Պատմութիւն աղգիննետողաց» (ԺԳ դար) գրքում, Վ. Հակոբյանի կաղամած «Մանր ժամանակագրություններ»-ում (Ժ—ԺԶ դար), Օրբելու, Մառի, Գ. Հովսեփյանի, Կ. Ղաֆաղարյանի, Ս. Բարխուդարյանի հրատարակած վիմական արձանագրություններում սովորական երևույթ է դադտնավանկ Բ-ի գրությունը: Լ. Խաչիկյանի «ԺԵ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ»-ի I, II գրքերում (1400—1480 թթ.) գաղտնավանկի Բ-ն գրված է 576 բառում, որից 30-ում բառասկզբի Ռ տառին նախորդող դիրքում (ըմբռտունեաց, ըռաբունապետին, աղգին բոռկանից, ըմանախաթուն, ըռստակիսին, ըռամիկ, ըռամ, ըռէս), 125-ում՝ բառասկզբի ստ. սկ. շտ տառակապակցություններին և զ նախորդին նախորդող դիրքում, եթե զ-ին հաջորդում է բաղաձայն (ըզփեսան, ըզբանք, ըզգովասանութիւն, ըզկենդանի), երբեմն նաև նախորդից կամ առաջին բաղաձայնից հետո (սրտացաւ, զըփծուն, զըտեղանք, Սրտեփան, սըկսել): Պատահում է նաև, որ ձայնալուրին նախորդող զ նախորդից հետո էլ է գրիչը Բ-ն գրում (ըզանիմաստ, ըզուղիղն, ըզառաջնորդ, ըզանվարժ և այլն), ըստ որում այս դեպքում նույնիսկ թույլ հնչող Բ չկա, հիշյալ բառերը կարդացվել են՝ զանիմաստ, զուղիղն, զառաջնորդ, զանվարժ: 223-ում՝ բառամիջում, իբրև հնչյունափոխությունից ստացված գաղտնավանկ Բ-ի արտահայտություն (տընառաջ, զըծագրելով, խորհրդածութեամբ, աւժընդակութեամբ, նարընջի, Սարգսի, թրւական, բըռնութիւն, ծըծկան, վըշտաշատ, փախըստական, ծնընդեամբ). իսկ 198-ում՝ բառամիջի մնացած գաղտնավանկերի դիմաց (կրտակ, Բըջնոյ, տըղայոց, թըշառութեմբ, նաև թըշուառութեամբ, որ նշանակում է, թե գրիչը բաղաձայնին հաջորդող և ձայնավորին նախորդող ու-ն վ է արտասանում (ih-šavaj), խընդրոյ, դընէ, մընալ, տըկար, դաւթաւ, իըլաթայ և այլն):

Երբեմն էլ գրիչները գաղտնավանկի ը-ն չեն գրում, բայց հատուկ նշանով ցույց են տալիս: Օրինակ՝ 1466 թ. N° 415 ձեռագրի գրիչը չ ժխտական մասնիկի և նրան հաջորդող բաղաձայնի միջև՝ նշանն է դնում՝ չ¹թողա, չ¹փոխե, չ¹լինի, չ¹վախէ, չ¹տեսանես, չ¹մարսէ, չ¹համբերէ, չ¹կշտանայ և այլն: Թեև ձայնավորին նախորդող շ-ի վրա այդ նշանը չի դնում (չունենայ), քանի որ չի լրսվում, բայց երբեմն սխալվում է և գրում՝ չ¹ընծայիլ, չ¹եղաւ, չ¹ելնէ: Ըստ երևույթին վերջին երկու բառի ե-ն չԵ է արտասանում: Այսպիսի նշանով գրության հանդիպում ենք նաև այլ ձեռագրերում:

Գաղտնավանկի ը-ի գրությունն արդարացնում է նաև Գրիգոր Տաթևացին, բայց տառի կրկնության դեպքում՝ ծրծումբ, դրդում և այլն: Նա գրում է, թե եթ-ը «ի կրկնել գրոյ ի մէջն դնի, որպէս՝ դրդում, ծրծումբ, շըշիւն, քըբով, կամ ի սպառուած տողին, որպէս՝ դր-թութիւն, բը-նութիւն, բը-ժշկութիւն և այլն»⁶¹:

Գաղտնավանկի ը-ն գրությամբ արտահայտվել է նաև ուշ միջնադարի տպագիր գրականության մեջ: Օրինակ՝ «Սաղմոսարան»-ում (1565)՝ կողնչիցիք, ամպարըշտութեան, Լորնջաց, անդրնդոց, ջընջեսցին և այլն: «Պարզատումարում» (1512)՝ ձմրոնամուտ, շաղրնդաղեր, շընշով, ծնընդեան, հարըստանայ, խաւըրծիլն, թըթու և այլն: «Տոմար Գրիգորեան» (1585 թ.) գրքում՝ ըստուգման, դըժուարին, ամբս, ընդ նըմին, մընալ, ըստուգութեան, բանըս, ըզհասարակաց, ըսկիզբն և այլն: «Առաւել պարգաբանութիւն» (1630) գրքում՝ խընդրել, հըպարտ, քըտեմբ, ճըշմարիտ, քըղամիդըն, պահըս, ըսգենոյն, իօթըն, գըրոց, ըզսայ, գըվարձանայ և այլն: «Խորհրդատետր...» (1641 թ.) գրքում՝ անըստուեր, ճըշմարիտ, հըզօրի, ողորմածըդ, դատաստանսըն: «Գանձ չափոյ» գրքում (1699)՝ արճըճի: «Գիրք այբուբենից»-ում (1675)՝ սըննդկան, ծընունդ, գըտանէ, լըռէ, հըպատակիլ, հընազանդիլ և այլն: Գալանոսի քերականության գրքում (1642)՝ տըպագրութեան, աղընշութեան, գըրակազմութեան, գըթած, գալըստեան, ծնընդեան, ժողովըրդեան. ի նախկընի Ռիվոլայի Բառգրքում (1633)՝ ազնրական, ալըրմաղ անթըրոց, գըղջալ, դաղըն, ընկըղմել, թըթվաշ, կըտըցել, մկըրտին, մղընշոց, կսկըծալ, մըրըրիկ և այլն: «Պարգաբանութիւն...» (1687) գրքում՝ կու կորընչին, պտըտան և այլն: «Արհեստ համարողութեան» (1675) գրքում՝ դեմըն, մընացածն, կողմըն, մընար, ուրեմըն, տակումըն, տողումըն (նաև՝ տողումն), ապըշումըն և այլն: Այս գրությունն այնքան էր տարածված, որ Գալանոսը նույնիսկ օրինականացնում է այն՝ օրինաչափ համարելով:

Այս օրինակներից երևում է, որ գրիչները գաղտնավանկի ը-ն

գրել են գերազանցապես այն դեպքում, երբ նրա հնչումը հնչյունափոխության հետևանք է եղել: Նրանք աշխատել են այս կամ այն ձայնավորի տեղը պրաված ը-ն նշել, մի բան, որ հետագայում, ինչպես կտեսնենք, նույնպես ձգտում էին կանոնական դարձնել: Բազմաթիվ բառերում գաղտնավանկի ը-ն չի գրված, բայց եթե ը-ի տվյալ հնչումը հետևանք է հնչյունափոխության, գերազանցապես գրված է, ինչպես տեսանք ժ դարի X 985 ձևագրում: Եթե որևէ բառում երկու գաղտնավանկ կա, գրիչները նախընտրել են պրավորով արտահայտել հնչյունափոխությունից առաջացածը: Օրինակ, գրել են՝ կսկըծալ, կտըցել, սկըգբնական, թնդըմունք և այլն, որովհետև կտուց, սկիգբ, կսկիծ, թունդ բառերի ու ի ձայնավորներն են ը-ի փոխվել:

Իսկ եթե միևնույն բառի երկու գաղտնավանկն էլ հնչյունափոխության հետևանք են, մեկն են արտահայտել ը տառով, սովորաբար II-ր՝ ծնընդեան, բժըշկութիւն, թեև նրանց բառասկզբի բաղաձայններին էլ հաջորդում է ը գաղտնավանկը, որը հետևանք է ի>ը, ոյ>ը հնչյունափոխության (ծին>ծըն, բոյժ>բըժ):

Բերված օրինակները վկայում են, որ գրիչները ձգտել են մեկից ավելի ը չգրել տվյալ բառում:

Կարելի է ենթադրել, որ ժամանակակից հայերենի ը հոգը, որ հաջորդում է բառավերջի բաղաձայնին (ջուրը, գիրքը), այս ուղին է անցել: Սկզբում գրել են՝ արծաթըն, մարդըն, հրեշտակքըն, աշակերտքըն, զանձըն, գետըն, զջուրըն, ինչպես որ կան վերը բերված օրինակներում, հետագայում դժվարացել են այդ դիրքում վերջին ն-ն արտասանել, և կամաց-կամաց ն-ն ընկել է, մնացել է ը-ն՝ մարդը, գետը, արծաթը:

Ը-ի ուղղագրության շեղումները միջին, ինչպես և նախորդ, դարերում կատարվել են երկու ուղղությանմբ, մեկը այդ տառի տվյալ դիրքում շրնդունված, անհարկի գրությունն է, այսպես կոչված հավելագրումը, որի մասին խոսեցինք, մյուսը գրավորից ը տառի զեղչումն է այն դիրքում, ուր դասական ուղղագրությամբ պահանջվում է: Երկու դեպքում էլ պատճառը ուղղագրությունը չիմանալն է: Ինչպես մինչև ժ դարը, այնպես էլ միջին դարերում նկատվում է, որ երբ ը-ով սկսվող բառերի սկզբին որևէ մասնիկ (զ նախդիր, ան նախածանց) կամ որևէ արմատ է ավելանում բառասկզբի ը տառը չեն գրում (զնտիրս, գործնկեց), ըստ երևույթին բառամիջի գաղտնավանկ ը-ի նմանակությամբ: Օրինակ՝ № 985 ձևագրի գրիչը գրում է. «Եւ զնտիր ընտիրս» (74ա), որից երևում է, որ նա ը-ի ուղղագրությունը գիտի, բայց զ-ին հաջորդող ը-ն չի գրել, մտածելով, թե առանց այդ տառը գրելու էլ կար-

դացվում է, ինչպես գաղտնավանկի Բ-ն: Ուրեմն նա տվյալ դիրքում Բ-ն ավելորդ է համարել գրել: Բայց նման գրությունը երբեմն կարող է բառիմաստի վրա ազդել, այն երկիմաստ դարձնել: Այս չէ՞ պատճառը, որ N 415 ձեռագրի դրիշը չ նախամասնիկից հետո հատուկ նշանով (1) զգուշացնում է ընթերցողին, որ այդ դիրքում Բ-ն արասանեն (չ՝վախէ, չ՝գա և այլն):

Բերենք օրինակներ Ժ—ԺԵ դարերի գրությունից, ուր սխալվել են դրիշները՝ Բ-ն չգրելով: «Անդոսնեսցէ զնդունիչսն զնոսա ի ժողովին յայն ժամ» (N 1958, 146): «Անկեցեալն ի հաւատս րնկերաց քոց» (N 2684, 1բ), «զնկերն իբրև զինքն» (58): «Յնկերն գանու ու ուրեք ցուցանեն» (58բ): «Յնդունելութեան լաւագունին լինել» (59), «յվբոնեցելումն» (69), «յնդունողսն լինելով» (166բ), «յնտութին պտղոցն» (170) և այլն: Նշանակում է այս գրիշը, ինչպես ասացինք, սկզբունք է ունեցել բառամիջում լսվող Բ-ն չգրել, մտածելով, որ բառիմաստի վրա չի ազդում: N 4035 ձեռագրում՝ «Ի յնթացսն նիրհումն» (76), զնթացակցութիւնսն (75), զնթերցուածն (222), զնդունելութին (282), «զնկալեալն ի քէն» (390) և այլն: N 1097 ձեռագրում՝ «մերկանա յնշից» (72), «երեսուն աւուր կատարէ զնթացսն» (95), զնկեր քո (120), յնչացքերէն (101): N 2865 ձեռագրում՝ «աւրստարէ ուսուցանել» (310բ): N 415 ձեռագրում՝ «Ի յայլ անդամուսն լինի յնկերութին» (93), «լտվի ի շատ կերակրոց և յնպելեաց» (115):

Այս սխալը, սակայն, ընդհանրացած երևույթ չէ, հանդիպում է որոշ գրություններում: Մեղ ուսումնասիրած №№ 2679, 988, 10434, 1820, 823, 4066, 975, 777, 2101, 416, 49, 1746, 1747, 1748, 1751, 485, 57, 266, 994 ձեռագրերում, փոմական արձանագրություններում, «Պաքզատումար», «Սաղմոսարան», «Գիրք այբուբենից», «Պարզաբանութիւն», «Արհեստ համարողութեան», «Նորոգոյն ծաղիկ զօրութեան», «Տոմար Գրիգորեան», «Առաւել պարզաբանութիւն», «Խորհրդատետր պատարագին», «Գանձ շափոյ», Գունդստաբլի «Դատաստանագիրք», Մաղաքիա աթեղայի «Պատմություն ազգին նետողաց», Ուիվոլայի «Բառգիրք», Խաշատուր Արզումեցու, Կղեմես Գալանոսի քերականության զրքերում և այլուր այդպիսի սխալագրության շէնք հանդիպել:

ԹՎԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնականում պահպանվում է դասական գրաբարի գրությունը՝ մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եւթն կամ եաւթն, ութ, ինն, տասն, աշնուհետև մինչև տասնվեցը միավորները ձախից միանում են տասնավորներին՝ մետասան, երկոտասան, հնգետասան,

վելշտասան, 17, 18, 19-ը կազմվում են «և» շաղկապով և գրվում միասին՝ Լեթնետասն, ութնետասն, իննետասն, քսանից բարձր՝ միավորները հարադրվում են տասնավորներին աջից և շաղկապով՝ քսան և մի, երեսուն և երկու, իննսուն և եաթն, վաթսուն և վեց, Լեթանասուն և երեք, հարեւր (հարիւր), երկերիւր, հինգհարեւր, բււր, երկու բււր: Սրանց համապատասխան էլ կազմվում են դասականները, բայտ որում բաղադրյալ ձևերի յուրաքանչյուր բաղադրիչն է դասական դառնում՝ ութ հարիւրերորդի, վաթսներորդի և իններորդի, բայց՝ ութ ու տասներորդ:

Այս դրույթյուններին զուգահեռ միջին դարերում ստեղծվեցին որոշ թվականների նոր ձևեր, դրանք հին ձևերն էին՝ հնչյունափոխված, և հանդիպում են միջին հայերենով կամ բարբառախառն լեզվով գրված գործերում: Ստեղծվում են հետևյալ զուգահեռ դրույթյունները՝ մի—մէկ (մեկ), Երկու—երկուր, չորք—չորս, հինգ—հինկ, եաթն (եւթն)—եօթն—եթն, իաւթն, մետասան—տասնու—մէկ, երկոտասան—տասնուերկու, քսան և մի—քսանումէկ, քսան և ինն—քսանուինն, երեսուն—եռսուն, քառասուն—քառսուն, Լեթնասուն (եաւթանասուն)—եօթնասուն, Լեթնասուն, իաւթնասուն, հարեւր (հարիւր)—հարոյո: Մնացածը պահպանվում է նույնությամբ:

Եւրն ձևից կազմվել է Լըն, երբ սկսել են եւ-ը միացյալ և գրով արտահայտել, նույնիսկ՝ առեծ. բււր են գրել, փոխանակ՝ առեւծ. բււր գրելու: Այս ձևերը զուգահեռ հանդիպում են նույնիսկ միևնույն գործում: Ն՝ 416 ձեռագրի 78-րդ էջում գրված է՝ «Եւթն նուպայն բռնէ ի տասնուչորս աւրն», իսկ 79-րդ էջում՝ «Եւթն են»: Այլ ձեռագրի տարևթիվը նշված է՝ «Ի յԼեթն հարիւրերորդի քսաներորդի ութերորդի թուականի հայոց (1279) գրեցաւ գիրքս այս»: նախադասությամբ, ուր օգտագործված է Եւրն ձևը:

Զուգահեռ գործածվում են երկերիւր և երկհարիւր ձևերը: Օրինակ՝ «Ամացն երկերիւրոյ» (Ն՝ 2679, 24): «Ի :Լե: երկհարիւրս քսան և ընդ նմին եւ վեց էր թվական» (Դիվ, II, 91): Երբեմն III, IV դասական թվականները մի ռ-ով են գրված լինում, երբեմն էլ Վ՝ և բարձր դասականները երկու ռ-ով են հանդիպում: Ն՝ 108 ձեռագրում գրված է՝ էրորդ, չորորդ, Ն՝ 1746 ձեռագրի գրիչը գրել է՝ հինկերորդ, ութերորդ, իններորդ, բայց սխալը նկատելով՝ մի ռ-ն ջնջել է, շնայած դարձյալ հինգերորդը մինչև վերջ մնացել է հինկերորդ գրությամբ: Վաթսուն բառը պատահում է նաև վագսուն, վացուն ձևերով: Օրինակ՝ «Վացուն և վեց ստակ և ութ տինարի» (Արհեստ համարողութեան, 1675, 97): Ն՝ 1746 ձեռագրում հանդիպում է նաև՝ իաւթն ձևը՝ «էն միջակ իաւթն» (161բ): Պատահում են նաև եռսուն, քառսուն ձևերը (Ն՝ 1749):

«Պարզատումար»-ում հանդիպում են՝ Լուսունմէկ, Բաւնե-
կուֆն, տասներեք գրութիւնները: Ռիվոյան գրում է՝ շուրեֆհարու.
Լաւթն, հաւթն—Լաւթն—Լաւթնասուն, բիուր, ինիսուն, ինհարու,
իւրեֆ, որոնք բարբառային արտասանության հետեանք են:

Թվականները սրանց զուգընթաց ունեն նաև տառային արտա-
հայտութիւն: Մաշտոցը այբուբենը ստեղծելիս տառերին սովեց
նաև թվի արժեք, ստեղծեց այբուբենի թվական արժեքի մի կուռ
համակարգ: Այսպէս. ա—ք միավորների դասն է, ժ—ղ՝ տասնա-
վորների, ւ—ջ՝ հարյուրավորների, ո—ւ՝ հազարավորների: Մինչև
տասնյոթերորդ դարը հայ մատենագրության մեջ ընդունված էր
այս համակարգը, սրանով գրում էին նաև թվաբանության, աստ-
ղաբաշխության գրքեր (Շիրակացի), հաշվումներն արտահայտում
էին տառերով: Դասական թվականներն արտահայտվում էին թե՛
բառերով (տասնուչորսերորդ, երեստասներորդ), թե՛ տառերով:
Այս դեպքում գրում էին տվյալ թվի համապատասխան տառը և
ավելացնում բորդ, երորդ մասնիկները, օրինակ՝ իրերորդ (28-րդ),
:եւերորդ (5-րդ), զրորդ (6-րդ), էրորդ (7-րդ) և այլն: Թիվ ար-
տահայտող տառը նշում էին հատուկ նշանով՝ կամ պիժ էին դնում
վերևը, կամ կետերի մեջ էին առնում: Օրինակ՝ «Մինչև ի իր
երորդն» (28-րդ): «Ի բժերորդում ամսեան» (20-րդ) (N 2679, 28):
«Տուր :եւ երորդին» (N 4066, 2): Մաղաքիայի պատմության մեջ
հինգերորդն արտահայտված է եղբ. վեցերորդը՝ զրորդ, յոթերորդը՝
լրորդ ձևով: Ըստ Գ. Պետրոսյանի՝ տառերի այս կիրառութիւնը
տեևեց մինչև Ժէ դարը, երբ մուտք գործեցին արաբական նշան-
ները⁶²: Այնուհետև տառերն օգտագործում են դասական թվակա-
նի նշանակումամբ, նրանցով արտահայտում են դարերը, տարե-
թվերը, թագավորների, կաթողիկոսների կարգը և այլն:

ԵՐԿՐԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դասական հայերենի երկբարբառների արտասանութիւնը մի-
ջին դարերում դպալի փոփոխության էր ենթարկվել: Մենք արդեն
տեսանք, որ աւ երկբարբառը փոխվել էր օ պարզ հնչյունի և միջ-
նադարում այդ տառակապակցութիւնը բաղաձայնին նախորդող
գիրքում իր տեղը զիջել էր օ տառին: Ուս, ուո, ուե, ուի երկբար-
բառներն էլ վեր էին ածվել վա, վո, վե, վի հնչյունակապակցու-
թիւնների (այսինքն ու-ն փոխվել էր վ-ի), ստանալով գրության
ուա—ւա—վա, ուո—ւո—վո, ուե—ւե—վե և ոփ—փ—վի ձևերը,
որոնց մասին խոսվել է օ, վ, տառերի կապակցութեամբ:

Շարունակում են զուգահեռ գործածվել գրաբարի եւ—իւ երկ-

բարբառները, տարածված են առեւծ—առիւծ, թէւր—թիւր, բււր—
բիւր, հւսք—հիւսք, աղբււր—աղբիւր, հարեւր—հարիւր, երկեւղ—
երկիւղ, գեւղ—գիւղ, դեւր—դիւր գուպագրությունները:

Նրբ գրության մեջ և տառակապակցության փոխարեն սկսե-
ցին օգտագործել միացյալ և տառը, որոշ բառերում և երկբար-
բառային տառակապակցության փոխարեն նույնպէս գրում էին և
Օրինակ՝ ՌՌ 2101, 488, 1746, 2865 ձեռագրերում հանդիպում են
առեւծ, բււր, առղւն, աղբււր, գեւղ, ևրն, քեւր գրությունները, փո-
խանակ՝ առեւծ, բււր, արդեւր, աղբււր, գեւղ, ևւթն, թէւր: Միջին
դարերի գրչություններում արտահայտված են երկբարբառների
դրեթե բոլոր փոփոխությունները, ինչպէս՝ արդեււր>արդեօք>
արդեւր>արդեւր, ևււթն>եօթն>եւթն>ւթն, նաւ՝ իււթն, որ
ևււթն դրության արտասանության հետեանք է⁶², գեււղ>գեօղ>
>գեւղ>գեւղ, բււր>բււր>բիւր, թիւր>թեւր>թեւր և այլն:

«Առաւել պարզաբանութիւն» գրքում (1630 թ.) իւ երկբարբառը
արտահայտված է իւ տառակապակցությամբ: Օրինակ՝ «Պատ-
հառն էր ած և մարդ իուրովին զօրութեամբ» (44), փոխանակ՝ իւ-
րովին: «Յետ յարութեան իուրոյ» (43): «Դիւրաւ կայրէ հաւա-
տալ»: «Իուրոց, իուրեանց: Միուս անգամ ասի» (45): «Միուսն ընդ
աջմէ կամ ի ձախմէ միմիանց» (45), «Իուստիդօսի», «Բիւրաւս-
տան» և այլն: Սա հետեանք է այն բանի, որ հեղինակը մեր իւ-ն
իւն է կարդում, ի-ն պահպանում է, իսկ ւ-ն ու է կարդում:

Հայտնի է, որ գրաբարի երկբարբառները միջին հայերենում
և բարբառներում պարզ ձայնավորի են վերածվում բառամիջում՝
ոյ>ու (լոյս>լուս. բոյս>բուս, գոյն>գուն), ոյ>ի՝ (լոյս—լիւս):
իւ>ու (գիւղ>գուղ, ճիւղ>ճուղ, առիւծ>առուծ), իւ>ե (գիւղ>
գեւղ, երկիւղ>երկեւղ, ծիւղ>ծեւղ), իւ>ի (շիւղ>շիւղ, հարիւր>հա-
րիր), իա>է (միակ>մէկ, զիարդ>զերդ), եա>ե (լեարդ>լերդ,
գերեաց>գերեց), այ>ա (գալլ>գալ, այնել>անել), ու>ո (բուլ-
դար>բուդար, անկուշտ>անկոշտ), եայ>է (ոսկեայ>ոսկէ, գրեա
թէ>գրէ թէ): Սրանցից որոշ ձևեր հետագայում անցան գրական
աշխարհաբարին, ինչպէս՝ մեկ, գրեթե, գերեց, զերդ և այլն: Մյուս-
ները մնացին միայն միջին հայերենում և բարբառներում: Միջին
հայերենով գրված գրքերում տարածված էր նաև իւ>ոյ հնչյունա-
փոխությունը, ՌՌ 415, 57, 266, 4035 և այլ ձեռագրերում գրված
են՝ հարոյր, արոյն, նոյթ, ալոյր ձևերը, փոխանակ՝ հարիւր, արին,
նիւթ, ալիւր ձևերի: Հերացու «Ջերմանց միւթարութիւն» գործում
(ձեռ. Ռ 416, 1279 թ.) ամենուրեք կարելի է հանդիպել նման գրու-
թյունների: «Ջերդ գարէ ակոյր և շոր թուզ» (50): «Ձեպի շոյտ և

շարձակի շոյտ» (52): «Աւոյն հանելն շատ անկտակար է» (60): «Գոյրահալ ուտէ» (45բ): «Ի խաւտեշ մաղձին բորբոսելոյն լինի» (52բ): «Նոյթն շատ արձակի»: «Նիւթն շարձակի շոյտ» (55բ): «Գոյ-
րութիւն լինի, դոյրութիւն իմանայ» (110): Գրում է՝ յեւկիդէ (19,
20), ճուղֆ, զնուղսն (36), շոյտով, շոյտահալ (21, 24) և այլն: Սրանք հետեանք են միջին հայերենում երկբարբառներում կա-
տարված հնչյունափոխության⁶³:

Թլկուրանցու, Այգեկցու, Հովապափ Սեբաստացու և միջնա-
ղարի այլ տաղերգուների գործերում, Ռիվոլայի բառարանում տա-
րածված ձևեր են՝ անուշ, գերագուն, լուս, կուս, կուսին, կորուսին,
բուսք, գլխուն, գալն (= գայլն), դունզգուն, բուն, երդնուր, ցաւուն,
իշու, մարդու, կացուց, յայնկուս, թուլ, Սունաց, սուն և այլն: Ռի-
վոլան երբեմն ու տառի փոխարեն գրում է ո տառը (ամոսնանաւ,
անէրեթաբար, անոշ, անցոցել, բուղար, ոժով, արբեցոցել): Նույ-
նիսկ իւ տառի փոխարեն է ո գրում (Գորջստան, Գորջի, փոխանակ՝
Գիւրջստան, Գիւրջի): Սրանք բոլորն էլ բարբառային արտասանու-
թյան հետեանք են, այլ կերպ Ռիվոլան չէր գրի՝ քոռակ, բորթրս-
տան, պատրութ, պտող: Խոռտուր էնել և այլն, և շմտան գրական
լեզու, չխաթարեցին: Նրա ուղղագրության ընթացքը: -

Դասական գրականության արտագրություններում և միջին հա-
յերենով գրված երկերում երբեմն երկբարբառ արտահայտող տա-
ռակապացության փոխարեն հանդիպում ենք նրա մեկ տառին: Օ-
րինակ՝ իւ-ի փոխարեն գրում են Վ: Ի տարբերություն երկբար-
բառների դրության վերը հիշատակված շեղումների, որոնք բխում
են միջին հայերենում կատարված հնչյունափոխության, տառակա-
պակցության փոխարեն մեկ տառի գրությունը հետեանք էր մա-
գաղաթի, թղթի վրա տեղ շահելու, նաև արագ դրելու ցանկության:
Այս դեպքում գրությունը արտասանության վրա չէր ազդում:
Ամենից շատ տարածված էր իւ-ի փոխարեն Վ տառի գրությունը:
ՄՄ 2101, 777, 108, 4035, 2865 ձեռագրերում, վիմական արձա-
նագրություններում հանդիպում են՝ Սանեաց, սրութն, հւսսսի,
հւսսոյ, գւտ, արն, երկւղ, եզպտացոց, հւսսականացս (նաև՝
հիւսիսականացս), բազմութնն, նթոց, գերութնն գրությունները:
Կան գրիչներ, որ սկզբունքորեն իւ տառակապակցության փոխա-
րեն գրում են Վ տառը: Օրինակ՝ ՄՄ 1890 (1174 թ., Եղիշե), 4035
(ԺԲ դար, Նարեկացի), 2865 (ԺԳ—ԺԴ դար, Խորենացի), 468
(ԺԲ—ԺԳ դար), 777 (ԺԲ դար) ձեռագրերի գրիչները բառավերջի
ութիւն ածանցը իբրև կանոն գրում են ութն ձևով: Մ 2865 ձեռա-
գրում ամենուրեք հանդիպում են հւսսոյ, եզպտացոյ, թագաու-
րութն, լառաջատեսութն և նման գրություններ: Եզնիկ Կողբացու

«եղծ»-ն արտագրող գրիչը (1280, N 1097) հետևողականորեն աշխատելու պրոցեսը պարզապես չէր արժանանում համապատասխան հարգման: «Այնուհետև ինքնուրույն զգուշացրեցին ինքնին՝ չհարգելու և չհարգվելու» (61): «Այնուհետև ինքնուրույն զգուշացրեցին ինքնին՝ չհարգելու և չհարգվելու» (66) և այլն:

Շնորհալու «Յիսուս որդի...» գրքում և տառի փոխարեն օգտագործված է և տառը: Օրինակ՝ «է մարմին և ունի բնութիւն» (49), «երկրաւորաց և որ ծովու կան» (301) և այլն: Սա իհարկէ միայն ուղղագրական նշանակութիւն ունի, գրողն ուզում է երկու տառի փոխարեն մի տառ օգտագործել, պահելով նրա հնչումը, տվելով դեպքում և-ն նա և է կարգում: Ինչպես երևում է, և-ն իր փոքրութիւնով և ձևի պարզութեամբ շատ գրիչներին է պաշտօնակցել, մեկն ուզել է իւր-ի փոխարեն օգտագործել, մեկը՝ ու-ի, մյուսն էլ՝ և-ի: Բայց բոլորն էլ սահմանափակվեցին առանձին հեղինակները՝ դրբերում, թեև հետագայում էլ այդ առաջարկները ոմանց կողմից կրկնվեցին:

ՏԱՌԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Մինչև ժ դարը հայերենի տառադարձութիւնը մի սկզբունք ուներ՝ հարադատ մնալ փոխատու լեզվի հնչմանը: Եվ քանի որ հայերենի յուրաքանչյուր հնչույթի համապատասխանում էր մի տառ, ուստի օտար լ-ի դիմաց գրում էին դ, ց-ի դիմաց՝ գ, կ-ի դիմաց՝ կ, յ-ի դիմաց՝ պ, այսինքն օտար ձայնեղի դիմաց հայերենի ձայնեղն էր գրվում, խուլի դիմաց՝ խուլը, շնչեղ խուլի դիմաց՝ շնչեղ խուլը:

Ժ դարից հետո, երբ զգալի փոփոխութիւն տեղի ունեցավ հայերենի բաղաձայնական համակարգում, փոխվեց նաև տառադարձութիւնը: Կիլիկյան հայերենի լ>տ, ց>կ փոփոխութիւնը ամենից առաջ արտահայտվեց տառադարձության մեջ: Հալ դասական մատչաններն արտագրելիս գրիչներն ամեն կերպ աշխատում էին հարադատ մնալ նախնիների գրչութեանը և միայն փոխառյալ բառերում էին տուրք տալիս իրենց արտասանութեանը: Անդրադառնալով այդ հարցին՝ Գաբրիել Այվազյանը գրում է՝ թե փոխառյալ բառերում նախնայաց տառադարձութիւններից շեղվելն սկսվեց Ժ դարից հետո, կիլիկյանների ժամանակից: Կիլիկյանները սկսեցին գրել Վասիլ (փոխ. Բասիլ), Պաղոս (փոխ. Բաղդոս), պարոն (փոխ. բարոն), բրինձ (փոխ. պրինս), պալ (փոխ. բալ), Զապել (փոխ. Զաբել) և այլն:

Ստացվել էր տառադարձության երկու սկզբունք. դասական գրականության մեջ հանդիպող հնագույն անունները արևմտահայ

հատվածում գրում էին հին տառադարձությամբ՝ Պետրոս, Սոկրատէս, նոր գրքերում նոր անունները՝ ըստ իրենց հնչման՝ bazar-ը դարձնում էին պազար, baron-ը՝ պարոն, rubb-ը՝ ռուպ (ըռուպ), Խոկ արևելահայ հատվածում բոլոր դեպքերում պահպանվում էր դասական տառադարձությունը: № 985 ձեռագրում բաբելացուց, փիլիպպոս, Գամաղիէլ ճիշտ գրությունների կողքին կա Նաբոֆո-դոնոսոր շեղված գրությունը: № 416 ձեռագրում՝ դիմացնել, ռուպն, հուկնա, հապ, № 415 ձեռագրում՝ պլղամ, կոլինն, յարապ, տիապետ: «Դիվան»-ի III պրակում տպագրված արձանագրություններում՝ Անտրեաս, դանպար, փեղամպար, սուլտան, Կոստանտին, տաթար և այլն:

Միջին հայերնում իբրև ընդհանուր երևույթ խուլ հնչյունները դարձել էին ձայնեղ, ձայնեղները՝ խուլ կամ շնչեղ խուլ: Ըստ այդմ էլ օտարազգի ձայնեղի դիմաց գրում էին խուլ հնչում ունեցող տառը, որ կարդային ձայնեղ, պարոն էին գրում, որ baron կարդային: Այս ճանապարհով էլ միջին հայերենում ստացվեցին մի շարք բառեր, որոնք դասական արտասանությամբ չէին համապատասխանում տվյալ բառի՝ փոխատու լեզվի արտասանությանը, այն համապատասխանում էր միայն կիլիկյան կամ արևմտահայ հատվածի արտասանությանը: Ահա դրանցից մի քանիսը: Հուն. διὰδρυχῆ > տիաթիկ, պրսկ. pai'zambar > փեղամպար, bazar > պազար, divan > տիւան, mazgit > մզկիթ, հին ֆրանսերեն bell > պայլ, baron > պարոն, banier > պաներ, double > տուպլ, legat > լիկաթ, Balduin > Պաղտոյն, guillotin > կիոդին, gogulag > կուկլակ, արաբերեն byrj > պուրճ, xabar > խապար, sabun > սապուն, muhtasib > մուխտասիպ, rubb > ռուպ (ըռուպ), defter > տֆթար, tadbir (tätbir) > թէտպիր, թըտպիր, Jarra > ճառա, zarjabil > զնըճպիլ, հին ֆրանս. liege > լիճ, losselin > ծոսլին, roger > ըռաճէր և այլն:

Այդպեւ էր օտարազգի խուլի դիմաց դնում էին հայերեն ձայնեղը: Հին ֆրանս. otrier > աղրիել, plaît > բլայթ, avocat > աուգաթ, conne > գան, commun > գոմին, coullner > գոյներ, temple > դամփլ, traytor > դրայիդոր, emperour > քմբրուր (օնբրուր), montfort > մունֆորդ, marchis > մարգիդ, prince > բրինձ, passage > բասաջ, chaperon > ջաբրոն, chalonge > ջալունջ, chanone > ջանուն, chancellor > ջանցլեր և այլն:

Սրանով արևմտահայերն ապահովում էին փոխառյալ բառի՝

փոխատու լեզվի հնչմանը հարազատ հնչումը, որովհետև պայլ գրում էին, bail կարգում, մոտիկ ֆրանսական հնչմանը: Բայց օտար խուլի դիմաց ձայնեղը դնելով հաճախ հեռանում էին, plait-ը բլայթ էին դարձնում:

Այտրնյանը նշում է, որ այս շրջանի մատենագիրները տառադարձության հարցում որոշակի սկզբունք չունեին, յուրաքանչյուրը գրում էր ըստ իր գավառի հնչման՝ առանց նախնիների կանոնին նայելու: Քայքայվում է նախնյաց ուղղագրությունը փոխառյալ բառերում: Որոշակի կանոն չկա բ—փ, գ—բ, դ—թ գրելու համար:

«Կը ծնանի դատի գլխով լին մալ,—դրում է նա,— որ իրօք տեսական է ի գործնականն անցնելով նորագոյն կերպարանք մը կու տայ հայ տառադարձութեան»⁶⁴: Ապա նշում է դատի տառադարձության հինգ տեսակ: 1. Օտարների լ-ի դիմաց (Պաղատին, Ռընադտ, պուղա): 2. Հունարեն յ-ի դիմաց, փոխանակ նախնիների գ տառի (Աղաթօն, Աղլայիա, Պալալօջ): 3. Արաբական ՝ քաղաձայնի փոխարեն (պաղպաք, պաղպէք, դիպ, սղուրել): 4. Արեւելյան ղայն գրի դիմաց (բուղա, պղղամ, պաղտար): 5. Արեւելյան գաֆ գրի տեղ, փոխանակ կ-ի (ղամար, դալամ, արաբերեն՝ գամար. գալամ)⁶⁴:

Հայերենի տառադարձության մեջ զգալի փոփոխություն մտցրերին, ասում է Այտրնյանը, նաև նորատառ օ-ն և ֆ-ն: Սկսեցին գրել Ֆուկաս (փոխ. Փոկաս), Նիկիֆօն (փոխ. Նիկեփոն), Սաֆրիա. Սիլիֆֆ (փոխ. Իսաւրիա, Սելեվկիա): Գրում են Փօլօս և Պալլիս. Զաւրաբաբել, ուր արդեն ո-ի փոխարեն օ են դնում, վերջինս էլ աւ-ով փոխարինում: Սովորական են դարձել վ-ի փոխարեն բ գրելը, ո-ի փոխարեն ր, ժ-ի փոխարեն գիմ, ճ-ի փոխարեն՝ ջ: Օրինակ՝ Վաովառէ (բարբարոս բառի իզականը), ջաբրոն (chaperon), ջամբո (chambre), մարաջախտ (marechal), քրինճ (prince), մաժիստո (magistr), և այլն: Շատ մատենագիրներ էլ ժողովրդի ազավաղված արտասանությամբ գ-ի կամ կ-ի փոխարեն հաճախ դ կամ խ են գրում (Ղառապաղ, Ղազանճուխ): Արեւմտահայերը թուրքերենի ազդեցությամբ եվրոպական բառերն էլ են խ-ով գրում (խարահիսար, իսանլըճայ, իումխաբու):

Ժէ դարի քերական Հովհաննես Կոստանդնուպոլսեցին իր «Զտութիւն հայկաբանութեան» գրքում (1674 թ.) շարադրում է տառադարձության կարգը՝ հետեւելով արեւմտահայ հնչմանը: Լատինական b տառն անվանում է պէ, d-ն՝ տէ, g-ն՝ ճէ, h-ն՝ հաֆֆա. k-ն՝ քա, p-ն՝ փէ, t-ն՝ թէ, z-ն՝ զեթա: Բերում է օտար բառեր և դիմացը դնում հայերենը՝ terra > Թէոռա «երկիր», panis > փա-

*նիս «հաց», praldicatio > փրկեփացիո, aestas > էսթաս «ամառ», coecus > շէքուս «կույր»։ Այնուհետեւ բացատրում է, թե «Երարտաբերի միշտ իբրեւ ըզպ», օրինակ՝ *barba* > պառպա «մորուս», *beatus* > պէթուս «երանեցեալ», *bipes* > պիփէս «երկոտանի», *cerasus* > շերասուս «կեռաս»։ C-ն E կամ i տառերից առաջ կարդացվում է շ (*cera* — շերա «մոմ», *cerasus* — շերասուս), իսկ եթե a-ին կամ o-ին է նախորդում (ինչպես և v-ին կամ որեէ բաղաձայնի) կարդացվում է f (*kaput* > քափութ «գլուխ», *corpus* յօրփուս «մարմին», *kultus* > քուլթուս «պաշտոն», *ce-natrus* > թէչնաթրուս «ծիաբույժ», *damnatio* > տամնացիո «դատապարտութիւն», *discipulus* > տիսչիփուլուս «աշակերտ», *ec-clesia* > էքլեզիա «կեկեցի», *facies* > ֆաչիէս «երես», *fames* > ֆամէս «սով», *gena* > ճէնա «այտ», *gigas* > ճիկաս «հսկա»։ Ուրեմն e-ն տառադարձում է է-ով, g-ն ջ գրելու փոխարեն և է գրում, այսինքն խուլ տառով է գրում, որ ձայնեղ կարդա։ A, o, v տառերին ու բաղաձայններին նախորդող դիքքում c-ն կարդում է կ (*cummi* > կումի «խեժ», *callus* > կալլուս «աքաղաղ», *clans* > կլանս «կաղին»)։ G > կ, b > պ։ Օրինակ՝ *ignis* > իկնիս «հուր», *imago* > իմակօ «պատկեր», *ibis* > իպիս «օձամարտ»։ K > ք, p > փ (*pes* > փէս «ոտք», *tabula* > թապուլա «տախտակ», *ti-mor* > թիմօր «երկյուղ», *gustus* > քուսթուս «ճաշակ», *castus* > քասթուս «ողջախոհ», *pax* > փաքս «խաղաղութիւն», *felix* > ֆելիքս «երջանկութիւն», *syllaba* > սիլլապա «վանկ», *nympha* > նիմֆա «հարս», *Alpes* > Ալփէս, *Albanus* > Ալպան, *Helicon* > Հելիքոն, *Athos* > Աթոս, *Euphrates* > Եփրատ, *Aethopia* > էթովպիա և այլն (էջ 4—7)։ Կոստանդնուպոլսեցու նման օտար լեզվի ձայնեղը խուլով, իսկ խուլը շնչեղ խուլով է տառադարձում «Գիրք այբուբենից»-ի հեղինակը (1675)։ Այնտեղ գրված է՝ պօն ճօնօ (բարի օր), պօնա սէրա (բարի երեկո), թոէվօլթէ (երեք անգամ), աւանթի քուաթո ճիօնի (չորս օրից առաջ), սալութա թէ լա միա մուլիէ (բարե տարեք իմ կնոջը), տի լա տել մարէ (ծովի այն կողմը), ֆօնոա լավէրիթա (րնդդեմ ճշմարտությանը), փէո լա մօտէ (վասն սիրո), տօփփօիլ մանճիարէ (ուտելուց հետո), թրա լէ տօննէ (կանանց մեջ)։ Այս բոլոր օրինակներում օտար ձայնեղի դիմաց գրել է մեր խուլերը, որն արեմտահայի համար ճիշտ միջոց է, որպեսզի փոխառյալ բառը հնչի փոխառու լեզվի հնչման հարազատ,*

գրում է՝ լա տօննա, կարդում է լա դօննա, այսինքն իտալական հնչմանը մոտիկ, եթե գրեր լա դօննա, պիտի կարդար լա քօննա, որ հեռու կլիներ իտալական հնչումից: Ահա թե ինչու նա գրում է՝ անճելօ, վօսթրա, նօսթրա, ամաթօ, թու, մօութօ, քօնթոա, իմ֊փոէսիօ և այլն, ուր իտալական b-ն դարձել է պ (bon > պօն), g > ճ (giorno > ճօռնո), t > թ (avanti > աւանթի), k > ք, d > թ: Գալանոսի անունն էլ (Կղեմէս) այս տառադարձության հետևանք է, ուր G-ն արտահայտված է Կ-ով, ինքն էլ logika-ն հայատառ գրել է լօճիգա:

Այս տառադարձությամբ է ներկայացված հայերենի այբուբենը Բլեզ դը Վիժնեի Traicte des chiffres («Ձեռնարկ գրերի մասին») գրքում, լույս տեսած 1568 թ.⁶⁵:

Ինչպես վերն ասվեց, միջին հայերենի շրջանում եղել է բաղաձայնների նաև եռաստիճան անտեղաշարժ համակարգ (բ—պ—փ), որը երևում է հատկապես օտար բառերի տառադարձության մեջ: Հ. Մուրադյանը բերում է Մատենադարանում պահպանված արաբերեն-պարսկերեն-հայերեն մի բառարան (ձեռագիր № 7151, ԺԴ դար, Սյունիք), ուր պարսկերենի ձայնեղները (b, g, d, j) տառադարձված են հայերենի ձայնեղներով (բ, գ, դ, ջ), իսկ շնչեղ խուկերը (ph, kh, th)՝ շնչեղ խուկերով (փ, ք, թ): Օրինակ՝ buzurgthar > քզուրգթըր «մեծագույն», bagardan grifthan > քրգրգըն գրիֆթըն «հանձն առնել», zuzašthan > գուզըշթըն «անցնել», gandum > գնդում «ցորեն», dusthan > դաւսթան «սիրելիք», dušman > դուշմնան «թշնամիք», Jahid Khardan > ջահդ քրդըն «ջանս առնել», khamthar > քմթըր «պակասագույն», phasux dādan > փասուխ դադըն «պատասխանել», phakhl dil > փաքի դիլ «սրբություն սրտի», khini kašidan > քինի քշիդըն «քեն քարշել» և այլն⁶⁶:

Այս տառադարձությամբ են գրված օտարազգի բառերը արևելահայ հատվածի մատենագրության ու վիժագրության մեջ:

Այս (դասական) տառադարձությունն է օգտագործված Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» գրքում, ուր կարդում ենք՝ Կեսարեայ, Պորփիր, Քաղկեդոն, Բաբգէն, Կապպադովկացոց, Մահմեդ (նաև՝ Մահմէտ), Կուրապաղատ, Նիկիփօս, Աբլաբասն (որոշ տարբերակներում նաև՝ Ապլապասն), Բաղդատ, Տիգրիս, Դիոսկորոս, Տրապէզոն, Մագիստրոս (նաև՝ ու-ով): Հր. Աճառյանը Գանձակեցու օգտագործած մոնղոլական անունները բնագրերի հետ է համեմատել և գտել, որ «բառերի ուղղագրությունը ընդհանրապես ճիշտ է»⁶⁷:

«Միջին հայերենի շրջանում,— գրում է Աճառյանը,— տառադարձության փոփոխությամբ գրաբարի ուղիղ գրչությունն էլ փոխվեց և նոր տառադարձությամբ առաջ եկած ձևերը գրականի բարձրացան: Նույնիսկ արևելյան գրականում սովորական են դարձել տառադարձությամբ ձևերը, օրինակ՝ պարոն, որ ֆրանսերեն *baron* ձևից անցնելով հայերենի, պիտի գրվեր բարոն, բայց ըստ արևմտյանի գրվում է միշտ պարոն»⁶⁸: Արևմտյան արտասանության հետևանք են՝ բնտիր, բնտրել, որ ծագում են դիր արմատից բնդ նախդիրով, ուստի պիտի լինեին՝ բնդիր, բնդրել, բանկ, բանկագին, որ ծագում են պարսկերեն *tang* հոմանիշից, ուստի պիտի լինեին թանգ, թանգագին, ինչպես թանգարան բառն է: Պատշգամբ—ը ծագում է իրաներեն *paiti škamba* «սյունաշարք» ձևից, ճիշտ կլիներ գրել պատշկամբ, թաքցնել—թագցնել գույղ ձևերից ճիշտը *f*-ով ձևն է, Մեյնն այն կապում է լատիներեն *taceo* «լռել» բառի հետ, ուրեմն՝ թափշիլ, թափուտ, թափսոց, թափուն: Սանդուղֆ և սանդուխֆ ձևերից ճիշտը ղֆ-ով ձևն է, կապվում է հունարեն *σκανδαλον* (*scandale*) բառի հետ, սանդ արմատից, ուղ մասնիկով: Բաղդ—բախտ ձևերից ճիշտը առաջինն է, բրխում է պարսկերեն *baxt* ձևից: Բացօթեայ—բացօղեայ ձևերից ճիշտը *p*-ով ձևն է, օթ, օթևան արմատից⁶⁹:

Տառադարձության վերը նշված երկու սկզբունքի պատճառով միևնույն բառը ստանում է գրության երկու ձև՝ նախիջևան—նախջաւան—նախճաւան, Աբուբաքր—Ապուպաքր, Աբղղմելիք—Ապտըլմելիք, բուլղար—պուլղար, Սմբատ—Սմպատ, Սրապիոն—Սրաբիոն—Սրափիոն, խոջայ—խոճայ—խօճայ, Բաղդատ—Պաղտատ, խան—ղան, Թաջ խաթուն—Թաճ խաթուն, Կոստնդին—Կոստանտին, փեղամբար—փեղամպար, հոսպիտալ—հոսպիթալ—հոսբիթալ և այլն: Տառադարձության ժամանակ անփոփոխ են մնում ստ. շտ. սկ, շկ, սպ, շպ տառակապակցությունները, նրանց խուլերը ձայնեղի չեն վերածվում. օրինակ՝ *contestable* > գունդստաբրլ (կամ գունդրստապր), *hospital* > հոսպիտալ, *paiti-škamba* > պատշկամբ, Կոստանդին (կամ Կոստանտին), Արխստոտեղես, ազոստոս (օզոստոս) և այլն:

Բուն հայերեն բառերում նույնպես այդ տառակապակցությունները անփոփոխ են մնում՝ սպաննեմ—*spannem*, հարուստ—*herust*, Հայաստան—*Hayastan*, կուշտ—*kušt* և այլն:

Մենք տեսանք, որ գրավոր աղբյուրներում փոքրատառ գիրը հանդիպում է է դարից: Բայց հենց երկաթագիր ձևագրերում տարբերվում են ղլխագիրն ու սովորական գիրը, թեև երկուսն էլ երկաթագիր են: Գրիչներն աշխատել են վերնագրերը, նոր պարբերությունները սկսել մյուս երկաթագրերից գույնով, մեծությամբ տարբերվող տառերով: Հետզհետե երևում են փոքրատառ գրերը:

Ժ—ԺԲ դարերում ավելի հաճախ ենք հանդիպում դրանց: № 2679 (981 թ.) ձեռագրում յունուաբ բառի ա և յ տառերը գրված են փոքրատառով՝ յունոնաբ (էջ 11բ): Այդպես է գրված կոչեցեալ և ոչ բառերի չ տառը՝ Կոչեցեալ, Ոչ (7): Երբեմն վերջակետից հետո մեծատառով է սկսում՝ Աստեղք (11բ), Ահա (98), Աթանաս (110), Անատողիս (23բ) և այլն, բայց հետևողական չէ գրիչը, պատահում է, որ փոքրատառով է սկսում, ավելին՝ բառամիջում երբեմն մի տառը մեծատառով է գրում, մյուսը՝ փոքրատառով: Օրինակ՝ ՊԱՌՆԱՍՈՍ, պԱՐԹԵՆԻՈՍ, մԱՍԻՐ, ՂԻԿԱՔԱՆԴՈՍ (36): «Իբրեւ ՀՐԱՄԱՆ ետ ան» (36բ): «ԶոԳԱ Գեղեղովն» (37բ): Վերջակետից հետո գրում է մեծատառով՝ Պետրոս. Աթանաս, բայց դրանց հաջորդող անձնանունները՝ փոքրատառով են՝ «Ասէ ադամ հոգի անուանի» (98), «Ասէ իսմայէղացին, Ասէ յակոբիկն» (98): «Ի միաբանութիւն պաւղոս ասաց» (105): Այսպես փոքրատառով են գրված՝ արքահամու, արիսդիտէս, զաքարիայի (18բ), անդրեաս, մաղնոսի (24), զաբրիել ասորւոց (25): Ուրեմն գրիչը մեծատառով է սկսում վերնագրերը, վերջակետից հետո և նոր տողից: Պատահում է, որ բառամիջում նույնպես մեծատառ է օգտագործում: Այս ձեռագրի 223բ էջի լուսանկարը հրապարակել է Գ. Հովսեփյանը իր «Քարտեզ»-ում, ուր տեսնում ենք «Մնաւ Տր Մեր յս Քս: Վասն սբ անձնին: Զի զնա ի կուսից կարգս կարգեաց գլուխ ի Տաճարին» (էջ 23, տախտակ իբ): Այնտեղ ա, չ, գ, գ, ն, ճ տառերը փոքրատառով են գրված, իսկ ե, ի, ու, ք, տ, ծ տառերը՝ մեծատառով: Փոքրատառով են գրված ան. յս. սբ հապավումները, իսկ մեծատառով՝ Տր, Քր հապավումները: էջմիածնի № 948 ձեռագրի (1196 թ.) հիշատակարանի հատվածում վերջակետից հետո գրված է. «Արդ ընկալ յինէն եփրեմ զամենայն, զոր ասեմս Քեզ ոՉ ի կամաց իմոց, այլ ակամա վասն յի», ուր մեծատառով են գրված միայն սկզբի ա-ն, չ-ն և քեզ բառի ք-ն (Քար, տախտակ ԼԸ): № 2684 ձեռագրի (1159 թ.) հիշատակարանում գրված է. «զանպիտան

կազմիչ գրոցս զյովնան... յորում ամի կազմեցի», — ուր բոլոր տա-
ռերը փոքրատառ են գրված (Քար, տախտակ ԽԲ): № 1007 ձեռագրում
(Ժ—ԺԱ դար) փոքրատառով են գրված՝ յոր, ահառոն անձնանուն-
ները, նույնիսկ վերջակետին հաջորդող անդրանիկ բառը փոքրա-
տառով է գրված (էջ 3): № 1890 (1174 թ.) ձեռագրի գրչի հիշա-
տակարանում՝ «Արդ ես դաւիթ ցանկացող եղե այսմ գրոց եւ գծե-
ցի գսա», — ուր միայն առաջին ա-ն է մեծատառով, մնացածը, այդ
թվում և Դավիթ անունը, փոքրատառով են: Այս գրությանն այն-
քան կարևորություն չեն տվել գրիչները, որ, ինչպես ասվեց, միև-
նույն բառի տառերի մի մասը մեծատառով են գրել, մյուսը՝ փոք-
րատառով: Երերույքի 1028 թ. մի արձանագրությունում շահնշահը
բառի շ-ն ու Խ-ն փոքրատառով են գրված, մյուսները՝ մեծատառով
(Քար, տախտակ ԺԲ): № 975 (1194—95 թթ.) ձեռագրում ոչ միայն
հատուկ անուններն են փոքրատառով, այլև նախորդի նման բա-
ռամիջում նույնպես մեծատառ է օգտագործված. օրինակ, րնքե-
ծուԱծ (77): № 468 (ԺԲ—ԺԳ դար) ձեռագրում՝ ՏԱրրն ԱշխԱՐՀԱ-
ԿԱն է: Էջմիածնի № 2606 ձեռագրի 194 ա էջի լուսանկարում վեր-
ջակետից հետո կարդում ենք. «ԱՅսպէս ասէ ՏՐ, աշաւաԴիԿ ԵՍ»,
ուր ա, է, ս, պ, ւ-ն փոքրատառ են, մյուսները մեծատառ (Քար,
տախտակ ԽԴ): № 2101 (1223 թ.) ձեռագրի 102ա էջի լուսանկա-
րում «է նախախնամութիւն ոՉ կատարեալ ի բաց բառնալ գիտա-
ցեալ զմարդկան ազգ, ...որ կա ի նմա զգալի տարերքն և մի երկ-
մբտեր, ... Քանզի պարտ է անշունչ իւրեթ բանաւոր կենդանեաց
սՊասաւոր լինել», վերջակետից հետո՝ «Արդ տարերքն...»: Այստեղ
էլ միայն նշված Բ, պ, չ, ա տառերն են մեծատառով գրված (Քար,
տախտակ ԽԴ): Ձեռագրում կան Ք, ա, գ, Հ, Ո, ո, Չ գրիսագիր և
սովորական գրեր:

№ № 823 (1266 թ.), 4035 (ԺԲ դար), 416 (1279 թ.), 49 (1282
թ.), 488 (1295 թ.), 108 (1322 թ.), 777 (ԺԲ դար), 1748 (1370 թ.),
1747 (1243 թ.), 1746 (1280 թ.), 556 (ԺԳ դար), 2865 (ԺԳ—ԺԴ
դդ.), 57 (ԺԴ դար), 266 (1468 թ.), 994 (1409 թ.) ձեռագրերում
ընդհանուր երևույթ է, որ վերջակետից հետո են մեծատառով սկսում:
Անձնանունները եթե վերջակետին են հաջորդում, մեծատառով են
սկսում, մնացած դեպքերում՝ փոքրատառով: Այդ ձեռագրերում
հանդիպում են՝ Սողոմոնի, յովսեփա, դանիէլ, սամուէլ, յովաննու.
մովսէսի, եղիսէոս, բաբելոնէ, պաւղոս, կոստանդինապաղիս,
ահարովն, սիովն, քրիստոս, աստուած, յիսուս, պոմֆիթևս և այլն:
№ 416 ձեռագրում նույնիսկ վերջակետից հետո է փոքրատառով
գրված: № 49 ձեռագրում վերջակետից հետո գրված է մեծատառ
Եւ, իսկ անունները փոքրատառով են: Վերջակետից հետո փոքրա-

տառ է հանդիպում նաև № 1748 ձեռագրում՝ քանզի, եւ, եթէ, վասրնզի և այլն: № 2865 ձեռագրի ժԳ դարին արտագրված մասում հանդիպում ենք՝ Քամ ծնանի գրուշ: Քուշ ծնանի զմեստրիմ, Մեստրիմ ծնանի զնեվքրովթ (8), Ի հայկայ մինչ ցարայն, ցսեմ, քամ և ցյաթեթ (11): Պոմպեոսը գրված է մեծատառով (Պոմպեիոս), իսկ մյուսները փոքրատառով՝ միհրդատ, աղեքսանդր, տիգրան: Պատահում է մեծատառ նաև բառամիջում՝ յեգլՊտոս, ՊոմՊեի, գորՊիսութին և այլն: Բայց բոլոր վերնագրերը մեծատառով են սկսվում: № 2371 (1357 թ.) ձեռագրում, որ քերականության գրքերի ժողովածու է և պարունակում է Արիստակես Գրչի, Վարդան Արեւելեցու, Գևորգ Սկևռացու և մյուսների գործերը, նույնպես փոքրատառով են գրված անձնանունները, եթե վերջակետին չեն հաջորդում: Օրինակ՝ երեմիա, սոփովնիա, միքիա, կիղիկիա, յանարզաբա, Ի մամիստիա, Ի յատանա, սեղեկիա, Ի սիրիա, յուռհա, բիւթանիա, Ի գանձակայ, Ի նախշաւանայ, լանույ, Ի խլաթայ և այլն:

Մեծատառով են գրում նաև բառացանկերի առաջին բառերը, բովանդակության (նյութերի ցանկ) առաջին բառերը և տերմինները: Օրինակ՝ № 2371 ձեռագրի ցանկի յուրաքանչյուր վերնագիր մեծատառով է սկսվում՝ Վասն վանգի, Վասն Երկար վանգի, Վասն Յաւղի, Վասն Անուան: Այդ ձեռագրի սկզբի էջերում բառարան կա, որի յուրաքանչյուր գլխաբառն սկսվում է մեծատառով: Օրինակ՝ Ապառնի—որ յապայ լինի, Շեշտոլոր—վերստեալ ձայն, Հակաւկայ—ընդդիմակայ, Պիտակապէս—լոկաբար, Բաղդատական—համետական և այլն:

Մեծատառի այսպիսի գործածությունը շարունակվում է նաև ուշ միջնադարի ձեռագրերում ու տպագիր գրականության մեջ: Նդիշեի պատմության 1569 թ. ձեռագիր օրինակում (№ 1920) գրված են՝ աբրահամ, խորեն, շապուհ, շօասպ, մերհուժան, տաճատ, պարգե, համագասպ, արտօաղդ, ներսեի, աշոտ, դիմաքսեւից, շմօոն և այլն: № 266 (1468), 994 (1409), 8443 (1687) ձեռագրերում, «Սաղմոսարան» (1565), «Պարզատումար» (1512), «Յսորդի» (1643), «Նորհրդատետր պատարագին հայոց» (1641), «Պարզաբանութիւն սաղմոսաց» (1687), «Տօմար Գրիգորեան» (1587), «Առաւել պարզաբանութիւն» (1630), «Գանձ չափոյ» (1699), «Նորագոյն ծաղիկ գօրութեանց» (1685) գրքերում նույնպես վերջակետին հաջորդող բառերը, վերնագրերը, գիտական տերմինները սկսվում են մեծատառով, իսկ անձնանունները մեծատառով են գրվում միայն վերջակետից հետո: Օրինակներ՝ աբգար, իսրայելի, յակոբայ, ահարոնի, եփրեմ, շամախի, մոսկօվն, խիկար, սէնեքա-

րիմ և ալլն: Բանաստեղծությունների տողերը մեծատառով են սկսւ-
վում Շնորհալու «Յս որդի» գրքում: Գրիգոր Տաթևացին խոսում է
վերտառության (վերնագիր), զլխագրի մասին, բայց չի նշում, թե
ո՞ր բառի առաջին գիրն է զլխագիրը, ո՞ր բառերն են զլխագրով
սկսվում, խոսք չկա անձնանուններ մեծատառով գրելու մասին:
Այս կապակցությամբ Լ. Խաչերյանը իրավացի է գրում, թե հա-
տուկ անունների մեծատառով գրությունը հետադարձի գործ է:

Կղեմես Գալանոսը, որ իր քերականության մեջ ներկայացնում
է հայերենի զլխագրերը՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով նաև նրա
փոքրատառը (Լ—լ, Հ—հ, Յ—յ, Շ—շ, Պ—պ, Ի—ի, Ք—ք և ալլն).
դարձյալ պահպանում է իր նախորդների սկզբունքը՝ զլխագրով
գրել վերնագրերը, վերջակետից հետո, տերմինները, մնացած
դեպքում գրել փոքրատառ, այդ թվում նաև անձնանունները: Ցան-
կում վերնագրերը գրում է մեծատառով (Յաղագս Յօղի, Յաղագս
կառաւարութեան անուան և ալլն), իսկ անձնանունները փոքրա-
տառով՝ պղատոն, պիթագոր, արիստոտել, ադամ և ալլն: Մեծա-
տառով են գրված՝ Քերականութիւն, Պատրիարկ, Արքեպիսկոպոս
և ալլն: Ռիվոլան իր Բառգրքում անունները հայերեն փոքրատառով
է գրում, իսկ նրանց համապատասխան լատինական ձևերը՝ մե-
ծատառով: Օրինակ՝ արարաթ—Ararath, պատմոս—Pathmos և
ալլն: Ոսկան Երևանցին իր քերականության մեջ (1666), բացի
վերը հիշատակված դեպքերից, մեծատառով է գրում նաև այս կամ
այն բառն ընդգծելու նպատակով: Օրինակ՝ գրում է՝ Ես, Իմ, Գու.
Քո, մեծատառով է գրում տերմինները՝ Վանկ, Բառ, Բան և ալլն:
Հովհաննես Կոստանդնուպոլսեցին պահպանում է զլխագրի հիշ-
յալ կանոնները, բայց գրում է՝ պետրոս, դաբէոս, պօղոս, թաթէ-
ոս, բարդուղիմէոս, մատթէոս, սիմէօն, մարթայի, աննայի և
ալլն, թեև գրում է նաև՝ Աննա, Մարթա: Խաչատուր Արզրումեցին
իւր քերականության մեջ խոսում է հատուկ և հասարակ անուն-
ների մասին, բայց օրինակները բերում է փոքրատառով՝ հոռմ.
կոստանդին, պօլիս:

Եզրակացությունը պարզ է՝ մեծատառով են սկսվում վերնա-
գրերը, վերջակետին հաջորդող բառերը, բանաստեղծությունների
յուրաքանչյուր տողը, տերմինները, բառացանկերի զլխաբառերը:
Անձնանունները, նույնիսկ աստուած բառը, գրվում են փոքրատա-
ռով:

ՏՈՂԱԴԱՐՁ

Երկաթագիր գրչության մեջ, որ տիրապետող էր մինչև Ժ—ԺԱ
դարերը, բառանշատ գրություն չկար, ուստի և տողադարձի մա-
168

սին խոսք լինել շէր կարող, թեև վանկի ուսմունքը դեռ Ե դարից կար: Տողադարձի հարցը ծագում է բոլորգրի գործածության ժամանակից, ԺԲ—ԺԳ դարերում, երբ գրչությունը ծավալվում և ուժեղ դարպացում է ապրում: Բոլորգրով մատենագրությունն անցավ բառանջատ գրության, որը հնարավոր դարձրեց պարզ պատկերացնել բառերի ու նախադասությունների կապակցությունները. կապակցման ձևերը, վանկատումը: Գրչության մեջ տողադարձը տարերային բնույթ ուներ, յուրաքանչյուր գրիչ յուրովի էր տողադարձ կատարում, բառի ցանկացած մասը տանում էր հաջորդ տող կամ թողնում նախորդ տողում: Այս անկանոն ու տարերային վիճակը տեսնելով՝ ԺԳ դարի քերական Գևորգ Սկևռացին շարադրեց տողադարձի կանոնները, հենվելով հայերենի վանկատման վրա: «Ամենայն երկար բանք ի բառից շարագրութենէ բաղկանան, իսկ բառքն՝ ի հեգից և հեգքն ի տառից»⁷⁰: Վանկ կազմում են ձայնավորները՝ միայնակ կամ բաղաձայնների հետ: Վանկը, որ նա հեռ է անվանում, բաժանում է երկու խմբի՝ պիտակապես հեգ, որ բառի բաղադրիչ վանկն է (ո-ղոր-մեա, ե-րա-նեալ, ար-ձա-կել և այլն) և տիրապես հեգ, որ վանկ-բառն է, այսինքն այնպիսի վանկ, որն ինքնուրույն հանդես է գալիս բառի դերում (սէր, հաց, գիր, տառ, պատ, ջուր): Գևորգ Սկևռացին առաջին անգամ գիտակա նորեն շարադրեց հայերենի վանկի ուսմունքը, որի վրա կառուցեց նաև տողադարձի, իր հորջորջմամբ՝ գրադարձի կարգը:

«Խրատ վասն հանգամանաց հեգից, որ և պատճառ իսկ է գրադարձին յարուեստ գրչութեան» խորագրի տակ Սկևռացին վանկատման հինգ կանոն է նշում, որը և համարում է գրադարձի հիմքը:

1. Երբ երկու ձայնավորների միջև մի բաղաձայն կա (ասա, արա), ապա առաջին ձայնավորը ինքնուրույն վանկ է կազմում, իսկ նրան հաջորդող բաղաձայնը միանում է հաջորդ ձայնավորին (ա-սա, ա-րա),

2. եթե երկու բաղաձայն ընկած են երկու ձայնավորի միջև, ապա առաջինը առաջին ձայնավորի հետ է վանկ կազմում, երկրորդը՝ երկրորդ (ան-սա, ան-ցո),

3. եթե երեք բաղաձայն կա ձայնավորների միջև, վերջին բաղաձայնը հաջորդող ձայնավորի հետ վանկ է կազմում, մյուսները՝ նախորդող (ինք-նակալ, ըմբո-նաւ),

3. երեքից ավելի բաղաձայնների դեպքում դարձյալ վերջինն է միանում իրեն հաջորդող ձայնավորին, մյուսները նախորդի հետ են վանկ կազմում (շշն-ջին, տրտն-ջին, թարգ-մա-նու-թին),

5. եթե բառը մեկ ձայնավոր ունի, միավանկ է (անդր, եզր, աստղ, ընդ, ինքն, ողջ կամ տուն, ջուր): Սկևռացին այս դեպքում

նկատի շունի գաղտնավանկը (անդ, 289—290): Այս վանկատման հիման վրա էլ Սկեռացին սահմանում է գրադարձը (տողադարձ): «Հեգթս են պատճառ արուեստի գրադարձութեան»,—գրում է նա (290):

«Վասն այսորիկ զարուեստ հեգիցն վերագոյն ցուցի, որպէս ի քերթողացն՝ տի նա և յիմաստասիրացն է աւանդեալ: Եւ ոչ է արուեստ հեգիցն որպէս այժմ բազումք ի մերոցս տգիտաբար անարուեստ խոհակերի որ ոչ գիտե ըստ յաւդից առնել զյաւշուած աւագամոցն» (291):

Սկեռացին սահմանել է տողադարձի հետևյալ դեպքերը:

1. Ամենայն գիր, որ հեգի սկիզբն է (բառասկզբում լինի, բառամիջում, թե բառավերջում), կարող է հաջորդ տող գնալ: Մեկ տառը (անընկեր գիր) ոչ թողնել տողի վերջում, ոչ տանել հաջորդ տող, այսինքն չգրել՝ խ-իստ կամ խիս-տ: Եթե այդ տառը ձայնավոր է, կարելի է տողի վերջում թողնել, ինչպես՝ ա-պաշ-խա-րու-թիւն կամ ե-րա-նու-թիւն, ո-ղոր-մու-թիւն:

2. Եթե տողում մնացել է երկու կամ երկուսուկես տառի տեղ. իսկ վանկը երեք տառից է բաղկացած, պիտի խիտ գրել ու տեղավորել և կամ վերջին տառը գրել ձախակողմյան տառի գլխին՝ խիս^ւ. միջոց^ւ և այլն, վերջին տառը հաջորդ տող շտանել: Վանկը չի կարելի կիսել: Եթե տողի վերջում մնում է մեկ ձայնավոր (ոսոխ, ա-մէն, ի-շոյ), պիտի կիսենթամնայի նշան դնել, որ ընթերցողը այդ ձայնավորը կապի հաջորդ բաղաձայնին:

3. Եթե գնացող կամ մնացող վանկը գաղտնավանկ է, ըն պիտի գրել (բը-նութիւն, բը-ժըշկութիւն, գը-թութիւն): Կով է երկու տառի տեղը տողի վերջում դատարկ թողնել, քան սխալ վանկատումով տողադարձ անել:

4. Հաջորդ տողը ձայնավորասկիզբ վանկով չի սկսվում, միայն բաղաձայնը կարող է անցնել, բացի յ, վ՝ բաղաձայններից, որոնք հարում են ձայնավորներին, բառամիջում դրանցով վանկ չի սկսվում (նա-թա-նայ-էլ, Մի-քայ-էլ, խոռվ-ու-թիւն, ժո-ղով-ուրդ): Ուրեմն դրանք հաջորդ տող գնացող վանկի սկզբում չպիտի լինեն, «թեև սկիզբն բանի բռնադատեն, որպէս՝ Կիծեալ մաշեցան»:

5. Է, ո, և ի հնչյունները կարող են տիրապես վանկ լինել, ինչպես՝ ո դերանունը, է էական բայը և ի նախդիրը: Օրինակ՝ «Ո՞ դարձոյց զ ծովն ի ցամաք»: «Է Քրիստոս ի վերայ ամենայնի աստուած արհնեալ յաւիտեանս, ամէն»: «Ի հնգիտասաներորդի»: Սրանք կարող են մնալ տողի վերջում կամ գնալ հաջորդ տող առանց կիսենթամնայի: Իսկ եթե միանում են բառին և վանկ

կազմում, պիտի կիսենթամնայի նշանը դնել (է_v մանուէլ, ի_v մացական, ո_v դորմելի):

6. Արգելվում է նախադասութիւնից մնացած մեկ-երկու բառը տողի տակը գրել:

7. Քանի որ ենթամնա նշանը բարդ բառերի համար է նշանակված, առաջարկում է տողադարձի ժամանակ օգտագործել կիսենթամնան: Ենթամնա բառը երկու բաղադրիչ ունի՝ ենթ նախդիրը և մնա բայը:

Սկեռացու այս կանոնները հետագայում կրկնեցին Գրիգոր Տաթևացին և մյուս քերականները: Ընդգծելով, որ ը-ն բառամիջում գրվում է կրկնավոր բաղաձայնների միջև (դրդում, ծրծում) և տողադարձի ժամանակ (զը-թու-թիւն, բը-նութիւն, հը-գաւր, հը-պարտ), Տաթևացին առաջարկում է, որ երբ բառերը թեքման պատճառով գրով նույնանում են, նրանցից մեկում գրել զաղտնավանկի ը-ն, մյուսը գրել անհնչյունափոխ ձևով: Օրինակ՝ Աիս—Սըսոյ, Սըսցի և սուս՝ սըսոյ, ուստի հարմար է Սիս անունը անհնչյունափոխ ձևով օգտագործել՝ Սիսոյ, ինչպես ձի—ձիոյ: Տաթևացու կարծիքով եթե տողավերջում մնում է ձայնավորով սկսվող բառի առաջին վանկը, պիտի դնել կիսենթամնա, ինչպես՝ ալպաշխարող, ո_vդորմեա, իսկ եթե բառամիջի ձայնավորն է մնում, պետք չէ ենթամնա (արա-րածք, երա-նեալ)⁷¹:

Սկեռացու մշակած այս կանոնները, սակայն, գրիչների կողմից չեն կիրառվում: Գոնե մեր կարդացած Ժ—Ժէ դարերի ձեռագրերում, տպագիր գրականություն մեջ դրանց գիտակցական ու հետևողական կիրառության չենք հանդիպում: Էլ չենք խոսում վիմագրության մասին: Քարի վրա փորագրող վարպետն աշխատել է որքան հնարավոր է տեղ շահել, քիչ տարածության վրա շատ բան գրել, ուստի չի նայել տողադարձի կանոնին, տվյալ շարքում որքան տեղ կա, գրել է:

Այս դարերի ձեռագրերում էլ շարունակվում է տողադարձի այն ոչ կանոնական վիճակը, որ կար նախորդ դարերում: Բաղաձայնը թողնում, ձայնավորն են տանում հաջորդ տող (մն-աց, հաւ-ատն), զաղտնավանկի ը-ն չեն գրում (դս-տերք, զմտ-աւ, ի-նքն, աշակեր-տքն), մի բաղաձայնը տանում են հաջորդ տող (զվեմ-ն, միու-մ), միավանկ բառերն էլ են տողադարձում (ըն-դ, քա-ն, ո-ր), երկհնչյունների և ու-ի լ-ն տանում են հաջորդ տող (արի-ւն, տո-ւն): Ժ—ԺԱ դարերի №№ 5547, 10999, 1007, 2679, 1958, 988, 10434 ձեռագրերում համարյա յուրաքանչյուր էջում հանդիպում են նման շեղումներին՝ ն-ա, դ-ատաստան, մատո-ւսջիր,

ա-պտակ, զթշն-ամիս, ա-րքն, դե-կտեմբերի, նմ-ա, ինք-ն, շար-աց, ա-նթառամ, զարհո-ւրեաց, ըն-դ, ո-ր, մա-րդ, մն-աց, միա-յն, բնութեա-մքն, խ-աւսին, ա-րքն, վայելու-մնն, նն-ջեր, բնութի-ւն, զովութի-ւն, մկրտ-եալք, զուխ-տ, զու-նդն, ուսա-ի, զծ-այնս և այլն: Ա՝ 2684 ձեռագրում կատարված 303 տողադարձից 101-ն է համապատասխանում Սկեռացու կանոններին: Նկատվում է, որ զրիչը տեղյակ է սողադարձին և ձգտում է պահպանել կարգը, ուստի վանկը փակող բաղաձայնը չի տանում հաջորդ տող, գրում է ձախակողմյան տառի գլխին՝ իմա՝ սութեան, զյաւժարո՝թին, վարդ՝-պետին և այլն: Վերջին տառը հաջորդ տող չի տանում, գրում է նախորդ տառի զլխին (զի՝, բարեձն՝, ոսկեղն՝, միշ՝) կամ տակը (շուր, փշոջ): Բայց զրիչը հետևողական չէ, նրա սողա-դարձումների երկու երրորդը շեղում են: Բաղաձայնի փոխարեն ձայնավորն է տանում հաջորդ տող (տես-էք, մեծագ-ոյնս, մեր-ձաւ-որն, բ-անդին, պս-ակն, անու-անն, զլ-ուխն), երկու-երեք բաղաձայն սխալ վանկատումով թողնում կամ տանում է հա-ջորդ տող (զգայութեա-նցն, զխ-նդրոյն, դս-տերքն, մա-րդկան, զանմե-րձանալի, մշտն-ջենաւոր), չի գրում գաղտնավանկի ը-ն (միւ-սն, դր-ախտին, զմտ-աւ, աշակերտելո-ցն, եգիպտա-ցուցն), եւ երկհնչյունը բաժանում է իրարից (յատկութե-ամբ, անուանե-աց, ամբարէ-աց), երբեմն յ-ն հաջորդ բաղաձայնի հետ տանում է հաջորդ տող (զո-յնք, լո-յսն, մեծագո-յնս), թեև երբեմն բա-ղաձայնը նախորդող տառի գլխին է գրում, բայց հաջորդ տող է տանում ձայնավորը (յիւր-ում, եղբարորդ՝-աց, հա՝-ատացն):

Եղիշեի պատմության 1174 թ. արտագրության մեջ (ձեռագիր № 1890) նույնպես որևէ սկզբունք չի նկատվում, նույն սխալները կան, ինչ որ վերևում տեսանք (ուստ-ի, սիրոյն, զծ-այն, մկր-տեալք, զմարդի-կսն, յոր-ում, էմո-ւտ, կացո-ւսցուք, ի-ւր, բա-րձր, ի-ւրաքանչիւր, փրկ-ականս): Թեև կան ճիշտ ձևեր (զըս-պաս, զը-զօրութիւն, հը-նարաւոր), բայց գրում է նաև՝ հըն-ար, զը-նդին, պը-նդեցան, դը-րդեց, զաւրագը-լխեան կամ՝ դժն-եա-Այս նույն գործի 1569 թվականի արտագրության մեջ (ձեռագիր № 1920) նույնպես տողադարձի կարգ չկա: Այնտեղ, ինչպես և №№ 975, 823, 4066, 4035, 468, 777, 2101, 416, 994, 49, 488, 108, 1746, 1747, 1751, 556, 485, 415, 1097, 57, 266 ձեռագրերում, Մաղաքիա արեղայի Պատմության մեջ, Գունդասարլի Դատաստա-նագրքում և այլուր նույն շեղումներն են (աշխարհ-ն, հրամ-անաց, զքաղ-աքին, պ-ատմեր, շապու-հ, զկ-ատարումն, ի-ւրաքանչիւր, դ-ու, զքե-զ, ա՝-մ, ստ-ուգեաց, ձե-ռնհաս, աշակերտ-ք, այ-ս, ասասցո-ւք, յովր-ո, ծովու-ն, բագո-ւմ, ի-ւրովք և այլն): Ինչ

շեղում որ կա № 1746, 1747, 1748, 1751 գրչություններում, որոնք ԺԳ—ԺԴ դարերից են մնացել, նույնն էլ կա նրանց ԺԷ դարի արտագրության մեջ (ձեռ. N° 1749)՝ անգիրտ-ելի, մա-րմին. սպիտա-կն, ժաման-ակի, դի-նչ, ասե-մք, բա-ռնալ, սահման-սդ, բազու-ւմք, միա-յն, դմիա-կն, դիմա-կքն և այլն:

N° 2865 ձեռագրի ԺԳ—ԺԴ դարերի գրչություն սլարոնակող էջերի և 1565 թվականին արտագրված էջերի համեմատությունը նույն համոզման է բերում մեզ: Երկուսում էլ նույն շեղումներն են (րդ-կնի, նր-ագս, մա-ղձ, գլո-ւխս, կա-մ, ի-սկ, հա-նճար, տեսութիւն, խոստմա-մքք, դ-որ, խա-չն, եաւ-թն):

Տողադարձի կարգ չի նկատվում նաև ուշ միջնադարի տպագիր դրականության մեջ: «Պարզատումարում» (1512), «Իշխալ Սաղմոսարանում» (1565), «Յիսուս որդի» (1643), «Գիրք այբուբենից» (1675), «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի» (1687), Հովհաննէս Կոստանդնուպոլսեցու «Զտութիւն հայկաբանութեան» (1674), «Խորհրդատետր պատարագին Հայոց» (1641), «Տոմար Գրիգորեան» (1587), «Առաւել պարզաբանութիւն» (1630), «Գանձ չափոյ...» (1699) գրքերում, իսաւ. Արդրումեցու բերականության մեջ նույն շեղումներն են՝ զփայլատակո-ւնս, խո-րո-ց, երկի-ւղիւ, նենգաւոր-ք, մ-իտս, կ-ամին, զն-ա, իմո-ւմ. ն-ստի, ձեռնայտո-ւ, զո-ր, վ-երայ, զշ-նորհսըն, թըշառ-ական, թո-չի, ճնճղ-կան, ծնն-դեան և այլն: «Գիրք այբուբենից»-ի հեղինակը պահանջում է բաղաձայնավոր վանկը չբաժանել առանց ր տառը գրելու, գրել գաղտնավանկ Ը-ն, և բերում է օրինակներ՝ տը-նանկ, կը-տակ, նը-ման և այլն: Տողի վերջում երեք տառը վանկից չբաժանել և տողի վերջում չթողնել: Բայց այդ գրքում հանդիպում են՝ կն-իք, հր-ատ, զանո-ւանց, տե-ղւոջ, բժշ-կաց և այլն: «Արհեստ համարողութեան» գրքի հեղինակը ձգտել է պահպանել տողադարձի կանոնները, ընդհանրապես ճիշտ է վանկատում բառերը, օգտագործում է գաղտնավանկ Ը-ն, դը-նեմք, զը-րեմք, վերոյ-գրեալ, տասնա-ւորներին, կա-սենք, կուբար-դենք, օրինա-կով, ջըն-ջեմք, ըն-նով, ըս-տակ, կու-զէ, ծա-խէ: Բայց այստեղ էլ երբեմն շեղումներ են լինում: Օրինակ՝ հազարաւոր-ներին, ութ-ին, բազմա-ցնօղ, բազմա-ցնեմ:

Այս փաստերը ցույց են տալիս, որ, Սկևռացու տողադարձի կանոնները դեռ կիրառություն չէին գտել ո՛չ իր դարում և ո՛չ էլ հետագայում: Մինչև որ ԺԸ դարում որոշ փոփոխությամբ վերականգնվեցին դրանք և միասնական դարձան:

Նկատվում է որոշ բառերի, հատկապես եւ բայի խոնարհված ձևերի նախորդող կամ հաջորդող բառին միացած գրություն: Ն՝ 2371 ձեռագրում (1357 թ.) հաճախ ենք հանդիպում ե-ի հաջորդ բառին միացած գրության: Օրինակ՝ երաժանե (18), «եւեւ ու յերկուց պակասեցելոց են» (30բ), եկամ (32), եյալտէ, եղեալէ (34), եհումանունէ (35), եւումատ (83) և այլն: «Տոմար Գրիգորեան» (1587 թ.) գրքում եւ բայի ձևերը նախորդ բառին կպած են գրված: Օրինակ՝ լուեալեն, պատուերսէ, որեէ, կիսատէ, յայտնիէ, գրեալեմ (էջ 8, 15, 20 և այլն):

Ռիվոլայի Բառգրքում հանդիպում են՝ ազահուտել, ածիլոյսուր, աղածմիս, աղաթելլալ, աղիմիս, աղիաման, աղիչուր, ալրիաղրատ, յանձնառնել, անձնիշխան, արդարեղնիլ, արժանքան, արէնսղնել, ավմի, բայցսակայն, գէտառնել, գրոցցանկ, դաշինքէնել, դավթարէնել, դեղինգուն, գատիկէնել, թաժապանիր, լարեալաղեղն, սոսկենալ, լուեղեններկինք, խիստչէ, Մաթուսաղայ, ուլենա, լաւեմ և այլն:

«Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի» (1687 թ.) գրքում կու բալամասնիկը բային կպած է գրված՝ կուհարստանայ, կումենանայ, կումնաս, կուանմահանայ, կուհալածէին, կուսպանանէ, արիւն կութափէ և այլն⁷², Դերբային կպած է գրված օժանդակ բայը՝ պահերէինք, նշանվերեն, գրվերեն: Նախորդ բառին կպած է գրված անգամ բառը՝ միւսանգամ, հինդանգամ, իննանգամ, ութանգամ, վեցանգամ, մեկանգամ, եօթնանգամ և այլն:

Եւ բայի ձևերը դերբային կամ վերադրին կպած են գրում Ն՝ 8443 ձեռագրի (1687 թ.) գրիչը՝ փոքրենք, սրտովենք (127բ), երեքանոցէր, էլածէ (221), Հովհ. Կոստանդնուպոլսեցին՝ մի ենոյնէ, լեալիցէ, լեալիցէր, ոչիցէ, ընդունակիցին, որեէ, գորե, սիրեալիցէիք, սիրեալեղեց, սիրեալեղիցիս, լուացեալքեմք, լուացեալիցեմ, ննջեցեալէր, ննջեցեալեն, լուացեալէ և այլն: Այսպիսի կպած գրության հանդիպում ենք նաև այլ գրքերում ու ձեռագրերում: Հստ երևույթին գրողները միացրած բառերը, հատկապես օժանդակ բայն ու դերբայը, մի բառ են համարում:

Կարծում ենք, որ այս կպած գրությունը որոշ դեպքերում հետևանք է նաև լատինաբանության ազդեցության, հատկապես Ռիվոլայի Բառգրքում ու Կոստանդնուպոլսեցու քերականության մեջ հիշատակված գրությունները: Օրինակ՝ Ռիվոլան խտփարի բառի դիմաց գրում է՝ արդարեղնիլ, այդպես էլ՝ Areusintetus>լարեալաղեղն, Quis>ովէնա: Լատինական մի բառի դիմաց հայերեն բա-

ռերը նույնպես կպցնում, մի բառ է դարձնում: Լատինաբանության հետևանք է ն-ի հավելումը բառերին, որ այնքան հաճախ է հանդիպում Կոստանդնուպոլսեցու քերականության գրքում: Օրինակ՝ նանզգամ, ոչինչ նարտաբերման և նարտադրութեան, ըն մերում մտի, նիմում, ըն լուանելն: Կամ նևր մասնիկի գործածությունը՝ ներ տրամադրապէս, ներ յինքեան, ներխմիցեն և այլն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է նախնյաց մատենագրությունից մնացած համառոտագրությունն ու պատիվ նշանի գործածությունը: Վաղ միջնադարում դա վերաբերում էր միայն տերունական անուններին՝ ած (աստված), քի (քրիստոսի) և այլն: Գրիգոր Տաթևացին (ԺԴ դար) դեռ պահանջում է համառոտագրել և պատիվ նշանով գրել միայն աստծու հետ առնչվող անունները՝ ածապաշտ, ածահաճոյ, Եէմ, Իէլ:

«Եէմն պատուով է զի քաղաք է այ և բաժանի յայլոցն»: Ուրիւն ածանցը համառոտագրել կարելի է միայն այն դեպքում, երբ դրված է աստված բառի վրա (ածութի, ածութե), մյուս դեպքերում գրել լրիվ⁷³: Տաթևացին ձգտում էր անաղարտ պահել նախնյաց գրչությունը, և նրա զգուշացումը համառոտագրության ու պատիվ նշանի կիրառության մասին վկայում է, որ այդ գրությունն արդեն ընդարձակվել էր, դուրս եկել նախկին սահմաններից: Ուշ միջնադարում այնքան է դա տարածվում, որ գրիչները երբեմն ցանկացած բառի ձայնավորը համառոտագրության ու պատիվ նշանը դնում: Օրինակ՝ «Առաւել պարզաբանութիւն» գրքում հանդիպում ենք՝ պտսխան, պրտսլնցն (պարտապանացն), արրեալ, չփ, ապշխրել (ապաշխարել), բրեգործութթ, տարել, ոսպ, ածւք (աստուածութեամբ) և այլն: Ժէ դարի քերական Կղեմես Գալանոսն անդրադառնալով այդ հարցին՝ գրում է, թէ «Պատիւ է գիծ փոքրիկս այս —, որ ի վերայ կարճեալ բառի եղեալ», և բերում է օրինակներ՝ յի, քի, սբ, տր, ած, վրդպտ (վարդապետ), ոսպ, ո (որպէս), ա (աշխիւքն), բա (բատ), ը (ընդ), ըմ (ըստ աշնմ), Ժկ (Ժամանակ), շի (աշխարհի) (էջ 98): Գալանոսն այլևս չի ընդգծում, որ այդ գրությունը հատուկ է միայն տերունական անուններին, որ դա պատվի նշան է, մեծարման նշան: Այդ նշանը (ւ)

դարձել է սղագրության արտահայտութիւն: Համարյա բոլոր ձեռագրերում ընդունված է սեռական, գործիական հոլովի վերջավորութիւնը, ուրիւն ածանցը համառոտագրությամբ արտահայտել: Ամենուրեք հանդիպում ենք թագաւորութիւն, պայծառութիւն, տերութեան (թագաւորութեամբ, պայծառութիւն, տերութեան) համառոտագրության նման ձևերի:

Տարածված է նաև ծածկագրութիւնն իր գանազան արտահայտութիւններով, որին անդրադառնալը մեր շարագրանքից դուրս ենք համարում:

Ամփոփենք. Ժ—Ժէ դարերում իբրև ընդհանուր երևույթ արտասանութիւնը հեռանում է գրութիւնից, ձայնավորներին ու ձայնորդներին հաջորդող դիրքում Բ, Գ, Դ, Ն, Ջ հնչույթները հնչում են փ, ք, ք, ց, շ (շնչեղանում են), և թեև պահպանվում է նրանց դասական գրութիւնը, այնուամենայնիւ նկատվում են հիշյալ տառերի ուղղագրական շեղումներ: Ուա, ուփ, ուն, ուռ երկբարբառներն արտասանվում են վա, վի, վն, վո, որի հետևանքով Վ հնչույթն արտահայտվում է ու, վ, ւ տառերով: Մի հնչույթը երեք գրով արտահայտելն էլ պատճառ է դառնում սխալագրութիւնների:

Աւ երկբարբառը վերջնականապես փոխվում է օ պարզ հնչույթի, և գրության մեջ միևնույն օ հնչույթն արտահայտվում է աւ, ու և օ տառերով, ուշ միջնադարում աւ—ը իբրև օ հնչույթի արտահայտիչ դուրս է ընկնում, այդ հնչույթի համար մնում է երկու տառ՝ օ և ու: Օ-ն գրվում է բաղաձայնանախորդ աւ տառակապակցության փոխարեն, իսկ ու-ն պահպանում է իր ավանդական գրութիւնը՝ բառասկզբում, սակայն, արտասանվելով վօ:

Մինչև ԺԶ դարը խառն է ն, է տառերի գրութիւնը, քանի որ մասնավորապես բառամիջում և բառավերջում ունեն միևնույն հնչումը: Միջնադարի կեսերից բառասկզբում ե-ն սկսում է յօ արտասանվել: Սկսում են որոշակի դառնալ այդ տառերի գրության սահմանները:

Պահպանվում է ր տառի դասական գրութիւնը, թեև կան զգալի շեղումներ: Նկատվում է ձգտում բառամիջում գրել այն գաղտնավանկ ր-ն, որը հնչյունափոխության հետևանք է (տրնակ, ջրոցան, գրբեալ):

Արիստակես Գրիշը սահմանում է յ տառի ուղղագրութիւնը, սակայն մինչև ուշ միջնադար այն չի կարգավորվում, միայն Ժէ դարից սկսում են պահպանել յ տառի գրության կանոնները: Մնացած երկբարբառները (եւ, իւ, ոյ, այ, եա) գրաբար բնագրերում

պահպանում են իրենց գրությունը, միջին հայերենում վեր են ածվում պարզ ու, ա, ե, ի ձայնավորների, որը և արտահայտվում է միջնադարի բնագրերում: Փոխվում է տառադարձությունը: Արևելահայ հատվածում պահպանվում է դասական տառադարձությունը, իսկ արևմտահայ հատվածում օտարազգի խուլ հնչույթներն արտահայտվում են շնչեղ հնչույթների տառերով (ւ—թ, ք—փ, կ—ք), իսկ ձայնեղ հնչույթները՝ խուլ հնչույթները (ձ—տ, ք—պ, ց—կ): Այս երևույթն արտահայտվում է նաև միջին հայերենով զրված գրականության մեջ: Այսպիսով, բացի ձայնավորներից ու ձայնորդներից հաջորդող ձայնեղների խլացումից, որն ընդհանուր է արևելահայ և արևմտահայ հատվածներում, բայց որը արմատական փոփոխություն չի առաջացնում նրանց ուղղագրության մեջ (կան միայն շեղումներ), տառադարձության ժամանակ արևմտահայ հատվածում ստեղծվում է ձայնեղի և խուլի փոխադարձ գրություն: Մի լեզու երկու տառադարձությամբ:

Մեծատառն օգտագործվում է վերնագրերում, նոր տողից, վերջակետից հետո, բառացանկերում: Անձնանունների վրա մեծատառի գրությունը դեռ չի տարածվում:

Թեև Գևորգ Սկևռացին սահմանում է (ԺԳ դար) տողադարձի կանոնները, բայց դրանք մինչև ԺԸ դարը չեն կիրառվում:

Ընդարձակվում է այսպես կոչված համառոտագրությունը: Տերունական անուններից այն անցնում է մյուս բառերին, և գրիչները ազատորեն բառամիջում ձայնավորի փոխարեն օգտագործում են հապավման նշանը (փ), որն առաջ կոչվում էր պատիվ նշան:

Հաճախ նկատվում է որոշ բառերի (եմ, և) հաջորդ կամ նախորդ բառին միացած գրություն, որ հետևանք է լատինաբանության ազդեցության:

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԸ—ԺԹ ԴԱՐԵՐՈՒՄ

Ժէ դարի երկրորդ կեսից վարգաքման նոր թափ է առնում հայ մշակույթը: Հրատարակվում են մի կողմից կրօնական գրականություն, մյուս կողմից՝ պատմիչների երկերը, լեզվաբանական-քերականական աշխատություններ:

Դարերի ընթացքում դասական գրաբարը խաթարվել էր տեղական խոսվածքների, այլև լատինաբանության ազդեցության տակ: ԺԸ դարում ձգտում են վերականգնել նախնայաց մաքուր գրաբարը (Մխ. Սեբաստացի, Ա. Բագրատունի և ուրիշներ), գրում են գրաբարի քերականություններ, բառարաններ: Մտավորականության այդ մասը ցանկանում էր ժողովրդից հեռացած գրաբարը նորից ժողովրդին մոտեցնել, ուստի մտածում էր դյուրահաղորդ դարձնել այն: Այս հարցում մեծ ակտիվություն ցուցաբերեցին հատկապես Մխիթարյաններն ու Պոլսի պատրիարքարանը: Աճառյանը գրում է, թե գրաբարյանները նպատակ ունեին նախ ուղղակի կենդանացնել գրաբարը գրականության մեջ և ապա դարձնել խոսակցական լեզու, բայց տեսնելով, որ դա հնարավոր չէ, որոշեցին գրականության մեջ օգտագործել գրաբարը, իսկ բանավոր, խոսակցական լեզվում՝ աշխարհաբարը¹: «Նոր մատենագիրները,—գրում է նրանց մասին Ակինյանը,—մոռցած էին, թե մեռեալ լեզուի մը հետ էր իրենց գործը»²: Գրաբարը վերականգնելու ձգտումը, սակայն, դրական դեր խաղաց մեր մշակույթի դարգաքման գործում այնքանով, որ հրատարակվեցին պատմիչների թողած ժառանգությունը, քերականության գրքեր, բառարաններ, պայքար ծավալվեց հայերենն օտարաբանություններից զտելու համար:

Ժամանակի գիտունները գրաբարյան և ժողովրդական-բարբառային զույգ բառաձևերից առաջինն ընտրեցին, մի երևույթ, որ Այստընյանն անվանում է «յետաշրջություն»: Թե ով և երբ սկսեց այդ ետաշրջությունը, դժվար է ասել: Ովն ու երբ բնականապես ընդհանրոյ վրայ կ'իյնայ,—գրում է Այստընյանը,—և չի կրնար ի-

րեն որոշեալ հեղինակ կամ որոշ ժամանակ մը ցուցուիլ»³։ Այս երևույթը Աճառչանը մեծ բարիք է համարում, որովհետեւ այդ ճանապարհով ստեղծվեց միասնական գրական լեզու, ժամանակակից հայր շխտրվեց անցյալից, հայերեն բառերը Ե դարից մինչեւ այսօր պահանջին իրենց պատկերը, բանի որ գրաբարի ու աշխարհաբարի ուղղագրութիւնը հիմնականում նույնն է⁴։

Միաժամանակ ժողովրդին հասկանալի լինելու պահանջը ըստիպում էր մտավորականութեանը՝ գրել նրա կենդանի լեզվով, աշխարհաբարով։ Եվ նույն Մխիթար Սեբաստացին, որ գրում էր գրաբարի քերականութիւն, գրում է նաեւ աշխարհաբարի քերականութիւն։ Որքան էլ տարօրինակ է, աշխարհաբարը մշակողները, նրա քերականութեան հեղինակներն այն նույն մտավորականներն էին, ովքեր պայքարում էին գրաբարի մաքրութեան ու ժողովրդին հասկանալի դարձնելու համար։ Աճառչանը գրում է, թե Վենետիկի և Վիեննայի Մխիթարեանները ձգտում էին «աշխարհաբար գրվածքի մեջ երբեմն-երբեմն խառնել գրաբար ոճեր ու դարձվածքներ»⁵։

Մի կողմից գրավոր խոսքում, պատմագրութեան և հոգեւոր գրականութեան մեջ ամրանում են գրաբարի դիրքերը, մյուս կողմից ռամկի լեզուն, բանավոր աշխարհաբարը սկսում է հանդես գալ նաեւ գրականութեան մեջ, մշակվում է նրա գրավոր խոսքը, գրվում է նրա քերականութիւնը։ Զեւավորվում են արեւմտահայ և արեւելահայ գրական աշխարհաբար լեզուները⁶։ Շրջողերը (1711 թ.), Բաղդասար Դպիրը (1736 թ.) նշում են իրենց ժամանակի հայերենի երեք տարատեսակ՝ գրաբար, քաղաքացիական հայերեն և բարբառներ։ Առաջինը Դպիրն անվանում է կանոնավոր, երկրորդը՝ ոչ ամենեւին կանոնավոր և ոչ էլ ամենեւին անկանոն, այլ դրանց միջինը՝ «խառն յերկոցունց՝ ի կանոնավորէ և յանկանոնէ», որ օգտագործում են քաղաքացիական առօրյա գրագրութիւններում ու կենցաղում, իսկ երրորդը՝ ամենեւին անկանոն (բարբառներ)⁷։ Այսպիսով, ԺԸ դարում մենք ունեինք մի կողմից գրաբարը իբրեւ գրոց լեզու, մյուս կողմից ձեւավորվող աշխարհաբարը (արեւմտահայ և արեւելահայ) իբրեւ քաղաքացիական առօրյա հաղորդակցման գրավոր ու բանավոր միջոց։

Այժմ տեսնենք, թե ինչպիսի՞ն է սրանց ուղղագրութիւնը։

ԺԸ դարի գրաբարի և գրական աշխարհաբարի (արեւմտահայ, արեւելահայ) գրութեան հիմքում միեւնույն երեք սկզբունքն է եղել՝ հնչյունային, ստուգաբանական և ավանդական։ Փոխվել է գրաբարի քաղաքացիական համակարգի դիրքային արտասանութիւնը։

Աստվածաշունչ ընթերցողը, օրինակ, Ե-ին հաջորդող ձայնեղր խուլ էր արտաբերում, վարձ. մարդ, կարգ բառերը նախնյաց նման varj, mard, karg չէր կարգում, այլ՝ վարց, մարթ, կարք:

ՉԱՅՆԱԿԱՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս բնագավառում հատկանշականն այն է, որ ընդհանրանում և կայունանում է ո. օ տառերի դեռ Ժէ դարում կանոնական դարձած ուղղագրությունը: Ժէ դարի բազմաթիվ գրքերում՝ Կղեմես Գալանոսի (1642 թ.), Ոսկան Երեանցու (1666 թ.), Հովհաննես Կոստանդնուպոլսեցու (1674 թ.), «Գիրք ալբուբենից» (1675 թ.) քերականություններում, «Արհեստ համարողութեան» (1675 թ.), «Պարզաբանութիւն սաղմոսացն Դաւթի մարգարէի» (1687 թ.), «Խոշորրգատետր» (1641 թ.), «Առաւել պարզաբանութիւն» (1630 թ.), «Գանձ շափոյ...» (1699), «Նորագոյն ծաղիկ զօրութեան» (1685 թ.) գրքերում, № 8843 ձեռագրում (1699 թ.) և այլուր օ հնչող աւ տառակապակցութեան փոխարեն տեսնում ենք օ տառը, և աւ տառակապակցութիւնը գրվում է միայն ՁՎ հնչյունակապակցութեան համար: Ահա թե ինչու Մխ. Սեբաստացին գրում է, թե աւ, եւ տառակապակցութիւնների վրա հին սովորութեամբ թափաքման նշան (փ) դնելու կարիք չկա, քանի որ նրանք ամենուրեք կարդացվում են նույն ձևով՝ ավ, եվ: Այլ էր հնում, երբ աւ-ը գրում էին օ-ի փոխարեն⁸:

Այսպիսով, ԺԸ դարում օ հնչյունն արտահայտվում է երկու տառով՝ ո և օ: Օ տառը գրվում է դասական գրաբարի բաղաձայնանախորդ աւ երկբարբառի փոխարեն, բառի միևնույն դիրքում (աւր—օր, աւրինակ—օրինակ, աւղ—օղ, աւծել—օծել, աւրհնեա—օրհնեա, աւծ—օծ և այլն): Օ տառով սկսվող բառերը բարդվելիս կամ ածանցվելիս օ-ն պահպանում են, ինչպես որ Ծ դարի գրաբարում աւ տառակապակցութիւնն էր պահպանվում (ամենաւրեայ—ամենօրեայ, իւրաւրինակ—իւրօրինակ, ոսկեաւղ—դսկեօղ, ոսկեզաւծ—ոսկեզօծ, անաւրէն—անօրէն և այլն): Մնացած դեպքերում նույնպես բառամիջում աւ երկբարբառային տառակապակցութեան փոխարեն գրվում է օ (եղօր, մօր, հօր, զօրավար, մօտ, խօսք, ծանօթ, կօշիկ, կրօն, Պօղոս, զօրաւոր, գործիական հոլովի հոգնակի թվի վերջավորությունը՝ աչօք, աղաչանօք և այլն): Բառերը օ տառով չեն կարող վերջանալ, քանի որ վերջինս գրվում է միայն բաղաձայնին նախորդող դիրքում: Ընթակալական դերբայն

Արիստակես Գրիշի (ԺԲ դար) սահմանումով, ուղիղ ձևում վերջանում էր աղ-ով, թեք ձևում՝ ող-ով (ծնաղ, յիշաղ, բայց՝ ծնողաց, յիշողաց)։ Դրան համադատասխան էլ դեռ ժէ դարից սկսած՝ ուղիղ ձևում վերջանում է օղ տառակապակցությունում, իսկ թեք ձևում՝ ող։ Պետրոս Թիֆլիսեցին գրում է՝ խարօղ, բայց՝ կարողագոյն, պատրողական⁹, «Յոգնադիմի աստուածաբանական» (1704), «Բանաբանութիւն իմաստասիրական» (1702 թ.) գրքերում՝ օդտագործօղ, փախչօղ, ընթերցօղ, կրօղ, աչրօղ, ժողովօղ, բայց՝ իրողութիւն, բարկացողութիւն և այլն։ Սիմեոն (Սիմէօն) Զուղայեցին և Մխիթար Սեբաստացին այլ հնչյունափոխությունների հետ հիշատակում են նաև օ>ռ փոփոխությունը ենթակայական դերբայում՝ սիրօղ—սիրողի, խնդրօղ—խնդրողին, յիշօղ—յիշողի, յիշողիւ, յիշողական, ի յիշողէ և այլն¹⁰։ Այս կանոնը պահպանված է նաև Բաղդասար Դպիրի և այլոց գործերում։ Սակայն դարավերջին նկատվում է, որ այդ կանոնին այլևս ուշադրություն չեն դարձնում, օրինակ, «Ազգարարը» (1795) գրում է թե՛ վերծանողք, թե՛ վերծանողք (18), ցանկացողն և յապաղողքն, ընթերցողացն, կառավարողն, կարող է և այլն։

Օ տառը գրվում էր նաև օտարադգի բառերում։ Փոխառյալ բառերի օ հնչույթը հայերենում տառադարձվում էր օ տառով բառի բոլոր դիրքերում։ Օրինակներ. Մատթէոս և Ղուկաս Վանանդյանների հիշյալ «Բանաբանութիւն իմաստասիրական» գրքից՝ Ահարօն, Թօպացն, Շօհամ, Հալօմ, Շաբօ, Տէրիմօն, Զէֆիրօն, Թէատրօն, մօնկրօն և այլն։ «Յոգնադիմի աստուածաբանական» գրքից՝ բբօր, խօշ (թուրքերեն), մօիքէց, բօրօտիսագան, մօրձէ, մշվիդօբա, լօցվասա (վրացերեն), ամալօ, բօնում, դօմինի, իւստօս (լատիներեն) և այլն։ Մխիթար Սեբաստացին «Դուռն քերականութեան» մեջ (1727) թուրքերենի օ հնչյունը նույնպես հայերենում օ տառով է արտահայտում (սօուրք, սօուդըն, սօուրտան, քօմուր, շօօր, կօրունուրչէր և այլն)։ «Ազգարարը» (1795) գրում է՝ վօլտեր, Ռօսիոյ, Պօլիս, Միրաբօ, նասիօնալ, կօնվերսիտն, Լօնդօնու, Մօսկօվու, րօպէ, Քառլօ, Կղումրօ, Եւրօպիու, Ռօբեսպիէռ, Պօտեմկին, Բօտկինին և այլն։ Մնացած դեպքերում քառամիջում օ հնչույթը գրվում է ռ տառով՝ հող, թագավոր, սովաւ, աթոռ, ախորժ, ալեւոր, թոռան և այլն։

Բառասկզբում յօ հնչյունակապակցությունը գրվել է ռ տառով, որը պահպանվել է նաև քառամիջում (vor — որ, vorokhel — ողորբել, anovokh — անողորբ, vorkor — որկոր, vohmiak — ռհմակ,

VOГOV — որով, VOSKOR — ոսկոր, այդպես էլ՝ ողկոյզ, ռիսակալ, որոնեալ, որումն, ծնկոտկր, անորոշ, ձկնորս և այլն)։

Ե—է.— Միջին դարերում այս տառերի գրութիւնը շատ էր շփոթված, որովհետեւ հնչմամբ գրեթե նույնացել էին։ Ուշ միջնադարում բառասկզբում Ե-ն սկսել է չԵ հնչվել և այդ դիրքում էլ նրանց գրութիւնը կամաց-կամաց սահմանազատվել է։ ԺԸ դարում այդ տառերի գրութիւնը բառասկզբում որոշակի է՝ չԵ հնչույնա-կապակցութիւնը գրվում է Ե տառով, իսկ Ե հնչույթը՝ է տառով։ Է տառով քիչ բառեր են սկսվում, ըստ Առձեռնի դրանց թիվը շուրջ 20 է (է, էակ, էջ, էշ և սրանցով կազմված մի քանի բառեր), սրանք բարդվելիս կամ ածանցվելիս բառամիջում Է-ն պահպանում են (ամենաէական, առէջք, վայրէջք և այլն)։ Բառավերջում Ե հնչույթը գրվում է միայն Լ տառով (Վաշէ, րոպէ, հիւլէ, հնչէ)։ Բառամիջում Ե հնչույթը է տառով է գրվում այն դեպքում, երբ շեշտը կորցնելիս հնչույնափոխվում է (կէս—կիսել, պարտէլ—պարտիզպան, դէլ—դիզել, ակնդէտ—դիտել, կէզ—կիզիշ, գէտ—հայագէտ, գիտուն, սէր—սիրել և այլն)։ Եթե նախաշեշտ Ե-ն ի հնչույթի չի փոխվում, գրվում է Ե տառով՝ Մովսէս—Մովսեսի, աղուէս—աղուեսու, Յովհաննէս—Յովհաննեսի կամ՝ Մովսիսի, Յովհաննիսի։

Մնացած դեպքերում բառամիջում Ե հնչույթը Ե տառով է արտահայտվում, այդ թվում նաև հոգակապի դեր կատարող Ե-ն (ոսկեգօծ, այգեպան, հոգեկան, հոգեպահ, գինետուն, տարեմուտ և այլն)։

Բառասկզբում Ե տառի չԵ հնչումը վկայում են և՛ ժամանակի քերականները, և՛ տառադարձութիւնը։ Շրջոգերի «Գանձ արամեան լեզուի» գրքում (1711 թ.) Երուսաղեմ բառի դիմաց գրված է Jerusalem, Երուսանդի դիմաց՝ Jeruvand, որ նշանակում է, թե հեղինակը Ե-ն բառասկզբի դիրքում չԵ է կարդացել։ Խալդարյանն իր «Գիրք, որ կոչի շաւիղ լեղուագիտութեան» բառարանում (1788 թ.) բառասկզբում ուսերեն Ե-ի դիմաց, որ կարդացվում է չԵ, հայերեն գրում է Ե տառը՝ ежели > Եժելի, единовременный > Եդինովրեմենների, еще нет > Եշչե նետ, единоегласие > Եդինո-դլասիե, един по единому > Եդին պո Եդինումու, единославный > Եդինոսլավների և այլն։

Այս տառերի ուղղագրութիւնից շեղումներ պատահում են, բայց դրանք քիչ են և անհատական բնույթ ունեն։ Օրինակ. Հունան Թոխաթեցու «Դաշտիկ ծաղկալի» (1727 թ.) գրքում, որ ընդհանրապես գրված է դասական ուղղագրությամբ, հանդիպում են՝ ընկէց,

էհարց, էհաս, էգիտ, էհան գրությունները (էջք 13, 106, 175, 185 և այլն), Շրյոդերի «Գանձ»-ում, որ նույնպէս կանոնավոր ուղղագրությամբ է գրված, տպագրված են՝ եղէց, երէկ, տէառն (նաև՝ տեառն), Նաղաշ Հովնաթանի տաղերում՝ քարէքար, արէյքական. կու լսէմ, շարէշար, վարթ ևս լցվէլ և այլն: Այս սխալագրությունները հետևանք են և—է տառերի բառամիջում ունեցած արտասանական նմանության: Նույնիսկ Թոխաթեցու սխալը (էհաս, էգիտ) արտասանության հետևանք է, բաղաձայնին նախորդող դիրքում նա Ե-ն Ե է կարգում:

Ը.— Այս դարում ևս հիմնականում պահպանվում է ը տառի ավանդական գրությունը. բառասկզբում գրվում է, երբ լսվում է, ը-ով սկսվող բառերն այդ տառը պահպանում են նաև բառամիջում, երբ բարդվում կամ ածանցվում են (անրնդհատ, անընկեր, անընդմէջ և այլն):

Մյուս դեպքերում՝ բառամիջում և բառասկզբի սկ. սպ. ստ. զր. զգ. շտ. շպ կապակցություններից առաջ լսվող ը-ն չի գրվում (զգոյշ, սկիզբ, սպասումն, մատենագրութիւն, զրահ, քրքրել, տընանկ, սրաթև և այլն), այնպէս, ինչպէս չէր գրվում դասական մասենագրության մէջ:

Միջին դարերում տարածված էր գաղտնավանկի, ինչպէս և բառասկզբի հիշյալ կապակցություններից առաջ լսվող ը-ն գրելը: Այս երևույթը շարունակվում է նաև ԺԸ դարում: Շատ հեղինակներ, հետևելով միջնադարի գրիչներին, գաղտնավանկի ը-ն գրում են՝ 1. երբ այն հետևանք է հնչուճափոխության: Օրինակ՝ ծնընդոց, բըղխեալ, ծընաւ, նըստար, լըցո (Շրյոդեր), ի տըէ, տըընջեան, տըպագրեցաւ, գըրոց (Ջուղայեցի), սնընդարար, ախընթոր, հընձան, ծըընդական (Եր. Մեղրեցի), արընթաթախ, արընլուայ, արընոտ, արթընցնել (Մխ. Սեբաստացի) և այլն:

2. Բառասկզբում՝ սպ. սկ. ստ. զր. զգ. շտ, շպ կապակցություններից առաջ: Օրինակ՝ ըսկսան, ըստացման, ըսպիտակութիւն (Ջուղայեցի), թեև ինքը՝ Ջուղայեցին գրում է, թե ըսքանչելի, ըՍտեփաննոս, գրգել, զըրկել ասվում է, բայց սքանչելի, Ստեփաննոս, գգել, զրկել գրվում: Հիշյալ կապակցություններից առաջ լսվող ը-ն գրում են նաև Շրյոդերը (ըստեղծուածոյ, անըսկիզբ, ի ըստորին, ըզքեզ, ըզծագոյն, ըստացել և այլն) և ուրիշները:

Նկատելի է, որ գաղտնավանկի ը-ն գրում են՝ նպատակ ունենալով շեշտել բառի ճիշտ արտասանությունը: Օրինակ, Շրյոդերը բառացանկում այդ ը-ն չի գրում, իսկ բերած քաղվածքներում, որոնք կենդանի խոսքի օրինակներ են, գրում է: Մխ. Սեբաստացին

բառարանում գրում է ը-ն, բայց հղում է անում առանց ը-ի ձևերը (ըշտապ—տե՛ս շտապ, ըռունկն—տե՛ս ռունգն, ըռուխ—տե՛ս ռուֆ, ըսթափ—տե՛ս սթափ և այլն), այսինքն՝ սխալ, բայց տարածված ձևերը հիշատակելով, ընթերցողին ցույց է տալիս ճիշտ գրությունը:

Նկատելի է նաև, որ միևնույն բառում մեկից ավելի ը սովորաբար չեն գրում, օրինակ. սնրնգարար, տրպագրեցաւ կամ տպագրեցաւ, ծնրնդական, արթընցնել և ոչ՝ սընրնգարար, տըպագրեցաւ, ծընրնդական, արթընցընել:

Ը տառի վերը նշված կիրառություններին ավելանում է նաև բայի նախամասնիկ կ-ին հաջորդող ը-ի գրությունը: Բաղդասար Դպիրի քերականության մեջ հանդիպում են՝ կը կարդացվի, կը շինվի, կը հասկցնենք և այլն: Արևմտահայերենում բառասկզի ա. ու, և ձայնավորները մի շարք բառերում փոխվում են ը-ի, որը և գրվում է: Օրինակ՝ ըսել, ընել, ըղունգ, ըղեղ, ըղորդ, հասկըցնել, արձրկել, ճրղթել և այլն:

3.—Ուշ միջնադարում բառասկզբի յ-ն արդեն հ էր կարդացվում: ԺԸ դարում դա կանոնական է դառնում: Գրում են յայտ, յեղումն, յաբ, կարդում՝ հայտ, հեղումն, հաբ: Այս հնչումը պահպանվում է նաև բառամիջում՝ անյայտ կարդում են անհայտ, յաբայիշեմ-ը՝ հաբահիշեմ, յեղյեղում-ը՝ հեղհեղում և այլն: Մխիթար Սեբաստացին իր գրաբարի քերականության մեջ գրում է, որ բառասկզբի յ-ն բաղաձայն է, որպիսին մնում է նաև բառամիջում, երբ յ-ով սկսվող բառերն ածանցվում կամ բարդվում են, և բերում է օրինակներ՝ յեղյեղումն, անյայտ, յաբայիշեմ, ամենալետին և այլն, որոնք կարդացվում են՝ հեղհեղումն, անհայտ, հաբահիշեմ, ամենահետին (անդ, 477—479):

Բառասկզբում հ հնչող յ տառը գրվում է ընդհանրապես ձայնավորներից և դ. ս բաղաձայններից առաջ: Ըստ Առձեռն բառարանի, բառասկզբում հ հնչույթը յ տառով հանդիպում է հետևյալ տառերից առաջ՝ ա (յագենամ, յաղեմ «զոհեմ», յաճոյք, յամր «ծանր», «դանդաղ», յայտնի, յարմար, յանկարծ, յարատև, յատակ և այլն), ե (յելուզակ, յեղադարձեմ, յեսան, յեղանակեմ «փոխեմ», յեկտար «ձեռագիր», յեցամիտ «հաստատամիտ», յետամնաց և այլն), ի (յիմար, յիշատակ, յիսուն), ղ (յղանամ, յղկեմ, յղփանամ), ռ (յոբելեան, յոգնամեղ, յոգնագէտ, յոլով, յոլովախումբ, յոյզ, յողդողդ, յոյժ, յոյն), ու (յուզարկաւոր, յուլիս, յուզական, յուշարար, յուշիկ, յուրթի), ս (յստակ, յստակամիտ), օ (յօդ, յօգ-

նիմ, յօժար, յօնգ, յօրայ «խորթ հայր», յորանջ, յորինուած), և մի բառում էլ չ տառին նախորդող դիրքում՝ յեշտող «լիրք», որ Աճառ-յանը համարում է անստույգ բառ: Մնացած դեպքերում, երբ լսվում են hi, hm, hn, hr, hp, ht և այլ հնչյունակապակցությունները, գրվում է հ՝ հլու, հմայել, հնագէտ, հպատակ, հոետոր, հոշակ, հսկայ, հտպիտ, հրաբորբ, հրաման, հծծանք և այլն: Ձայնավորների հետ կադմում է բառերի հագ, հագ, հալ, հակ, հաղ, հաճ, համ, հայ, հան, հաշ, հապ, հաջ, հառ, հաս, հատ, հար, հաց, հաւ, հեղ, հեթ, հեծ, հեղ, իճ, հեն, հեշ, հեռ, հես, իետ, հեր, հեց, հել, հիւ, հիմ, հին, հոգ, հող, հոմ, հով, հոտ, հոս, հուն, հոփ նախամասնիկները:

Աճառյանը գրում է, թե յ>հ հնչյունափոխության պատճառն այն է, որ այդ երկու հնչույթների միջև ընկած է շնչեղ յ-ն (շ) և ինչպես շնչեղ թրթռուն բ', գ', դ', ճ', ջ' (bh, gh, dh, jh, ṣh) հնչույթները իդանալով՝ դարձան փ, ք, թ, ց, չ, այնպես էլ շնչեղ յ-ն (չ, դարձավ հ, երկու դեպքում էլ պատճառը հ շունչն է¹¹: Մեկեն հենց այդպես էլ հ-ն համարում է խլացած յ¹²:

Յ տառը բառամիջում և բառավերջում պահպանում է իր դասական գրությունը: Մխիթար Սեբաստացին, Սիմեոն Զուղայեցին կրկնում են դեռ Արիստակես Գրիչի սահմանած կանոնները: Բառավերջում ա, ո տառերից հետո յ-ն գրում են տարբերելու համար՝

1. հատուկ անունը հասարակից (Եւա, Յուդա, Եղիա, բայց՝ բահանայ, սատանայ),

2. հրամայական եղանակը սահմանականից (ողբա՛ և ողբայ),

3. գոյականի սեռականը ուղղականից (Մաղաքիա, Եսայեա և Մաղաքիայ, Եսայեայ),

4. սա, դա, նա, քո դերանունները յ-ն ստանում են հոգ ստանալիս կամ հոլովվելիս (սայն, դայն, քոյն):

Սրանցից առաջին երկուսը վերաբերում են ոչ միայն գրաբարին, իսկ դերանունների գրությունը և յ տառով ուղղականն ու սեռականը տարբերելը վերաբերում են գրաբարին: Աշխարհաբարը նույնպես բառավերջում ա, ո-ից հետո յ է պահպանում, անկախ նրանից՝ հնչում և (գոյ, բայ, հայ, հոյ), թե՛ չի հնչում (ծառայ, սատանայ):

Այս տառի գրության շեղումներ էլ կան, բայց դարձյալ հազվադեպ են և լինում են բարբառախառն գործերում, ինչպես Հովնաթանի հիշյալ բանաստեղծություններում (արիայլուիս, արեյգա-կան, եասայման, անուշայհոտ, մեղայլոր, անմայական և այլն):

ԻԱ երկհնչունը գրվում է եա տառակապակցությամբ՝ տեառն, հրեայ, սեաւ, գործեալ, տեսեալ, առեալ, ողորմեայ և այլն:

Բաղաձայնանախորդ ույ երկհնչյունը արտահայտվում է ոյ տառակապակցությամբ (բոյս, լոյս, գոյն, ղգոյշ, նշոյլ, սոյն, պտոյտ և այլն)։ Մնացած երկհնչյունները (գրաբարում՝ երկբարբառներ) ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում են՝ ալ—ալ, իլ—իլ, ոյ—ոյ, յա—յա և ալն, բացի դասական հայերենի ուա երկբարբառից։

Ու, վ, ի.—ծթե ո—o, ե—լ. յ տառերի ուղղագրության մասին կարելի է ասել, որ կանոնավորված է, չնչին շեղումներով, ապա Վ հնչույթի և ընդհանրապես բաղաձայնների մասին նույնը չի կարելի ասել։ Տեսանք, որ Վ հնչույթը ե գարում արտահայտվել է վ և լ տառերով (vard—վարդ, avazan—աւազան)։ Սրանց միջնագարում ավելանում է բառամիջում ձայնավորանախորդ ու տառը, որ ընդհանրապես ու պարզ ձայնավորի տառն է։ Մխ. Սեբաստացին իր դրաբարի քերականության մեջ նորից նշում է, որ ու տառը բառամիջում ձայնավորին նախորդող գիրքում վ է հնչում, իսկ բաղաձայնին նախորդելիս՝ ձայնավոր ու (տուն, սուր, ուրախ, ուա)։ «Թաւացեալ ու տառս, որ որպէս դու արտաբերի, բազմիցս ի անհմտաց գրչաց շփոթի ընդ տառիս վեւ։ Ուստի ղգուշանալի է, զի մի փոխանակ գրելոյ հովիւ, խոստովանիմ, գրեսցի հուիւ, խոստուանիմ և կամ փոխանակ գրելոյ աստուած, հայցուած, գրեսցի աստված, հայցված» (անդ, 475—476)։ Իբրև բացառություն՝ Սեբաստացին հիշատակում է երրորդ լծորդության անկատար բայաձևերը (լնուի, լնուիր), ուր ու տառը ձայնավոր ու-ի նշանն է։ Հոգնակի գործիականում լ-ը ի հնչույթի հետ կազմում է եու երկբարբառը, ուր լ-ը բաղաձայն չէ։ Օրինակ՝ խաչիւք, բանիւք, այսոքիւք ձևերում իւ-ն կարդացվում է եու. ոչ իվ (խաչեուք, բանեուք. ոչ՝ խաչիվք, բանիվք)։ Հեղինակն զգուշացնում է շփոթել իւ (iv) և իւ (ü), ու (v) և ու (u) տառերը։

Ծթե ո—o, ե—լ և յ տառերի ուղղագրությունն ընդհանուր էր գրաբար, արևմտահայ և արևելահայ լեզուներում, ապա բաղաձայնների և ր-ի ուղղագրությունը երկու սկզբունք ուներ՝ ըստ դասական հայերենի (ավանդական) և ըստ առտասանության (հնչյունային), ընդ որում արևելահայերենում ընդունված էր դասական գրությունը, բացառությամբ Վ բաղաձայն հնչույթի գոություն։

Ահա թե ինչու Ա. Այսերնյանը գրում է, թե անցյալ դարի վերջերից բանասերներն սկսեցին զանազանություն հաստատել գրաբարի և աշխարհաբարի ուղղագրության մեջ, և նույն բառն ունեցավ գրության երկու ձև՝ վ-ով ու լ-ով, ե-ով ու է-ով։ Գրաբարի ծնաւ, կախուեցաւ, տուաւ, շինուած, վարձուոր, տարւոյ ձևերը աշ-

խարհաբարում դարձան՝ ծնավ, կախվեցավ, տվավ, շինված, վարձվոր, տարվան, տեսնվեր է> տեսնվէր է, գնացեր է> գնացէր է և այլն: Բայց սա խափանվեց, սկսվեց միջին գրությունը՝ դրիլ, շինւած, գտնւիլ, տասւիրեք, պարզրիլ: Հիմա, ասում է նա, գրում են՝ շինուած, տեսնուիլ, տասուիրեք և այլն¹³. Այս տարբերությունը, սակայն, երևում է վ. և և մի քանի բաղաձայն հնչույթների գրության ժամանակ: Ե-ի և է-ի գրության շեղումները հազվադեպ են:

V հնչույթը գրաբար գրականության մեջ շարունակում է արտահայտվել միջնադարի գրությամբ՝ վ. և, ու տառերով: Մեր ընթերցած Մատթեոս և Ղուկաս վանանդացոց «Բանաբանութիւն իմաստասիրական» (1702 թ.), Պետրոս Թիֆլիսեցու «Գիրք մտածողական» (1701 թ.), անհայտ հեղինակի «Յոգնադիմի աստուածաբանական» (1704 թ.), Աթանաս Կոստանդնուպոլսեցու «Յամառօտ քերականութիւն» (1774 թ.), Սիմեոն Զուղայեցու, Մխիթար Սեբաստացու, Երեմիա Մեղրեցու, Հունան Թոխաթեցու, Շրյոդերի և ուրիշների գրքերում բաղաձայնանախորդ թավացյալ ու-ն կա՛մ պահպանված է, կա՛մ փոխարինված և տառով (միջնադարյան ուղղագրություն): Օրինակներ. թշուառութիւն, արտասուիլ, մահուամբ, դժուար, անուան, թուի, վայելուածս (Սեբաստացի, Թիֆլիսեցի): Միևնույն գրքում թե՛ թավացյալ ու-ն է պահպանվում և թե՛ այն փոխարինվում է ւ-ով: «Դաշտիկ ծաղկալից» գրքում կան թե մահւան, հովաց, տեալ և թե լուաւ, հրճուանօք, ստացուածոցն, դժուարինք, թշուառութիւն ձևերը: Նույնիսկ երբեմն միևնույն բառը երկու գրությամբ է հանդիպում՝ մահուան և մահւան, պատուելիս—պատականագոյն, թշուառութիւն—թշառութիւն, արտասուօք—արտասուք (ն. տ.): Զուղայեցին թավացյալ ու-ի փոխարեն գրում է և տառը (հովապետ, պատւիրեաց, թեցեալ, լեզւի, անւան, նւագ, լւանամ, դրատել, պիտանացիս, տրուղին և այլն):

Երբեմն միևնույն հեղինակը գրաբարով գրած իր գրքում պահպանում է ավանդական գրությունը, ի՞նչ աշխարհաբարով գրածում հետևում է արտասանությանը: Օրինակ՝ Մխ. Սեբաստացին, որ ընդհանրապես ավանդական ուղղագրությամբ է առաջնորդվում, իր «Դուռն քերականութեան» մեջ (1727 թ.) թավացյալ ու-ի փոխարեն երբեմն վ տառն է գրում: Այդ քերականության մեջ հանդիպում են՝ սըվոր, սըվով, սըվոնք, սըվոնց, նվոր, նվոնցմէ և նման այլ դեղանվանական ձևեր: Աղուոր, աղուէս, գզուիլ, դինուոր, թթուիլ, լեզուանի, պատուել ավանդական ձևերի կողքին կան նաև՝ լուացւիմ, լուացւինք, այլև՝ վառվերեմ, վառվերես, թօթվել, ժողվել, լեղվնալ,

կովիլ, ծարվնալ գրություններր, որոնցից թօթվել և ժողվել բառերի վ-ն պատճառարանվում է այդ բառերի կազմությամբ՝ թօթովել> թօթվել, ժողովել>ժողվել: Շրջողերը, որ գրում է ավանդական գրությամբ, քահանայի և ֆրանկի գրույցը ներկայացնող հատվածում օգտագործում է թվի, պատվոյ, կովի ձևերը:

Աշխարհաբար գրականության մեջ, ուր, ինչպես ասացինք, ընդհանուր առմամբ պահպանված է ավանդական ուղղագրությունը, հաճախ է սխառանում թափացյալ ու-ի փոխարեն վ տառը: Նաղաշ Հովնաթանը գրում է՝ մաշվել, կովի, զինվոր, լեզվովդ, սալվի-խոսվի, տվել և այլն:

Մենք բերել ենք նաև կրավորական բայերի օրինակներ՝ նկատի ունենալով, որ բաղաձայնի ու ձայնավորի միջև լսվող վ հնչույթը ավանդական ուղղագրությամբ արտահայտվում էր ու տառով, ուստի և հիշյալ բայերը դրվում էին ու-ով, բայց դրան դուգահեռ հանդիպում էին նաև Վ-ով և վ-ով գրությունները: Բաղդուսար Գպիրը, հետևելով բանավոր խոսքին, իր քերականության մեջ ամենուրեք թավացյալ ու-ի փոխարեն վ տառն է գրում, հնչյունային գրության սկզբունքով: Օրինակ՝ տված, աստված, շարվածքն, կու ճանաչվի, կիմացվի, բարգվեցաւ, դրվի, պիտի հոլովվի, թվով, բացվիր, պատրվակ և այլն: «Պիտի ըսվի: Մինակ կրնայ կարդացվիր: Զի դրվին նէ: Հէմ կարճ ըլլա, հէմ շուտ հասկցվի» (6): «Գրով չի կապվիր: Բառից բանն կու շինվի» (9): «Շարվածքն քերականութեան կանոնէն դուռս չի լինի» (11): «Կու ճանաչվի, կու դրվի, կիմացվի» (14): «Հարցվի նէ շուտով գիտնաս» (29): Վ-ով գրություն կա նաև նրա «Բարեազիրք» ժողովածուում՝ պատվական, դավար, նվաստ, ավան, թվին և այլն: «Զի վճարվիր, իմ պատվական ծնողք» (222): «Յոյժ նվաստ ծառայէս, ի դժվար ժամանակիս» (223): «Գաղափար տվան»: «Ի թվին հայոց ՌԲՃԱ: Զոր տվի ալժմ» (231) և այլն: Բայց ահա նրա «Տաղիկներում»¹⁴ կամ առհ. պանված է վահնչյուն ու տառը և կամ էլ փոխարինված է Վ տառով՝ ալնրի, թրշուառ, զրարճադէմ, տրիշ, թրականին, թրիդէ շրիդէ և այլն: Վ-ով քիչ բառեր կան՝ բացվիր, պատրվակ և մի երկու այլ բառեր: Թավացյալ ու-ի փոխարեն հաճախ վ տառն է օգտագործված նաև վարդապետ Մինասի, կաթողիկոս Ծսայու, Իսրայել Օրու 1724—1726 թթ. նամակներում, որոնք նույնպես բարբառախառն լեզվով են գրված¹⁵: Օրինակներ. պատվական, խրնդրվածքն, տվինք, հետեվումանք, հետեվելանք, նշան է տվել, թոյլ չէք տվել, գլխավոր, հավատացեք, լեզվով (357—358), յունվար, գրվեցաւ, հաւաքվումեն, խառնակվումեն, տարվայ, հրա-

մանավ, հավադով, կհավադէք, հավադայ և այլն: «Պատվա-
կան յայոց ասկին»: «Հայոց ասկին խնդրվացքն յայտնի առ-
նի»: «Տվինք ուրն» (354): «Հրաման տվինք նորայ» (357):
«Բվիս յունվարի մեկն» (367): «Գրվեցաւ թոփս 1724» (406):
«Հրամանավ եկիր» (403): Ինչպես երևում է օրինակներից, այստեղ
արդեն վ տառն օգտագործված է բառի բոլոր դիրքերում, բառա-
վերջում՝ ձայնավորից հետո (հրամանավ), բառամիջում՝ ձայնա-
վորների միջև (մեծավորաց, հավադայ), բաղաձայնների և ձայ-
նավորների միջև, ձայնավորին նախորդող դիրքում (լեզվով, պատ-
վելի, խնդրվածք), սրանց ավելացրած նաև կրավորականի ածան-
ցը, որ ամենուրեք զրված է վ տառով՝ շիմացվի, կոտրվածն և
այլն: Փաստորեն կիրառված է մի հնչույթին մի գիր սկզբունքը:

Ընդհանուր տարածված կանոն է, որ օտարազգի v հնչույթն
արտահայտվում է վ տառով, ինչպես օ-ն՝ օ, Ե-ն՝ է տառերով. օրի-
նակ՝ «Յոդնադիմի աստուածաբանական» գրքում վրացերենի v
հնչույթն արտահայտված է վ տառով՝ մշվիդօբա, միսդէվդիմաս,
թվալի, լօցվաստ և այլն: Աթանասի հիշյալ քերականության մեջ
aqua-ն գրում է աքվա, il dilavio >իլ տիլավիօ, qua >քվա,
que >քվէ, dativo >տա թիվօ, nominativo > նօմինաթիվօ,
genetivo >ճենիթիվօ և այլն: Մխիթար Սեբաստացին, որ գե-
րադասում է v տառը գրել և թուրքերեն բառերն էլ հայատառ
գրելիս v հնչույթն արտահայտում է v տառով (սօուք, սօուղըն,
սօուղա, սօուքտան), այնուամենայնիվ երբեմն ստիպված վ տառն
է օգտագործում, օրինակ՝ էվվէլքի է գրում, որովհետև երկու v չի
կարող իրար կողք գրել:

Դարավերջին, սակայն, նկատվում է բաղաձայնական ու-ի վե-
րականգնում, վերադարձ դեպի նախնյաց գրությունը: Օրինակ՝
«Ազդարար»-ը (1795) միայն բաղաձայնական ու-ն է օգտագոր-
ծում: Թեև շատ հոգվածներ զրված են բարբառախառն լեզվով,
բայց նենց նրանցում էլ պահպանված է թավացյալ ու-ն: Այսպես՝
«Իբրև նուիրակ եկն»: «Հաճու թուիցէ, դժուարութե» (1), զանու-
անս, նուաճին, թշուառս, գուարթ մտօք, լուարուք, պատուիրեալ,
ղկալուածս (2—12), անուանակոչութեան, նուագի, գրուածք (95)
և այլն:

Բազդասար Դպիրը տաղերում թուրքերենի v-ն տառադարձում է
վ՝ նէվրուզ, եավաշ, դօվա, օվա, խվա, տուվա, ավարա, սէվէ, ճէ-
վիդ, տիվանէ և այլն: Խալզարյանի բառարանում հանդիպում են՝
ղվածղրի, եավիտսեա, սօմնեվատսեա, բօեալիվլրի, դօլգօվատրի,

ուղիվլեախուսիա, ուղիվլենիա, տրեզվոստ, պօզվօլիտ, շուվստվօ-
վատ, կլեվետնիկ, պլավեց, դերեվօ, ուբիվախու, սվետնուտ, պօվա-
րիտ և այլն:

Շարունակվում է ընդարձակվել պայթական և պայթա-շփա-
կան բաղաձայնների գրության և արտասանության միջև դեռ նախ-
նյաց գրավոր հուշարձաններում նկատված անհամաձայնությունը:
Արևմտահայ գրական լեզվում եռաստիճան բաղաձայնական հա-
մակարգը վեր է ածվել երկաստիճան խլազուրկ համակարգի: Արև-
մրտահայ հեղինակներն օտարաղգի հնչմանը հարադատ մնալու
համար նրանց ձայնեղի դիմաց մեր խուլն են դնում՝ *b—պ, ց—կ, ժ—տ*, որովհետև խուլերը (*պ, տ, կ*) ձայնեղ են հնչում, գրում են՝
բաղ հնչում են փաթ. ուստի եթե օտարաղգի *b—ի* դիմաց *p* գրեն, փ
կհնչեն և կհեռանան փոխատու լեզվի արտասանությունից: Ահա թե
ինչու Աթանասն իր հիշյալ գրքում գրում է *ba—պա, be—պէ da—*
տա, de—տլ, ga—կա, ge—նէ, gi—նի, իսկ լատիներեն խուլերը
տառադարձում է շնչեղ-խուլերով՝ *pa—փա, pe—փէ, ta—թա,*
te—թէ և այլն: Այսպես՝ *donna* > տօննա, *l'amico* > լամիքօ,
Gesu Cristo > ճէզու Քրիսթօ, *singolare* > սինկօլարէ, *ablativo* > ապլաթիվօ և այլն: Արևմտահայ քերականները տառա-
դարձությունը երեք շարքով են ներկայացնում՝ *b—p—պ, ժ—դ—տ,*
ց—զ—կ, ըստ որում օտար բառից հետո գրում են, թե ինչպես են
հնչում, իսկ հետո՝ գրությունը (b—ն հնչում են բ, գրում են պ): Մխ.
Սեբաստացին թուրքերեն բառերը հայատառ գրում է պաշ (*ٲاڇ*).
տուշման (*duřman*), որ կարդան բաշ, դուշման, աշդպես էլ՝
նիճէքիմ, պէն, պապանընկ, պիզ, օտրը, կեորունուրլէր և այլն: Եր-
բեմն, տուրք տալով ժողովրդական արտասանությունը, Սեբաստա-
ցին գրում է մունճ, թրթնճուկ, սոսինճ, բրինճ, ժանկ, գանկատ,
գանկակ և այլն: Իր գրաբարի քերականության «Յազագս յարմա-
րագրութեան» խորագրի տակ, սակայն, խոսելով բաղաձայնների
ուղղագրության մասին, նա պահանջում է գրել՝ *ամպ, զօրավիզ,*
թագ, բաղարջ, բանտ, բամբասել, գաղափար, դանճակ, Թադէոս,
լափել, խաբել, խափանել, կոնք, ճագար, մարմաջել, օթոց, յո-
գունք, քաջ, օդիք, օդ, փունջ, տքնիլ, պապանձիլ, պանդուխտ և ոչ՝
ամբ, զորավիկ, թաք կամ դագ, բաղարշ, բանդ, բանպասել, գա-
ղաբար, գանկակ, Թաթէոս, լաբել, խափել, խաբանել, կոնգ, ճա-
քար, մարմաշել, հոքունք, օդոց, քաշ, օթիք, օթ, փունշ, տգնիլ.
պապանձիլ, պանդուխտ: Հիշատակում է կրկնակ գրություն ունեցող
բառերը՝ բդեշխ—բթեշխ, բողոքել—բողոգել, գայթազել—գայթա

կղել, շողոթորդ—շողոթորթ, շոգա—շոքա, սեփհական—սեփական, քարտէս—քարտէզ, փափագիլ—փափաքիլ, ցանկ—ցանգ, ժանկ—ժանգ և այլն: Նաև այն բառերը, որոնք արտասանությամբ նույնն են, գրությամբ են տարբերվում՝ որթն (խաղողի)—որդն (ճիճու), պնտիլ (հետամուտ լինել)—պնդիլ (ամրանալ), տրմուղ (անվարժ)—տրմուխ (փոցիս) և այլն: Այս բոլոր գույզ ձևերը զայիս են շատ նուց, ուստի Սեբաստացին չէր կարող անտեսել: Կարծում ենք, որ Սեբաստացին առաջնությունը տալիս է գրաբարյան ձևերին, ավանդական ուղղագրությանը: Եթե օգտագործում է ժողովրդական ձևերը, ապա այդ այն դեպքում, երբ տվյալ բառաձևը շատ է տարածված: Մյուս կողմից՝ այդ ձևերը նա օգտագործում է աշխարհաբարի քերականության մեջ՝ ցույց տալու համար ժողովրդական ճիշտ արտասանությունը: Նա ձգտում էր աշխարհաբարը գրաբարով մշակել, հարստացնել¹⁶:

Արեւմտահայերենում, սակայն, անփոփոխ են մնացել սպ, ստ, սկ, շպ, շտ, շկ տառակապակցությունների գրությունն ու արտասանությունը թե՛ փոխառյալ, թե՛ բուն հայերեն բառերում: Գրում են՝ սաստել, հաշտ, ասպաղէն, ասկետ, աշտէ, մաշկ, սաստիկ, փաստ, կարգում են՝ sastel, hašt, aspazen, asket, aštē, mašk. sastik, phast:

Արեւելահայ գրական լեզվում պահպանվում է բաղաձայնների եռաստիճան համակարգը՝ b>բ, p>պ, ph>փ: Խալդայանի բառարանում այդպես էլ տառադարձված է ուսերենն 6>ր, 7>գ, 8>դ, 9>պ, 10>ա, 11>կ. единославный>Եդինսլավնրի, воздух>փօզդուիս, обижать>օրիժատ, позволить>պօղվօլիտ, как>կակ և այլն: Շրջոգերը գրում է՝ Միհ-դատ>Miherdat, հերրալեցերէն>Hebraice, եփրատ>Euphrates, Պետրոս>Petrus, Պոնտապի>Pontius, Հայկ>Halk, Գեղամ>Gelam, Ընձաք>Endsakh, Դղակ>Dgak, Պարույր>Paruir, Կալպակ>Kaipak և այլն:

Բաղաձայնների ուղղագրական վերը հիշատակված շեղումները արեւմտահայերենում արտահայտվում են գերազանցապես տառադարձության ժամանակ, փոխառյալ բառերում: Մյուս դեպքերում արեւելահայերենի պես արեւմտահայերենում էլ զործում է ավանդական սկզբունքը: Արեւմտահայերն էլ (Սեբաստացի և ուրիշներ) գրում են՝ ճամփա, տուն, օծել, ճիշտ, ծիրան, որպես, ճուտ, ձեռք, դուռ, ջուր և այլն, տարբերությունը արտասանության մեջ է: Այլ:

քան է, որ որոշ հեղինակներ շեղվում են ընդունված ձևերից, ինչպես այդ նկատում ենք Թոխաթեցու, Բաղդասար Դպիրի հիշյալ գրքերում: Երբեմն Սեբաստացին էլ է տուրք տալիս դրան, թեև նախորդ էջում տեսանք, թե ինչպես է նա քննադատում այդ աղավաղումները:

Հայերենի համար ընդհանուր երևույթ է, որ

1. իրար կողք ընկած բաղաձայնները երանգով նույն տեսակի են լինում: Կարող են լինել աստ—ասթ, ասպ—ասփ, ասկ—ասք, ախտ—ախթ տառակապակցությունները, բայց ոչ՝ ասդ, ասբ, ասզ, ախդ: Զ տառին կարող են հաջորդել ձայնեղները և ոչ խուլերը՝ ազդ, ազբ, ազգ, բայց ոչ՝ ազպ, ազփ, ազտ, աղթ, աղկ: Առձեռնում աստ-ով, ասպ-ով սկսվող շատ բառեր կան, ասփ-ով միայն մի բառ կա՝ ասփողէլոն «անուշահոտ տունկ», ասւ-ով՝ միայն ասւ՝ բառն է: Ասբ-, ասդ-, ասզ- կապակցություններով սկսվող բառ չկա:

2. Ձայնավորներին և ձայնորդներին հաջորդող ձայնեղները մեծ մասամբ փոխվում են շնչեղ-խուլի (բ>փ, գ>ք, դ>թ, ջ>չ, ձ>ջ), բայց ավանդական ուղղագրության սկզբունքով գրությունը մնում է անփոփոխ: Այստեղից էլ բխում են ուղղագրական հետևյալ կանոնները.

ա) Փ հնչույթը բ տառով է գրվում բ-ից հետո՝ հարբել, սրբե, ուրբաթ, սուրբ, երբ, նուրբ, դարբին և սրանցով կաղմված բառերում, ա-ից հետո՝ խաբել, շաբաթ, նաև՝ Յակոբ, համբերել, համբույր և սրանցով կաղմված բառերում: Մնացած դեպքերում փ հնչույթը գրվում է փ տառով (ափ, թափել, թուփ, թեփ, եփ, խուփ, խփել, լափ, շփումն, գոփումն և այլն):

բ) Թ հնչույթը դ տառով է գրվում բ-ին հաջորդող դիրքում (մարդ, որդ, բարդ, վարդ և այլն), բացառությամբ՝ արթուն, երթ, գուարթ, թարթել, թերթ, թրթիռ, լուրթ, խորթ, կիրթ, հարթ, հորթ, մերթ, մորթի, շողոթորթ, շորթել, որթ, շուրթ, պարթև, սաղարթ, փարթամ, քերթող և սրանցով բաղադրված բառերի: Ն-ին հաջորդող դիրքում՝ անդամ, խնդիր, կենդանի, ընդամենը, ընդհանուր, ընդունել, ընդունակ և սրանցով բաղադրված ձևերում: Ձայնավորին նախորդող դիրքում՝ դադար, գդակ, գդալ (դգալ), դդում, Թադեոս, օդ և սրանցով բաղադրված ձևերում: Մնացած դեպքերում ք հնչույթը գրվում է ք տառով՝ թաթ, թեթև, թիւր, թիւ, թուխ, թոշք, կաթիլ, սաթ և այլն:

գ) Չ հնչույթը ջ տառով է գրվում բ-ին հաջորդող դիրքում (վերջ, արջ, թրջել և այլն), բացառությամբ՝ դարչին, շարչի, փարչ

և իշ ածանցով (վարչական) բառերի: Ղ տառին հաջորդելիս (աղ-
ջիկ, առողջ, գեղջ, եղջիր և այլն), բացառությամբ զեղջել բառի:
Ձայնավորից հետո՝ աջ, մէջ, առաջ, ոջիլ: Մնացած դեպքերում շ
հնչույթը գրվում է շ տառով՝ շար, շիք, ինշ, շոր, շամիշ, շիր, խաշ,
խոշ, ոշ, վայելուշ, աւաշ և այլն:

դ) Յ հնչույթը ձ տառով է գրվում Ե տառին հաջորդելիս (բար-
ձր, արծակ, փորձ, դերձակ, համբարձեալ, դարձ և այլն), բացա-
ռությամբ՝ Արցախ, հարց, ընթերցայ, պախուրց, տրցակ, ուրց, մրր-
ցիլ և սրանցով բաղադրված բառերի: Ղ-ին հաջորդելիս (դեղձ,
դաղձ, մաղձ, ատաղձ, հեղձ, դեղձանիկ և այլն), բացառություն են՝
աղցան, քաղց, քաղցր: Յ-ն ձ-ով է գրվում նաև օձ բառում:

ե) Ք հնչույթը գ տառով է գրվում Բ-ին հաջորդելիս՝ երգ,
կարգ, թարգման, մարգագետին, մարգարիտ, մարգարէ, միրգ,
պարգև և Մարգար: Ձայնավորին հաջորդելիս՝ աւագ, երկրպագել,
արեգակ, գուգել, էգ, թագաւոր, ծագել, ծեգ, հագուստ, հոգս, հոգ-
նել, յոգնակի, ձագ, ձիգ, ճգնել, ճրագ, նվագ, մուգ, շոգ, պատա-
րագ, վարագոյր, օգնել, օգուտ և սրանցից կազմված բառերում:

դ) Խ հնչույթը բաղաձայնին նախորդելիս մեծ մասամբ ղ տա-
ռով է արտահայտվում՝ աղջիկ, ողջ, ողկոյզ, բողկ, փեղկ, մեղք,
գեղձ և այլն: Բացառություն են՝ ապուխտ, բախտ (բաղդ), դժոխք,
կիտար, կմախք, յախճապակի, նախճիր, դրախտ, երախտիք, զրմ-
լուխտ, նախշ, թուխս, վախճան, խրոխտ և այլն, շուրջ 30 բառ:

է) Ռ—Բ.— Բ-ով սկսվող բուն հայերեն բառ չունենք: Նախ-
նիք գործածել են՝ ըաբունի, ըազարդ, ըախալի, ըախճան, ըահետ,
ըամ, ըամապետ, ըենական, ըուպ և սրանցով կազմված մի քանի
բառեր, որոնք, սակայն, 18-րդ դարում գործածությունից կա՛մ հան-
ված էին (օրինակ՝ ըամեմ «ժողովել», ըենական «աստվածային»,
ըաղոս «գաղազան» և այլն), կա՛մ էլ գործածվում էին դրանց հա-
յացի ձևերը՝ ըախական—ուրախական, ըախճան—խրախճան, ըա-
հետ—արահետ, ըակերտ—հրակերտ, հրաշակերտ և այլն: Մնացել
են գործածական ըուպէ, ըաբբի և սրանցով բաղադրված բառերը:
Մնացած բառերի սկզբում լսվող ռ հնչույթը ռ տառով էլ գրվում է:
Դրանց թիվը նույնպես շատ քիչ է, շուրջ 20—25 բառ (ռազմ, ռահ
«ճամփա», ռահվիրա, ռամիկ, ռայ «գրողակ», ռեմոն «գրավ», ռե-
տոր, ռիմ «քեն», ռունգ, ռոճիկ, ռոշնական «լուսավոր»): Բոլորն էլ
փոխառյալ բառեր, որ հաստատում են, թե հին հայերենում ռ և Բ
հնչույթներով սկսվող բնիկ հայերեն բառեր իսկապես չեն եղել:

Բառամիջում և տառին նախորդող դիրքում սովորաբար ռ տա-

որն է լինում (զառն, ձեռն, դուռն, դառն, առն, դառնալ, սպառնալ և այլն): Բ տառը ն-ին նախորդող դիրքում կարող է լինել հնչյունափոխության հետևանքով՝ գարնան, արնաներկ, վերնատուն և այլն: Ռ տառը այլ բաղաձայնների կարող է հաջորդել բառակազմության կամ հնչյունափոխության հետևանքով՝ կովան, առջև, սառչել, ուռչել, կռթնել, սառցապատ և այլն: Ռ-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերի առաջին ռ-ն փոխվում է ր-ի՝ թրթիռ, մրմուռ, գրգիռ և այլն:

ր) Ն—Մ.— ր. պ. փ պայթականներին նախորդող դիրքում գրվում է մ տառը՝ ամփոփել, ամբարիշտ, ամպ, համբերել, արեամբ, հետաքրքրությամբ և այլն: Այս բաղաձայններից առաջ ն տառը կարող է գրվել, եթե ա՛ն նախածանցի բաղադրիչն է՝ անբախտ, անփոյթ, անպարտ, անբարբառ, անբիծ և այլն: Նաև բաղադրյալ բառերում, երբ ն-ով վերջացող բառամասին հաջորդում է ր. պ. փ տառերով սկսվող բաղադրիչ՝ դոնբաց, դոնփակ, ձեռքնպահ:

Փոխազդեցական (առնմանում, տարնմանում) հնչյունափոխության հետևանքով հաճախ բանավոր խոսքում առաջացած բաղաձայնական փոփոխություններն արտահայտվել են նաև գրավոր խոսքում, և ստացվել են գրության զույգ ձևեր: Որինակ՝ և տառին նախորդող դիրքում ր. գ. դ. ձ. ջ տառերին դուգահեռ հանդիպում են պ. կ. տ. ծ. ց տառերը՝ րմպել—րմբել, ցանկ—ցանգ, ընկոյզ—ընկոյզ, բանտ—բանդ, անդի—անտի, գունտ—գունդ, ինձ—ինծ, գծուծ—դձուծ, գէջ—գէճ, կինջ—կինճ և այլն: Ա. շ տառերին նախորդող դիրքում փ. թ. ֆ տառերին դուգահեռ հանդիպում են պ. տ. կ տառերը՝ Դիմաքսյան—Դիմակսյան, Ֆելիքս—Ֆելիկս, Ալեք սանդր—Ալեկսանդր, վաթսուն—վատսուն, կաթսա—կատսա, նան՝ ապշիմ—ափշիմ, ափսէ—ապսէ և այլն:

Ձայնեղներից առաջ երբեմն գ-ի փոխարեն հանդիպում է ս տառը՝ սգեստ, սբոմնել, սգալ (զգալ), սկիսք, սկսբնական և այլն: Սա կարող է երկու պատճառի հետևանք լինել, նախ որ ձայնեղին նախորդելիս գ հնչյույթը խլանում է, գ-ն ս է հնչում և ապա՝ գրողը կարող էր առաջնորդվել բառի կազմության (սկսել > սկիսք): Նույն դիրքում ժ տառի փոխարեն հանդիպում է շ տառը՝ նժղեհ—նշտեհ, աժխոյժ—աշխոյժ, Աժդահակ—Աշտահակ, նան՝ դշխոյ—դժխոյ: Հանդիպում են նաև՝ սղալ, վաղճան, բաղդ, ամբիծ, գրությունները իբրև զուգահեռներ ճիշտ ձևերին:

ԺԲ—ԺԷ դարերում, իբրև կանոն, մեծատառով սկսվում էին վերնագրերը, վերջակետից հետո, բանաստեղծությունների յուրաքանչյուր նոր տողը: Ուշ միջնադարում արդեն հատուկ ու հասարակ անունների գաղափարը կար, բայց դրանք գեղարվեստական տարբերակում, նույնիսկ տերմինական անունները, որ սովորաբար մեծատառով էին գրվում (Աստուած, Քրիստոս, Յիսուս), պատահում են նաև փոքրատառով: Մեծատառի գործածության այս սովորույթը շարունակվում է նաև ԺԸ դարում: Մխ. Սևրաստացին բառարանի գլխաբառերը, քերականության դրքում օրինակների առաջին բառերը, տերմինները մեծատառով է գրում, պահանջում է մեծատառով սկսել նոր տողը, վերնագրերը, բանաստեղծական տողերը, «յսկզբունս անուանց Ածայնոց»: Իր գրաբարի քերականության մեջ բառացանկերում և օրինակներում առաջին բառը գլխաբառ համարելով՝ մեծատառով է գրում, երկրորդը՝ փոքրատառով: Որինակ՝ Չոգա—չոքա, Քարաէգ—քարաէս, Բողոզկէ—բողոքել, Օդ—օթ և այլն: «Դուռն քերականութեան» մեջ մեծատառով է գրում քերականական տերմինները՝ Խօսք, Դերանուն, Հոլով, Մակբայ, Բայ, Ապառնի: Հոլովման աղյուսակում գոյականի ուղիղ ձևը (առաջինը) մեծատառով է գրում, թեք ձևերը՝ փոքրատառով՝ Հաց—հացի, հացին, հացը, հացէն, հացով և այլն: Բայց հատուկ անունները երբեմն փոքրատառով է գրում՝ ասիա, հայաստան: «Դուռն քերականութեան» առաջաբանում գրում է. «Բնականաւք են ի փոքրն ասիա»: «Ի փոքրն հայաստան»: Գրաբարի քերականության 4-րդ էջում նկարի տակ փոքրատառով գրված է՝ զմովսէս, զղաւթ, զմամբէ, զեղիշէ, զղաղար, զեզնիկ, զասողիկն:

«Յոգնադիմի աստուածաբանական» (1701 թ.), «Բանաբանութիւն իմաստասիրական» (1702 թ.) գրքերում նույնպես քերականական կարգերի, գիտությունների, հասկացությունների անվանումները մեծատառով են գրված: Օրինակ՝ Սահմանք Առաքինութեանց՝ Խոհեմութիւն, Հեղութիւն, Արիութիւն, Մեծահոգութիւն, Սահմանք Չարութեանց՝ Անգգայութիւն, Բարկացութիւն» (Յոգ, 47—48): Լոջիկանն, Ֆիզիկայն, Տրամաբանականն, Գոյացութիւն, Քանակութիւն, Որակութիւն, Սեռ, Տեսակ, Յատուկ, Տարր, Հոգ, Զուր, Օդ, Հուր, Սպիտակ, Դեղին (Բան, 10): Այս գրքում մեծատառով են գրված նաև տեղանուններն ու անձնանունները (Կասպից ծով, Պարսկական ծոց, Ահարոն, Պետեղա): Բայց այս երկու գրքի հեղինակներն էլ հետևողական չեն և գրում են՝ սալամօն, աղաթօն, դիկեուս

և այլն: Շրջողերի «Գանձ»-ում (1711) մեծատառով են գրված նաև ազգությունների անվանումները (Հայ, Քաղղեացուց, Յոյն), գրքերի վերնագրերը: Մեծատառով հեղինակն արտահայտում է իր վերաբերմունքը առանձին հասկացությունների նկատմամբ, ուստի մեծատառով է գրում՝ Հնոց, Նախնեաց, Հսկաքիցն, զՆոր Կտակս:

«Իսկոյն ի Թարգմանութիւն ձեռնարկել խորհրդաբար սկսեալ յԱռական, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զՆոր Կտակս՝ հեղուլ ի Հայ Բան» (59): Մեծատառով է գրում աշխարհագրական անուններն ու անձնանունները: «ԶԱրմենակ ի Բաբելոնի գնաց յերկիրն Արարատայ» (12): «Յայտնեցար ի Թաբոր լեռինն» (294): «Շինէ՛ գեւղ մի և անուանէ իւր անուն՝ Հայկաշէն»: «Հրէաստան փութայր» (34): Այդպես էլ՝ Իսրայէլ, Հեղինէ, Հոփսիմէ, Կատարինէ, Գայեանէ, Նունէ և այլն: Բայց երբեմն գրում է նաև փոքրատառով՝ Բերօբէ:

Մեծատառի գործածությունը անձնանունների վրա չի տարածում այս դարի մի այլ քերական՝ Սիմեոն Զուղայեցին: Նրա քերականության գրքում (1725) հանդիպում են. «Աշակերտք Իսահակայ և մեսրոպա: Գնացեալ յաթէնս: Ուսեալ եղև դաւիթ ընկերօքն յաթէնս» (2—3): Վերջակետից հետո գրում է Բարսղի, իսկ նախադասության մեջ՝ «երանելի վարդապետ Բարսեղ էր» (4): «Ի քաղաքն Բաղէշ, ի վանքն զոր ամբողջ կոչեն» (4), «յառաքել պատմագիրն, պորփիրոն» (5): Վերջակետից հետո՝ Մէլիքսէթ. իսկ նախադասության մեջ՝ մէլիքսէթ: Սա էլ է քերականական հասկացությունների անվանումները մեծատառով գրում՝ Քերականութեան, Վերլուծականին, Հայցական, Պատմական, Ներգոյական և այլն: Մի տեղ գրում է՝ «Զաքարի որդի օվան, յօհաննէսի որդի Յօհանն», մի այլ տեղ՝ «յակոբի որդի Կոստանտիլ, Ֆրանկուլի որդի մուրատ, Երեմիայի որդի Մկրտիչ»: Հոր անունը փոքրատառով, որդունը՝ մեծատառով: Քերականության հիշատակարանում անունները փոքրատառով են գրված՝ պետրոս, յօհաննէս, ամասիոյ, բուզանդիոյ, յուդա, իսկ տիտղոսները՝ մեծատառով՝ Ածաբան Վարդապետի Կարապետի Սրբազան Կաթողիկոսի (296): Հունան Թոխաթեցին («Դաշտիկ ծաղկալից», 1727) նույնպես հետևողական չէ: Մեկ գրում է՝ «զոր ունի Ած, Տն մեր Յի Քի (6), մեկ էլ՝ «փառաւորի ողորմածութիւնն ած: Այնքան հաճի ած» (7): «Ի դառնալն Երուսաղեմայ, մտեալ ի հալեպ» (184). մի քաղաքի անունը մեծատառով է, մյուսինը՝ փոքրատառով:

Խալդարյանը մեծատառով է գրում իր բառարանի զխաբառերը (Ամբիծ, Փառագիծ, Օրհնօղ և այլն):

Բաղդասար Դպիրը իր քերականության մեջ (1760 թ.) տարբերակում է հատուկ և հասարակ անունները, իհարկե ոչ այսօրվա հասկացողությամբ: «Պետրոս անունը,—գրում է նա,—մեկ մարդու անուն է, ամէն (փոխ. ամեն) մարդոյն Պետրոս չըսվիր, իշտէ պետրոս անունը յատուկ անուն է, որ ամէնուն պետրոս չըսվիր: Այսպես են պօղոս, մինաս, յակոբ: Գիրն հասարակ է, այբն հատուկ, օրն հասարակ է, կիրակին հատուկ, ամիսը հասարակ է, յունվարն յատուկ» (18): Ինչպես երևում է, քերականը հասարակ ու հատուկ հասկացությունների տակ նկատի ունի ընդհանուրն ու մասնակին, զիւր-ը ընդհանուրն է, իսկ այբ-ը նրա մասնակի արտահայտությունը, մարդ-ը ընդհանուրն է, Պետրոսը՝ նրա մասնակի արտահայտությունը: Եվ Պետրոս ու այբ-ը դիտելով ընդհանուրի մասնակի արտահայտություն՝ փոքրատառով է գրում: Բայց նա մեծատառով է գրում բայական կարգերի անվանումները՝ Սահմանական, Հրամայական, Աներևոյթ, Ստորադասական և այլն: Պետրոս անունը վերջակետից հետո մեծատառով է գրում, մյուս դեպքերում՝ փոքրատառով: Օրինակ՝ «Պետրոս գծին վազեցոյց», բայց՝ «Զծին վազեցոյց պետրոս: Որպէս մովսէս էհար զվեմն: Վեմն հարաւ ի մովսիսէ» (էջ 156—157): Վերջակետին հաջորդող ուն, վն մեծատառ են, իսկ Մովսէս անվան մն՝ փոքրատառ: Բաղդասար Դպիրը մեծատառով է սկսում իր բանաստեղծությունների յուրաքանչյուր տողը:

Աթանաս Կոստանդնուպոլսեցու «Համառօտ քերականութիւն» (1774) գրքի շապիկի վրա գրված է՝ «Ի յաթանասայ վարդապետէ կոստանդնուպոլսեցու», իսկ այդ էջի վերջում՝ «Աթանաս Մերասեան»: Հոռմ-ը գրված է մեծատառով, իսկ մյուս քաղաքների անունները՝ փոքրատառով՝ «Ի վարէզ, ի վիեննա»: Պետրոս Թիֆլիսեցին գրում է՝ «Թոմաս աթուինացի», անունը մեծատառով, իսկ ազգանունը՝ փոքրատառով: Պետրոս Մեծին Իսրայել Օրու, կաթողիկոս Եսայու, Ղարաբաղի մելիքների նամակներում ու խնդրագրերում, գրված 18-րդ դարի առաջին քսանամյակում, անձնանուններն ու աշխարհագրական անունները հավասարապես գրված են թե՛ մեծատառով, թե՛ փոքրատառով (պաքուա, ապրահամ, յօհան, իվան, ապով, զանջա, սիսիան, դարապաղ, դափան և՛ Իսրայէլ, Օրի, Մօսկով, էջմիածին, Մինաս և այլն): Մեծատառով են գրված տիտղոսները՝ Արքա, Աթոռակալ, Վարդապետ և այլն¹⁷:

Այսպիսով, դեռ Ժէ դարից սահմանված մեծատառի կիրառու-

Քյունը ժԸ դարում ավերի որոշակի է դառնում: Այս դարում առկա են մեծատառի կիրառության բոլոր դեպքերը, բացառությամբ աշխարհագրական անունների և անձնանունների: Սրանց մեծատառով կիրառությունը դեռ կանոնական չի դարձել, հեղինակներն այս հարցում հետևողական չեն, այդ թվում և քերականները: Սրանց մեջ ամենահետևողականը Շրյոդերն է, որ նույնպես տեղ-տեղ փոքրատառով է գրում անձնանունը:

ՏՈՂԱԿԱՐՁ

Թեև դեռ ժԳ դարում Գևորգ Սկեռացին սահմանել էր տողագարծի կանոնները, բայց դրանք միջնադարում չէին պահպանվում: Միայն ժԷ դարից սկսած՝ նկատվում է դրանց հետևողական կիրառում: ԺԸ դարում Սիմեոն Զուլայեցին, Մխ. Սեբաստացին քերականության իրենց գրքերում նորից են շարադրում այդ կանոնները, որոնք գրեթե չեն տարբերվում Սկեռացու կանոններից և, հիմնված լինելով վանկատման վրա, գործում են առայսօր, չնչին տարբերությունով: Ըստ այդ կանոնների՝ միշտ բաղաձայնը պիտի տանել հաջորդ տող, մեկից ավելի բաղաձայնների դեպքում վերջին բաղաձայնն է դնում հաջորդ տող, գաղտնավանկի ր-ն սողադարձի ժամանակ գրվում է: Ո, ա տառերին հաջորդող յ տառը և ա, ե տառերին հաջորդող լ տառը նախորդող ձայնավորներից չպետք է բաժանել (հրամայ-ել, խոյ-ակ, եւ-ետել, տեւ-ել), չետաղայում այս կանոնը փոխվեց, այժմ յ-ն ու լ-ն (վ) անցնում են հաջորդ տող: Ե-ին հաջորդող ա—օ տառերը նույնպես չեն տրոհվում ե-ից (իւրեանց, եօ—թան), խորհուրդ է տրվում բաղադրյալ բառերի բաղադրիչները լրիվ պահել, չտրոհել (ան—ահ, ոչ՝ ա—նահ), թավացյալ ու-ն հաջորդ տող տանել (ան—ուան):

Հեղինակները շարունակում են որոշ բառեր միմյանց միացած գրել, մի բան, որ գալիս է, ինչպես տեսանք, ուշ միջնադարից: Ռիվոլյալի նման (1633 թ.) Շրյոդերը նույնպես որոշ բառեր միմյանց միացած է գրում՝ ելնելով լատիներենի թրությունից: Օրինակ՝ բազումանգամ < multoties, քանիանգամ < quoties, միսնեգամ < semel, ոչերեք < nonquam, ոչուրեք < nullibi, ոչընաւերեք < nullatenus, մերթընդմերթ < saepe, ապաուրեմըս < ergo, ապաթէ, ապահթէ < sivero, եթէ ոչ, թէ ոչ < nisi, երանիթէ < utinam, ոչթէ < bidui, գրուռնարկանել < aggredi, բայցսական < verantamen, իսկարդ < sed jam, եթէ < etsi, միայնթէ < dummodo. արդուրեմն < quapropter և այլն: Գրում է մինչ դեռ, որովհետև լատիներեն համապատասխանը գրվում է առանձին՝ dum adhuc, բայց՝ չորսանգամ, նմանեցնելով quater ձևին:

Հայ քերականության մի շարք գրքերում օժանդակ բայը դեր-բային միացած է գրված: Օրինակ, Զուղայեցու քերականության մեջ հանդիպում են՝ լծեալիցեմ, լծեալեմ, լծեալէի, լծեցեալեմ, անկեալեմ, անկեալեմք և այսպես ամբողջ հարացույցը: Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան» մեջ՝ եղերեմ, եղերես, եղերէ (ըստ երևույթին նմանեցնելով թուրքերենին (օլմուշըմ), եղերենք, եղերէք, եղերէն (թուրք. օլմուշըղ), եղերէի, եղերէիր, եղերէր (թուրք. օլմուշիտիմ), այդպես էլ՝ վառերեմ, վառերեմ, վառերես, վառվե-րեն և այլն: Այսպես է գրված նաև նրա գրաբարի քերականության մեջ՝ եղեալեմ, եղեալես, եղեալէ, եղեալիցեմ, եղեալիցես, տեսեալեմ, տեսեալեմք, տեսեալէի, տեսեալէաք և այլն:

Այս երևույթը նկատվում է նաև այլ բնույթի գրքերում: Օրինակ՝ Թոխաթեցու «Դաշտիկ»-ում՝ «որքան քաղցրէ» (102), խոստացեալի (104), «անկեալիցէ ներ պատերազմին» (107), «զի Լսեմ» (405), «պարաւելիր խնդալ» (407), «թողլոցեն անկատար» (407), «որքան փարթամէր նա բարեօք, այնքան լի էր մոլութեամբ և մեղօք» (415): Պետրոս Թիֆլիսեցին («Գիրք մտածողական») (1701 թ.) գրում է՝ «մեծամեծքեն գերազանցութիւնք» (9), կարող է հաւատամբընէ (9—10): Յորում ոչ գործեալիցեմ»: «Պարտէր հատուցանել»: «Պարտէ ասել լաւէ» (13—14) և այլն: «Ազգարարի» 1795 թ. նիդհան ամսի համարում գրված է, օրինակ՝ «Որէ վատ-սընկերորդ թուոյ ասորաց» (53): «Խորհէալէին սպանանել զթա-գաւորն Բրիթանիոս»: «Թագաւորն զնալոցէր» (95):

Հասուկ անուններից հունական օմեգային (ω) փոխարինող ո-ն դուրս են գցում, նրա տեղ օգտագործում են օ-ն, Յովհաննէսը՝ Յօհաննէս են գրում, Յովսէփ-ը՝ Յօսեփ, Յակովբ-ը՝ Յակօբ, Մեսրոպ-ը՝ Մեսրօպ, Թովմաս-ը՝ Թօմաս, Թովմա-ն՝ Թօմա: Օտարա-մոլները մտցնում են ապաթարցի անսովոր, հայերենին խորթ կի-րառություն («Զի թէպէտ՝ըն վեցերորդում պատուիրանին»: «Առա-ւել գովելի՝ըն կնոջ»):

Ընդարձակվում են համառոտագրության շրջանակները: Միջին դարերում ծավալված համառոտագրությունը ԺԸ դարում շարունա-կում է գործածվել նույնպիսի ծավալով: Դա այնքան բազմազան ու անհատական ձևեր է բնորոշում, որ քերականներն ստիպված են լինում զգուշացնելու, որ բառի ամեն մի պատահական դիրքում համառոտագրության շղիմեն, որպեսզի բառը անհասկանալի չդառ-նա, ըմբռնվի ընթերցողի կողմից: Մխիթար Սեբաստացին զգուշաց-նում է, որ եթէ, օրինակ, կեք բառը պատվագրենք կր, կկարդացվի թե՛ կար, թե՛ կեք և թե՛ կոք, պէ՛ն կկարդացվի թե՛ պառն և թե՛

պարան. չպիտի վայելուչ-ի փոխարեն գրել վ՛շ, որովհետև դա կը-
կարդացվի նաև վարիչ: Ապա տալիս է տարածված համառոտա-
գրության ընդարձակ ցանկը, որ նախորդ գլխում մեր նշած ձևերի
կողքին ավելացել են նաև՝ ա՛մ (ամենայն), բո՛ւմ (բազում), գո՛ծ
(գործք), եպս (եպիսկոպոս), եկե՛ղ (երկրորդ), թըր (թագաւոր), քհն՝
(քահանայ), սպտկ (սպիտակ), աս (այսպէս), աղ (աղօթք), դսլ
(դպիր), ժկ (ժամանակ), կիր (կիրակի), կ (կամ), հ (հարց), ճհ
(ճանապարհ), մկ (մանկունք), մղք (մաղթանք), յր (յարութիւն),
շբ (շաբաթ), շրկ (շարական), ո (ողորմեա), ք (քան), քրզ (քա-
րոզ), նր (նորա), նք (նոքա), նմ (նմա), նց (նոցա), վսկ (վասն
այսորիկ), ժղվրդ (ժողովուրդ), ծոյ (ծառայ), սրկ (սարկաւազ),
հշտկ (հրեշտակ), յշ (յիշատակ), սղ (սաղմոս) և այլն:

Այս ձևերը, սեւկայն, գործածվում են կրոնական գրականու-
թյան մեջ, մի բան, որ երևում է բառերի բնույթից էլ, երբեմն էլ
պատմագրության մեջ: Մնացած դեպքերում հազվադեպ են կի-
րառվում, մանավանդ գեղարվեստական գրականության մեջ:

ՏԱՍՆԻՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԵՃԵՐԸ

(Հյունագրութուն, վեպագրութուն)

Այս դարում հայերենը նախորդ դարից ժառանգեց ո, օ, ե, է, յ, մասամբ էլ ը տառերի կայուն ուղղագրութուն, որ մենք շարա-
դրել ենք նախորդ գլուխներում: Դարասկզբի գրականության մեջ¹⁸
արդեն ո—օ, ե—է, յ տառերն ունեն իրենց գրության ընդհանուր
կանոնները: Իհարկե, պատահում է նաև օ հնչող աւ տառակապակ-
ցութուն, բայց այնքան հազվադեպ, և այն էլ միայն կրոնական
գրականության մեջ, որ որակ չի կազմում, թեև Ա. Բագրատունին,
գրում է, որ փափագելի է աւ գրութունը վերստին յուրացնել, փո-
խանակ «եկամուտ» այլազգի օ-ն: Կարծես սրան պատասխանելու
համար է Այվազովսկին գրում, որ այժմ օ-ն դուրս գցելու կարիք
չկա, լավ չեն անում մի քանիսը, որ գրում են կարաւո, աւ-
րիորդ, աւծ, աւրհնել, աւր, բերաճաւ, աւրաւոց, քաւթաւիել,
շաւշաւիել, խաւական, հաւր, մաւր, եղրաւր և այլն:

Որոշ չափով փոխվում է ենթակայական դերբայի գրութունը:
Եթե նախորդ դարում այս դերբայն բւղիղ ձևում վերջանում էր օղ

տառակապակցությամբ, իսկ թեք ձևերում՝ ող (կամեցող—կամեցողաց, քերթօղ—քերթողի, սիրօղ—սիրողաբար), ապա այժմ վերացել է այդ տարբերությունը, ենթակայական շերբայր հավասարապես գրում են թե՛ օղ, թե՛ ող տառակապակցությամբ: Գաբրիել Ավետիքյանը իր հիշյալ քերականության մեջ գրում է. «Ընդունելություն, որ շորրորդ մասն բանի կրսվի, բայէն կրշինվի, կպցնելով ծայրը ող կամ օղ, եալ, լոց, լի մասնիկը» (անդ, 57): Ինքն էլ գրում է՝ քերթօղք և քերթողական, սիրողաբար, ընծայողիս, ընտրողական, բայց ունի նաև՝ քերթօղաց, ևկօղին, ևկօղներուն, սկսողաց, քերթօղք, ընթերցողս, ուսանողին, սիրողաբար, գրողներուն, սորվողին, արցնողը և այլն: «Աստվածաշունչը» (1805) հետևում է ավանդական կանոնին, գրում է՝ սպանօղն, բայց՝ սպանօղէն, սպանօղի, իսկ Հայկապյան բառարանը՝ ևրկասիրողաց, ներողամիտ, վերծանողն, բայց՝ յաղթօղն: Բառարանում գրված է՝ սիրօղ, սիրօղք, որ է սիրաղ, սիրաղք կամ սիրող, սիրաղք: Հեղինակներ կան, որ գրում են միայն օղ տառակապակցությամբ, ուրիշները՝ միայն ող: Այդպես էլ պարբերականները: Օրինակ՝ «Եղանակ բիւզանդեան»-ը (1813), «Դիտակ բիւզանդեան»-ը (1815) օգտագործում են օղ տառակապակցությունը՝ վերծանօղս, քալօղ, լացօղները, տիրօղը, զրպարտօղը, ապրօղները, կոռօղներուն, վախցօղէն, լրտեսօղ, հրամայօղական, լրտեսօղաց, հրամայօղին, ունեցօղներէն և այլն: «Բազմավէպի» 1843 թ., «Արարատի» 1850 թ. համարներում հանդիպում ենք ող տառակապակցությանը՝ ձեռք վարնողը, յաղթող, հասկըցող, հասկըցողները, պայծառացնող, սրբագրող, տուող, գիր գիտեցողը, գրողից, հրամայողաբար և այլն: Չամչյանը դրում է ող-ով՝ քերթողահայր, տեսանող, տեսանողագուշակ, ներողամիտ, գրող և այլն: «Մեղու Հայաստանին» 1860 թ., «Գարուն» ամսագիրը (1866 թ.) գրում են թե՛ օղ, թե՛ ող (ստացող, չկարողացան, չյաջողեց, շարադրողը, սիրողների, գցողներ, սպանող, ներողություն, ծնողներ, սպանողին, ներողութեան, ծնողն և այլն): «Մեղու Հայաստանի» 1859 թ. համարներում՝ ևկող գնացող, իշխանութիւն անօղ (էջ 35), նույն համարում՝ «ևկօղ գնացող նաւերից» (էջ 34), ցանկացողս: 1858 թ. հունվարի համարում՝ փորագրողի, կարողանան, տիրապետող, տիրօղ, գնացող և այլն: Ուրեմն ենթակայական դերբայի վերջավորությունը արտահայտում էին ո՛ղ, ո՛ղ տառակապակցություններով՝ անկախ նրանից, թե բառի ուղիղ ձևն է, թե՛ թեք, ինչպես սահմանում է դարասկզբին Գ. Ավետիքյանը:

Միանգամայն այլ է V հնչույթի գրավոր արտահայտության

վիճակը: Գրաբար գրականության մեջ (Աստվածաշունչ, կրոնական-ազնվասիրական այլ գրականություն, պատմադրություն) պահպանվում է դասական ուղղագրությունը. Վնչույթի 1. վ տառով է արտահայտվում բառակազմում, բառամիջում և բառավերջում ո տառից հետո, ինչպես և բաղադրյալ ձևերում, եթե բաղադրիչը վ-ով է սկսվում (հոգեվիճակ, նաւավար, սովոր, գետով),

2. բաղաձայնին հաջորդող և ձայնավորին նախորդող դիրքում՝ ու տառով (աստուած),

3. իսկ ձայնավորին հաջորդող դիրքում՝ ա տառով (աւագ, անիւ, ձեւ): Աշխարհաբար գրականության մեջ վերջին երկու արտահայտության (ու-ի, ի-ի գրություն) հարցում երկու կարծիք է տիրում: Մի մասը բաղաձայնական ու-ի փոխարեն գրում է նաև վ տառը՝ ելնելով ուղղագրության հնչյունային սկզբունքից, մյուս մասը պահպանում է դասական գրությունը՝ ելնելով ուղղագրության ավանդական սկզբունքից: Ասենք նաև, որ վահնչյուն ու տառը գրաբար գրականության մեջ ևս իր տեղը զիջում էր ա տառին: Գրուած, նուէր ձևերի կողքին կային նաև գրած, նրէր կամ նէր ձևերը:

Գրաբարը վերականգնելու, ժողովրդական, խոսակցական կամ ծայրահեղ դեպքում գրականության լեզու դարձնելու տրամադրությունները, որ սկսվել էին ԺԸ դարում, շարունակվում են և այժմ, 19-րդ դարի 50—60-ական թվականներին: Գ. Ս. Օտյանը իր «Առաջարկութիւն աշխարհաբար լեզուի վրա» (1851) գրքում գրում է, թե «քիչ-քիչ գրաբար լեզուին ոճերը մտցնելով աշխարհաբարին մէջ և բառերն ալ իրենց աղաւաղ կերպարանքով մերկացնելով և հին ձևերն և ոյժերն տալով, կրնանք օր մը անզգայաբար հասնիլ գրաբարը հասարակաց լեզու ընելու: Աշխարհաբարը, որ գրաբարին այլանդակ վիժածն է, մեր առաջարկածին պէս կոչւած է հանունաւորված միջնորդ մը ըլլալ գրաբարին ու ռամկօրէնին մէջ, երթալով իր բնիկ ձևն առնու, այսինքն լեզուի կարգ մտնէ, իր ծնողին կատարելութիւնները ստանալով» (էջ 11): Այս տրամադրությունների հետևանք էր գրաբարի ուղղագրության անաղարտ պահպանումը: Գ. Այվազովսկին իր «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» (1869 թ.) գրքի հենց սկզբում ուղղագրությունը համարելով քերականության մի մասը, ուղիղ գրելու արվեստ, գրում է, թե ով ընդունում է, որ աշխարհաբարը պետք է միշտ մաքրել, ազնվացնել ու հետզհետե գրաբարին մոտեցնել, անտարակույս հեռու պիտի մնա «ուղղագրական վնասակար նորաձևութիւններէ»: Ուղղագրության գլխավոր նպատակը մեր գրոց լեզվի ուղիղ գրությունն ու արտասանությունն է (անդ, 8): Բազդատունին, ինչպես ասացինք.

նույնիսկ դեմ է օ տառի գործածութեանը, իբրև օտարամուտ տառի, և ուզում է վերականգնել արդեն վաղուց գործածությունից դուրս բնկած օհնչյունն աւ տառակապակցութիւնը:

Գրաբարը վերականգնելու ծայրահեղ կարծիքներին «Մշակ»-ը պատասխանում է մի այլ ծայրահեղութեամբ: Նա գրում է, թե աշխարհաբարը, իբրև ինքնուրույն, անկախ լեզու, պիտի առաջնորդվի իր օրենքներով, վնասակար է գրաբարը իբրև հիմք, առաջնորդ բնգունելը, որովհետև դրանք իրար հակառակորդ են ձևերի, դարձվածների, ոճերի մեջ:

Քննադատելով այս երկու ծայրահեղ սկզբունքները՝ Ն. Ադոնցը միանգամայն առողջ դիրքերից ընդգծում է, որ աշխարհաբարը որքան գրաբարի գավակն է, այնքան էլ եղբայրն է, երկուսն էլ հայ ժողովրդի ծնունդն են: Թերամտութիւն է ուսել, թե մեռածից ոչինչ պետք չէ կենդանացնել: Հին լեզվի Բառագանձը պիտի օգտագործել նոր լեզվի շինութեան վրա, գրաբարից վերցրած բառերին պիտի աշխարհաբարի ձև տալ, որ Հուլիեն-Հալվին նոր լեզվի մեջ: Քանի տվյալ հնչյունափոխութիւնը չի հասել ավարտուն ամբողջութեան, պիտի պահել հին ուղղագրութիւնը, օրինակ, բաղաձայնների ուղղագրութիւնը: Ընդհանուր երևույթ է, որ բառավերջի յ-ն համը է, չի արտասանվում, սա ավարտուն հնչյունափոխութիւն է, ուստի պիտի այդ յ-ն գրութիւնից էլ հանել (Բանբ., 131):

Ուրեմն Վ հնչույթի գրավոր արտահայտութեան համար ստեղծվել էր երկու սկզբունք՝ ավանդական և հնչյունային: Գրաբար գրականութեան մեջ (Աստվածաշունչ) այդ հնչույթն արտահայտվում էր նախնայաց գրութեամբ՝ վ, ու, և տառերով, աշխարհաբարում շեղվել էր, բաղաձայնական ու-ն և ւ-ն երբեմն արտահայտում էին վ-ով: Նույնիսկ միեւնոյն հեղինակը գրաբար բնագրերում պահպանում էր ավանդական գրութիւնը, իսկ աշխարհաբարում՝ հրնչյունային: Գ. Ավետիքեանն իր քերականութեան գրքում Վ հնչույթն արտահայտում է վ, ու, և տառերով, Մասինքն պահպանում է ավանդական գրութիւնը. գրում է՝ լեզուին, դժուարանամ, նուազ, յաւելուածով, թուով: Ավետիքեանի կարծիքով՝ ւ-ի և վ-ի շփոթման պատճառն այդ երկու հնչույթների արտաբերման նմանութիւնն է, ւ-ի արտաբերման ժամանակ վերևի ատամնաշարքը ներքևի շրթունքին է կպչում, դրանով նմանվում է վ-ին, եթե շրթունքներն իրար չեն միանում, նույնանում է ու-ին: Դրա համար էլ ձայնավորին

նախորդող ու-ի վրա գրիչները սուղի նշան են դրել (աստուած, ար-
ծուի): Արտասանության այս անորոշությունից ու շփոթից է, որ եր-
բեմն ու կամ լ տառերի փոխարեն գրում են վ, օրինակ՝ տուաք,
տաք, տվաք, նուադ—նազ, թուական—թվական և այլն: Սակայն
այս բոլորը Ավետիքյանը վերագրում է դրաբարին, աշխարհաբարի
մասին նա այլ կարծիքի է: «Աշխարհաբար վե՛վ կսենք նէ,—գրում
է նա,—վե՛վ ալ գրելու է և ոչ ու կամ լ» (անդ, 179): Եվ նրա գրու-
թում հաճախ ենք հանդիպում՝ ինչվան, կրփոխվի, կը շինվին, կրնայ
մտածվիր, դժվարին, կերևվնան, աչքը կը բացվի, կըսվի, տարած-
ված էին, անվանի, գրվածքը, կիմացվի, կրխառնըվի, տասվիրեք
և նման այլ գրությունների, որոնք բուն ժողովրդական, աշխարհա-
բար ձևեր են:

«Աստվածաշնչի» 1805 թ. հրատարակության մեջ, Նոր Հայ-
կադյան բառարանում պահպանված է վահնչյուն ու-ն (լուարութ,
երդուեալ, անուանեալ, լեզուի, պատուեսցի): Ազաթանգեղոսի
պատմության 1809 թ. հրատարակությունում երբեմն վահնչյուն
ու-ն է պահպանվում, երբեմն էլ փոխարինվում է լ—ով, բայց ոչ
վ-ով՝ աղուանից, պատել, հատուածք, ի հարուածս (նաև՝ հար-
ւածս), թուեմ, լեզւացն (նաև՝ լեզուացն), շինուած, պատուական
և այլն:

«Բազմավէպի» խմբագրության սկզբունքն է. «Որչափ որ կա-
րելի է՝ աշխարհաբառին ընդհանուր ոճը և բառերուն ուղղագրու-
թյունը գրաբառին նմանցուի, բայց մեծ զգուշութեամբ, որ ոչ
խրթնութիւն մտնէ մէջը և ոչ իմաստակութիւն» (1843 թ., էջ 80):
Նա սկզբունքորեն պահպանում է բաղաձայնական ու-ի գրու-
թյունը: Օրինակ՝ շսեպոյին, ինչուան, տարուան, կըհնարուին, գրու-
ածներուն, զուարճանալով, խառնուի, յունուարի կը մոռացուի, կը
փոխուի, անուանց, կը տպուի, դրուած, մաքրուեր է և այլն: Տեղ-
տեղ էլ այս ու-ի փոխարեն հանդիպում ենք լ (տրւած):

Ավանդական ուղղագրությանն են հետևում 1855 թվականի
«Մասեաց աղանիւն», օրինակ՝ կը համարուի (3), պատուական,
քաշելէն ետքը պիտի վառուին (4), տասուերկու տարի առաջ (50)
համոզուած էինք (51), հիմակուրնէ, գալ տարւոյն, առաջարկուած
(119): Այսպես էլ՝ թշուառացած, ցրուած, կը հասկցուի, ըսուած,
նախջուանայ, չը տրուէր, կը կառավարուի, կը կորսուի և այլն:
Մսերյանի «Ճոռաքաղը» (1858), որն իր գրաբարյան և աշխարհա-
բարյան բաժիններում հավասարապես օգտագործում է բաղաձայ-
նական ու-ն կամ նրա փոխարեն լ-ն, բայց ոչ երբեք վ-ն: Օրինակ-

ներ Ն 1-ից՝ հիստուածոյ բանից, լեզուաւ, գուարթածաղիկ, նուագարանօք, անուանակոչութեամբ, շոգեզուարճ, դձայն լուեալ (1-ին բաժնից), անուանեալ, նինուէի (17), նորանուաճ (18, 2-րդ բաժնից): Վախճանուէր է և թաղութեր, կոչում է Մոգս, ի 42 թուականին, բերել տուաւ, շինել տուաւ (30), չէր քանդուած, շինուած մարմարեայ քարերով: Դուռն բացում է և փակում ինքնին (30): 1058 թուին կարմիր ձիւն է եկած: 1111 թվականին կարմիր ձիւն եկաւ: Գտանում են (32): Պատմում է, կալուածք Մոսքուայի մէջ: Կոչում էր գեղեցիկ: Տուաւ, հետուէն, սպանուած, տարւում է, տպւում են, տպուած (30) և այլն:

Միքայել Չամչյանը գրում է՝ լեզուին, դժուարինս, արուեստին, պատուական, անուանց, կրօնի, տուին, մշտանուէր, լցում, վնասուեցայ և այլն: Նա ոչ մի բառում վահնչյուն ու-ի կամ ա-ի փոխարեն վ տառը չի օգտագործում: Անվանդական ուղղագրութեանն է հետևում Արսեն Բագրատունին (նուէր, անուանել, լուանող, առնուին, անսուաղ, նաև՝ նրւէր, անսրաղ և այլն): Իր քերականութեան մէջ նա դիտողութեանն է անում, որ երբեմն փոխանակ ա-ի և ու-ի, դրում են վ. օրինակ, գրում են նվագ, ահալասիկ, փոխանակ՝ նուագ, ահաասիկ: Ինչպես և փոխանակ վ-ի, ա-նն գրում, օրինակ, գրում են՝ իջեան, դօրալիգ, օթեան, երիար, վարսաւիրայ, դօրաաւ, կարեւէր և այլն: Բագրատունին տարբերակում է բաղաձայնական ա-ն վ-ից: Ուղիղ իմաստասիրելով, ասում է նա, պիտի ասել, որ ա տառը ձայնավոր է և մոտիկ իւ, ու ձայներին, որը ժամանակի ընթացքում շրթունքների դիրքի պատճառով ձայնավորից առաջ փոխվել է վ-ի և այժմ էլ այդպես է տարբերակվում, մանավանդ ուսման բերանում: Բայց պիտի զգուշանալ և բոլորովին չռամկացնել: Հիմա էլ ա-ն տեղ կա ձայնավոր է, տեղ կա՝ բաղաձայն:

Աւ-ն հնչում է վ-ին մօտ, բայց ոչ վ: Աւանդ, աւեր, ապաւեն, լաւի, ցաւոց, հաւու, բաւ, բաւ բառերը վ-ով չպիտի կարգաւ, այլ՝ աւու և վ հնչյունների միջև ընկած մի միջակա հնչումով: Բագրատունին ձգտում էր տեսականորեն հիմնավորել բաղաձայնական ու-ի, ա-ի և վ-ի տարբերութեանը (մի բան, որ դարիս երկրորդ կեսին արդեն դժվար էր) և մերժում է բաղաձայնական ու-ի կամ ա-ի փոխարեն վ տառի կիրառութեանը:

Այս սկզբունքին են հետևում՝ Սալաթյանցն իր «Համառօտագրութիւն փոքր քերականութեան գրաբար լեզուի հայոց» դրքում (1839), ուր ամենուրեք պահպանված է բաղաձայնական ու-ն՝ թուական, նուագ, պատուիրեաց և այլն, Մինաս Բժշկյանը իր

«Քերականութիւն ռուսերէն-հայերէն» գրքում, ուր գրում է՝ լեզուաց, քերթութուածոց, գրութուածոց, նուազ, արուեստիս և այլն, Արսեն Այտրնյանը, որի «Քննական քերականութիւն արդի հայերեն լեզուի» գրքում (1866 թ.) և այլուր պահպանւած է բաղաձայնական ու տառը (կը կազմուի, գրութածք, արուեստին, կը կոչուի, լեզուաց, չի կազմուիր) կամ փոխարինւած է և տառով (այսօրան, տարան), բայց ոչ երբէք վ տառով: Անդրադառնալով Նշույթի գրությանը՝ Այտրնյանը գրում է, թե ԺԱ դարից սկսած շատ անգամ կը գրուէր վ, փոխանակ լ-ի (իրվի, տվել, նվագ, թվել): Անցյալ դարի վերջերից բանասերներն սկսեցին դանազանութիւն հաստատել գրաբարի և աշխարհաբարի ուղղագրության մեջ: Նույն բանն ունեցավ գրության երկու ձև (վ-ով և լ-ով, է-ով և է-ով), գրաբարի ծնաւ, կախեցաւ, տուաւ, շինուած, վարձուոր, տարւոյ բառաձև վերը աշխարհաբարում դարձան՝ ծնավ, կախվեցավ, տվավ, տրված, շինված, վարձվոր, տարվան, շատվոր, տեսնվեր (տեսնվել նաև տեսնւիէր), գացէր է և այլն: Սա բայց խախտվեց, ակնեց միջին գրութիւն (դուիլ, շինւած, գտնիլ, պարգրիլ, տասսիրեք), հիմա գրվում են շինուած, շինուիլ, տեսնուիլ, տասսիրեք և այլն:

Ըստ Այտրնյանի վ տառը պիտի գրել միայն բառակազմում, իսկ բառամիջում միայն ո-ից հետո և մեկ էլ վ-ով սկսվող բառերի ածանցված կամ բարդացված ձևերում: Իբրև բացառութիւն նշում է ժողվել, խորվել, սորվիլ, քօրվել և նման այլ բառեր, որոնցում վ-ն բաղաձայնին նախորդել է հնչյունափոխության հետևանքով (ժողովել—ժողվել, թօթփել—թոթվել, սովրիլ—սորվիլ): Այտրնյանի կարծիքով ավելի լավ է հատուկ անունները գրել լ-ով, քան վ-ով՝ Մորաւիա, Մոլտաւիա և այլն¹⁹:

Տեսանք, որ Գաբրիել Այվազովսկին իր «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» գրքում վնասակար համարելով ուղղագրական նորաձևութիւնները՝ պահանջում էր անաղարտ պահել նախնայց գրութիւնը: Եթե մեկը լ-ի կամ ու-ի փոխարեն դնի վ, յ-ի տեղ հ, ո-ի տեղ օ (հավիտեան, թաքավօր, Եվրօպա և այլն), ապա մի ուրիշն էլ Բ-ի տեղ փ, Գ-ի տեղ Գ, Ծ-ի տեղ Տ, Զ-ի տեղ Զ գրելու իրավունք կունենա, որը և խառնակութիւն կստեղծի մեր գրավոր լեզվում: Այվազովսկին ընդունում է Բագրատունու կարծիքը, թե և տառով աւ երկբարբառն է կազմվում, որ հնչում է առ ձևով՝ աւաղ, ապաւէն, քաղաքաւ, եղաւ, հաւ, նաւ: Նա մեծ սխալ է համարում ավագ, ապավէն, նավ գրելը: Եթե ու-ին հաջորդում է մի այլ ձայնավոր, հնչում է ուա, ուէ, ուփ, ուո, այս դեպքում ու-ն սը-

ղալով (շփվելով) է արտասանվում, բայց առանց վ տառի ձայնը հանելու, որ շատացվի նվաստ, քվին, նվագ, պիտի գգուշանալ առնրվիլ, Մոսկվա, տեսնված ձևերով գրելուց: Եվ Այվադովսկին իր գրքերում էլ գգուշանում է՝ հետևելով ավանդական ուղղագրությանը: Իր «Մի քանի բառերի քննություն» հոդվածում (տպագրված «Մասնաց աղավնու» 1855 թ. 125—126 համարներում) նա գրում է, թե ավելի լավ է գրել անուան, անուամբ, յանուանէ, անուանք, քան՝ անունին, անունով, անունէն, անուններ: Ինքն էլ, ինչպես այս հոդվածում, այնպես էլ իր գրքերում օգտագործում է բաղաձայնական ու տառը՝ աստուած, Աստուածաշունչ, տուեալ, թուիս, լեզուիս, հատուածեալսն, Աղուանք և այլն: Իհարկե, թե՛ Բագրատունին, թե՛ Այվադովսկին այս բացատրությունները տալիս էին՝ ելնելով իրենց նպատակադրումից, որ էր՝ պահպանել գրաբարի դասական ուղղագրությունը: Նրանք գիտեին, որ բանավոր խոսքում ժողովուրդը այդ բաղաձայնական ու-ն, վ-ն և ի-ն միատեսակ է հնչում (նուէր, նուէր, նվէր հնչում է ուեօ), բայց ձգտում էին այդ հնչումը փոխել, մի բան, որ շատ դժվար էր, եթե ոչ անհնար, քանի որ հնչյունափոխությունը լեզվում կատարվում է հնչյունային օրենքներով և կողմնակի միջամտությունը գրեթե անուժ է նրա ընթացքը փոխելու: Հետևելով ավանդական գրությանը՝ շատ հեղինակներ ու խմբագրություններ, սակայն, հաճախ տուրք են տալիս արտասանությանը, և դա հատկապես ժողովրդական լեզվաձևերում: «Արշալույս Արարատյան»-ը (1850 թ.) ամենուրեք պահպանում է բաղաձայնական ու-ն (պատուաւոր, յորդորուելով, թող տուած, ստացուած), բայց գրում է նաև՝ հիմակվան, փետրվար, որ ժողովրդական արտասանությունից է: «Մեղու Հայաստանի» 1858—59 թթ. համարներում՝ պատուելի, հոգաբարձուաց, կր հրատարակուի, գրուելու, կը գրկուին, զինուորական, գտնուին, թող տուին, սպանուածները, կը սահմանուին, շուած և այլ նման գրությունների կողքին կան նաև՝ պատվելի, բնակվում, տըրվում, գտանվում, նմանվում է, արգելվում է, վիրաւորվածներն, կը վճարվի, պարտաւորվեցան, արտասվում էին, չէ իմացվում, չլեանքս ծախվում են և այլն: Նույնը նկատվում է նրա նաև 1860 թվականի համարներում, թեև ընդհանրապես այս թերթը գնալով ավանդական ուղղագրությունն է արմատավորում:

Խաչատուր քահանան իր «Համառօտ Հայկազեան քերականութիւն» (1839) գրքում պահպանում է բաղաձայնական ու-ն (լեզուիս, թուով, անուանք, հարուած), գրում է ուած վերջածանցով, բայց օտար բառերում և ժողովրդական. աշխարհաբար ձևերում

հանդիպում ենք վ տառին, այն էլ ոչ միայն բաղաձայնական ու-ի փոխարեն, այլև Վ-ի: Օրինակ՝ շավթալի, տավարի, կաշվէ, սավղի, դվթիկ, չի բացված, մորթվիլ, սպանվիլ, ծնված, իրիկվառն (էջ 11—18) և այլն:

Մինաս Բժշկյանը իր քերականության գրքում պահպանում է բաղաձայնական ու-ն, բայց «Պատմութիւն Պոնտոսի» մեջ դրա փոխարեն հաճախ հանդիպում են նաև Վ և վ տառերը: Օրինակ՝ «Պոնտոս անուանեցին Սև ծով, որ անունս Պոնտոս հելլենացոց լեզուով ծով կը նշանակէ» (1): «Կրսէ, թև Սև ծով առաջ Յաբեթի թոռանը անամբ Ասքանազ կըսվէր»: «Թոռի թէ արգոնաւորդք հեզ-նութեամբ այս անունը տվին»: «Հաւարակ անամբ Սև ծով կըսվի» (1): «Յևտոյ քաշվեցաւ նուազեցաւ», տասներկու, տարւան, քսան-ւերկու, կըծեծկըվէին, կը բաժնըվէր (15) և այլն: Դժվար չէ նկատել հեղինակի սկզբունքը՝ ու-ն թողնել գրական ձևերում (նուազ), իսկ վ-ով կամ Վ-ով փոխարինել ժողովրդական և կրավորական ձևերում (կը ծեծկըվէին, քաշվեցաւ, տասվիրեք և այլն):

Դարասկզբից աշխարհաբար գրականության մեջ ընդհանրապես նկատվում է կրավորական բալերը վ տառով արտահայտելու միտում: Այդ երևում է նաև Ղուկա, Ինճիճյանի «Դարապատում»-ում (1824 թ.), ուր հանդիպում են՝ քշվել, զրպարտըվելով, զրպարաւրվիդ, կը բացվի, վնաս տրվալ և այլն: «Մեղու Հայաստանի» 1865 թ. համարներում՝ չափվում է, յայտնվում են, չ՛զրկվիլ, շարունակվում է, շարունակվելու է, կ'հրապարակվեն (№ 2), գլորվում են, պատմվում էին, պատրաստվում էին, կարգվեցաւ, աղատվեցաւ (№ 15), համարները բաժանվում են, ստիպվել են թողնել, հրաւիրվելուց, ստացվի, փորձված է, բռնվել են, բսնտարկվել (№ 16): Այստեղ տպագրված Մ. Նալբանդյանի հոդվածում նույնպես թև՝ պահպանված է բաղաձայնական ու-ն և թե՛ այն փոխարինված է Վ կամ վ տառերով: Օրինակ՝ «1862 թուականի յունիսի 20-ից հրատարակել էի ևս մի հայտարարութիւն: Խափանվեցաւ դանազան ինձնից չրկախված պատճառներով»: Ռյսպես էլ հանդիպում են՝ տուել են, տված, տվի, փոխադրուին, և ստորագրուած, յիշուած, անուանված, տարվայ, յունվար ձևերը:

Հետաքրքիր է, որ «Դիտակ Բիւզանդեան»-ի (1815 թ.) վերնագրի տակ գրված է. «Պատմութիւն քաղաքական, պատերազմական, բանասիրական դիպուածներու, որ հիմըկվառն առենս կըլլան աշխարքիս վրա» կամ «Այս տարնգրութիւնը, որ հոս մէկ տեղ ժողովրված մէկ տարվան պատմութիւն է, ամմէն տասնըհինկ օր մէյմը ետեէ ետե կտըպվի ու ամմէն բօստայով քանի մը թերթ կը

խրկրվի Ստանափօլ»։ Բուն հոգվածներում թե՛ պահպանված է բաղա-
ձայնական ու-ն՝ վրան թավացման նշան (զինուորական, ստա-
յուած, դրուած, դիպուած, կալուածները, պատուոյ, տուէր է, աս-
տուած, նուագ, յիշուած, անուանեցան, ազնուական և այլն), թե՛
կրավորական ու ժողովրդական-խոսակցական ձևերն արտահայտ-
ված են վ տառով (չաւրովին, կրգըտվէին, հիմակվան, կր հաս-
տատովին, բարձվի, տրվեցան, կանոնաւորվին, ըսվեցաւ և այլն)։

Այս նույն սկզբունքը նկատվում է նաև «Եղանակ Բիւղանդեան»
(1813 թ.) թերթում։ Այնտեղ էլ կրավորական բայերը, ժողովրդա-
կան-խոսակցական ձևերը բաղաձայնական ու-ի փոխարեն ունեն
վ տառը։ Օրինակ՝ «20—30 տարվան չափ» (7)։ «շարված մարդ
կրլլա, ամմէնը պիտոր փոխվին» (8)։ «Հիմակվան ատենն ալ 100
տարիէն աւելի ապրողալ կրգրտնվի, տարվէ տարի» (9), «գուրցր-
վի, փառաւորվի» (11)։ «Բարեկամները կր կանչվէին» (12)։ «Կել-
լար վճիռ թաղվելուն և չի թաղւելուն վրայ, կրվճեին, որ թաղվի»
(12)։ «Զի բաժնրվիր» (13)։

«Արարատ» ամսագիրը (1850) դրում է՝ «ընթերցասիրութիւնը
օրըստօրէ տարածվում է։ Ուր միշտ դտնվել են։ Այստեղ պսակվե-
ցաւ Քաղաքը դատարկվում էր, մինչև բացվիլն։ Հրաւիրվեցաւ,
շինվեցաւ» (212)։ Ղրկվեցան, կ'գտնվին։ Նաև՝ տարուան, լեզուի,
լոյս տուող, պատուաստելով, կ'աղնուանայ, հրաման տուած է և
այլն։ Ուրեմն վ-ով գրում են կրավորական բայերը։

Գամառ Քաթիսյայի «Արծակ և չափաբերական աշխատու-
թիւններ»-ին (1856) իբրև բնաբան բերված են Կարամզինի խոս-
քերը՝ «գրէ այնպէս, ինչպէս որ խօսում են, եւ խօսէ այնպէս, ինչ-
պէս որ դրում են»։ Հետևելով այդ սկզբունքին՝ հեղինակը կրավորա-
կան բայերում բաղաձայնական ու-ի փոխարեն օդտագործում է վ
տառը՝ մնացած դեպքերում պահպանելով ու-ն։

Օրինակներ՝ «Հաւաքվում են նորա թևերու տակ», թշուառի
(233)։ «Ամեն բան փոխվում է, մոռացվում է», Աստուած։ «Դի-
պուածը բաժանում է մեզ մօրից» (4)։ «Գնացի ժամուկեստայ ճա-
նապար» (Ե-ն չի գրում), լուացվում էին, դժուարանց, մոլորվում էր
(9—10)։ Երբ երկու ու-ն իրար կողքի են ընկնում, մեկն արտա-
հայտում է վ-ով, խոսքը բաղաձայնական ու-ի մասին է։ Օրինակ՝
դրում է զուարճանում են, ցրուած են, բայց՝ համարվում (փոխ-
համարում)։ Ինչպես տեսնում ենք, բնաբանը շատ խոստումնա-
լից էր, բայց հեղինակը չի հետևում դրան, գերազանցապես գրում
է ավանդական ուղղագրությամբ։ Եթե զրեւ այնպես, ինչպես ար-

տասանում է, չէր գրի՝ թուին, դժուար: ԺԹ դարի 50-ական թվականներին արդեն դժվար թե հայն այդպես արտասանեն:

Քննվող ուղղագրության նկատմամբ իր վերաբերմունքով սրանցից չի տարբերվում «Հյուսիսսփայլ»-ը (1958 թ.), ասել է թե Սո. Նաղարյանը, Մ. Նալբանդյանը 1958 թ. հունվարի համարում տպագրված Նաղարյանի հոդվածում կարդում ենք, օրինակ՝ «բնտանեբար հաւարվիլ» (1): «Պատուելի եղբարք մի քանի բոպէ նուիրենք»: «Պիտոյէ թափվէին»: «Հայոց ազգի տունը պիտոյ է և կարող է միայն շինվիլ նորա լեզուի շինութեամբ»: «Առանց լեզուի չէին կարող հաստատուիլ» (5), «Հայերէնում երկու ձայնաւոր իրար չեն կարող հաջորդել, ուստի գրվում է Աբրահամ (ոչ Աբրամ), Իսրայէլ (ոչ Իսրաէլ)» (էջ 10): «Ոչ մի հայկական բառ չի սկսվում Ե-ով: Քիչ բառեր են ձայնաւորներով սկսվում: Յոդնակի՝ կազմվում է եզականից» (11): Խօսվում էր, չէ գտնված: Սրանց կողքին կան նաև՝ գրուածք, պատուականութեան, կը պատուենք: Նուազական (33—34), յօդուածներ, հատուածներ, ազնուամիս, (36) և այլն:

Մ. Նալբանդյանի հոդվածից. «Ամփոփվում են վաստակքը». «Համարձակվի մուծել»: «Մեր սիրտը արինով է լցվում», հասկացվում է (75), մխիթարվիլ, «գրված է այդ գիրքը»: «Բացատրվին լեզուի ձևերովը» (79): «Լայն վերարկուով փաթաթված գնում էր» (81): «Մերժված սիրու ատելութիւն» (85): Նաև՝ բղխուածքը (75) պատուական գիրք, զուարճանալ (78), նշանակված, ստորագրվից ցանկացող, հրատարակվում է, պիտի կրկնվին, կակուղ վարվեցաւ (353—354): Անուանվումէ, ցնցվեցաւ, բաժանվումեմ, բնակվելու (339—340): Նաև՝ նուիրելով, կազմուածք, տարածուած չէ, թուական, նուիրված և այլն:

Կրավորական բայերում ու բարբառային ձևերում բաղաձայնական ու-ի փոխարեն վ տառն է գրում նաև Խաչատուր Աբովյանը: Օրինակներ նրա «Ընտիր երկեր»-ի 1939 թ. հրատարակության մեջ եղած ձեռագրային լուսանկարներից. «Մեկ տխուր ձէն բերում էր, կտրվում»: «Ուր տվիր ինձ նրան»: «Քո սիրուն էրվիմ, խորովվիմ»: «Սֆթա վառլեց էս կրակն իմ սրտում»: «Ընչի ած ինձ էւ շունչը տվեց»: «Քեզ տեսայ թէ չէ, աստղս թեթվեցաւ» (էջ 233): «Առաւօտը բացվելիս: Յրվում, ճաշվա» (153): «Փոնջարէն բաց ա-նելիս տունը անմահական հոտով ա լցվում: Բացվում, ծաղիկնե-րով լցվում, զարդարվում ա, ճրագի պէս վառվում»: «Ճարվան ժա-մանակը» (251): Մյուս դեպքերում պահպանվում է ավանդական

ուղղադրությունը՝ դիւանոնց, խաւարում, առաւօտ, զուարթացնում, մահուան, թաղաւորական և այլն:

«Կոտունկ Հայոց աշխարհի» 1860 թ. համարներում տարբեր շողովածներ տարբեր ուղղադրությամբ են գրված: Սկզբի շողվածը ավանդական դրությամբ է, ամենուրեք պահպանված է բաղաձայնական ու-ն, նույնիսկ, երբ ձայնավորական ու-ին է նախորդում զանազանութիւն, տարածութիւն, էրութիւն, փոփոխութիւն: Այսպէս էլ՝ պրութքին, Աստութիւն, համարութիւն, բնորոշակութիւն, մահութիւն, կրակութիւն (57): Մեզ թուում է: Փոփոխութիւն է (105): «Շուշուայ քաղաքումն հաստատած Մատենադարանը կոչուում է Հասարակաց Մատենադարան Շուշուայ Հայոց» (149): Իսկ մի այլ շողվածում՝ աստութիւն, դիւնութիւն, պատուիրանքին, լուսացի գրությունների կողքին վ-ով են գրված կրավորական բայերն ու ժողովրդա-խոսակցական ձևերը՝ «սելապանները կոչում էին», «հիշերվան», «միտքըս տանջվում էր», «հետս վարվում էր», «թաղվեցաւ» (151): Մի երրորդ շողվածում պահպանված է բաղաձայնական ու-ն՝ դործածութի, շինութի, համարութի, շարունակութեացաւ, կր լուսաւորութիւնք և այլն (155): Նույն տեղում տպագրված «Ուխտագնացութիւն ի Թէլթ» շողվածը Թիֆլիսի բարբառով է գրված և ամենուրեք օգտագործված է վ տառը՝ չկոտրվի, ճիւղվում, Քեթեվան, շարշրվում և այլն:

Մանդինյանի «Գարուն»-ը (1863 թ.) թեև հետևում է ավանդական գրությանը և բաղաձայնական ու-ն կա՛մ պահպանում է, կա՛մ փոխարինում v-ով, բայց նրանում էլ շողվածներ կան, ուր այդ ու-ի փոխարեն վ-ն է հանդիպում: Այսպէս՝ հալել, լեզագիտութեամբ, գտանեցաւ, զինուորական, գրութիւն, լուսաւորութիւն ձևերի կողքին կան՝ հալվիլ, յունվար, համարվում է ձևերը և սրանք միևնույն շողվածում (1—18):

Գ. Ախվերդյանը Սայաթ-Նովայի երգերի առաջաբանում գրում է, որ չի կարողացել թիֆլիսահայ իւսավածքում զանազանել և վ տառերի հնչումը, ուստի բոլոր դեպքերում, երբ լսվում է v հնչյունը, օգտագործել է վ տառը: Իր խոսքում նույնպէս Ախվերդյանը հետևողական չէ ավանդական ուղղադրության նկատմամբ. մեկ գրում է՝ զգում, զծաւարագոյն, լեզուին, զուարթ, քերթութիւն, նուաղեցաւ, մեկ էլ՝ բնակվում է, պսակվում է, սկսվում է, խառնվում է, վառված, չր վիրավորվի, հնչվում է և այլն: (Առաջաբան, էջ Ե—ԺԶ):

Պերճ Պոռշյանը մինչև վերջ պահպանում է բաղաձայնական ու-ն, նույնիսկ եթե նրան հաջորդում է ու ձայնավորը (երդում է,

էրուում եմ, վառուում եմ, լուացուում էին, տանջուում էր և այլն):

Այս բոլորին պիտի ավելացնել նաև Վ-ի դործածությունը փոխառյալ բառերում: Օտարազգի Վ հնչույթը ընդհանրապես տառադարձվում է վ տառով. թեև Այտրնյանը պահանջում է բոլոր դեպքերում օտար բառերը գրել հայերենի ուղղագրության կանոնով, ուստի ավելի լավ է համարում օտարազգի Վ հնչույթն արտահայտել Վ-ով, քան Վ-ով²⁰:

Այսպիսով, բաղաձայնական ու, Վ և վ տառերի գրության նրկատմամբ ձևավորված էր երկու սկզբունք: Ոմանք (Այտրնյան, Բագրատունի, Այվազովսկի, «Բազմավէպ», «Ճռաբաղ» և այլն) պահպանում էին ավանդական գրությունը, ըստ որում, «Աստվածաշունչը», «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն, Բագրատունին պահպանում են միայն բաղաձայնական ու-ն, իսկ Այտրնյանը և մյուսները երբեմն այդ ու-ի փոխարեն գրում են նաև Վ տառը: Ոմանք էլ (Ավետիքյան, Քաթիպա, Նադարյան, Նալբանդյան, Ախվերդյան և այլն) հետևելով հնչյունային գրությանը՝ կրավորական բայերում և ժողովրդա-խոսակցական ձևերում բաղաձայնական ու-ի փոխարեն օգտագործում են վ տառը, մանավանդ եթե այդ ու-ին հաջորդում է ձայնավոր ու-ն (գրուում > գրվում), մնացած դեպքերում օգտագործում են ու կամ Վ:

Ը-ի ուղղագրությունը.—Ը տառը կրոնական և նախնայաց մատենագրության մեջ գրվում է դասական ուղղագրությամբ, աշխարհաբար երկերում՝ որոշ շեղումներով, որոնց մի մասը գալիս է դեռ միջին դարերից, մի մասը նոր երևույթ է: Ի՞նչ շեղումներ են դրանք:

1. Հնչյունափոխությունից առաջացած գաղտնավանկի լ-ն գրելու սովորությունը, որ սկսվել էր միջին դարերում, շարունակվում է նաև այս դարում: Ավետիքյանի քերականության դրքում սովորական են, մըտքի, երկըթէ, ծընաւ, կրկընվի, գալըստեան և նման գրությունները: Բագրատունին նույնիսկ կանոնական է դարձնում՝ պահանջելով հնչյունափոխությունից առաջացած ր հնչույթը գրելու Պղընծոյ, մատնըչի, մըշտակայ, ձըկան, շըըթան, խառնըման, կնդրըկի, տգրըկի, պանդըխտի, մորնչել և նման բառերում ր-ն պիտի արտասանել և գրել: Ըստ Բագրատունու լավ կլիխի տեղ-տեղ ր-ն գրել, բառիմաստի տարբերակման համար, օրինակ՝ զըլացող. զըլացեալ և ըզլացեալ, որոնցից մեկը զլանալ բայն է, մյուսը՝ լալ: Նա պահանջում է ընդհանրապես ձայնորդ հնչույթին նախորդող դիրքում (սրել, սնունդ) ու զ նախորդից առաջ ր-ն գրել և բերում է օրինակներ Շնորհալուց՝ ըստուգութեան, ըստուերին, ըսքանչեբաց, հրնար, տընկոց, ըզգայնոց, շընչական, ըզգալին, ըզգեստ, շընորհ,

կրրկին և այլն: Միաժամանակ չի մոռանում նախորդների նման զոդուշացնել, որ մի բառում մեկից ամբելի ը չգրեն, օրինակ՝ լընլո. ոչ՝ լրնրլոյ, խրնլոյ, ոչ՝ խրնրլոյ, գրլխոյ, պտրլոյ, բրրտի, կտրրեմ, կըշոոյ, կտրըճի, կստըղկան, հասկըցող, հարրստանալու, արծրթէ, տարեմըտի և այլն:

2. Հաճախ գրում են բառավերջի գաղտնավանկի ր-ն, որ հետեանք է արեմտահայ հատվածի արտասանության: Ավետիքյանը գրում է՝ կարդացընել, փախցընել, կորսնցընել, կը խառնըվի, կը դարձընեն, դիւրացընելու, կրսորվեցընէ, կվախցընէ, հարցընել և այլն: Այդ նույն արտասանության հետեանքով արեմտահայերը ր-ն գրում են թվական անուններում՝ երեսընվեց, տասընհինգ տասընինը և այլն, բառավերջի կրկնակ ն-երի միջև՝ մատնըն, սիւնըն, ձեռնըն, ոտնըն, հոգնակերտ և. և տառերին հաջորդող դիրքում՝ քուրմքըս, վիշտքըս, գունդքըդ, սուրբքըն, դագսըն, ամպսըն, ղարհեստսըն, յոտսը և այլն: «Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոց մասնեղական կրօնի» (1831 թ.) գրքում կան՝ մեղքիցըն, յոյսըն, փրկութիւնըն, նշանակութիւնըն, «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար» (1832 թ.) գրքում՝ ննարքնըն, շնորհքըն, օրըն, «Մեղքըն խաղ անելոյ բան չէ» (1833 թ.) գրքում՝ իշխանըն, մարդիքըն: «Աւետարան ճշմարտութեան և զօրութեան համար» (1833 թ.) գրքում՝ վարդապետութիւնըն, հացիցըն, գիրքըն, խօսքըն և այլն²¹. Հիշատակելով ր-ի գրութեան իշխալ դեպքերը՝ Բագրատունին զօդուշացնում է, որ հիմն ա-ից առաջ մի ձայնորդ հնչույթ կա, ր-ն սղվում է (բոլբոս աստեղաց, բանքս այս, ձեռքս իմ, աւուրքս այսորիկ, արքոյ այդ, ջուրքոյ աղի, պատգամքն աստուծոյ, տօնքն ամենայն, իմաստունքն առին, մեղդ այդ և այլն): Այստեղ դեր է խաղում նաև հաջորդ բառի ձայնավորով ռսկըսվելը: Տվյալ դեպքում իմաստունեմ առին կապակցության մեջ վերջին ն-ն միանում է հաջորդ բառին և արտասանվում է ոչ թե իմաստունեմ առին, այլ՝ իմաստունեմ առին ձեռն, ուր այլևս ր չի լսվում: Իսկ նախորդ օրինակներով (գունդքըդ ելին) այդ երկույթը տեղի չի ունենում: Եթե նույնիսկ վերջին բաղաձայնը արտասանվի հաջորդ բառի սկզբի ձայնավորի հետ, ինչպես՝ յոտսըն աւրալի—յոտս աւրալի, դարձյալ ա-ից հետո ը է լսվում: Ընդհանրապես հայերենում ձայնորդ հնչյունները հաջորդող բաղաձայնին կարող են միանալ առանց գաղտնավանկ ր-ի միջնորդության (գանձ, վարձ, իղձ, մեղք, ամպ, մարդ), իսկ նախորդող բաղաձայնին միանում են գաղտնավանկ ր-ի միջոցով (գանձ, բայց՝ ձընագընդիկ, վարձ, բայց՝ ձրրի, մարդ, դըրամ): Այս ր-ն է պա-

հանջում Բագրատունին գրել: Սրանց պիտի ավելացնել նաև Այ տրնյանի ավելացրած երկու դեպքը:

1. Ը են գրում երբեմն ու-ի դժվար հնչումը խափանելու նամար. օրինակ՝ տուիչ—տուչութիւն, ձուկան, թրուկան և այլն:

2. Ուել վերջավորությունն ունեցող բայերի կրավորականում. օրինակ՝ հաշուել—հաշրւած, դդուել—գգրւած, պատուել—պատրւեցաւ:

Արեւելահայերենում ընդհանրապես խուսափում են գաղտնավանկի ր-ն գրել, այն պատահում է դերազանցապես բանաստեղծություններում: Բագրատունու, Այտրնյանի հիշատակած դեպքերը վերաբերում են արեւմտահայերենին:

Երբեմն բառավերջի փակ վանկի գաղտնավանկ ր-ն հնչույթային նշանակություն է ունենում, դա լինում է հատկապես դ-ին նախորդող դիրքում: Ղազարոս Աղայանը արձանագրելով այդ երեւույթը՝ բերում է օրինակներ՝ բանդ—բանրդ, սանդ—սանրդ, սարդ—սարրդ, քուրդ—քուրրդ, հորդ—հորըդ, հողդ—հողըդ, գինդ—գինրդ և այլն:

3. Դասական հայերենի ր-ով սկսվող բառերի թվին արեւմտահայերենում ավելանում են րսել, րնել, րլլալ բայերը, որոնց ր-ն անպայման գրվում է ն՝ բառասկզբում, ն՝ այդ բառերի ածանցման, բարդացման ժամանակ բառամիջում՝ չրլլաւ, չրսուիւ և այլն:

Հայտնի է, որ բաղաձայնասկիզբ բայերի չ, կ նախամասնիկներին հաջորդում է ր հնչույթը (չրդրել, կրկարդաս): Միջին հայերենում, ուր կու մասնիկի հետ պատահում է նաև կ մասնիկը, այդ ր-ն սովորաբար չէին գրում: Երբեմն էլ, ինչպես նշել ենք, հատուկ նշան էին դնում, որ ընթերցողը ր-ն արտասանի: Օրինակ՝ № 415 ձեռագրում՝ չիթողու, № 416 ձեռագրում՝ չկայ, չխաղղի. չլւէ, Գրիգորիսի բժշկարանում՝ կթքնու, կհաղա: Բագրատունին նույնպես նշում է, որ նախկինում այդ մասնիկներից հետո լսվող ր-ն տաղաչափները չեն դրել, և բերում է Շնորհալուց մի բառակ, ուր այդ ր-ն չի գրված (չմրտի, չվաճառեցի, չներհալին, չպայծառանայ, չխնդրէ, կխնայէ, չդատէ և այլն): Ինչպես տեսանք, այդ ր-ն չեն գրում ոչ միայն բանաստեղծություններում, այլև առհասարակ. № 266 ձեռագրում (1468 թ.) հանդիպում ենք՝ «պինդ չդնես» (210), «ցօ (ցաւ) չբնակի» (205), «ծնկվին չկարէ հաստատիլ» (181), «որոշյունքն մազ չլինի, ստայխաւս և գիշախօս լինի» (177) և այլն: Ագուլեցիին գրում է՝ «Եկի Երեւան, փող չտվեց» (անդ, 38): Ղ. Վա-

նանդեցու «Գանձ չափոյ» (1699) գրքում՝ «քանի արծաթ բաժին կնկնի» (65)։ Բաղդասար Դպիրի քերականության մեջ հանդիպում են՝ կնշանակէ, կսվի, չսվիր, չլլա և այլն։ Թեև Դպիրն ընդհանրապես ր-ն գրում է՝ կր կարգացվի, կր շինվի (նաև՝ կու շինվի), կր սորվեցրնէ և այլն)։ «Աղղարար»-ում (1795 թ.) պատահում է ր-ով միացյալ գրութիւնը՝ «նեղությամբ կրկարգամ»։

Ուրեմն ուշ միջնադարում (Ժէ դար) սկսեցին ր-ն գրել, ԺԷ դարում արդեն առկա էր երկակի գրութիւն՝ ր-ով և առանց ր-ի, ԺԹ դարում բարդանում է այդ մասնիկների գրութիւնը։ «Շղանակ Բիւյանդեան»-ը (1813 թ.) գրում է ր-ով և միացած՝ կրտեսնաս, կրծնանին, կրմեռնին, կրտեսնվին, կրթողնու, կրբերէ, կրգարմանա, իսկ ձայնավորանախորդ բայերին՝ ուղղակի կպած, առանց որևէ նշանի՝ կոշնշանայ, կերկնայ, կրնտրէ, կերթա և այլն։ Ռ-ով գրում է նաև «Դիտակ Բիւյանդեան»-ը (1815 թ.)՝ կրտուվի, կրխրկվի, կրպարտաւորեն, կրվախենան, կրսէ, կրնէ, կրգրեն, չր-նել, Բայց նաև՝ կր ճանշնան, կր մոմոայ, կկատարվին (առանց ր-ի և միասին)։

Ավետիքյանի քերականության մեջ այդ մասնիկները հանդիպում են չորս գրությամբ՝ ր-ով և միացած (կրսորվեցնէ, կրդառնայ, կրբաժենք, կրփոխվի, չրկայ և այլն), ր-ով և առանձին (կր շինվին, կր խառնվի), առանց ր-ի և միացած (կպահվի, կհոլովի չգրէ) և ապաթարցով (չկար, չ՞ունենայ, կ՛կարդայ, չ՛գիտցողը կ՛ամաշէ, կ՛սորվի, կ՛ապնուանա և այլն)։

«Արարատ»-ը (1850 թ.) հետևողականորեն այդ մասնիկներից հետո ապաթարց է դնում՝ կ՛հրամայվի, չ՛տալ, չ՛կարողացան, կ՛նշանակէ, չ՛հեռանայ, չ՛տրտմեցնեմ և այլն։ Նույնիսկ ձայնավորին նախորդող դիրքում, երբ ր չի էլ լսվում, դնում է այդ նշանը՝ կ՛իմանաս, չարած, կ՛ասվի, կ՛ամաշէ, չ՛ունենայ, ծնած չ՛էին, ուսումն առած չ՛են և այլն։ Բայց պատահում են նաև՝ շտեսնված (առանց ր-ի ու ապաթարցի) և կր պատրաստեմ գրութիւնները։ «Մեղու Հայաստան»-ին (1858—1860 թթ.) օգտագործում է վերը նշված բոլոր ձևերը՝ ր-ով, առանձին (չր խնայենք, չր փախչենք, կր ւահմանուին, կր վերաբերի, կր գրկուին, կր լինի, կր գտնի), ր-ով, կպած (ցոյց կրտան, կրծծեմ, կրմատնեմ, կրլինի, կրտայ, չրկամեցաւ, չրտրտմենք), առանց ր-ի, ապաթարցով (կ՛վերաբերի կ՛լինի, չ՛խնայէ, չ՛իմացող) և առանց ապաթարցի, միացած (չկարողացան, չյաջողուեց, չտանել, չհրաւիրէ, չծածկե, կնշանակէ և այլն)։

«Արշալույս արարատեան»-ը (1850 թ.) գրում է ր-ով և միացած՝

կրճատարակէ, կրդտնուի, կրբաժնուի, կրբորբոքեն, կրգրէ, կրհաս-
ներ, կրտիրէ և այլն: «Կոունկ Հայոց աշխարհի»-ն (1869)՝ գրում
է կպած՝ թե՛ ր-ով, թե՛ առանց ր-ի (կրդիպշի, կրբոնի, կրլքցուի,
չրկտրեց, չրթոցնեն, չրիւրրտնին և՛ կվարժուի, կներեն, կլինի,
կլուսաւորուինք):

«Բազմավէպ»-ը (1843 թ.) գրում է ր-ով և միացած՝ կրսկսինք,
կրհասներ, կրհնարուին, կրսորվի, կրվայելեն, կրշատնան, կրմո-
ռացուի, կրփոխուի, կրժողվէ և այլն: Բայց չ-ն միացած է գրում
և առանց ապաթարցի՝ չկորսնցընէր, չսեպուին: «Մասեաց աղաւ-
նի»-ն (1855—1858 թթ.) գրում է ր-ով և միացած (կրհարցնեն,
կրխոստանան, կրհամարուի, կրցուցընէ, կրկատարենք, կրբալէ, կր-
պայծառանայ, չրմնաց, կրմօտենայ, կրտեսնուին և այլն), առանց
ր-ի և միացած (կծաղկի, կցուցնէ, չհանին, չխրրտին, չտրուէր, չը-
կարդալ, չկրնար, չկայ, կհալածէ, կմերժէ և այլն)՝ Մանդինյանի
«Գարուն»-ում (1866 թ.) կ-ն միացած է և առանց ապաթարցի՝
կհրատարակենք, կհամարին, կվերջանայ, կմնայ, կլրցուէին և
այլն:

Այսպէս է գրում իսաղատուր Աբովյանը (չկորցնեմ, չտուեց,
չխաղանք, չփոխեց, չլսեց, չկարաց, կլինի, կսպանեմ, կտամ,
կփախչէր, կմեռնեմ, կպահի, կտայ, կմեծացնի, կբերեմ և այլն)²²,
թեև պատահում է նաև ր-ով ձևը (կրպատահի):

«Հյուսիսափայլ»-ը գրում է ր-ով, առանձին՝ կր գտնվին, չը
կայ, չը մնալով, կր քշենք, կր պատուենք, կր լինի, չը կամի, չը
գիտեմ, բայց նաև՝ չըդիտեմ, չըփակված: Մինաս Բժշկյանը գրում
է ր-ով և առանձին՝ կը նշանակէ, կը հաստատէ, կը համրէ, կը կա-
րօտի և այլն:

Անդրադառնալով այս հարցին՝ Այտընյանը գրում է, թե ա-
պաթարց նշանը կրճատված ձայնավորի փոխարեն է գրվում և
ցույց է տալիս, որ երկու կից ձայնավորներից մեկը կրճատված է
(անգամ մ'ալ—անգամ մը ալ, պիտ'որ—պիտի որ, կ'եղծաներ—կը
եղծաներ, երկ'երկու—երկու երկու), ապա ցույց է տալիս ապա-
թարցի սխալ գործածութիւններ: Դրանք են. չ'ես, չ'է (փոխանակ՝
չես, չէ), չ'լլայ (փոխ. չըլլայ), չ'տեսնեմ (փոխ. չտեսնեմ), չ'տես-
ներ (փոխ. չի տեսներ), կ'ու դայ (կու գայ), կ'ու տամ (կու տամ),
կ'ստանայ (կը ստանայ), կ'գտնէ (կը գտնէ): Երբեմն տաղաչափնե-
րը ապաթարց են դնում մի ձայնավոր կրճատելու համար (մոռ'ցայ,
աւ'րել—մոռացայ, աւ'րել): Ուրեմն Այտընյանը կ-ն բաղաձայնով
սկսվող բայից առաջ գրում է առանց ապաթարցի, կպած, չ-ն բո-

լոր դեպքերում գրում է բային կպած, առանց ապաթարցի՝ չլլայ, չտեսնեմ (Քնն. քեր. 354):

Գ. Այվաղովսկին քննադատում է ամեն դեպքում կրճատված ձայնավորի փոխարեն ապաթարց գնելը: Իր «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» (1869 թ.) գրքում սխալ է համարում, որ ոմանք ապաթարցով են գրում նաև պիտոր, երկերկու, չլլա ձևերը: Եթե ամեն սղված ձայնավորի փոխարեն ապաթարց գնենք, պիտի գրենք նաև՝ աւորել, մոռցա և այլն, որ ավելորդ է:

Ապաթարցի ավելորդ կիրառութեան հանդիպում ենք Ախվերդյանի «Սայաթ-նովա»-ի առաջաբանում, օրինակ՝ չէ թաքցրել, չեն իմանում, չ'ընդունենք և այլն:

Այսպիսով, միջին դարերում առաջացած չ և կ նախամասնիկները, որ գրվում էին բային միացած ու առանց ր տառի, ԺՂ դարից սկսում են գրվել նաև ր տառով, եթե բաղաձայնին են նախորդում: Սրանց ավելանում է ր տառի փոխարեն ապաթարցի գրութունը: Դարիս 50—60-ական թվականներին չ և կ բայական նախամասնիկները գրվում էին՝ ձայնավորին և բաղաձայնին նախորդելիս առանց ր-ի և բային միացած (կվազեն, կասեն, չվազեց, չասաց), բաղաձայնին նախորդելիս՝ ր-ով և բայից անջատ (կր վազեն, չր մնաց), ր-ով, բայց բային կպած (կրվազեն, չրմնաց), ապաթարցով և բային կպած (կ'վազեն, չ'մնաց), նույնիսկ սխալ ձևով գրում էին՝ չէին, չր'ընդունենք և այլն:

Դրութեան այս բազմազանութունը շարունակվեց նաև 90-ական թվականներին, և բանասերներն այս տասնամյակում նորից անդրադարձան այդ հարցին: Օրինակ, «Բաղմավէպ»-ի 1897 թվականի համարներում բանավեճային հոգվածների մի ամբողջ շարք տպագրվեց այդ մասնիկներից չ-ի գրութեան մասին:

1897 թ. ապրիլի համարներում «Բաղմավէպ»-ի այն հարցին, թե ե՞րբ կարելի է գրել ոչ, չր, չ և ե՞րբ՝ չի, պատասխանում է Հովհ. Շավարշը.

1. Ոչ-ը գրվում է հաստատակա՞ծ բայից առաջ, այն ժխտական դարձնելու համար: Օրինակ՝ ոչ կուտէ և ոչ կը խօսէ, ոչ ոք կր սիրէ իր թշնամին:

2. Չ մասնիկը գրվում է բայի որեւէ եղանակի ժամանակը ժխտելու (չրտեսնեմ, չտեսնէի, չտեսայ):

3. Չի, չր և չ՝ մասնիկները գրվում են բայերի ներկա ժամանակի եզակի 3-րդ դեմքի վրա, ժխտելու համար. ըստ որում չի-ն գրվում է բաղաձայնով սկսվող բայերի վրա, բացի անգիր ր-ով սկսվող բայերից (չի խօսեր, չի տեսներ, չի խնդար): Չր-ն

դրվում է զ. շ. և գրերով և անգիր ը-ով սկսվող բայերի վրա (չր դբադիր, շր շտապեր, շր սկսիր)։ Ակզբում եղել է չի, հետո դարձել է չը. հետո՝ չ' (չի > շր > չ')։ չէի լսել—չիլսեր։ Չ'-ն դրվում է ձայնավորով սկսվող բայերի վրա՝ չաշխատիր, չ'անարգեր, չ'ուտեր (է« 237—38)։ Նույն թվականի հունիսի համարներում Բանաստե- ստորագրության մի այլ հոգվածագիր պաշտպանում է այս կար- ծիրը։ Հենվելով Այտրնյանի բացատրության վրա՝ հոգվածագիրը սխալ է համարում՝ (եթե) չի տեսներ, չի գդար, չի գղջար, (որպես- ՚դի) չի լան, չի չաղթուին ձեները։ Ըիշտ են՝ (եթե) շտեսներ, շղրղ- քար, շղգար, շլան, շլաղթուին (Քնն. 82—87)։ Ըստ Հացունու (նույն տեղը) ոչ. չը. չ' չի ձեներից երկուսը նորահնար են (չր և չ'), նախ- նիք չունեին շր գբադիլ կամ չ'ուտել այլ միայն՝ չգբադել, չուտել, ուրեմն այդ երկուսը ավելորդ են։ Ետին դարերում ռամկորեն լեզ- վում երևան եկավ չի ձեր (չի ցաւի, չի մտնայ)։ Այժմ բաղաձայ- նից առաջ միայն չի են գործածում, ոմանք էլ՝ չ։ Հոգվածագիրը գտնում է, որ չի-ն պիտի գործածել միայն սահմանական ներկայի եզակի երրորդ դեմքի հետ թե՛ ձայնավորից, թե՛ բաղաձայնից ա- ռաջ, իսկ չ'-ն կատարյալի և այլ մյուս եղանակների բայերի հետ։ Չ'-ն գատ դիր չէ, այլ ածանց և ինչպես գոյականի, այնպես էլ բա- յի հետ պիտի գրվի միասին (չադգ, չգոյ և չունեմ, չարի)։ Չր տեսներ, չ'երբառ ձեները մեղանշում են լեզվի օրինաց դեմ, պիտի գրել՝ չի երթար, չի տեսար, որ չի-ն շեշտվի իբրև առանձին բառ, բայց՝ չսիբեցի. չսիբեմ. ինչպես գրել են նախնիները։

Հուլիսի համարում տպագրվում է Գաբրիելյանի (Մ. Ս.) հոգ- վածը։ Նրա կարծիքով՝ չի-ն միշտ շեշտված է, հանդես է գալիս իբ- րև շեմ, շես շարքի շարունակություն, մյուս դեպքերում չ-ն է գոր- ծածվում առանց շեշտի (չսիրէ, չէր տեսակցէր)։ Չ'-ն գործածվում է չի-ի փոխարեն ձայնավորին նախորդող դիրքում (չ'երթար, չ'ու- տեր)։ Եթե առանց ապաթարցի գրվի, շեշտը վերջին վանկին կանց- նի և իմաստը կփոխվի։ Օրինակ՝ նա չ'երթար տուն, նշանակում է նա չի երթար տուն, չի գնում տուն, իսկ՝ թող չ'երթար ու չվռնտու- լը՝ թող չգնար ու չվռնդվեր։ Չր-ն ոմանք գրում են բաղասկզբի գաղտնավանկին նախորդող դիրքում (չղգար, շր գբոսնուր), բայց ավելի լավ է գրել՝ չի գգար, չի գբոսնուր, չի շտապեր։ Հոգվածա- գիրը եզրակացնում է. 1. Մեր լեզվում չր ձև չկա, այն պետք է ար- տաքսել։ 2. Չ', շր ձևերը չի բացասականի համառոտումն են։ 3. Ուր որ շեշտը չի առնում, այնտեղ սխալ է չի-ն գործածել, ուս- տի սահմանական եղանակի կատարյալը, աներևույթի ներկան,

անցյալն ու ապառնին, թեական, պայմանական, պատճառական
 և գանականները պարզ չ կ'առնուն, ոչ չի կամ չ'։ չր։ Սխալ են՝ շրջոս-
 նուլ, չի զբոսնուլ, չի տեսալ, ևթէ չի գան, եթէ չի տեսնէ, որպէսզի
 չի ինդան, չի մեռնի, չ'ապաշխարէք ձեները, ճիշտ են՝ չխօսիլ, ևթէ
 չզան, չտեսնէ, չխնդան ձեները (էջ 345)։ Սեպտեմբերի համարում
 հանդես է գալիս Գ. Բալասանյանը։ Նա մերժում է խմբագրութեան՝
 չի տեսնէք. չի լան, չի յաղրութիւն, չի զղջալ ձեները։ Զի-ն պիտի օգ-
 տագործել արեւելահայերենի նման (չի ստացուի, չի պարթնի, չի
 գտնուի), ինչպես որ «Մշակ»-ը գրում է՝ «Զեր հօգուածը չի տպա-
 ցրուի»։ Առաջարկում է գրել՝ չտեսնէք, չլան, չյաղթուին, չզղջաք։
 Ավելի լավ է չ-ն գրել առանց ր-ի, ր-ն գրել միայն բանաստեղծու-
 թյուններում։ Այսպիսով, որոշ հոգովածագիրներ պաշտպանում են
 Այտրնյանի կարծիքը՝ չ-ն գրել միացած, առանց ասպաթարցի ու
 ր-ի։

Կր. չր նախամասնիկների ուղղագրութիւնը բանավեճի տեղիք
 է տվել նաև արեւելահայ հատվածում։ «Նոր դպրոց»-ի 1909 թ.
 N 8—9-ում տպագրված «Լեզու հայ լեզու» հոգվածում հոգվածա-
 գիր Լ. Մելիք-Աղամյանը հարցնում է Ղազարոս Աղայանին, թե ին-
 չո՞ւ է նախամասնիկ չ-ից հետո ր գրում, որովհետև լավում է, իսկ
 ինչո՞ւ չի գրում՝ սրբբին, սրբբազան, զրբիշ, զրնաց, զրաար։ Աղա-
 յանը չր գրեց է գրում, որովհետև Մանդինյանն առանց ր-ի է գր-
 րում, ի հեճուկս Մանդինյանի է գրում։ Հոգվածագիրը, սակայն,
 զոգոհում է, որ զեն են գցել կ-ի փշիկն ու ր-ն ($կր > 4$)։ Կուրանամ
 ձեկից աշակերտն ինչպե՞ս իմանա կուրանալ լայն է, թե՛ ուրանալ։
 Կտրուին՝ տա՞լն է, թե կտրվելը։ Ավելի լավ չէ՞ր ասպաթարցով
 գրել (կ'ուրանամ) կամ գծիկով (կր—բերես, կր—տրվի)։

Մի այլ հոգվածագիր (Նիկողայոս Տեր-Ղևոնդան) իր «Ուղղա-
 գրական ակնարկներ» հոգվածում (անդ. N 5) արձանագրելով, որ
 պարբերականներում՝ «Փորձ», «Մուրճ», «Մշակ», «Աղբիւր», «Հաս-
 կեր», «Նոր դպրոց» և այլն, կ'նախամասնիկի համար մի որոշակի
 սկզբունք չկա, գրում են՝ կր գրեմ, կրգրեմ, կ'գրեմ, կ'ուրանամ և
 կուրանամ, սահմանում է։

1. Կր-ն գրել բային կից, երբ այն բաղաձայնով է սկսվում, ա-
 ռանձին չգրել, քանի որ ձայնավորասկիզբ բայերից առաջ գրվելիս
 ր-ն ընկնում է, տեղը գրվում է ասպաթարցի նշանը (կ'առնեմ, կ'ու-
 տեմ)։

2. Կր-ն առանց ր-ի չի կարող կաշել բային, որովհետև այդ
 դեպքում սխալ կ'ընկնէ, կ'ընէմ, կ'րգրեմ-ը կ'առնան կ'րդ-նեմ,
 կ'րգ-րեմ, կ'րգ-նամ։

3. Կը-ն ձայնավորասկիզբ բայերի վրա պիտի դնել անպայման ապաթարցով, որպեսզի երկիմաստութիւն չառաջանա, ինչպէս՝ կ'ուրանամ և կուրանամ ձեերում:

Ինչպէս գրում է Լ. Մելիք-Աղամյանը, արեւելահայ հատվածում նույնպէս միօրինակութիւն չկա չ. կ' նախամասնիկների գրութեան հարցում: Նույնիսկ միեւնոյն թերթը կամ հանդէսը միօրինակութիւն չի պահպանում: «Արձագանք»-ի 1882 թ. փետրվարի 21-ի համարում հանդիպում են՝ կը նպաստէ, կը լինին, կը գայ, կը ըստանայ, կը սկսուի և՝ կ'ցաւիմ, կ'ասէի, կ'րտէին, կ'իշխեն, կ'համարիմ, չ'կար, չ'տէք: 65-րդ էջում գրված է թե՛ կ'համարեն և թե՛ կը հնարեն: «Արձագանք»-ի 1890 թ. N 14-ում հանդիպում են՝ կը դարմանայ, չը դիտենք, կը տօնենք, չը բաց անես, կը գամ, կը լինի, կը գայ, կը մեղմանայ, կը խոնարհուի, չը մնաց, չը գիտէր, կը շարունակուի, չը փոխուեցաւ, չը գոչութիւն, կը ներկայացուի և ալլն, իսկ ձայնավորին նախորդող դիրքում՝ միացած, առանց ապաթարցի (կասեմ, կառնեմ, հաշիւներ կանէր և ալլն): Այս օրինակները, որ բերված են Շիրվանզադեի «Զուր հույսեր»-ի հատվածից, վկայում են, որ վիպասներ մի սկզբունք ունեն՝ բաղաձայնանախորդ դիրքում գրում էր ը-ով և անջատ, ձայնավորանախորդ դիրքում՝ միացած, առանց ապաթարցի (չը մնաց, չասաց):

Այս մասնիկներին ընդունված ու տարածված գրութիւնը պիտի համարել բաղաձայնին նախորդող դիրքում կը-ն ը-ով և առանձին (կը տամ, կը գամ), ձայնավորին նախորդող դիրքում՝ միացած (կասեմ, կառնեմ), իսկ չ-ն բոլոր դեպքերում միացած, առանց ը-ի (չլսէք, չասէք): Բաղաձայնանախորդ դիրքում ը-ն չգրելու դեպքում փոխարենը ապաթարցի նշան է գրվում՝ կ'տար, կ'տամ:

Վերջին կ, չ նախամասնիկները գրվում են բային միացած, առանց ը-ի ու ապաթարցի (կգա, կասի, չգնաս, չասես), իսկ սփյուռքահայ գրականութեան մեջ, մամուլում պահպանվում է նրանց ավանդական գրութիւնը՝ կ-ն բաղաձայնին նախորդող դիրքում ը-ով և առանձին (կը դամ), ձայնավորին նախորդող դիրքում ապաթարցով՝ կ'երթամ, կ'առնեմ, իսկ չ-ն բոլոր դեպքերում միացած, առանց ը-ի ու ապաթարցի (չկար, չուներ):

Ը տառին որեւէ ձայնավոր և յ-ն չեն հաջորդում, միավանկ բառերի սկզբում ը չի լինում, բացի ըստ, ընդ, կը, մը ձեերից:

Մյուս ձայնավորների ուղղագրությունը դասական սկզբունքով է:

Դասական ուղղագրությամբ են գործածվում նաև բաղաձայնները, թեև արտասանությունը փոխվել էր: Ինչ կանոններ որ գործում էին ԺԸ դարում, շարունակում են գործել և այս դարում: Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում բաղաձայնների գրության տարբերությունը երևան է գալիս տառադարձության ժամանակ և բարբառային զրկածքներում:

Յ-ին կարող են նախորդել միայն ա-ն ու ո-ն (այ, ոյ), ուստի զարտուղի են արևմտահայ մէյ մը, իյնալ, մէյնիլ ձևերը: Ն, մ ձայնորդներին հաջորդելիս երբեմն ձայնղները արևմտահայերենում փոխվում են խուլի՝ ինծի, իսնծել, խնտալ, բնտոռ, խնծոռ և այլն:

Իհարկե, կան ուղղագրական շեղումներ, որոնք բխում են արտասանությունից, բայց դրանք ընդհանուր որակ չեն կազմում և չեն ազդում գրության ընդհանուր համակարգի վրա: Այսորնյանը հիշատակում է նից եկող և իր օրերին էլ կրկնվող մի շարք սխալներ՝ աղթարք, թուխտ, ախպար, վաղջան, բաղղ, խախկ (անել), ասզր, աստարար, ցաթկել, փաթտել, Արաբգիր, փոխանակ՝ ախտարք, թուղթ, աղբար, վախճան, բախտ, խաղթ(անել), աղզր, ազդարար, ցատթել, փաթթել, Արաբկիր գրությունների: Տարածված սխալներից են՝ հոգնիլ (յոգնիլ), խորոչ (խորոջ), խոռոչ (խոռոջ), փակ (բակ), դար (թառ), գալել (քալել), ամեն (ամէն), սլել (սուլել), ժողուած (ժողված, ժողվուած), զողղոջին (զողղոջուն), մնչել (մոնչել), շշնչել (շշնջել), անշշունչ (անշշունջ), որնոր (որն որ), ինք նալ (ինքն ալ), մի՛ տեսնէր (մի՛ տեսներ), չես գիտէր (չես գիտեր), չէր նայէր (չէր նայեր), չէին անցնէր (չէին անցներ), վեցերորդ (վեցերորդ), ուղղեցոյց (ուղեցոյց), խօստանալ (խոստանալ), դրօշմել (դրոշմել), Անտօն (Անտոն), պատրիարզ (պատրիարք), Եպարգոս (Եպարքոս), Կրօնիդէս (Կրոնիդէս) և այլն:

Սրանց մեծ մասը արևմտահայ գրականության մեջ այստեղայնտեղ հանդիպող սխալներ են, որ արևմտահայ արտասանության և բառի կազմությունը չիմանալու հետևանք են: Օրինակ՝ գրում են՝ մի տեսնէր, չես գիտէր, չփոթելով անցյալի ձևերի հետ՝ [եթե] տեսնէր, գիտէր, այնինչ շնո գիտեւ նշանակում է չգիտես, մի տեսնե՛ր՝ մի տեսնի:

ՄԵՆԱՏԱՌ

Տասնիններորդ դարի առաջին կեսին ձևավորվեց մեծատառի գրությունը նրանով, որ այն տարածվեց նաև անձնանունների և աշխարհագրական անունների վրա։ Բայց դա միանգամից չկատարվեց։ Դարասկզբի գրականության մեջ դեռևս պատահում են հատուկ անունների փոքրատառով գրություններ։ Տրդատի աստենադպիր Ագաթանգեղոսի «Գիրք վիպասանութեան» 1809 թ. հրատարակության մեջ հանդիպում են՝ գրիգոր, յայ, խոսրով, ասորեստան, պարթև, արամապղայ, վահագնէ, յանահիտ, դիոկղիտիանոս, մկրտիչ, ոհան և այլ փոքրատառով անուններ։ Աստվածաշնչի 1805 թ. Զոհրապյանի աշխատասիրությամբ հրատարակության մեջ փոքրատառով են գրված՝ աղամ, հաբել, անձ, կային, ենոյ, մաթուսաղա, սամուել, բեհիամին, զերեթ, աննա, աղղահ և այլն։ Օրինակ՝ «Եմուտ աղամա եւա կին իւր և յղացաւ եւ ծնաւ զկային։ Եւ ասէ տր ած ցկային։ Եւ եղեւ որդի զնա ենոբայ գայերիդադ, սոս ծնաւ զմայիէլ» և այլն։ Խաչատուր քահանա տեր Օհանյանի հիշյալ քերականության մեջ թվարկված անձնանունները փոքրատառով են գրված՝ անդրեաս, արտաշես, բարսեղ, բեհիամին, զարբիւլ, եղիսէ, զաֆէոս, իսրայէլ և այլն։ Փոքրատառով են գրված նաև բառացանկի գլխաբառերը։ Գ. Ավետիքյանի քերականության գրքում հանդիպում են ահաբովն, մովսէս գրությունները։ Բայց բոլոր հատուկ անունները մեծատառով են գրում Մ. Բժշկյանը (Պոնտոս, Սև ծով, Յաբեթ, Ասքանազ, Աքսինոս, Պաթումի և այլն), մամուլը՝ «Դիտակ Բիւզանդեան», «Եղանակ Բիւզանդեան»։ Այնուհետև՝ Բագրատունին, Այտրնյանը, Այվազովսկին, «Հյուսիսափայլ»-ը, «Ծռաքաղ»-ը, «Արարատ»-ը, «Արծազանք»-ը, «Մեղու Հայաստանի»-ն և մյուսները։

Մեծատառի գործածության կարգը սահմանում է Այտրնյանը, ըստ որի մեծատառով են սկսվում՝

1. յուրաքանչյուր խոսքի սկիզբը, առաջին բառը, վերջակետից հետո, բանաստեղծությունների յուրաքանչյուր տողը,

2. իբրև վկայություն բերված խոսքը (օրինակ՝ Թագավորը գոչեց, թե Այսչափ դա՞ռն է եղեր մահը),

3. Աստուած, Բարձրեալն, Արարիչն, Պատրիարք, Ձեր Սրբութիւնը և նման տերունական անունները,

4. հատուկ անունները՝ Մծբին, Կասպից ծով, Վահան Գողթնացի, Սուրբ Գրիգոր, Դավիթ Անհողին, Յովսեփ Գեղեցիկ, Իգնատիոս, Միջին Հայաստան և այլն,

5. գրքերի վերնագրերը,

6. Լիժն հասարակ անունին հատուկ իմաստ են տալիս,

7. վայելչագրության նպատակով, որ սահման չունի:

Վեցերորդ կետի տակ պիտի հասկանալ գիտական (քերական և այլ) տերմինները, հիմնարկներին, ազգերի անվանումները: Օրինակ՝ Խաչատուր Աբովյանը գրում է՝ «Խ. Աբովյանի, վերատեսչի Արքունական, Նահանգական ուսումնարանին, որ ի Տփլիս» (Ընտիր Երկեր, 1939 թ., էջ 76):

Հետաքրքիր է, որ այդ ժամանակ Եվրոպայում նույնպես նոր է սկսում կարգավորվել մեծատառի գրությունը: Օրինակ՝ ռուսերենում մինչև 1835 թ. օտար լեզուներից փոխառյալ գոյականներն էլ Հին մեծատառով գրում՝ Президент, Генерал, Профессор, Департамент և այլն: 1835 թվականին Սանկտսկին բողոքեց և պահանջեց միայն հատուկ անուններ գրել մեծատառով: Սահմանվեց մեծատառով սկսել՝ վերջականից հետո, վերնագրերը, ուրիշ խոսքեր, բանաստեղծության նոր տողը, տերունական անունները, թագավորական տիտղոսները, անձնանուններն ու տեղանունները, բարձրագույն հիմնարկների (վարչական և ուսումնական), տոների, պատմական ժամանակների անվանումները (Հոմերյան էպոպեա, Եկատերինյան դար, Պետրոսյան ժամանակներ և այլն):

ԱՅԼ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Որոշ հեղինակներ շարունակում են ալ. մր. և է բառերը, օժանդակ բայը նախորդ բառին միացած գրել: Օրինակ՝ Ագաթանգեղոսի «Գիրք վիպասանութեան» մեջ (1809 թ.) հանդիպում են. «Արդ բարին, որ է յայ և կամ զչարն, որ է ր դիմակէն» (բ): «Նաէ արարիչ» (խդ), «վաղուցէիւ զու վախճանեալ» (խե) և այլն: «Եղանակ Բիւզանդեան»-ում գրված է՝ «Պիտոր ապրիս, մարդ մը պիտոր չի մնա» (6—7): «1803 թուականը եկե՞է, լմնցեր զացերէ, ամա՛ մեռերէ» (10—11): «Մարդուսալ, կենդանեացալ, ինչպեսոր գուրցերենք արիշ տեղ» (15): «Մարդս ծերանայնէ սիրտնեղ կրլայ» (16): «Նայիսնէ կիմանա, կիրքերը կառավարեռն իր կեանքը» (17) և այլն: «Քաղաքական վիճակ աշխարհիս» (1801 թ.) գրքում՝ «Թէ որ 20 օրէն պակաս հասնիսնէ» (Աճ. 461)²²: Հ. Եղիա վրդ. Թովմաճանյանի «Դպրութիւն նամակաց» (1805) գրքում կարդում ենք՝ «Ինչպէսոր, բանմը լսեցինք, դուռնալ պետք է որ լսես, որոնցոր առժանի կրճանչնաս»: «Անեռեսմը եղերես: Չորս դիդ առերես» (Աճ.

462), «Դիտակ Բիւզանդեան»-ի 1814 թ. համարներում՝ «Իմացվեցաւ մէկ փորձովմը»: «Սկսաւ ստամոքսի ցամբ»: «Տղան կրմարմըրէրկոր, լսելունպէս, ջուրմը խմէնէ» (Աճ. 463)²²։ Զ. Ղ. Ինճիճյանի «Դարապատում»-ից (1824)՝ «պիտոր երևնայ»: «Ասիկա մեծ խաղ մընէ» (Աճ, 466)²²։ «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար» (1832 թ.) գրքում՝ «Մի՞թէ սիրումես և պատուումես Տէրի օրըն և սուրբ պահումես նրան» (Աճ, 468)²²։ «Աւետարանի ճշմարտութեան եւ յօրութեան համար» (1833 թ.) գրքում՝ «ղարդարումենք, զրկումեն մեզ օրվան կերակրիցն և հացիցըն»։ «Մի՞թէ կամենումէք» (Աճ, 469)։ Գաբրիել Ավետիքյանը գրում է՝ «բաղաձայն ըլլայնէ, ձայն հանէիննէ» (176), երբոր (178)։

Օժանդակ բայը նախորդող դերբային միացած գրության շանդիպում ենք «Հյուսիսափայլ»-ում նազարյանի, նալբանդյանի հոգվածներում (1858 թ.)։ Օրինակ՝ չքանումեն, կորուսանումեն, ստանումեն, մնումէ, կրճատվումեն, արտասանումէ (29), փոխումէ, մերկացնումէ, հասկացվումէ, «Ստեղծողը զծուարանումէ ճանաչել իր գործը» (75), գնումէր, սպասումէ, պատահումէր, դնումէի, բարձրանումեն, տեսանումես, ընկնումեն, վառվումեն, վաղումէ, խաղումեն, արածեցնումէր, կարմրումեն, աճումէ (175) և այլն։ Արդեն օրինակներից երևում է, որ միացած գրում են միայն անկատար դերբայի հետ։ Եվ դա ընդհանուր երևույթ է։ Մնացած ժամանակներում, բաղադրյալ ստորոգյալի կազմում, նաև այն դեպքում, երբ օժանդակ բայը նախադաս է, գրվում են առանձին։ Օրինակ՝ նալբանդյանի նույն հոգվածում փոխումէ ձեռ կողքին գրված է ծաղկած է, տեղ եմք հասած, կառող է. նոյն է։ Նազարյանի նույն հոգվածում («Հյուսիսափայլ», 1858, հունվար) մնումեն, հասկացնումեն և ձեռքի կողքին կան՝ կառող էր, անկարելի է. բարտեացել է. պիտոյ է, թույլ են տուած և այլ առանձին-առանձին գրված ձևեր։ Մանդինյանցի «Գարուն»-ի 1866 թ. համարներում միացյալ գրությունների (կոչումէ, յիշումէ, տօնումէ և այլն) կողքին մնացած ձևերը առանձին-առանձին են գրված (պետք է, խառնուելու են, փորձած չէ, աւելի է մխիթարվում, գրված են և այլն)։ Ավելին, ոչ բոլոր հոգվածներում է օժանդակ բայը նախորդող անկատար դերբային կպած գրվում։ Ամսադրի սկզբնական էջերում սովորաբար առանձին-առանձին են գրված՝ քարոզում էին, կոչվում է, համարվում էր, փակում են (264—284)։ Միացյալ գրության հանդիպում ենք հունիս-հուլիսի համարներում (300—400 էջերում)։

«Արարատ»-ում հիշյալ ձևերի կողքին (կարգումեն, կարծումեն) ամենուրեք ընդունված ձևեր են՝ գրած է, տուած է, նոյն են, եկած էր, դտնվել են, չեն առած, նոր են, կեցել է և այլն:

ՏՈՂԱԴԱՐՁ

Այս տասնամյակների տողադարձի կարգը ներկայացնում ենք երկու քերականների ձևակերպումով՝ Ա. Բագրատունու (1852 թ.) և Ա. Այտրեյանի (1866 թ.): Գրադարձի (իմա տողադարձի) ընդհանուր օրենքն է բառը բաժանել ըստ հեգի (վանկի), վանկատել: Ըստ այդմ էլ նրանք նշում են տողադարձի հետևյալ հնարավոր դեպքերը:

1. Բառակցքի և բառամիջի ձայնավորը թողնել տողի վերջում, բաղաձայնը տանել հաջորդ տող՝ ա-րև, սա-րի, ե-ղի, իմաստ, Մա-սիս, ո-ճով, օ-րէնք և այլն:

2. Երկու ձայնավորներից մեկը թողնել, մյուսը տանել՝ մի-այն, Դէ-ից, է-ակ և այլն: Սակայն վերջին ձայնավորը տանել անսովոր է՝ Ասի-ա, գիտէ-ի, ուստի և հանձնարարելի չէ:

3. Երկբարբառները, իբրև մի հնչյուն, չբաժանել՝ շաւ-ղօք, իւրում, դիւ-րին, ու-տել, ե-ղեալ, նաև՝ անուա-նել, Աս-տուած, լուա-նող, ըս-տուէր, պա-տուէր և այլն:

4. Ձայնավորին նախորդող ու-ն կարելի է թողնել նախորդ տողում, իսկ ուր ը է լսվում, գրել ը՝ տու-աւ, կամ տը-աւ, նը-ւէր անսը-ւաղ, աղնը-ւի:

5. Ձայնավորին նախորդող աւ, եւ, իւ տառակապակցությունները կարելի է բաժանել, քանի որ այդ դիրքում լ-ն վ է կարդացվում, բաղաձայն է՝ Ա-ւետիք, բա-ւական, համբա-ւել, ծարա-ւի, թե-ւաւոր, երե-ւելի, հի-ւանդ:

6. Յ-ն ձայնավորի հետ տանել՝ բա-յից, նա-յել, վկա-յութիւն:

7. Երկու բաղաձայններից մեկը տանել՝ աշ-խարհ, եր-կիր, պայ-ծառ, ըն-տիր, ըն-դարձակ:

Ոմանք ձայնորդները հաջորդող բաղաձայնից չեն բաժանում՝ ա-պրել, տա-տրակ, հի-մնել, առա-ջնորդ: Բագրատունին սա վտանգավոր է համարում, ոչ հմուտները (իր ասելով՝ թորոսները) ը-ով կգրեն՝ հի-մընել, տա-տրրակ:

8. Եթե ամբողջական բառն է հաջորդ տող գնում, կարելի է ը-ն չգրել՝ մեծա-հրաշ, ան-վրեպ, լուսա-բնակ, նորա-նշան, մատենա-

դրեմ, յարա-մնայ, աստուածա-խնամ, լուսա-ծնունդ, բարե-շնորհ և այլն:

9. Երկուսից ավելի բաղաձայններից միայն վերջինը տանել հաջորդ տող՝ ինք-նին, դաժե-նել, թարդ-ման, հանգ-չիմ, մանկ-տի, խրնդ-րել, տրտ-մարար, անձ-րև և այլն:

10. Տողի վերջում մնացող և հաջորդ տույ տնջնող անդիրը ընդունել՝ մըշ-տընջենատոր, րնթեռ-նրլոյ, մատ-նրչի, ըղ-մարդ, բակիզբ, հար-ցրն, սկիզ-բըն, բա-նըս, գուն-դրն: Զը չգրել, գրել միայն թգ, ինչպես գրել են նախնիները:

11. Եթե սկ, ստ, սալ, շտ, գր, գգ կապակցություններին նախորդում է ի նախդիրը, այլևս ընդ ըսվում՝ իգ-դեստս, իշ-տե-մարան, իս-կիզբն, իս-սպտնալեաց և այլն:

12. Միավանկ բառերը տողադարձ չեն արվում: Հավ չէ՝ դուռ, դա-ուրն, աս-սրը, խա-ռըն ձևով տողադարձ կատարելու:

Առաջարկվում է նաև բաղաձայնի նման հնչող ուա, ուի, ուեալ, եա, իւ երկբարբառներից չբաժանել նախորդող բաղաձայնը՝ դը-րուի, ա-նուամբ, գը-րուած, վա-ղուան, րս-տուեր, ար-դեօր վայր-կեան, հաի-տեան, ան-ցեալ, շարու-թին, ոչ՝ ըստ-ուեր, արդ-եօք, շարութ-ին, ան-ուամբ, վայրկ-եան և այլն: Ընդդէմ է համարվում՝ մար-դկանց, եր-կնից, մար-տկոց, աղ-ջկան տողադարձը, իսկ սխալ՝ քաղ-դքի, ա-պշիլ, կը-նքել, մա-նկանց ձևերը: Բարդ բառերը չվանկատել, գրել՝ ցիր-ուցան, աղ-ուհաց, կեր-ուխում, հալ-եմաշ, տուր-եառ, ընդ-ունայն և այլն: Մխալ են՝ նոր-անշան, գործ-ակից, շար-ութին, գործ-եցի, ութ-երորդ: Ոմանք տողադարձը կատարում են ըստ հնչման և ոչ ըստ բառի կաղմության՝ բանաս-տեղծ, նոր-ընծայ, եթե գրենք բանա-ստեղծ անհմուտները: Ընդ կկարդան և կգրեն՝ բանա-ըստեղծ: Այստեղյանը նշում է, որ ասպարհարցը տողի ծայրին չպիտի մնա, ասպարհարց ունեցող բառը հաջորդ ձայնավորից չպիտի բաժանվի՝ երկ՝երկու, մի՝մանար, կ՝րն-թանար, չ՝առ-նուր և ոչ՝ երկ՝-երկու, չ՝առնուր:

Տողադարձի կանոններին անդրադարձել է նաև Գ. Այվադովսկին: Ընդհանրապես ընդունելով նախորդները սահմանափակ նունները, առաջարկում է նաև՝

1. Ամբողջական բառն էլ հարկ եղած դեպքում վանկատել՝ տա-րաշխարհ, գարգա-րուեստ և այլն:

2. Յն թողնել տողի վերջում, որ հաջորդ տողում և չկարդան՝ վկայ-ութին, բայ-ից, ընծայ-արան, ոչ՝ ընծա-յարան:

3. Զի կարելի բաղաձայնը ձայնորդի հետ տանել հաջորդ տո-

զր, որովհետև նրանց միջև ը է լսվում, գրել՝ ընգ-դա, հիմ-նել, տատ-րակ և ոչ թե՛ տա-տրակ, ըն-գդա, հի-մնել:

Ղ. Աղայանը իր «Մուրբ լեզու» հոդվածում («Մուրճ», 1890, N 11) քննադատում է լատինաբան հայերին, որ գրում են հաւ-ով, չէ՞ որ ժողովուրդն ասում է հա-ւով: Իր մի այլ հոդվածում՝ «Երկ-բարբառները մեր լեզվում» («Մուրճ», 1891, N 4) մեղադրում է Մխիթարյաններին, որ տողադարձի ժամանակ աւ. եւ իւ տառակա-պակցութիւնները երկբարբառ են համարում և չեն բաժանում իրա-րից, զրոււմ են՝ հիւ-անդ, դիւ-ական, թիւ-աւոր, հաւ-ատող, հաւ-ասար, ծով-ային, հոգեւ-որ, ճիշտը՝ հիւ-անդ, դիւ-ական, աւերակ, թիւրն, հոգեւոր, ժողովուրդ, սո-վոր, առաւօտ, հաւիտեան ձևերն են: Եթէ բաղաձայնն է նախորդում ձայնավորին, դրանց չպիտի բաժանել իրարից, իսկ եթէ ձայնավորն է նախորդում բաղա-ձայնին, կարելի է բաժանել: Բուն երկբարբառները՝ եա, եօ, եւ, իւ անբաժանելի են, իսկ այ-ը՝ բաժանելի: Աւ. իւ-ը բաժանելի են երբ երկբարբառ չեն: Աղայանի այս բացատրութիւնները ճիշտ են, բայց հենց Բագրատունին ու Այստընյանն էլ են գրել, որ ձայնավորին նախորդող աւ, եւ, իւ տառակապակցութիւնները կարելի է բաժա-նել, քանի որ այդ դիրքում աւն վ է հնչում, բաղաձայն է: Աղայանի մեղադրանքը որոշ չափով կարող է վերաբերել նախորդ դարի քե-րականներին: Իրավացի չէ Աղայանը, երբ գրում է, թէ «Թող Մխի-թարյանք մեղնից սովորեն աշխարհիկ լեզուն, ինչպես մենք իրեն-ցից սովորել ենք գրոց լեզուն»²³:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Հակառակ գրաբարի կայունացած ու համընդհանուր ճանա-չում դտած ուղղագրութեան՝ որն ըստ էութեան հետեանք էր այն բանի, որ գրաբարը դադարել էր գործող լեզու լինելուց, դարձել էր գրոց լեզու, իբրև նախնայաց հարուստ ու գեղեցիկ լեզվի նույնպիսի մի գեղեցիկ հուշարձան, աշխարհաբաժ զրական լեզվի ուղղա-գրութիւնը դեռ կայունացած չէր: Թեև դարիս 50—60-ական թվա-կաններին կայունացել էր ո. օ. ե, է, յ տառերի գրութիւնը, մեծա-տառերի գործածութիւնը, տողադարձը, բաղաձայնների գրութիւ-նը, բայց մնում էր լուծելու և միասնական դարձնելու V հնչույթի երեք տառով (ու, ւ, վ) արտահայտելու հարցը, ը-ի գրութիւնը, տա-ռադարձութիւնը: Աշխարհաբարով գրող այն հեղինակները, որոնք հակված էին դեպի դասական, ավանդական գրութիւնը, գրում էին ժամանակի գրաբարի ուղղագրութեամբ, իսկ ովքեր հետևում էին

ժողովրդական արտասանությունը՝ գրում էին հնչյունային ուղղագրությամբ: Մենք տեսանք, որ նույնիսկ միևնույն հեղինակը իր գրաբար գործերում հետևում է ավանդական գրությանը, իսկ աշխարհաբար գործերում՝ հնչյունային:

Ը, վ հնչյութների գրության ասպարեզում եղած տարերային վիճակը նկատի ունենալով՝ այս շրջանի մասին Լեոն գրում է, թե ամեն մեկն իր համար էր գրում, իր սկզբունքով: Իհարկե այս բնութագիրը որոշ չափով ծայրահեղ է: Միջնադարի համեմատությամբ ԺԸ դարը, ԺԹ դարի առաջին կեսը ուղղագրության կարգավորման, կայունացման շրջան էր: Լեոն գրում է, թե նույն թվականին, նույն տպարանում լույս տեսած Ավետիքյանի քերականությունը և Զախչախյանի «Դիտակ Բիզանդեան» կիսամսյա թերթը տարբեր ուղղագրությամբ են գրված²⁴: Մենք համեմատեցինք 1815 թ. Վենետիկում հրատարակված այդ երկու գրքերը և ուղղագրական տարբերություն չտեսանք: Երկուսն էլ հետևում են ավանդական ուղղագրությանը, պահպանում են բաղաձայնական ու տառը՝ ժողովրդա-խոսակցական աշխարհաբար ձևերում և կրավորական բայերում, սակայն, նրա փոխարեն օգտագործելով վ տառը: Ավետիքյանն էլ ունի՝ իմացվեցաւ, շտկրվի և նման գրություններ, Զախչախյանն էլ՝ կը տպվի, չաւրվին, տաւրվան և այլն:

Գրավոր ու բանավոր խոսքի միջև առաջացած ճեղքվածքը հանգստություն չէր տալիս բանասերներին: Մի կողմից ձգտում էին պահպանել սուրբ նախնյաց գրությունը, մյուս կողմից՝ հեշտացնել այն՝ ժողովրդի համար դյուրամբռնելի դարձնելու համար: Գրական լեզվի վրա մեծ ազդեցություն էին թողնում բարբառները, առանձնապես առևտրական կենտրոն դարձած Զուղայի բարբառը: Լեոն հնագույն աշխարհաբար տպագրությունը համարում է 1675 թ. Մարսելում (Մարշիլիա) լույս տեսած «Արհեստ համարողութեան» գիրքը, որը հենց Զուղայի բարբառի ազդեցությունն է կրում: Համառոտ ներկայացնենք զուղայեցոց գրության սկզբունքները, նկատի ունենալով նրա թողած ազդեցությունը.

1. օժանդակ բայի եզակի Յ-րդ դեմքը գրում են ա-ով (ուղորդայ, ամիսայ),
2. չ ժխտականին հաջորդող է օժանդակ բայը գրում են ե (չծ),
3. բայի ել վերջավորությունը գրում են է-ով (դառցէլ, մնացէլ),
4. բառամիջում հաճախ անհարկի յ են գրում (մեծայվոր, բըր-դայգիր),
5. տարածված է վեվագրությունը (թագավոր, նավ, Ավետ),

6. հոգնակերտ վերջավորութիւնը՝ եր, ներ, գրում են է-ով (նաւէր, բազիրկանէր),

7. բառավերջում ա, ո տառերից հետո անխտիր յ են գրում (նոցայ, նոքայ, սայ),

8. հաճախ են գաղտնավանկի ր-ն գրում (սիրտըս),

9. գործիական հոլովի եզակի թվի վերջավորութիւնը՝ աւ գրում են օ-ով (լեղվօվ, բօթօվ),

10. երբեմն բառասկզբի յ-ի փոխարեն գրում են ֆ (հետ կըռ-վիցն, հետ գ օրէն),

11. ձայնավորին նախորդող բաղաձայնական ու-ի փոխարեն գրում են վ (օսմանվի):

Ինչպես տեսնում ենք, ջուղայեցիք հետևում են հնչյունային գրությանը:

Գրական աշխարհաբարում թույլ տված ուղղագրական շեղումների տեսակետից բնորոշ են Վենետիկի միաբան հ. Ղուկաս վարդապետ Ինճիճյանի խմբագրած «Եղանակ Բիւզանդեան»-ը (1813—1819) և 1824 թ. գրած «Դարապատում»-ը: Դրանցում մենք հանդիպում ենք գրեթե բոլոր այն շեղումներին, որ քննել ենք նախորդ էջերում: Ինճիճյանը հետևելով հնչյունային ուղղագրությանը՝ ըսկըգրուներեն էր շեղվում ավանդական գրությունից: Նա սկզբունքով՝

1. հոգնակին գրում է է-ով («Հյուսիսային աշխարհներուն սառույցը աւելի պաղ է, քան մեր աշխարհի եղածնէրը»: «Ինչպէս են աղբիւրնէրը, գետնէրը, լիճնէրը, հիւսիսային կողմի եղօղ ջուրէրը», (Եղանակ, 1819 թ.):

«Ազնուական մարդիկնէրուն վրայ, շատվորնէրուն վրայ» (Դարապատում, 1824 թ.)²⁵:

2. նախորդների նման եմ բայի ձևերը, մը, ալ, նէ մասնիկները գրում է նախորդող բառին կպած (տրվերէր, եկերէր, ըսերեն, սերմմը, անգամմը, մաղղուսալ, նայիսնէ): «Կպած է գրում որ թարմատարը (պիտոռ, երբոր):

3. Գրում է գաղտնավանկի ր-ն (սրտանց, գրոց):

4. V հնչույթը գերազանցապես վ տառով է արտահայտում (տվավ, եղավ, քշվել, շատվոր, զրպարտրված):

5. Ծնթակայական դերբայը գրում է միայն օղ-ով:

Գրական աշխարհաբարի ուղղագրության կարգավորման այս տարիներին, սակայն, կարծիքներն այնքան էին իրարամերժ, որ ուղղագրութիւնը կայունացնելու փոխարեն, նրան տարբերային բնույթ են տալիս: ԺՂ դարի երկրորդ կեսին անհամեմատ կայու-

նացած գրությունը այժմ սկսում է տատանվել, նույնիսկ վենետիկում տարրեր միաբաններ տարրեր սկզբունքներով են գրում: «Բազմավէպ»-ը հետևում է ավանդական ուղղադրությանը, իսկ Ինճիճյանը՝ հնչյունային:

1851 թ. լույս է տեսնում Գրիգոր Օտյանի «Առաջարկութիւն աշխարհաբար լեզուի վրա» դրքուկը, ուր նա պաշտպանում է վե՛վագրությունը, օղ վերջավորությունը, վրա բառի գրությունը առանց յ-ի:

1853 թ. լույս է տեսնում Նահապետ Ռուսինյանի «Ուղղագրութիւն արդի հայ լեզուին» աշխատությունը, որը մեծ ազմուկ է հանում: Դա իր ժամանակի ուղղադրական մի շարք շեղումների ամփոփումն էր: Հեղինակը ձգտում էր օրինականացնել դրանք՝ հենվելով գրության հնչյունային սկզբունքի վրա: «Ուղղագրութիւնը,— գրում է նա,— զրաւոր լեզուին նշաններովը ձայնաւոր լեզուն աչքի ներկայացնելու ըստոյգ ու անսխալ եղանակն է»: «Արտասանութիւնը ձայնաւոր լեզուին համար ինչ է նէ, ուղղագրութիւնն ալ գրաւոր լեզուին համար նոյնն է» (100): Ուղղագրությունը արտասանության նկարագիրն է, ուստի նա պիտի հետևի արտասանությանը և ոչ հակառակը: Ամենափափագելին հնչյունային ուղղադրությունն է: Մովորաբար շփոթվում են լծորդ գրերը, և-ն ու է-ն (եթե—էթէ, դաբեթ—գաբէթ), դ—տ (բանտ—բանդ, գունտ—գունդ), ձ—ծ (հունձ—հունծ, պանծալի—պանծալի), ջ—ճ (բջիջ—բճիճ, ականջ—ականճ), գ—կ (վտանգ—վտանկ, պագշոտ—պակշոտ), ֆ—փ (ֆիլիսոֆա—փիլիսոփա), ալսինքն նուրբ գրերը (տ, ճ, կ, ծ) բռնում են միջակաների (դ, ձ, ջ, գ) տեղը: Ռուսինյանն այն կարծիքին է, որ լեզվի «անուշոթեցան համար նուրբը միջակի տեղ գրելն ավելի ընդունելի է, ինչպէս որ Պոլսում և որոշ գավառներում ասում են՝ ատ, ատանկ, տուու, տիւահար, ծան (ձայն), ծեռք, ծիւն, ծմեռ, ծուկ, ծի, ճորի, կամուրճ, աղճիկ, գէճ, կունտ, կաղտուկ, կոց, կոտի, կորտ և այլն: Բայց ավելացնում է, թե չի կարելի, սակայն, դեղ-ը գրել տեղ, գոդ-ը՝ կոդ, գոշ-ը՝ կոշ, գիւ-ը՝ կիւ, դրանք իմաստը կշփոթեն: Առաջաբանում նշում է, թե «Արդի լեզուն՝ կը տեսնենք, որ ամէն տեղ օրէոր փոփոխություններ բրելու վրայ է, կատարելութիւն ըստացած լեզու մը չ'է, ուղղագրութիւն ու բառացոյց չ'ունէ: Ասոր համար ամէն մարդ ուսած կերպովը կանոն և ուղղագրութիւն կը սեփականէ իրեն»,— և առաջարկում է.

1. Ուրիւն և իւն ածանցող վերջացող գոյականների սեռականը գրել իւն ձևով, ոչ թե եւն, իսկ եալ վերջավորությունը պահպանել: Ինքն էլ գրում է՝ կրթութիւնը, բազմութիւն, կատարելու-

քիանր, խորհրդակցութիամբ, ուշադրութիամբ, միաձուլութիան, աղքատութիան, սովորութիան, վայելչութիան, կարճութիան, արիան, անկիան և այլն: Բայց եւան ածանցր և եալ վերջավորությունը պահպանում է, օրինակ՝ կատարեալ, միջանկեալ, արամեան, հայկադեան, Արարատեան, թեև հետևողական չէ, գրում է նաև՝ որոշիալ, բազմութիան, հետեւիալ: Առաջարկում է ուրեան վերջավորության փոխարեն գրել ուրեև, ուրեամբ-ի փոխարեն՝ ուրեմբ:

2. Բոլոր զեպքերում օ հնչյունը գրել օ տառով՝ թօշակ, քօղ, ցօղուն, կարօղ, սիրօղ և այլն:

3. Պահպանել բառամիջի ոյ-ը, բայց կարգալ ոյ:

4. Ի(ւ)-ն, որ ի ձայնավորին միանալով իւ ձայնն է հանում, կարող է միայնակ էլ այդ իւ-ի տեղ ծառայել՝ յղ(իւղ), հւր(հիւր), աււր(ալիւր), աղբւր(աղբիւր), արւն(արիւն), գօրութն(ղօրութիւն) և այլն: Ինքն էլ գրում է՝ Վիքթօռ Հիկօ (Viktor Hugo), Ռւյ Պլաս (Ruy Blas), Թաթեֆ, Մալսթ:

5. Շնորհալին և ուրիշները բաղաձայնական հնչում ունեցող Վ-ի փոխարեն գրում էին վ տառը (զըվարթ, նրվաստ, նրվազ, նրվազ, ավասիկ), իսկ իւ տառակապակցության փոխարեն՝ Վ տառը (ւղ, հւր, աղբւր, արւն, հւիս): Երանի թե այդ սովորությունը շարունակվեր, այդ զեպքում Վ-ի գրության ներկա դժվարությունը չէր լինի: Զէ՞ որ Վ-ի բաղաձայն հնչելը (պատիւ, զարթ) դժվարացնում է գրությունը:

6. Հոգնակին ջուղայեցիների, Ինճիճյանի օրինակով գրում է Լը-ով (նաւէր, հայրէր): Է-ով է գրում բայի ել վերջավորությունը. եմ բայի բոլոր ձևերը (ասէլ, պատմէլ, էմ, էս, է, էնք, էք, էն): Օրինակներ. «Նոր ծնունդն ի ծնողնէլէն լսէլով իր զաւկնէրուն խօսէլով կ'աւանդէ»: «Փոփոխութիւններ կրնայ կրէլ, որոնք ժամանակին պարագանէրէն կախում ունէն»: «Լեզուի վրա եղած փոփոխութիւններն էն նորանոր բառէրուն աւելնալը»: «Փոփոխութիւններն աշնչափ մեծ էն» (ներած, էջ ա): Հայէրէնէն, Արմէնէնէն, Հելէնէնէնէն և այլն (բ), հետեւած էնք, կը յիշէցնէն²⁶ (16): Այս առթիվ հեղինակը գրում է. «Որովհետև էական բային արմատն է Է, նոյն գիրը վերէն ի վար անփոփոխ պահեցինք խոնարհման մէջ և կը պահենք մյուս ամէն բայէրու յանդերուն մէջ: Այս է արմատը երբեմն Ե գրի փոխելը արգի լեզուին մէջ սնոտի և անօգուտ դժարութիւն մ'էվէլցնէլ է» (էջ 35): Ուստի պիտի գրել՝ էցի, էցիր, էց, էցինք, էցիք, էցին, էմ, էս, է, էնք, էք, էն, էլու էմ, էլու էս, էլու է, էլու էնք, էլու էք, էլու էն և այլն վերջավորություններով:

է-ով գրել անցյալ կատարյալի Ե հավելվածը թե՛ բաղաձայնից առաջ, թե՛ ձայնավորից (էառ, էած, էօծ, էցոյց, էգիտ, էհարց)։

7. Ռամիկները շփոթում են յ-ն (նուրբ, խոնավ) և-ի (թավ) հետ և սխալ ձևով Յիսուս, Յովսէփ, Յոհաննէս, Յուդա բառերը գրում են՝ Հիսուս, Հովսէփ, Հովհաննէս, Հուդա։

Բառավերջի համը (անդիր) յ-ն կարելի է չգրել։ Գրել միայն բառամիջում հնչող յ-ն (արքայի, տղայի) և միավանկ բայերի վերջում հնչող յ-ն (խոյ, վայ, բայ, հայ և սրանցով կազմված բառերում)։ Այս հարցում որոշակի չէ հեղինակի դիրքը։ Թեև տեսականորեն ավելորդ է համարում բառավերջի համը յ-ն, բայց ինքը երբեմն բառավերջում գրում է, իսկ բառամիջում բաց է թողնում։ Օրինակ՝ «Կան նաև դերբայ ըսված բառէր» (31)։ «Ժամանակը հաստատութիւն կուտայ սովորութիան» (ներած., ե)։ «Պատմական և հրամանական» (31), «Եւրոպայի մէջ չկայ» (ներած., գ) և այլն։

8. Հնչյունափոխության հետեանքով փակ վանկի ու-ն և ի-ն փոխվում են ր-ի, որը պիտի գրել՝ սովորցնէլ, ժողովվէլ, կտրվիլ և այլն։ Ինքն էլ գրում է, օրինակ՝ «գրէրու հրնշման այլայլիլը» (ներած., ա)։ «Դեռ չէր արթնցած» (բ), հատկընան (գ)։ «Զրկարէնայ գտնել իր մըտքին սնունդը» (ժ), այսպես էլ՝ հրկէզ, ջրկիր (3), ակընճի, արծըթէ, նրոնէնի, հրնշում, զրսեւ, շրջեւ (24—26)։ Գրում է նաև սկ, ստ, սպ, շտ, զր, զգ կապակցություններին նախորդող թույլ ր-ն՝ րսկսեց, րստացական, ըզգենուլ, ըղղեցի, ըզգեցաւ, րստորակետը և այլն։ Նաև՝ ըզհաւաստիս։

9. Կրավորական բայերի Վ ածանցն արտահայտում է վ տառով։ Օրինակներ. «Լեզու կ'ըսվի ան կարօղութիւնը, որով մարդ մտածութիւնը յօղաւոր ձայնով կը յայտնէ։ Կը տեսվի, որ մի և նոյն լեզուն հին վիճակին մէջ ուրիշ լեզու մըն է»։ (ներած., ա)։ «Դիւրաւ կը տարածվի» (դ)։ «Նոյն իսկ իրարու մօտ ժամանակի հեղինակներու գրվածքներուն լեզուն իրարու խիստ աննման է» (բ)։ «Գրվածներու մէջ կը գործածվին» (7)։ «Կը ճանչվի» (11)։ Այս նույն սկզբունքով է արված նաև «Ռւյ Պլաս»-ի իր թարգմանությունը։ Մի կողմից՝ կողվի, հասկցվի, կը մակաբերվի, կը բացահայտվին, կը խառնվի, յուզվիլ, ընդունված և այլն, մյուս կողմից՝ զուարճանալ, հայեցուած, զուարթ, աղնրականօրէն, ուրուագիծ, ստուերին, մականուանեալն, գեղարեստական, լեզրաց, լեզուին և այլն։

10. Չ, կ, գ նախամասնիկները ձայնավորին նախորդող դիրքում գրում է ապաթարցով։ Օրինակ՝ Զանց կ'ընէ, չ'ունինք, անիրաւ չ'է. կ'ըսվի, կ'անջրպետէ, չ'իսկական աշխարհը և այլն։ Օտյանի

կարծիքով Լթիւ զ նախգրից առաջ ապաթարցի նշանը շղենէք, բառը
 Իրկիմաստ կղառնաւ. Լթիւ չգրենք 'զարաւրֆ. 'զԱնի և գրենք զարաւրֆ.
 զԱնի, կկարդացվեն ոչ թե աւաւրֆ, Անի, ալ՝ զարաւր (վնաս) և աւ
 (այն): Ձայնավորից առաջ այդ մասնիկները (չը, կը, բլ) Ը-ն կորց-
 նում են, տեղը զրվում է ապաթարցի նշանը: Ի՞նչ հոգը նույնպէս
 ստեղծարար և ներկա ժամանակների բայերին նախորդելիս և է ըս-
 տանում (մարդ մը կա, մարդ մը կուգա), իսկ ձայնավորին նախոր-
 դելիս Ը-ն ընկնում է, տեղը զրվում է ապաթարցի նշանը՝ զրիչ մա-
 ուի, նամակ մ'ընդունեցի, մ'ըսեր, մ'երթար: Ընկնում է ասի, ատի
 ղերանունների ի-ն և դարձյալ տեղը ապաթարցի նշանն է զրվում՝
 ասի՛նչ է, անու՛րէ, ատի՛ է և այլն: Ապաթարցի նշանը դնում է նաև
 ձայնավորին նախորդող յ նախգրի վրա. յիս, յաշխարհ, յԱմերի-
 կա: Ուրեմն ընդհանուր կանոն է սահմանել՝ չ, կ, գ, յ. մ մասնիկ-
 ները ձայնավորից առաջ ապաթարց են ստանում, իսկ բաղաձայ-
 նին նախորդելիս զրվում են Ը-ով և առանձին՝ կը յայտնէ, չը հաս-
 կրնան, չը գրէ, չընդունեն» (64): Հետեւողականորեն միացյալ և
 տառի փոխարեն զրում է եւ, այսինքն՝ պահպանում է նախնյաց
 գրութիւնը՝ երևելի, ամենեւին, ակներեւ, եւ, վերեւ, միաձեւ և
 այլն:

11. Առաջարկում է զխաղերով սկսել նաև գիտութեան, ար-
 վեստի անվանումները, Լթիւ մասնավորապէս են օգտագործված,
 օրինակ՝ «Երաժշտութեանը զարթարար արհեստ մըն է» (էջ 105):
 Պահանջում է Աստվածաշնչի անունների ուղղագրութեանը ձեռք
 չտալ:

Սակայն Ռուսինյանի այս կանոնները երկար շղիմացան քննա-
 դատութեան: Պատրիարքարանը, ինչպէս Լեոն է ասում, իր ուսում-
 նական խորհրդի անդամի ձեռնարկն արգելեց. Աճառյանը զրում
 է, թէ Ռուսինյանի փոփոխութիւնները սրբապղծութիւն համար-
 վեցին, 1854 թ. կազմվեց մի մասնախումբ՝ Օտյան, Ռուսինյան,
 Պալյան, Իւթիւճյան և Պարտիզպանյան: Մասնախումբը քննարկեց
 այն: Պարտիզպանյանն ու Իւթիւճյանը դեմ եղան, և առաջարկը
 մերժվեց²⁸: 1873 թվականին Վիկտոր Հյուգոյի «Իւյ Պլասո»-ի թարգ-
 մանութեան մեջ հիմնականում հետեւելով իր հիշյալ սկզբունքներին՝
 Ռուսինյանն, այնուամենայնիվ, որոշվիջումներ փատարեց: Հրաժար-
 վեց է-ով գրել՝ հոգնակի թիվը (այդտեղ զրում է՝ թեւերը, սուսերի,
 պարտքերուս, ընկերներով, տեղերէ, խորհուրդներս, բանալիները,
 փեղկերը, ոսկիները և այլն), անորոշ դերբայի ել վերջավորութիւնը
 (զրում է՝ տանելու, ընդունելով, հաստատել, դուրս հանել և այլն),
 Նմ բայի ներկայի ձեւը (զրում է՝ ընդունված են, չեն խօսիր,

կ'արտօնեմ, գիտենք, բառեր են, բսած ենք, չեմ խոնարհած, սե-
պուհ մըն եմ, ծնեալ եմ, համողեալ ենք, չեն գրեր և այլն): Ուղղա-
գրութեան մնացած հարցերում հետեւում է իր «Ուղղախօսութեան»
սկզբունքներին, որոնք արտահայտված են Վիկտոր Հյուգոյի հիշյալ
վեպի թարգմանութեան մեջ:

Այս շրջանում, երբ չկար ուղղագրութիւնը կարգավորող, միաս-
նական կանոններ մշակող պետական մարմին, երբ զանազան հե-
ղինակներ ու խմբագրութիւններ «նորարարութիւն» էին ուզում ա-
նել լեզվում՝ իրականում ստեղծելով մի տարեւային գրութիւն,
նախնայց գրութեանը հետեւելը, ավանդական ուղղագրութեան պահ-
պանումը ամենաճիշտ սկզբունքն էր, ինչպես «Բազմավէպն» է
գրում, որքան հնարավոր է աշխարհաբարի ընդհանուր ոճը, բառե-
րի ուղղագրութիւնը գրաբարին մոտեցնելը: Մեր լեզվի՝ թե՛ գրա-
բարի, թե՛ աշխարհաբարի (արեւելահայ, արեւմտահայ) բառերի ոչ
միատեսակ հնչումը, բարբառների, խոսվածքների ազդեցութեան
առկայութիւնը, խանդարում են գրութիւնը վարել հնչյունային
սկզբունքով, ուստի ճիշտը ավանդական ուղղագրութիւն պահպա-
նելն է: Իրավացի էր Գ. Այվազյանը, երբ գրում էր, որ եթե մեկը
ւ-ի կամ ու-ի տեղ ղնի վ, յ-ի տեղ՝ ֆ, ո-ի տեղ՝ օ, ապա մի ուրիշն
էլ ք-ի տեղ փ, գ-ի տեղ ֆ, ձ-ի տեղ ց, ջ-ի տեղ շ գրելու իրավունք
կունենա, որը խառնակութիւն կստեղծի, կվնասի ուղղագրու-
թեանը:

Բարեբախտաբար առանձին շեղումներն ու «նորարարութիւն-
ները» չխաթարեցին գրավորի մայր ուղին՝ ավանդական ուղղա-
գրութիւնը: Արեւմտահայ գրականութեան մեջ այն պահպանվեց՝
մասնակի փոփոխութիւններով (աւ>օ, բաղաձայնական ու-ի հետ
ւ-ի զուգահեռ գործածութիւն, տողադարձի, մեծատառի գործա-
ծութեան կարգավորում) և պետք է ասել, որ արեւմտահայերենում
ուղղագրութեան այս անհամեմատ կայուն վիճակի ստեղծման գոր-
ծի առյուծի բաժինն ընկնում է Մխիթարյաններին:

Արեւելեան Հայաստանում 50—60-ական թվականներից սկսում
են հրատարակվել «Արարատ», «Մեղու Հայաստանի», «Հյուսիսա-
փայլ», «Կոտնկ Հայոց աշխարհի», «Գարուն» պարբերականները,
որոնք հիմնականում հետեւում էին ավանդական ուղղագրութեանը՝
առանձին դեպքերում (կրավորական բայերում) բաղաձայնական
ու-ին զուգահեռ գրելով վ տառը:

Սակայն այստեղ հրատարակվում էին նաև բարբառով գրված
ստեղծագործութիւններ, որոնց հիմքում ընկած էր հնչյունային

ուղղագրությունը: 1852 թ. Ախվերդյանի աշխատասիրությամբ հրատարակված Սայաթ-Նովայի Լրագրը, 1858 թ. Արովյանի «Վերք Հայտատանին», ապա Սունգուկյանի դրամաները գրված էին հնչյունային ուղղագրությամբ: Առանձնապես տարբերվում էր Սայաթ-Նովայի Լրագրի ուղղագրությունը: Այդտեղ

1. Լզակի թվի գործիական հոլովը գրված է օ-ով (շրով, աշով),

2. Վ հնչույթն ամենուրեք, բառի բոլոր դիրքերում արտահայտված է վ տառով (նավ, հիվնդի),

3. հոգնակին կազմված է ԼՐ տառակապակցությամբ (պոռնէրիդ),

4. ուն բառասկզբում գրված է օ տառով (օսկի, օվ) կամ վն (վունց, վուրդանց),

5. բաղաձայնները գրված են ըստ արտասանության (մարթ, ախպեր, ծուցտ, վուրթի, վարթի, անդաջ, դառցիլ իս և այլն),

6. թին > թին (մարթութին, համքարութին), իսկ թեք ձևը՝ թէնի (մարդութէնի, համբերութէնով),

7. բառամիջում ուն՝ օ տառով (ծով, մով), եւն՝ է (էրէդ, էրէս, էրկաթ),

8. կու-ն հաճախ դառնում է գու (գութամ, գուդիս),

9. վրա բառի համը յ-ն չի գրում, օժանդակ բայը երբեմն դերբային կպած է լինում (ասումին, տվիլինք, գալիսիս):

Այսպիսով, արեւելահայերենում ստեղծվում է երկու ուղղագրություն: Գրական աշխարհաբարով դրողները հետևում են հիմնականում ավանդական դրությանը, իսկ բարբոսով կամ բարբառախառն աշխարհաբարով դրողները՝ հնչյունային: Բայց այստեղ էլ մասնույում սկսվում են կարծիքների, առաջարկների փոխանակումներ: Առանձին խմբագրություններ, մտածողներ, Ելնելով հնչյունային ուղղագրությունից, այս կամ այն չափով կրկնում են նախորդների առաջարկած ուղղագրական սկզբունքներ:

Անկապուն էր Մանդինյանի «Գարուն» ամսագրի (1866) ուղղագրությունը: Ըստ Լեոյի արեւելահայ գրականության մեջ առաջին անգամ «Գարուն»-ը թավացյալ ու-ի փոխարեն գրեց Վ տառը: Բայց «Գարուն»-ը հետևողական չէ: Մենք արգեն տեսանք, որ 1866 թ. համարներում՝ լեզնագիտութեամբ, ծագեցան, հալելէր, ստիպվեցան, տուղ, սուէր, բացեցան, փոխանցեցաւ, նազ ձևերի հետ հանդիպում են նաև՝ զինուորական, լեզնագիտութիւն, գրուածնեբը, յօղուածները, լեզնով, այլև համարվում, սկսվում, կատառվում, զմայլվում: Այսինքն, այն դեպքում, երբ բաղաձայնական ու-ն

նախորդում է ձայնավոր ու-ին, փոխարինում են վ-ով, թեև տեղ-տեղ ա-ով էլ է փոխարինվում: Հյունագրության ջատագովներից էր հատկապես Ներսիսյան դպրոցի աշակերտ Ա. Տեր-Հակոբյանը:

«Հայկական աշխարհ»-ը, որի խմբագիրն ու հրատարակիչը Մոսկվայի համալսարանն ավարտած Ստ. Ստանիսլան էր, 1866 թ. հոկտեմբեր-նոյեմբերի միացյալ համարում (էջ 287) ներկայացնում է ուղղագրության իր սկզբունքները՝ «Հայկական աշխարհ օրագրի լեզվի կանոնները» խորագրի տակ: Սկզբից ասենք, որ խմբագրությունն ընդունում է եվրոպական կառագրությունը՝ վերջակետը մեկ կետով (.), միջակետը՝ երկու (:): Բերում ենք այդ կանոնները բառացի, պահպանելով ուղղագրությունը և կետագրությունը:

1. Ամէն տեղ, ուր ա տառը հնչվում է որպէս վ, գործ ենք ածում վ տառը. դժուար > դժվար, օգտաւէտ > օգտավէտ:

2. Ամէն տեղ, ուր յ տառը հնչվում է հ, գրում ենք հ. որովհետեւ յ տառը կէս ի ձայն ունէ. Եվ հնում այդպէս էր գործ ածվում, յատակ > իատակ, Ուստի մեք գրումենք յայտնի > հայտնի, յիշատակ > հիշատակ, Յովհաննէս > Հովհաննէս, յայտարարութիւն > հայտարարութիւն. Այն սակաթաթիվ բառերը, որոնք հնչվում են և գրվում են միևնույն կերպով և դանազանութիւնը կազմում են միայն հ—յ տառերը (օրինակ՝ յարկ—հարկ, յետ—հետ), պիտի իհարկէ իմաստով որոշվին:

3. Բոլոր եվրոպական բառերում, որտեղ կա օ հնչումը, գրում ենք օ և ոչ ո տառը (Եվրօպա, դօկտօր). Ո տառը ունէր իւր առանձին հնչումը և այժմ մեծ մասով կորցրել է. Այս տառը պիտի գրվի այնտեղ, որտեղ պահպանել է իւր հնչումը, ինչպէս բառերի ըսկըգբում: Ողորմել և ուտեղ. խօսք և գործ հնչում են միակերպ:

4. Բոլոր օղ վերջավորված բառերում գրումենք նոյնպէս օ տառը: Գրօղ, խմբագրօղ, ինչպէս հնում:

5. Բառերի վերջում չենք գրում յ տառը, որտեղ նա ամենեվի՛ն չէ հնչվում: Առարկա, քահանա, կա, կցանկա: Ուստի այն բառերի վերջում, որտեղ կան ոյ տառերը, գրում ենք օ տառը, հետօ, երեկօ. Դրանք բազմաթիվ չեն:

6. Բոլոր եվրոպական բառերում, որտեղ կա է հնչումը, գրումենք է և ոչ ե, որը նոյնպէս կորցրել է իւր հնչումը և պահպանել է միայն բառերի սկզբում: Եկեղեցի, եկ:

7. Հոգնական թվի էր, նէր վերջավորությունը գրումենք է տառով, ինչպէս հնչվում են: գործէր, բառէր, եկեղեցիներ, աշակերտներ:

8. Թե եզական և թե հոգնական թվի գործիական հոլովը կազմում ենք ոչ ով բայց օվ վանկով, ինչպէս հնչվումէ: բառօվ, խօսքօվ, վանկօվ.

9. Ներգոյական հոլովը կազմումենք մեծ մասով ում վերջա-վորութեամբ. գործում, բառում, խօսքէրում, տնում, տնէրում, սենևակում.

Այս կանոնից բացառություններ կան: Օրինակ՝ ում վերջավոր-ված բառերում. զգացում—զգացման, զգացման մէջ, իսկ հոգնա-կի թիվը կանոնավոր կլինի՝ զգացմունքում»:

Այնուհետև խմբագրությունը հավաստում է, որ կաշխատի հե-տեւել այս կանոններին, պատրաստ է հեղինակների ցանկության դեպքում ուղղել հոգվածները, իսկ «այն հոգվածները, որոնցում պ. պ. հեղինակները չեն ցանկանա հարմարեցնել իրեանց ոճը մեր լեզվի կանոններին, խմբագրութիւնը կտպէ բոլորովին նոյնու-թեամբ» (289):

Սրանց պիտի ավելացնել նաև այն, որ խմբագրությունը հե-տեւելով նախորդներին՝ անկատար դերբայը և նրան հաջորդող եմ բայի ձևերը միասին է գրում, դա երևում է նաև վերևի շարադրան-քից՝ գրումենք, հնչվումէ, կազմումենք և այլն:

Այս կանոններում նշված բոլոր ուղղագրական շեղումները մենք արդեն տեսանք նախորդ դարերում: Մտեփանեն որևէ նոր բան չի ասում: Նա ուղղակի ուզում է իր նախորդների օգտագոր-ծած որոշ ձևեր կանոնական դարձնել՝ հենվելով ուղղագրության հնչյունային սկզբունքին: Միակ նորությունը թերևս վերջակետի և միջակետի եվրոպական նշանների կիրառությունն է: Ստեփանեի նույն կանոններից մի քանիսը ժէ—ժը դարերում արդեն ընդուն-ված ու տարածված էին. օրինակ՝ օտար անուններում է, օ տառերի կիրառությունը, ներգոյական հոլովի կազմությունը:

Այս կանոններով է առաջնորդվել 1866 թ. «Հայկական աշ-խարհ»-ը՝ սկսած 6—7 միացյալ համարից: Բերենք օրինակներ այդ թվականի 8—9 համարներից (հոկտեմբեր-նոյեմբեր):

«Իմանումենք, որ մեր նամակը և հաշիվը հասել են Ձեզ» (22): «Ձեր նամակը գվարճութեամբ ստացանք»: «Ամեն հեղինակի հօ-վածը առանձին կտպվի, եթէ նա ցանկանումէ»: «խօսված բարբա-ռի վերա, խօստանումենք հօգվածը մեզ հանձնէլու հետ հայտնել» (297): «Օրագիրը պիտի շարունակվի 1867 թվին»: «Ազնիվ պօլի-ցիական»: «Արա Գեղեցիկ և Նվարդ» հոգվածից (էջ 267): «Արեւի էր ծագել ճառագայթնէրօվ»: «Տարածումէին անոյշ բուրումնէր»: «Եվ

թվումէր մի էր Արան Գեղեցիկ, միւսըն նվարդ Արաի կին հայ-
աղջիկ»։ «Սվ Արա, բլուրէր և դաշտէր» (275)։

Հաջորդ էջերում տպագրված է Ստեփանոս Նազարյանցի պա-
տասխան նամակը ղզլարցիներին, ուր հեղինակը ոչ միշտ է հետե-
վում այս ուղղադրությանը։ Օրինակ, նա գրում է՝ պատուասիրու-
թիւն, աշխատաւորի, կարող էին, աղնիւ բարեկամներ, մտածող
(էջ 286), վկայ է, պիտոյ է, ընթերցող, հասկացող, վերայ, օգտա-
ւէտ, պարոններ, մատուցանելով, կը համարէի, լուսաւոր և այլն
(286)։

Սակայն Ստեփանեի ուղղադրական սկզբունքը շտարածվեց։
Մտավորականությունը նրա հոգվածներում օտարամուտ, խորթ
ձեեր տեսավ։ Մի նամակում, Ե. Ս. ստորագրությամբ, խիստ է
քննադատվում Ստեփանեն։

Մեկ տարի հետո Ստեփանեն հիմնականում հրաժարվեց իր
հիշյալ սկզբունքներից։ Իր «Հայկական աշխարհ»-ի 1879 թ. հրա-
տարակությունում վերականգնված են՝

1. բառասկզբի և բառավերջի յ-ն՝ յունվար, յուսով, յունական,
յիշում եմ, վերայ և այլն,

2. վահնչյուն ու-ն և ւ-ն՝ լեզուագիտութիւնն, կալուածն, դժու-
ար, տուեց, նուիրուած են, մանաւանդ, լուսաւորութիւն, հազուա-
գիտ, լեզուաւ,

3. միայն կրավորական բայերում է ու-ին զուգահեռ վ գրված՝
կրթվող, գործադրվում, կառաւարվում, ընտրվող։ Երբեմն էլ գրում
է ւ-ն՝ գտնւում էի,

4. գործիական հոլովի ու-ն՝ յուսով եմ, առնելով, սորանով,
միջոցով և այլն,

5. ող վերջավորությունը՝ ընտրվող, կրթվող, առաջնորդող,
կարող և այլն,

6. հոգնակիի եր վերջավորությունը՝ կանոններ, այգիներն, հո-
ղաբարձուներին, գինուորներ և այլն,

7. բայական նախածանցներ կ և շ-ն բաժանում է ապաթարցով՝
կ'ապշին, չ'լինի, չ'գիտեն, կ'շարունակուի, կ'գնանք, չ'բացուած
և այլն։ Փաստորեն կանոններից մնում է միայն օժանդակ ալի
միացած գրությունը դերբային, դրա պատճառն էլ տարածվա՞ լի-
նելն է։

Հետագա տասնամյակներում (70—90-ական թվականներ)
պարբերականները հետևում են հիմնականում ավանդական ուղղա-
գրությանը, պահպանում են բաղաձայնների, ր, ու, օ, ե, է ձայնա-
վորների, յ կիսաձայնի, երկհնչյունների, մեծատառի ու տողա-
238

դարձի ընդունված կանոնները, եթե նկատի չունենանք առանձին շեղումներ, որ հետևանք են գրողի ոչ բավարար համոթյան: Մնում են չլուծված Կ հնչույթի գրավոր արտահայտության, կը, չը, մը մասնիկների, օժանդակ բայերի, բարդ բառերի ուղղագրության և տառադարձության հարցերը, հարցեր, որոնց մի մասը առաջացել էր միայն գրական աշխարհաբարում, աշխարհաբարի ծնունդ էր և չէր խախտում ավանդական գրությունը:

Ավանդական ուղղագրությանն են հետևում հեղինակների, մամուլի մեծագույն մասը՝ Մամուրյանի «Արևելյան մամուլ»-ը (1896 թ.), «Լուսա»-ն (1896—1897—1898 թթ.), «Արևելք»-ը (1888 թ.), «Աղբիւր»-ը (1888 թ.), «Ճռաքաղ»-ը (1858 թ.), «Փարոս Հայաստանի»-ն (1880 թ.), «Մուրճ»-ը (1888—1889 թթ.), «Բաղմավէլ»-ը (1885—1890 թթ.), «Հանդէս ամսօրեա»-ն (1888—1890 թթ.), «Արձագանք»-ը (1885—1888 թթ.), «Հանրագիտարան»-ը (1896 թ.), «Տարաղ»-ը (1893—1899 թթ.), «Մեղու Հայաստանի»-ն (1881 թ.), Նուրիխանյանը («Պատմութիւն ժամանակակից», 1881 թ.), Պոռշյանը, Բաֆֆին, Շիրվանզադեն, Պարոնյանը և այլ ստեղծագործողներ, որոնք պահպանում են ո—օ, ե—է, ը ձայնավորների, յ կիսաձայնի, բաղաձայնների գրության ընդունված կանոնները:

Պիտի նկատել, որ արևմտահայ հատվածում ավելի հետևողական են պահպանում ավանդական գրությունը: Այդ հարցում խոշոր դեր են խաղում Մխիթարյաններն ու Պոլսի մտավորականությունը, պատրիարքարանը:

Ընդհանուր երևույթ է. թավացյալ ու-ն պահպանող մտավորականները նույնպես այդ տառը փոխարինում են վ-ով, երբ նրան հաջորդում է ու ձայնավորը (գրում—գրվում): Միայն Պերճ Պոռշյանն էր, և մի քանի ուրիշներ, որ համառորեն երկու ու իրար կողքի էին գրում:

Գրիգոր Օտյանի «Գոհարներ»-ում ընդհանրապես պահպանված է ավանդական ուղղագրությունը: Այդ գրքում ընդունված ձևեր են տպուած, կատարուած, բացուած (17), ամահուան, զղուանք, անարուեստ, թեև տեղ-տեղ էլ, կարծես վրիպելով, գրում է վ տառը: Օրինակ՝ «չը պիտի լսվի» (79): «Որչափ կին ու աղջիկ կայ Պուլկարի հաքված, սգված կը կայնին, կը պըտրտին» (147):

«Փարոս Հայաստանի»-ի 1880 թ. հունվար—հունիս համարներում պահպանվում է թավացյալ ու-ն: Օրինակ՝ անուանեալ, ծնուած

1820 թ., որպէս զինուոր, ցոյց տուաւ իր հանճարը (1), թաղուեցաւ, զիպուած, Մոսկուա, ի 988 թուականին, բաժանուած, գրուած, յօդուած (31) և այլն: Միայն այն դեպքում, երբ ձայնավորական ու-ին է նախորդում այդ տառը, նրա փոխարեն գրում է վ (թոյլ է տրվում պատուելի անդամներից բնակելու և այլ մարդոց» (48) և մեկ էլ ժողովրդական ձևերում («Երբեք չբաժնվիմ քեզնից», 48):

Հյունագրությանն են հետևում. Արասխանյանի «Մուրճ»-ը (1889 թ.), օրինակ՝ «Այս օրանից իւր զիրկն է առնում»: «Իրան նւիրում է հայ կյանքին»: «Շրջապատած տոկուն ոյժերով»: «Ամեն խօսակցութիւն, որ եղած է «Մուրճ»-ի հրատարակելուց և մինչեւ իսկ հրատարակման թոյլտուութիւնը ինդրելուց առաջ» (1): Այդպէս էլ՝ Աղւանից, գտնում, փլած, հաւաքել, լցած, ասում, ցրցում, դժար, յստակած, կալանաւորում, Մոսկուայի, թականի, հանձնում և այլն: Պոռչյանը «Յեցեր»-ի մի հատվածում, որ տրված է 1889 թ. «Մուրճ»-ում (էջ 742) նույնիսկ ձայնավորական ու-ին նախորդող բաղաձայնական ու-ն է պահպանել՝ երկու ու գրելով իրար կողքի: Օրինակ՝ «Աչքերը ծածկուում են և շփուելով ընտելանում լուսին»: «Գործողութիւնները կատարուում են նորա ներկայութեամբ» (743): «Խոստովանուում է Բալասան աղէն» (744): Երբեմն էլ բաղաձայնական ու-ի փոխարեն է գրում («շատուր ենք»):

Տիգրան Նազարյանի «Աղբիր»-ի (1888) լջերում՝ յուղուած, զինուորներով, հարուածներ, Աստուած, ազնուական ձևերի կողքին կան նաև՝ իրար ընդհարվում, դարկվում, փշրվում, համարվում, յաջողվում ձևերը (71—75): Վերջինիս պատճառը դարձյալ երկու ու-ի իրար հաջորդելն է, որ դժվար է արտասանվում: Հորանջից աղաւթելու լավագույն միջոցը բաղաձայնական ու-ն վ-ով արտահայտելն է, դրա համար էլ գրում են՝ խափանուած, ապստամբուի, բայց պահվում, նկարվում: Այս ու-ի փոխարեն հանգիպում է նաև ւ տառը՝ վաղանից, պատական, արտասել, կտրւել, շրտեսնած, ցերեկա, խառնեցան (450):

1872 թ. «Մշակ»-ում հանգիպում ենք թէ՛ բաղաձայնական ու-ի, թէ՛ ւ-ի և թէ՛ վ-ի Օրինակներ. «Տպուեցաւ յունվարի 1-ին»: «Այդքան էլ շէր պահանջվում»: «Տարվա այն տօներին եկեղեցի դնար»: «Տէրութենից էր կախված թոյլտուութիւնը» (1): «Ստացուեցաւ մի դարհուրելի լուր»: «Պարսկաստանի թշուառ վիճակը»: «Պիտի տեղափոխուին»: «Ալիւրի փութը ծախվում էր 30 կոպէկով»: «Ստիպուած էր: Պատուով դիմացել է: Մայրենի լեզուի ուսուցու-

մը» (19) և այլն: Այդպես է գրվում նաև 1886 թվականի համարներում: Մի կողմից՝ զինուորական, թիւն, արուեստական, լեզուի, յօդուած, մատուցութիւն, մյուս կողմից՝ միախառնվելով, կազդուրվելու է, նետաքրքրվեցէք, պիտի համոզվիք, ծածկվում է, խորասուզվում էք, լուսաւորված, գետնազված, տարվա և այլն: Այդ ուղղագրութիւններ «Մշակը» շարունակում է նաև հետագա տասնամյակներում:

«Արծազանք»-ի 1887—1888 թթ. համարներում մի կողմից՝ չեն ուղարկուիլ, լեզուի, չազատուած, տարեհաշուի, անուան, նուէր, մյուս կողմից՝ բաժանվում, սխալվում, գրվում, ընդունվում է, վաճառվում են, նաև՝ նմանում, կուում, գտնում են:

Երբեմն միևնույն ամսագրում, շաբաթաթերթում կամ օրաթերթում տպագրված տարբեր հոդվածներ տարբեր ուղղագրութիւն են ունենում: Օրինակ, 1888 թ. «Աղբիւր»-ում տպագրված «Նաւակ» բանաստեղծութիւնում պահպանված է Վ հնչույթի ավանդական գրութիւններ, իսկ «Մի խրատ» պատմվածքում բաղաձայնական ու-ի փոխարեն վ է գրված (ազատվեց, ճմռթված): Մատուրյանը, Հովհաննիսյանը բնդհանրապես պիտի են ավանդական ուղղագրութեամբ, որիչները շեղվում են: Բաֆֆու հոդվածներում (տպագրված 1889 թ. «Արծազանք»-ում) օգտագործված են թե՛ բաղաձայնական ու-ն, թե՛ վ-ն (խոստովանվում, յօդուած):

Շատ բառեր կան, որ երեք գրութեամբ էլ գրվում են: Օրինակ՝ լեզուի—լեզուի—լեզվի, թուիւն—թիւն—թվիւն, արուեստական—արուեստական—արվեստական, պսակուած—պսակւած—պսակված, նուէր—նւէր—նվէր, յօդուած—յօդւած—յօդված, զինուոր—զինուոր—զինվոր, շինուած—շինւած—շինված (և կրավորական բայերն բնդհանրապես), ազնուական—աղնական—ազնվական, նուազ—նըւազ—նվազ, յունուար—յունւար—յունվար (վերջինս գերազանցում է), թոյլտուութիւն—թոյլտուութիւն—թոյլտվութիւն, հարուած—հարւած—հարված և այլն:

Այսպիսով, շարունակվում է Վ հնչույթի գրավոր արտահայտութեան այն լուռ պայքարը, որ շատ վաղուց էր սկսվել: Այդ պայքարի հիմքում ընկած է երկու սկզբունք՝ ավանդական, ըստ որի պահպանվում է թավացյալ ու-ն, և հնչունային՝ ըստ որի թավացյալ ու-ի փոխարեն գրվում է Վ կամ վ տառը: Ավանդական ուղղագրութեամբ գրված գործերում («Արեւելեան մամուլ», «Հանդէս ամսօրեա», «Լումա», «Տարագ», «Բազմավէպ» և այլն) թավացյալ ու-ն գերազանցապես արտահայտվում է ու տառով, վ-ն օգտագործվում է միայն դասական գրութեամբ, իսկ հնչունային ուղղագրու-

թյամբ գրված գործերում՝ Վ կամ Վ տառով: Բարբառային գործերում և հասկապես կրավորական բայերում ու ժողովրդա-խոսակցական ձևերում օգտագործում են Վ տառը:

Ահա այս շրջանում, երբ բաղաձայնախորդ ու-ն, որ Վ էր հնչում և կոչվում էր թավացյալ (բաղաձայնական) ու, կա՛մ պահպանվում էր, կա՛մ փոխարինվում Վ-ով կամ Վ-ով, հանդես եկավ ժամանակի անվանի դրող-մանկավարժ Ղազարոս Աղայանը՝ «Աղբիւր»-ի 1888 թ. X 12-ում «Մի թեթև հրահանգ մեր լեզուի ուղղագրութեան մասին» հոդվածով, ուր նա գրում է.

1. Ազ, ըշ, ըս կապակցութիւններից առաջ ը հոդը ն է դառնում, ուստի պետք է գրել՝ նամակն ստացաւ, գործն սկսվեց, Պետրոսն զգաց և ոչ՝ նամակը ստացաւ (էջ 99):

2. Ո գիրը բառակզբում կարդացվում է վօ, ուստի նախորդ բառի վերջնատառ ը-ն ն-ի չի փոխվում, պիտի գրել՝ Մանուկը որբ է, ոչ՝ Մանուկն որբ է:

3. Ա նախամասնիկը ու-ին նախորդող գիրքում գրել ը-ով և կոչած. իսկ Ազ, ըշ, ըս տառակապակցութիւններին նախորդող գիրքում՝ ապաթարցով: Այսպես՝ կըորբանայ, կըոշնշանայ, կըորոնէ. կրողորմա, կըորդեզդէ, բայց՝ կ'սկսէ, կ'զգայ, կ'շտապէ և այլն: Անձնական դերանունն էս-ը կարդացվում է yes, իսկ օժանդակ բայ էս-ը՝ es, ուստի դերանունից առաջ որոշյալ հոդը մնում է ը-ն, իսկ օժանդակ բայ էս-ից առաջ ը-ն փոխվում է ն-ի: Օրինակ՝ Այս յօդուածը էս էմ գրել, բայց՝ Դու այս յօդուածն էս գրել:

4. Է-ով վերջացող բարբառային բառերը գրել է-ով, օրինակ՝ ըստե, ընդե, կերե, գնացե, քե, վե, բե, կե և ոչ՝ ըստէ, ընդէ, կերէ. գնացէ, ինչպես նավասարդյանն է գրել իր հեթիաթներում: Այնուհետև անցնում է բուն խնդրին՝ Վ հնչույթի գրավոր արտահայտությանը՝ «Ի(ւ), վ, ուում, վում, տում» ենթավերնագրի տակ: Համառոտ ներկայացնենք հոգվածի այդ մասի բովանդակութիւնը:

Մեր բայերի ում վերջավորութիւնը թե՛ արևմտահայերի, թե՛ մեզ համար «գայթակղութեան քար» է դարձել: Կրավորականի դեպքում մի ու էլ է ավելանում և դառնում է գրւում, նկարւում: Դրա համար էլ ոմանք ու-ի փոխարեն Վ են գրում, ոմանք՝ Վ (գրվում, գրւում), ոմանք մի ու-ն էլ են և դարձնում (ասված—ասւած, փրկված—փրկւած, գրվիլ, խօսվիլ), ուրիշները պահպանում են ու-ն (ասուած, փրկուած): Ոմանք անուկները գրում են Վ-ով (յօդւած), բայերը՝ Վ-ով (ասված), ոմանք էլ բոլոր դեպքերում գրում են Վ-ով, իսկ Վ-ն գրում են բառավերջում (թիւ—թի, հաշիւ—հաշի):

Այս խառնակությունը պարզելու համար երկու բան պիտի պարզել՝ ինչպե՞ս է ժողովուրդը հնչում և այդ հնչման համար ի՞նչ հնչյուն են տվել մեզ նախնիք:

Մենք չգիտենք, թե ինչպես են մեր նախնիք հնչել ու-ն ձայնավորներին նախորդող դիրքում, բայց հիմա (80-ական թվականներին) սոսկ ու չեն հնչում, այլ՝ ուվ և րւ, գրում են թուոյ կարգում թուվոյ կամ թըոյ, ձուոյն՝ ձուվոյ կամ ձըվոյ, արուեստը՝ արուվեստ կամ արւեստ, թոյլատուութիւնը՝ թույլատուվութիւն կամ թույլատրութիւն. որից էլ՝ թույլտվութիւն. այսպես է նաև Արաբատյան և մյուս բարբառներում: Ամեն տեղ ու-ն ձայնավորից առաջ դառել է Վ, եթե հաշվի չառնենք ը ձայնը: Ինչպես որ տալ կարգում ենք տրւաւ, նրա—նըրա, վրա—վըրա և այլն: Ո՞ր վ-ով գրել, երկուսով էլ (էջ 103): Հայերենում Վ-ով բաց չի սկսվում, եղածները շինովի են, երբ ուղեցել են այբբենական կարգով տաղեր հորինել, տողը Վ-ով են սկսել:

1. Մեր նախնիք ուղեցել են ու ունենալ, Վ-ն դրել են ո-ի կողքին (ու),

2. ուղեցել են և ունենալ, Վ դրել են ե-ի կողքին (եւ),

3. ուղեցել են օ ունենալ, դրել են ա-ի կողքին (աւ),

4. շատ տեղեր գրել են եաւ կարդացել են եօ (օրինակ՝ հողնակի գործիականը, եավթն), տեղ-տեղ ե-ի հետ հնչել է իւ (եւղ, դեւղ, առեւծ), որ հետո դրել են ի-ի կողքը՝ առիւծ, գիւղ, իւղ,

5. բառավերջում աւ, եւ, իւ հնչելու համար Վ են դրել և ոչ թե վ, բացի ո-ից, որովհետև այս դեպքում ու կկարդացվեր,

6. երկու ձայնավորների միջև ընկած Վ ձայնը Վ-ով են գրել՝ աւազ, գաւակ, հիւանք, յաւէտ: Եթե մեր նախնիք ասել են տարւոյ, ինչո՞ւ մենք էլ չասենք տարւա և ասենք տարուայ: Նրանք ասել են գործւով, ինչո՞ւ մենք չասենք գործւեց, գործւող, գործւած,

7. ի-ով վերջացող գոյական անունների սեռականը դառնում է տյ և ոչ վոյ (գինւոյ, տարւոյ, եկեղեցւոյ, գոշւոյ): Ուղեագի ոչ հակասություն լինի և ոչ էլ մի քանի տեսակ ուղղագրություն և այն մոտիկ լինի արևմտահայերենի գրավորին ու նախնյաց լեզվին, պիտի գրել Վ և ոչ վ:

Բառերի մեջ լաված աւ, եւ, իւ, աւ, ւե, Վի, :ու, տ հնչյունակապակցությունները գրել Վ-ով և ոչ վ-ով: Պոչավոր վ-ն գրել միայն բառակզբում և մեկ էլ ո-ի մոտ, որ օվ կարդացվի (հով, ծով, մով, կով, կրով, քարով, փայտով): Վ-ն պահել սահ վ-ով սկսվող բառերի ածանցման կամ բարդացման ժամանակ՝ զօրավար, միավանկ, անվայել, ոսկեվաղ, անվախ, ժամավաճառ և այլն:

Աղայանը նկատում է, որ հայկաբանները դժվարությամբ իրենց ուն կփոխեն, բայց եթե Լրբևէ փոխելու լինեն, և կդրեն և ոչ թե վ: Գրաբարի և մայրենի լեզվի ոգուն ընտելացած մեկը Երբեք չի գրի վ, կգրի ա:

Ինչ հակասություն է, ասում է նա, գրել՝ արև, տերև, տարաւ, բերաւ, յաւասար, յաւիտեան, հիւանդ, հաշիւ, գաւով, ցաւով. դինւոր, հատած, թիւ, ձիւ և չգրել՝ ասած, խօսաւ, տարւել, բերւել, Ծիծաղելի է, գրել թիւ և թվել (համբել), հաշիւ և հաշվել, զգանք և զգվել, պիտի գրել՝ զգանք և զգել, ինչպես որ եղել է՝ զգուանք, զգուել: Եթե գրենք զվարճ, զվարթ, պիտի գրենք նաև՝ արեվ, բարեվ, հավատ, հիվանդ, բարով, դարով, յօղ, վօղ, կէրէլ, բէրէլ և այլն, ինչպես գրում է «Հայկական աշխարհ»-ը: Այսինքն գրենք ըստ նշման, արտասանության: Մենք և գրելով՝ մեր հին ու նոր լեզվի շենքն անարատ կըպահենք, բայց վ գրելով հիմնովին կրխախտենք նրա գեղարվեստական շէնքը: Կարելի է գրել գտնւած, մատնւած, խնդրուամ, որ սխալ չկարդան՝ գտնւած, մատնւած, խնդրւած: Եթե ժողովուրդը ուն դարձնում է ը (գրքում ա), ինչո՞ւ մենք էլ ձայնավորին նախորդող ուն չվերացնենք, որ ա էլ չէ, այլ ը կամ ա: Այս փոփոխությունն անհրաժեշտ է իր առաջին քայլերն անող աշխարհիկ լեզվի համար: Իր «Սուրբ լեզու» հոգվածում («Սուրճ», 1890 թ., № 11) անճոռնի ու օտարամուտ է համարում խօսուում, տարուել, յօղուած, հատուած, բանուոր, զինուոր, տարուայ, խօսուել ձևերը: Զայնավորից առաջ ու չի կարելի գրել, նույնիսկ ուն ձայնավորից առաջ բաղաձայն է: Եվրոպացիք գրությունը սլահել են հնի նման. այդ իրենց գործն է, ասում է նա, իսկ մենք հնչական սկզբունքին ենք հետևում. ինչպես ասում ենք, այնպես էլ գրում ենք: Որոշ մարդիկ ասում են՝ մենք էլ գրուում, ասուում, ընդունուում գրենք, ինչպես Պերճ Պոռչյանն է գրում, բայց կարգանք գրում, ասում, ընդունում: Դա լավ չէ:

Իր մի այլ հոգվածում՝ «Երկբարբառները մեր լեզվում» («Սուրճ», 1891 թ., № 4), Աղայանը գրում է, թե Ներսիսյան դպրոցում Պոռչյանը սովորեցնում է իր պոչավոր ուսուն և ուն, Ասիլյանը՝ ուն և ուն, իսկ Մառխասյանը՝ վն, Մի այլ հոգվածում՝ «Մեր գրերի թիվը ինչու էր 36» («Սուրճ», 1891 թ., № 12), գրում է, թե հտնամուտ են մեր է. ի. յ. վ գրերը: Ըստ Հայկազյան բառարանի, Թրակացու թարգմանիչները չեն հիշատակել վ գիրը: Եթե մի գիր բառասկզբում գործածվում է, իսկ բառամիջում և բառավերջում՝ ոչ, ուրեմն վերջնամուտ է: Մեր եչը հին է, իսկ էն՝

վերջնամուտ²⁹, և-ն հին է, վ-ն՝ վերջնամուտ, որովհետև առաջինը շատ տեղեր է գործածվում:

«Բառասկզբում ով գրվում է, իսկ վո չի գրվում, ուրեմն մեր ո գիրը հնուց է եղել վօ և ոչ օ»: Այս տարօրինակ եզրակացությունները մերժվեցին Աճառյանի հիմնավոր քննադատությամբ: Աղայանի թեպի մեր որոշ տառերի Լտնամուտ լինելու մասին գիտական հիմք չունի և լեզվաբանության մեջ մերժված է:

Աղայանի հյունագրության այս առաջարկությունը բավական կողմնակիցներ ունեցավ՝ «Աղբիւր», «Մուրճ», «Տարազ» և այլն: Դրան օգնում էր իր հեղինակությունը և այն, որ նա դասագրքի հեղինակ էր, «Աղբիւր»-ի խմբագիր, մյուս կողմից էլ և-ն բաղաձայնական ու-ի տեղ դեռ վաղ միջնադարից էր գործածվում, 18—19-րդ դարերում Մխիթարյաններն էլ էին գործածում, միայն 19-րդ դարի կեսերից սկսեցին վերադառնալ ու-ին: Ուրեմն, դա նորություն չէր, ինքը՝ Աղայանն էլ իր մի նամակում, ուղղված «Նոր դպրոցի» խմբագրությանը, գրում է. «Ես ինձ իմանական ուղղագրության անդրանիկ նախաձեռնող չեմ ներկայացրել երբեք, այլ միայն պաշտպան եմ հանդիսացել մի բուն հայկական ուղղագրության, որ խափանած են եղել լատինական ուղղագրության հետևողները՝ վիւ-նի տեղ գրելով ու, որ ուսմական լեզուվ գրողներն էյ շինել են վ»³⁰:

Իհարկե, Աղայանը մեղանշում է ճշմարտության առաջ, կարծելով, թե և-ն «բուն հայկականն է», իսկ ու-ն լատինասերներն են մտցրել: Դասական գրաբարին ու-ն է, և-ն դասական գրաբարում այդ գիրքում հանդես չի եկել, նա գրվում էր իբրև երկրաբառի բաղադրիչ ձայնորդ (աւ, եւ, իւ), ձայնավորների միջև ընկած գիրքում իբրև ինքնուրույն ձայնորդ բաղաձայն (աւաղ, նաւավար, թեւաւոր, թիւ) և ի-ով վերջացող անունների սեռականում (եկեղեցւոյ, թագուհւոյ): Իրականում ձայնավորի՞ն նախորդող ու-ն է հետագայում վ հնչել և որի հետևանքով էլ հաճախ և կամ վ տառն է գրվել: Այդ է ցույց տալիս մեր ներկայացրած պատմությունը: Այդպես է ներկայացնում Այտընյանը, բուն գրաբարը նա համարում է դրուիլ, շիւուած, գտնուիլ, ձևերը, որոնք դարձան շինւած, գտնիլ, դրիլ (աշխարհաբար գրքերում նաև՝ դրվիլ, շինվիլ, գրտնրվիլ), իսկ 19-րդ դարի 60-ական թվականներին նորից սկսեցին վերականգնել ու-ն (շինուած, դրուիլ, գտնուիլ): Այդպես վարվեցին հատկապէս Մխիթարյանները՝ Բագրատունի, ապա Մենեվիշյան, Այտընյան և այլք:

Աղայանի այս առաջարկը սկսեց տարածվիլ արևելահայ պար-

բերականներում, «նոր դպրոցը», Արասխանյանի «Մուրճը» սկսեցին վաճառել ու-ի փոխարեն գրել և տառը: «Բազմավէպը», որ ավանդական ուղղագրությամբ էր գրում, իր 1897 թվականի սեպտեմբերի համարում տպագրում է Գրիգոր Բալասանյանի հոգովածը՝ ոչ, չ, չ, չի մասնիկների մասին, որ հեղինակը անդրադառնալով նաև հյունագրությանը՝ արգարացնում է Աղայանին:

Հիշատակելով, որ Աղայանի և-ն պաշտպանում են «Մուրճը», «Տարազը», «Աղբիւրը», Բալասանյանը հարց է տալիս, ինչո՞ւ չգործածել նւէր, ազատւած. քական: Այստեղ կորչում է ո-ն (թուական > թական) և հարկ է, որ այդպես լինի, ո-ն ավելորդ է, առանց դրան բառը սահուն է, դյուրին է հնչում (էջ 438):

Հոգովածագիրը գովելի է համարում ազատամիտ, առաջադիմական «Մշակ» լրագրի ուղղագրությունը: «Մշակ»-ին նա մասամբ համաձայն չէ վ-ի գործածության խնդրում: Միայն գտնվում է, ազատվում է, խոստակվում է և այլ այսպիսի բառերում է վ-ի գործածությունն ընդունում, այսինքն այն բառերում, որ թավացյալ ու-ին հաջորդում է ձայնավորական ու-ն, որ երկու ու իրար կողք չընկնեն:

Բայց հյունագրության դեմ սկսեցին գրել ժամանակի բանասերներն ու լեզվաբանները:

Վ-ի և ւ-ի գործածության համար դրագետների լուռ պայքարը, որ դեռ միջնադարից արտահայտվում էր այդ տառերի զուգահեռ կիրառությամբ, այժմ ստանում է տեսական, բանավեճային բնույթ: Այդ առթիվ հոգովածների տպագրությունը տևում է մինչև XX դարի սկզբները:

1889 թվականի «Մուրճ»-ի 5-րդ համարում լույս տեսավ բանասեր Ս. Սարգսյանի «Հին, թե վե՞ (ւ-վ)» հոգովածը (էջ 780—789), որ նա քննադատելով Աղայանին, մերժում էր հինագրությունը և առաջարկում ւ-ի փոխարեն գրել վ: Առարկելով Աղայանին՝ Սարգսյանը գրավորից հանում է բաղաձայնական ու տառը և այն փոխարինում վ-ով, գրել ոչ միայն ապկեց, տրվեց, այսինքն կրավորական բայերը, այլև՝ լեզվի, աստված, յոգված, ազնվական և այլն: Սարգսյանը և-ն ձայնավոր հնչյուն է համարում՝ ելնելով նրա այն կիրառությունից, որ միանալով ա, ի, ե ձայնավորներին՝ կազմում է երկբարբառ: Սա, իհարկե, ւ-ի խմակողմանի բնութագիրն է, և Սարգսյանն այստեղ սայթաքում է: Իրականում հյուն և՛ բաղաձայնական կիրառություն ունի, և՛ ձայնավորական, ինչպես ցույց են տվել Ն. Ադոնցը, է. Աղայանը և ուրիշներ: Քերականները

էլ զնելով ձայնավորների շարքը, չեն մոռացել նրա նաև բաղա-
 ձայնական կիրառությունը (հիշենք Բաղրատունու կարծիքը): Սար-
 գրսյանը բացառություն կարգով ա. ե, ի տառերին հաջորդող Վ-ն
 չի փոխարինում վ-ով, որովհետև այդ դիրքում Վ-ն երկբարբառի
 բաղադրիչ է: Սխալ է համարում ի տառակաղակցությամբ վեր-
 ջացած բառերի սևոականը և մյուս թեր ձևերը Վ-ով գրել, դարձյալ
 այն պատճառով, որ այդտեղ Վ-ն ձայնավոր է: Զի կարելի զրել
 կառով, հաշի, բով, պատական, որովհետև Վ-ն ինքնուրույն կի-
 րառություն չունի: Նրա կարծիքով՝ առանձին վերցրած Վ-ն ու չէ
 այլ՝ ի: Ավելի լավ է գրել՝ կովի, բվի, ազնվական: Այնուհետև
 Սարգսյանը բերում է նաև մի այլ փաստ: Ու-ն առաջ է եղել երկ-
 բարբառ (ou, ou), այժմ նա պարզ ձայնավոր է, ուստի եթե այդ
 պարզ ձայնավորը բառն աճելիս փոխվում է Վ հնչյունի, պիտի գրել
 վ տառը (առվի, կառվի): Եթե գրենք քի, կուի, մենք կփոխենք
 Վ-ի ձայնավոր լինելը:

Ինչպես տեսնում ենք, Սարգսյանի առարկությունը հյունա-
 գրության դեմ այստեղ մի հիմք ունի, այն, որ նա ճշտեց ամենու-
 րեք ձայնավոր է համարում, ուստի գտնում է, որ բաղաձայնական
 ու-ի փոխարեն պիտի վ բաղաձայնը գրել և ոչ Վ ձայնավորը: Սա-
 րգսյանի առաջարկի այս հիմունքը խախտում է, որովհետև ձայնա-
 վորին հաջորդելիս (կուի, թիւ, թեւ, աւաղ), ինչպես ասվեց վերե-
 վում, Վ-ն բաղաձայն է: Անտեսելով այն հանգամանքը, որ Վ-ն
 նայած բառի մեջ գրաված իր դիրքին, կարող է և՛ երկբարբառի
 բաղադրիչ լինել, և՛ ինքնուրույն բաղաձայն, Սարգսյանը գրում է,
 որ եթե Վ-ն բաղաձայն համարենք, անհասկանալի կլինեն աւ>օ.
 եւ>եօ փոփոխությունները, նախնիներից մնացած եզրապոս.
 կւակլ, կւպոս՝ տառադարձությունները եւքիպոս, կիւոս, կիւ-
 րակլ, կիւպոս ձևերի կողքին: Մեր նախնիք, ասում է նա, քիւ,
 կոիւ բառերի թեր ձևերը գրել են ու-ով, թեև ուղիղ ձևի Վ-ն վ-էր
 հնչում: Դրանով նրանք ցույց են տվել, որ Վ-ն վ չէ: Սարգսյանը
 գտնում է, որ գինույ, եկեղեցույ բառերի Վ-ն վ-ից հետո է, մոտ է
 ի-ին, դրա համար էլ ուղիղ ձևի հետ կան որդիոյ, եկեղեցիոյ ձե-
 վերը, պատահում են նույնիսկ օրորդ, արանում, արութիւն, հախս
 ձևերը, որոնք կարգացվել են օրիորդ, արիանամ, արիութիւն, հիւ-
 սիւս ձևով: Ըստ Սարգսյանի կրավորականները պիտի կազմել նախ-
 նիների ձևով՝ ընթերցուած, խնդրուած: Այս բոլորից նա եզրակաց-
 նում է.

1. Խ(ւ)-ն ձայնավոր տառ է, ինքնուրույն գործածութիւն չունի, ինչպէս Ղ. Աղայանն է ասում, «ժանդակ տառ է»:

2. Ու-ն պարզ ձայնավոր է և հնչյունափոխվելիս դառնում է վ:

Սարգսյանի այս հոգովածի դեմ Լւույթ ունեցավ հենց «Մուրճի» խմբագրութիւնը, նույն 5-րդ համարում՝ «Ուղղագրութեան խնդիրը» հոգովածով (էջ 815—819): Խմբագրութիւնն ուղղում է Սարգսյանին, որ գրում է, թե «Մուրճը» և «Աղբիւր»-ը չեն ընդունում բաղաձայնական ու-ի գործածութիւնը: «Մուրճ»-ը ոչ միշտ է ու-ն մերժում: Այն բառերում, որոնց փոփոխութեան ժամանակ ու-ն իրեն զգացնել է տալիս, պահանջվում է: Օրինակ՝ գրում ենք աստուած (ոչ աստուած), որովհետեւ աստուծոյ, աստուծով (աստրծոյ, աստրծով) ձևվերում ու-ն հնչում է իբրեւ ձայնավոր ու(ւ): Այդպէս էլ՝ վերարկուից, հեռուից, բուից և այլն: Հոգովածում հիշատակված է, որ խմբագրութիւնը նամակներ է ստանում ընթերցողներից հօդուս փոխադրութեան: Օրինակ՝ ուսանող չիսիցյանը նամակով առաջարկել է թափացյալ ու-ի փոխարեն ւ:իննուրեք գրել և տառը, ինչպէս վարվում է «Աղբիւր»-ը: Խմբագրութիւնը նախընտրում է բաղաձայնական ու-ի փոխարեն գրել և տառը, իսկ վ-ն պահպանել միայն բառակցում և ու-ից հետո, որ ու չկարդացվի: Խ-ն պիտի գրել իբրեւ վ-ի փոփոխ ձև: Եթե ւ-ն վանկասկզբում կարող է լինել նաև բաղաձայն (ձայնաւոր, փառաւոր, ցաւալի), կարելի է գրել նաև՝ աւեց, կտրեց, բացեց, բաւական և այլն:

Մեզ հայտնի է, որ Մխիթարյաններն այս տասնամյակներում արդեն անցել էին բաղաձայնական ու-ի կիրառութեանը. «Բազմավէպ»-ի, «Հանդէս ամսօրեա»-ի սկզբունքն է՝ որքան հնարավոր է աշխարհաբարի ուղղագրութիւնը մոտեցնել գրաբարի ուղղագրութեանը:

Վ. Հացունին 1897 թ. «Բազմավէպ»-ում տպագրված իր մի հոգովածում մերժում է բաղաձայնական ու-ի փոխարեն վ կամ ւ գրելը: Նա գտնում է, որ հայ բնիկ ուղղագրութեանը հակառակ է վ-ն ձայնավորից կամ բաղաձայնից հետո գրելը, բացառութիւն են բաղադրյալ ձևերը (անվեհեր, նաւավար): Սիւալ է նաև ւ-ն բաղաձայնից հետո գրելը (նւէր, թւական), բացի Ի-ով վերջացող բառերի թեք ձևերից՝ եկեղեցի—եկեղեցւոյ, թագուհւոյ: Հարազատ է արտասանել և գրել նուէր, թուական, գտնուում է (էջ 587): Այս կարծիքին է և Գ. Մենեվիշյանը: Իր մի հոգովածում, տպագրված 1910 թ. «Հանդէս ամսօրեա»-ում, գրում է. «Կ'դատապարտենք նւէրն ալ, նվէրն ալ, կ'մնանք հաստատուն նուէր-ի վրա»: V հրնչույթը ւ-ով կամ վ-ով արտահայտելու հարցում Մենեվիշյանը ա-

աւելելութիւնը տալիս է Վին, այն համարելով շարիքների փոքրագույն: Բայց նա վիրավորվում է, երբ մի առիթով Մանդակունին նրան որակում է Հյունագրութեան կողմնակից (ն. տ., էջ 139—143):

Հյունագրութեան դեմ հողվածներ լույս տեսան հենց «նոր դրպոց»-ում, որ բաղաձայնական ու-ի փոխարեն է էր գրում: Կարելի է նշել Նիկողոսյան Տեր-Ղևոնդյանի հողվածները՝ «Ի(ւ) տառը հայերենի մէջ»³¹, «Ուղղագրական թիրիմացութիւններ»³², Տեր-Ղևոնդյանը նույնպես Վ-ն համարում է ձայնավոր և դեմ է բաղաձայնական ու-ի փոխարեն Վ-ն գրելու: Վերհիշում է, որ Վենետիկի միաբաններից ոմանք մի քանի տասնյակ տարի առաջ սկսեցին այդ թավացյալ ու-ի փոխարեն Վ գրել, բայց մտածելով, որ այդ դեպքում ու տառի փոխարեն ուրիշները կարող են նաև Վ տառը գրել, քանի որ այդ դիրքում Վ-ն էլ Վ-ի նման բաղաձայն է, հրաժարվեցին Վ-ից և անցան ու-ին: Ղազարոս Աղայանը նորից կենդանութիւն տվեց վենետիկցիների մերժած գրութեանը: Աղայանն իր հողվածում գրել է, թե Վ տառն ավելի շատ է գործածվում, քան Վ-ն, իսկ այն տառերը, որոնք շատ են գործածվում, հնագույն են, ուստի Վ-ն հնագույնն է: Տեր-Նիկողոսյանը դա սխալ է համարում և, մեր կարծիքով, իրավացի է: Հողվածագիրը Վ-ի շատ գործածութիւնը բացատրում է նրա ձայնավոր լինելով, մեր լեզվի օրենքն է, որ բաղաձայնից շատ գործածվում են ձայնավորները: Նա հաշվել է, որ մեր մի բաղաձայն Բ-ի դիմաց գործածվում է 10 ա, 3 ե, 3 է, 3 ո, 2 Վ: Թեև մեր ն-ն շատ գործածվող բաղաձայն է, բայց դարձյալ ա-ից երեք անգամ քիչ է գործածվում: Տառի շատ գործածութեամբ չի կարելի նրա հնութիւնը որոշել: Մեր 44 գ-ի դիմաց պատահում է 46 կ, 37 լ, 44 դ-ի դիմաց գործածվում է 100 տ, 100 ա-ի դիմաց 60 ք, 40 գ-ի դիմաց 53 ս, 16 շ և այլն: Հիմա սրանցից ո՞րն է հնագույնը, և կամ մի՞թե շ-ն նորագույն է: Մինչև հիւսկագրութեան տարածվելը 50 Վ-ի դիմաց գործածվում էր 60 Վ: Հիմա, երբ տեղին ու անտեղի Վ-ն և ու-ն խնդրում են Վ-ով, 40 Վ-ի դիմաց ստացվել է 60 Վ: Ըստ Աղայանի՝ Բագրատունին գրել է, թե Վ-ի առանձին գործածութիւնը խափանվել է ետին ժամանակներում և իրենց օրոք: Մինչդեռ Բագրատունին այն կարծիքն է հայտնել, որ Վ-ն ձայնավոր է եղել և իբրև ձայնավոր միայնակ գործածվելուց վերջերս է դադարել, այդ է պատճառը, որ ոմանք նրան բաղաձայն են համարում: Մեր Վ-ն ձայնավոր է եղել, նման ֆրանսերենն Վ-ին, ռուսերենն Վ-ին: Ուստի, եզրակացնում է Տեր-Ղևոնդյանը,

1. գրել են Վ (իւղ), բնոր (բնուոր), արւանում (արուանում), կւրոս (կիւրոս), հւսիս (հիւսիս), առաքինութիւն, բարութիւն: Գրել են

ալիւր, աղբիւր, յարութիւն, որ է՝ ալիուր, աղբիուր, յարութիուն։ Ուրեմն սուտ բառը կարդալիս են եղել՝ սոսւտ, սուրը՝ սոուր, հուար՝ հոււր, հաւ. նաւ, ցաւ. կաւ կարդացել են հաու, նաու, ցաու, կաու, իսկ հետո գրանք դարձել են հաւլ, ցաւլ, նաւլ կաւլ։ Դա, ինչպէս ասում է Բագրատունին, առաջացել է արտաբերման ժամանակ շրթութունքների կլորութիւնը նեղանալու, իրար կպչելու շնորհիւ։

2. Բառավերջի հոլովական վերջավորութեան -ւն նույն օրենքով փոխվել է վ-ի, իսկ աւ-ը փոխվել է ուլ-ի, այս դեպքում աշխարհաբարի ընդհանուր օրենքով (հացիւ—հացով, քաղաքաւ—քաղաքով, սերմամբ—սերմով, կայսերբ—կայսրով և այլն)։

3. Մեսրոպի և թարգմանիչների ժամանակ մեր այբուբենը վերջին կատարելութեան էր հասցված և կարիք չկար մի տառին երկու-երեք հնչյունի նշանակութեան տալ։ Ամեն մի գիր մի հնչյունի համար էր։ Սխալ է կարծում Աղայանը, թէ հաւր. մաւր կարդացել են հօր, մօր. գրանք կարդացվել են haur, maur, հետո են օ կարդացվել, ուստի և օ տառով դրվել, այլ կերպ ինքը՝ Մաշտոցը օ-ով կգրեր։

4. Թավանշանը Վ-ի վրա դրել են ոչ առաջին օրից և ոչ նրա համար, որ -ւն կրկնվի, այլ որ տվյալ գիրքում -ւն բաղաձայն (վ) հնչեն, դրել են նաև կոիւ, ազնիւ բառերի վրա։ Նուէր, պատուէր, րիթեցումած, յօղումած, հատումած բառերը կարդացվել են Վ (յ)-ով (patouer, nouer, hatouac), դարերի ընթացքում այդ ու երկբարբառը փոխվել է պարզ ու հնչյունի, որը ձայնավորին նախորդող գիրքում կարդացվել է ամփոփ ձևով, նման վ-ին։ Ամփոփ կարդալու համար սկզբում վրան դնում էին թավացման նշան։ Աղայանի ներկայացրած ուղղագրութիւնը մի ցավալի թյուրիմացութիւնն է։ Հյունագրութեան կողմնակիցները սկզբում կարծում էին, թէ ու-ն բաղկացած է ու ձայնավորից և Վ բաղաձայնից, թէ երբ ձայնավորին նախորդող գիրքում կարդացվում է վ, յ-ն համար է մնում, երկրորդ մասն է կարդացվում (ւ-ն), այդ համար մնացած մասը (ո-ն) նրանք ջնջում էին։ Բայց հետո իմացան, որ այդպէս չէ։ Եթէ ու-ի մեկ բաղադրիչը ձայնավոր է, մյուսը բաղաձայն, ինչու՞ չեն կարդացվում օվ կամ վօւ։ Ուրեմն ու-ն բաղադրութիւնն չէ, այլ մի պարզ ձայնավոր (ւ, չ)։ Եթէ ու-ն պարզ ձայնավոր է, ապա նրան չի կարելի երկու կէս անել, բաղադրիչների բաժանել։ Այս բանը գիտակցելուց հետո հյունականները դադարեցին ու-ն երկհնչյուն համարել։ Բայց այս դեպքում կարիք եղավ մի նոր ձևով պատճառաբանել Վ-ի գրութիւնը։ Այդ բանի համար հանդես եկավ Աղայանը «Նոր դպրոց»-ի № 2-ում։ Ուր նա նուէր, պատուէր բառե-

բում կրկնակի և-էր որոնում, փոխանակ իր հին մեթոդով ուն գցելու և և-ն թողնելու: Աւ-ի փոխարեն և-ն գրելով՝ ուղղագրությունը չենք հեշտացնում, այս դեպքում էլ աշակերտը տուն-ը՝ տօլն, շուն-ը շօլն կկայդա, իսկ առիւն-ը՝ արիվն, միութիւն-ը՝ միութիւն: Դրա համար կարիք կլինի ու և իս տառերը ջնջել, տեղը նոր նշանագրեր ընդունել:

Աղայանի հյունագրության դեմ հանդես եկավ նաև Լ. Մելիք-Աղամյանը՝ իր «Խեղճ հայ լեզու» հոդվածով³³: Հայերենի ուղղագրության հարցը հոդվածագիրն անվանում է «հայ գորդիան հանգույց»: Աղայանը ցանկացավ շատ տարիներ առաջ վենետիկի Միխիթարյանների արած անմեղ, թե անհաջող հիւն-ի (ւ) փորձնորից պատվաստել մեր մեջ (87): «Հարգելի պ. Աղայանը՝ ինչ-ինչ պատճառով կատարեալ հերձածողի դեր կատարեց ուղղագրութեան վերաբերմամբ» (էջ 90): Աղայանը «Մուրճ»-ում, «Տարազ»-ում, «Աղբիւր»-ում գրած իր հոդվածներով չկարողացավ համոզել ւ-ի գրության հարցում:

Հոգևորականութունը նույնպես վատ ընդունեց Աղայանի ուղղագրական բարեփոխությունը: Էջմիածնի «Արարատ» ամսագրի 1892 թվականի հուլիսի համարում (էջ 674) տպագրված է թեմական վերատեսուչի հայտարարությունը, որով արգելվում էր նոր ուղղագրությամբ դասագրքեր օգտագործել: «Գարտաւորեցուցանել պատգ ուսուցիչս և պատգ ուսուցչուհիս,—ասված է հայտարարության մեջ,—զի ի պանդան բաժանմունս ինքեանց յանձն եղեալ ուսումնարանաց պահպանեսցեն զմիակերպութիւն ուղղագրութեան լեզուի: Խստիւ արգելել զգործածութիւն այնոցիկ դասագրեանց, որք տպագրեալք են նորահար ուղղագրութեամբք, նոյնպէս և զգուշանալ յաղդեցութենէ նոյն օրինակ ուղղագրութեամբ տպագրեալ գրեանց և պարբերական հրատարակութեանց»: Աղայանի «Ուսումն մայրենի լեզուի» դասագիրքն արգելեցին այդ ուղղագրության պատճառով: Բայց եթե դասագիրքերում, պաշտոնական գրագրության մեջ չէին ընդունում, ապա շատ պարբերականներում ու առանձին հեղինակների ղործերում տարածվում էր հյունագրությունը: Աղայանը շատ աշակերտներ ուներ, հեղինակ էր դասագրքերի:

Աղայանի հիւնագրության ամենատեղ պաշտպաններից էր Նիկողայոս Ադոնցը: «Բանբեր գրականութեան և արեստի» Բ գրքում (1904 թ.), որ ինքն է խմբագրել, տպագրում է իր «Լեզական ուղղագրական» ծավալուն հոդվածը՝ Նւէր Ղ. Աղայանին» մական-

դրությամբ: Մենք արդեն առաջին գլխում առել ենք, որ Ադոնցր սույն հոգվածում, մեր լեզվի ներքին հնչյունական կազմից և օտար փոխառութիւններից ելնելով, ցույց է տալիս, որ և տառը 5-րդ դարում և՛ բաղաձայն էր, և՛ երկրարբառի ձայնորդ բաղադրիչ: Սեաւ < գենդերեն syava, հայերեն դաւ < dav, տիւ > սանսկրիտերեն div, հաշիվ < ասորերեն xašiv: Ի(ւ)-ն բաղաձայն է նաև մեր գործիական հոլովի վերջավորութիւնում՝ աղնիւ, հագիւ, վերել, քաղաքաւ, բանիւ, գործու և այլն: Բաղաձայն է տաւ, ւէտ ածանցների ւ-ն՝ Թագաւոր (իրանական tagabar), գինեւէտ և այլն: Ադոնցը հաշվել է, որ վ-ով սկսվող բառերը մեծ մասամբ փոխառութիւններ են օտար լեզուներից, 30-ը միջին պարսկերենից են (վատ, վաճառ, վանք, վարսպ, վագր, վրէժ, վրիպակ, վարժ, վարս, վարձ, վիշապ, վիրապ, վիճակ և այլն): Ադոնցին թվում է, թե վ-ի գործածութիւնը Ե դարից աչն կողմ չի անցնում, առաջինը Մեսրոպն էր, որ մտքրեց վ-ն: Միակ պատճառը ով վերջավորութիւնն էր, ւ-ով չէր կարելի, ու կդառնար: Հնարավոր է, որ Մաշտոցը վ-ն վերցրած լինի ղենդերենից, որի վ-ին նման է: Բառամիջում վ գրելը խոտելի է: Աբովյանը, Գ. Օտյանը, Ն. Ռուսինյանը սխալվել են կրավորականը վ-ով գրելով: Ընտրութիւնը պիտի լինի ու-ի և ւ-ի միջև: Այս, այդ, այն դերանունների գործիականը (այսու, այդու, այնու, այսուիկ, այնուիկ) ենթադրել է տալիս, որ Մեսրոպից առաջ գործիականը ւ-ով էին կազմում և այսուիկ-ը կարդում էին այսուիկ, որովհետև գործիականի հոլովակազմիչը Վ(V) է, քանի որ սա, դա-ի գործիականը վ-ով է կազմվում՝ սովաւ: Մի շարք բառերում ու-ն համապատասխանում է օտար v-ի (պահլավերեն pativara > պատուար, dushvar > դժուար, duzhuvana > թշուառ և այլն):

Ադոնցը, որ «Բանբեր»-ի Ա գիրքը 1903 թ. հրատարակել էր ավանդական ուղղագրությամբ, Բ գրքում հետևում է Աղայանի հյունագրությանը և առաջարկում է v հնչյունը՝ վ տառով գրել միայն բառասկզբում, ու-ից հետո և մեկ էլ վ-ով սկսվող բառերի բաղադրյալ ձևերում, մնացած դեպքերում v հնչյունն արտահայտել և տառով (գրած, նւէր, թշուառ):

1928 թ. Աճառյանը «Հայոց գրերը» գրքում գրում է, թե Աղայանի նպատակը, վ, ւ ու տառերից մեկը թողնելը, բարի էր, միջոցը սխալ, իսկ հետևանքը բաբելոնական խառնակութիւն արևելահայերենի գրավորում (էջ 144): Աղայանն, այնուամենայնիվ, չկարողացավ մեկ տառ պահել v հնչյունի համար, մնացին վ և ւ տա-

ուերը, բայց նա խախտեց ուղղագրության ավանդական կարգը (144): Աղայանի առաջարկը գուրկ էր գիտական հիմքից: Նա սխալվում էր, կարծելով, թե աւ երկբարբառում Վ-ն վ բաղաձայնն է, պատճառն այն էր, որ արդի արտասանության վրա էր հենվում: «Այս պայքարի առաջնորդ Ղ. Աղայանը խնդրի մեջ կրխառնէր նաեւ հին հայոց հնչական դրութիւնը և դնելով սուտ ու սխալ հիմունքներ, որոնցմով կուգէր արդարացնել իր տեսութիւնը» (322):

Հիունագրության այս երկարատեւ բանավեճի արդունքն առայժմ այն եղավ, որ բաղաձայնական ու-ի փոխարեն մի մասն ըսկրսեց միայն Վ-ն օգտագործել, մի մասը պահպանեց ու-ն, որոշ մարդիկ էլ շարունակեցին Վ-ն օգտագործել: Մխիթարյանները («Հանգէս ամսօրեա», «Բագմավէպ») մնացին նախնայաց ուղղագրության դիրքերում՝ պահպանելով ու, Վ, վ տառերի ավանդական գրութիւնը: Ուսուցչական միության օրգան «Նոր դպրոցը» 1909 թ. սկզբին հայտարարեց, որ ժամանակավոր ընդունում է Վ-ի գրութիւնը, իսկ «Արոր»-ը ընդունեց վե՛վագրութիւնը: Այս ոչ միասնական գրութիւնը և բանավեճը նրա շուրջ՝ շարունակվեցին նաև 20-րդ դարում: Թեև Աղայանին հետևողներ շատ եղան, բայց նրա սկզբունքը ընդունուեց, պարտադիր չդարձավ, որի պատճառը, ինչպես տեսանք, նրա սխալ, ոչ գիտական տեսութիւնն էր:

Այդ առաջարկութիւնը ընդունելի չէր նաև գործնական տեսակետից: Եթե Վ-ն հանվեր այբուբենից և Վ-ն ամենուրեք Վ-ի նշանը լիներ, այդ դեպքում ինչպե՞ս արտահայտին ու, ի՞նչ հնչյունները, չէ՞ որ ձու-ն կկարդային ձովն, անկիւն-ը՝ անկիվն, ուրեմն սրանց համար նոր տառեր պիտի ստեղծվէին, որը սխալ կլիներ:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք, որ Ժէ—ԺԸ գրերում (Հովհ. Կոստանդնուպոլսեցի, Մխիթար Սեբաստացի, Սիմեոն Զուղայեցի, Բաղդասար Դպիր և ուրիշներ) օտարազգի Ե-ի դիմաց գրում են է, օ-ի դիմաց՝ օ, իսկ Վ-ի դիմաց՝ վ տառերը: Այս տառադարձութիւնը շարունակվում է նաև ԺԹ դարի 60—70-ական թվականներին, թեև Այստընյանը գրում է, թե տառադարձության ժամանակ սրիտի առաջնորդվել հայերենի ուղղագրության կանոններով և, օրինակ, վ գրել միայն բառասկզբում, բաղադրության մեջ և ու-ից հետո, բայց թե՛ արևմրտահայ և թե՛ արևելահայ գրականության մեջ Վ-ն՝ գերազանցապես վ, օ-ն՝ օ, Ե-ն է տառերով են տառադարձված: Այդպես են գրում Մ. Բժշկյանը (նիքթօ, վտօվա, փոավտա), Վեղանակ Բիւզան-

դեան»-ը (Ճէնովա, շվւտէն), «Դիտակ Բիւղանդեան»-ը (Նօովէճիա, Վարսավիա, Պավարիա, Ճէօռճիյէվօսք), «Ճոաքաղ»-ը (Քիեվ, Սեւասթօփօլ), Նուրիխանյանը հիշյալ գրքում (Պէթովէն, Տերժավին, Շվարցէնպէրկ), «Մեղու Հայաստանի»-ն (Բօսֆօր, Սիմֆէրօպօլ, Մօսկվա), «Հշուսիսսփայլ»-ը (Մօսկվա, Լուդօվիկօս, Պրօվանս), «Մշակ»-ը (Տվեր, աղվոկատ, Շվէդիա, Նապօլէօն, Գրիբօլէդով)։ Խաղարկյանը հիշյալ բառարանում (ռօղօսլովիէ, սվօբօդա, ուղօտօվիտէ), «Արձագանք»-ը (Տիխօնրալօվ, Մակարօվա), Ռուսինյանը (Վիկթօռ Հւօ), «Հայկական աշխարհ»-ը (Եվրօպա, դօկտօր) և այլն։ Այսպիսի միասնական գրութիւն չի պահպանվում, սակայն, բաղաձայնների տառադարձության մեջ։

Արեւմտահայ հատվածում երկու սկզբունքով են առաջնորդվում՝ դասական գրականութեան մէջ Լղած փոխառյալ անունների ուղղագրութիւնը պահպանում են նույնութեամբ (Պետրոս, Մարկոս, Յուդա), իսկ նոր փոխառյալ բառերը գրում են ըստ փոխատու լեզվի հնչման և արեւմտահայ բաղաձայնական խլաղուրկ համակարգի։ Մի բան, որ մենք տեսանք Ժէ—ԺԸ դարերի գրականութեան մէջ։ Օրինակներ։

Մ. Բժշկյանը «Քրականութիւն ռուսերէն-հայերէն» գրքում (1828, Վենետիկ) ներկայացնում է հայ-ռուսերէն հետեւյալ տառադարձութիւնը՝ б>պ, г>կ-ք, д>ա, к>ք, т>ք, ըստ այսմ էլ գրում է՝ беру>պէռու, снег>սնէր, вдова>վաօվա, отца>օրցա, Галка>Քալրա, правда>փաւվաա, красота>րաաորա, никто>նիրքօ, доброта>տօպրօրա, кому>քօմա և այլն, որ ռուսերէն ձայննդի դիմաց գնում է հայերենի խալը։ Որպէսզի արտասանութիւնը հարադաս լինի ռուսերենին։ Գրում է վաօվա, որ կարգա վղօվա։ Բժշկյանը հին անուններում պահպանում է նախնայաց տառադարձութիւնը, գրում է՝ Պոնաոս, արգոնալորդք, նորիլիոս, իսկ նոր անունները ըստ արեւմտահայերենի բաղաձայնական խլաղուրկ համակարգի՝ րնֆալ, Ղարտիկօզ, Ստամպօլ և այլն։

«Եղանակ Բիւղանդեան»-ը (1813) գրում է՝ Ստանպօլ, շվէտէն, Կիրճիսքանէն, էլպա, ճենովա, պուրկօյնացի, Եղբօս և այլն։ «Դիտակ Բիւղանդեան»-ը (1815) գրում է՝ Վասհինկքօն, Տանիմարբա, էտմոնտոս, ճենեռալ, Շամպեռլան, Նօովէճիա, Վարսավիա, Բիէքոպուրկ, Աէօռնիյէվօսք, Փօքրուգալ, Լիղպօնա, Փէնէլօփէ,

Մատրիա, Տօմինիկոս, Լուինի, Պօնափարթէին, Ըիւզէվէ, Պէլեթօյի, Շքոռապուրկ, Աւկուսդոս, Պեռլին, Փարիս, սլօուպոնեան, Ֆէտէրիկոս, Պոռուշի (Պրուսիա), Պալարիա և այլն: Ինչպէս տեսնում ենք, այստեղ հին ու նոր անունները գրված են ըստ արևմտահայ բաղաձայնների խլաղուրկ համակարգի:

Գ. Ավետիքյանը հին անունները գրում է նախնայաց տառադարձությամբ՝ Տրացիանոս, Մագիստրոս, Գէորգ, Բէդսաթիդա, իսկ նորերը ըստ հիշյալ համակարգի՝ փոփոխ, առապին (արաբ), իքալիանին և այլն: «Մասեսաց աղանի»-ն (1853)՝ Մոսֆուայի, Ռոսլըրթ, Ֆրլըրն, թօրվիտօյ, Սելասքօփուլ, Փորթուկալ, Լիսպոնայի, Դարապաղ, Պայէղիտ, Տիարպէրի, Ատանայ, Տոն Փէտրոյ, Պաթում, Անափա, Լայպնից, Վրոփականտա, Բիլդերամ, Քոռնուէլ, Վաշինկտոնին և այլն, «Ճոռաբաղ»-ը (1858)՝ Մմոլենսֆ, Չերնիկովի, Քիեվ, Տեսնայի Տնեստր, Քնեաղ, Ճոնս, Բաթուրիկ, անկլիականք և այլն: Հ. Մ. Նուրիխանյանի «Պատմութիւն ժամանակակից» (1882) գրքում՝ Վալթէր Սգոտ, լորտ Պայրոն, Ռիխդէր, Քէոռն, Ուհլանտ, Քոբլով, Տերթապին, Փուշին, Կոկոլ, Քարամզին, Տանիմարքա, Պելեիա, Շուէտ, Հայտրն, Պէթովէն, Բարիգ, Պուրպոն, Նաբոլեոն, Մէդէոնինֆ, Շվարցէնպէլ, Վէպէր, Պեռլին, Ուարէրո, Դանատա, Վիկտոր Հիւօ, Լէօփուտ, Շաքոպրիան, Պերանժէ, Տիւմա և այլն: Ուրեմն նուրիխանյանը օտարազգի խուլերն արտահայտում է հայերեն շնեղ-խուլի տառերով ($k > p$, $t > \theta$, $p > \phi$), իսկ ձայնեղները՝ խուլ հնչյունի տառերով ($h > ա$, $g > Է$, $d > տ$), այնպես, ինչպես ընդունված է արևմտահայերենում ընդհանրապես:

Տառադարձության այս շեղումը Մխիթարյաններն իրենք հարմար չէին համարում և ձգտում էին վերականգնել նախնայաց տառադարձությունը՝ այն տարածելով նաև նոր փոխառությունների վրա: «Բագմավէպ»-ը 1897 թ. գրում է. «Բագմավէպը սկսաւ քայլ առ քայլ փոխել իր բռնած ուղղութիւնը անուանց տառադարձութեան մասին, ջանաց միջին ճանապարհ մը բռնել» (էջ 46): «Հանդէս մասօրեա»-ն նույնպես վերջին տարիներին փոփոխութիւն մտցրեց տառադարձության մեջ՝ ձգտելով հետևել հնրի կարգին:

Արեւելահայերենում, սակայն, դործում է $h > p$, $g > q$, $d > \eta$, $t > տ$, $p > ա$, $k > Է$ տառադարձությունը: Օրինակ՝ «Մեղու Հայաստանի»-ն (1882) գրում է՝ Բուլղար, Բօսֆօր, սինօղ, Սիմֆերոպօլ, գիմնադիօն, Մոսկվա, Բօրսա և այլն, «Տարաղ»-ը՝ մօղա, Լէգէոն, գրամմ, «Հյուսիսափայլ»-ը՝ Պետերման, Պոհտի, սիմիտեան, Պինդարոս, Լուդովիկոս, Կլեմանս, Բօբերտ, Մոսկվա, «Մշակ»-ը (1827)՝

Հուղօվիկ, ղօկտօր, Բերլին, Պրօվանս, Լանգրդօկ, Վանդէ, Կոմիսար, Նապօլէօն, պրօֆէսօր, Կօրիդօր, մաղօննա, մետօղ. աղվկաղ. նօվգօրօղէան, Տվեր, Կօմս, Շվէդիա, Հօլանդիա, Շօտլանդիա և ալլն: Խալղարյանի «Հայ-ռուս բառարանում»՝ ոտղօսլովիէ, վօրօղա, ղօքօղա (дорога), ուղօտօվիաւ (уготовитесь): «Արձաղանք»-ը՝ Մակարովա, Կրիտիկա, Լէյպցիգ, Տիխօնրավով, Եկատերինա և ալլն:

Տառադարձության սկզբունքը հին և նոր հայերենում ըստ էության նույնն է՝ փոխառյալ բառը ամեն կերպ մոտիկ պահել փոխատու լեզվի հնչմանը, տարբերությունը ստացվում է նրանից, որ արևմտահայերի բաղաձայնական հնչյունային համակարգը խլազրկվել է, խլահնչյուն տառերը կարգում են ձայնեղ, իսկ ձայնեղահնչյունները՝ շնչեղացած: Ուստի միևնույն փոխառյալ բառը երկու գրություն է ունենում, արևմտահայերենում՝ Ռօտրիկոյ, արևելահայերենում՝ Ռօդրիգոյ: 1845 թ. նոյեմբերի «Բազմավէպ»-ում տրպազրված «Յաղագս բնիկ հնչման հայկական տառից» հոդվածում հ. Գ. Այվազովսկին, ընդառաջելով Պետերբուրգի ճեմարանի կաճառորդ Ֆրանսիացի Բրոսսէին, որ այցելելով Վենետիկ՝ խնդրել էր գրել արևմտահայ բարբառի բնիկ հնչման մասին, ներկայացնում է արևմտահայ գրական աշխարհաբարի տառադարձությունը. ուր հայերեն ձայնեղների դիմաց գրում է հունական խուլերը ($\rho > \pi$, $q > \lambda$, $\eta > \tau$), իսկ խուլերի դիմաց՝ ձայնեղները ($\kappa > \gamma$, $\alpha > \iota$, $\omega > \delta$), ձ-ի դիմաց գրում է $\tau\acute{\iota}$ ($\iota\acute{\tau}$). իսկ ձ-ի դիմաց՝ $\delta\acute{\iota}$ ($\delta\iota$): Այդ միջոցով Այվազովսկին ճիշտ է արտահայտում արևմտահայ հնչյունային համակարգը, Ֆրանսիացին դա կարդալով՝ կիմանա, որ արևմտահայը ունի բաղաձայնների միայն երկու շարք՝ բ—փ, գ—f, ղ—թ. ձ—ց և ալլն: Այս հոդվածում Այվազովսկին (ինքը գրում է՝ Այվազովսկի) նշում է, որ բնիկ հայկական հնչումը ոչ պոլսեցունն է, ոչ էլ վրաստանցիներինը, երկուսն էլ ծայրահեղ են, ճիշտը բնիկ Հայաստանինն է, որ դրանց միջինն է: Այդպես էլ իր «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» գրքում (1869), անդրադառնալով այդ հարցին, գրում է, թե բացի միջերկրյա հայերի հիմունքից, մյուս եվերական հայերի հիմունքը խոտորված են և ծայրահեղ խոտելի: Իսկ միջերկրյանն են՝ Արարատը, Տարոնը (Երևան, Աշտարակ, Շիրակ, Վաղարշապատ, Մուշ, Վան, Կարին) (էջ 54): Միայն սխալվում է Այվազովսկին՝ կարծելով, թե ռուսերեն Посто́й... тебе возврата нет նախադասությունը միջերկրյա հայը (Արարատյան) կարտասանի՝ Փասթոյ... թեպէլ վօզվաթայ մեթ: Ինչպես Ղազարոս Աղայանն է նկատում, նրան շփոթեցրել են Աբովյանի օգտագործած մի քանի

բառերը՝ սփռուկայ, օփիժաքսա, փռօշենի, փռօփուլիվաքսա, փռու-
միքսա, որով Աբովյանը ներկայացնում է Ղրիմի հայերի արտասա-
նությունը և ոչ թե Արարատյան³⁴:

Ի. Խ. Չուլազյանը իր «Նոր բառարան հայերէնէ ի յունարէն»
(1868 թ.) գրքում հետևելով նախորդներին՝ նոր հունարեն բառերի
տառադարձությունը տալիս է ըստ արեւմտահայերենի բաղաձայնա-
կան համակարգի՝ $p > \pi$, $q > \chi$, $g > \gamma$: Ելնելով նոր հունարենի
արտասանությունից՝ β -ի դիմաց գրում է վ, γ -ի դիմաց՝ դ, η -ի
դիմաց՝ ի և այլն: Արեւմտահայերի այս տառադարձությունը սահ-
մանել են Վենետիկի Մխիթարյանները: Այս սկզբունքը համարելով
գործնական որոշում, Այսրնյանը միաժամանակ նշում է, որ զրա
պատճառով շփոթություն էլ է առաջանում: Նույն Columbos և
Columbia բառերը գրվում են երկու ձևով՝ Կոլոմբոս (իբրեւ հին
փոխառություն) և Գոլումպիա (իբրեւ նոր), Colonia-ն դառնում է
Կոլոմփիա և Գոլոնիա, Georgia-ն Գէորգ (Գեորգ) և Ճեորճիա
և այլն: Սրանցից պիտի մեկը ընտրվեր: Իսկ դա հեշտ չէր: Վատն
այն է, գրում է Այսրնյանը, որ վերջին հարյուրամյակում լատին
և իտալական լեզուների աղղեցություն տակ սկսեցին մեր նախ-
նիների թողած օտար բառերի ուղղագրությունն էլ փոխել: Օրինակ՝
գրում են Չեզար, Շիպիոն, Կարթագինէ, Ջիշերոն, Ջերոնիմոս, փո-
խանակ՝ Կեսար, Սկիպիոն, Կարթագին, Յիցերոն (կամ Կիկերոն):
Հիմա էլ ֆրանսերենի աղղեցությամբ սկսում են գրել՝ Ժիլ, Սէզա-
ռի, Օկիսթի, Օռաս, Վիրժել, Սիսէռոն և այլն³⁵: Այս խառնակությա-
նը նպաստում է նաև այն հանգամանքը, որ միևնույն լատինական
բառը եվրոպական տարբեր լեզուներում տարբեր կերպ են արտա-
սանվում, թեև գրությունը պահպանվում է: Օրինակ՝ Berger և Bur-
ger անունները ֆրանսիացիք արտասանում են պերժէ և պիրժէ, իսկ
Reichling-ը՝ Ռեշլեկ: Անգլո-ամերիկյան արտասանությունը թավ
է, իսկ լատինականը՝ խուլ, ուստի patrik բառը անգլերեն հնչում է
փաքիֆ, իսկ ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն՝ պատրիկ: Հա-
յերենում էլ պիտի գրվի ըստ փոխառու ազգի հնչման: Անգլերեն
Marlboroug անունը հնչվում է Մարլբորո, պիտի աջակես էլ գրել:
և ոչ թե Մարլբորոունգ (ն. տ.):

«Բազմավէպ»-ի 1846 թ. № 4-ում Հ. Ե. Հ. ստորագրությամբ
«Հին ու նոր անուանց տառադարձության վրա» հոդվածի հեղինակը
գրում է, թե սխալ է արդի լեզուների բառերը մեռած լեզուներից
արված տառադարձության նման տառադարձել, որովհետև նրանց
հիմնիկվան տառերը այլևս հին հնչումը չունեն: Եթե ֆրանսերեն
Chateaubriand-ը հին օրենքով տառադարձենք Քատէալբրիանդ,

շատ կհեռանա նրա ֆրանսիական այժմյան հնչումից, և ֆրանսիացին, որ լսի, չի իմանա, թե դա իրենց նշանավոր հեղինակի՝ Շատոբրիանի անունն է։ Եթե գերմաներեն Schlegel-ը Պրլեգել ասենք, անգլերեն Liverpool-ը՝ Ղիւերպոռոլ, Ճինկիզխանր (կարդա՝ Զինգիլխան)՝ Գենջիսկան, Ճինճի խօճան (Զինջի խօջան)՝ Գինգի խօգա ասենք, փոխատու աղգի մարդիկ չեն իմանա, որ դա իրենց Շլեգելն է, Լիվերպուլը, Զինգիլ խանը։ Գրային տառադարձությունը այս դեպքում սխալ է, դա բառը փոխատու լեզվի համար անճանաչելի է դարձնում։ Շատ լեզուներում մի հնչույթի համար օգտագործում են 2—3 տառ, եթե յուրաքանչյուր տառի դիմաց հայերեն համապատասխան տառը դնենք, անճանաչելի կդառնա բառը։ Կարելի է հին հունական և լատինական անունները միայն ավանդական տառադարձությամբ գրել։ Հարցն այսպես է լուծում նաև Ալվադովսկին։ Նա նույնպես գրում է, որ հին հունաց ու լատինացոց անունները պիտի նախնինների տառադարձության կանոնով դարձնել։ Հայերեն։ Նկատի չպիտի ունենալ հույների նաև ներկա արտասանությունը, որ զգալի շափով տարբերվում է հնից։ Օրինակ, Պ-ն այժմ i են հնչում (ita), թ-ն՝ վ (vita)։

Այս սկզբունքով են առաջնորդվում արևմտահայերը, որին դեմ է, սակայն, վիեննական դպրոցը։ Նա խորշում է ժողովրդական (ռամկական) ձևերից և կողմ է անխառն դասականին։ Նրա սկզբունքն է՝ ամեն ինչ նախնինների կաղապարով, ուստի օտար բառերը համապատասխանեցնում էր հունարենին. գրում էր Միթր (փոխ Միհր), Nottingham > Նոտտինգամ, Bon > Բոն, Madagascar > Մադագասկար։ Քառասնական թվականներին գրում էին՝ Պարիս (Paris), Սիբերիա (Siberia), Կարպատ (Karpath), Ստրոմբոլի (Stromboli), Նեւտոն (Newton) և այլն։ Ըստ էության վիեննականները ճիշտ էին, դրանով նրանք գրավորը մոտեցնում էին մի կողմից նախնյաց, մյուս կողմից արևելահայ գրությունը։ Բայց նրանք հետևողական չեղան և գրական աշխարհաբարում շարունակվեց տառադարձության երկու սկզբունքը։ Դրա հետևանքն այն եղավ, որ միևնույն օտար բառը, ինչպես նշվեց, հայերենում գրության երկու ձև ստացավ, կորցրեց իր նախնական ձևը, Գրիգոր-ը դարձավ Կրէկուոր, Գէորգ-ը՝ Կէորկի։ Արևելահայը դժվարանում է հասկանալ արևմտահային, սա էլ՝ նրան։ Օտար բառը արևմտահայ տառադարձությամբ արևելահայերենին անցնելիս աղավաղվում է, այդպես baron-ը պարոն ձևով անցավ արևելա-

հայերենին: Այդպես արևմտահայ տառադարձության մեջ արևելահայերենին են անցել ճիզվիթ, ճապոնիա (փոխ. ջիզվիթ, Ջապոնիա): Զինացիք ճապոնիան անվանում են յափոն, որ նշանակում է արևելք, ֆրանսիացիք դա գրում են Japon և կարդում՝ Ժապոն, անգլիացիք ժ չունեն, կարդում են՝ Ջապոն, գերմանացիք յունեն և կարդում են Յափոն, ռուսները՝ Յապոնիա, արևմտահայերը գրում են ճափոն, որ Ջափոն կարդան, իսկ արևելահայերը կա՛մ Յապոնիա են գրում (ռուսների նման), կա՛մ ճապոնիա (արևմտահայերի նման), երկուսն էլ սխալ, վերջինս ճիշտ կլիներ, եթե Ն-ն արտասանվեր: Ջավա-ն ֆրանսերեն Java (Ժավա), գերմաներեն՝ Յավա, ռուսերեն՝ Յավա, արևմտահայերեն՝ Ճավա, որ կարդում են՝ Ջավա, այսինքն մոտիկ փոխատու լեզվի արտասանությանը, արևելահայերեն՝ Յավա կամ Ճավա. երկուսն էլ փոխատու լեզվի հնչյունից շեղված:

Գրական աշխարհաբարում ստացվում է երեք բնույթի տառադարձություն.

1. *Ռուսնակ գրության մեջ՝ Демидов > Դեմիդով. кандидат > քանդիտատ (g > q—տ, т > տ, к > p), депутат > դեպուդատ (д > դ, п > փ, т > տ, т > դ), секунда > սեքունթ (к > p, д > p), Абрезков > Ապրեսկով (з > ս). Долгорукий > Դոլկորուկի (г > կ), Bossuet > պոսիւէտ (b > պ): Կան և զտգահեռ գրությունն անեցող բառեր՝ Ապպաս—Արրաս, ոուպլի—ոուրլի, Ղարապաղ—Ղարաբաղ, Թագիր խան Թաքիր խան:*

2. Անխառն արևմտահայ տառադարձություն՝ Թափոր (Թաբոր լեռ), Ֆրանչեսքո, Քարլո և այլն:

3. Անխառն արևելահայ (արևմտահայ մտավորականներն անվանում են ռուսակերպ) գրություն՝ գիմնազիա, կոմիսիա, ֆելդմարշալ, գուսար (դուսար), գեներալ (դեներալ) և այլն:

Տառադարձության այս ոչ միասնական վիճակը անհանգստացնում էր մտավորականությանը: Հարկավոր էր ստեղծել միասնական գրություն, դա պետք էր ժողովրդի, ազգի միասնության համար, մի ժողովուրդ, որ բանավոր խոսքով, աշխարհագրական տարածքով, պետականորեն երկփեղկված էր: Նրանց իրար միացնող ամենակարևոր օղակներից մեկը գրավոր խոսքն էր, գրականությունը: Հոգվածներ են գրվում արևմտահայ և արևելահայ գրական լեզուները քերականական-բառապաշարային բարեփոխումներով իրար մոտեցնելու, մի միասնական լեզու ստեղծելու մասին³⁶:

1874 թ. լույս է տեսնում Ղ. Աղայանի «Հայկական հնչյունների մասին (լուծումն տարակուսութեանց)» գրքույկը: Հեղինակը նշե-

լով, որ պոլսեցոց բարբառը մեծ կերպարանափոխություն է կրել՝ սկսած Ռուբինյան իշխանությունից մինչև 70-ական թվականները, անհրաժեշտ է համարում լեզվական բարեփոխումներ կատարել, վերականգնել բաղաձայնների դասական արտասանությունը, եռաստիճան համակարգը։ Աղայանը, մերժելով «Մասիս»-ի N 1546-ում լույս տեսած մի հոդվածի այն առաջարկությունը, թե լավ կլինի արևելահայերն իրենց ում, եւ վերջավորություններ փոխարեն ընդունեն արևմտահայերի կը մասնիկը, որով լեզուները կմերձենան, միասնական դառնալու ուղին կբռնեն, լեզուն կազնրվանա, մի գրական լեզու կունենանք, ինքն ավելացնում է, թէ ավելի ճիշտ կլիներ, որ Մխիթարյան հայրերը սովորեցնեին իրենց սաներին, որ Ե-ն՝ Ի, ք-ն՝ գ, լ-ն՝ դ, լ-ն՝ տ, ք-ն՝ պ, Կ-Ն՝ կ արտասանեն, այնպես, ինչպես եվրոպացիներն են հնչում։ Դրա համար պոլսեցիները առաջին հերթին պիտի գիմեն բառարանին և ապա՝ Աստվածաշնչին։ Աստվածաշնչում Պետրոս, Պոնտոս, Պիղատոս, Պաղեստին բառերը պ-ով են գրված, ուրեմն իրենք էլ նապոլեոն-ը պ-ով պիտի գրեն։ Վկայակոչելով Այտրնյանի այն միտքը, թե հունա-լատինական բառերը (այսինքն հինը) պետք է գրել ըստ նախնյաց տառադարձության, իսկ նորերը ըստ պոլսեցոց հնչման, որովհետև 100 տարի առաջ է սկսվել այդ «շփոթը», Աղայանը ծայրահեղության մեջ ընկնելով ավելացնում է, թե «100 տարի պոլսեցիք հայ վարժապետներ չեն ունեցել», եղել են «լատին կամ լատինացած» հայեր և կամ «աղջատ հայախոս անգղիացի միսիոնարներ»։ Այդ «օտար ու խոտոր» մարդիկ ոչ թե հայերեն են սովորեցրել, այլ ձգտել են լեզուն կրոնափոխության միջոց դարձնել։ 1714 թ. Հոռմի «հաւատոց տարածման» տպարանում տպված լատիներենից հայերեն բառարանը «հայհոյում է» հայերին, «ուրանում հայկազյան իշխանությունը», Բագրատունի անունը դարձնում Փաֆաւտունիք, «հետևե՞նք այդ խորհրդին, վարդապետ Յակոբոս Յիսուսեանին»։ Աղայանի կարծիքով՝ Պռլառ լեզվով վեպեր կարելի է թարգմանել, բայց ազգային վեպեր չի կարելի գրել, դրանց համար հարկավոր է կենդանի լեզու։ Քննադատելով Գաբրիել Այվազյանի հիշյալ կարծիքը, ընդգծում է, որ արևմտահայերը պիտի հետևեն նախնյաց տառադարձությանը, դրանով կստեղծվի արևելահայ և արևմտահայ միասնական տառադարձություն։ Այդ գրքույկով տառադարձության շուրջ սկսվում է մի երկարատև բանավեճ։ 1885 թ. «Արձագանք»-ում տպագրվում է Ա. Սարուխանյանի հոդվածը տառադարձության մասին։ 1886 թ. «Մշակ»-ում (N 69) լույս է տեսնում «Պօլսի Հայոց լրագիրների բանակոխվը» խորագրով հոդ-

վածք, ուր խմբադրութիւնը կրկնում է Աղայանի կարծիքը, թե օտարներին, հատկապէս թուրքերին, ազդեցութեան տակ պոլսահայերը փոխել են Մեսրոպի տառերի հնչումը և Մխիթարյանները Պետրոս անունից ծագած Պետերման անունն արտասանում են Բեդերման, Պլատոնը՝ Բլադոն: «Մշակ»-ը շահագանցում է, թե «Մխիթարյանները, որոնց մայրենի լեզուն օրորոցից սկսած թուրքերէնն է եղել, սովորեցրին բլադօնական ասել»: Նրանք գրում են Բէդէրման, Վենետիկ (փոխ. Վենեդիգ), Բարիգ, Բլադօն, Կամպէդդա, Կարիպալտի, Պէրլին, Տլիլ, Բէզգալսծի, Տիսդէրվէկ, Լամալթի, Տրգագվիլ և այլն:

1886 թ. «Բաղմավէպ»-ի Գ պրակում (էջ 192) լույս է տեսնում հ. Աթանաս Տիրոյանի հոդվածը՝ «Բացահայտութիւն մի հայկական տառերու հնչման և գրութեան մասին առ մեծ խմբագիրն «Մշակ» լրագրի» խորագրով, իբրև պատասխան Արծրունու և Սարուխանյանի հոդվածներին: Տիրոյանի հիմնական մտքերը սրանք են: Արեւմտահայ լեզուն էլ արեւելահայերենի նման պարզանում է և մշակվում ժողովրդի կենդանի լեզվի միջոցով, նա էլ հենվում է Բարձր Հայքի, Աղձնայց, Տալոց, Վասպուրականի բնակիչների լեզվի վրա որ կենտրոնական Հայաստանի լեզուն է: Սխալ է «Մշակ»-ի պրնդումը, թե մինչև Մխիթարյան միաբանութեան հաստատովելը հայ ազգը միասնական հնչում է ունեցել ռուսահայոց նման և իբր Մխիթարյաններն են այն աղավաղել: Սակավաթիվ Մխիթարյանները (մոտավորապէս 300 հոգի) այդքան չէին կարող շեղումը տարածել, այն էլ այդպիսի կարճ ժամանակամիջոցում, բայց չի ժխտում տաճկերենի ազդեցութիւնը: Մինչև այստեղ Տիրոյանը ճիշտ է, իսկապէս որ արեւմտահայ արտասանութիւնը չպիտի կապել Մխիթարյանների հետ: Մկրտիչ էմինը այն կապում է կիլիկյան հատվածի կազմավորման հետ, ուրիշները ավելի ետ են գնում, մեր բերած փաստերն էլ են ցույց տալիս, որ ձայնեղների խլացման երեւոյթը մինչև Ժ դարն է հասնում: Տիրոյանը չի վարանում նաև արեւելահայերեն հնչմանը առաջնութիւն տալ՝ ընդգծելով, որ դա երբեք չի նշանակում, թե տաճկահայոց հնչումը օտար է. «Ռուսահայոց հնչումն ընտրելագոյն է, քան զտաճկահայոցն՝ ըստ որում համաձայն է հայերեն տառից շարակարգին, բաղդատութեամբ յոյն ալփաբետաց և հնչման տառից հնդեւրոպեան քոյրաթիւ լեզուաց, բայց տաճկահայոց հնչումն օտար համարել ի հայկականէ սեփական արտասանութենէ, է անտեղի» (էջ 199): Տիրոյանը ճիշտ է ասում, որ տաճկահայերի հնչումը օտար համարել արդեն չի կարելի,

քաջի որ դարեր ի վեր նրանք պ-ն Բ-են արտաբերել, սակայն սխալվում է, երբ փորձում է բացատրել, թե ինչից է առաջացել այդ տարարտասանությունը: Նրա կարծիքով՝ դա սկզբնավորվել է ամենահին, իր ասելով, գաղթական երկու խմբից՝ արևելահայ և արևմտահայ: Արևելահայ գաղթական խումբն ավելի փոքր էր, բայց նրա լեզվով խոսում էին նաև արքունի տունը և նրան հետևող մատենագիրները: Փոքր լինելու պատճառով այդ խումբը չի կարողացել ազդել ու փոխել մյուս խմբի արտասանությունը: Մաշտոցը գրերն ստեղծեց ըստ արևելահայոց հնչյունական համակարգի, ուստի և ընտրելագույնը դարձավ արևելահայերենը: «Դարեր է ի վեր հայ ժողովրդական մեծամասնությունն (Հայաստանեայք) օտար կերպով նշելով փոքրամասնության (պարսկա-վրահայք) դրած տառերը՝ սխալ արտասանության իրենց լսելիքը վարժեցուցեր են, և ի մեծատունս նախնեաց (Թարգմանչաց), այն սխալ հնչման համեմատ անփոփոխ պահած են նաև գրության հղանակն մինչև ցայսօր, ոչ ոք կարող է բռնադատել գիրենք, որ այսօր այս իրենց հենց սխալմունքը գէթ մասամբ իւրիք չուղղեն»: «Մշակ»-ի այն հարցին, թե ինչ իրավունքով արևմտահայերը հունարեն Պետրոս-ը դարձրել են Բեդրոս, Տիրոյանը պատասխանում է, որովհետև հենց Թարգմանչաց ժամանակ այդ հատվածն այդպես էր արտասանվում: Թարգմանիչները մի կամ երկու գավառի սերունդ էին, ասում է նա, նրանք չէին կարող հնարել հայերենի ընդհանուր հնչյունական համակարգի համապատասխան տառեր, հնարեցին միայն իրենց գավառի հնչման համապատասխան: Ժողովրդի մեծամասնությունը Թարգմանիչների գավառի մարդկանցից տարբեր էր հնչում:

Տիրոյանի կարծիքով՝ Մաշտոցը այբուբենը ստեղծել է ոչ թե ըստ հայ ժողովրդի հնչյունային համակարգի, այլ ըստ մի երկու գավառի խոսվածքի: Սա արդեն գիտական չէ և իրավացիորեն մերժվեց հենց արևմտահայերի կողմից: Տիրոյանը կրկնում է Գարագաշյանին, որի կարծիքով ապացուցված չէ, որ մեր Բ-ն 5-րդ դարում Ե է հնչել, դ-ն՝ ժ, կամ տ-ն՝ է, կ-ն՝ ք: Մաշտոցը նշանակեց ուղղագրությունը, իսկ հնչումը տարբեր գավառներ տարբեր էին արտահայտում: Ինքը իր բարբառի համաձայն արտահայտում էր պաբի, կոդ, իսկ մի այլ գավառում՝ բաբի, գոդ: Ըստ Գարագաշյանի հունարենի π, κ, τ գրերի դիմաց գրված մեր պ, կ, տ գրերը անպայման պ, տ, կ չեն հնչել կամ եթե հունարեն β, γ տառերը այլ լեզուներում դառնում են Ե, ց, չի նշանակում, թե հունարենում նույնպես այդպես էին հնչում: Հայերենի այբուբենի դասավորության ժամանակ Մաշտոցը «ոչ այնքան դիտած է հնչումն, որ-

չափ այդ տառերուն քերականական, ներքին արժեքն»։ Բերելով այս կարծիքը՝ Հ. Բարսեղ Սարգիսյանը քննադատում է այն, ընդգծելով, որ Մաշտոցը այբուբենը դասավորելիս նկատի է ունեցել տառերի ներքին զորությունը, այսինքն հնչումը, և մեր տառերը ըստ իրենց հնչման են դրված հունական համապատասխան տառերի դիմաց³⁷։ Մաշտոցի ժամանակ արևմտահայ ու արևելահայ տարարտասանություն չի եղել, և այբուբենն էլ համապատասխանել և համապատասխանում է հայ ժողովրդի հնչույթային միասնական համակարգին։ Արևմտահայ արտասանությունը հետագա շրջանի ծնունդ է և, ինչպես բացատրում են արևմտահայ գիտնականները (Այտընյան, Սարգիսյան, Մենեվիշյան), հետևանք է թե՛ հնչյունային ներքին օրինաչափության և թե՛ շրջապատի լեզուների, այդ թվում թուրք-թաթարական, աղղեցության։ Սխալ է Տիրոյանի ենթադրությունը, թե Սահակն ու Մեսրոպը Պետրոս էին ասում, իսկ ժողովուրդը՝ Բեդրոս։ Կորյունի և Խորենացու վկայությամբ Մեսրոպը «ուսույց և վարժեաց յայն զբնակ ամենայն աշխարհս Հայոց»։ Հազիվ թե զաւառաբարբառով որևէ գրավոր հուշարձան գտնվի Մեսրոպյան ժամանակներից, նշանակում է Արարատյանը ընդհանուր է եղել նախնյաց համար։ Ժիշտ է նկատում Հ. Բ. Սարգիսյանը, որ՝

1. Հայ Արշակունի թագավորների ծանոթ անուններում, գրտնրված դահեկանների վրա, հայերեն տ հնչույթը՝ տ, գ-ն՝ յ, բ-ն՝ ֆ տառերով են արտահայտվել։

2. Էջմիածնի հյուսիսային կողմի ավանդատան պատուհանի վրա գրված արձանագրության մեջ, որ 4-րդ դարից է, Գարեգին անունը գրված է Γαργαίνος. Դանիելը՝ Δανιήλ. էլպիսը՝ Ἐλπίς, Արքիասը՝ Ἀρχίας, Պաղոսը՝ Παύλος։

3. Ագաթանգեղոսի պատմության մեջ միշտ յ-ն գ-ով է արտահայտված, ֆ-ն՝ բ-ով։ Օրինակ՝ քաղաքի մեզադի, Γρεγοριος > Գրիգորիոս, Βασιλειος — Բասիլիոս, Βασιλαριος — Բարբարոս։ Սրբանք ցույց են տալիս, որ նախնիների ժամանակ օտար ձայնեղին համապատասխանել է հայերենի ձայնեղը, խուլին՝ խուլը, շնչեղ խուլին՝ շնչեղ խուլը, ինչպես որ Թրակացու թարգմանիչն է գրել։ Իհարկե, սրանց կողքին կային և սխալագրություններ, որոնք հաճախ բխում էին կա՛մ գրագիտության պակասից, կա՛մ նրանից, որ թարգմանիչը տվյալ բառը վերցրել է մի երրորդ լեզվից, ուր արդեն աղավաղված է եղել այդ բառը։ Տիրոյանին պատասխանեց Առաքել Սարուխանյանը «Հայկական տառերի հնչումն և գրությունը

ուսահայոց և տաճկահայոց մէջ» հոգւածով («Մշակ», 1887 թ., № 16 և 18, 20, 21, 22): Ելնելով այն ճիշտ դրույթից, որ Ե դարում մեր ժողովուրդը բաժանված չէր հատվածների և ուներ միասնական արտասանություն, որ Մաշտոցի գրերը ոչ թե արքունիքի, այլ ժողովրդի համար էին, նրա հնչույթային համակարգին համապատասխան, հոգվածագիրը սխալ է համարում Տիրոյանի կարծիքը, թե արեւելյանը գրոց, արքունիքի լեզուն էր, իսկ արեւմտյանը՝ ուսմիկ մեծամասնության: Եթե ժողովրդի մեծամասնությունը արեւմտահայերեն հնչումն ուներ, ինչո՞ւ որեւէ գրավոր գործում չի արտահայտվել: Թարգմանիչները գրում էին ժողովրդի համար, ուրեմն նրա լեզվով պիտի գրեին, ինչու՞ պիտի օտար Ե-ն՝ պ. Ը-ն՝ տ. գրեին, Եթե մեծամասնությունը օտար Ե-ն Բ էր արտասանում, Ը-ն՝ դ: Եվ վերջապես, չէ՞ որ թարգմանիչներն էլ տարբեր գավառներից էին: Եթե միասնական արտասանություն չունենային, թարգմանածն էլ միասնական չէր լինի: Սխալ է Տիրոյանը, երբ արեւմտահայերին անվանում է. «հայաստանեայց», իսկ արեւելահայերին՝ «պարսկավրահայց»: Հատկապես վերջին շրջանում արեւմտահայերենը շատ է խճողվել թաթար-թուրքական լեզվի ազդեցություն տակ: Սարուխանյանը բերում է Այտընյանի տողերը. «Գոնէ հին ուսմկորենն այլ և այլ դրացի աղագաց ազդեցութեան ներքե գոյնզգոյն գործվածքի մը կը նմանէր, իսկ ժամանակակից գոեհիկ լեզուն թաթար կամ թուրք (նորերս տաճիկ ըսուած) լեզուին բոլորովին անձնատուր եղած կերպարանք ունի»: Տաճկերենը չունի ձ, ծ, ց հնչյունները, այդ պատճառով էլ, օրինակ, Կեսարիայում, Անգարայում այդ հնչյունների փոխարեն արտասանում են ջ, չ, գրում են ջանկով (ցանկով), Չեզար (Կեսար), ջեր ջայները շատ են մեսսեր (ձեր ձայները շատ են մեծցեր): Արեւմտահայերենի գրեր Եմ ձեւի Բ-ն էլ տաճկերենի ազդեցությունից է: Բիւնրիմ (կը ծեծեմ), Բուրըմ (կը կոտրեմ) ձեւերի իմ, բմ վերջավորությունները դիմային են, հայերենի Եմ-ին համապատասխան, իսկ բիւնր, Բուրար ձեւերի Բ-ի նմանությունամբ էլ կազմվել է արեւմտահայ գրեր ձեւի Բ-ն: Արեւմտահայ իյնալ, չիյտեմ ձեւերն էլ տաճկերենի ազդեցությունից են: Պոլսի աշխատավորական մասը օգտագործում է՝ ձուն գա գիլուս, բանը բուրդ է, ջուրը տարավ, աղաղաւ բան միակ դուն գիլուս, իսկ հայատառ թերթերը այդ Ը>դ, Գ>ց արտասանությունը գոեհիկ են համարում: Մեր նախնիները հին պարսկերեն deva-ի դիմաց գրել են դեւ, deužoch>դձոխք, նոր պարսկերեն čirag>նրագ, bacht>բախտ, peikar>պայքար, pelman>պայման, grav>գրավ, իսկ արեւմտահայերը դրանք դարձնում են՝ փախտ, բայքար, բայման,

կրավ: Ուրեմն արեւմտահայերը պիտի փոխեն իրենց տառագար-
ձութիւնը:

Բայց բանալենք սրանցով չի ավարտւում: «Արեւելք»-ի 1888 թ.
մարտի 3-ի համարում (N 1250) լույս է տեսնում Պոլսի կրթական
տեսուչ Կ. Ս. Յութուճյանի «Առաջարկութիւն»-ը: Տակավին կես
դար առաջ հայերը ճիշտ էին հնչում մեր լեզվի տառերը, գրում է
տեսուչը, բայց կամաց-կամաց աղավաղվեց, մեր մամիկներն ու
պապիկները նախնյաց հնչումը իրենց հետ գերեզման տարին: Այդ
աղավաղումը Պոլսից դուրս գալով՝ տարածվեց թուրքահայ գավառ-
ներում: Դրա պատճառը մեր այբուբենի մի քանի տառերի սխալ
արտասանութիւնն է, որ առաջ է եկել տգիտութեան դարերում: Երբ
Կարապետ վարդապետ Շահնազարյանը Պարիզ, Նապոլեոն, Պի-
եր, Լամարթին, Վիկտոր Հիւգո և գրում և Փարիզ, Նապոլեոն, Փի-
եր, Լամարթին, Վիքթոր Հիւկոյ կարդում, սխալ համարեցին, այն-
ինչ իրենք էին սխալ: Միջնադարի գրիչները խառնեցին Բ—պ—փ
տառերը: Երեսուն-քառասուն տարի առաջ Մխիթարյան միաբան-
ները փորձեցին վեոականգնել նախնյաց տառադարձութիւնը և գր-
րում էին Լաֆոնթէնը՝ Ղափոնտէն, Լափլասը՝ Ղապղաս, Քոռնեյը՝
Կոռնեղիոս, Լամարթինը՝ Ղամարտինոս և այլն: Ընդհանուր կլինէր,
միաբանները արտասանութիւնը փոխեին: Ելնելով այս բոլորից՝
Յութուճյանն առաջարկում է.

1. Բ, գ, դ, ձ, ջ, պ, կ, տ, ծ, և տառերն արտասանել արե-
վելահայերի նման,

2. օտար վի-ն ֆ արտասանել,

3. բառասկզբի յ-ն չարտասանել թանձր հ, Յարութիւն և ու՛
Հարութիւն,

4. օ-ի փոխարեն գործածել նախկին աւ-ը, ինչպես առաջար-
կել է Բագրատունին 1852 թվականին,

5. արտաքսել դ-ն, տեղը գործածել փշիկով լ:

Այս առաջարկութիւնը քննելու համար հոգւածագիրն առա-
ջարկում է հանձնաժողով կազմել հետեւյալ կազմով՝ Խրիմյան
Հայրիկ, Հովհ. Հյունքյարպեյենտյան, Մարկոս Աղաբեկյան, Գրի-
գոր Նիկողոսյան, Իսմիթ Քալանթարյան: Այս առաջարկութեան
ընդառաջելով՝ տաճկահայ բարձրագույն կրթական վարչութեան
ուսումնական խորհուրդը կազմում է հանձնախումբ հետեւյալ կազ-
մով՝ Խրիմյան Հայրիկ, Խ. արք. Նարպէյ, Հ. Սերովբէ, Վ. Տերմիշ-
յան, Հյունքյարպեյենտյան, Մ. Գարազաշյան, Մ. Աղաբեկյան, Գր.
Նիկողոսյան, Դավիթ Քալանթարյան³⁸: Հանձնաժողովին հանձնա-
րարված էր քննել Յութուճյանի առաջարկը: Առաջին նիստը կազ-

մակերպչական բնույթ ունեւր: 2-րդ նիստը կայացել է մարտի 31-ին, ուր կարդացել են «Մշակ»-ում տպագրված Սարուխանյանի հոդվածը՝ «Հայկական տառերու հնչումը և Թուրքիո հայերը» խորագրով, Գեորգ Ախվերդյանի «Սայաթ-Նովա» գրքի առաջաբանում հայկական տառերի մասին շարադրանքը, Ղ. Աղայանի «Հայկական տառերի հնչման մասին» գրքուկը և Գ. Տեր Ալեքսանդրյանի «Թիֆլիսեցոց կեանքը» գրքում հայ տառերի մասին արված դիտողութունները: Քննարկումը վերջանում է նրանով, որ որոշում են, թե արևելահայերի հնչումը գրոց սուրբ թարգմանիչների հնչումն է: «Արևելեան հայոց (Արարատեան) հնչումը սրբոց թարգմանչաց հնչման ճիշտ նման լինելու ամենամեծ հավանականութիւնն ունի», — գրված է որոշման մեջ: Փակագծերի մեջ ասենք, որ հրիմյան Հայրիկը հրաժարվել էր և իր փոխարեն ուղարկել էր Գ. Սրվանձությանին: Հրաժարվել էր նաև Մխիթարյաններից Յաղըճյանը: Թեև հարցը պարզ էր, Վհուր հետաձգվում է 3-րդ նիստին: Ապրիլի 6-ին կայանում է 3-րդ նիստը, որից բացակա էր Գարեգին Սրվանձությանը: Ահարատյան հնչումը պարտադիր դարձնելուն կողմ են լինում հանձնաժողովի անդամները, բացի Հյունքյարպեյենտյանից, որը 2-րդ նիստից բացակա էր, և Մ. Գարագաշյանից: Ուսումնական խորհրդի ատենապետ Թիրաքյանը ցանկութուն է հայտնում որոշում կայացնել, բայց ժողովի նախագահը (Նիկողոսյան) կարծիք է հայտնում հարցը քննել լայն շրջանակում՝ էջմիածնում, Երուսաղեմում, Վենետիկում, Վիեննայում, Մոսկվայում, Թիֆլիսում և խնդրել ուսումնականներ էմինի, Պատկանյանի, Այտրնյանի և մյուսների կարծիքները: Հանձնաժողովն այդպես էլ որոշում է, սակայն 3-րդ նիստը դառնում է վերջինը և հարցը մնում է չլուծված:

Յուրիուճյանի ղեմ հոդվածներ են գրում արևմտահայ մտավորականները: «Արևելք»-ի 1888 թ. մարտի 25-ի համարում տպագրվում է Հոռմի Հայկազնեան վարժարանի (կոլէժ) հայոց լեզվի ուսուցիչ, վարդապետ Հովհ. Մխսքչյանի հոդվածը, ուր հեղինակը ճգնում է ապացույցել, որ ոչ թե արևմտահայերն են շեղվել մեսրոպյան ուղղագրութունից, այլ՝ արևելահայերը: Հենվելով Բագրատունու այն մտքի վրա, թե «նախնիքն յամենայնի այնչափ ևեթ զնմանագոյն տառս մի եղին ի տառադարձութիւն հանդէպ տառիցն օտարաց, որչափ մարթէրն և տանէր լեզու», Մխսքչյանը պնդում է, թե թարգմանիչները օտարազգի տառերը մաթեմատիկական ճշտությամբ չփոխադրեցին հայերին, դա հնարավոր էլ չէր, ուրեմն «օտարազգի անուանց բնիկ հնչումն ի մեզ փոխադրած չեն»: Բայց

սա երբեք էլ չի նշանակում, թե այն ժամանակ պ-ն ր էր հնչում, կ-ն՝ գ. ինչպես կարծում է Միսքչյանը: Եթե թարգմանիչները օտարների ր, k, լ-ի գիմաց դրել են հայերեն պ, կ, տ, ուրեմն վերջիններս այդպես էլ հնչում էին, կամ նրանց մոտիկ, այնուամենայնիվ տարբերությունը կարող էր հնչյունային լինել, բայց ոչ՝ հնչույթային: Այլ կերպ ինչու էին օտարները Tigran դրել «Ջայս գիտնական մը շի կրնար ուրանալ»,—ասում է Տերվիշյանը: Միսքչյանը կասկածի տակ է առնում արևելահայ հնչման հնությունը, գուցե նո՞ր են աղբյուր հնչում, նրանց հին հնչումն աղավաղվել է՝ վկայակոչելով Այտընյանին՝ հոդվածագիրը պնդում է, որ արևելահայերը ր, գ, դ, ձ, ջ-ի մեսրոպյան հնչումը չեն պահել, դրանք հնչում են փ, ք, ի. ց, շ-ի մոտիկ, թեև Այտընյանը, նշելով, որ Եդարի հնչյունային համակարգը այժմ փոխվել է, այնուամենայնիվ ընդգծում է, որ թարգմանչաց հնչյունային համակարգին մոտիկ կանգնածը արևելահայերին է: Այտընյանի նշած հնչյունային փոփոխությունը ձայնհոսների շնչեղացման է վերաբերում (bh, gh, dh), որ առկա է Արարատյան բարբառում: Միսքչյանի հիշյալ մտքերը Մադաթ Գարագաշյանի, Տիրոյանի ասածների տարբերակն են: Քննադատելով Գարագաշյանի այն միտքը, թե «տառերի հնչմունք բնածին են և չեն փոխվի», Ա. Սարուխանյանը հիշյալ հոդվածում գրում է, որ արևմտահայ ռամկական խավի դավակները արտասանում են bari, gah, իսկ Պոլսի դպրոցներում սովորեցնում են արտասանել՝ pari, kah: Այնուհետև բերում է Մ. Գարագաշյանի խոսքերը, թե «Այս կամ ասոր մօտ փոփոխություն մը մեր արտասանության մէջ, ապաքէն ամօթալի խոստովանութիւն մը կընենք, թե սխալած ենք... Եթե յիշեալ փոփոխութիւնը պիտի ընենք լոկ ի սէր միութեան, ընդէ՞ր մենք ընենք այս ծանր զոհն և ոչ հակառակ կողմը»,— և ավելացնում՝ ուրեմն արևմտահայերը ամաչում են սխալը խոստովանելուց: Վիեննայի Մխիթարյանները մի ժամանակ գրում էին նախնյաց տառադարձությամբ՝ Conrad > Կոներադ, Bacon > Բակոն, gaz > գազ, Wurtemberg > Վիրտեմբերգ և այլն, բայց հետո, չղիմանալով հարձակումներին, թողեցին, որ, իհարկե, նրանց համոզումներից չէր բխում: 1897 թ. «Բազմավէպը» հայտարարում է, որ սկսել է քայլ առ քայլ փոփոխել իր բռնած ուղղությունը անվանց տառադարձության հարցում, «ջանաց միջին ճանապարհ մը բռնել» (էջ 46): «Հանդես ամսօրեան» եւս վերջին տարիներուս մէջ անուանց տառագրութեանց մասին զգալի փոփոխութիւն մը մտցուց իւր գրութեան մէջ՝ հետեւելով հնոյն ըստ կարի» (ն. տ.):

Ուրեմն միայն Ֆուֆուճյանը չէր, որ պահանջում էր տառադարձության հարցում հետևել արևելահայերիս և պահպանել նախնայաց ուղղագրությունը: Դեռ Հ. Տերվիշյանը «մասին»-ի օգտին իր «Լեզուաքննություն» հոդվածաշարում տառադարձությունը կատարում էր ավանդական ձևով, արևելահայերի նման, և պոլսեցի մի լեզվաբան դա ուղղագրության դեմ ոճիր էր համարում:

Կարծես հենց Տիրոյանին, Գարսեղյանին, Միսրյանին էր ակնարկում Հր. Ասատյանը՝ գրելով. «Ոմանք կարող են կարծել, թե արևմտահայերը շարունակում են հնադարյան հայերենի (նախքան և դար) հնդեվրոպական վիճակը, քանի որ խույրեր նրանց մոտ թրթռուն են ($p > ք$, $t > ժ$, $k > ց$): Բայց դա ճիշտ չէ: Նախ՝ որովհետև միջին (կիլիկյան) հայերենի պ, կ, տ, ծ, ճ ձայնաշարջությունը հաստատ է, երկրորդ, եթե արևմտահայերը պահած լինեին նախքան և դարի հնչումը՝ $dom > դուն$, այդ պիտի երևա: Նաև օտար փոխառյալ բառերում: Ե դարից առաջ հայերը պահպանել են ինքնից փոխ ևն $patkar$, $karmir$ և նման այլ բառեր, որոնք գրել են՝ պատկեր, կարմիր, եթե արևմտահայերը և դարից առաջ $պ > ք$, $կ > ց$ հնչած լինեին, հիմա պիտի հնչեին պատկեւ, կարմիր կամ փաքեւ, քարմիր և ոչ թե badger, garmir, ինչպես հիմա են հնչում: Նշանակում է կրկնակի ձայնաշարջում է եղել, երկրորդ դեպքում՝ վերադարձ դեպի առաջինը»³⁹:

Պ. Տեմիրճիպաշյանը (Գրասեր Ասում) գտնում է, որ դժվար է արևմտահայությանը նոր հնչում, նոր արտասանություն սովորեցնել: Ինքն էլ է փորձել բարեփոխություն մտցնել՝ վերացնել բայերի կը նախամասնիկը, սակայն չի հաջողվել ստանալ տեսնեմ, կարդամ ձևերը իբրև ներկայի ձևեր: «Մի երթաք ժողովրդեան հակառակ»,— եզրակացնում է Գրասեր Ասումը: Բերելով Ասումի այս կարծիքը՝ Սարուխանյանն ընդգծում էր, որ Պոլսի դպրոցներում են սխալ հնչումը սովորեցրել, թող այդ դպրոցներում էլ ուղղեն իրենց սխալը⁴⁰:

Այս հարցի առթիվ ընդարձակ հոդվածով հանդես եկավ հ. Գ. Մենեփիշյանը⁴¹: Ըստ այդ հոդվածի՝

1. Տառահայտարարության թուրքերենի ազդեցությանից ու նորաձևությունից չի բխում: Այդպիսի հնչյունափոխություն կատարվել է նաև այլ լեզուներում: Օրինակ՝ թավ հնչյունները հնդեվրոպական լեզուներից միայն սանսկրիտում են պահպանվել, հունարենի շփականները փոխվել են, գոթերենի թավերի հ-ն ընկել է՝ bh, gh, dh > b, g, d: Հայերենում նույնպես բհ > բ, գհ > գ, դհ > դ: Ուրեմն արևմտահայ արտասանությունը լեզվական երևույթ

է, ոչ թե սխալ: Դեռ և դարից առաջ է առաջին հնչյունափոխությունը եղել, հայերեն ատամ-ի դիմաց հույներն ունեն *adonay*, սանսկրիտը՝ *danta*, լատինը՝ *dens*, հայ. ատել—լատին՝ *odl*, բանտ—սանսկրիտ՝ *baadh*, տասն — սանսկրիտ՝ *dason*, տուն — սանսկրիտ՝ *dhaman* լատին՝ *domus*, ամպ—սանսկրիտ՝ *ambhas*, կեալ—սանսկրիտ՝ *giv*, կին՝ *gnû* և այլն: Եթե հնում տիւ, տալ, տաս բառերը ի-ով են արտասանել, ուրեմն խոտորել են հնդեվրոպական արտասանությունից, եթե ժ-ով, պահպանել են այն: Այստեղ սխալի հարց չկա: Արեւմտահայ տարարտասանության հարցում ավելի շատ եվրոպական լեզուներն են դեր խաղացել, քան թուրքերենը, մանավանդ որ այդ շեղումը սկսվում է կիլիկյան շրջանից, իսկ կիլիկյան հայերը կապված էին լատինացիների հետ:

2. Տարարտասանությունը չի խանգարում ազգի միությանը, բավական է, որ գրավորը նույնը լինի: Մխիթարյան հայերը 30—40 տարի առաջ մեսրոպյան հնչում էին պահպանում, բայց որովհետև իրենք միայնակ էին, իսկ ժողովուրդը շատ, ետ քաշվեցին:

3. Պատշաճագույն է, որ տաճկահայ գավառականը միություն պահի գոնե առաջժամ գրության մեջ, չհետևի իր արտասանությանը. այլ նախնյաց տառադարձության օրենքին: Մանավանդ, երբ օտար բառը հայացնել ենք ուզում, պիտի ճշտիվ առաջնորդվենք հին տառադարձության կանոններով ($p > պ$, $t > տ$, $k > կ$, $b > բ$, $g > գ$, $d > դ$ և այլն): Մենեվիշյանի այս երրորդ դրույթին համաձայն է արեւմտահայ մտավորականության ճնշող մեծամասնությունը, այդ թվում Այստընյանը, Հովհաննյանը և ուրիշներ: Հարցը, սակայն, այդպես չլուծվեց, շարունակեցին տպագրվել բանավեճային նոր հոդվածներ:

1888 թ. «Հանդէս ամսօրեա»-ն հրապարակեց Հյուբշմանի կարծիքը: Հյուբշմանը գրում է, թե թիֆլիսեցիների (արևելահայերի) հին արտասանություն պահելը գովելի չէ և ոչ էլ արեւմտահայերի՝ այդ արտասանությունից հեռանալը. պարսավելի: Յուրաքանչյուր լեզու զարգացման ու փոփոխության մեջ է, միայն մեռած լեզուներն են անփոփոխ ու անշարժ: Լեզվական փոփոխությունները կատարվում են խոսողների կամքից անկախ: Հին ձևը լիզվագետի համար արժեք ունի և ոչ թե խոսողի: Անտեղի է պահանջել արեւմտահայերից՝ փոխել իրենց արդի արտասանությունը, որովհետև դա անհնարին է: Պատճառներից մեկն էլ այն է, ըստ Հյուբշմանի, որ արևելահայերը փոքրամասնություն են և չեն կարող մեծամասնությանը ստիպել, որ իրենց նման արտասանեն: Հյուբշմանի այս

սխալի պատճառն, ըստ երևույթին, Մխիթարյանների սխալ տեղեկութունն է:

Հյուբշմանին պատասխանում է Գ. Արծրունին, «Մշակ»-ի նույն թվի № 104-ում: Նա գրում է, որ Մխիթարյանները սխալ տեղեկութուն են տվել գիտնականին, արևելահայերը փոքրամասնություն չեն, թեև եթե փոքրամասնություն էլ լինեն, նրանց տառադարձությունը պիտի ընդունվի, իբրև նախնյաց գրությանը հարապատ ձև: Եթե նախնյաց ձևը պահպանելը գովելի չէ, ինչո՞ւ են գերմանացիք, ֆրանսիացիք, անգլիացիք, հոմեացիք պահպանում իրենց հին ձևը: Մխիթարյաններն էլ դեմ չեն արևելյան տառադարձությանը, «Բազմավէպի» 1888 թ. ապրիլ—հունիս ամիսների համարներում վիեննականները տառադարձության երկու ձև էլ օգտագործում են: Հակոբ Մելիք Հակոբյան անվան դիմաց գրում են Hagob Melik Hagobian, իսկ ֆրանսերեն kiko-ն գրում են Կիկո, Edmond de Amicis-ը՝ էդմոնդ ատէ Ամիչիս (կեսը տ, կեսը ղ տառով): «Հանդէս ամսօրեա»-ի 1888—89 թթ. էջերում տպագրվեց Ա. Այսրնյանի «Տառադարձութեան խնդիր» ծավալուն հոդվածը: Դա մի տեսակ ամփոփումն է հիշյալ բանավեճի, թեև Հյուբշմանի կարծիքն էլ ամփոփիչ էր: Ահա հոդվածի համառոտ բովանդակությունը: Թրակացու թարգմանիչը հայերենի բաղաձայնական համակարգը ներկայացրել է իբրև եռաստիճան՝ նուրբ՝ պ, տ, կ (π, τ, χ), միջակ՝ բ, գ, դ (β, γ, δ) և ստվար՝ փ, ք, ց (φ, θ, γ), հար և նման հունարենի բաղաձայնական համակարգին: Զի ընդունում Այվազովսկու այն կարծիքը, թե նախնիք իրենց տառադարձությամբ դարձան այժմյան շարյաց սկզբնապատճառ: Այնուհետև հոդվածագիրը որոշ պատմական տեղեկություններ է տալիս արևելահայ ու արևմտահայ մշակույթի զարգացման մասին, նշում, որ մինչև 50-ական թվականները արևելահայերը անտարբեր էին արևմտահայ ուղղագրության նկատմամբ: Բարձր էին գնահատում արևմտահայ մշակույթը: 1850 թ. «Արարատ»-ի № 14-ում Պատկանյանը գրում է. «Դեռ ևս Թիֆլիզի այժմյան Հայք ծնած չ'էին, որ Պօլսոյ Հայք ունէին անմահ յիշատակաց արժանի Բաղդասար Դպիր՝ հեղինակ նոր քերականութեան՝ Հայոց լեզուի պայծառացնող և այլ քերականութեանց սրբագրող: Հայաստանը Տիւրոսն է, Իզմիրն ու Պօլիսը Հայաստանի Կարկեղոնն են» (էջ 214): 50-ական թվականներից հետո սկսեց զարգանալ նաև արևելահայ գրականությունը (Պատկանյան, Աբովյան, Նազարյան), որն անցավ նաև արևմուտք: Արևելցիները սկսեցին տրտնջալ արևմտահայ տառադարձությունից: Վերանում է արևմտահայ գրականության նկատ-

մամբ եղած ականածանքը և լուսթյունը տեղի է տալիս բողոքի, թե ինչու են արևմտահայերը աղավաղում նախնյաց գրությունը, ապրտամբում ընդդեմ նախնյաց օրինաց, «որուն հավատարիմ ականդապահութիւնն այնուհետև իրենց, Արևելեաց, սեպհական առաւելութիւնն է եւ անկողոսպտելի պարծանքն ընդդէմ Արևմտեայց» (ԼԶ 121): Ծայրահեղ է «Մշակ»-ի կարծիքը, թե տաճկահայերը չեն կարող հայերեն ուղիղ արտաբերել, որովհետև դարերից ի վեր չեն ունեցել հայ վարժապետներ և իրենց մայրենին օտարներից (ամերիկացի միսիոնարներից) են սովորել, թե արևմտահայերի խոսորենակ հնչման պատճառը տգիտութիւնն է: Քննադատում է Աղայանին, որ ճիշտ ու անճիշտ ցուցումներից հետո ցուցումով է խոսում և հոգւածի վերնագրի տակ գրում «նուէր Պօլսոյ հայերին»: Աղայանը սխալ է գնահատել արևմտահայ գրականութիւնը, դրելով, թե մի 50 տարի է, որ պոլսեցիք սովորել են հայերեն խոսել և գրականութիւն ունենալ: Ու՛ր մնաց, հապա, Պատկանյանի հիշյալ գնահատականը: Դեմ է, որ մասնաժողովը պիտի որոշի արևմտահայ արտասանության հարցը: «Հասարակաց բախտն հանձնուած էր սակաւաւոր ժողովականաց բուէից»,—գրում է նա: Անհեթեթ է պնդել, թե արևմտահայ արտասանութիւնը նոր է, Պոլսին է հատուկ, Մխիթարյանների գշուտն է, որոնք ազգից հեռացած՝ կորցրել են ազգի հնչումը, թե այդ նոր հնչումը տաճկերենի ազդեցության հետևանք է: Հունական β , π , ϕ հնչյուններին է համապատասխանել Մաշտոցի բ, պ, փ տառերի հնչումը, որը, սակայն, այսօր չկա ոչ միջին աշխարհի, ոչ պարսկահայ և ոչ էլ կովկասահայ խոսվածքում: «Մեծն Մեսրոպի Տարօնացւոյ ավանդած հնչմունքն այսօրվան տարօնեցւոյն հնչմանցն համեմատ չեն, եւ ոչ էլ նախնույն Կողբացւոյ գրածն այժմու կողբացւոցն կարդացածին» (ԼԶ 208): Հայերենի հնչման այս տարատեսակութիւնը կարծվածից հին է, դարավոր ժառանգությամբ հաստատված: ԺԱ—ԺԲ դարից մեղ հայտնի է հայերենի նուրբ տառերի հնչման փոփոխութիւնը: Այնուհետև պ, տ, կ-ն հնչում են փ, ժ, ց: Արևմտյան արտասանութիւնը հին է և ոչ Պոլսի ազդեցության հետևանք: Ժիշտ չէ հնության հարադատ հրնչման նորագույն խոսորումը (տառադարձութիւնը) տգիտության հետևանք համարել: Այդ խոսորումը նոր չէ, ժամանակի արդյունք է և կատարված առանց գիտակցման: Անհիմն մեկնութիւն է հիշյալ երևույթը օտար լեզվի ազդեցության հետևանք համարել, կիլիկիացիների հարմարագրութիւնը ֆրանսիացիներից թխեցնել: Այստեղյանի կարծիքով՝ Կիլիկիայից դուրս էլ այդ գրութիւնը կար: Ինչպե՞ս կարող էր ֆրանսիացին պատճառ դառնալ պ>բ, բ>փ փոփոխու-

թյան, երբ ինքը ունեւր և զանադանում էր Խ—ք, Ժ—տ տառերը: Հակառակը՝ ֆրանսերեն բառերն են հայերենում աղավաղվում: Այժմ միջերկրյա հայերը շարունակում են միջնադարյան արտաբերությունը ք, կ, լ > ք, ց, Ժ, վերջիններս Արևմտյան Հայաստանում սովորեցնում են իբրև ք, կ, լ, իսկ արևելյանում՝ Խ, ց. Ժ: Թե ինչպե՞ս էին սովորեցնում Ժ—Ժ դարերում դպրոցներում—ո՞վ գիտե: Անուրանալի է օտար լեզուների ազդեցությունը, ասում է Այտրնյանը, չէ՞ որ տաճիկ, լեհ ու մաջաղեզուների բաղաձայնների էլ երկաստիճան են: Տաճկահայերի բերանում ուն ու րւն մեկ են, որը տաճկերենի ազդեցությունն է, տաճկախոս հայերը չունեն ձ. ծ. ց. իսկ խւն միշտ Խ է, Ժւն՝ թեքված դեպի Դւն: Տաճկերենի ազդեցությունից հայերեն բառերն էլ փոխվել են: Մի քանի դար առաջ անորոշ էր ուղղագրությունը, այժմ կանոնավորված է: «Չկա լեզու մը այնպէս որոշ կանոնաւոր կերպով երկու կառոյ բաղաձայններին իրարու անվրէպ փոխանակած, ինչպէս արեւմրտեան ըստած հայերէնը դարերէ ի վեր» (լջ 40, 1889 թ.): Ուրեմն Այտրնյանը դեմ է արևմտահայ արտասանությունը փոխելուն՝ գտնելով, որ դա մի կուռ համակարգ է և դարերի պատմություն ունի: Տարարտասանությունը ազգի միասնությունը չի խախտում:

«Բաղմավէպ»-ի 1889 թ. № 4-ում տպագրվեց հ. Բ. Սարգիսյանի մի ծավալուն հոդվածը՝ «Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն եւ հայերէն նշանագրաց վրայ»: Հեղինակը մի ակնարկով ներկայացնելով մեր գրությունը Մաշտոցից մինչև 90-ական թվականները, ցույց է տալիս այն շեղումները, որ նկատվել են զանազան ձեռագրերում: Հեղինակի հիմնական եզրակացությունն այն է, որ արևելահայերենը հարազատ է մնացել մեսրոպյան գրությանը, Տիրոջանը, Գարագաշյանը սխալ են կարծում, թե Մեսրոպի ժամանակ էլ արևմտահայ ու արևելահայ բարբառներ կային, թե Մեսրոպի տառերը համապատասխանում են արքունի դասի մի խումբ գրագետների խոսվածքին և ոչ ամբողջ հայ ժողովրդի: Հայերենի այբուբենը համապատասխանում է հայ ժողովրդի հնչույթային համակարգին: Գ. Այվազովսկին և մյուսները հաստատեցին նոր տառադարձության վարդապետություն, հիմնված միջին հայերենի և իրենց արտասանության վրա: Ռուսահայերը հարազատ մնացին մեսրոպյան հնչմանը, եթե առանձին շեղումներ կան (ֆերթմարշալ, Դեմիտով, Ապրեսկով, ռուբլի—ռուպլի, Աբբաս—Ապպաս, դեպուտատ—դեփուդատ և այլն), ապա դրանք էլ առանձին խոսվածքների արդյունքն են: Ռուսահայ որոշ մատենագիրների գործերում նկատվող ուղղագրական շեղումներից չի կարելի եզրակացնել, թե ու-

սահայերն էլ են խոտորել մաշտոցյան հնչումից: Հայտնի բանահավաք Գարեգին Սրվանձտյանը գրում է. «Մենք (արևմտահայերը) կրսխալիք, այո, երբ Բ, Գ, Դ, Ծ, Զ տառերը փ, ֆ, ք, ց, շ տառերուն տեղ կը գործածենք, և կրկին կրսխալիք, երբ պ, կ, տ, ծ, ց տառերն ալ Բ, Գ, Դ, Ծ, Զ տառերու ձայներով կը հնչենք» (Գրոցբրոց, էջ 133): Այս կարծիքին են Այտընյանը, Պետերմանը, Շրյոդերը, Հյուբշմանը, Լուգարզը և արևմտյան մյուս գիտնականները Ըստ Սարգսյանի տաճկահայերի արտասանական խոտորման սլատ-ճառը շորսն են:

1. Օտարաբան և օտարահնչյուն ազգերի մուտքը Հայաստան և նրանց գործած զորավոր ու դարավոր ազդեցությունը:

2. Այդ ժամանակ հայ ժողովրդի ետամնացությունն ու գրականության մոռացությունը:

3. Հայ մտավորականության օտար աշխարհ տեղափոխվելը, իսկ ժողովրդի անմշակ մասի միշտ հարստահարված ու նվաճված լինելը:

4. Մի կողմից՝ գերմանական, սլավո-լիդական լեզուների նորանոր ձևափոխությունները և հին դպրության մեջ ձայնական հեղաշրջումները, մյուս կողմից՝ հայ գաղթականության դրանք սովորելու և արտասանելու անհրաժեշտ հարկը: Անկարելի է գտնել սփյուռքից գաղթած և հայրենիքում մնացած հայություն, որի գրավոր ու կենդանի լեզվի մեջ շլինի մոնղոլաթուրք լեզվի ազդեցությունը: Թուրքերենի ազդեցության տակ փոխվել է արևմտահայերենի ուղղագրությունը: Օրինակ՝ թուրքերեն գրքերը (կտրիճ) բառի ազդեցության տակ պոլսեցին գրում է կրտիրին, ալֆեառե-ից ալֆ-ը աշկ է դարձել, փենդիր-ից պանիրը՝ փանիր: Աֆիոնը դարձել է ափիոն, մածունը՝ մաճուն, տախտը՝ բախք, ուսը՝ ֆուս, հոտը՝ ֆոտ, հողը՝ ֆոդ: Մակրայների նվազական կ-ն և -ի է փոխվել, դիմորոշ ա-ն ֆ-ի է փոխվել, հացսրգ-ը դարձել է հասսրգ:

Օտար բառը գրելիս պիտի նրա նման գիր ընտրել, որ ճշգրիտ ներկայանա տվյալ բառը, իսկ հայերենում փոխում են, խնդաթյուրում ձայները, մինչև որ հայացնում են այլ ազգի բառերը, դա հայերենի եվրոպացում է տառերի փոփոխությամբ և ոչ տառադարձությամբ: Դա օրենք չէ և հատուկ է միայն արևմտահայերենին: Մեր նախնիները Παλαμος -ը Պիղատոս, Gabalan -ն Գաբալա, Μεταξας -ը Միլտիաթես հարմարագրելով՝ չեն աղավաղել լատին ու հույն բաղաձայնները: Արևմտահայերը պիտի ուղղեն իրենց արտասանությունն ու գրությունը: Սխալ ճանաչելը մի առաքինություն է, այն ուղղելը՝ երկու: Ճիշտ է, որ այլ լեզուներում էլ

կան հնչյունական կազմի պատմական փոփոխություններ, և այդ աղբերը, աշխուսմաննայնիվ, իրենց նորը պահպանում են, բայց նրանցում եղակի տառեր են փոխվել, իսկ մեզանում շատ են: Ի՞նչ արևմտահայերը վերահաստատեն իրենց գավառում նախնյաց տառադարձությունը, երկու հատվածների գրականությունը միասնական կդառնա, կվերանան վեճերն ու խորթությունը, մարգիկ իրար հեշտ կհասկանան:

«Բազմավէպ»-ը 1897 թվականին բանավեճ բանալով՝ նորից հանդարդառնում տառադարձության կամ, ինչպես իրենք էն անվանում, հարմարագրության հարցին: Իրար պատասխանող հոգվածներով հանդես են գալիս Իսրայելյանը, Բանասերը, Հացունին:

Իսրայելյանը պնդում է, որ տառադարձության հարցում պիտի հետևել նախնիներին, թե՛ հին և թե՛ նոր փոխառյալ բառերը պետք է գրել ըստ օտար տառերի և ոչ թե ըստ հնչման: Caesar-ը հընչվում է Չեզար, Ciprianus-ը՝ Չիպրիանոս, Agathangelus-ը՝ Ագաթանջելոս, բայց մեր նախնիները գրել են տառային գրությամբ՝ Կեսար, Կիպրիանոս, Ագաթանգելոս:

Բանասերն առաջարկում է հին փոխառությունները պահել հին տառադարձությամբ, նորերը տառադարձել ըստ փոխառու լեզվի հնչման: Այլ կերպ օտարները կծաղրեն՝ իմանալով, որ մենք իրենց Chateaubriand-ը (Շատոբրիան) դարձրել ենք Քատեաբրիանդ, Voltaire-ն (Վոլտեր)՝ Վոլտահոէ, Schiller-ը՝ Սքիլդէո, Schlegel-ը՝ Սքլեգել, Coreggio-ն (Կորէճիոյ)՝ Կորէգգիո, Pessi (Պէճ-ճի)՝ Պեկկի, Biagio-ն (Բիաճիոյ)՝ Բիագիո, Giacinto-ն (Ջիաճինտոյ)՝ Գիակինտոյ, Chakesspeare-ն (Շէքսպիր)՝ Սհաքէսպէտէ և այլն: Մեր նախնիք էլ ըստ հնչման են տառադարձել և ոչ թե ըստ տառերի: Այլ կերպ Յեսու-ն կգրեին Յեշով, Սամուէլ-ը՝ Շմուել, Սաուու-ը՝ Շաուու, Միքայէլ-ը՝ Միխայէլ, Սիդա-ն՝ Շիդա, ինչպես որ արել են ասորերենից վերցնելիս: Այդպես են վարվել նաև միջին հայերենում, Camblerlan-ը գրել են Ջամբուլայն (կամ Շամբուլայն), lige -ն՝ լիգիոն, marechal -ը՝ մարաջախտ, Josselin-ը՝ Ճօսլին և այլն: Կարելի՞ է mont Cenis-ը հնչել մոնտ սընի, դրել մոնտ Կենիս, Geoffroi-ն հնչել Ժօֆրուա, գրել Գլեֆֆրուա, François հնչել Ֆրանսուա, գրել Ֆրանկուա և այլն: Թեև հեշտ է տառային տառադարձությունը գրողի համար, կնայի տառին ու կգրի, բայց դրանով կաղավաղվի փոխառյալ բառը: Երբեմն մի հնչյունը երկու-երեք տառով է արտահայտվում, բառերն ունենում են համար տառեր, որոնք եթե գրենք, կաղավաղենք բառերը: Ուստի հին անունները պիտի պահել հին տառադարձությամբ, իսկ նոր

փոխառյալ բառերը՝ ըստ փոխատու լեզվի հնչման: Սուրբ գրոց Պետրոս, Յովհաննէս, Յակովբ, Յովսէփ բառերը ֆրանսերեն դարձել են՝ Պիեր, Ժան, Ժաք, Ժօզէֆ, իտալերեն հնչմամբ՝ Պիետրո, Ջիովաննի, Ջիակոմոյ, Ջիուսէպպէ, անգլերեն հնչմամբ՝ Պետր, Ճօն, Ճէյմս, Ճօզէֆ, ռուսերեն հնչմամբ՝ Պէտր, Իան, Եակոբ, Եօսիֆ: Եթէ ֆրանսիական անուն է, պիտի գրվի Պիեռ. իտալականը՝ Պիետրո, անգլիականը՝ Պետր, ռուսականը՝ Պետր: Յուրաքանչյուր անուն տառադարձել փոխատու լեզվի հնչման համաձայն: Այս տեսակետից ճիշտ է Բանասերը: Բայց այդ տառադարձութիւնը չպիտի տարածել հին փոխառութիւնների վրա, հակառակ դեպքում, ինչպէս վերն ասկեց, միևնույն բառը մեկից ավելի գրութիւն կստանա և անճանաչելի կդառնա: Նոր անուններն էլ ըստ հնչման տառադարձելիս, հեռանում ենք նրա (տվյալ բառի) ծագումից. երբ մենք անգլերեն Ջոն անունն ենք օգտագործում կամ ֆրանսերեն Ժան, չենք մտածում, որ դրանք սուրբ գրոց Յովհաննէս անունն են: Տվյալ դեպքում մենք գործ ունենք փոխատու լեզվի հետ, նրա հնչմանը պիտի համապատասխանեցնենք հայացի ձևը:

Այսպէս, ուրեմն, բանավէճն սկսողները նպատակ ունեին երկփեղկված հայ ժողովրդին միացնել գոնե լեզվի, նրա գրավորի միջոցով: Նպատակը՝ ստեղծել մի միասնական գրավոր խոսք, բարի էր: Այս հարցի կապակցութեամբ մյուս հարցի քննութիւնը, թե՛ ե՞րբ և ինչպէ՞ս սկսեցին արևմտահայ հատվածում բաղաձայնները խլաղրկվել, սխալ ուղու վրա էր դրված: Երկու կողմերն էլ (Աղայան, Տիրոյան) ծայրահեղութեան մեջ էին: Այս հարցում ճիշտ էին Այտընյանը, Մեննիփիշյանը, Հովնանյանը, որոնք մաշտոցյան ժամանակվա գրական լեզվին հարազատ էին համարում արևելահայերենը, գտնում, որ տառադարձութեան հարցում պիտի հետևել նրանց: Բայց արտասանութեան մեջ փոփոխութիւններ մտցնել՝ վերականգնել արևմտահայերենում եռաստիճան. բաղաձայնական համակարգը, հնարավոր չէ: Արևմտահայերենի բաղաձայնական համակարգի խլաղրկվելը լեզվական երևույթ է և ոչ թե սխալ, այն գալիս է միջնադարից և ոչ թե միայն թուրքերենի ազդեցութիւնից: Կարևորը միասնական գրավոր ստեղծելն է, բանավոր խոսքում տարարտասանութիւնը չի խախտում մեր ժողովրդի միասնութիւնը, միայն թե ունենանք միասնական գրավոր խոսք, այս է արևմտահայերի եզրակացութիւնը:

Արևելահայերի պահանջը՝ վերականգնել արևմտահայերենում խուլ հնչյունների արտասանութիւնը, որ նրանք էլ արևելահայերենի նման ունենան եռաստիճան բաղաձայնական համակարգ, միայն

բարի ցանկություն էր, տեսական նշանակություն ունեցող հարց, զործնականորեն դա անիրագործելի մի բան էր և, ինչպես Այստրեյանն է ասում, հանձնաժողովի որոշումով չէր կարող իրականանալ, մասնավանդ, երբ այդ ժողովուրդը շուներ մի միասնական պետութիւն:

Իրրեւ ամփոփումն շարադրում ենք 19-րդ դարի հայերենի ուղղագրութեան կանոնները ըստ Մ. Աբելյանի «Հայոց լեզուի ուղղագրութիւնը» (Թիֆլիս, 1892) գրքի, որն ընդունված է գրական երկու լեզուներում:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

1. Հայերենում ա, ո տառերը հաջորդ ձայնավորներին անմիջապես չեն միանում, նրանց միջև յ է մտնում և կազմում՝ այա, այե, այի, այո, այու տառակապակցութիւնները: Օտարաղգի բառերում հնարաւոր են աա, աօ, առ տառակապակցութիւնները: Ահողակապը մյուս ձայնավորներին միանում է առանց յ-ի (ամենաւաղնիվ, ամենաուրախ, այգեառատ):

2. Է և Ի ձայնավորները հաջորդ ձայնավորներին են միանում առանց յ-ի, ուստի ձայնավորին նախորդող է, ի տառերից հետո յ տառ չի լինում՝ ստացվում են էա, էէ, էո, էու, իա, իե, իի, իո, իու տառակապակցութիւնները:

3. Ե-ից հետո ոչ մի ձայնավոր չի լինում, բացի եա, եօ երկբարբառներից:

4. Ը և Օ ձայնավորներից առաջ ու հետո ձայնավոր չի լինում, բացի եօ երկբարբառից և բառակազմութեան հետեանքով կազմված՝ հոգեւնկալ, ամենաօրինավոր, ամենաընդունակ և նման ձևերից:

Ե—Է.—1. Բառասկզբում յե լսվելիս գրվում է ե տառը (երկինք, երկար), Ե լսվելիս գրվում է է տառը (էջ, էակ, էգուց):

2. Ե հնչյունը բառավերջում միշտ գրվում է է տառով (ասէ, մարգարէ, բազէ, բոպէ), իսկ

3. նախավերջին վանկում՝ ե տառով (գերի, երեւի, հրեշտակ):

4. Նախավերջին վանկում Ե հնչյունը է տառով կարող է գրվել ա) այն դեպքում, երբ պահում է իր հնչյունը (քէական, մարգարէութիւն, Սիմէօն), իսկ ե-ն այդ դիրքում միանալով հաջորդ ա, օ ձայնավորներին, կկազմեր երկբարբառ (գործունեութիւն, հանգուցեալ, կայեարան և այլն),

բ) ի տառից առաջ (ասէի, խօսէի, գրէի),

գ) հետևյալ բառերում՝ ծէրութիւն, տնօրէնութիւն, գէրութիւն, գէշանալ,

դ) բոլոր բառերում՝ ոսկեօղ, հոգեառ, հոգեորդի և այլն, եթե 2-րդ մասը ձայնավորով է սկսվում, իսկ եթե բաղաձայնով է ըսկսվում, գրվում է ն տառը (ոսկեզօծ, ալեխառն, հոգեգալուստ և այլն):

Վերջին վանկում և միավանկ բառերում է է գրվում:

1. այն բառերում, որոնց է-ն բարդվելիս կամ ածանցվելիս փոխվում է ի-ի (պարտեզ, նուէր, տգէտ, պատուէր, դէպք, կէս, դէղ, գէս, մարդասէր և այլն), հոլովվելիս է տառը պահպանվում է (դէզի, պատուէրով, նուէրներ),

2. հետևյալ վերջածանցներում՝ եղէն, աւէտ, եւէտ, երէն, պէս էւ, կէն, էն (ամանեղէն, զինեւէտ, հոտաւէտ, հայերէն, այսպէս, քորոհնէք, ծակոտկէն, նկարէն),

3. էլ, էն, էս, էտ տառակապակցությամբ վերջացող հատուկ և շասարակ անուններում (Միքայէլ, Զաւէն, Ներսէս, պարէտ և այլն),

4. մի շարք բառերում, որոնց է-ն, սակայն, չի հնչյունափոխվում (գէշ—գէշութիւն, դէշանալ, փէշ, երէկ, մէկ, շէկ, հրէշ, եղէզն դմբէթ և այլն):

Վերջին վանկում և միավանկ բառերում e հնչույթը ե տառով է գրվում. 1. այն բառերում, որոնց e-ն ի չի դառնում (գէշ շեր, երես, ներկ, թեք), 2. հոգնակերտ եւ և ներ մասնիկներում (գրքեր, նստարաններ), 3. բայի վերջավորություններում (ել, եմ, ես, ենք, են, եց), բացի՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին ձևերից և հոգնակի 3-րդ դեմքի էմ վերջավորությունից, 4. արգելական հրամայականում (մի՛ ասեր, մի՛ գրեր):

Ո—Օ.—1. Բառասկզբում ՎՕ հնչյունակապակցությունը գրվում է ո տառով (որ, որակ, ոհմակ, որոնել, ոխական, որթ, որդ, որս, Ոսկան և այլն):

2. Բառասկզբում վ բաղաձայնից առաջ լսվող օ-ն գրվում է ո տառով (ով, ովկիանոս, ովազիս, Ովսաննա):

3. Բառավերջում օ հնչյունը միայն ո տառով է գրվում (քո, ա-յո, ներքոյ, յետոյ), բացառությամբ ձայնարկությունների, ուր լրսվող օ հնչյունը օ տառով է գրվում (հօ, տօ, օհօ, խօ):

4. Բառասկզբում օ հնչյունը գրվում է օ տառով (օր, օղ, օտար, օգուտ):

Ո-ով սկսվող բառը բարդվելիս կամ ածանցվելիս օ տառը պահպանում է (ամենօրեայ, ոսկեօղ, անօգուտ): Մենք նախորդ գլխում արդեն տեսանք, որ օ տառը գրվում է դասական գրաբարի քաղաձայնանախորդ ա տառակապակցության փոխարեն:

5. Բառամիջում օ և ո տառերը օ են հնչում, ուստի եթե վօ է լսվում, պիտի վ-ով կամ լ-ով, ու-ով գրել (թագաւոր, առաւօտ, զինուոր):

6. Բառավերջում կազմում է օղ, օք, օծ, օղ, օն, օմ, օն, օս, օտ, օ՛ք տառակապակցություններով վերջնավանկը:

7. Օտար օՏ վերջավորությունը գրվում է ոս տառակապակցությամբ:

8. Մի քանի բառեր գրվում են թե՛ օ. թե՛ ո տառերով (քող, արտորայ, գիւղորայք, դեղորայք, ծնող, կարգացող և քօղ, արտօրայ, գիւղօրայք և այլն), բայց նախընտրելին ո տառով գրելն է: Սխալ են՝ դրօշմել, խօստանալ, ճիշտ են՝ դրոշմել, խոստանալ ձևերը:

Ը.—1. Բառասկզբում և բառավերջում ր լսելիս գրվում է ը (ընտիր, ընդունելի, ընկեր, ընթերակայ և՛ դիրքը, ուսուցիչը, գրպրոցը):

2. Ը-ով սկսվող բառերում ածանցվելիս ու բարդվելիս ը տառը պահպանվում է (ամենաընտիր, դասընկեր, վերջընթեր, շրնարել):

3. Բառասկզբի սկ, սպ, ստ, գգ, գր, շպ, շտ կապակցություններից առաջ թույլ լսվող ր-ն չի գրվում:

Ն, Մ.—ր, պ, փ պայթականներից առաջ միշտ գրվում է մ տառը, բացառությամբ ան ժխտական նախածանցի:

Ղ — խ.—Բաղաձայններից առաջ լսվող խ-ն գրվում է ղ տառով (ողբ, խեղճ, եղբայր, աղբ, աղբիւր, զղջալ, ողկոյձ, աղբիւս, մղկըտալ և այլն, բացառությամբ այն դեպքերի, երբ խ-ն բաղաձայնին նախորդում է հնչյունափոխության հետևանքով (խախուտ—խախտել, յախիճ—յախճապակի):

1. Տ-ից առաջ լսվող խ-ն խ տառով է գրվում (ախտ, ապուխտ, բախտ, բախտակ, գխտար, կխտար, դրախտ, երախտիք, զմրուխտ, թախտ, պանդուխտ, սխտոր, ժխտել, լախտ, խորխտ, վխտալ. տախտակ, ուխտ): Խ տառով են գրվում նաև՝ դժոխք, կմախք, նախճիր, թխկի, թուխպ, թուխս, նախշ, Վախթանգ, վախճան:

Կան նաև՝ բաղղ, վաղնան, նախընտրելին՝ բախտ, վախճան ձևերն են:

Բ—Ռ.—1. Արմատական բառերում և-ին նախորդող դիրքում ո է լսվում և ո է գրվում (բեռնել, բռնել, կռնակ, նռնակ, ձեռներեց, առնական):

2. Մյուս բաղաձայններից և ձայնավորից առաջ գրվում է ր տառը (արծիվ, ջերմ, որդի, ձերբազատել, բարձել, դրանիկ, ձմերային, ամարանոց և այլն):

3. Արմատի կրկնության դեպքում ռ-ն բաղաձայնից առաջ փոխվում է ր-ի և գրվում է ր տառով (գրդիւ, բարբառ, մրմուռ, թրթռալ):

4. Բառասկզբում ր տառով գրվում են միայն բոլի և Ռաֆֆի բառերը: Մնացած դեպքերում բառասկզբի ռ-ն ու էլ գրվում է (ռագմ, ռանչպար, ռամիկ):

5. Ն-ից առաջ ր կարող է լինել այն դեպքում, երբ այդ տառը ն-ին նախորդել է շնչունափոխության հետևանքով (արնաներկ, գարնանային, վերնատուն):

Հնչյունափոխության կամ բառակապակցության հետևանքով ռ-ն կարող է այլ բաղաձայնի էլ նախորդել՝ սառչել, առչե, եռման, առթիվ, ուռճանալ, կառչել, ուռչել, ուռկան, թռչել, առկայծել, փառք, կառք և այլն:

6. Մյուս բաղաձայններից առաջ ո է գրվում հետևյալ բառերում՝ առվոյտ, խոպոտ, կառչել, կուան, հռչակ, հուռթի:

7. Նմանաձայնությամբ կազմված բառերում (գոգոալ, մոմոալ, ճոճոալ, զոզոալ):

8. Մնացած դեպքերում ր լսվելիս ր է գրվում, ռ լսվելիս՝ ռ (ջուր, դուռ):

Մ—Զ.—Զայնավորից հետո ձ գրվում է միայն օն բառում, մնացած բառերում գրվում են ձ կամ ց տառերը: Բառամիջում կամ վերջում ձ-ն գրվում է ր, դ, ն բաղաձայններից հետո (վարձ, դեղձ, հունձ), բացառությամբ Արցախ, արցունք, ընթերցել, հարց, պախուրց, տրցակ, ուրց, մրցել, քաղցր, աղցան, քաղցկեղ և մի երկու այլ բառերի:

Յ—Հ.—1. Բառասկզբում յ-ն կարդացվում է հ: Յ-ով սկսվող արմատների թիվը սահմանափակ է: Բառասկզբում բաղաձայնից առաջ յ-ն գրվում է հետևյալ բառերում՝ յղել, յղի, յղկել, յղանալ, յղփոթիւն և սրանցով կազմված մի քանի բառերում:

2. Բառամիջում ա, ռ-ից հետո յ-ն գրվում է իբրև ձայնակապ (կայարան, Մարոյի):

3. Յ-ով սկսվող բառերը ածանցվելիս կամ բարդվելիս յ-ն պահպանում են (անյաղթ, անյողդողդ), մնացած դեպքերում բառամիջում հ լսելիս գրվում է հ տառը (ջրահարս, արհամարհել):

4. Բառավերջին ա, ռ-ից հետո գրվում է համր յ-ն: Բառավերջում ա, ռ տառերից հետո յ-ն չի գրվում հետևյալ դեպքերում.

ա) դերանունների վերջում (սա, դա, նա, սրա, դրա, քո),

բ) հրամայական բայերի վերջում (գնա, կարդա, ասա, մատո՛ւ),

գ) մակբայների և միջարկությունների վերջում (այո, ապա, չիմա, ահա),

դ) ա-ով վերջացող հասուկ անունների վերջում (երևի, Սառա, Աննա):

Բառավերջի ա, ու-ից հետո չ տառը գրվում է այն դեպքում, երբ բառակազմության հետևանքով յ-ն վերականգնում է իր կիսաձայն հնչումը (ծառայ—ծառայի, ներքոյ—ներքոյական, կգնայ—կգնայի, յետոյ—յետոյք): Մակբայներն ու հրամայական եղանակի բայերը այնպիսի փոփոխության չեն ենթարկվում, որ յ-ն ստանա իր կիսաձայն հնչումը: Գրաբարում գրվում էր սայ, դայ, նայ և այլն, որովհետև հոգ ստանալիս և հորովվելիս յ-ն ստանում էր իր կիսաձայն հնչումը (նայն, քոյդ), իսկ աշխարհաբարում չ ի փոխարեն նրանք ն-են ընդունում (սրա-ներ, քո-ներ): Այս սկզբունքով էլ աշխարհաբարում պիտի գրել առանց յ-ի. 1. Հիմա, չեմ գնա, չիղնա, ամսուա, այսօրուա, տարուա, որովհետև սրանց վերջում բաղաձայն է եղել, կրճատվել է (գնալ, հիմալ, ամսուան, տարուան):

2. Անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքի բայերը (զարմացա, տեսա) գրաբարում յ-ով էին գրվում, որովհետև նրանցից կազմվում էր ապառնի ժամանակը (զարմացայ-ց, գոհացայ-ց, տեսայ-ց), ուրեմն այնտեղ յ-ն ստանում էր իր հնչումը:

3. Տեսականորեն ճիշտ չէ աշխարհաբարում հասուկ անունների վերջում յ-ն չգրելը, քանի որ նրանցում էլ աճելու դեպքում յ-ն ստանում է իր կիսաձայն հնչումը (Սառայի, Աննայի, Մարոյի): Այս անճիշտ գրությունը մնացել է գրաբարից: Բայց այս անճիշտ գրությունները չպիտի փոխել, պիտի պահել՝ չեմ գնայ, այսօրվայ, տեսայ, Աննա ձևերը: Միայն հիմայ և հիմա ձևերից պիտի պահել վերջին ձևը՝ հիմա:

Բ-ից հետո ն է գրվում, բայց չի արտասանվում՝ խոնարհ, շրնորհ, ճանապարհ բառերում:

Վ, ւ, ու.—Ունենք վ հնչյունի երեք նշանագիր՝ վ, ւ, ու:

1. Վ-ն գրվում է բառասկզբում և ո ձայնավորից հետո (վարդ, ծով): Բարդության կամ ածանցման ժամանակ վ-ն պահպանվում է (ղօրավար, արագավազ): Իբրև բարդություններ վ-ով պիտի գրվեն՝ ճվլլալ, թովոալ նմանաձայնությունները, որոնք կազմված են՝ ծիլ—վիլ, ծըլ—վըլ, ճըլ—վըլ, ճըռ—վըռ կրկնություններից: Կրկին վ-ով պիտի գրել շվվալ, շվվացնել, ծվվալ, գվվալ բառերը:

Ի(ւ)-ն գրվում է ա, ե, ի, ը ձայնավորներից հետո, որով կազմվում են աւ, եւ, իւ, ըւ տառակապակցությունները (հաւ, ցաւել, տերեւ, երեւալ, թիւ, հիւանդ, թեւ): Ըւ գործածվում է միայն

այն ժամանակ, երբ Վին հաջորդում է բաղաձայն՝ ծրծվալ, շրշուալ, սրսուալ, Դընի, ինչպես և տողադարձի ժամանակ: է, ո, ու ձայնավորներից, ալ, ոյ երկբարբառներից և բառավերջի բաղաձայններից հետո հայերենում վ հնչյուն չի լինում, ուստի և դրանցից հետո վ տառ չի գրվում: Օտարազգի բառերում և բարբառներում, եթե հանդիպի Վ հնչյունը, պիտի գրել վ տառով՝ Լուվր, Ալվազ, Մերվ: Օտարազգի Ե, Օ հնչույթները գրել ե, ո, որոնցից հետո կարելի է գրել Վ կամ վ տառերը:

3. Ու-ն գրվում է բաղաձայնից հետո, հաջորդ ձայնավորից առաջ՝ նուազ, գուարդ, լեզուի, գտնուել, յօդուած, աստուած: Այս կապակցությամբ Աբեղյանն անդրադառնում է հետևյալ առաջարկներին.

1. Երբ վահնչյուն ու-ին հաջորդում է ու ձայնավորը՝ ասուում է, խօսուում, թուում, դասատուութիւն, հովուութիւն, ընդհանրապես գրել վ-ով և ափելի հաճախ Վ-ով (ասուում, թուում, դասատուութիւն. հովութիւն):

2. Ոմանք առաջարկում են վ-ով գրել՝ բոլոր կրավորական բայերը (գրված, ասվել, կազմվեց), ժամանակ ցույց տվող գոյականների հոլովները՝ օրվա, տարվա, ժամվա, իսկ մյուս գոյականներում պահել ու-ով գրությունը (նշէր, Աստուած, յօդուած):

3. Մյուսներն առաջարկում են իւ-ով վերջացող և նրանցով կազմված բառերը գրել Վ-ով (թիւ—թւարկել, հաշիւ—հաշւել):

4. Կան, որ առաջարկում են վահնչյուն ու-ն գրել վ կամ Վ տառերով:

Առաջին երեքը, ասում է Աբեղյանը, ուղղագրությունը չեն հեշտացնում, քանի որ միևնույն հնչյունի համար մնում են երեք տառերը: Մի քիչ հեշտացնում է 4-րդ առաջարկը, բայց այդ դեպքում էլ մնում է մի հնչյունին երկու տառ: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ չի կարելի գրել աստված, շվաք, անվանել, տված, կատվի, ձվի, վերարկվի, հեռվից և Կամ՝ աստած, շաք, տած, կատի, հեռից, վերարկի, որովհետև այդ բառերի աճման դեպքում ու-ն կարող է պահպանել իր հնչյունը՝ աստուծու, շաքի, անուսով, կատուներ, հեռուներ, վերարկուով, տիրացուական: Շատ բարբառներում ասում են ձուի, հեռուի, գրական լեզվում՝ վերարկուի, տիրացուի, վերակացուի:

Ուղղագրության մեջ միատեսակություն ստեղծելու համար հարկավոր է Վ հնչյունի համար մի տառ պահել՝ Վ կամ վ, բացառությամբ այն դեպքերի, երբ վահնչյուն ու-ն վերականգնում է իր

ձայնավորական հնչյունը (կատու, վերարկու, ձու, տիրացու, աստուած), բայց սովորության ուժը մեծ է, և մնում է թողնել հին գրությունը, ինչպես բաղաձայնների հետ ենք վարվում: Իբրև բացառություն կարելի է թույլ տալ վահնչյուն ուն և տառով գրել, երբ նրան հաջորդում է ու ձայնավորը (խօսում, ասում, հովու-թին):

Միևնույն բառի ղուպահեո գրությունից պիտի այն ձևն ընտրել, որ մոտ է արտասանությանը, օրինակ՝ յառաջ—առաջ, յետ—ետ, բանտ—բանդ, խնճոյք—խնջոյք ձևերից երկրորդն ընտրել:

Ն, մ ձայնորդներից հետո նախնի խուլ պ, կ, տ, ծ, և տառերով գրության հետ շատ բառեր գրվում են արտասանության նման ձայնեղների տառերով՝ ամպարիշտ—ամբարիշտ, ամպար—ամբար, լամպար—լամբար (ղամբար), անկղ—անգղ, անկոսնել—անգոսնել, զանկուած—զանգուած, զանկ—զանգ, զանկակ—զանգագ, գպնկ—գանգ, թանկ—թանգ, ժանկ—ժանգ, ճանկ—ճանգ, խորամանկ—խորամանգ, յանկ—յանգ, վանկ—վանգ, ցանկ—ցանգ, խունկ—խունգ, ժանտ—ժանդ, ընտել—ընդել, ընտերք—ընդերք, ընտոծին—ընդոծին, ընտակեր—ընդակեր, սանտր—սանդր, փանտիւ—փանդիւ, խանծել—խանձել, խնծոր—խնձոր, կոնծել—կոնձել, հնծան—հնձան, խնճոյք—խնջոյք, խոնճան—խոնջան և այլն, սրանցից պիտի ընտրել երկրորդ ձևով, միջակներով գրությունը, որովհետև մեր լեզվում ն, մ տառերին սովորաբար հաջորդում են միջակ տառերը (ամբոխ, տանձ):

Եթե նշված բառերը ձայնեղներով գրենք, քիչ բառեր կմնան որ ն, մ-ից հետո խուլ պ, կ, տ, ծ, և ընդունեն: Դրանք են. անտառ, անտի, ընտիր, ընկնել, անկելանոց, անկ է, յանկարծ, անկուած, սունկ, տունկ, ամպրոպ, ճանճ, ծանծաղ, հանճար, ցանկանալ, կնտնտոց, ցնծալ, ընկղմել, անկողին, ամպ (անգողին, ամբ). անկիւն (անգիւն), ընկոյզ (ընգոյզ), ընծայ (ընձայ), ըմպել (ըմբել), մանկլավիկ (մանգլափիկ), ընկճել (ընգճել) և այլն: Ինձ կենդանու անունը գրվում է նաև ինձ ձևով, իսկ դերանունը՝ միայն ինձ ձևով: Գնդակ, երկրագունդ գրվում են նաև տ-ով, կնճիք-ը (խոզի, փղի)՝ և-ով, իսկ ջ-ով բույան է՝ ֆնջիք, կնճիւ (երեսի), իսկ կնջիւ (խաղողի):

Երկակի գրություն ունեն թագչիլ, թագ կենալ—թաքչիլ, թաք կենալ, թակարդ, թակարթ, ագաղաղ—աքաղաղ, անհեղեղ—անհեթեթ. սրանցից ընդունելի են 2-րդ ձևերը, որովհետև մոտ են արտասանությանը:

Խուլ խ-ի ազդեցության տակ (առնմանմամբ) ձայնեղ ժ-ն

փոխվում է խուլ շ-ի, որովհետև խուլն ու ձայնեղը չեն միանում (դժխոյ—դշխոյ, աժխոյժ—աշխոյժ, դժխեմ—դշխեմ)։ Սրանցից բնատրելի է 2-րդ ձևը։ Դժ ժխտական ածանցը անփոփոխ է մնում (դժգոյն, դժգոհ, դժկամ, դժբախտ)։

ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐ.—Գրաբարից մեղ անցած օտարազգի բառերի ուղղագրությունը պիտի պահպանել, դրանք հայացած են՝ փիլիսոփայ, Եւրոպա, Սոդոմոն, և ոչ՝ ֆիլոսոֆ, եվրոպա, Սօլոմոն։ Նույն փոխառյալ բառերը գրել այնպես, որ մոտ լինեն փոխատու լեզվի հնչմանը։ Արևմտահայերը հին դրականությունից մնացածները պահպանում են նույնությունը, իսկ նոր փոխառություններում ե, ց, լ-ն դարձնում են պ, կ, տ, իսկ ք, Կ Է-ն՝ ր, գ, դ։ Սա շեղում է մեսրոպյան և մեր բնիկ հայերեն արտասանությունից։ Տառադարձությունը.

1. Ֆրանսերեն *ս* (գերմաներեն *յ*) հնչյունը բաղաձայնից առաջ գրել իւ (Հիւգո, Նիւտոն), իսկ բառավերջում և բառամիջում՝ եու կամ իու, որովհետև իւ-ն այդ դեպքում իվ է կարդացվում (Նեու-նօրկ, Նիու-Յօրկ, բայց ոչ՝ Նիւ-Յօրկ, որ կկարդացվի Նիվ-Յօրկ)։

2. Ֆրանսերեն *սյ* (գերմաներեն *օ*) բառամիջում գրել եո, բառակազմում էօ (էօթեն, էօման, էօգել)։ Արևմտահայերը գրում են՝ Գէօթէ, Շլէօցեր, փոխանակ՝ Գեոթէ, Շլենցեր։

3. Օտարազգի փափուկ լ-ն (*լ*, *ll*) կա՛մ պահում է իր հնչյունը, կա՛մ թանձր է արտասանվում։ Պետք է լ և ճ տառերին հաջորդող ա և օ ձայնավորներից առաջ ավելացնել ե տառը և կազմել եա, եօ երկբարբառները, որոնցից առաջ լ և ճ տառերը փափուկ են արտասանվում *billard* > բիլեարդ, *brilland* > բրիլեանտ, *compañon* > կոմպանեօն և ոչ բիլարդ, բրիլանտ, կոմպանոն։

Բառավերջում կամ բառամիջում ա, է ձայնավորներից հետո լ և ճ հնչյունները փափկացնում են (շամպայն, ամալլգամ, պալլտո, *email* > էմալլ, *medaille* > մեդալլ, *portefeuille* — պորտֆէլլ, *bataillon* > բատալլեօն, *medaillon* > մեդալլեօն)։ Փափուկ լ-ն հնում գրում էին փշիկով, այժմ սկսել են օգտագործել, ոչ վատ չէ, լսվ է։

Օտարազգի *ja, je, ju, jo* երկբարբառները նախնիք գրել են յա, յե կամ ե, յու, յո (կամ յօ)։ Բայց հիմա բառակազմում յ-ն ճ է կարդացվում, հնարավոր չէ այդպես գրել, պիտի գրել՝ եա, ե, իւ, եօ (*laффа, Jena, Junker, Jurist, Jod* > Եաֆա, Ենա, Իւնկեր, Իւրիստ, Եօդ), որ նախնիք կգրեին Յաֆա, Յենա, Իւնկեր, յու-

րիստ, յօդ: Այդ երկբարբառները հին յա, յե, յո, յու ձևով գրել բառամիջում, որովհետև այնտեղ յ-ն և չի կարդացվում և ձայնավորի հետ երկհնչյուն է կազմում (major—մայոր, կայուտա, Դուբրովսկայա, Լաֆայետ և ոչ՝ մաեոր, կաիւտա, Դուբրովսկաեա):

Բառամիջում բաղաձայնին հաջորդող յե-ն գրել ին տառերով (օրիէկտ, սուբիէկտ): Արեւմտահայերը շատ դեպքում յ-ով են գրում՝ օբյեկտ, սուբյեկտ: Ստարագգի ia, ie, iu, io-ն տառադարձել իա, իե, իու, իո (piano > պիանոյ, piese > պիես, radius > ռադիուս):

Ստարագգի ր-ն (p) բառասկզբում արտահայտել ո-ով (Ռաֆայէլ, ռաբբի), իսկ բառամիջում և վերջում՝ ր տառով (Շիլլեր, բարոն, պարոն): Ն-ից առաջ գրել ո տառը (կեօռներ, կառնոյ):

Բառասկզբում օտարագգի e-ն գրել է, ռուսերեն e-ն՝ ե, իսկ բառամիջում ե տառով (պրոֆեսոր, տեմպերատոր, տեսսին, Վենքորան): Ե պիտի գրել նաև վերջնավանկում, որովհետև օտարագգի e-ն վերջնավանկում ի-ի չի փոխվում (խնժեներ, սիստեմ): Ժողովրդական լեզվից գրականին անցնող բառերը նույնպես ե տառով գրել:

Ստարագգի o-ն բառասկզբում արտահայտել օ տառով, բառամիջում՝ ո-ով (Օղեսոս, Սոկրատ, Հիւզոյ, Օգիւստ): Նախնիք բառասկզբում էլ ո տառով են գրել՝ Ոլիմպ, Ովիդիոս, Ներոն, Կիկերոն): Այժմ միայն վ-ից առաջ բառասկզբում կարելի է ո գրել, քանի որ այդ դիրքում ո-ն վօ չի կարդացվում (ով, ովքեր):

Ստարագգի բառերի վերջում ա, ո տառերին հաջորդող համը յ-ն գրել (բիւրոյ, դեպոյ), քանի որ հոլովվելիս նրանց այդ յ-ն ստանում է իր հնչումը՝ ֆիզիկայի, փիլիսոփայի, մեքենայի: Միաձեռնության համար, սակայն, ո-ով վերջացող հատուկ անունների վերջում յ-ն չգրել՝ Ռուսոս, Կառնո, ինչպես որ գրում ենք Աննա Սառա:

Ստարագգի բառերի վերջում օ-ն կարելի է գրել միայն ձայնավորից հետո (կէօ, ֆեօդալ):

Ստարագգի v հնչույթը հայերենի ուղղագրության կանոնի համաձայն բառասկզբում և ո-ից հետո գրել վ տառով, մյուս ձայնավորներից հետո՝ ա, իսկ բաղաձայններից հետո՝ ու տառով (վազոն, Վորոնցով, Մոլդաւիա, Զուիցերիւ, Շուեդիա):

ԱՅՆԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՅՆԱՎՈՐՆԵՐԻՑ առաջ լսվում և գրվում է յ ձայնակապը, ուստի a—o, a—e, a—u, a—i, o—a, o—e, o—i, o—u բաղադրությունները

պիտի տառադարձել այօ, այե, այու, այի, ոյու, ոյա, ոյի՝ Միքայէլ, Տրոյա, պոյետ (ոչ՝ Միքաէլ, Տրոա, պօէտ)։ Կան՝ Տրովադա, Լասաուլ, դարաուլ, Աբրահամ գրությունները։ Մյուս ձայնավորներին են միանում առանց չ ձայնակապի՝ Գաբրիէլ, Սէիլու եթե օտարազգի բառերում երկու կից ձայնավորների միջև չ չի լսվում, չպիտի գրել (բռայ, կլօուն)։

Հայերենին հատուկ չէ միևնույն բաղաձայնի կրկնությունը, ուստի օտարազգի բառերի կրկնակները մեկ բաղաձայնով են գրվում (Թաղէոս, Ապոլոն, Թեսալիա (ոչ՝ Ապոլլոն, Թաղէոս, Թեսսալիա)։ Բացառություն են՝ Աննա, Ֆիլիպպոս, ռաբբի, Աքիլլէս։ Այս դեպքում նկատի է ունեցվում արտասանությունը։

Բառավերջում միևնույն բաղաձայն հնչյունը չի կրկնվում (Գրիմ, Սկոտ), իսկ ձայնավորները պահպանվում են (Քաաբի, Լաօկօօն, Մօօր)։

ԳԼԽԱՏԱՌԵՐ.—Գլխատառով սկսել՝ գրվածքի վերնագրերը, սկզբի բառերը, վերջակետից հետո, ոտանավորի տողը, ուրիշի ուղիղ խոսքը, տերունական անունները (Աստուած, Ս. Երրորդութիւն, Հայր, Որդի, Ս. Հոգի, Տէր, Փրկիչ, Արարիչ, Վերին տեսլութիւն, Նա, Ինքը, Իւր՝ Եթե աստծուն է վերագրվում։ Հատուկ բաղադրյալ անունների բաղադրիչները՝ Աշոտ Երկաթ, Յուլիանոս Ուրացող, Դաւիթ Անհաղթ, Ներսես Հինգերորդ, Ներսես Մեծն։ Եթե տիտղոսները, պաշտոնների անունները ընդհանրապես են տրվում, գրվում են փոքրատառով՝ պատրիարք, կայսր, թաղաւոր, իսկ եթե մի հայտնի անձի անունն են օգտագործվում, գրվում են մեծատառով՝ Վեհափառ Կաթողիկոս, Սրբազան Առաջնորդ, Հայր Սուրբ, աբդպետ էլ՝ Դուք, Ձեր։ Աշխարհագրական անունները՝ Սև ծով, Վանա լիճ։ Եթե աշխարհի կողմը բնակիչ է նշանակում՝ Արևելքը ոտքի է կանգնել, բարձր կարգի պետական հիմնարկների անունները՝ Սինոդ, Պետական խորհուրդ, գրքերի վերնագրերը՝ Ոսկի արագաղ։

ԲԱՂԱԳՐՅԱԼ ԲԱՌԵՐ.—Մինչև դարիս 50—60-ական թվականները բարդ բառերի բաղադրիչները գրվում էին առանձին-առանձին, տարածված ձևեր էին՝ ով և իցէ, տեղ տեղ, բաց ի նոցանէ, այն տեղ, քսան հինգ, դեռ ևս, մի և նոյն, բարձի թողի, նոյն իսկ, այս տեղ, ինչ և իցէ, որ և է, այլ և, առ այժմ, ինչ և է և այլն։

80—90-ական թվականներին դրանք սկսեցին միասին գրել՝ նոյնիսկ, միևնոյն, այլև, որովհետև, կամ միացման գծիկով միացնել՝ տեղ-տեղ, կամաց-կամաց և այլն։ Բայց որոշակի սահման-

նում չկար, գրում էին թէ՛ անջատ, թե՛ միասին: Աբեղյանը սահմանեց դրանց միասնական գրություն:

ա) Միասին պիտի գրել՝ 1. այն բառերը, որոնց բաղադրիչները առանձին չեն գործածվում՝ վասնզի, միանգամայն, զորօրինակ, այսուամենայնիւ, մի՞թէ, այսչափ, այստեղ, որտեղից, մէջտեղից (այլ բան են՝ այս տեղը, այս օրը, ո՞ր տեղը), ինչևիցէ, որևիցէ, ինչեւէ, ուրեւէ, երբեւէ, ու, և շաղկապներով միացած բարդ բառերը (առևտուր, հացուցուր), տասից բարձր թվականները՝ տասնինը, քսանհինգ: Մերժելի են՝ ոչ-ոք, որպէս-զի, և եթ գրությունները, ընդունելի են՝ ոչոք, որպէսզի, ևեթ:

2. Գրաբարի ի. առ. ընդ, ըստ. մինչ նախդիրները իբրև նախադրություն (կապ) և մակբայ գրվում են միասին՝ իվեր, իվայր, դեպի, բացի, իդեպ, իբուն, իզուր, իբաց, իսպառ, իտես, իբրև, ինկատի, իբնէ, իծնէ, իհարկէ, իվերջո, իմօտոյ, իսրտէ, առայժմ, առմիշտ, ընդառաջ, ընդամին, ըստիս, ընդամենը, մինչայդ, մինչդեռ:

բ) Առանձին պիտի գրել՝ 1. Ու-ով միացող հարադիր բարդությունները, որոնց բաղադրիչներն առանձին-առանձին շեշտ ունեն՝ ջարդ ու փշուր, քար ու քանդ, հալ ու մաշ, ցիւր ու ցան, ահ ու դող, ախ ու վախ, լաց ու կոծ, տէր ու տիրական, սև ու մութ, պարտ ու պատշաճ, գունդ ու կծիկ: Հոդն ավելանում է միայն վերջին բաղադրիչի վրա, թերման ենթակա է միայն վերջին բաղադրիչը, նրա վրա է ավելանում վերջավորությունը՝ գունդ ու կծիկը, գունդ ու կծիկից: 2. Միևնույն բառի կրկնությունը ու շաղկապով, եթե բաղադրիչներն առանձին-առանձին շեշտ են ըստանում՝ սուս ու փուս, տեղն ու տեղը, հաց ու մաց: Եթե միասին գրենք, պիտի նոր բառ համարենք: 3. Միևնույն բառի կրկնությունը առ կապով՝ ճակատ առ ճակատ, փոխ առ փոխ, տուն առ տուն: 4. Ի, առ, ըստ նախդիրները՝ ի գիտություն, առ այսօր, ըստ ուսուցչի:

Աբեղյանն առաջարկում է գրել՝ բառ-առ-բառ, փոխ-առ-փոխ, տուն-առ-տուն, վեր-իվերոյ, փոքր-իշատէ, բացէ-իբաց, վերջ-իվերջոյ և այլն:

ԳՄԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ.—Սա նոր է մեզ անցել եվրոպական լեզուներից: Գծիկով միանում են՝

1. կրկնվող բառերը՝ հաց-մաց, տուն-տեղ, մարդ-մուրդ, տուն-մուն,

2. կաս-կարմիր, ճեպ-ճերմակ, դափ-դատարկ, նաև՝ մեկ-երկու, հինգ-վեց,

3. հինգ-հինգ, ինն-ինն, վեց-վեց, երկու-երկու,

4. երեք-հարկանի, երկու-երեսանի, վեց-մատանի, հինգ-դուխանի,

5. գունդ-գունդ, փունջ-փունջ, խումբ-խումբ,

6. ով-ով, ում-ում, ինչ-ինչ, գրվում են՝ ինչ ինչ, ով ով, ում ում,

7. կրօնա-բարոյական, պատմական-փիլիսոփայական, ռուս-թուրքական,

8. կահ-կարասիք, ձեն-ծպտուն, հայ-հայ, վայ-վայ, ծափ-ծիծաղ, մեռնել-ապրել (կա), ասող-խոսող, ուտող-խմող, տանող-բերող (մարդ),

9. երբ կէս-ը մյուս բառի հետ մի բառ է կազմում (կէս-գիշերին, կէս-բաց, կէս-կատակ), բայց կես մետր, կես ընտր, Ոչ-ը մակբայի դերում գծիկով չի միանում,

10. փոխ-ը փոխանորդի իմաստով՝ փոխ-նախագահ, փոխ-գնդապետ,

11. ոչ-իմաստասէր, ոչ-հեռու, ոչ-մոտիկ, ոչ-մեծ, ոչ-փոքր, ոչ-հայ: Ինչ-որ, ով-որ,

12. ծուռ-քերան (փոխանակ ծուռքերան), ծուռ-վիզ, բաց-քերան, ծակ-աչք, երկար-ականջ, կուշտ-փոր, շար-լեզու (սրանցում չկա հոդակապ և հնչյունափոխություն): Սրանք երբեմն միասին են գրվում, որ կարելի է, իսկ առանձին գրել չի կարելի, այդ դեպքում առաջին բաղադրիչը երկրորդի համար որոշիչ կդառնա՝ շար լեզու, այնինչ դրանք միասին են որոշիչ՝ շար-լեզու: Մարգարը, նշանակում է շարալեզու Մարգարը: Տասնավորն ու միավորը կարող են միանալ և շաղկապով ու գրվել առանձին. տասն և մեկ, քսան և երկու, նաև՝ առանց շաղկապի և միասին՝ քսամեկ: Մի քանի, ով որ, ինքն իրեն, ոչ մի, չէ՞ որ, դեռ եւս, բայց և այնպէս: Սխալ են՝ ովոր, ինչոր երբոր, թէև, թէպէտև, նոյնիսկ, նոյնպէս, երկուհարիւր, չորսհարիւր միասին դրված ձև-վերը, թեև կարելի է միասին գրել, նկատի ունենալով, որ բաղադրիչները նոր բառ են կազմել:

13. Գծիկով միացնել քաղաքէ-քաղաք, գիւղէ-գիւղ, երկրէ-երկիր, իբրև մակբայներ, որ չեն պահել բացառականի ու հայցականի իմաստը, այդպես էլ՝ քովէ-քով, վազէ-վազ, չոքէ-չոք, տակէ-տակ, հոգէ-ցհոգի, օրէ-ցօր, տարէ-ցտարի և այլն:

Առանձին գրել երկրէ-երկիր, քաղաքէ-քաղաք, գիւղէ-գիւղ, որոնք պահել են բացառականի և հայցականի իմաստը:

14. Չբերել, չը բերել, չըբերել, չբերել ձևերից ճիշտը՝ չբերել.

շխօսել ձեն է: Կը բերեմ, կըբերեմ, կ'բերեմ, կբերեմ ձեներից ճիշտը՝ կըբերեմ, կ'առնեմ ձենըն են (կ'երկարի, կ'հրեայ, կ'ողջունէ): Առանձին են գրվում օժանդակ բայերը, հարադիւնները:

ՏՈՂԱԴԱՐՁ.—Պահպանում է տողադարձի ընդունված կարգը, որ մենք շարադրել ենք ըստ Բագրատունու, Այտրնյանի ու Այվազյանի: Մի երկու ավելացում է կատարում:

1. Տողադարձի ժամանակ ընդունված կարգի համաձայն բաղաձայնը միանում է ն, մ, լ, դ, ր, ո ձայնորդներին՝ շաղա-կրատել, մա-քրել, պա-տռել, եր-կրորդ, բայց Աբեղյանը ճիշտ ձևը համարում է՝ մաք-րել, երկ-րորդ ձևերը. հիմա էլ այդ է ընդունված:

2. Զգ, զբ, ստ, սպ, սկ, շտ կապակցություններում լսվող, բայց չգրվող ր-ն տողադարձի ժամանակ գրվում է՝ ըզ-գուշանալ, ըշ-տապել, ըս-կիդբ, ըզ-բոսանք: Աբեղյանն ավելի լավ է համարում այդ տիպի բառերը տողադարձել՝ սպա-նել, ղգու-շանալ, շտա-պել ձևով:

3. Լավ չէ՝ աշակերտըն, պիտի գրել՝ աշա-կերտն:

ՀԱՅՏԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐՈՒՄ

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արեւելահայաստանում, ինչպէս ասվեց, տարածվում էր հյունադրութիւնը: Լեռնի վկայութեամբ՝ հայ հեղափոխական կուսակցութիւնները հյունադրութիւնն ընդունեցին: Բայց վերջինիս հետ տարածվում էր նաեւ վեժնագրութիւնը, որ այլ ուղղութիւն ուներ: Հյունադրութիւնը վ-ի գործածութիւնը սահմանափակում էր՝ թողնելով միայն դասական կիրառութիւնը, իսկ վեժնագրութիւնը հյունի ճանապարհներն էր փակում, թողնելով, որ դորձածվի իբրեւ ու-ի և ի-ի բաղադրիչ: Եթե սրան ավելացնենք և այն ոչ միասնական գրութիւնը, որ ունեն բառասկզբում յ, և-ն, բառամիջում և, է, ո, օ ձայնավորները, ն, շ, գ, խ, դ բաղաձայնները, պարզ կդառնա, թէ որքան խառն է եղել ուղղագրութեան վիճակը, որի դեմ բողոքում են ժամանակի մտավորականները: Հոգվածներ են տալով իրենց անձնապէս հյունադրութեան դեմ:

«Արօր»-ի 1910 թ. № 1-ում կարդում ենք. ««Արօր»-ի խմբագրութիւնը ի նկատի առնելով այն խառնաշփոթ դրութիւնը, որ տիրում է ներկայումս վ հնչյունի գրութեան եղանակի մեջ՝ երկար խորհրդածութիւնից յետոյ որոշեց.— ամեն տեղ, որ լսվում է վ հնչյունը գրել վ, այսինքն գրել «վարդ», «վնաս», «նախ», «թիվ», «Ավետիս», «հիվանդ», «յավելված», «Բագվա» և այլն: Միայն եւ վ հնչյունի համար սովորական (ոչ զխագիր) գիրը գործածելիս գրել «և», այսինքն գրել՝ և, դե, երեւել, բայց, Եվրոպա, Եվ ա, Եվ: Ներկա համարում զետեղված Ստ. Մալխասյանցի հոգվածում («Մի հրնչյունին մի գիր») բացատրված են մեր ուղղագրութեան գիտական և գործնական հիմունքները: Խմբագրութիւնը որոշեց «Արօր»-ում զետեղել նաեւ ավանդական գրութեամբ հոգվածները:

Մալխասյանցի այս հոգվածը 1910 թ. Թիֆլիսում լույս տեսավ նաեւ ատանձին գրքուկով «Մի հնչիւնին մի գիր» խորագրով:

Դրանով սկսվեց ուղղագրական մի նոր բանավեճ, որ վեժնագրութեան և հյունադրութեան պայքար էին անվանում: Հյունադրու-

թյան սկզբունքներին ծանոթացանք, այժմ տեսնենք, թե ինչ ըսկրզբունքներ էր պաշտպանում Մալխասյանցը:

1. Լեզուն հարատև շարժման ու փոփոխությունների մեջ է, փոփոխվում է նրա թե՛ քերականական, թե՛ հնչյունային կազմը: Կավ կլինի, որ հնչյունային փոփոխությունները միշտ ունենան իրենց գրային արտահայտությունը, ինչպես եղել է մեր լեզվի պատմության մեջ (այստար-ը հետզհետե դարձավ այսօր): Անկանոն էրեվոյթ է (anomalia) մի հնչյութին (v) երեք գիր տալ, մի հնչյութին մի գիր է պետք: Այս բանը նկատի ունենալով՝ որոշ բանասերներ որոշեցին բաղաձայնական ու-ի փոխարեն Վ գրել՝ լեզվի, Բադի, Բլի, դրել: Սրա պաշտպանները (Ղ. Աղայան, Ն. Ադոնց և ուրիշներ) այդ տառը կոչեցին ոչ թե Վիւն, այլ փոքր Վ: Սարգսյանը և մյուսները մերժեցին այս առաջարկը, սկզբելով, որ Վ-ն ձայնավոր է և առանձին գործածություն չունի: Հին հեղինակները գրում են, որ հայերենում յոթ ձայնավոր կա, դրանցից մեկը Վ-ն է: Այս տառը հաճախ է ձեռագրերում հանդիպում իւ տառակապակցության փոխարեն (հիւսիս, հւղէ):

Եթե ու-ի իւ-ի մեջ Վ-ն բաղաձայն լիներ, կկարգացվեր՝ ուվ, իվ (սուրբ>սովոր, իւր>իվր, կուռք>կովք, հիւր>հիվր): Եւ-ը արտասանվել է eu (ալեր>ալեուր) և հետագայում փոխվել իւ-ի (ալիւր)՝ նշանակում է Վ-ն ձայնավորական տառ է և բաղաձայնական ու-ի փոխարեն չի կարելի գրել, նրա փոխարեն պիտի գրել բաղաձայն վ տառը:

Բնույթագրական է, որ վեվագրության և հյունագրության կողմնակիցներ, ոչ հյունի դիրքային արտասանության պատկերը լրիվ չեն ներկայացնում: Հյունագիրները նշում են հյունը այն դիրքում, ուր նա բաղաձայնական հնչում ունի (թեւ, թիւ, աւաղ) և չեն նշում նրա ձայնավորական հնչումը (ալիւր, բեւր), իսկ վեվագիրները նշում են այդ տառի ձայնավորական հնչումը (հարիւր, ջուր), լուծում նրա բաղաձայնական հնչման մասին:

2. Եթե աշակերտները ընտելանան Վ-ն փոքր Վ կոչելուն, ավելի կշփոթեն՝ բոլոր դիրքերում Վ-ն Վ կարդալով: Այդ դեպքում նրանք կգրեն և գրում էլ են՝ բոլորուին (բոլորովին), կու (կով), աբել (վարել), ւնա 'ս (վնաս) և դա նրանից է, որ կարելի է գրել՝ ամենեւին, բնաւին: Եթե գրում են հաւ, թիւ, ինչո՞ւ չգրեն կու (փոխ. կով), եթե կարելի է գրել աւաղ, աւաղ, աւան, ինչո՞ւ չգրեն՝ աղ, ազ, աւն և այլն: Մյուս կողմից՝ քանի որ ու-ն և իւ-ն մնում են իբրև ձայնավոր, մարդիկ կշփոթեն միութիւն, աղիւս, ճիւն բառերի ընթերցումը, որովհետև դրանք կարող են կարդացվել նաև՝ միութիւն, աղիվս,

ճշիվն: Ուրեմն ու-ն կկարդան ով, իւ-ն՝ իվ, որովհետև սովորել են, որ լ-ն բաղաձայնի նշանն է: Աղայանի նորամուծության հետևանքով կարիք է զգացվում ստեղծել ու հնչույթի և իւ հրկհնչյունի համար նոր տառեր, այբուբենից հանվում է վ տառը, զրկվում ենք լ-ի ձայնավորական (ֆրանսերենն է) հնչյունի գրից:

Եթե ունենք՝ վարել, վանք, վան, վագել, ծով, նաւավար, ինչո՞ւ չունենանք՝ աւլան, Աղվանք, աւազ, թիվ, գործվածք, չէ՞ որ ներկայումս երկու շարքի հնչյուններն էլ (լ և վ) նույնն են:

Անդրադատնալով վ-ի գործածության անցյալին, Մալխասյանցը նշում է, որ դեռ Ժ—ԺԱ դարերից գրչության մեջ հանդիպում են՝ քվիս, տվաֆ, քագավուր, Դավթի, աղվէս, դովաւ գրության ձևերը, որպիսիք հանդիպում են նաև Մխիթարյանների գործերում՝ «Դիտակ բիզանդեան», «Տարեթերթ» և այլն: Կրավորական սեռի բայերը վ-ով է արտահայտում Սայաթ-Նովայի Լրգերի հրատարակիչ և ծանոթագրող Գ. Ախվերդյանը: Խորեն Պտեփանեն ավելի առաջ է գնում «Հայկական աշխարհ»-ում, ուր Վ լսում, վ է գրում: Մալխասյանցն այնուհետև վկայակոչում է Ս. Սարգսյանի վերը հիշատակված հոդվածը, ուր նա մերժելով հյունագրությունը, կողմ է վեկագրության: Թեև 1909 թ. «Նոր դպրոց»-ը ժամանակավորապես ընդունեց հյունագրությունը, բայց ուսուցիչները գանգատվում էին, որ աշակերտները շփոթում են լ-ն և վ-ն, գրում են՝ որու (փոխ. որով), ծուի (ծովի), հուս բառը կարդում են հոփն, ձիւ-ն՝ ձիվն, առուի-ն՝ առովի և այլն: Ահա թե ինչու «Արօր»-ի խմբագրությունն ընդունել է վ-ի գրությունը, բոլոր դեպքերում Վ հնչույթը գրում է վ տառով (վան, նավ, հով, հավ, լուծված, գլորվել և այլն), այսինքն մի հնչյունի համար ընդունել է մի գիր:

3. Մալխասյանցը առաջարկում է իբրև բացառություն եվ տառակապակցության փոխարեն օգտագործել և միացյալ գիրը, օտար բառերի ու հատուկ անունների լւ-ր արտահայտիչ եվ տառակապակցությամբ (եվրոպա, եվա, երեվան): Ի տառը պիտի պահել ու-ն և իւ-ն կազմելու համար, մեկ էլ ֆրանսերենի լւ-ն արտահայտելու (Հլգո, Դւմա, Դւրան (Հիւգո, Դիւմա, Դիւրան):

4. Գիտական չէ Աղայանի հիմնավորումը, թե՛ վ-ն երկար տառ է, պիտի ընտրել լ-ն:

5. Ծիշտ են ոմանք, թե նուրբ տարբերություն կա՝ նաւ և վան, աստուած և վնաս բառերում հանդես եկած բաղաձայնական ու-ի, լ-ի և վ-ի միջև, նաւ և ազնիւ բառերի լ-ն ավելի փափուկ է, քան վնաս և վան բառերի վ-ն: Բայց դա այդ տառերի դիրքից է բխում, լ-ն ձայնավորին նախորդելիս կոշտ է արտասանվում: Այդ արտա-

սանությունը, սակայն, այն որակին չի հասնում, որ տարբեր հընչյուններ լինեն: Տարբերությունը, ուզում է ասել, հնչյունային է և ոչ թե, նորագույն տերմինով ասած, հնչույթային: Մեր շատ տառեր հնչման դիրքային տարբերություններ ունեն, բայց մնում են իբրև միևնույն հնչյունի (իմա՝ հնչույթի) գծանշանը:

6. Առարկում են, որ եթե վ-ն ընդունենք, ստիպված կլինենք բառի արմատը այլ կերպ գրել, հոլովված ձևը՝ այլ (կատու—կատվի, ձու—ձվի): Դա ճիշտ է: Բայց ո՞ր լեզվում չկա այդ երևույթը: Հայերենում հնչյունափոխություն չկա՞ (սէր—սիտիլ, հավիտեան—հավիտենական, օր—ավուր և այլն), ռուսերենում՝ беру—бежиль, отец—отца և այլն, ֆրանսերենում՝ avoir—aurai, vive—vif և այլն:

7. Հայերենի ավանդական ուղղագրությունը պահպանելով՝ մենք անկարող կլինենք արտահայտել ու-ն հաջորդ ձայնավորի հետ (լուի-ն պիտի ասենք՝ լվի): Քանի որ իւ-ն պիտի նշանակի թե՛ ու, թե՛ իվ, միշտ էլ կըփոթվի: Ինչպե՞ս գրել Дьюор, Дю-лу բառերը: Եթե գրենք դիւօր, հայր կկարդա Դիվօր: Բայց եթե իւ-ն և ու-ն մեան սոսկ ձայնավորներ, այն ժամանակ Դիւօր-ը կկարդան Դյուօր, Լուի-ն՝ Лви. Դունայ-ը՝ Дунай: Այն ժամանակ թիւ երեսիդ-ը չեն կարդա՝ թիվ երեսիդ:

8. Կարիք չկա փոխել н—о, յ—ё, ե—ё, յ տառերի ուղղագրությունը, դրանք բարդ չեն: Ճիշտ է, վ-ով գրությունն անսովոր է, բայց դա ժամանակավոր է, հետո սովորական կդառնա:

Մալխասյանցը վերջում գրում է, թե արևմտահայ և արևելահայ լեզուների միջև եղած վիհը վ-ի ուղղագրությամբ չէ:

Նկատենք, սակայն, որ գոնե այս հարցում Մալխասյանցն իրավացի չէ: Ուղղագրական յուրաքանչյուր փոփոխություն միասնաբար պիտի ընդունվի ամբողջ հայության կողմից. եթե մի մասն այդ փոփոխությունը չի ընդունում, չպիտի կատարել: Ոչ միասնական գրությունը իր հերթին եպատճառ է դառնում մեր ժողովրդի երկու հատվածների իրարից հեռացման ու օտարացման:

Վեպագրությունը մերժելով մերժում են Մխիթարյանները: 1910 թ. «Հանդէս ամսօրեա»-ում լույս տեսավ Հ. Գ. Մենեվիշյանի «Հայերէնի դէմ յանդգնութիւն մը» խորագրով հոդվածը (էջ 113—114): Գրում է, թե «նողկանք ու զգվանք» է զգացել «յիմարական հայերէնով գրուած» «Արօր» ամսագիրը ձեռքն առնելիս: Սրտաբեկ տեսնում է, որ այդ «յիմարական» հայերենը պաշտպանում է ուսումնական Մալխասյանցը: Ինչ որ չարին մեր թշնամիները, ասում է նա, մենք ենք անում, հոնքը շինելու տեղ աչքն ենք հանում: «Թող

կոտորէ գրիչը եւ առնու բրիչը «Արօրը», երկրորդ համարը տպագրուելու առնէ «Արօր»-ի խոփը կոտորվի: Թող վիճելի լինեն բայերի խոնարհման ձևերը՝ գտնուի, գտնուի, թե գտնվի, հոլովման ձևերը՝ թի, թվի, թուի, բայց ոչ «անշարժ կալուածք» դարձած դարաւոր արմատական բառերը»:

Այս «անշարժ կալուածք» մտքի դեմ է հանդես գալիս Մալխասյանցը 1910 թ. «Մշակ»-ի 96-ում՝ «Անշարժութեան կոթողին» խորագրով, ուր գրեթե նույն մտքերն են, ինչ նախորդ գրքույկում: «Վ-ի և ի-ի ուղղագրութեան հաստատուն կանոնը մնալու ջնջվեց այն օրից, երբ Ղ. Դալայանը հանդէս եկավ իր վնասակար յինագրութեամբ», ստեղծեցին «փոքր վ», բայց տեսնելով, որ լ-ն աճեն տեղ վ կարդալու պատճառով մարդիկ ու-ն կարդում են ով, իւ-ն՝ իվ (բուն>բովն, տուն>տովն, քուն>քովն, արին>արիվն, անկին>անկիվն), քարոզեցին ու և իւ տառերի փոխարեն նոր տառեր հնարել, դուրս գցեցին Մաշտոցի վ-ն: Եթե մեր ու-ի փոխարեն գրենք, օրինակ, ռուսերեն Կ-ն, իւ-ի փոխարեն՝ Ю, կունենանք հետևյալ գրութիւնը՝ «կուր (կուր) սուամահ (սուամահ) է լինցմ, նրան ԿշարԿթԿԿԿ ու (ու) է դարձնցմ: ԵմԿԿԿԿԿ ԿշարԿթԿԿԿ»: Այս շարիքի դեմ կռիւն համար հանդես եկավ վեժագրութիւնը, «նա մի հակադեղ է լինագրութեան դէմ», գրում է Մալխասյանցը: Շարունակելով նախորդների նման լ-ն ձայնավոր համարել, պնդում է, թե չի կարելի ձայնաւոր լին գրել, բայց բաղաձայն վ կարդալ (թեև գրում է, որ հին հնչումը փոխվել է), հիշատակում, որ հնում էլ լ-ն վ են կարդացել, ոչի համար թաւացման նշան են օգտագործել: Մալխասյանցն այս հոգովածում հակասութեան մեջ է ընկնում: Մի կողմից, գրում է, թե լ-ն ձայնավոր է և չի կարելի ձայնավոր լ գրել, բաղաձայն վ կարդալ (աշխարհի ոչ մի լեզվում ձայնավորը բաղաձայն չեն կարդում), մյուս կողմից, վկայակոչելով Հյուբերմանին, գրում է, որ բաղաձայնական ու-ն, լ-ն և վ-ն կարդացվում են v: Հյուբերմանը իր քերականութեան մեջ նույնիսկ գրաբարի բառերում ու-ն, լ-ն, վ-ն տառադարձում է v-ով, եթե v են հնչում (Vaban, vnas, thagavor, avan, anvaver, astvac, nver, nvagem, grlv, tiv, բայց՝ hiupatos, glut, tun, anun, araur (արար «արօր»): aurlhnen «աւրհնեմ» և այլն): Վկայակոչում է պրոֆ. Մառին, թե նա վ-ն արտահայտում էր v, լ-ն՝ w տառերով. բայց նշում, որ այդ երկուսն էլ արդեն մի հնչույթ են, նրանց տարբերութիւնը վնասեց է. մի տառով պիտի արտահայտել: Էլ ո՞ւր մնաց Մալխասյանցի նշած ձայնավորական լ-ն Եւրոպա, Թաւաւոր, լաւ բառերում:

Մալխասյանցը հակասություն է տեսնում այն բանում, որ հայերեն բառերը եվրոպական գրերով արտահայտելիս հետևող մենք հնչյունային գրությունը, իսկ հայերեն գրերով արտահայտելիս՝ ավանդական:

Իր «Հայոց լեզուի ուղղագրություն» հոդվածում³ Մեննվիշյանը տրտնջում է, որ «Աբորի» «խուփը չկարողացավ կոտրել» և II համարն էլ լույս տեսավ նույն ուղղագրությամբ: «Մեկ հնչյունին մեկ գիր»-ը սխալ վարդապետություն է, գրում է նա, քիչ լեզուներ կան այդ սկզբունքով: Արդի հունարենի մի ի հնչյունը հինգ ձևով է արտահայտվում, գերմանացիք ֆ հնչյունը երկու տառով են արտահայտում, ֆրանսիացիք 5 հատ է ունեն, հնչումից շատ հեռու է անգլիացիների գրությունը: Շատ էլ ցանկալի է հնչյունային գրությունը, բայց իրականում հնարավոր չէ, դա տեսական մի վարդապետություն է, որ դժվար է իրագործել լեզուների դարգացման ընթացքում: Այնուհետև Մեննվիշյանը շարադրում է հետևյալ կանոնները: 1. է և ու տառերից հետո վ կամ լ տառերը չեն լինում: 2. Ա-ից հետո պարզ բառերում միշտ լ է լինում, վ չի լինում: Կան միայն զավառս, զավին ձևերը: Լ-ը ըստ նորայր Բյուզանդացու պիտի լինի գաւառայ: 3. Ածանցված և բարդ բառերում վ-ն պահպանվում է (նաւավար, մանկավարժ, անվախճան, անվճար, լուսավառ): 4. Ն-ից հետո պարզ բառերում միշտ լ է լինում, ոչ՝ վ (թել, սել), բացառությամբ՝ օթևվանք, դպրևվանք բաղադրությունների: 5. Ի տառից հետո միշտ լ է լինում՝ ոչ վ (ազնիւ, հաշիւ, լրիւ, հովիւ): 6. Ըվ և րւ ձևերը սլաշտպանելի չեն, հայերենում արդ հնչյունի համար կա ու տառը (նուազ, սրուակ, նուէր, Աղուանէ, ոչ՝ սըրվակ—սըրուակ, նվէր—նւէր և այլն): 7. Երբ իւ-ին հաջորդում է մի այլ արմատական գիր, կարգացվում է՝ թիւ, բիւ, հիւ: Հոգը լ-ի վ հնչումը չի փոխում՝ անիւր, բիւր, ազնիւր և այլն: Եթե աշակերտը ուլ-ը ովլ, կուն կովն է կարդում, նրան պիտի բացատրել, որ բաղաձայնից առաջ ու-ն Ս(ու) է կարդացվում: 8. Ո տառից հետո միշտ գրվում է վ տառը (կով, հով, մով, սով, ծով): Զպիտի թույլ տալ ավանդական ուղղագրության շեղումներ, հիմա յուսամ-ը հուսամ են գրում, վաղը ցիւ-ը ձիւ կգրեն: «Կդատապարտենք նւէրն ալ, նվէրն ալ, կմնանք հաստատուն նուէրի վրա: Փոխանակ «մէկ հնչյունին մէկ գիր» ըսելու, կառաջարկենք մէկ հայու մէկ լեզու»: Մեննվիշյանը հոգվածի վերջում Աղայանի առաջարկը շարիքների փոքրագույն է համարում, իսկ Մալխասյանցինը՝ դատապարտելի: Իր հաջորդ հոդվածում՝ «Ուղղագրական թիրիմացություն» խորա-

գրով⁴, Մալխասյանցը վկայակոչում է ժէ դարի ֆրանսիացի քերական Պօլբօյեալի գրույթը՝ «Մի հնչյունին մի գիր»։ Ըստ այդ քերականի՝ յուրաքանչյուր հնչյուն պիտի արտահայտովի մի առանձին գրով, չպիտի գրվի մի բան, որ չի արտասանվում։ Յուրաքանչյուր գիր մի հնչյունի նշան պիտի լինի, միևնույն հնչյունը տարբեր դրերով չպիտի արտահայտել։ Ըստ Գրոտի, կանոնավոր է այն գրությունը, որի յուրաքանչյուր տառը համապատասխանում է մի հնչյունի։ Բոլոր լեզուների գրության կեսից ավելին հնչյունային է, գրերի ստեղծման ժամանակ էլ գրությունը հնչյունային է լինում։ Մալխասյանցի կարծիքով՝ միայն հետադեմ, պահպանողական ուժերն են արգելում անցնելու հնչյունային ուղղագրության, նրանք են կառչած ավանդական գրությանը։ Թեև քիչ հետո այն հարցին, թե ինչու են քաղաքակիրթ ազգերը պահպանում ավանդական ուղղագրությունը, պատասխանում է.

1. Կան լեզուներ, որոնց գրությունից խոսակցականն այնքան է հեռացել, որ փոխել գրությունը, նշանակում է անհասկանալի դարձնել անցյալի գրականությունն ու մշակույթը։ 2. Կան լեզուներ էլ, որոնց բառերի արտասանութունը կոժվարանա, եթե ուղղագրութունը դարձնեն հնչյունային, որովհետև շատ են նրանց նրբերանգները։ 3. Մի շարք լեզուների շատ բառեր հնչմամբ նույնն են և միայն գրությամբ են իրարից զանազանվում. եթե գրությունը հնչյունային դառնա, չփոթ կստեղծվի։ Բանավորում այդ բառերը տարբերվում են իրարից առոգանությամբ, շեշտով, դրավորում՝ ոչ։ 4. Որոշ լեզուներում միևնույն հնչյունի տարբեր գրությունը հատկացված է օտարազգի բառերին կամ արվում է ստուգաբանական որոշակիություն մտցնելու համար։ 5. Եվ վերջապես, լեզուներ էլ կան, որ պահպանում են ավանդական ուղղագրությունը հնամուկների, շովինիստների պատճառով (օրինակ՝ հունարենը)։

1876 թ. Գերմանիայի ուսուցչական ժողովը որոշեց թեթևացնել, հեշտացնել ուղղագրությունը, բայց Բիսմարկը 1880 թ. փետրվարի շրջաբերականով արգելեց այդ փոփոխությունը, որ արդեն տարածված էր։ Նոր ուղղագրությանը դեմ են նաև ուս պահպանողականները, նրանք էլ հետևում են ավանդապահ անգլիացիներին ու ֆրանսիացիներին։ Գիտնականները տրտնջում են, որ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում հեշտ չեն գրագետ դառնում, 6—8 տարի գրագիտություն են սովորում։ Նշանավոր սանսկրիտագետ Վիլյամ Ջոնսը նկատում է, թե անգլերենի ուղղագրության անկատարությունը հասնում է անհեթեթության և գրեթե ծաղրելի է։ Այնուհետև Մալխասյանցը վկայակոչում է ֆրանսիա-

կան հանրագիտարանը, ուր գրված է. «Ֆրանսիական արդի ուղղագրութիւնը ոչ մի ընդհանուր կանոնի չէ ենթարկված, նա ոչ հնչական է, ոչ ստուգաբանական, ոչ համեմատական է և ոչ տրամաբանական: Իր էութեամբ նա անկանոն է և կամայական: Ինչ կողմից էլ նայելու լինենք, այդ ուղղագրութիւնը լի է դժվարութիւններով և վաղուց է զգացվում նրա ուժորդի կարիքը»: Հանրագիտարանի հոդվածագիրը ցավում է, որ երեսնաներն այնքան շատ թանկագին ժամանակ են կորցնում դրագետ շտնալու համար: Ուղղագրութեան բարեկալումը, ասում է նա, ազգային բարիք կլինի, կհնչտացնի ֆրանսերենի տարածմանը այլ երկրներում⁵:

Այս լեզուների վիճակը մեզ ասում է՝ մի՛ գաք մեր ետևից, մեր վիճակում կընկնեք, եղրակացնում է Մալխասյանցը: Մյուս կողմից, պետք է հաշվի առնել, որ մեր ուղղագրութեան համակարգը հնչյունային է, այդպիսին է եղել, այդպիսին էլ պիտի պահպանվի:

Բառամիջում վ, թե և գրելու համար դրողը պիտի բառակազմութիւնն իմանա: Սխալ է համարում ձայնավորանախորդ ուն միշտ ըստ կարգալը, սրուակ, Աղուանք, ալէլուիա բառերը չենք կադդում՝ սըրըվակ, Աղըվանք, ալէլըվիա, այլ՝ սըրվակ, Աղվանք, ալէլուիա: Իսկ բաղաձայնից առաջ էլ միշտ չէ, որ ու է. կան բառեր, ուր այդ դիրքում ուն վ է կարդացվում (Գունայ > Գըվնայ, տունքեան > տըընջան): Սրանք են Մալխասյանցի առարկումները:

«Արօր»-ի խմբագիր Սեդրակ Մանդինյանը էր բաց նամակում՝ ուղղված Մենեվիշյանին, գրում է, որ եթե Մենեվիշյանը մերժում է վեվամոլութիւնը, ապա տրամաբանական է, որ խոտելի պիտի համարի հյունամոլութիւնը, որ արդեն շատ խոռն է աղճատել ու խառնակել մեր լեզուն: Հյունամոլները շտապեցին Մենեվիշյանին իրենց կողմնակից հռչակել: Վեվամոլութիւնը տակաւին «Արօր»-ի սահմաններից դուրս չի եկել, իսկ հյունամոլութիւնը երեսուն տարի է որպէս համաճարակ ախտ հետզհետեւ ավելի է ավերումներ գործում մեր լեզվում: Ինչպե՞ս է, որ Մենեվիշյանը երեսուն տարի նւէր, Աստուծո, անուան, յօղած, քիչ, շի է կարդացել ու չի նողկացել, իսկ «Արօր»-ի մի անգամ օգտագործած եվ-ից նողկանք է զգում:

Իր պատասխանում Մենեվիշյանը վիրավորվում է, որ իրեն հյունագիրների կողմնակից են համարում: Ո՛չ նւէր, ո՛չ զավառ, բնականը, սովորականը, ավանդականը ուն է, եթե ուզում ենք միօրինակյալ հայերեն ուղղագրութիւն ունենալ: «Փոյթ տանենք Մալխասյանն ու Աղայանցը հաշտեցնելու Մեսրոպայ և Սահակայ

գրատախտակին առջև»⁶)։ Մենեվիշյանը զարմանում է, որ քաղա-
տուր, եւ, շնորհիւ գրելը հետադիմական է, «անշարժութիւն», իսկ
քաղաքավոր, եւ, շնորհիւ գրելը՝ առաջադիմական։ Զեղչ—զեղչ, սէր—
սեր, պետ—պէտ, յանգ—հանք, յով («հո՞, դեպի ո՞ւր») և հով, յող
(անամ) «անհոգ նստել» և հող բառազույգերն առաջ տարբեր էին
հնչում, այժմ միատեսակ են և միայն գրութեամբ կարելի է տար-
բերել միմյանցից, նշանակում է պիտի պահել ավանդական ուղ-
ղագրութիւնը։ Մալխասյանցի ուղղագրութիւնը սխալ է, նա «Կը-
ռունկ Հայաստանի» հետևողն է։ Վկայակոչելով Բագրատունուն, թե
չպիտի լ-ն վ հնչել, ռամիկն է այդպես հնչում, հմուտները պիտի
զգուշանան ուսմականալուց, զգրակացնում է՝ կամայականութիւնը
լեզուն կործանման կմատնի։

Հարցր, սակայն, սրանով չի սպառվում, շարունակվում է բա-
նավեճը։ Նշենք կարծիքներից ամենակարևորները։ Հոգվածադիր-
ներից մեկը՝ Արտ. Ստամբուլցյան (Եղեսիա, հայկական դպրոցի ու-
սուցիչ), բողոքում է, որ ուղղագրութիւնը քառասուն վիճակում է⁷։
Ցավում է, որ կորչում է մեսրոպյան աստվածապարզև ուղարկող
գործադրված կարգը և պահանջում ամուր պահել հինը։ Եթե կարիք
կա ուղղագրութիւնը փոխել, այդ դեպքում պիտի վ-ն պահել, ու-
րովհետև լ-ի հետ շատ դժվարութիւններ են կապված։ Պատմում
է, որ ո և լ տառերն անցնելուց հետո աշակերտները ու-ն ով են
կարդում, մութ-ը՝ մովր, իղ-ը՝ իվղ, առիծը՝ առիվծ, սկիւռ-ը՝
սկիվո։ Մանավանդ որ այդ դպրոցի երեխաները դպրոցից դուրս
հայերեն չեն խոսում, հայերենը նրանց համար օտար լեզու է։
Օտար շրջապատի հայ դպրոցների համար լավագույնը որքան
հնչյուն, այնքան տառ սկզբունքն է։

Մի այլ հոգվածագիր՝ Մկր. Նավասարդյան⁸, գտնելով, որ մեր
ուղղագրութիւնը շատ դժվար է իր նույնահնչյուն ե—է, հ—յ, ո—օ,
վ—ւ կրկնակի տառերով, այ, եա, եօ, ոյ, իւ, ու երկբարբառներով,
առաջարկում է. 1. Բառասկզբի յ-ի փոխարեն գործածել հ (հաճախ
հանցանք, հանձնել, Հակոբ, Հովսէփ, Հովհաննէս և այլն), բառա-
վերջի համար յ-ն չգրել (վրա, քահանա, հսկա, խաղա, երթա)։ 2.
Բառամիջում գրել ե, իսկ է-ն պահել միայն բարդ և ածանցավոր
բառերում (օրենք, ասպարեզ, քարեղեն, շահաւետ և ամենաէական,
մանրէաբան)։ 3. Բոլոր բառերից, այդ թվում նաև օտար, հանել օ
տառը և գրել ո։ Օ-ն պահել բառասկզբում (օր, օդ, օրինակ, օգ-
նութիւն) և օ-ով սկսվող բառերի բարդված ու ածանցված ձևերում
(անօդ, իւրօրինակ, փոխօգնութիւն)։ Գրել՝ ծանոթ, առաւտ, պաշ-
տոն, լոնդոն, Գլադստոն։ 4. Բաղաձայնական լ-ի փոխարեն բոլոր

ղեկաբերում գրել վ տառը (հավատ, լավ, հավ, հաշիվ, դրված): 5. Ճիշտ է նկատում «Աղբիւր»-ում նիկ. Տեր-Ղևոնդյանը, որ ու-ն ձայնավոր է, ինչպես ա, օ, ի, է ձայնավորները: Այս երկտառ ձայնավորի փոխարեն գործածել նրա մի բաղադրիչը՝ ա-ն և գրել՝ րեմն, ընդենել, անւշ, կարկտ, ւրախ, ւր և այլն⁹: 6. Վերացնել զխտտաւորի զանազան ձևերը, օգտագործել փոքրատ սոկերի միայն մեծացրած ձևերը (խորեն, կորիւն, արշակ, վահան, գուրգեն): Շփոթությունից խուսափելու համար օգտագործել Ա. Արասխանյանի առաջարկած S տառը, որը տարբերվում է ա-ից: Հեշտացնենք գրագիտության տեխնիկան, որ այն հեշտ տարածվի հայ ժողովրդի մեջ, եզրափակում է հոգվածագիրը:

«Արօր»-ի 1910 թ. N 5-ում վեկագրության «հաշտպանությամբ հանդես է գալիս Ա. Նազարեթյանը: «Ի՞նչ է ուղղագրութիւնը» խորագրով այդ հոգվածում նախ դիտողություն է արվում Մեննվիշյանին, որ փոխանակ գիտականորեն ապացուցելու վեկագրության սխալը, անիծում ու հայհոյում է: Ուղղագրության նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսակետից մտավորականությանը հոգվածագիրը բաժանում է չորս խմբի՝ ա) ընդհանրապես դեմ են բոլոր տեսակի բարեփոխումներին, բ) հաշտվում են ներկա քառասյին դրության հետ և դեմ են նոր փոփոխություններին, գ) կողմ են վեկագրությանը, դ) պահանջում են ուղղագրության արմատական բարեփոխություն: Հոգվածագիրը, չգիտես ինչու, անտեսում է հիւնագիրներին: Ուղղագրությունը, ասում է նա, պիտի հարմարվի լեզվի վիճակին և ոչ հակառակը: Այնուհետև, օգտվելով Յա. Գրոտի գրքից, ներկայացնում է եվրոպական լեզուներում ուղղագրության վիճակը, նշանավոր լեզվաբանների առաջարկները ուղղագրության վերաբերյալ, որոնք տեսականորեն հանգում են այն եզրակացության, որ լավագույն ուղղագրությունը հնչյունայինն է, բայց իրականում դա շատ դժվար է իրագործել, ինչպես երևում է գերմաներենի, ֆրանսերենի, անգլերենի, ռուսերենի ուղղագրության պատմությունից: Հոգվածի վերջում հեղինակն անդրադառնում է և տառին: Աշխարհաբարում ա-ն սոսկ նշան է և ոչ թե տառ, ասում է նա: Զունի իր սեփական հնչյունը, այբուբենում ավելորդ տեղ է զբաղեցնում, ոչ մի բառ չունենք, որ ա-ով սկսվի: Դա օժանդակ նշան է ու և իւ կազմելու համար: Ինչու Վ հնչող ա-ն վ տառով չփոխարինենք, ինչու երկու տառ պահենք միևնույն հնչյունի համար: Վ-ն կարող է իր դիրքային տարարտասանությունն ունենալ, ինչպես ռուսերենի В-ն (вор, кров): Այն կանոնը, թե երբ պետք է Վ հնչյունը ու տառով արտահայտել, երբ՝ և և երբ՝ վ, վաղուց

խախտվել է։ Ռուսաստանի ակադեմիան 1885 թ. որոշեց ամեն կերպ պահպանել ընդունված, հաստատված ուղղագրական սովորույթը, շեղվել նրանից միայն այն դեպքում, երբ շեղումը ընդհանուր է և տվել է դրական հետևանք, հինր սխալ է և անհետևողական։ Այդպես էլ հիւնագրությունն է սխալ և անհետևողական։ Վ-ն կենդանի է, հակառակ անկենդան ւ-ի, ուստի նա էլ պիտի մնա։ Փակագծերի մեջ ասենք, որ այս նազարեթյանը 1912 թ. «Մշակում» տպագրված իր հոդվածում գովում է «Ընկեր»-ի նախաձեռնությունը, որ ուն հանել է գործածությունից, բառակցքի յ-ի փոխարեն հ գրել։ Այդ հոդվածը արտատպված է «Ընկեր»-ի 1912 թվականի N 31-ում, բայց հյունագրությամբ, թեև ինքը վեժագրության կողմնակից է, հոդվածում կան՝ լեզվի, դօրծածում, հօվանաւորութեան, գումարէին, հրաւիրած և այլն։

1911 թ. «Էմիլյան ակադեմիական ժողովածու»-ի 8-րդ հատորում Հր. Աճառյանը «Հայ բարբառագիտութիւն» հոդվածում առաջարկում է բարբառների նկարագրության համար կիրառել «մի հնչյունին մի գիր» սկզբունքը, գրել՝ էրէկ, օսկի, վօտ, վօսկի, հալ, թագավոր։ Բառավերջի յ-ն չգրել, բառակցքի յ-ն արտասանել յ և ոչ՝ հ։ Սա, իհարկե, բարբառը նկարագրելու միակ միջոցն է։ Բարբառի հնչյունը ճիշտ արտահայտելու լավագույն միջոցը յուրաքանչյուր հնչյուն մի տառով արտահայտելն է։ Սակայն ուղղագրության այս սկզբունքը Աճառյանը չի կիրառում գրական լեզվով գրելիս։ Իր անունը գրում է «Հրաչեայ» ձևով։

«Մշակ»-ի 1910 թ. 47, 60, 68 և 118 համարներում լույս է տեսնում մի նոր առաջարկություն «Այբուբենի բէֆօրմը» խորագրով (հեղինակ՝ Լ. Մարկոսյան)։ Գտնելով, որ մեր ուղղագրությունը մի «բաբելօնեան» խառնակություն է, ինքն էլ իր հերթին է խառնում գրությունը։ Պահպանողականությունը, ասում է նա, ու-ի անդարձ անկումն է ողբում, Աղայանը քառորդ դար է ւ-ի պաշտամունքն է փառաբանում, բայց նրա դեմ ահեղ սպառնալիք է վիթխարի վ-ն։ Ամենանպատակահարմարը «մի հնչյունին մի գիր» սկզբունքն է, բայց ոչ Մալխասյանցի վեժագրությունը։ Վ-ն երկար է, մեծ, շատ տեղ է գրավում, իսկ ւ-ն կարճ է, փոքր, քիչ տեղ է գրավում, ուստի պիտի ու-ի և իւ-ի փոխարեն նոր տառեր ստեղծել։ Հոդվածագիրը սրանով չի բավարարվում, հենվելով հնչյունային գրության սկզբունքին՝ առաջարկում է փոխել նաև հ—յ, ե—է, ո—օ տառերի գրությունը (N 60)։ Ամենուրեք, որ լսվում է հ. գրել հ տառը, քառավերջի համը յ-ն չգրել։ Յ-ն պահել սոսկ իբրև կիսաձայնի տառ և դրանով կազմել յու (իւ), յա (եա), իյ, որ կարո-

դանանք գրել ուսանողներին Ю, Я, Ай, Ий և ճիշտ կարդալ Василий, Николай բառերը, որ մենք կարդում ենք Վասիլի. Նոկոլա սխալ ձևով: Եթե մենք մի կողմ ենք դրել ոսկեղենիկ գլխարարը, մի կողմ դնենք նաև նրա ուղղագրությունը: «Բափ տալ միջանկից հնութեան փոշին» բանաստեղծի խոսքով ավարտում է իր երկրորդ հոգվածը: Ո-ն երկու հնչում ունի, շարունակում է իր երրորդ հոգվածում (№ 68), իսկ օ-ն՝ մի: Բառակցում ՎՕ լսելիս երեխան գրում է վօ, ոչ թե՛ ո, և դա ճիշտ է, պիտի գրել օտ, օշխար: Ո հնչյունը միայն օ տառով արտահայտել (խօրհե, օրօր, գօրծօվ, գազօվ, բանօր): Բայց ո տառը դեն չի գցում, նրան էլ տալիս է ու-ի արժեք: Չորրորդ հոգվածը ե— է տառերի մասին է: Քանի որ բառակցում ե-ն պարզ հնչյուն չի, կազմված է յ և է հնչյուններից, պիտի հանել այբուբենից, չէ՞ որ մենք յ և է արդեն ունենք, ինչպես ո-ն հանում է, մտածելով, որ ունենք թե՛ վ, թե՛ օ: Բայց քանի որ ե-ն հանելու դեպքում ստիպված ենք մի տառի փոխարեն երկու տառ գործածել (յէ), ուստի համաձայն է պահել ե տառը, մոռանալով, որ ո-ի փոխարեն նույնպես երկու տառ է օգտագործում: Որտեղ յէ է հնչվում, գրել ե, մնացած դեպքերում օգտագործել է տառը (կէղեցի, երէց), ուրեմն՝ գրէլ, բէրէմ, ասէնք, Սէդրակ, մէնք, ձէր, ամէնակալ, երէխա, համէրգ, անէլանէրի: Հոգվածագիրն իր առաջարկություններն ամփոփում է հետևյալ ձևակերպումով.

1. Ամենուրեք Վ հնչյունը գրել Վ տառով, վ-ն պահել իբրև նրա մեծատառը, որովհետև Վ-ի մեծատառը (Վ) շփոթվում է Ի-ի հետ: Եւ-ը պահել հին ձևով (և, եւ): 2. Հ հնչյունը միշտ գրել հ տառով, յ-ն պահել միայն իբրև կիսաձայնի արտահայտություն (գոյական, այո), բառավերջի համար յ-ն գրել: 3. Վօ հնչյունակապակցությունն արտահայտել Վօ տառակապակցությամբ (ո-ի փոխարեն), օ հնչյունն ամենուրեք գրել օ տառով: 4. Ու պարզ հնչյունի համար օգտագործել ո տառը, իսկ յօ-ն կազմել յ-ով, ուրեմն յո-ն կարդալ իւ (յօ): 5. Յէ երկհնչյունը գրել ե տառով: Ամենուրեք, ուր լսվում է e հնչյունը, գրել է տառը (երէկ, Երէւան, եղկէի, դէրէրօվ և այլն): Մարկոսյանը մոռացել է, որ եթե գրենք անէրէս, անէլանէի, անօղօֆ, կմթազնենք բառի կազմությունը: Վերջում հոգվածագիրն առաջարկում է ստեղծել ուղղագրական մի մարմին, որի վճիռը պարտադիր լինի բոլորին:

«Մշակ»-ի նույն թվի № 70-ում «Ուղղագրութեան խնդիր» խորագրի տակ հոգվածագիրը (Սարուխան) մերժում է թե՛ հյունագրությունը, թե՛ վեկագրությունը: Առու ձևից կազմվել են առուի,

առոտով և մյուս ձևերը, երբ գրում ենք՝ առվի մթազնում ենք բառի արմատը: Նույնը և անաւն (կամ անվան), աստած (աստված) ձևվերում: Օտարազգի հին անունների ուղղագրութիւնը պահպանել, իսկ նոր անուններում Վ-ն արտահայտել վ տառով (Վարշավա, Մոսկվա): Սխալ է Մալխասյանցի առաջարկը՝ ւ գրել իւ-ի փոխարեն (Հագո, Դամա):

Լեզվական հարցերում շատ ավելի արմատական փոփոխութիւններ էր պահանջում «Ընկեր» շաբաթաթերթը, որի խմբագիրն էր փիլիսոփայութեան դոկտոր Սեդրակ Թառայանը: Հանդես գալով ժողովրդի (ռամկի) անունից՝ նա նախնայց ուղղագրութիւնը և աշխարհաբար գրական լեզուն Կործածութիւնից ուզում է հանել: Սկսած 1906 թվականից իրար հետեից հետևողականորեն տպագրում է հոդվածներ գրաբարի ուղղագրութեան, այլև աշխարհաբար գրական լեզվի դեմ, առաջ քաշելով ռամկի լեզու, ռամկի խոսք ըսկըգընթը, ծայրահեղութեան հասցնելով՝ «Գրիր այնպես, ինչպես խոսում ես, խոսիր այնպես, ինչպես գրում ես» սկզբունքը: Որոշ հոդվածագիրներ գրութեան հարցում ոչ մի բացառութիւն չեն հանդուրժում և պահանջում են լրիվ փոխել ուղղագրութիւնը ըստ արտասանութեան (1911 թ., №№ 14, 18, 32, 41, 43 և այլն):

«Ընկեր»-ի № 18-ում «Ուղղագրութեան հարց» հոդվածում (Արտ. Օհանջանյան) դարձյալ նշվում է, թե մեր ուղղագրութեան դժվարութիւնը բխում է նրանից, որ այնպես չենք գրում, ինչպես ասում ենք: Գրում ենք յետո (յիէտվոյ), բարեգործ, բոլոր, ող. օծ, յարկ, յարդ, կարդում ենք՝ հէտօ, բարէգօրծ, բօլօր, վօր, օց, հարկ, հարդ: Հարկավոր է հետևել էսպերանտո լեզվի հիմնադիր Զամեն-հոֆին և կատարել նրա երկու կանոնը՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է և տողադարձն ազատել կանոններից: Այս հոդվածի տակ գրված է խմբագրութեան հայտարարութիւնը:

1. Ուղղագրութիւնը հեշտացնելու նպատակով թույլ տալ թղթակցին ազատ լինել: 2. Ուն հետզհետէ փոխարինել օ-ով, որտեղ ուն վօ է հնչում, գրել ւօ կամ վօ: Նոյն թվականի № 32-ում մի այլ թղթակից առաջարկում է բոլոր դեպքերում օ-ն գրել օ տառով, Վ հնչյունը՝ վ, և հնչյունը՝ և, իւ-ն՝ յու, եա-ն՝ յա, եօ-ն՝ յո տառերով: Վօ հնչյունակապակցութիւնը (ո տառը) գրել վօ տառակապակցութեամբ, բառամիջի ոյ տառակապակցութիւնը, որ կարդացվում է ույ, փոխարինել ույ տառակապակցութեամբ, համար յ-ն վերացնել:

№ 32-ում նույն Արտ. Օհանջանյանը «Նոր ուղղագրութիւն» հոդվածում առաջարկում է.

1. օ հնչյունն արտահայտել միայն օ տառով,

2. Վ հնչյունը՝ վ տառով, իսկ լ-ն թողնել ու, իւ կապակցություններում,

3. որտեղ հ է լսվում, գրել հ տառը, յ-ն թողնել իբրև կիսաձայն,

4. իւ, եա, եօ երկհնչյուն տառակապակցությունների փոխարեն գրել յու, յա, յո տառակապակցություններ,

5. բառամիջի ոյ տառակապակցության փոխարեն գրել հընձման համաձայն ույ տառակապակցությունը,

6. դուրս գցել և չգրել բառավերջի համը յ-ն: Իր առաջարկի համաձայն՝ հոգվածադիրն էլ գրում է՝ սովորում է, դպրոցներում, օտարախօս, վօր, դժվար. շուտով, թողնել, բողոքները. վօշ, դա, տա, բարենօրգում, բարեփոխություն:

Թերթիս N 41-ի «Բամկաբար լեզու» հոգվածում, որ անստորագիր է և ըստ երևույթին խմբագիր Ս. Թառայանինն է, գրված է, թե՝ 1. այսպես կոչված աշխարհաբար լեզուն այնքան էլ մատչելի չէ ժողովրդին, մեր լեզվի համար նոր շրջան է սկսվում. 2. ուստի պիտի թողնել գրական աշխարհաբարը և անցնել ռամկական լեզվին, ինչպես մի ժամանակ թողեցին գրաբարը, անցան աշխարհաբարին, 3. աշխարհաբարը դեն չնետել, այլ օգտագործել նրա ձևերը ռամկական լեզվում, ինչպես գրաբարն օգտագործվում էր աշխարհաբարում: Աշխարհաբարը թարմացնելով ու նորոգելով՝ առաջ տանել դեպի ռամկականը, այսինքն աշխարհաբարը ռամկական դարձնել: Բերելով քաղվածքներ Ահարոնյանից, Թումանյանից և Փափազյանից՝ ձգտում է ցույց տալ, որ նրանց գրվածքների լեզուն անհասկանալի է ժողովրդին: «Ընկերը» այսօրվա «Հյուսիսսփայլն» է, հայտարարում է նա: Բայց ժողովրդական լեզուն, ռամկորեն քարոզողը ը հոգի փոխարեն օգտագործում է ն հոգը բոլոր դեպքերում: Օրինակ, գրում է՝ «պաշտպաններն վերջն հաղթեցին, ընթերցանությունն շատերին մատչելի դարձաւ, խօսամբօղջովին շենք վերացնում աշխարհաբարն, նորօգելով առաջ բերենք ռամկաբարն, ինչպէս խօսում է ռամիկ ժողովուրդն» և այլն: Մի ձև, որ խորթ է բանավոր արտահայտությանը, ժողովրդական խոսքին հատկապես: Հոգվածը գրված է, նախորդ համարում արված առաջարկության համաձայն՝ նօր, ժօղովրդին, քօլոր, դժար, վրա, կօղմից, ամբօղջովին, վօր, քանւօր, հարկաւօր, փօրձէք, նօրօգում և այլն:

Հետաքրքիր է, թե Թառայանը ո՞ր ռամկականն է հիմք ընդունում, չէ՞ որ շատ են մեր բարբառներն ու խոսվածքները, ո՞ր բարբառն է աշխարհաբար գրական լեզվի փոխարեն առաջ քա-

շում: Մեր բազմաբարձ ժողովրդի միության միակ միջոցը միասնական գրական լեզուն է, քայքայել այդ միասնական լեզուն և հետևել բարբառներին, կամ ռամկական լեզվին, նշանակում է քանդել այդ միությունը: Հակառակը պիտի ասեր Թառայանը՝ բարձրացնել ժողովրդի կրթական մակարդակը, գրագիտությունը՝ մեծացնելով դպրոցների և ուսումնական այլ օջախների ցանցը: Այլ բան է գրական լեզուն հարստացնել ժողովրդական կենդանի խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցներով, այլ բան՝ գրական լեզվի փոխարեն ստեղծել նոր, ռամկական լեզու, որ սխալ է:

43-րդ համարում «Մեսրոպի մոռացած տառեր» հոդվածում, որ դարձյալ անստորագիր է և հավանաբար խմբագրինը, հեղինակը կարծում է, թե Մաշտոցի ժամանակ ու-ն վով են կարդացել, ոյ-ը՝ վոյ, իւ-ն՝ իվ, իսկ իրենց հրամայում են կարդալ ու-ն՝ փ, ոյ-ը՝ փփ, իւ-ն՝ փյ Միթե, ասում է նա, Մեսրոպը մոռացել է ց-ի, փ-ի, փյ-ի համար տառեր հնարել, որ ո և ւ, ի և ւ տառերի կապակցությամբ է արտահայտել: Նրա կարծիքով՝ հիշյալ տառակապակցությունները երկբարբառներ չեն եղել: Կարծում է, թե Ջ, Կ, Ս, Սփ երկհնչյունները նոր են առաջացել հայերենում, ուստի առաջարկում է ստեղծել նրանց համար նոր տառեր: Ու և ոյ տառակապակցությունների ո-ն փոխարինել օ-ով և փոխանակ գրելու տուն գրում է տուն, լոյս՝ լոյս: «Այդ ձևերն մտցնելու ենք փօքր առ փօքր, որպէսզի ընթերցողի աչքերն ընտելանան», — եզրափակում է հոդվածագիրը:

Թառայանի այս առաջարկությունները ենթարկվում են սուր քննադատության: Հոդվածագիրներից մեկը բողոքում է, որ «եթե ամեն մի բախտախնդիր իւր ուզածով գրի, ինչ կլինի մեր գրության հալը»: Ոչ ոք իրավունք չունի աղավաղելու մեր ուղղագրությունը¹⁰:

Իր այս «նորարարություն» մեջ «Ընկեր»-ն ավելի է խորանում 1912 թ. համարներում: Փոխանակ ռամկին սովորեցնելու գրական լեզվի նորմաները, ձգտում է գրական լեզուն հասցնել բարբառի աստիճանին, նույնիսկ բաղաձայններն է գրում ըստ արտասանության: Առաջադիմություն քարոզելով՝ մերժողական, նիհիլիստական վերաբերմունք է մշակում մեր անցյալի մշակույթի նկատմամբ: «Հարկաւոր է, ասում է նա, ջարթել հնադարեան քերական ջամչեանի գլուխն, ազատել հայ աշխատաւորին քերականական բռնախնդիր օրէնսդրութիւնից: Փշրել կղերամիտ ու ֆօրմալիստ հօ-

գինների հնացած լեզական ազգագրական ցանցերն ու շղթաներն» (1912 թ., № 19): Թառաջանը պաշտպանում է հյունագրությունը, բայց թերթի թղթակիցները, ընդունելով ուղղագրական նրա փոփոխությունները, առաջարկում են Վ-ի փոխարեն վ տառը գործածել (№ 4):

Նրանք պատմում են, որ «շարաբաստիկ» Վ-ն իր իսկական դերից (ու, իւ) վ-ի դերն ստանձնելով՝ մեծ խոչընդոտների (ըստ թերթի՝ խօշնդօտների) աղբյուր է դարձել ուսման գործում: Շատ անգամ աշակերտները օվ (ով), իւր, վարդ, վարել գրելու փոխարեն գրում են՝ ու, իվր, ւարդ, վարել:

Պահանջելով ազատվել «կղերամիտ» քերականների հնարած լեզվական «ցանցերից ու շղթաներից»՝ Թառաջանը չի խնայում և Մեսրոպի այբուբենը: Նրա կարծիքով՝ հայերը մեր այբուբենում շատ հնչյուններ չեն տարբերում, օրինակ, ձ-ի և ծ-ի տարբերակումը սոսկ բժախնդրության հարց է: Մեր սուրբ Մեսրոպը, ասում է Թառաջանը, հնարել է միայն 22 տառը, ո՞վ և ի՞նչ իրավունքով է Մեսրոպից հետո ավելացրել 15 տառը: Ով Մեսրոպի անունից է խոսում, պիտի դեն շարտի 16 տառը և պահի միայն 22-ը: Մի՞թե իսկապես հայ մարդու միտքը գրավոր արտահայտելու համար ավելի հնչյուններ են հարկավոր, քան թե ունեն Եվրոպական բոլոր ազգերը, հարցնում է նա և պատասխանում՝ «ամենեւին ոչ»: Ըստ այդմ էլ առաջարկում է մեյ, այբուբենից կրճատել ութ տառ, իր կարծիքով զիջում է անում և կրճատում է հետագայում ավելացված 16 տառերի կեսը: Ինչքան շատ են տառերը, այնքան բարդ են կանոնները: Նրա կարծիքով՝ 1500 տարի ազգը գրագետ չի դարձել, որովհետև գրագիտությունը երևացել է իբրև մի չափազանց դժվար արհեստ: Հայ ընդունակ ժողովուրդը ինչո՞ւ բթամիտ, անշնորհ ու ողորմելի դարձավ գրագիտության մեջ, թող պատասխան տան «փարիսեցի քերականագետները և կղերամիտ բնագետները»: Հոգվածագիրը կարծում է, թե հայկական այբուբենի մեջ կան մի շարք տառեր, որոնք մի առանձին արժեք չունեն և ժամանակի ընթացքում կարելի է անգործածելի դարձնել և բոլորովին (գրում է՝ «բոլորովին») դուրս ոցել: Կան տառեր, որ ոչ մի հնչյուն չեն արտահայտում կամ արտահայտում են ավելորդ անգամ և կամ արտահայտում են մի վանկ: Օրինակ՝ ո տառը մի վանկ է՝ բաղկացած վ, օ տառերից, ինչ կարիք կա դրանց միացնել և մի տառ էլ պրա համար առանձնացնել: Եթե վօ-ի փոխարեն գրում ենք ո, ինչո՞ւ վա, վե, վի, վու, մա, մի, մու և այլ հնչյունակապակցությունների համար տառ չենք հնարում, ինչո՞ւ բօ, գօ,

դօ, զօ, թօ-ի համար տառ չենք հնարում, վօ-ն ազնվակա՞ն է: «Մենք դրա մէջ չինական թյուրիմացութիւն ենք տեսնում», — ասում է նա:

Այս հոգւածի շարունակութիւնը կարդում ենք 22-ի «Մի առաջարկ»-ի պատասխանում: Առաջարկողը գտնում է, որ պիտի վերափոխել այբուբենը, ավելորդ տառերը դուրս դնել: Պատմում է, որ իր աշակերտները հաճախ գրում են՝ դրավ, վրա, հետո, օգ. վարք, այսինքն ըստ իրենց արտասանութեան, ուրեմն ուղղագրութիւնը պիտի առաջնորդվի հնչյունային սկզբունքով: «Թող մեր այբուբենի վերանորոգութիւնը լինի մի կօթող՝ անմահացնելու տպագրութեան 400 ամյակը», — վերջացնում է հոգւածագիրը:

Ահա ինչպէս էն հակագիտական ու հակաժողովրդական մրտ-քերն անցկացնում ճոճոտն խոսքերով: Իբրև հիշյալ առաջարկի սրտասխան՝ խմբագրութիւնը գրում է, Բի համաձայն է այբուբենը վերանորոգելուն, ուղղագրութեան փոփոխման հարցը մանրամասն քննելուն: Թառայանի կարծիքով՝ հազարամյակների տունումը սնապարծութիւն է, սնոտիապաշտութիւն և տպագրութեան 400 տարուց հայ ժողովուրդը ոչ մի օգուտ չի տեսել: Պէտք է թէթեացնել այբուբենը, հասցնել եվրոպականին: Ընդ 39 տառ է, լատիններենինը 24, ուրեմն 15-ը ավելորդ են, այդ ավելորդ տառերն են՝ ո, ձ, ու, ը, վ, ֆ, թ և այլն: Սրանցից պիտի կամաց-կամաց ազատվել: Խնչ իրավունքով է ձ տառը, որ ծագել է ուրապտույտ օձի պատկերից, տեղ դրավել՝ դարձեալ, բարձր, հանդերձ և նման բառերում, քանի որ լսում ենք՝ դարցեալ, բարցր, հանդերց: Ուն փոխարինում ենք օ-ով, եթե սա օտարամուտ է, ուն նույնպէս օտարամուտ է: «Ընկեր»-ը դեմ չէ ուսուցիչներից և դրողներից մի համագումար կազմելուն և այդ խնդիրը լուրջ քննելուն: Վաղ, թե ուշ բոլորն էլ պիտի հետևեն «Ընկեր»-ի ուղղագրութեանը, հայտարարում է թերթի տնօրենը: Թառայանի վերը շարադրված մտքերը ոչ մի գիտական, լեզվաբանական հիմք չունեն: Նա հնչյունաբանական, լեզվի պատմականութեան ոչ մի օրենք չի ճանաչում: Օգտագործելով լեզուն ժողովրդին հասկանալի ու հեշտ յուրացվող դարձնելու գալթակդեցուցիչ նպատակը՝ նա արհամարհում է, ջնջում քերականութիւնը, լեզվաբանական օրենքները համարելով կղերական ցանցեր ու շղթաներ: Գիտական ոչ մի հիմք չունի, ավելին՝ հակագիտական է նրա հայտարարութիւնը, թե որքան տառերը քիչ լինեն, այնքան հեշտ կյուրացվեն, մոռանալով, որ եթե տառերը քիչ են, ստիպված ենք նրանցից յուրաքանչյուրին հնչույթային մի քանի իմաստներ վերագրել: Միայն տառերի համապատասխան քա-

նական է ապահովում հնչյունային գրությունը, ազատում այբուբենը լրացուցիչ նշաններից ու կիրառություններից, դրանով է հենց Մեսրոպի այբուբենը կատարյալ։ Թառայանը այն միամիտ կարծիքին է, որ հայերի գրագիտության պակասը ուղղագրության բարդութունից է, շտեմնելով դպրոցների խղճով քանակն ու վիճակը։ Ժողովրդին հասկանալի լեզվով գրել ցանկացող Թառայանը մի կողմից գրում է՝ դարցնել, ջարթված, կիսոնարվենք, դարցեալ. հանդերց, բարցր, մյուս կողմից՝ զի, ալֆավիտ, շրիֆտ, պրիվիլեգիա, միդոտ (մեթոդ), ֆորմալիստ, ամենուրեք օգտագործում է ն հոդը։

Բայց «Ընկեր»-ը չի բավարարվում Մեսրոպի այբուբենի 16 տառը դուրս դնելով, դա նրա համար քիչ է։ Թերթի 24—25-րդ համարներում կարդում ենք «Համամարդկային ալֆավիտ» խորագրով անստորագիր հոդվածը, որ դարձյալ խմբագրինն է՝ Սեդրակ Թառայանին։ Համառոտ ներկայացնենք բովանդակությունը։ Մարդկային ցեղերի ներկա հարաբերությունները միացնում են նրանց։ Ցեղերի առանձին գոյության հնարավորությունը ներկայումս հարց է դառնում, դրա հետևանքն էր էսպերանտո լեզուն։ Կարևոր է ստեղծել համաշխարհային ալֆավիտ և «Ընկեր»-ի բռնած ընթացքն ուղղագրության և քերականության նկատմամբ հենց այդ նշանակետը նկատի ունի։ Եվրոպական բոլոր ազգերն ընդունել են լատինական «շրիֆտը», նույնիսկ լեհերը։ Հանուն հայերնիքի են այդ (հոդվածում՝ էդ) մեծ «րէֆորմը» մտցրել Սենկևիչի հայրենակիցները։ Ապագայում (մի քանի տարուց հետո) «Ընկերը» բոլորովին կթողնի մեսրոպեան ալֆավիտը՝ հետզհետե փոխարինելով նրան շատ ավելի գեղեցիկ լատինական շրիֆտով։ Տարօրինակ դատողություններ է անում հոդվածագիրը։ Ըստ նրա՝ քանի որ բոլոր մարդկանց թոքերն ու կոկորդը միատեսակ կազմն ունեն, ինչ կարիք կա, որ զանազան ցեղերն ունենան զանազան հնչյուններ։ Հոդվածագիրը կամենում է, որ ազգերը հնչյունների վերաբերմամբ էլ փոխադարձ համաձայնության գան և ընտրելով ավելի կարևոր և ավելի քաղցր, երաժշտական (իր գրելով՝ «մուզիկալ»), որոշ ու հեշտ լաելի հնչյունները, դուրս շարտեն սգեղ, թանձր (ինքը գրում է՝ «թանձր»), «թթախառն» հնչյունները, օրինակ՝ խ, և, ֆ և այլն։ «Զնգոցը լավ է հնչում, իսկ խոնարհ-ը կարծես խեղդվող մարդու ջրալի կոկորդից է դուրս գալիս։ Դա նրանից է, որ I-ը ունի զ, գ, ց հնչյունները, իսկ II-ը՝ խ, և»։ Գերմանացիք, ֆրանսիացիք, իտալացիք տարբեր լեզու ունեն, բայց «ալֆավիտը» նույնն է։ Երեխան մի անգամ սովորելով ալֆավիտը (իր տերմինն է), կարող է բոլոր լե-

զուններով կարգալի, Եվ միամիտ Թառաջանը կարծում է, թե եթե օտար տառերը գիտի, ուրեմն օտար լեզուն գիտի։ Կովկասյան ժողովուրդները միմյանց լեզու դիտեն, բայց այբուբենը չգիտեն, որ կարգալի։ Ահա այդ ժողովուրդների բարեկամության համար հոգվածագիրն առաջարկում է ստեղծել Անդրկովկասի ժողովուրդների ընդհանուր լատինատառ այբուբեն։

Սակայն, բարեբախտաբար, «Ընկեր»-ը երկար չի կարողանում մնալ իր սկզբունքին։ № 31, 32-ում հրատարակված Մալխասյանցի հոդվածը գրված է վեպագրության մե (ձայնալիդր, եվրոպական, հնչվելիս, լեզվի, թավացել, գագացվում), օգտագործված է ու-ն և օ-ն (անորոշ, որոշ), այսինքն չի հետևում Թառաջանի գրությանը։ Թառաջանն ինքն էլ 1914 թ. № 1-ում իր ուղղագրության մասին գրում «Ընկերի համակրողներին» հոդվածը։ Այստեղ հանդիպում ենք՝ կը գայ մի օր, խոնարհում ենք, չէինք կարող, կը գայ ճակատագրական բոլակ, կամքով, գոյութեանը, ճանապարհ, հնչ կա որ և այլն։

Այսպիսով, այն ժամանակ, երբ արևմտահայ հատվածում լռել էին ուղղագրությունը բարեփոխողները և գրականության մեջ ու մամուլում հաստատված էր ավանդական ուղղագրությունը, Աստվածաշնչի, Հայկազյան բառարանի ուղղագրությունը, արևելահայ հատվածում մտավորականները բանավիճում էին, ուղղագրական բարեփոխումներ պահանջում։

1913 թ. տոնվում էր հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյա հոբելյանը։ Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի նախագահն էր Գալուստ Տեր-Մկրտչյանը։ Հանձնաժողովը որոշում է կազմակերպել ընդհանուր խորհրդակցություն՝ ուղղագրությունը մշակելու համար։ Խորհրդակցությունը նշանակում են հոկտեմբերի 1-ին։ Հրավիրատուներին կցում են Մանուկ Աբեղյանի մի հարցացուցակը՝ երկու կարգի հարցերով։ I կարգի հարցերին պատասխանելու են նրանք, որոնք գտնում են, որ ուղղագրությունը չպիտի փոխել։ Այդ հարցերն են¹¹։

1. Ինչո՞ւ պետք չէ և չի կարելի փոփոխություն մտցնել մեր ուղղագրության մեջ։

2. Ի՞նչ կարծիք ունեք ուղղագրության միասնության մասին։

3. Ինչի՞ց է առաջանում մեր ուղղագրության մեջ փոփոխություն մտցնելու ձգտումը։

4. Ինչպե՞ս վարվել մեր ուղղագրության մեջ հետզհետե մղտնոց փոփոխությունների հետ, արդյո՞ք թողնել ազատ, թե՞ որևէ ձևով որոշ ուղղություն տալ այդ ձգտումներին։ Եթե կարելի է և պետք է անել, ապա ո՞վ և ինչպե՞ս պիտի անի այդ։

5. Եթե անհրաժեշտ է միակերպ ուղղագրությունը, հարկաւոր չէ՞, արդյոք, միակերպության վերածել տատանվող ուղղագրական ձևերը (թանկ—թանգ, գունտ—գունդ, վաղճան—վախճան, ծնօղ—ծնող և այլն), ինչպե՞ս ընտրություն կատարել դրանցից:

6. Ինչպե՞ս վերաբերվել վ հնչյունի վ, ւ, ու ոչ միակերպ նշանագրերի հետ: Արդյոք պիտի թողնե՞լ այդ տարբեր գրությունները (ասուել, ասւել, ասվել), թե պետք է միակերպության վերածել և ինչպե՞ս:

7. Մեր գրական լեզվում ունենք, արդյոք, երկու տարբեր հրնչյուն վ գրի համար, մեկը կոշտ (ծով), մյուսը փափուկ (հաւ), թե՞ դա լուրջ սխալ հասկացություն է, և մենք միայն վ հնչյուն ունենք: Վազել, կով, աւազ, հաւ բառերի մեջ նույն վ հնչյունն է, միայն գրության ձևով է տարբեր: Արդյոք վ հնչյուն ունեցող ու-ն՝ պատուէր, զուարթ և նման գրություն ունեցող բառերում կիսաձայն ո՞ւ է (բաղաձայնական և ձայնավոր), թե՞ բաղաձայն վ հնչյուն:

Երկրորդ կարգի հարցեր. առաջին վեց հարցերի հետ պատասխանելու են նրանք, ովքեր գտնում են, որ անհրաժեշտ է նոր ուղղագրություն:

1. Ինչո՞ւ պիտի ուղղագրությունը փոխել:

2. Զի՞շտ է, թե ուրիշ ազգեր իրենց դժվար ուղղագրության մեջ փոփոխություն չեն մտցրել և չեն մտցնում: Որքա՞ն կարևոր են մեզ համար այն հիմունքները, որոնցով առաջնորդվում են ուրիշ ազգերը իրենց ուղղագրության հարցում:

3. Մեր ուղղագրության մեջ ի՞նչն է պատմականորեն անփոփոխ մնացել, ի՞նչն է փոփոխության ենթակա եղել և է:

4. Որչա՞փ հնարավոր ու կարևոր է մեր ուղղագրությունը մոտեցնել արտասանությանը:

5. Մինչև ո՞ր աստիճան տեղական արտասանությունները արգելք կլինեն ուղղագրությունը արտասանությանը համապատասխանեցնելուն: Կա՞, արդյոք, ընդհանուր գրական արտասանություն որոշ տառերի համար, որոնց ուղղագրությունը դժվարություն է հարուցում:

6. Որչա՞փ ճիշտ է, թե մեր ուղղագրությունը տակնուվրա կլինի նրանում կատարված որևէ փոփոխության դեպքում: Զկա՞, արդյոք, մի սահման, որ ամենքի համար ընդունելի լինի, որից այն կողմն անցնելը անհնարին է: Ո՞ր տառերի ուղղագրությունը պիտի անձեռնմխելի մնա:

7. Հատկապես ինչպիսի՞ ու ի՞նչ փոփոխություններ և ի՞նչ միջոցներով է հնարավոր անել, որ ուղղագրության միասնականություն

ներ չխանգարվի և բառերի պատկերը միանգամից մեծ փոփոխություն չենթարկվի, անճանաչելի չդառնա:

8. Կարելի՞ է օ-ն դուրս գցել և նրա տեղ միշտ ո գրել, Եթե՝ չէ, կարելի՞ է այժմ, պահելով բառերի սկզբի օ-ն, բառամիջում և բառավերջում ո գրել: Ի՞նչն է արգելք լինում: Արժեք ունի՞ր այստեղ օ-ով գրվող բառերի ստուգաբանությունը: Որքա՞ն դյուրություն առաջ կգար դրանով և որքա՞ն բառերի պատկերը կփոխվեր:

9. ա) Կարելի՞ է է-ն դուրս գցել և տեղը ե գրել, բ) եթե՝ ոչ, կարելի՞ է, հապա, բառասկզբի է-ն պահել, իսկ բառամիջում և բառավերջում ե գրել: Այս փոփոխությունը որքանով արգելք կլինի է-ով գրվող բառերի ստուգաբանությանը, գ) եթե դա էլ չի կարելի, կարելի՞ է հապա է-ն թողնել բառասկզբում և մեկ էլ այն չեպքերում, երբ փոխվում է ի-ի, իսկ մնացածը գրել ե-ով, դ) եթե սա էլ չի կարելի, կարելի՞ է է-ն թողնել բառասկզբում, բառավերջում, բառամիջում ձայնավորից առաջ, բայերի վերջավորությունների մեջ (գրէր, գրէք, գրեցէք) և այն դեպքում, երբ է-ն փոխվում է ի հնչյունի, իսկ մնացածը գրել ե տառով (եղևզն, աղվես, զմբեթ, պատճեն):

Որքա՞ն դյուրություն կառաջանա, որքա՞ն շատ կփոխվի բառապատկերը:

10. Կարելի՞ է յ տառը պահել միայն կիսաձայնի համար ա, յ-ից հետո, իսկ բառասկզբի յ-ի տեղ գրել ճ, բառավերջի անձայն յ-ն դուրս գցել: Եթե՝ ոչ, կարելի՞ է բառասկզբի յ-ն պահել, իսկ վերջի անձայն յ-ն դուրս ձգել: Որքա՞ն դյուրություն կլինեք դրանով և որքա՞ն կփոխվեր բառապատկերը:

11. Կարելի՞ է եա, իւ, եօ, ոյ երկբարբառնեղի գրության մեջ փոփոխություն մտցնել:

Սրանք լուրջ հարցեր էին, և հրավիրվածները պատասխանելու համար պիտի պատրաստված գային: Բայց հանձնաժողովը չհավաքվեց: Հոբելյանական հանձնաժողովն ավելի շատ զբաղվել է պատարագներով, ուխտագնացությամբ ու մաղթանքներով, քան ալյուրի մի մեծ ակադեմիական գործով, սրտի ցավով ավելացնում է Լեոն¹⁾, պատգամավորներից քչերը կարող էին հետաքրքրվել ուղղագրությամբ: Այս հարցացուցակը քննելու համար միայն Թիֆլիսում, Տիգրան Նազարյանի գրական-գեղարվեստական սալոնում Ստ. Մալխասյանցի նախագահությամբ ժողով է կայանում, բայց ոչ մի համաձայնության չեն գալիս, և ժողովը փակվում է անարդյունք: Նիստին ներկա է եղել նաև Ալեքսանդր Շիրվանզադեն:

1913 թ. հոկտեմբերի 14-ին էջմիածնում հայերեն գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 100-ամյակին նվիրված համադգային մեծ հանդեսին լսվում է միայն Մանուկ Աբեղյանի զեկուցումը՝ «Մեր ուղղագրության մասին», որը և տպագրվում է «Արարատի» նշյան թվականի 11—12-րդ համարներում:

Այդ զեկուցումը, Ն. Հովակիմյանի վեկայությանը, այնքան երկար է տևում, որ ո՛չ Ստ. Մալխասյանցն է ղեկուցում, որ նույն հարցի մասին պիտի զեկուցեր, ո՛չ ելույթներ են լինում, ո՛չ էլ կարգացվում են ուրիշ հայադէտների, այդ թվում և Մեյեի ու Մառի, կարծիքները: Դասախոսությունից հետո մի խորհրդակցություն է լինում Ս. Կանայանի նախագահությամբ: Այստեղ որոշում են հարցը քննել գիտնականների նեղ ժողովում: Հետո, թղթակցի ասելով, որոշվել է դիմել վեհափառ Հայրապետին՝ հրավիրելու հայադետների և ուսումնասիրելու այդ հարցը: Գրանով վերջանում է «ուղղագրության օրը»¹³: Հետագայում հանձնարարվում է էջմիածնի ուսումնական հանձնաժողովին՝ կազմել մի հանձնախումբ, որ ուսումնասիրի ուղղագրության հարցը: Ուսումնական հանձնաժողովը նոյեմբերի 12-ի նիստում հանձնարարում է Գալուստ Տեր-Մկրտչյանին, Մանուկ Աբեղյանին և Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանին՝ որոշելու հանձնախմբի կազմը: Առաջարկ է լինում նաև այդ գործը հանձնարարել ճեմարանին և ներսիսյան դպրոցին¹⁴:

Խոնջ հարցեր է արծարծել Աբեղյանն իր այդ ընդարձակ զեկուցման մեջ: Ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ միակերպ, միասնական ուղղագրություն, ասում է նա, որպեսզի զանազան բարբառներով խոսողներն իրար հասկանան: Գրավորը կենդանի լեզվի պայմանական ձևն է, բայց բոլորի կողմից ընդունված ձև: Ուղղագրության ընդհանուր միությունը պետք է տևական լինի, որպեսզի հաջորդ սերունդը չկտրվի նախորդից, դրանով է մեր գրական լեզուն ընդհանուր: Մեր այսօրվա երկու գրական լեզուները նույնանում են ընդհանուր ուղղագրությամբ: Եթե ուղղագրական փոփոխությունը մեր գրական լեզուները (արևելյան, արևմտյան) իրարից կհեռացնի, չպիտի կատարել:

Խոսքի պատկերներն էլ (գրերը) շատ չպիտի լինեն: Դրա համար էլ հնարված է հնչական գրությունը (հակառակ պատկերագրության): Կենդանի խոսքը վերածվել է իր ամենապարզ բաղադրիչների՝ հնչյունների (իմա՝ հնչույթ) և նրանց համար հորինվել են պայմանական նշաններ:

Մեր այբուբենը իր սկզբնաշրջանում ունեցել է հնչյունային գրություն, յուրաքանչյուր հնչյուն ունեցել է մի գիր: Բայց կեն-

դւանի խոսվածքում ժամանակի ընթացքում հնչյունները փոխվում են, մի հնչյուն երկուսի է վերածվում, երկուսը՝ մեկի, մի հնչյուն՝ մի ալլ հնչյունի: Լեզվի այս բնական փոփոխությունը ասպարեզից հանում է գրության հնչական սկզբունքը, կարիք է դրացվում բանի հին պատկերը փոխել նոր, հնչական գրության, այստեղից էլ առաջանում է նոր ուղղագրության արքր:

Խոսքը թուշում է, դիրք մնում: Մեր նախնիների գիրն է մնացել, արտասանությունը չկա: Բայց ստիպված ենք կառչած մնալ գրության հին ձևին, եթէ փոխենք, այս փոխածն էլ կհանա, եթէ էլի փոխենք, այնքան կհեռանանք, որ նախորդ շրջանի գրավոր խոսքն անհասկանալի կդառնա: Ուստի փոփոխությունները կատարվում են մասամբ և հնարավորության սահմաններում:

Փոփոխությունները կատարելիս երկու սկզբունք են նկատի ունենում՝ հնչաբանությունը և սոսոգաբանությունը: Նախ առաջինի մասին:

ԺԹ դարի առաջին հիսնամյակում մեր լեզվի ուղղագրության մեջ մեծ բազմազանություն էր սիրում, իսկ երկրորդ հիսնամյակում ձգտում կա միօրինակության, դա կատարվում է միթարյան գրաբարի ազդեցությամբ, նրա շնորհիվ: Միակերպությանը դալլալես օգնում են բառարանները: 1800-ական թվականներին մեր ուղղագրությունը բավական միակերպ էր: Հաջորդ տասնամյակում սկսվում է նոր հոսանք՝ ուղղագրությունը մոտեցնելու արտասանությանը: Դա սկսվել է արեւելահայ հատվածում Վ-ի և ու-ի շուրջ ծագած բանավեճով: Ղ. Աղայանի դասագրքի շնորհիվ 90-ական թվականներից տարածվեց Վ-ագրությունը: Այժմ (1913 թ.) ու-ագրությունը պահում են միայն հին սերնդի մարդիկ: Նրանք էլ անցան Վ-ագրության, որովհետեւ դասագրքերն այդպես էին գրում: Բնական Վ-ագրության չհետևողները, այդ թվում և ինքը՝ Աբեղյանը, գրում են նուէր, զուարթ, բայց նրանց աչքը շատ է տեսնում նւէր, զւարթ ձևերը:

Սկսել են բառավերջի յ-ն չգրել, ց-ով գրվող բառերը ու-վ գրել: Առաջարկ է եղել Վ-ն վ-ով գրել (ղվարթ, աղավնի): Պահանջ է դրացվում ուղղագրական մեծ փոփոխությունները: Նպասակն է հեշտացնել ուսումը երեխաների համար: Այս նոր ուղղագրության հարցը գրաբարի ու աշխարհաբարի պայքարի շարունակությունն է: Գրաբարը աշխարհաբարի վրա ազդել է ավելի շատ ուղղագրությամբ, քան ձևաբանությամբ ու շարահյուսությամբ: Մենք այժմ գրում ենք գրաբարի ձևով և այս տեսակետից մեր լեզուն ավելի բիշ է փոխվել, քան, ասենք, նոր ֆրանսերենը հնի համեմատու-

թյամբ կամ նոր գերմաներենը՝ հին, միջին գերմաներենի Մեջնագարում Ֆրանսիայում էլ երկար լանալնճեր են եղել:

Քանի ուղղագրությունը գրաբարյան է, աշխարհաբարի հաղթանակը լիակատար չէ: Այն հարցին, թե ինչո՞ւ աշխարհաբարի ռահանորդները հին լեզուն փոխելով՝ չեն փոխել նրա ուղղագրությունը, Աբեղյանը պատասխանում է՝ որովհետեւ այդ ժամանակ գրաբարում արդեն հին արտասանությունը չկար, գրել են Ե դարի ձևով, կարդացել ԺԺ դարի ձևով (որդի՞ն «ordī» կարդացել են վորթի «vorthi», գուարդ-ը՝ գվարք, ողորմեա-ն՝ վողորմյա և այլն): Եթե աշխարհաբարը գրաբարի ուղղագրությունը չպահպաներ, կստացվեր մի խառնաշփոթություն. ո՞ր խոսվածքի ուղղագրությունը պիտի վերցնեն այդ դեպքում: Զլիններ դարարոր, աշխարհաբարն այդքան արագ չէր զարգանա: Եթե գրաբարի ուղղագրությունը չպահպանվեր, մեր երկու գրական լեզուներն այնքան կհեռանային իրարից, որ անհասկանալի կդառնային միմյալնց համար:

50—70-ական թվականների փորձերը (փոխել ուղղագրությունը հնչյունային սկզբունքով, գրել այնպես, ինչպես ասվում է) անհաջող անցան, որովհետեւ հայ ժողովուրդը չունի միասնական արտասանություն:

Եթե արևմտահայն իր արտասանությամբ գրեր, արևելահայն՝ իր, կստացվեր այնքան տարբեր բան, որքան օտար անունների տառադարձության մեջ է ստացվել (Պետերբուրգ—Բեդերպուրկ—Փեթերպուրկ, Պարիզ—Բարիզ—Փարիզ և այլն): Իսկ եթե խառնվեր նաև դանազան բարբառների միջամտությունը, ձևոք պիտի քաշեինք գրական լեզվից: Ուրեմն ուղղագրական փոփոխություններ կատարելը շատ դժվար բան է, թեկուզ հենց երկու գրական լեզուների առկայության տեսակետից: Պետք է հրաժարվել մեր ուղղագրության մեջ արմատական փոփոխություններ մտցնելու մտքից: Այս նույն միտքն է արտահայտել Աբեղյանը 1897 թվականին «Արարատ»-ի սեպտեմբեր-հոկտեմբերի համարում տպագրված «Մեր երկու գրական լեզվի միության խնդիրը» հոդվածում: Սրտի ցավով նշելով, որ մենք չունենք ընդհանուր գրական լեզու, ուստի և ընդհանուր ազգային գրականություն, ընդգծում է, որ այսպիսի պայմանում հնարավոր չէ անցնել հնչյունային ուղղագրության: Գրական լեզուն մեծ գետ է, ուր հոսում են մանր շատ առուներ, խոսվածքներ, ուստի ճիշտ չի լինի պահանջել, որ գրենք այնպես, ինչպես ասում ենք: Կենդանի լեզուն միշտ մի որևէ բարբառի ազդեցության տակ է լինում, դրա համար էլ գրական լեզուն կենդանի

խոսակցական լեզվի հետ նույնը չի լինում: «Պահանջել, որ գրական լեզուն կենդանի լեզվի իրական պատկերը լինի, այդ մի անիրագործելի ցնորք է» (էջ 428)¹⁶ ւ:

Բայց սա չի նշանակում, թե գրության մեջ ոչ մի փոփոխություն չպիտի մտցնել: Բերում է ֆրանսերենի օրինակը, ուր 20 տառակապակցությունը կարդացվում է օ: Առ հնչյունը 20 աբոահայտություն ունի, ին՝ քսաներկու: Դարեր շարունակ ֆրանսիացիք ձգտել են ուղղագրությունը հնչական դարձնել, բայց հնարավոր չի եղել: «Գրել ինչպես խոսում են՝ հրապուրիչ կանոն է, բայց և ցնորական»,—ասում է ֆրանսիացի քերականը: Եթե ուղղագրությունը հնչյունային սկզբունքով լինի, ինչպե՞ս կարող են մի ընդհանուր գրություն ունենալ պիկարդացին ու գասկոնացին, պրովանսացին ու նորմանդացին: Ինչպես կղանազանեն s'it «սուրբ», sain «առողջ», s'in «ծոց» բառերը և seing «ստորագիր», cing «հինգ» բառերը, որոնք նույն հնչումն ունեն, եթե հնչյունային գրությամբ միևնույն տառերն ունենան: Ֆրանսերենը, Լեթե հնչյունային ուղղագրությանը հետևի, անընթեռնելի կդառնա ֆրանսիացու համար, ահա թե ինչու այդ սկզբունքն այնտեղ մերժված է: Եվ չնայած դրան, ֆրանսերենում էլ ուղղագրական մասնակի փոփոխություններ կատարվում են:

Մեր լեզվում էլ հնչական գրությանը խանդարում են բարբառները, արևելահայ և արևմտահայ դրական լեզուների բաղաձայնական համակարգի տարբերությունը, ուստի բաղաձայնների ավանդական ուղղագրությանը ձեռք չպիտի տալ: Դարերի ընթացքում էլ բաղաձայնների ուղղագրությունը անփոփոխ է մնացել, բացի մի քանի բառերից (թանգ—թանկ, գունդ—գունտ):

Հյունագրությունը տարածվեց, որովհետև մասնակի դեպք էր, դրանով բառը շատ չէր փոփոխվում, մինչ այդ էլ միևնույն բառը գրվում էր թե՛ ուով, թե՛ ուով և թե՛ վով (ասում, ասում, ասվում): Եզրակացություն՝

1. Մեծ ու հիմնական փոփոխություններ չի կարելի կատարել: Հնարավոր փոփոխությունները պիտի կատարել աստիճանաբար, ոչ միանգամից:

2. Կատարած փոփոխությունները նույնիսկ մի բառի պատկերի անճանաչելի չպիտի դարձնեն: Զի կարելի, օրինակ, յաղթել բառի յ և դ, ք և է տառերի գրությունը փոխել, գրել հախտել կամ ախտել, յետոյ-ը դարձնել հետո:

Անդրադառնալով ստուգաբանական սկզբունքին՝ Աբեղյանը որոշ վերապահություն է անում: Այս սկզբունքը հակառակ է հըն-

չյունականին, սրանով գիտնականներն են սիրում առաջնորդել: Պահանջում են գրել՝ շօշափել, ծնօղք, որովհետև հնում եղել է՝ շաւ-
շափել, ծնաւդ: Այս աստիճանականութիւնը, նկատում է Աբեղյանը,
գիտնականն առանց այդ էլ կիմանա, իսկ շարքային ընթերցողին
հարկավոր չէ, էլ ո՞ւմ համար գրել՝ շօշափել: Բաղաձայններին
ձեռք չտալու պահանջը հասկանալի է, բայց պահանջում են ձեռք
չտալ նաև ո—օ տառերին, ասում են՝ եթե մի տառով արտահայ-
տենք օ հնչյունը, չենք տարբերի համանունները՝ հօտ և հոտ, հոր և
հօր, այս պատճառով է, որ ֆրանսերենում պահպանվում է ստու-
գաբանական ուղղագրութիւնը: Բայց մոռանում են, որ համանուն-
ների քանակը հայերենում քիչ է, և եթէ մեկը պնդի շօշափել գրու-
թիւնը, կլինի լոկ ի սեր հնության: Մեր լեզվում օ-ի փոխարեն ո
գրելուն արգելք չկա:

Հին եա-ն դարձել է ե՝ լեառն>լեռ, սեաւն>սեւ, գոր-
ծեաց>գործեց, գնացեալ>գնացել: Ոչ մեկի մտքով չի անցնում
գրել սեաւն, լեառն: Գրականության մեջ օգտագործվող սենեակ,
լեառն, մատեան, յարութեան և նման ձևերը գրաբարյան փոխա-
ռութիւններ են: Մի կողմից դրաբարի զնայր-ը դարձրել ենք զնար,
մյուս կողմից՝ գրում ենք բերէր, թեև արտասանում ենք՝ բերեր,
հետևողական չենք: Եթե հներն էլ մեզ նման մտածեին, պիտի պահ-
պանեին բառերի հնդեվրոպական ձևը, որով չէին լինի հնդեվրո-
պական լեզուների այսօրվա տարբերութիւնները, գրավորը կմնար
հին պատկերով: Հին պատկերը պահպանելու համար կարիք չկա
գրել՝ գրէք, գրէր:

Բայց ստուգաբանական հիմունքը չի կարելի մերժել ամբող-
ջովին: Այն պետք է ոչ միայն բառերի հին ձևը պահպանելու, այլև
տատանվող գրութիւնները մի տեսքի բերելու համար: Թանդ—թանկ,
գունտ—գունդ, բանդ—բանտ, վաղճան—վախճան ձևերից մեկը
պիտի ընտրել, իսկ դրան արտահայտութիւնը չի օգնի, պիտի դիմել
ստուգաբանութեանը: Ստուգաբանութիւնը ցույց տվեց, որ ճիշտը
բախտ ձևն է, ոչ թե՛ բաղդ: Շեմ և շէմ՝ ձևերից ճիշտ առաջինն է,
քանի որ հին եա-ն դարում է ե (սեաւ—սեւ—սեվ—սև, շեամ—
շեմ): Գրում ենք՝ ուրեք, ուտեք, ումեք, բայց՝ երբէք, պարզ է,
որ ճիշտը երբեք ձևն է, միօրինակութեան բերելու տեսակետից:

Ստուգաբանութիւնը հուշում է մեզ, որ եթե զնայք, զնայր
ձևերի յ-ն ընկել է (զնաք, զնար), պիտի բերէր, բերէք բառերի է-ն
էլ փոխել ե-ի, քանի որ է>եյ, պիտի գցել յ-ն պահել ե-ն (բերեր,
բերեք): Այս բոլորից հետո Աբեղյանը գալիս է հետևյալ եզրակա-
ցութեան.

1. դրական լեզվի մեջ ուղղագրության միակերպությունն անհրաժեշտ է և գերիշխող,

2. ուղղագրությունը նորոգելու և հնչական դրությամբ արտասանությունը մոտենցնելու պահանջը կարևոր է և լուծում պիտի ըստանա, բայց աստիճանաբար, այնպես, որ գրական լեզվի առաջին սկզբունքը շխախտվի,

3. պատմական անհրաժեշտությամբ աշխարհաբարում մնացել է գրաբարի ուղղագրությունը, և մենք չենք կարող նրանում մեծ փոփոխություն մտցնել: Բաղաձայնների ուղղագրությունը անձեռնմխելի պիտի մնա,

4. ձայնավորների ուղղագրության մեջ կարելի է մասնակի փոփոխություն մտցնել՝ առաջնորդվելով հնչաբանական ու ստուգաբանական սկզբունքով, բայց միայն այն դեպքում, երբ դա ընդհանուր է գոնե երկու գրական լեզուների (արևելյան, արևմտյան) համար,

5. անհնարին է պահանջել, որ յուրաքանչյուր հնչյուն մի տառով արտահայտվի, թեև դա գիտական ճիշտ ուղղագրությունն է,

6. մենք գործնական նպատակով միայն թեթև նորոգություն պիտի անենք: Դա պիտի և՛ գիտական հիմունքով լինի, և՛ ընդունելի երկու լեզուների համար:

Այնուհետև Աբեղյանը շարադրում է ուղղագրության բարեփոխման իր առաջարկները:

Ձայնավորների արևելահայ և արևմտահայ դպրոցական արտասանությունը միատեսակ է, ուստի ուղղագրական բարեփոխություններ կարելի է այդ բնագավառում կատարել: Ձայնավորներից ա-ն, ի-ն, ը-ն ուղղագրական դժվարություն չեն ներկայացնում: Հարմար է բառամիջի ը-ն չգրել: Օ-ն առաջացել է ալ-ից: Գուցե օ-ն ու-ից երկար է եղել, դրա համար ալ-ը չեն դարձրել ու, այլ ըստեղծել են նոր տառ: Այսօր այդ տարբերությունը չի մնացել, ու-ն և օ-ն միանման են հնչում, և միևնույն պարզ օ հնչյունի համար ստացվել է երկու տառ՝ օ—ու, որը և՛ շփոթվելու տեղիք է տալիս: Կանոն չկա, թե երբ պիտի օ գրել, երբ՝ ու: Օ-ով քիչ բառեր են գրվում, ու-ով՝ հազարավոր բառեր: Սխալ է դպրոցներում սովորեցնել, թե ու-ն հնչում է վօ, այդպես սովորելով՝ գրում են թագավոր, բանվոր: Շատ գրագետներ էլ օտար բառերը օ-ով են գրում՝ մոռանալով, որ օ-ն ալ-ին է փոխարինում, ուստի հնում էլ օտար անունները ու-ով էին գրում: Հիմա գրում ենք ծնող, գրող, զարմացող, փոխանակ՝ ծնօղ, գրօղ, զարմացօղ: Ոչ մի արգելք չկա գրե-

լու՝ քող, մոտ, առատոտ, ամոք, միայն հին գրագետների աչքում է խորթ ու տարօրինակ թվում։ Մեր նախնիները հետևել են արտասանությանը, եւ-ը իւ են արտասանել, գրել են իւ, աւ-ը օ են արտասանել, վերցրել են օ-ն, ասեի, ասեիր, ասեաք, ասեիք, ասեին հին ձևերի ե-ից հետո յ է ավելացել՝ հորանջը վերացնելով, ստացվել է ասեյի, իսկ եյ-ի փոխարեն գրել են է՝ ասէի, ասէիր, ասէր և այլն։ Եթե այսօր օ-ն գցենք, հարազատ կմնանք հնրին։ Բայց բառակզբում դժվար է, որհնել-ը վորհնել կկարդան։ Եթե բառակզի ո-ն օ դառնա, կարելի է բառակզբից էլ գցել, բայց դա մեր ուղղագրության բարեփոխման երկրորդ աստիճանն է, այժմ այդ անել չի կարելի, պիտի բառակզբի օ-ն թողնել, այլ կերպ ուրոց-ը վորոց կկարդան։ Ոչ մի արգելք չկա բառամիջի օ-ի փոխարեն ո գրելու։ Ու-ով պիտի գրել քոլոր օտար անունները, բարբառից վերցված բառերը։ Կանոն՝

1. Բառամիջում օ հնչյունը գրել միշտ ո տառով, իսկ շառասկզբում՝ օ (բացի ով, ովկիաճոս բառերից)։

2. Բառակզբի վո վանկը գրել ո տառով։ Իբրև բացառություն մնում է եօ երկբարբառը՝ Լօթն, արդեօք, կարծեօք, որովհետև դա կապված է երկբարբառների փոփոխության հետ, որ հիմա չի կարելի կատարել, մեր աչքը վարժված չէ արդեօք-ը դարձնել արդյոք կրկնակի փոփոխությամբ, մյուս կողմից յոթն ձևը կկարդացվի հօթն։

Սկզբում ե-ն եղել է կարճ է-ի նշանը, իսկ է-ն՝ երկար։ Ժամանակի ընթացքում կորել է այդ տարբերությունը։ Ե-ն բառակզբում ընդունել է ի=յ ձայնավորը, դարձել երկբարբառային։ Արարատյան բարբառում բազմավանկ բառերում պահել է է հնչյունը (երկու—էրկու, եկավ—էկավ)։ Գրական արտասանությամբ ե-ն բառակզբում կարդացվում է յէ, իսկ բառամիջում՝ է (երեկոյ>յերեկոյ)։ Այս հարցում երկու անկատարություն կա՝ բառակզբում յէ երկբարբառը գրում ենք մի տառով (ե), որը բառամիջում կարդացվում է է, մյուս կողմից՝ բառամիջում և սակավաթիվ բառերի սկզբում միևնույն հնչյունը գրում ենք երկու տառով (ե—է)։ Հնչյունային գրության սկզբունքով դրանցից մեկը պիտի պահել և դա պիտի լինի ե-ն, քանի որ է-ն հանդիպում է 115 բառում և բայերի մի քանի վերջավորություններում, իսկ ե-ն՝ հազարավոր բառերում։ Սխալ են նրանք, որոնք ե-ն գցում, է-ն են պահում, օտարազգի բառերն էլ է-ով են գրում։ Մահավանդ որ ոչ թե ե-ն է է-ի փոխվել, այլ երկար է-ն է դարձել ե։ Չենք կարող բառակզբի է-ն իսկույն ե-ով փոխարինել, էգ, է, էշ, էջ, էր, էրիկ,

էգուց, էս, էդ, էն և նման այլ բառեր կկարդացվեն՝ յեգ, յե, յեշ, յեջ, յերիկ, յեգուց, յես և այլն: Իսկ բառասկզբի *յե*-ն յե-ով գրելը կապված է երկհնչյունների ուղղագրության, բառասկզբի յ-ն հ-ով փոխարինելու հետ. դա երկրորդ աստիճանի հարց է, ինչպես **ռ**-ի փոխարեն վո գրելու հարցը:

Բառամիջում էլ շենք կարող, որովհետև եթե որոշ բառերում էա-ի փոխարեն եա գրենք, շփոթություն կառաջանա, քանի որ եա-ն կարդացվում է յա: Եթե քրիստոնէական-ը դարձնենք քրիստոնեական, կկարդացվի քրիստոնյական: Ինչպես նշվեց, սկզբում եղել է ասեի, ասեիր, հետո հորանջը վերացել է ե-ի յ ստանալու միջոցով, ստացվել է ասեյի, ասեյիր, իսկ եյ-ի փոխարեն գրել են է՝ ասէի, ասէիր: Այժմ այդ տարբերությունը վերացել է և է-ն էլ հավասար չէ ե-ի, ե-ն հավասար է է-ի, ուստի մի պարզ հընչյունի համար երկու տառ պետք չէ դորժածել: Անգրապիտություն է գրել՝ ասէյի, ասէիր, ասէյաք: Քանի որ բառամիջում է-ի և ե-ի մեջ տարբերություն չկա, կարող են անցնել նախնյաց գրությանը՝ ասեի, ասեիր: Բառամիջում է-ն երևում է այն ժամանակ, երբ այն փոխվում է Վ հնչյունի (սէր—սիրել), բայց սա չի խանգարում, որ այդ բառերն էլ ե-ով գրվեն: Պիտի անգիր անել այն բառերը, որոնց է-ն փոխվում է ի-ի: Դրանց հետ նաև բացառությունները: Կանոն. է տառը պահել. 1. բառերի վերջում, քանի որ շատ որոշ է և ընդունված,

2. բառամիջում, երբ փոխվում է ի ձայնավորի,

3. բառամիջում և վերջում, եթե ծագել է այլ երկհնչյունից՝ էս, էդ, էգուց, դէս. վէր ընկնել, հէր, մէր և այլն,

4. բառասկզբում կամ բառամիջում ա, ի, ո, ու ձայնավորներին նախորդող դիրքում, բացառությամբ բայերի էր, էք վերջավորությունների:

Մնացած դեպքերում կգրվի ե: Բառամիջում բաղաձայնին նախորդող դիրքում է-ի փոխարեն գրել ե՝ աղուես, գմբեթ, պատճեն, եղեգն, ծակուտկեն, խեթ, հրեշ, պարնն, երբեք, հենց, մեկ, բզնգ, գեթ, գոմեշ. աշխետ, ախտաժետ, նենգաժետ, գազպեն, խելգ, կետ, կոճղեգ, մողես, շահեն, պարետ, վետվետ, փեշ, ամեն, թեպետ, թեկուզ և աւեր, արեն, երեն ածանցները, տերութիւն, տերունական, գեներալ, շեկութիւն, պետքական, տնօրինութիւն, տառնումեկերորդ և այլն: Լավ կլինեն է-ն պահել միայն բառասկզբում և էա կապակցության համար, մյուս դեպքերում գրել ե, բայց դա մեծ փոփոխություն կլինի և ասպագայի գործ է:

Երկու պարզ ձայնավորի միացումից կազմվում է երկբարբառ: Դրանցից մեկը ձայնավոր է, մյուսը՝ կիսաձայն (բաղաձայնական ձայնավոր): Վանկային հնչյունով սկսվող երկբարբառը անվանվում է ընկնող, իսկ ոչ վանկայինով սկսվողը՝ բարձրացող: Մեր յ-ով էլ կազմվում են երկբարբառներ: Բայց մեր յ-ն ձայնավորից հետո է հանդես գալիս, իսկ ձայնավորին նախորդող դիրքում բաղաձայն է:

Այսօր յ-ն, ձայնավորին նախորդի, թե հաջորդի, բաղաձայնի է համարվում: Յ-ն իր հին հնչումը պահել է միայն բառամիջում՝ ա, ո ձայնավորներին հաջորդելիս: Բառավերջում ա, ո ձայնավորներից հետո ընկել է, իսկ բառասկզբում հավասարվել է հ-ին, մեկ-մեկ էլ ընկել է (յաջող—հաջող—աջող):

Գրական արտասանության տեսակետից ոչ մի սրգելք չկա բառասկզբի յ-ն դարձնել հ: Սրանով մոտ 1900 արմատի գրությունը կիրիվի, բայց կհնչտանա ուղղագրությունը, քանի որ ներկավիճակում ոչ մի կանոն չկա, թե բառասկզբում հ հնչյունը երբ էլ տառով արտահայտվում, երբ՝ հ: Բայց այս փոփոխությունը II աստիճանի հարց է, եթե օ-ի տեղ գրենք ո, յ-ի տեղ՝ հ, շատ բառեր անձանաչելի կդառնան՝ յօղ>հող, յօժար>հոժար, յօնք>հոնք, յօջօտել>հոջտել, յօրանջել>հորանջել, յօրինել>հորինել, յետոյ>հետո և այլն: Հեշտությամբ կարելի է բառավերջի ա, ո-ին հաջորդող համար յ-ն զցել: Այս դեպքում, իհարկե, որոշ բայեր շատ կձևափոխվեն՝ զօրանայ>զորանա, աղօտանայ>աղոտանա, ծանօթանայ>ծանոթանա, բայց ուրիշ ճար չկա: Բառավերջի անձայն յ-ի գրությունը կապված է հրամայական բայի, դերանունների, հատուկ անունների գրության հետ, որը դժվարացնում է ուսուցումը: Մանավանդ որ ո-ով վերջացող բայերը ունեն անձայն յ-ն, ա-ով վերջացողները չունեն: Պիտի սովորեցնել նաև, որ ծառայ, աղայ և նման բառերը վերջի յ-ն հող առնելիս կամ հոգնակի դառնալիս կորցնում են (ծառաս, ծառաներ), իսկ հոլովվելիս պահում են (ծառայի): Ահա թե ինչու անձայն յ-ն պիտի զցել:

Կլինեն առարկողներ, որ եթե ծառա գրենք, ի՞նչպես բացատրենք ծառայի ձևի յ-ի գրությունը: Ինչպես որ բացատրում ենք Սառայի, Աննայի յ-ն, ասում է Աբեղյանը: Աղա բառը սկզբում ունեցել է յ, հետո դա ընկել է, բայց բառն աճելիս վերականգնվում է (աղայ>աղա>աղայի): Սովորողներին այս բացատրությունը պետք էլ չէ. նրանց պիտի սսել, որ բառամիջում ա, ո ձայնավորների և նրանց հաջորդող ձայնավորների մեջ լսվում և

գրվում է յ տառը (Կարոյի, ծառայի): Կարող են ասել, թե յ-ի անկումով հրամայական եղանակի բայը նույնանում է ըղձակա՞ն եղանակի բայի հետ: Բայց դա շփոթ չի ստեղծի: Նախ մեկը երկրորդ գեմքով է, մյուսը՝ Լրրորդ, և հետո գոյություն ունի հնչե-րանք, հրամայական եղանակի շեշտ: Շանթի «Հին աստվածներ»-ում հիշյալ դիրքում յ չի գրված և մենք չենք շփոթում: Ուրեմն առաջին շրջանում հցենք բառավերջի անձայն յ տառը:

Ի(ւ)-ն եղել է բաղաձայն ու, այդքանով էլ՝ ձայնավոր, բայց վ հնչյունին մոտիկ: Սակայն այժմ հայերենում վ-ն և լ-ն միևնույն շրթնատամնային շփական հնչյուններ են: Անգրագետները կասեն, թե երկու վ ունենք, մեկը՝ կոշտ (վ), մյուսը՝ փափուկ (ւ) և իբր թե վազել և աւազ. ծով և հաւ բառերում նույն վ-ն չէ: Մոռա-նալով, որ որոշ դիրքերում հնչյունների արտասանության մեջ նուրբ տարբերություններ կարող են լինել, բայց ոչ այն աստի-ճանի, որ փոխվի հնչյունի որակը, մի նոր հնչյուն գոյանա: Երկու գրական լեզուներում էլ լ-ն բաղաձայն վ է: Այդպես էլ ձայնավո-րին նախորդող դիրքում ու-ն հարձել է նախ լ, ապա՝ վ բաղա-ձայն: Հին զուարթ, նուէր, Աստուած բառերը նախ դարձել են զուարթ, նուէր, Աստուած, ապա՝ զվարթ, նվէր, Աստված: Գուցե կյի-նեն բարբառներ, ուր բաղաձայնական ու-ն վերածված կլինի լ-ի, բայց գրական հայերենում վ-ի է վերածվել: Մեր այսօրվա լեզ-վում ունենք մի բաղաձայն վ, որ մասամբ հին վ-ն է, մասամբ ծագել է լ-ից, մասամբ էլ՝ բաղաձայնական ու-ից:

Աբեղյանը քննադատում է հյունագրությունը: Աղայանը չպի-տի բաղաձայնական ու-ն փոխարինել ուով, որովհետև կար և կա որոշակի կանոն՝ վ հնչյունը բառասկզբում և ու-ից հետո արտա-հայտվում վ տառով, մյուս ձայնավորից առաջ եղած դիրքում՝ ու տառով: Աբեղյանն իր անձնական պորձն է վկայաբերում, որ ա-շակերտները հեշտությամբ էին վարժվում ձայնավորին նախորդող ու-ն վ կարդալուն, և հեշտ էին սովորում նրա ուղղագրությունը, նրանց օգնում էր այն հանգամանքը, որ լեզվի, ձվի արտասանվող լեզուի, ձուի գրությունները ծագում էին լեզու, ձու ձևերից, երե-խան գրելիս իր աչքի առաջ միշտ ունենում է այդ ուղիղ ձևերը՝ լեզու, ձու, կատու:

Եթե պետք է վահնչյուն ու-ն բաղաձայն տառով արտահայ-տել, ապա այդ տառը պիտի վ-ն լինել, ոչ թե լ-ն: Հին ու ձայնա-վորը փոխվել է վ-ի, ինքը՝ լ-ն էլ է փոխվել վ բաղաձայնի, միայն ու, իւ տառակապակցություններում է մնացել ձայնավոր: Սա Ղ. Աղայանը մինչև վերջ էլ չմտնեց: Հետևողական լինելու համար

ոչ միայն բաղաձայնական ու-ն, այլև ւ-ն պիտի փոխարինել Վ-ով: «Այս բանը ոչ միայն քարոզեց իմ բարեկամ Ստ. Մալխասյանցը, այլև դժբախտաբար սկսեց կիրառել, բայց թերի, քանի որ անփոփոխ թողեց ուտ, ուր. ոչ և նման գրությունները: Բայց սա էլ մնաց միայնակ»: Ուղղագրական փոփոխությունը ոչ միայն գիտական պիտի լինի, այլև ընդունելի բոլորի կողմից: Մալխասյանցի վեժնագրությամբ շատ բառեր էին փոխվում, Վ-ն իր տարածվածությամբ աչք էր ծակում, իսկ հյունագրությամբ քիչ բառեր էին փոխվում, դրա համար սա հեշտ էր տարածվում, ուստի Մալխասյանցի դեմ բողոքները շատ էին: Նա պիտի սկզբում բաղաձայնական ու-ն փոխարիներ Վ-ով, իսկ ւ-ն առաջին շրջանում պահեր, այդ փոփոխությունը թողնեք երկրորդ շրջանում:

Աղայանն, այնուամենայնիվ, հեշտացրեց ուղղագրությունը՝ Վ հնչյունի երեք տառի փոխարեն գրելով երկու տառ: Ու-ն մնաց սոսկ իբրև ձայնավոր: Աղայանից առաջ էլ տողադարձի ժամանակ, բանաստեղծություններում գրում էին ւ (զը-ւարթ, նը-ւէր), Աղայանն ուղղակի ընդհանրացրեց այդ եղածը: Ստեղծվեց հեշտ յուրացվող կանոն՝ ձայնավորից հետո Վ հնչյունն արտահայտվում էր ւ տառով, բացի ու-ի կազմում հանդես եկող ւ-ից: Հեշտ էր այս կանոնը, դրա շնորհիվ էլ տարածվեց, և մենք պիտի հաշտվեինք դրա հետ, և թե լավը չէինք կարող անել:

Սակայն հարց է առաջ գալիս, արդյո՞ք արևմտահայերենում էլ բաղաձայնական ու-ն Վ է դարձել: Ըստ երևույթին ոչ ամբողջովին: Նրանք կրավորականները Վ-ով են գրում, նրանց տողադարձից (նր-ւէր, զը-ւարթ) երևում է, որ այդ ու-ն Վ են արտասանում: Սակայն արևմտահայ գրողները պնդում են, որ իրենք բաղաձայնական ու-ն Վ չեն արտասանում: Եթե դա ճիշտ է, ուրեմն չպիտի փոխել ուղղագրությունը, պիտի պահել ավանդական գրությունը:

Այս հարցերը լուծելու համար պիտի կազմել մի հեղինակավոր մարմին: Հոգևոր իշխանությունը, հայ գրագետների ընկերությունները Թիֆլիսում և Պոլսի հայագետները միասին պիտի խորհրդածեն այս հարցի մասին: Մինչ ընդհանուր վճիռը, գրագետները չպիտի ըստ իրենց կարծիքի առաջնորդվեն, ավելի լավ է սխալ հիմունքով, բայց միասնական գրությունը, քան՝ ճիշտ, բայց ոչ միասնական: Ուղղագրական փոփոխությունը չպիտի իրարից բաժանի երկու գրական լիզոնները: Մինչև մասնագետների ընդհանուր որոշում կայացնելը միասնական ու պարտադիրը պիտի ավանդական ուղղագրությունը լինի:

Հանձնաժողովի վերը հիշատակված հարցացուցակին, որ կազմել էր Աբեղյանը, տրված մի քանի պատասխաններ, այնուամենայնիվ, հայտնի են: Դրանցից է Մեյեի պատասխանը համակով՝ ուղղված Մանուկ Աբեղյանին: Նամակը գրված է ֆրանսերեն 1913 թ. հոկտեմբերի 15-ին Փարիզից¹⁵, Մեյեն գրում է, որ եթե չկա որոշ ուղղագրություն պարտադրող մարմին, պարտադրելու ընդունակ հեղինակություն, ամենախելոք բանը ավանդական ուղղագրությամբ բավարարվելն է, որովհետև միջակ, բայց բոլորի կողմից ընդունված ուղղագրությունն ավելի լավ է, քան ուղղագրական անարխիան: Անշուշտ նպաստավոր կլինեն վերացնել է, օ տառերը, իսկ յ-ն գրել միայն հոգի արժեք ունենալու դեպքում: Սակայն անհրաժեշտ է նետել ավանդական սովորություններին: «Բաղաձայնից հետո և չպետք է գրել (ասուի), դա չափազանց հակառակ է ավանդությանը և հետևաբար տգեղ է, եթե ուղղենք, ասվիլ գրելաձևն է հարմար: Մի խոսքով բարեփոխման մեջ ես ավելի շատ վտանգ եմ տեսնում, քան օգտակարություն» (անդ, 121):

Մառի պատասխանը, որ դրված է արևելահայերեն, ավանդական ուղղագրությամբ (օգտագործում է՝ մոռացուած, դատապարտուած, լեզուի, փոխուել, թուով, լեզուագետ և այլ ձևեր), նույնպես մերժողական է¹⁶: Եթե նոր գրական լեզվի հիմունքը կազմող ռամկական լեզվի իրական հնչյունների համապատասխան պիտի փոխվի ուղղագրությունը, ասում է նա, այն ժամանակ ոչ թե 11, այլ 111 փոփոխություններով էլ գործը դուրս չի գա: Եթե պատմական ուղղագրությունը պիտի պահվի, այն ժամանակ ոչինչ չպիտի փոխվի, ընդհակառակն, ինչ որ փոխվել է, պիտի վերականգնվի: Իսկ եթե ո՛չ պատմական, ո՛չ էլ իրական հնչյունայինը պիտի ընդունվի, այլ դրանց միջինը, դա արդեն արվեստական մի նոր, թվով III ուղղագրությունը կլինի, մի տեսակ քաղաքագիտական կոմպրոմիս ուղղագրության մեջ: «Դա հարց չի երևում ինձ» (էջ 24): Մինչև անգամ շնչին փոփոխություններ ներմուծելու համար հարկավոր է իրական հասկացողություն ունենալ հայոց լեզուների (հայերենի և ռամկերեն երկու լեզուների) ծագման և զարգացման մասին: Հընդ-եվրոպական լեզվաբանությունը հսկայական քայլերով առաջ է գրնում, իսկ հայագիտությունը ամենալավ դեպքում տեղից չի շարժվում (էջ 25):

Նոր ուղղագրությանը դեմ են արտահայտվում և պաշտպանում են ավանդական ուղղագրությունը Սեդրակ Մանդինյանը, Մ. Շովրոյանը, Նիկ. աբեղա Տեր-Ավետիքյանը, բժշկապետ Բ. Նավասարդյանը, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և ուրիշներ: Հով-

հաննիսյանը գրում է. ««Յ» տառի տեղ «Հ» գրել առաջարկողները կամ բնիկ Հայաստանցի չեն, կամ իսպառ կորցրել են հայկական հնչյուն լսելու ընդունակությունը: Ես չեմ կարող հոյս, հունիս և այլն գրել, քանի որ ե չեմ արտասանում, լավ ականջ դրէք, տեսէք թէ ինչպէս են վաղարշապատցիք, աշտարակցիք, օշականցիք (գուցէ ոչ այժմեան ջահելները)՝ արտասանում յաջող, յառաջ և այլն: Ոչ հաջող և ոչ աջող, ոչ հառաջ և ոչ առաջ: Ես ֆրանսիական նրբութիւնը e, e', e տառերի միջեւ չեմ նկատում իմ հայկական ականջով, բայց իմ «հ» և «յ» չեմ շփոթի»¹⁷:

«Ես մերժում եմ ամբողջ ուղղագրութիւնը փոփոխութեանց խնդիր դարձնել, ոչ միայն անժամանակ է, այլև անհնարին,—ասում է Մանդինյանը:—Ամբողջ ուղղագրության փոփոխությունը կստեղծէ լատինական գրերի գործածութեան հարցը: Եթե շինացիք ու մահմեդականները այդ հարցը առաջ կքաշեն, հայերս էլ նորարարութեամբ ետ չենք մնա և այն ժամանակ ռեֆորմի հարց կդնենք» (ն. տ.):

«Հանդէս ամօրեա»-ի 1913 թ. № 12-ում լույս է տեսնում հ. Գ. Մենեվիշյանի «Ուղղագրութեան խնդիր կա՞ հայուն համար» հոդվածը: Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ արևմտահայերի համար ուղղագրության բարելավման խնդիր չկա: Մեր գավառացին անգամ գիտե՞ս ու՞ր փափուկ շփականը հնչել, ներքևի և վերևի շրթունքներն իրար մոտեցնելով, բայց չհպելով, իսկ վ-ով՝ խիստը, ներքևի շրթունքը վերին ատամնաշարին հպելով: Նա տարբերում է աւատ և քուրֆեվառ, առհալիւ և վիրֆ, բանաւոր և վոհմակ բառերի տարբեր արտասանությունը: Ռուսահայերից ոմանք գրում են՝ նաւ, թագաւոր, ոմանք էլ՝ զինւոր, Աստաժ, նւէր: Թող գրեն, բայց իրավունք տան մեզի՝ արևմտեան հայոցս, որ պարծենանք, թե «Մեր ուղղագրութիւնը կապւած է մեր անցեալի, մեր գրաբար հարուստ գրականութեան, մեր ժողովրդի հետ: Քանզի այդ կապը՝ կնշանակէ գործել պատմական մեծ սխալ»:

Դեմ արտահայտվելով է-ի մասին Աբեղյանի առաջարկած փոփոխությանը՝ Մենեվիշյանը նորից ներկայացնում է է-ի ազանդական ուղղագրության կանոնը: Դեմ է, որ ուղղագրական բարեփոխումների հանձնաժողովում լինի Աբեղյանը, քանի որ նա է առաջարկները կազմել: Վ-ագրության հեղինակին ուղղագրության մասնաժողովի մեջ մտցնելը, ասում է նա, նման է ամբարի մեջ պանիրը կատվի հսկողությանը հանձնել: Նրա կարծիքով՝ հանձնաժողովում պիտի լինեն՝ Աճառյան, Մաքսուդյան, Թիրեաքյան, Խաչատուրյան:

Թողնենք, որ Մեսրոպն ու Սահակը շարունակեն հրճվել իրենց դյուստով: Եթե ուղղագրությունը ուզում են հեշտացնել, որ ուսահայերը հեշտ սովորեն և շփոռնեն իրենց մայրենի լեզուն, ճիշտ ճանապարհ է: Ընդամենը հայերեն սիրել տալն է: «Սիրտս հայ պիտի զգա, միտքս հայ պիտի խորհի, լեզուս հայերէն պիտի խօսի»,— ավարտում է Մեննվիշյանը (էջ 736): Ուղղագրական բարեփոխություններին դեմ է եղել նաև արձակագիր Ալեքսանդր Շիրվանզադեն: Իր «Ինչ պետք է անել» հոդվածում¹⁸ գրում է. «Անելի գեղեցիկ, անելի քաղաքակրթական ուղղագրություն, քան այն, ինչ որ տուել է մեկ մեր հին գրականությունը, չէ կարող տալ այժմեան և ոչ մի ժողով, այն պարզ պատճառով, որ մենք կատարելապէս գիտականօրէն պատրաստված լեզուագէտներ չունենք: Չունենք նաև գոնէ հնչիւնների վերաբերմամբ նուրբ լսողություն ունցող մատենագիրներ, որոնց ճաշակին կարողանայինք հաւատալ: Բնենք միայն մեծ ազդերին նմանվելու հաւակնութիւն, որ այնչափ չաղբելի է»: Էջմիածնի ժողովը սիրողների (դիւտատներ) հավաք է: «Մի բան միայն կարող է անել էջմիածնի ժողովը, այն է՝ վերացնել մէջոնդից այդ «վ»-ի և «ւ»-ի խնդիրը, որ շափազանց ծաղրելի կը լինէր, եթէ չըլինէր այնքան վնասակար»: «Ես անձամբ «ու»-ի ջերմ կողմնակից եմ, թէև ինքս մինչև այժմ դժբախտաբար կանօնաւոր չեմ հետեւել նրա»։ Ըստ Շիրվանզադեի առանց այն էլ հայերենը ձայնավորների քիչ ունի, ուն էլ որ կրճատենք, ավելի կպակասի, իսկ ձայնավորը նվազանքով լինի և տալիս լեզվին: Վիպա»անը մոռանում է, որ Աբեղյանի խոսքը բաղաձայնական ու-ի մասին է, ոչ՝ ձայնավորական: Շիրվանզադեն պահանջում է ստեղծել հայոց լեզվի կայուն դասագիրք՝ կայուն ու միասնական ուղղագրությամբ, որը պիտի լինի ավանդականը: Ուսուցիչները գրական-գեղարվեստական սալոնում զանգատվել են, որ մի դասագիրքը գրված է ու-ով, մյուսը՝ լ-ով, երրորդը՝ վ-ով: Մի երեխայի ձեռքին լ-ով դասագիրքն է, մյուսին՝ ու-ով, որը շատ է խանգարում ուսուցմանը: Մեր ուղղագրությունը կապված է մեր անցյալի, մեր գրաբար հարուստ գրականութան, մեր ժողովրդի, վերջապես թուրքահայ գրականության հետ: «Տգեղ բան կը լինի,— ավարտում է իր ասելիքը վիպասանը,— Սահակի և Մեսրոպի տօնը կատարելու համար ժողովվել և նոյն Սահակի և Մեսրոպի շինած սքանչելի տաճարը քանդել»։

«Ուղղագրությունը գիտություն է,— գրում է Թումանյանը,— և նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով»: Պետք է գիտնական մարդկանցից կազմված մի կաճառ և երկար ժամանակ: Շատ ցանկալի է ուղղագրության միօրինակա-

նությունը: «Մշակ»-ի № 140-ից իմացվում է, որ էջմիածինը մտա-
դիր է ուղղագրական պարտադիր կանոններ հրատարակել, որով
ուղղագրությունը մնում է հինը, ավանդականը: Ոչ թե հոսման
արձակել, այլ ակադեմիական լրջությամբ որոշումներ կայացնել¹⁹:

Ուղղագրության բարեփոխման հարցը էջմիածնում անցկաց-
ված «ուղղագրության օր»-ով էլ վերջանում է, և 1913 թվականից
հետո էլ շարունակում է դործել ավանդական շրությունը, մինչև
1922 թվականը: Բերված կարծիքներից երևում է, որ ընդհանուր առ-
մամբ ավանդական գրության փոփոխությունը ցանկալի չէր հայ
առաջավոր մտավորականությանը: Հենց այն հանդամանքը, որ քիչ
տեղերից են հոբելյանական հանձնաժողովի հարցացուցակին սա-
տասխանում, եղած սլատասխաններն էլ բարեփոխման օգտին չեն,
որ հանձնաժողովը ըստ ամենայնի չի ուսումնասիրում ու քննում
այդ հարցը, իրար վրա են գցում, հանդիսավոր հիստին միայն մի
զեկուցում է լսվում, ելույթները, հարակից զեկուցումը չեն լսվում,
ցույց է տալիս, որ դա ցանկալի երևույթ չէր: Ինքը՝ կաթողիկոսը
դեմ էր բարեփոխմանը, ուստի անուշադրության մատնեց այդ
հարցը:

1922 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1921 թվականի հունվարին Հայաստանի լուսժողկոմ Աշ. Հով-
հաննիսյանի հրավերով Երևանում Աբեղյանը նորից զեկուցում է
կարդում մեր ուղղագրության բարեփոխության մասին: Ապա զե-
կուցումը լուսժողկոմը ներկայացնում է այդ նպատակով կազմված
հանձնաժողովին, որը և ընդունում է այն: Այդ զեկուցումը կոմիսա-
րը տպագրել տալով՝ ուղարկում է հայ լեզվի մշակներին ու լուսա-
վորության բնագավառի աշխատողներին, Աբեղյանի կարծիքով,
ցանկանալով լսել նրանց խոսքը: Բայց ոչ մի տեղից կարծիք չի
ստացվում²⁰, քանի որ այդ գրքույկի, որ դեռ ավանդական ուղղա-
գրությամբ էր գրված, առաջին էջում լուսժողկոմի կողմից ասված
էր. «Լուսաւորական նպատակի և կիրարկման միջոցների տեսակե-
տից ուղղագրութեան հարցը քաղաքական հարց է, և հայ լեզվի ուղ-
ղագրութեան ռեֆորմի խնդիրը Հայաստանի յեղափոխական իշխա-
նութեան հերթական խնդիրներից մինը: Մեր օրերին այդ խնդիրը
ֆնեւթեան չի դրվում սկզբունքի տեսակետից: Ռեֆորմի խնդիրը
կարոտ է միայն տեխնիկական մշակման (ընդգծումը մերն է—Ս.
Գ.): Անհրաժեշտ է նշել խնդրի լուծման ճանապարհները, ցույց տալ

ռեֆորմի գործնական եղանակները։ Այդ ուղղությամբ էր, որ կը կամենայինք դեռ լսել հայ լեզվի մշակների խոսքը»։ Ուրեմն ուղղագրության բարեփոխման հարցը սկզբունքորեն որոշված էր, և միայն տեխնիկական մշակման համար էր քննության առարկա դարձվում, ահա թե ինչու տեղերից ոչ մի խոսք չի լսվում։

Այս անգամ Աբեղյանն առաջարկում է նաև եա, եօ, իւ երկբարբառների և 1913 թվականին II աստիճանի համար նախատեսված բարեփոխումները, ինչպես և Մալխասյանցի վեժնագրությունն ամբողջովին։

1922 թվականի սկզբներին լուսժողովոմ Պ. Մակինցյանը կազմում է մի նոր հանձնաժողով, որի կազմում լինում է նաև Ստ. Մալխասյանցը։ Հանձնաժողովի նիստում Աբեղյանը, նկատի ունենալով մասնագետների քննադատությունը, առաջարկում է երկու աստիճանով անցկացնել բարեփոխումը։ Հանձնաժողովը իր կարծիքը ներկայացնում է լուսժողովին, սակայն վերջինս փոխանակ դա ներկայացնելու ժողովոմխորհին հաստատության, ներկայացնում է Աբեղյանի հիշյալ զեկուցման մեջ արված բոլոր առաջարկները, որը և հաստատվում է 1922 թ. մարտի 4-ին, առաջարկվում գործադրել²¹։ 1922 թ. Աբեղյանը հրատարակում է «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության» գրքույկը, որը բովանդակում է 1922 թ. մարտի 4-ի դեկրետը, արդեն նոր ուղղագրությամբ։ «Առաջնորդ»-ում ասված է, որ նոր ուղղագրության նպատակն է՝ ձայնավորների, յ կիսաձայնի և վ բաղաձայնի նկատմամբ վերացնել գրել-կարդալու և ուղղագրության ուսման դժվարությունները, որ ժամանակի ընթացքում մեր լեզվի բնական հնչյունափոխությամբ առաջացել են գրության մեջ։ Դրանով մեր գրությունն այդ մասում վերածվում է հնչյունական պարզ գրության՝ համապատասխան դառնալով արտասանությանը, և մեր այբբենարանը վերստանում է իր սկզբնական կատարելությունը։ Բարեփոխությունը հիմնվում է գրական-դպրոցական արտասանության վրա։ Ամեն մի հնչյուն (իմա՝ հընչույթ) միայն մեկ առանձին նշանագիր պիտի ունենա և ամեն մի տառ միայն մի հնչույթի նշանագիր պիտի լինի։ Զպիտի գրել ալն տառերը, որոնք այլևս չեն արտասանվում։ Եթե բառին նոր հնչյուն է ավելացել, պիտի գրության մեջ էլ ավելացնել։ Դեկրետով ընդունվում են հետևյալ բարեփոխումները.

1. Օ տառի փոխանակ ամեն դեպքում գրել ո (ակոս, աղոթք, ամոթ, արդյոք, արոր, գոտի, ամենորյա, ոթեան, բացոթյա, անորինակ, ոսկեզոծ, զբոսանք, դրոշ, ծանոթ, ծղոտ, հզոր, նոսր. շո-

շափել, ոգնել, որինակ, ոգոստոս, ոգուտ, որիորդ, որհնել, արբել, տնորեն, Մարո, Մկո, Կարո, Կառնո, Ոլիմպոս, ողիսական, Ողես-սա, պրոֆեսոր, որգան, Ոկտավիանոս և այլն): Ո տառը կոչել օ, ոչ թե վօ:

2. Է տառի փոխանակ ամեն դեպքում՝ ե. աղետ, աղվես, ամեն, անեծք, անորեն, ապավեն, ապաքեն, առեջք, գեթ, տգետ, ե, եյակ, գենք, եռքան, թեպետ, լեգեոն, մեկ, մեջ, հանդեպ, հանդես, հոգեառ, հրավեր, շեզոք, երբեք, միջորեյական, քեյական, անորեն, կեցցե, գուցե, թե, ըոպե, բազե, մարգարեյական, թեյական, գրեյի. գրեյիր, կը բերե, կը տանե, կանաչեղեն, հայերեն, արդեն, Միքայել, Զավեն, Գուրգեն, Դանիել, Ռաֆայել, Ներսես, Սիմեոն, Թաղեոս: Մատթեոս: Ե տառի անունն է է և ոչ թե յե: Է-ն մնում է միայն իբրև VII-ի նշան: Բայց սա չի կատարվում, քանի որ Է-ն հանվում է այբուբենից:

3. Երբ լ-ն արտասանվում է վ, գրել վ տառը (ավագ, թիվ, սեվ), «և» նշանագիրը թողնել իբրև սղագրության նշան, բայց տողադարձի ժամանակ գրել եվ (տե-վել—տերե-վի):

4. Բաղաձայնական ու տառի փոխարեն գրել վ (աստված, զվարթ, նվեր, գործվածք, թշվառ, նվաստ, նվագ, գրվածք, զինվոր, լեզվի, սպանվել, կատվի): Երբ ու-ն պահում է իր պարզ հնչյունը, պիտի տառն էլ պահել (տիրացուական վերարկուի, յերկուական, բուրժուա, կաուրա, կուիզա): Բաղաձայն վ-ն միշտ վ տառով, իսկ ձայնավոր ու-ն ու տառով են արտահայտվում, լ-ն մնում է սոսկ իբրև ու-ի բաղադրիչ: Այդ պատճառով ապագայում կարելի է ու հնչյունն արտահայտել և տառով: Ինչպես որ հնում գրում էին անկին, սին, միութին, այժմ էլ կարելի է գրել՝ անկյն, սյն, միությն, նւյն, իսկ ապագայում նաև՝ ջւր, տւն, կերակւր, տեսւմ, լւմ, լեզւ, լւ, գնալւ, մեծությւն և այլն:

Մաթնասյանցն առաջարկում էր այս լ-ն գրել միայն օտարազգի Ա-ի դիմաց (Հագո):

5. Ոյ տառակապակցության ո-ի փոխարեն գրել ու, երբ ոյ-ը ու է արտասանվում (լույս, բույս, կույս, հույս, սույն, նույն, միևնույն): Ոյ կապակցությունը թողնել միայն ոյ հնչյունի համար (խոյ): Այն բառերում, ուր ոյ-ը ու է կարդացվում, գրել ու տառով (զգուշ, մեղուշ, անուշ, ուժ, աշխուժ, ճկութ, բուն, բութ, սառույց, պուտ, շուտ, խուլ և այլն):

6. Բառասկզբի հազագային յ-ի փոխարեն գրել ճ տառը (հա-

գենալ, համանուն, հաղթ, հակինթ, հաճախ, համառ, համբույր, հանկարծ, հիշել, հուշել):

3 տառը կոչել յ (յ, հ), ոչ թե հի: Կարելի է երբեմն առանց յ-ի գրել՝ ախճապակ, ախուռն, ամպար, ապավել, աջող, արգո, իրավի, ուշիկ, իստակ, ունք, Ակոբ, Ովանես, Ոսեփ, Ոհան, առաջ, առաջաքան և այլն: Պահել յետև, յետք, յետինք, յետ դառնալ, յետ մնալ, յետ քերել ձևերը և արտասանել յետ ձևով, ոչ՝ հետ:

7. Ես, եօ, իւ երկբարբառները գրել յա, յո, յու տառակապակցություններով (արյուն, մատյան, պատյան, սենյակ, պաշտոնյա, քրիստոնյա, Գրիգորյան, անկյուն, միություն, արդյոք, յոթ, հյուպ, գեփուտ, յուղ, գյուղ և այլն): Հունարենից առնված բազմաթիվ բառերում հունական իպսիլոնի դիմաց սկզբում գրում էին ւ տառը (Եգիպտոս), հետո՝ իւն (Եգիպտոս), ավելի ուշ՝ միայն ի: Այժմ էլ գործածենք միայն ի-ն (գիմնազիոն, դինամիտ, լաբիրինթոս, Եգիպտոս, դինաստիա, միստերիա, լիկուրգոս, Կիրակոս և այլն: Իւ-ով գրվող մի քանի բառերում պահպանել իւ հնչյունը՝ այն արտահայտելով յու տառակապակցությամբ (Բյուզանդիա, Կյուրոս, Պյութագոր): Մի շարք օտար անուններ, թեև արտասանում ենք յ-ով (Գերմանյա, Ֆրանսյա, Անգլյա, Ասյա, միլյոն, միլիցյա), պիտի գրել ի-ով՝ Գերմանիա, Անգլիա, Ասիա, միլիոն, միլիցիա: Առանց յ տառի գրել նաև՝ ձիավոր, միանալ, կղզիաբնակ, տիեզերք, միություն, միայն, որիորդ և նման բառերը: Այսինքն ձայնավորին նախորդող ի-ից հետո յ չգրել:

8. Դուրս ձգել բառավերջի անձայն յ տառը (ծառա, քահանա, սատանա, վրա, արքա, պահածո, ներքո, հավաքածո, ձուլածո):

9. Ձայնավորին նախորդող ե տառից հետո լսվող յ-ն գրել (րոպեյական, միջորեյական, քրեյական, գործունեյություն, պաշտոնեյություն, էյի, էյիր, էյինք, գրեյի, գրեյիր, գրեյինք, գրեյիք, րոպեյի և այլն): Եթե ե-ից հետո յ չի լսվում բնականաբար չպիտի գրել (թարեատյաց, բարեախորժ, հոգեառ, քնեած, լեգեոն, ովկեան, իդեա, Թեոդոր, Թադեոս, Մատթեոս):

10. Բառասկզբի ո տառից առաջ լսվող անկայուն վ հնչյունը գրել վ տառով (վոգի, վոգորել, վոլորել, վոզնի, վոխ, վոհ, վոդր, վոսկոր, վոդկույզ, վոդնաշար, վոշ, վոճ, վոմն, վոդոդել, վոսկի, վոռոգել և այլն): Սրանց մի մասը առանց վ-ի էլ կարող է արտասանվել (ողորմի, ործկալ, որոտալ):

11. Բառասկզբի ե տառից առաջ լսվող յ-ն գրել (յեզր, յերևալ, յերեք, յեղբայր, յերջանիկ, յերկրորդ, յերրորդ, յերազ, յերես, յեն-

թակա և այլն)։ Բառամիջում այդ անկայուն վ-ն և յ-ն չեն գրվում (ծնկոսկր, վոչոք, անոխակալ, աներես, ապերջանիկ)։

12. Եւմ բայի ձևերը նախորդ բառի ձայնավորին հաջորդելիս յ են ստանում (գնալու յեմ, գյաղացի յեմ, գալու յեմ, տալու յե, ձի յե), իսկ բաղաձայնին հաջորդելիս չեն ստանում (ես եմ, լավ եմ, գործ ե)։ Բառասկզբի անկայուն յ-ն ու վ-ն չեն գրվում. ա) բարբառային բառերում, ուր ե-ն ու ու-ն հնչում են է, օ (երինջ, ոճորք, ոքմին, ոչով, երնեկ), բ) չ, կ մասնիկներից հետո (կողջունեմ, չեկավ, չեղավ, կորոշվի), գ) երբ ե-ով ու ու-ով սկսվող բառը նախորդ բառին կպած է արտասանվում, օրինակ՝ գարունը եկավ, աղջիկը վողբում է—բայց՝ գարունն եկավ, լարերըն ողբացին, իբրեւ՝ գարուն նեկավ, լարեր նողբացին արտասանություն։

Հրահանգված էր ժողկոմխորհի ղեկրեսը դպրոցներում կիրառել 1922—1923 ուս. տարվա սկզբից, որովհետեւ պիտի դասագրքերը փոխվեին, լրագրության մեջ՝ 1922 թ. ապրիլի մեկից, պաշտոնական գրագրություններում՝ մայիսի մեկից։ Ըստ որում, լրագրերում, գրականության մեջ և պաշտոնական գրագրություններում ժամանակավորապես թույլատրվում էր՝ բառասկզբում պահել է, օ և ե տառերը (երազ, Եդեսն, օր, օգուտ, էակ, էություն), եւ, եօ, իւ երկբարբառային տառակապակցությունները (արդեոք, բրդեա, սին)։ 1922 թ. հոկտեմբերի 2-ից լուսժողկոմի նոր հրահանգով սկսվում է նոր ուղղագրության ամբողջական կիրառությունը։ Այբբենարանից հանվում են է և օ տառերը։

«Նորհրդային Հայաստան» օրաթերթում տպագրվում են հոդվածներ, որոնք ողջունում են նոր ուղղագրությունը՝ կղերամիտ ու պահպանողական համարելով ավանդական ուղղագրության կողմնակիցներին։ Թերթի 1922 թ. ապրիլի 2-ի համարում «Նոր ուղղագրության պատմական ակտը» հոդվածում հեղինակը (Մուշեղ ստորագրությամբ), զրվատելով Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Ս. Թառայանի («Ընկեր») ուղղագրական սկզբունքները, ողջունում է կառավարության որոշումը, պահանջում, որ ու տառի փոխարեն էլ մի նոր տառ հնարվի, որպեսզի երկու տառով չգրվի։ Նոր ուղղագրությունը, ասված է հոդվածի վերջում, աղմուկ կառաջացնի փախստական էքսմինիսարների, ազգային ջոջերի, կղերական վեղարավորների և տիրացու վարժապետների հակահեղափոխական խախտամիտների շրջանում, բայց մենք պիտի տարածենք այդ նոր ուղղագրությունը։ Վ. Հացունին «Բազմավէպ»-ի 1925 թ. № 2-ում տպագրված իր հոդվածում քննադատում է այդ բարեփոխումը՝ այն համարելով ծայրահեղ ու վնասակար։

Ավանդական ուղղագրութեամբ գրելը պահպանողականութիւնն էին համարում դեռ 90-ական թվականներէից (Ղ. Աղայան, Պ. Մալխասյանց, «Մշակ», «Ընկեր» և այլն), որն իհարկէ ծայրահեղութիւնն էր: Առաջադիմութիւնը նուէր կամ նվեր գրելու մեջ չէ: Այսօր մենք գրեթէ վերականգնել ենք է-ի և օ-ի գրութիւնը, որ երբեք չի նշանակում, թէ հետադիմել ենք կամ պահպանողական քայլ կատարել: Պրոլետկուլտի այդ շրջանում, երբ Ռուսաստանում մերժում էին Պոլկինին, Հայաստանում էլ մերժողական վերաբերմունք էր արտահայտվում մեր անցյալի մշակույթի նկատմամբ, նոր ուղղագրութեան առթիվ գրված հողվածներում Մաշտոցին համարում են տիրացու, կղերամիտ, վանական, որի ուղղագրութիւնն իբր անհարիր է մեր նոր կյանքին ու հասարակական-քաղաքական սկզբունքներին:

Այս նոր ուղղագրութիւնը չէին ընդունում, սակայն, առաջատար մտավորականները՝ Շիրվանշահե, Հովհ. Հովհաննիսյան, Թումանյան, Իսահակյան, Աղոնց, Մեյն, Մառ, Աճառյան և այլք, չընդունեց ողջ արեւմտահայութիւնը, պարսկահայութիւնը:

1922 թ. մայիսի 20-ին Հայաստանի լուսժողով Մակինցյանը Վրաստանի լուսժողովին հատուկ դրութեամբ հայտնում է ուղղագրութեան փոփոխութեան մասին և առաջարկում Վրաստանի հայկական դպրոցներում ու մամուլում ընդունել ի գիտութիւն: Այդ գրութեանը, սակայն, Վրաստանի լուսժողովը պատասխանում է. թէ ընդառաջելով հայ շատ գրականագետների, առաջատար անձանց խնդրանքին, որոնք նոր ուղղագրութիւնը համարում են արատավոր, Վրաստանի լուսժողովը հնարավոր է համարում ժամանակավորապէս թողնել հին ուղղագրութիւնը, չպարտադրել, որ նոր ուղղագրութեամբ գրեն, մինչև որ հրավիրվի հայ մտավորականների ընդհանած խորհրդակցութիւն այդ հարցի վերաբերյալ և քննութեան արդիւնքը հայտնվի Հայաստանի կառավարութեանը²²:

Արխիվում պահպանվում է Մակինցյանի պատասխանը Վրաստանի լուսժողովին ձեռագիր վիճակում: Մակինցյանը գրում է, թէ բարեփոխման նախագիծը մի տարուց ավելի է, ինչ ուղարկված է քննութեան՝ նախորդ լուսժողով Ա. Հովհաննիսյանի կողմից: Այն անձամբ Ա. Հովհաննիսյանն է հանձնել հայ գրական ընկերութեան նախագահ Հովհաննես Թումանյանին: Երևանում այդ հարցը մշակել է մասնագետների հատուկ հանձնաժողովը, որի եզրակացութիւնը ներկայացվել է ժողովմխորհ և հաստատվել: Միակ բացասական արտահայտվողը Պոլսի ներկայացուցիչ Օտյանն է եղել, Վենետիկից, Վիեննայից պատասխան չի ստացվել: Հայաստանում գրող-

ների միությունը, գիտական հիմնարկները, համալսարանն արդեն ընդունել են նոր ուղղագրությունը, բոլոր դասագրքերը նոր ուսումնական տարում նորով են տպագրվելու։ Հարմար բան չէ, որ Հայաստանի կառավարության որոշումից հետո Վրաստանի մտավորականությունը քննության առարկա դարձնի այդ հարցը²³։ Այստեղ երկու հարցում Մակինցյանը շեղվել է իրականությունից։ 1. Նախագիծը մեկ տարի առաջ ուղարկվել է ամենուրեք՝ Վիեննա, Վենետիկ, Պոլիս, Թիֆլիս և այլն, ոչ սկզբունքորեն քննության ենթարկելու, բանի որ նախաբանում լուսժողովի կողմից գրված է. «Մեր օրերին այդ խնդիրը քննության չի դրվում սկզբունքի տեսակետից։ Ռեֆորմի խնդիրը կարոտ է միայն տեխնիկական մշակման» այս ուղղությամբ է լուսժողովատը կամենում լսել «հայ լեզվի մշակների խոսքը»։ Նշանակում է բարեփոխման հարցը սկզբունքորեն վճռված էր և քննության ենթակա չէր։ 2) Մակինցյանը գրում է, թե բարեփոխման հարցը հատուկ «կոմպետենտ անձերի» հանձնաժողովում քննարկվել է լուսժողովատում, ապա արդյունքը զեկուցվել է Ժողովմխորհին, իսկ Մ. Աբեղյանը՝ «Ուղղադրության ունֆորմը» գրքի առաջին էջում գրում է. «Լուս. ժող. կոմ. ընկեր Պ. Մակինցյանը վոչ թե հանձնաժողովի կարծիքը, այլ իմ զեկուցման մեջ արված բոլոր առաջարկությունները ներկայացրեց Ժող. Կոմիսարների խորհրդին, վոր և 1922 թ. մարտի 4-ին հաստատեց այն և հրամայեց գործադրել»։ Հայաստանի պետական արխիվում պահպանվում է ՀՍՍՀ Ժողկոմխորհի 1922 թ. մարտի 4-ի նիստի օրագիրը (№ 16)։ Նիստին ներկա են եղել նախագահ՝ Ալ. Մյասնիկյանց, անդամներ՝ Մակինցյան, Շահվերդյան, Ավիս, Մռավյան, Մարգարյան, Երզնկյան, Ղարազյոզյան, Իվանյան, Կոստանյան, քարտուղար Դր. Տեր-Սիմոնյան։ Օրագրում գրված է. «Որոշեցին—սկզբունքով ընդունել լուսժողովի ներկայացրած դեկրետը նոր ուղագրություն մուծելու մասին։ Առաջարկել լուսժողովին մշակել հրահանգներ հաջորդականության կարգի և այդ դեկրետը կյանքի մեջ կիրառելու մասին»²⁴։ Ուրեմն Ժողկոմխորհը հաստատել է ոչ թե հանձնաժողովի որոշումը, որ չի ներկայացրել Մակինցյանը, այլ Աբեղյանի առաջարկները, ինչպես գրում է ինքը՝ Աբեղյանը։ Մեզ հայտնի չէ, թե ինչ է եղել հանձնաժողովի վճիռը, արխիվում չկարողացանք այդ որոշումը և առհասարակ հանձնաժողովի մասին որևէ բան գտնել։ Բայց Աբեղյանի սույն գրքում գրածից գոնե մի բան պարզ է, որ 1921 թ. հրատարակված առաջարկները հանձնաժողովը կա՛մ չի ընդունել, կա՛մ մասամբ է ընդունել, ըստ երևույթին 1913 թ. ա-

ռաջարկած առաջին աստիճանի փոփոխությունները, և նշել է, որ արտասահմանյան հայությունը չի ընդունի այս նոր ուղղագրությունը:

Արխիվում պահպանվում է նաև Հայաստանի լուսժողովոյի գրությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնի քարտուղարությանը, ուր գրված է, թե նոր ուղղագրության մասին հրապարակված ղեկրեսը ընդունված և հաստատված է ժողովոյ-խորհի կողմից 1922 թ. մարտի 4-ին, և անմիջապես հանձնարարված է ի գործադրություն որոշ սահմանափակումներով, որոնք նշված էին լուսժողովոյի նույն թվի մարտի 12-ի հրահանգում: 1922 թ. հոկտեմբերի 2-ին հրապարակված հրամանով լուսժողովոյի կողմից այդ հրահանգը վերացվեց և նույն օրվանից պարտադիր հայտարարվեց «նոր ուղղագրության» կանոնների ամբողջական կիրառությունը: Վրաստանում նոր ուղղագրությունը պարտադիր է հայտարարված Վրաստանի լուսժողովոյի կողմից, հայտարարության ժամանակը հայտնի չէ: Այս գրության տակ գրված է «Լուսժողովոյ, 3/IV 1923 թ.»²⁵:

Հայաստանի պետական արխիվում պահպանվում է Հովհաննես Թումանյանի 1922 թ. մայիսի 17-ի նամակը հասցեագրված Հայաստանի լուսժողովոյին: «Ես, որպէս հայ գրող և հայ գրողների Միութեան նախագահը՝ գալիս եմ յայտնելու իմ դարմանքը և բողոքելու էն վարմունքի դէմ, որ ունեցել է Հայաստանի լուսժողովոյը էս կարևոր խնդրում: Պ. Մ. Աբեղյանը մի առաջարկ է արել ու դրել հրապարակ: Շատ լաւ: Բայց Հայաստանի լուսժողովոյը որտեղից է իմացել, թէ և պ. Մ. Աբեղյանը և ինքը, լուսժողովոյն էլ նրա հետ միասին անսխալական են, որ առանց քննութեան ենթարկելու առաջարկը, հրամանագրում է ընդունել և միայն դրանով գրել ու տպագրել: Պ. Աբեղյանի առաջարկը ընդունելի է, թե չէ, դա դեռ քննելիք խնդիր է. երբ դա քննելիք խնդիր է, հետևաբար լուսժողովոյի հրամանը անընդունելի է: Եւ եթէ էսպէս է, ապա նրան, լուսժողովոյին մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր կարողադրությունը, խնդիրը համարել բաց և դնել քննութեան»²⁶: Այս նամակի վրա Մակինցյանը մակագրել է՝ «Կցել գործերին» և միայն այդքանը: Ձեռագրի ուղղագրությունից էլ է երևում, որ Թումանյանը նոր ուղղագրությունը չի ընդունում:

Ավետիք Իսահակյանը Մարտիրոս Սարյանին 1924 թ. նոյեմբերի 12-ին Վենետիկից գրած նամակում Հայաստանի մասին դրում է. «Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թեր-

թերը կարդում եմ), միայն մի բան է զեչ—ուղղագրությունը, աշխատեցեք փոխել»²⁷:

Եվ այսպես, թեև պետական օրենքով հին ուղղագրությունը փոխվում է, բայց դժգոհությունները չեն դադարում: Մամուլում շարունակում են տպագրվել քննադատական հոդվածներ թե՛ Խորհրդային Միության սահմաններում և թե՛ նրա սահմաններից դուրս: Հին մտավորականությունը չի հաշտվում նոր ուղղագրության հետ: Նույնիսկ Ալ. Մյասնիկյանը, որի նախագահությամբ է ժողովում Խորհրդը որոշում ընդունել նոր ուղղագրությանն անցնելու մասին, 1924 թ. դեկտեմբերի 20-ին Ռիֆլիսից Սերիկ Դավթյանին դրած նամակում ասում է. «Ներեցեք պահպանողականությանս. մինչև այսօր, ի ցավ, չեմ սովորել կարգին գրել նոր ուղղագրությամբ»²⁸:

1924 թ. «Մարտակոչ»-ում (V 10—11) լույս է տեսնում Ստ. Մալխասյանցի «Լեզվային հարցեր» հոդվածը, ուր նա քննադատում է «Առաջնորդ»-ի կանոնները: Մեղադրում է, որ Աբեղյանը այբուբենից դուրս է գցում է և օ տառերը: Մալխասյանցն ընդունում է երրորդ և չորրորդ առաջարկությունը (վեվագրություն), հինգերորդը (ւյ>ույ՝ լույս>լույս), ութերորդը (բառավերջի անձայն յ-ն գցել): Առաջին և երկրորդ առաջարկությունները, օ և է տառերի մասին, մասամբ է ընդունում: Կարելի է բառամիջի է-ն և օ-ն հանել, գրել է և ո (հանդես, ակոս): Բայց նպատակահարմար չէ բառասկզբի է-ն ու օ-ն հանել: Դա ստեղծում է նոր դժվարություն, երկարացնում է գրությունը, առաջ է բերում գրության անկայուն ձևեր (վոտ, բայց՝ անոտ, յեզր, բայց՝ ծովեզր), դանազան բացառություններով: Ըստ Մալխասյանցի՝ է-ն պահել նաև բառամիջում, ձայնավորից հետո (մարգարէի, մարգարէութիւն): Աբեղյանն առաջարկում է բարբառային ձևերը ու-ով գրել՝ ոլորան, ոքմին: Իսկ գրողը, ասում է Մալխասյանցը, ի՞նչ իմանա, թե դա բարբառային ձև է, թե՛ գրական: Բացառության մեջ ասված է, թե՛ ստանց վ-ի գրել, երբ ցանկանում ենք բառը ժողովրդական ձևով աշտասանել: Պատկերացնո՞ւմ եք՝ ի՞նչ կամայականություն կառաջանա, ասում է Մալխասյանցը: Ըստ «Առաջնորդ»-ի՝ բառասկզբի անկայուն վ-ն ընկնում է, երբ ու-ով սկսվող բառը սերտ կերպով միանում է նախորդ բառին (փայլովն ողողված), որոշ շարքային գրողի համար շատ դժվար է: Առաջարկված է գրել՝ կողջունենք, շողջունեց: Արդյո՞ք չեն գրի՝ կը վողջունեն, չը վողջունեց: Ուրեմն 10-րդ կետը բարդացնում է գրությունը: Այս նոր ուղղագրությամբ գրությունը 2—3 % -ով ավելացել է, փոխանակ պակասելու: Աբեղյանը ձգտել է

ո—օ նմանագրութիւնից բխող դժվարութիւնից ազատել մեզ. նրապատակը լավ է, բայց միջոցը սխալ է ու ձախող: Այս ձևով «Առաջնորդ»-ում 6 բացառութիւն է նշված նաև ե—է տառերի ուղղադրութեան համար:

«Առաջնորդ»-ի վեցերորդ առաջարկութեամբ բառասկզբի յ-ն փոխվում է հ տառի կամ դուրս է գցվում: Սա նշանակում է յոն և հոնք բառերի յ-ն ու հ-ն իրարից շզանազանել, մի բան, որ անում է ժողովուրդը: Սա արվեստական, սխալ ուղղագրութիւն է: Այս առաջարկի կապակցութեամբ արված երեք բացառութիւնները (հախճապակյա—խաճապակյա, հուշիկ—ուշիկ, ետև, յետք) կամայականութեան դուռ են բաց անում: Սխալ է գրել հոտնկայս, հոգոտ, հանպատրաստից, համեմայն դեպս, հանուն: Սրանք մթագնում են բառի կազմութիւնը: Մանավանդ որ կլինեն մարդիկ, որ բառասկզբի յ-ն հ չեն արտասանի: Յ-ով սկսվող 100 բառից 13-ը առաջարկված է գրել նաև առանց յ-ի, 5-ը՝ յ-ով, մնացած 80-ից 30-ը նույնպես կարելի է առանց յ-ի գրել՝ ակինթ, աճախ, ամոյր, անդիմանել, անդուգն, անկարծ, անձնել, աջորդ, արձակել, ունիս, ուլիս, ուշարար և այլն: Մնացած 50 բառն էլ պիտի սովորեցնել, որ յ-ով արտասանեն, ոչ թե հ-ով:

Անդրադառնալով եա>յա, իւ>յու փոփոխութեանը, Մալխասյանցը գրում է, թե մեր լեզվում յա, յու, յո երկրարբառներ չկան: Ի տանէ ձևի նման յազգէ-ն էլ կարդացվում է իազգէ, յառաջ-ը՝ իառաջ, ոչ՝ եառաջ, եազգէ: Համեմատում է ռուսերենի հետ՝ աշ=ащ (բալ—край). ոյ=ой (խոլ—мои), ու=уи (լուս—помпуйи), իսկ չբոված ձևով կլինի եա=я (եհանք—пятъ), եո=ё (եոթն—ёлка), իւ=ю (իւր—юг), ոչ թե՛ կլանք, յոթն, հյուդ, ռուսերեն ѣа, ѣо, ѣу—пять, менѣа, ѣолка, ѣуг և այլն: Յ-ն կիսաձայն է (ձայնավորական բաղաձայն), նախընթաց ձայնավորին միանալով կազմում է երկբարբառ, իսկ նախընթաց բաղաձայնին չի կարող միանալ: Եթե բաղաձայնին է հաջորդում, ապա նրանց միջև ը է լսվում, ինչպես արկղդ, այժմ, ակըն բառերում: Ուստի փնջակ, աղղոք, սյուն գրութիւնները հայերենում կարդացվում են յ-ի կիսաձայն հնչյունը պահպանելու դեպքում՝ սննրյակ, արղըրոք, սըյուն, Յարութրյունըյան: Կան աշ, ոշ, ու յ երկբարբառներ: Երկբարբառների յա, յո, յու գրութիւնը դժվարանում է նաև նշված երեք բացառութիւններով (Կիրոս, Անգրիա, ձիավոր և այլն): Ոչ մի առաջարկութիւն այնքան անպետք, սխալ, աչք ծակող չէ, որքան եա>յա, իւ>յու առաջարկութիւնը: Իններորդը վերադարձ է դեպի հինը: Այժմ շատերն են

րոպեական, գրեթե բառերն առանց յ-ի արտասանում: Գնալու յեմ, բայց՝ գնացել եմ գրությունները սխալների առիթ են տալիս:

Աբեղյանի ներկայացրած նոր ուղղագրությունը, բացառությամբ III, IV, V, VIII և մասամբ էլ I, II կետերի, ավելի բարդ, դժվար է, քան ավանդականը, եզրակացնում է Մալխասյանցը: Վերջում հայտնում է, որ ինքը կողմ է ուղղագրության բարեփոխմանը և ցանկանում է, որ այն զերծ լինի նշված թերություններից:

Մալխասյանցի այդ հոգվածին Աբեղյանը պատասխանում է 112 էջանոց մի գրքով՝ «Ուղղագրության ռեֆորմը» խորագրով, լույս տեսած 1925 թվականին: Համառոտ ներկայացնենք այդ պատասխանը: Յա, յու, յո գրությունները հին սերնդի աչքին են անճոռնի երևում, իսկ ուղղագրության բարեփոխությունը նոր սերնդի համար է և ոչ՝ հին: Աչքին անսովոր լինելը ժամանակավոր երևույթ է, դա դժվար են ընդունում, բայց շուտ են վարժվում: Բառի երկար լինելը, թուղթ ու թանաքի, ժամանակի տնտեսումը կասկածի ուղղագրության բարեփոխման հետ, որ հենվում է հրնչյունային գրության վրա: Երբ Աղայանը Վ-ի փոխարեն -ն էր ընդունում վերջինիս կարճության, փոքրության պատճառով, ինքը՝ Մալխասյանցն էր քննադատում նրան, թե գրության տառածեղ նշանակություն չունի: Բառերի երկարելն ու կարճանալը, ասում է Աբեղյանը, մեր ձեռքին չէ, լեզվական օրենքով է լինում դա, մենք ինչ անենք, որ ոտ-ը (ot) դարձել է՝ վոտ (vot): Քանի որ մեր կիսաձայն յ-ն արտահայտվում է երեք նշանագրով՝ ե (սենեակ), ի (հարիր), յ (այո), դրանից էլ բխում են զեռ հնից եկող սխալներ. իւ-ի փոխարեն պատահում են եու-ն, իու-ն (եուղ, արեուն, հարեուր, հարիուր, ծառաեութիւն, միուս, կաեուն), եա-ի փոխարեն իա-ն ծառաիական, նաիած, սենիակ, արդիոք, նակ՝ գյուղ, գյուղացի: Գիտնականները գտնում են, որ հայերեն յ-ն բաղաձայնական ի է: Ըստ Հայկազյան բառարանի յ տառը երկու ձայն ունի, բառասկզբում ճ է, բառամիջում ե և ի տառերի հրնչումն ունի, մի քանի բառերի վերջում հնչվում է որպես թերատ ե (խոյ, հայ): Մեյեն, Հյուբշմանը, Աճառյանը յ-ն համարում են բաղաձայնական ի, ձայնավորների միջև նա կիսաձայն է: Մենք հիմա սենեակ, արիւն, եօթն բառերը առաջիկա նման seneak, arjun, eothon չենք արտասանում, այլ senyak, aryun, yothon, սենյակ, արյուն, յոթն, և որովհետև ընդունում ենք մի հնչյունին մի գիր սկզբունքը, պիտի գրենք սենյակ, արյուն, յոթ: Սխալ է Մալխասյանցը, թե մենք արտասանում ենք սենըյակ, արըյուն: Անկախ նրանից, թե իւ, եա, եօ-ն երկբարբառ են թե ոչ, այժմ

արտասանվում են յա, յու, յո, այդպես էլ պիտի գրել: Մալխաս-
յանցը կամայականորեն կտրում է բառասկզբի յ-ի գլուխը և գր-
ւում՝ աճախ, անկարծ, ակինթ, այդ նույն հաջողությամբ նա կա-
րող է բառասկզբի հ-ի գլուխն էլ կտրել և գրել աճար, ավատաւ:
ամբարձում: Ստուգաբանական դրությունը միշտ հակառակ է հըն-
չյունականին: Եթե Մալխասյանցը մտածում է, թե յոտնկայս-ը
հոտնկայս գրելով կկորցնենք կազմությունը, այդ դեպքում ինչու
է գրում ըմբոնել, ըմբերանել, ընկնել, սփռել և այլն, չէ՞ որ այդ
գրություններում էլ մթազնած են ընդբերանել, ընդկնել, գփռել,
ընդբոնել ձևերը:

Աբեղյանը պահանջում է գրել՝ չորոնել, կորոնի, ծովեզր,
նրբերանգ՝ ելնելով հնչական գրությունից: Բառասկզբում այդ
բառերի ու-ից առաջ վ է լսվում, ե-ից առաջ՝ յ, ուստի գրենք վ
(վորոնել), յն (յերազ), իսկ բառամիջում չի լսվում, չգրենք: Եթե
բառասկզբում օ—է-ն պահենք, ապա դրանք կմտնեն և բառամեջ
և օր, օգնական, էի, էջ բառերի օրինակով կգրեն նաև՝ բանվօր,
սովօրէէ, եկէղէցի և այլն: Եթե թույլ տանք գրել Վոսփոր, վոհ-
մակ, կգրեն նաև՝ վոդորկ, վորդի: Եթե բառավերջում թույլ տանք
գրել օ, կգրեն նաև՝ Մարօ, Կարօ: Սրանք սխալների դուռ են բաց
անում: Վերջում Աբեղյանն ավելացնում է, որ այս փոփոխություն-
ներով չի ավարտվում ուղղագրության բարեփոխումը:

Այսպիսով, Աբեղյանը ձայնավորների, երկբարբառների, վ
բաղաձայնի գրության մեջ մի կողմ թողնելով ավանդական ու-
ստուգաբանականը՝ հետևողականորեն զործադրում է մի հնչյու-
նին մի գիր, յուրաքանչյուր գիր մի հնչյունի համար սկզբունքը:
Բոլոր այն դեպքերում, երբ ծանոթության կարգով նա նշում է
տվյալ տառի բառամիջի գրությունը, դարձյալ ելնում է իր հիշյալ
սկզբունքից: Եթե պահանջում է նույնիսկ, որ եմ բայի ձևերը ձայ-
նավորով վերջացող բառին հաջորդելիս յ-ով գրվեն (դրելու յեմ,
գյուղացի յենք), դարձյալ ելնում է արտասանությունից: Աբեղ-
յանի սկզբունքը՝ հնչյունային գրություն, լավագույնն է, որին
ձգտում են աշխարհի բոլոր լեզուները, գծած ուղղագրական հա-
մակարգը հետևողական է, գիտական հիմնավորումով: Սակայն
ունի և պակասություններ: Ամենից առաջ կանոններում շատ են
բացառությունները, որոնք դժվարացնում են ուսուցումը: Աբեղյանը
հայերենի հնչույթային համակարգը քննելիս երբեմն նկատի է ու-
նենում միայն արևելահայերենը, այլ կերպ նա իւ, եա երկհնչյուն-
ները չէո արտահայտի յու, յա տառակապակցություններով, քանի
որ արևմտահայերենում իւ-ն յու չէ, այլ ֆրանսերեն ւ:

Մյուս կողմից, Աբեղյանը հաշվի պիտի առներ նաև հարցի հասարակական-քաղաքական, ինչպես և տեխնիկական կողմը:

Այս դեպքում նկատի ունենք մեր ժողովրդի երկու հատվածի միասնական գրությունը, մեր անցյալի մշակութային ժառանգությունից կտրվելու, խորթանալու և վերջապես թուղթ ու թանաքի, ժամանակի կորստի հարցը: Զէ՞ որ 1913 թ. ինքը՝ Աբեղյանն էր ընդգծում, որ պետք է ունենալ ու պահպանել գրավոր խոսքի միություն, եթե ուղղագրական բարեփոխությունը սեպ է խրելու մեր երկու հատվածների միջև, չպիտի կատարել: Աբեղյանը նահանջեց թե՛ այս և թե՛ 1913 թվականի՝ փոփոխությունը աստիճանաբար կատարելու իր սկզբունքից, ըստ որի բառը չի կարելի այնքան փոխել, որ անճանաչելի դառնա, շատ տարբերվի հնից: Իսկ հիմա լետոյ-ը դարձրեց հետո, յօդուածը՝ հոդված, Եօթը՝ յոթ և այլն:

Այս ուղղագրության դեմ արևմտահայերից առանձնապես ակտիվ էր գործում Վարդան Հացունին: 1924 թ. «Բազմավէպ»-ում նա գրեց «Երևանեան ուղղագրութեան դէմ» հոդվածը (էջ 394): Հացունին պատմում է, որ Կ. Պոլսի հայ արվեստի տանը կազմակերպվել է մեծ բանավեճ, որը երկու գումարում է ունեցել, բայց կոիվների պատճառով ընդհատվել է: Բանավեճում երեք հոգի են պաշտպանել նոր ուղղագրությունը. մեկը Ա. Խաչատրյանն է եղել: Անդրադառնալով նոր ուղղագրությանը՝ Վ. Հացունին քննադատում է այն, պաշտպանում ավանդականը.

1. Լեզուն փոխվում է աստիճանաբար, ներքին օրինաչափությամբ: Մեսրոպյան գրության տարբերությունը այսօրվա սովորականից և գրի գործածությունն է մի քանի բառերում (եի, եիր, եիք, եաք և այլն), որոնք միջնադարում ստացան գրության ներկա ձևը: Մյուս շեղումները տգիտության հետևանք են:

2. Նոր ուղղագրությունը «պատուար մը կը դնէ անցեալ մատենագրութեան և Երևանեան ապագայ սերնդին մէջ» (298): Նոր օրենքը հին գրականությունը թողնում է հին ուղղագրությամբ, ուրեմն մարդիկ պիտի երկու ուղղագրություն սովորեն: Սա ոչ թե թեթևացնում է ուսուցումը, այլ՝ դժվարացնում:

3. Ծաղկաբաղ կամ քաղվածքներ կատարելի: դարձյալ պիտի երկու ուղղագրություն հանդես գա: Իսկ եթե նոր ուղղագրությամբ գրեինք, յիմն պիտի դառնար տան ճիմը, յամ-ը սոխի կամ խոտորի համ պիտի տար, յայր-ը քարայրից պիտի դառնար հայր, յեղուկ-ը (շրջել, փոխել) պիտի դառնար ճեղուկ (թափել), լուա-ն (լսեցի) պիտի դառնար լվացի և այլն: Եթե գրեինք «համը լեզու», Երևանին պիտի հարցնեինք, թե ծանրախո՞ս (յամը), թե՞ մունջ (համը) է

նշանակում, հարկ-ը տո՞ւրքն է, թե՞ շենքի հարկը (յարկ), հոր-ը ջրհո՞րն է, թե՞ հայր-ը, այդպես էլ հաջող—յաջող, հետ—յետ և այլ բառեր:

4. Աշխարհաբարը գրաբարի դստրիկն է և կարոտում է ու պիտի կարոտի նրա մայրական դուրգուրանքին: Ուղղագրությունը մեզ պիտի անխզելի պահե գրաբարի հետ:

5. Օր-աւուր բառը հասկանալի է, քանի որ աւ-ի փոխարեն է օ-ն, իսկ որ-ավուր-ը անհասկանալի է: Զի կարելի օտար անունների օ-ն օ տառով տառադարձել, որովհետև օ-ն աւ-ի տեղն է գրվում:

6. Երեանյան ուղղագրությունը ջնջելով է-ն, վերացնում է նաև յոթ թվահամարի արտահայտության այդ միջոցը: Խանգարվում է կապը հնի հետ, անճանաչելի են դառնում հին բառերը: Այնուհետև Հացունին շարադրում է ե, է, օ, ո, վ, ու, ւ, յ տառերի ավանդական ուղղագրության կանոնը: Մեր այս քաղաքական ճղնաժամի մեջ, գրում է վերջում, որ միությունն այնքան ստիպողական է, որ Հայաստանը պետք ունի յուր գաղութները բարոյապես կապելու իրեն հետ, ոչ թե ցրտացնելու և հեռացնելու, նոր ուղղագրությունը խոհեմություն չի կարելի համարել:

Մենք տեսանք, թե ինչպիսի աբազությամբ ու եռանդով նախկին լուսավորում Պ. Մակինցյանը ըստ Աբեղյանի նախագծի անցկացրեց ուղղագրության բարեփոխումները՝ հաշվի չառնելով իր իսկ կազմած հանձնաժողովի կարծիքը: Ընդամենը երկու տարի հետո պարզվում է, որ Մակինցյանը նպատակ է ունեցել նոր ուղղագրությամբ արտասանությունը գրությանը մոտեցնելով՝ մեր դարավոր այբուբենի փոխարեն անցկացնել լատինատառ այբուբենը: 1924 թ. նոյեմբերի 29-ի «Заря Востока»-ում (№ 140) լույս է տեսնում Մակինցյանի «О латинском шрифте» հոդվածը, որը Ստ. Մալխասյանցը թարգմանում և հրապարակում է «Մարտակոչ»-ի 1924 թ. դեկտեմբերի համարում, նրա հետևան իր պատասխան հոդվածը՝ «Էնգվային հարցեր» խորագրով: Ի՞նչ է գրում Մակինցյանը իր այդ ծայրահեղ ձախլիկ հոդվածում: 1919 թ. օգոստոսի կեսերին Մոսկվայում կայացած խորհրդակցությունում՝ նվիրված Ռուսաստանի ոչ ռուս ժողովուրդների կրթության ու լուսավորության հարցերին, Մակինցյանը զեկուցել է «Լատինական միատեսակ այբուբենի մասին ՌՍՖՍՌ-ի ժողովուրդների համար» թեմայով: «Жизни национальностей»-ի № 40-ում գրված պատասխանում ասված է, թե զեկուցողի առաջ քաշած հարցն արդեն արծարծվել է, մտածում են կիրիլիցայից անցնել լատինական գրին: Աղգային փոքրամասնու-

թյունների լուսավորության բաժինը նույնպես այդ հարցը քննում է: Ի՞նչ երևի ազգությունների համար ստեղծվի միասնական այբուբեն, ասում է Մակինցյանը, այբուբեն չունեցող ժողովուրդներն էլ կարող են օգտվել, գրավոր խոսք ունենալ: Ռուսաստանում շատ ազգություններ կան, որ միմյանց լեզու գիտեն. եթե այբուբենը միասնական լինի, կհեշտանա նրանց հաղորդակցությունը: Մակինցյանը տրտնջում է, որ հինգ տարի իր զեկուցումից անցել է, բայց ուղադրություն դարձնող չկա: Նա, տարբերություն չտեսնելով դարավոր մշակույթ ունեցող հայ ժողովրդի և չերթնանների, կիրգիզների ու ափսազների միջև, գրում է, թե նոսք ընդունել են լատինական այբուբենը, մենք էլ պիտի ընդունենք: 1921 թ. Ռուս. հեռ. ընկ. գործերի վարիչ Բոգդատիևը (մի ժամանակ գրվում էր Բաղդատյան) մշակել է տառեր, որոնք ձուլվել են և նրանցով մի երկու հոգված էլ տպվել է ղանազան լեզուներով: Դրանք հայերենին հարմարեցրած լատինական տառեր էին, համապատասխանեցրած կովկասյան այլ լեզուների հետ: Ահա այդ այբուբենը՝

Aa — ա	Ćć — չ	Gg — գ	Jj — յ	Mm — մ	Pp — փ	Tt — տ
Bb — բ	Dd — դ	Ĝĝ — ջ	Kk — կ	Nn — ն	Rr — ռ	Ťť — ծ
Cc — զ	Ee — ե	Hh — հ	Kk — ք	Oo — օ	Ss — ս	Ťť — թ
Çç — ճ	Ff — ֆ	ll — լ	Az — լ	Pp — պ	Šš — շ	Üü — ու
Vv — վ	Xx — խ	Yy — ը	Zz — զ	Žž — ժ	Zz — ձ	lev — և
				la — Լա	Uu — ու	

Կա նաև Մառի այբուբենը գիտական տառադարձությամբ: Բուլղարիայում, տեղեկացնում է Մակինցյանը, հրատարակվում էր մի հայերեն լրագիր լատին տառերով, հարկավոր է մի հեղինակավոր մարմին, որ այդ այբուբենը պարտադիր դարձնի բոլորին: Ոգևորված Մառի խոսքերով, թե «պետք էր ամենի արմատապես կատարել ռեֆորմը, այն ուղղությամբ, որ բոլոր կովկասյան ազգերը միանային մի այբուբենի հիման վրա», Մակինցյանը ներկայացնում է լատինական այբուբենի առավելությունները, իբրև դարավոր հնություն, ունեցող ու տարածված: Քիչ տառեր կան հատուկ միայն մի լեզվի. գրագետ դառնալու համար կմնա սովորել միայն այդ եզակի տառերը: Իր նպատակին հասնելու համար Մակինցյանը պահանջում է փոխել հայերենի նաև բաղաձայնական համակարգը: Ի՞նչ ուղղագրության բարեփոխումը այդքան մասնակի պիտի լիներ, պետք չէր: Եվ նախկին լուսժողովուրդ, որ իր նախաձեռնությամբ իրականացրեց 1922 թվականի ուղղագրական բարեփոխումը, հարձակվում է Մ. Արեղյանի վրա: Եթե Արեղյանի ռե-

Ֆորմը հավիտյան է ընդունվել, դա բացարձակ էտադիմություն է: Արեղյանը մեզ ետ է տանում XII դարը: «Անձնապես ես ոչ մի դեպքում ոչ միայն ձայն չէի տա ի նպաստ այդ ռեֆորմին, այլև չէի առաջարկի ժող. կոմ. խորհրդի քննության, եթե նրան չհամարեի մի աստիճան՝ դեպի լատինական գիրը անցնելու գործը դյուրացնելու համար», — հայտարարում է նա: Եթե ռեֆորմը պիտի թերի մնա, ավելի լավ էր հինը մնար, որ առանց Արեղյանի էլ որոշ չափով կարգավորվել էր: Մեր խորհրդային հրատարակությունները, ասում է նա, չեն տարածվում, ուղղագրության պատճառով արևմտահայությունը չի կարողում մեր գրականությունը: Այս հանգամանքը հարկադրում է մեջտեղից վերացնելու նոր ուղղագրությունը: «Նրա ուղղագրությունն այնքան է ալլանդակել հայերեն բառերի պատկերը, որ շատերը արդեն երկու և կես տարի միմիայն այս նոր ուղղագրությամբ կարդալով հանդերձ՝ չեն կարողացել նրան ընտելանալ»: Այստեղից էլ եզրակացնում է. «Որքան շուտ մենք արխիվը նետենք «Սահակ-Մեսրոպյան» անկյունավոր, տգեղ և աչքի համար վնասակար այբուբենը՝ այնքան շուտ կազատվենք Արեղյանի ուղղագրությունից»: Առաջարկում է հանձնաժողով կաշմել Մառի նախագահությամբ, որ կազմի նոր այբուբեն: Հայատառ և լատինատառ այբուբենները հավասարապես գործածության դնել, որը կտարածվի, այն էլ ընդունել: Վերջում էլ ավելացնում է, թե ինքը չի կասկածում, որ կարճ ժամանակում լատինատառը կտարածվի: Հայերեն բառերի պատկերը աղավաղվելու մասին մտածող Մակինցյանն առաջարկում է այդ բառերը գրել լատինական տառերով, որ պատկերը պահպանվի: Լավ է ասել Հացունին Մակինցյանին. «Ոչ, պարոն, ձեր կարծիքը կը յարմարի արխիվին, բայց Մեսրոբեան գիրը՝ ոչ. և ձեր անկիւնաւոր ակնոցներն են, որ այդպէս կը ցուցեն Հացեկացւոյն գիւտը»²⁹: Հիշենք, որ լատինատառ այբուբենի գաղափարը գալիս է դեռ 1912 թվականի «Ընկեր»-ի էջերից:

Արեղյանն իր «Ուղղագրության ռեֆորմը» տպագրության է հանձնած եղել, երբ տպագրվել է Մակինցյանի սույն հոդվածը, ուստի գրքի վերջում, իբրև ետ լրացում, մի էջ է ավելացրել այդ հոդվածի առթիվ, ուր գրում է. «Այժմ ե միայն հասկանալի դառնում, թե ինչո՞ւ նա (Պ. Մակինցյանը—Ս. Գ.) ուղղագրության ռեֆորմի խնդիրն ամբողջական ձևով ներկայացրեց Կոմիսարների խորհրդին: Նա այդպես վարվել է, վորովհետև լավ գիտե և իր այդ հոդվածի մեջ մի քանի անգամ զանազան ձևերով պարզում է, վոր «հայերենի ուղղագրության կատարյալ ռեֆորմից հետո» միայն հնարավոր կլինի լատիններենին անցնելը. ուստի և նա առաջարկում

է բաղաձայն տառերի ուղղագրութիւնն էլ փոխել ՚: արտասանութիւն համեմատ դարձնել, «մինչև ծայրը տանել ռեֆորմը»։ Շատ ուշ է Արեղյանն իմացել Մակինցյանի նպատակը, այլ կերպ դժվար թէ ուրախ լիներ, որ Մակինցյանը հանձնաժողովի կարծիքը հաշվի չառաւ և իր նախագիծը լրիւ ու միանգամից ներկայացրեց ժող-կոմխորհին՝ հաստատութիւն։ Եւ դժվար թէ նրա այդ քայլի մասին դրեր. «Յեա այժմ տեսնում եմ, վոր իրավունքը լուս. ժող. կոմ-ի կողմն էր, վորովհետև 1500 տարվա հնութիւն ունեցող մի ուղղագրութիւն փոխելու համար՝ միշտ չի լինի հարմար ժամանակ, իսկ 1922 թվականը հենց այդպիսի հաշվադեպ վայրկյաններից մեկն էր» (անդ էջ 6)։ Արեղյանն ամոսոսում է, որ Մակինցյանն այն ժամանակ իր նպատակը պարզ չի ասել։ «Ես կարծում եմ,—գրում է նա այդ ետ գրութիւն մեջ,—վոր ավելի լավ կլիներ, հթե նախկին լուս-ժողկոմն ուղղագրութիւն դեկրետի սկզբում հենց այն դրած լիներ, ինչ որ ինքն իբրև դադտնի նպատակ ունեցել է, այսինքն լատինե-րեն տառին անցնելու նպատակը։ Այն ժամանակ գուցե ժող. կոմի-սարներից մեկը կամ մյուսը, գուցե և մեծամասնութիւնը ձայն չէր տա ուղղագրութիւն ռեֆորմին, և գուցե չէր լինիլ այն զվարճալի դրութիւնը, վորի մեջ լոնկած է ընկ. Պ. Մ.-ը, գրելով, վոր եթե լատիներեն տառերը չընդունվեն, այն ժամանակ «ավելի լավ է հին ուղղագրութիւնն անցնել», վորովհետև արտասահմանի հայերը Սիրիայում, Կ. Պոլսում և այլուր չեն անցել նոր ուղղագրութիւնը և նույնիսկ հակառակ են դրան» (էջ 113)։ Ուղղագրական հանձ-նաժողովը գրել է, որ արտասահմանյան հայութիւնը դեմ կլինի նոր ուղղագրութիւնը, ինքը նույնպէս հիշեցրել է, որ մի 25—30 տարի պետք է, որ նորը տարածվի, իսկ արևմտահայութիւն մեջ ավելի ուշ կտարածվի, բայց Մակինցյանը դրան բանի տեղ չի դրել, ավելացնում է Արեղյանը։

Ինչպէս ասվեց, Մալխասյանցը Մակինցյանի սույն հոգւածի հետ զետեղել է նաև իր հոգւածը՝ «Լեզվային հարցեր» խորագրով։ Հոգւածագիրը զարմանում է, որ Մակինցյանը արդի տառերի ձևը Մաշտոցին է վերագրում և այն համարում անկյունաքար, տգեղ ու աչքերի համար վնասակար։ Մի՞թէ նա չգիտի, որ այսօրվա տառա-ձևերը միջնադարից են, որ Մեսրոպի տառերը իրենց գեղեցկու-թյամբ կարող են մրցել ցանկացած ազգի այբուբենի հետ, բայց հիմա այդ տառաձևերը չենք օգտագործում, այլ՝ միջնադարի գրե-րը։

Զերբեզներն ու ափսազները գիր չունին, դիմեցին լատինե-րին, թուրքերի (ադրբեջանցիների) համար էլ արաբական այբու-

բենը լի էր պակասություններով: Այլ է հայերի ու վրացիների հարցը, նրանց այբուբենները լիակատար են ու պատշաճ, հեշտ յուրացվող և ոչ մի ներքին անհրաժեշտություն չկա դրանք վերացնել: Լճերն ավելի հարուստ է, քան լատինական կարկատած այբուբենը: Միասնական այբուբենի դեպքում ա.յն օգտագործող ազգերը միանգամից անգրագետ կդառնան: Ավելի լավ է օտար այբուբենը սովորել և նրանց ժառանգությունը կարդալ: Լատինատառ այբուբենին անցնելը մի կատարյալ աղետ է: Սխալ է Մակինցյանը, թե լատինատառ գիրը կատարյալ է: Կան տառեր, որ իրարից դժվար են տարբերվում (C—G, l—i): Մի գիրը մեկից ավել հնչում ունի: Օրինակ՝ c-ն կարդացվում է կ և g (corpus>կորփուս, cedo>ցեղո), t-ն՝ տ և g (tabula>տաբուլա, puntitio>պունտիցիո, Venecia>Վենետիկ), s=u և q (sanktus>սանկտուս, rosa>ռոզա) և այլն: Ավելի փառնաշփոթ է լատինական այբուբենը օտար լեզուներում: Z-ն արտասանվում է՝ q, g, ժ, g-ն՝ q, ժ, ջ, c-ն՝ կ, g, u և այլն: Schröder անունը կարդացվում է Շրեդեր, Շրյոդեր, Սքրոդեր, schkola-ն՝ սխոլա, սքոլա, շկոլա: և այլն: Իսկ լավ է, որ եվրոպական ազգերից շատերը լատինական այբուբենն են օգտագործում: Ահա թե ինչ է գրում Մարկվարտն այդ մասին. «Մինչև այսօր ալ արևմտյան, եվրոպական բոլոր լեզուներու վրա, սպաններենն ու իտալերենը դուրս թողլով, հոռմեական գրին անեծքը ու իրանց մասնավոր պետքերուն համասլատասխանող սեփական գրի և ուղղագրության մը սլակասը կը ծանրանա տակավին ուժգին»³⁰:

«Հայերենն ունի բազմաթիվ ու դժվարին հնչյուններ, որոնց ոչ մի այբուբեն չէր կարող արտահայտել»,—գրում է Մարկվարտը նույն տեղում: Հայերենն ունի 39 գիր, լատինը՝ 25, որոնցից միայն 22-ն են պիտանի: Հյուբշմանի, Մառի և մյուսների այբուբենները գիտական տառադարձության համար են և ոչ թե մասսայական գործածման: Մառը 12 տառով է արտահայտում հայերենի այբուբենը, Մեյեն՝ 11, Հյուբշմանը՝ 14, մեր մնացած հնչյունները նրանք արտահայտում են հիշյալ տառերին զանազան նշաններ ավելացնելով: Այդ այբուբենները գիտնականների համար են, ոչ մասսայական ընթերցողների ու գրողների համար, քանի որ դրանք դժվար են գրվում, տպագրվում և ընթերցվում: Եթե լատինատառ այբուբենը, վերջացնում է իր խոսքը Մալխասյանցը, մեսրոպյան այբուբենի հետ մրցության մեջ դնենք՝ երկուսն էլ գործածելով, անշուշտ լատինատառը դուրս կընկնի, կամա միայն տպագրության ծախսը և մեկ էլ մի երկու ըղարիկ լատինատառ հայերեն գրքույկ:

Մակինցյանին քննադատեց նաև Վ. Հացունին «Բազմավէպի»-ի 1925 թ. № 2-ի և № 3-ի էջերում: Քաղաքակիրթ ազգերը, ասում է նա, իրենց սեփական գրով ու գրականությունը են ցույց տալիս իրենց քաղաքակրթության վաղեմիությունը, հայի ձեռքից ինչո՞ւ խլել այդ փառքը: Եթե հայ գիրը չպիտի սովորեցնենք, ուրեմն տապանաբար դնենք անոր վրա: Երևի մենք վերջինն ենք, որ Հացեկացու գրչով ենք գրելու: Մեզ մնում է դիտել մեր ուղղագրության հուղարկավորությունը և սպասել վաղվան, երբ կհուղարկավորի հայոց լեզուն և նրանից կմնան միայն «հայոց լեզու» բառերը: Իհարկե, Հացունին շտապում էր հուսահատվել: Հայոց լեզուն չընթացավ ձախության մեջ ընկած առանձին մարդկանց դժած ուղիով: Այսօր էլ նա զարգանում է ու հարստանում:

Սեդրակ Թառայանի, Պողոս Մակինցյանի, Բոգդատիկի ըստ էության հակահայկական, հակաժողովրդական առաջարկները լատինատառ այբուբենի մասին ժողովուրդը չընդունեց, և մնացին իբրև ձայն բարբառո հանապատի:

Հայերենի ուղղագրության պատմությունը հար և նման է եվրոպական շատ լեզուների (հունարեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուղղագրության պատմությանը: Մինչև Յակով Գրիմմը Գեյմանիայում ընդհանուր ուղղագրություն կար, բայց այդ ուղղագրության մեջ սխալ և անհետևողական բաներ տեսնելով՝ Գրիմմը փոփոխության առաջարկ մտքրեց նրանում, գոթական տառերը փոխարինեց լատինական տառերով: Գերմանացիները չեն թաքցնում, որ գերմաներեն գրականության մեջ դժվար է գտնել երկու գիրք, որ ուղղագրությամբ իրար նման լինեն (Յ. Դրոշ, 189)³¹: 16-րդ դարում գրում էին vundt, Thoch, jhedonn, որ հետո դարձան und, Tuch, jeden: 19-րդ դարում verlohren դարձավ verloren, Bluhme > Blume, Wohl > Wol, Seegen > Segen, Schaaf > Schaf, loos > los և այլն: Բայց սրանք մասնաժյի փոփոխություններ էին: Գլխավոր աշակերտները պահանջում էին գրել ըստ առասանության, կատարել lügen > liegen, betrügen > betriegen. Schöpfer > Schepfer, erschöpfer > erschepfer և այլ փոփոխությունները: Շլայխերը ihm, ihn բառերը գրում էր im, in ձևով:

70—80-ական թվականներին գերմաներենում իշխում էր ուղղագրական երկու ուղղություն՝ ավանգական և հնչյունային: Ուղղագրության հարցը քննվում է ուսուցչական խորհրդակցություններում, մամուլում, առանձին տեղական իշխանություններ հրապարակում են ուղղագրական կանոններ ուսումնարանների և հատուկ դպրոցների համար: Բայց այդ բոլորը գերմանիներենի ուղղագրությունը միասնական չեն դարձնում: Փորձ է արվում պատմական և

հնչյունային ուղղագրությունը հաշտեցնել, ընթանալ միջին գծով: 1876 թ. նորից է շարժում սկսվում հանուն միասնական ուղղագրության: Պրուսիայի լուսավորության մինիստրը ստեղծում է հատուկ հանձնաժողով, ուր հրավիրվում է նաև պրոֆ. Ռաումերը: Ռաումերի նախագիծը շանցավ: Հանձնաժողովը իրենը կազմեց, որը հաստատեց մինիստրը և հրապարակեց: Բայց սա էլ ուժ չունեցավ գործածվելու, գրվեցին բանավեճային նոր գրքեր, նույնիսկ սկսեց լույս տեսնել „Zeitschrift für orthographie“ հանդեսը:

Նույնպիսի բանավեճերով ու պայքարով է ընթացել նաև անգլերենի ուղղագրության պատմությունը: Անգլերենի ուղղագրությունը բառի բուն իմաստով պատմական է: Հնագույն գրավոր նշանները դեռ ուժի մեջ են և կարծես չեն հակասում բանավոր խոսքին: Բառերի մեծ մասի գծագրական պատկերը պայմանական արտահայտությունն է բանավոր արտաբերման, նույնիսկ անկախ՝ բառի առանձին տարրերից: Դա բառային և ոչ թե հնչյունային ուղղագրություն է: Նրանք գրում են Gloucester, Brougham, Colonel, բայց կարդում են Gloster, Brum. Körnel, որից երևում է, որ ոչ թե խոսքի հնչյուններն են արտահայտում գրավոր, այլ բառի գրաֆիկական պատկերն են տալիս: Նույն հնչյունը զանազան տառերով է արտահայտվում, յուրաքանչյուր ձայնավոր, երբեմն և բաղաձայն, ունի զանազան հնչումներ, չկա մի օրենք, որ որոշի, թե՛ յուրաքանչյուր դեպքում տվյալ հնչյունը ինչ տառով պիտի արտահայտել: Օրինակ՝ snow, low կարդացվում են sno, lo, իսկ bow, low > nou, lou, bear-ը արտասանվում է ber. իսկ hear-ը՝ hir:

Քիչ փորձեր չեն եղել գրությունն այս վիճակից հանելու համար: 1843 թ. Բիրմինգհամում մի ինչ-որ Հիլլ (Hill) զոհեց հոսկայական կապիտալ (phonetic fond) և հիմնեց դպրոց: Այդ Բիրմինգհամում ամեն տարի հնչյունային տոն է լինում: Գործում է հնչյունաբանական ամսագիր: Սկսում են մշակել անգլերենի ուղղագրությունը (Իսահակ Պիտման, էլլիս), լույս են տեսնում հնչյունային ուղղագրությամբ գրքեր: 1862 թ. վեց ամսագիր էր լույս տեսնում հնչյունային ուղղագրությամբ: Է. Ջոնսը գոյություն ունեցող տառերը պահելով՝ աշխատում էր նրանց տալ հնչյունային որոշակի արժեք, նշանակություն: Առաջարկը քննվում է Լիվերպուլում: Բայց նրա դեմ ելնում է էլլիսը և պնդում, որ մասնակի բարեփոխումը օգուտ չի տա, պիտի արմատական փոփոխություն կատարել: Պիտի վերականգնել նախնիների, երկու վարդերի պատերազմից առաջ եղած հնչյունային ուղղագրությունը: Ոմանք էլ արտասանական հիմունքի հետ հաշվի էին առնում նաև ստուգա-

բանականը: Բայց այդ բոլոր առաջարկները չանցան: Ժողովրդական առկորույթի ուժը հաղթեց: Իր բոլոր թերություններով հանդերձ՝ անգլերենի ուղղագրությունը միասնական է՝ ամբողջ Անգլիայում և պարտադիր բոլոր անգլիացիների համար, դրանում է նրա ուժը և մեծագույն առավելությունը:

Ֆրանսերենի դրավորում ևս հետևողականություն չկա, հակասություն կա և միևնույն տառի զանազան արտասանություն: Բայց դա ոչ թե նախնիների արտասանությունը պահպանելուց է, այլ գիտնականների միջամտությունից: Ֆրանսերենի ուղղագրությունը պարզացել է մեծ մասամբ արհեստական ճանապարհով: Նրա հիմքում ոչ թե պատմական, այլ ստուգաբանական սկզբունքն է ընկած, թեև ոչ միշտ հետևողական ու ճիշտ: Մինչև 13-րդ դարը ֆրանսերենում հնչյունային ուղղագրությունն էր իշխում: Հետագայում՝ բարանագիր լիտրեն իր բառարանի նախաբանում գրում է, թե ֆրանսիացիների մեջ դրավորն ու արտասանությունը ձրկու մշտական պայքարող ուժեր են իրար դեմ: Թեև 17-րդ դարի կեսերին Պոր Ռոյալը առաջարկեց, որ յուրաքանչյուր առարկան իշխանական մի հնչյուն, չարտասանվող տառ չպիտի լինի, և յուրաքանչյուր հնչյուն պիտի մի տառապատկեր ունենա, միևնույն հնչյունը մեկից ավելի տառապատկեր չպիտի ունենա, բայց ստուգաբանական ուղղագրությունն ավելի արմատավորվեց 1694 թ., երբ վերահրատարակվեց 1635 թ. հրատարակված ակադեմիայի բառարանը, որը առավելությունը տալիս էր հունա-լատինական գրավորի ձևերին առաջնություն տվող ուղղագրությանը: Ուղղագրական հանձնաժողովի անդամներ Կորնելը և Բոսսյունեն, որոնք առաջարկում էին ուղղագրության արմատական փոփոխություն, մնացին փոքրամասնություն: 1835 թ. այդ բառարանի հրատարակության ժամանակ ֆրանսիական ակադեմիան ընդունեց Վոլտերի ուղղագրությունը՝ *oi* տառակապակցության փոխարեն *ai* *français*, *avais* և նրման բառերում: Նրա մյուս առաջարկները ակադեմիան ընդունեց: Ուսանելի է, որ օտար բառերը գրում են ըստ իրենց հնչման: *philosophe*—*filosofe*, *encyclopédie*, *tipographe*, *teologe*, *metaphisique*, *historiographe* *bibliothèque* և այլն³²: Հունական բառերի այս ուղղագրությունը գալիս է 16-րդ դարից: Գիտնականները պնդում էին, որ եթե հունական բառը երկար ժամանակ ապրում է ֆրանսերենում, պիտի գրվի ֆրանսերեն: Հնությունը պիտի հարգել, բայց յուրաքանչյուր լեզու պիտի իր տերը լինի: Ֆրանսիական ակադեմիան հարգեց այս սկզբունքը, բայց միայն որոշ բառերում *ph*-ի փոխարեն գրեց *f*, *th*-ի փոխարեն՝ *t*: Շատ

քառեր նույն արտասանությունն ունեն և միայն գրավորով են տարբերվում, ինչպես և տարբեր քերականական իմաստները: Ֆրանսիացի գիտնականները (Բերնար Ժյուլե) գրում են, թե ով առաջարկում է հնչյունային ուղղագրություն, նա ֆրանսերեն չգիտի և կարծում է, թե ֆրանսերենը մնացել է իր նախկին մակարդակին: Հնչյունային գրություն կարող են ունենալ չկրթված, գրականութուն չունեցող ժողովուրդները: Հնարավոր չէ շուտ տալ գլխի վրա ֆրանսիական ողջ խոսքը, կտրել շղթան այն անցյալի հետ, որ ստեղծել է ազգային ոգին, ազգը: Ֆրանսերենի ուղղագրությունը ղեկավարում է ակադեմիան և ոչ ոք չի համարձակվում դուրս գալ նրա սահմանած օրենքներից: Նույնիսկ բառարանագիրները, որ քննադատում են այդ օրենքները, բառարաններում չեն շեղվում նրանցից: Պակասավոր, բայց ողջ ազգի համար միասնական ու պարտադիր ուղղագրությունն ավելի չավ է, քան հիշտ ու ամբողջական, բայց ազդի միայն առանձին հատվածների կողմից ընդունված ուղղագրությունը, ասում է Ռաումերը: Անգլերենի նման ֆրանսերենի ուժն էլ ուղղագրության միասնական լինելու մեջ է:

Ավելի լավ վիճակում չի եղել ռուսերենի ուղղագրությունը: Տրեդյակովսկին ձգտում էր ուղղագրությունը փոխել հնչյունային սկզբունքով, իսկ Լոմոնոսովը դեմ էր, պահանջում էր հաշվի առնել նաև ավանդական գրությունը: 1748 թ. Տրեդյակովսկին հրատարակեց «Разговоръ между чужестраннымъ человекомъ і російскимъ объ орфографіи старинной і новой» գիրքը, որ ինչպես տեսնում ենք, ռուսերեն II-ի փոխարեն օգտագործում է լատինական i-ն, այդպես էլ э, ш, ѳ, з տառերի փոխարեն օգտագործում է e, шч, ф, s տառերը: Դրանով կատարում էր Պետրոս Մեծի կամքը, ռուսերենի այբուրենը մոտեցնում էր լատինականին: «Писать по звонамъ» սկզբունքով գրում էր, порядку, свидкой, обрасси, извисной, кресьяне, скушно, книшка և այլն: Սրան դեմ էր Լոմոնոսովը: Եվ դպրոցների մի մասում Լոմոնոսովի գրքերով էին սովորում, մյուսում տրեդյակովսկան ուղղագրությունն էր ուսուցվում: Շատերը (Դերժավին, Հումբոլդտ) պահանջում էին այբուրենից հանել ավելորդ տառերը, հատկապես ъ-ն: Զասլադկոն 1871 թ. պահանջեց հանել այբուրենից ъ, ѣ, п, ы, н, ѱ, э, ю, ж, ц, ч, ш, щ, ѳ տառերը, մտցնել լատինական h-ն ու j-ն, գրել Гомер, ոչ Гомер, јолка, мајо, појот, ја, ју կապակցություններով: Նա գրում է jakop, ctolanka, npedjavlenie, objavit, pazjacnit, linlja, перја և այլն: Լատինական այբուրենին անցնելու միտքը Պետրոս Մեծից

անցավ Բելինսկուն, հետո Կեդինսկուն և Զասլադկովին: 1862 թ. «Սեդանի բառարան»-ում սահմանափակվեց Ն-ի կիրառությունը և հանվեց Թ տառը:

Սկանդինավյան ժողովուրդները նույնպես (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա) մտածել են ստեղծել միասնական գրավոր խոսք, որովհետև նրանք բանավոր իրար հասկանում են: Ռուսկը, նրա աշակերտ Պետերսոնը ձգտեցին կարգավորել այդ հարցը: 1869 թ. Ստոկհոլմում ազգային-տնտեսական համագումարում առաջարկվեց զբաղվել նաև ուղղագրության հարցով: Տեղի ունեցան ներկայացուցչական ժողովներ, կազմվեցին կոմիտեներ, բայց յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ ձգտում էր իր խոսքն անցկացնել, դանիացիները պահանջում էին Ռուսկի, Պետերսոնի առաջարկներն իրականացնել, որ մյուսները մերժում էին: Այդպես էլ սայլը տեղից չշարժվեց:

Նվորակալում միայն իտալերենի, իսպաներենի և պորտուգալերենի ուղղագրությունն է առաջնորդվում հնչյունային սկզբունքով:

XVI դարի իտալական քերականները (Լ. Սալվիատի) գրավոր համաձայնեցրին բանավոր խոսքին, գրեցին մի հնչյունին մի գիր սկզբունքով և այդպես էլ տարածվեց: Իսպանիայում 1492 թ. Անտոնի դե Նեբրիխան ընդունեց հնչյունային գրությունը, գրանշանները համապատասխանեցրեց հնչյուններին: 1741 թ. ուղղագրությունն իր ձեռքն է վերցնում Ֆիլիպ V-ի հիմնադրած ակադեմիան: 1815 թ. Մադրիդի ակադեմիան վերջնականապես հաստատում է հնչյունային ուղղագրությունը:

Այսպիսի ճանապարհ է անցել նաև հայերենի ուղղագրությունը: Հատկապես 19-րդ դարից սկսում են բարեփոխումների առաջարկություններ անել: Հանդես են դալիս արևմտահայ հատվածում Գր. Օտյանը, Մ. Զեքազը, Ն. Ռուսինյանը, արևելահայ հատվածում՝ Ղ. Աղայանը, Ս. Մալխասյանցը, Ս. Մանդինյանը Ս. Թառայանը, Մ. Աբեղյանը և ուրիշներ: Բայց, ինչպես եվրոպական լեզուներում, հայերենում էլ մինչև 1922 թվականը մնում էր ավանդական ուղղագրությունը, Աստվածաշնչի, Հայկազյան բառարանի ուղղագրությունը: 1922 թ. խախտվեց համահայկական միասնական ուղղագրությունը և ստացվեց մի ժողովուրդ՝ երկու լեզվով, երկու ուղղագրությամբ: Թառայանը Տրեդյակովսկու, Զասլադկովի օրինակով ուզում էր կրճատել Մեսրոպի ալբուրներ, բայց ինչպես որ այդ բարենորոգիչ մտավորականները հանդիպեցին ուսս ժողովրդի դիմադրությանը, այնպես էլ Թառայանի ա-

ռաջարկութիւնը մնաց իբրև սոսկ պատմական փաստաթուղթ: Այս նույն բախտին արժանացավ նաև նույն այդ Թառայանի, ապա Բողոքատիկի, Մակինցյանի ցանկութիւնը՝ հայերեն այբուբենի փոխարեն ընդունել տալ լատինատառ այբուբենը: Թառայաններն ու մակինցյանները առաջադեմ երևալու և նորարարության մտքերով տարված՝ չէին տեսնում, որ եթե մի այնպիսի հզոր թագավոր, ինչպիսին Պետրոս Առաջինն էր, չկարողացավ ժողովրդին դեմ գնալ և լատինատառ այբուբենն ընդունել տալ, ուրեմն այդ դադափարը առողջ չէր, ուստի և ժողովրդին ձեռնադրել:

Հնչյունային ուղղագրութիւնը այն լավագոյնն է, որին ճշգրտում են աշխարհի բոլոր լեզուները, իբրև սկզբունք հիանալի է ու անթերի, բայց նա իրականութեանը հակադիր է և դժվար իրականանալի: Մենք տեսանք, որ Եվրոպայի շատ ազգերում առաջավոր մտավորականութիւնը ձգտել է ավանդական ուղղագրութիւնը փոխել հնչյունականի՝ Վոլտերը Ֆրանսիայում, Գրիմմը Գերմանիայում, Ռասկը Դանիայում, Լոմոնոսովը, Պավսկին Ռուսաստանում, Էլլիսը Անգլիայում, բայց նրանք մեծ արդյունքի չեն հասել, առանձին դեպքերում լուծվել է միայն մեկ-երկու տառի գրութեան հարցը: Պրոֆ. Բրյուկեն տարված էր բոլոր լեզուների համար հնչյունային այբուբեն կազմելու երազանքով, ասում է Գրոտը, իսկ Բրյուկեն Տաուպինգը հարցնում է՝ ընդունենք, թե հաջողվում է այդ այբուբենն ստեղծել, բայց ի՞նչ միտք ունի մեր ազգային գիրը փոխարինել թեկուզ լավագոյն հնչյունային գրով, չէ՞ որ միևնույն է, լեզուներն իրենց հետագա փոփոխութեամբ չէին կանգնի այդ գրի վրա: Ինչպիսի՞ քառս, հակասութիւններ ու շփոթ կառաջանային: Դա Եվրոպայի համար գործնական նշանակութիւն էլ չէր ունենա:

Իսկապես, եթե յուրաքանչյուր դարի մտավորականութիւն իր լեզվի գրութիւնը փոխի իր դարի արտասանութեան համապատասխան, ի՞նչ կմնա այդ լեզվի նախնական վիճակից, ի՞նչ կժառանգեն սերունդները իրենց նախնիների ստեղծած դարավոր մշակութից: Քսաներորդ դարի անգլիացին չէր հասկանա Շեքսպիրին, ռուսը՝ Լոմոնոսովին, ֆրանսիացին՝ Ռոյալին, հայը՝ Խոբինացուն:

Անհաշտ պայքար պիտի մղել ուղղագրական կամայականութիւնների դեմ, դրանից է առաջանում գրավոր խոսքի քառսը: Ավելի լավ է ունենալ դժվար, բայց միասնական, ազդի համար պարտադիր ու համընդհանուր ուղղագրութիւն, քան հեշտ, բայց ոչ ընդհանուր, կամայական: Անգլերենի, ֆրանսերենի, գերմա-

ներենի, ռուսերենի ուղղագրության ուժը միասնականության մեջ է, ողջ ազգի համար պարտադիր լինելու մեջ: Այս բանը լավ էր գիտակցում 1913 թ. Մ. Աբեղյանը և ընդգծում էր իր զեկուցման մեջ, բայց նա չհետևեց իր սկզբունքին և 1922 թ. իմանալով հանդերձ, որ արտասահմանի հայությունը, հատկապես արևմտահայ հատվածը, կղիմադրի, չի ընդունի նոր ուղղագրությունը, պետական հրամանով (բենքի ուժ տվեց իր նախագծին): Սրանում էր Աբեղյանի վրիպումը, որի հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծվեց երկու տարբեր ուղղագրություն:

1897 թ. «Արարատ»-ում տպագրված իր վերը հիշատակված հոդվածում նա անհեռատես է համարում նազարյանին, Նալբանդյանին, որ փոխանակ տարածելու արևմտահայերենը և միասնական դարձնելու, ստեղծեցին մի երկրորդ լեզու՝ արևելահայերենը փոխանակ կր-ով կաղմելու բայերը, ու-ով կաղմեցին, իսկ հիմա ինքն է այդ երկու լեզուների միջև ստեղծված ճեղքվածքն ավելի լայնացնում:

1922 թվականին ստացվեց երկու լեզու՝ երկու ուղղագրություն: Արտասահմանի հայությունը պահպանեց ավանդական ուղղագրությունը, իսկ Հայաստանում և Միության հայկական օջախներում հաստատվեց հնչյունային ուղղագրությունը՝ բացառությամբ բաղաձայնների, որոնք մնացին ավանդական գրությամբ: Ինչից զգուշանում էր Աբեղյանը 1913 թ., տեղի ունեցավ 1922 թ. իր իսկ միջոցով, իր իսկ նախագծով: Նոր ուղղագրությունը ինչ-որ չափով կտրեց նոր սեռնդին հայ անցյալի մշակութային ժառանգությունից՝ անհասկանալի կամ դժվար հասկանալի դարձնելով այն: Նպաստեց մեր ժողովրդի երկու հատվածների բաժանման խորացմանը: Բանավոր խոսքով իրարից զատված հատվածները զատվեցին նաև գրավորով:

Փարիզում հայերեն լույս տեսնող «Խթան» շաբաթաթերթի 1968 թ. մայիսի 16-ի համարում հետաքրքիր հաղորդումով հանդես է եկել Եր. Հայրապետյանը, հոդվածը վերնագրված է՝ «Ո՞վ է հեղինակը նոր ուղղագրության»: Հոդվածագիրը պատմում է, որ ինքը, լինելով Աբեղյանի աշակերտը, հիշում է, որ նա իր դասերի ժամանակ միշտ պնդում էր, թե հայերենի ուղղագրության մեջ արմատական փոփոխություն չի կարելի կատարել: Կարելի է միայն բառավերջի անձայն չ-ն գցել և բառամիջում չհնչյունափոխվող Է-ի փոխարեն ն գրել: Հոդվածագրի վարժիքով՝ նոր ուղղագրության հեղինակը, հորինողն ու գործադրության առաջարկը անողը Աբեղյանը չէ: Այդ բանը Աբեղյանին վերագրել, նշանակում է անարդար

տեղը արատավորել Աբեղյանի անբասիր անունն ու վարկը, դա մի անլուր մեղադրանք է ճեմարանի հայագիտական առարկաների անմրցակից դասախոսի հասցեին: «Անհնար էր,—գրում է նա,— որ այս վերլուծող, կառուցող բացառիկ հայագետը իր կարծիքը լանկարծակի հիմնական փոփոխությունն ենթարկէր հայոց լեզուի ուղղագրության փոփոխության մասին, եւ մանաւանդ հեղինակը դառնար նոր, խայտառակ ուղղագրության»: Հողվածագիրը գրում է, թէ պրոֆ. Ռուբեն Արրահամյանը իրեն պատմել է, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը կաղմել է մի հանձնախումբ՝ Մա՛ուկ Աբեղյանի նախագահությամբ և Հր. Աճառյանի, Գրիգոր Ղափանցյանի, Ռուբեն Արրահամյանի անդամակցությամբ, և հանձնարարել՝ ուսումնասիրել հայերենի ուղղագրության հետ կապված խնդիրները ու այն հիմնական փոփոխության ենթարկելու նախագիծ ներկայացնել: Հանձնախումբը տասնհինգ օր խորհելուց հետո եկել է այն եզրակացության, որ մեր ուղղագրությունը ո՛չ հնարավոր է և ո՛չ էլ ցանկալի հիմնական փոփոխության ենթարկել: Բայց Հովհաննիսյանը ստիպել է ներկայացնել յ—հ, ե—լ, օ—ո, վ տառերի ուղղագրության բարեփոխման նախագիծ, և հանձնախումբը տեղի է տվել: Հովհաննիսյանն այդ նախագիծը ներկայացրել է Ժողկոմխորհին՝ հաստատության: Ամենից խիստ ու պատճառաբանված հակառակել է լուսավորության նախարար Ասքանազ Մուսվյանը: Խորհուրդը բաժանվել է երկու խմբի՝ կողմ և դեմ: Իբր թե Մուսվյանի կողմից նշանակված ռուս արտակարգ կոմիսարը քվեարկել է նոր ուղղագրության օգտին և մեկ ձայնի առավելությամբ անցել է այն:

Մենք, սակայն, տեսանք, որ 1913 թվականից Աբեղյանը պահանջում էր ուղղագրական բարեփոխումներ կատարել, այդ առթիվ նա գրել է 1913, 1921, 1922 և 1925 թվականներին և եթե 1913 թ. առաջարկում էր աստիճանաբար, երկու շրջանով իրականացնել բարեփոխումը, ապա 1921, 1922 թվականներին, ոչ ուս համարում է «հարմար ժամանակ», «հազվադեպ վայրկյաններից մեկը», առաջարկում է միանգամից կատարել փոփոխությունը: 1925 թ. նրա գրած «Ուղղագրության ռեֆորմը» մի ավելորդ անգամ ևս հաստատում է, որ «ռեֆորմի» հետեողական միակ պաշտպանն ու առաջարկությունների հեղինակը Աբեղյանն է եղել, որն է ճնշում չի եղել, որ նա 1921 թ. զեկուցել է, «Խորհրդային Հայաստանի» 1922 թ. փետրվարի 12-ի համարում տպագրել է մի ընդարձակ հոդ-

* Ի՞նչ կմտածեր Աբեղյանը, եթե կենդանի լիներ:

ված, ուր նա դարձյալ շարադրում է իր սկզբունքները, պահանջում ուղղագրական փոփոխություններ. «Լուսավորության տարածման համար ուղղագրության հարցը քաղաքական հարց է»,—գրում է նա: «Հայ լեզուի ուղղագրության բնֆորմի խնդիրը Հայաստանի հեղափոխական իշխանության հերթական խնդիրներից միին է»,—կրկնում է նա լուսժողովատի գրածը: Այդ հոդվածի շարունակության մեջ («Խ. Հ.», 25/2) գրում է, թե նոր ուղղագրությանը ամենից շատ կդիմադրեն արևմտահայերը, բայց նրանք քիչ են. այս խնդրի նկատմամբ արժեք չունի նրանց դիմադրությունը, բավական է, որ Հայաստանի կառավարությունը որոշում կայացնի, իսկույն կտարածվի: 1922 թվականին գրել է «Ուղեցույցը»: Ճիշտ կլինե՞ր հակառակը մտածել. Արեղյանն է սկսել ու արագացրել այդ գործը, գուցե և իր երկաթյա տրամաբանությամբ ճնշել հանձնաժողովին:

Հայրապետյանի պատմածի մեջ ոչ մի խոսք չկա Պ. Մակինցյանի մասին, մինչդեռ մենք տեսանք, թե ինչպես այդ փոփոխությունների մասին որոշումը կայացվել է ժամանակի լուսժողովում Մակինցյանի գործուն մասնակցության և եռանդուն ջանքերի շնորհիվ: Այն ժամանակ Մոսկվայում չէր լուսժողովումը, նա չի հարցն ժողովումիս հետքեր: Եվ վերջապես, Աշոտ Հովհաննիսյանը նույնպես Արեղյանին է համարում այդ նախագծի հեղինակը³³:

Թեև նոր ուղղագրությունը կառավարության դեկրետով պարտադիր էր և Միության մեջ ամենուրեք այդ ուղղագրությամբ էին հրատարակում ու ուսուցանում, նրա նկատմամբ մերժողական վերաբերմունքը շարունակվում էր, չէր լռել քննադատությունը: Արտասահմանում լույս են տեսնում հայերենի ուղղագրության մասին նոր գրքեր, որոնք մասսայականացնում և ուսուցանում են ավանդական ուղղագրությունը: Հենց 1923 թ. Վենետիկում լույս է տեսնում Արսեն Ղադիկյանի «Հայոց լեզուի ուղղագրության դասեր» գիրքը: «Ուղղագրության հարցը,—ասված է գրքի սկզբում,—առագ կարեւորութիւն ստացաւ մանաւանդ Երեւանեան ձեռնարկէն վերջ, որ կը ձգտի ոչ թե ուղղագրութեան դժվարութիւններն հարթելու, այլ նոր ու նոր խոշոր յարուցանելու եւ աղաւաղելու լեզուն իր հիմերէն, տասնհինգդարեան գրութեան մեր ոճն ու ձեւը վերիվայր տապալելով եւ այլանդակելով: Սահակի եւ Մեսրոպի հարազատ զաւակները՝ տաժելով հանդերձ առ երեւանեան կառավարութիւնը ամէն համակրանք ու սէր, պիտի զգուշանան անշուշտ այդ աղճատ հեթանոսութիւնն» (էջ 48):

«Ժող. ձայն»-ի № 1099-ում լույս է տեսնում Թեքեյանի «Հայ պոլշեվիկներէն»³⁴ եւ հ. Արսեն Ղադիկյանի մեղմ մենամոլութիւնը»

խորագրով հոգւածը: Այդտեղ Թեքեյանը քննադատում է ոչ միայն նոր ուղղագրությունը, այլև նոր հապավումները՝ ֆինժողկոմ, գավկոմ, կենտրոններմկոմ և այլն: Թեքեյանը գրում է, թե ռուսահայերը տարօրինակ են: Այս առթիվ Ղազիկյանն ասում է՝ թրքահայերս էլ 50—60 տարի առաջ ունեցել ենք մեր ռուսիսյանները, շերագները, մենք ևնք այդ տարօրինակության առաջին օրինակը: Դրանից շատ առաջ ունեցել ենք Դավիթ Անհաղթ, որ ձգտել է մեր լեզուն հռոմեցնել, ունիթորները ձգտել են լատինացնել: «Պիտի շտրէի, — ասում է Ղազիկյանը, — որ պ. Թէքէեան նորէն իր սիրած փայտէ ձին ասպարէզ հանէր ու արշաւէր ռուսահայերուն վրայ» (էջ 63): Բերելով Թեքեյանի տողերը, թե «Թող հորհրդային Հայաստանը շարունակէ իր կրցածն ընել հայ ժողովուրդը պահպանելու, լեզուն պահելն ալ մենէ», Ղազիկյանն ավելացնում է. «Բիշ մը շափաղանց կը գտնեմ: հորհրդային Հայաստանի վարիչներուն գործերէն այն տպավորութիւնն ունինք, թէ ան ընդունակ է պահպանելու հայ ժողովուրդը, բայց թէ «Բարձրավանք»-ի միաբանները հաւատք են ընշնշէն մեզի, թե ատակ (կարող) են հայ լեզուն անվթար պահելու, ատոր քիչ մը կը տարակուսիմ» (65): Եվ բերում է այդ միաբանների անհարկի օգտադործած օտար բառերի մի ամբողջ ցուցակ՝ իտեալ, ութմ, թէքնիք, գիշէ, քոնֆերանս, թրաժիք, ֆրազ, րօմանթիդ, րէքլամ, պիեսա, ֆարս, տրամաթիքական, տիալոկ և այլն: Ղազիկյանը, ինչպես տեսնում ենք, լեզվի մաքրության, ավանդական ուղղագրության պահպանության հարցում անկողմնակալ է, անաչառ քննադատ:

1926 թ. Բեյրութում լույս է տեսնում Խ. Պ. Քարտաշյանի «հորհրդային Հայաստանի նոր ուղղագրությունը» գրքույկը: Այդ գրքույկում քննելով ե—է, յ—հ, ոյ, յ, վ—ւ—ու, օ տառերի ուղղագրության հարցը՝ հեղինակը եզրակացնում է, որ 1. Արեւելյանի ուղղագրությունը իր «յեղագործութեամբ» լեզվի ոգուն զեմ է: Անճանաչելի են դարձել յեվ, վոր, հայտնության, այսորվա, պաշտոնչա, շե, վոշ, յեթե, յերեկվա, Հակոբյան, Յեղիշե և այլ բառերը: 2. Յ-ի ոսկեդարյան հնչումը կեղծորեն հիմք բռնելով՝ խաթարել է աշխարհաբարը (յերևու, յերեվալ, յեվ): 3. Հակիրճության փոխարեն հավելումներ է կատարել (հոգիյի, վոր, լույս): 4. Անջրպետ է ստեղծել արևմտահայ և արևելահայ լեզուների, այսօրվա ու երեկվա գրական աշխարհաբարների միջև: 5. Մի քայլով լայնացրել է աշխարհաբարի ու գրաբարի միջև եղած անջրպետը: 6. Նմանաձայն բառերը բազմանիշի է փոխել, ի վնաս հստակության (համառություն, համար, հաշտ, հոլով, յաջող, յետ, յար, յետին և

այլն): 7. է-ն ե-ի փոխելով մթաղնվում են դեմ—դիմադրու, բեմ—բեմադրել, գեր—գիրուկ, ծեր—ծերություն, պետք—պիտանի, պիտ—պետություն, գետ—գիտակ, գետ—գետակ փոփոխությունները, չի իմացվում, թե երբ է ե-ն ի-ի փոխվում:

Նոր ուղղագրության դիրքերը դեռ չէին ամրացել, դեռ նա համապարփակ ընդգրկում չունեւր, թեև պաշտոնական գրություն էր: Ինքը՝ Աբեղյանն իր 1925 թ. լույս տեսած հիշյալ գրքի 6-րդ էջում գրում է, թե «տարիուկէսվա բնթացքում Հայաստանի Հանրապետության սահմաններում արդեն մեծ մասամբ հաղթահարված են գրագետների հարուցած գծվարությունները»: Մինչև այժմ տասնամյակի վերջը և այնուհետև էլ այդ գծվարությունները ոչ ամբողջովին են հաղթահարվում, ուստի և տրտունջներ ու բողոքներ կային, ըստ որում ոչ միայն գիտնականներն էին բողոքում, այլև ուսուցչութունը, տպագրական գործի մարդիկ:

Իր «Հուշեր»-ում (էջ 128) Աշ. Հովհաննիսյանը պատմում է, թե «քսանական թվականների կեսերին հասունացել էր Մ. Աբեղյանի նախագծի հիման վրա 1921 (իմա՝ 1922) թվականին տեղի ունեցած հայ ուղղագրական ռեֆորմի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հարցը»: Անհրաժեշտ համարվեց մտքերի լայն փոխանակում կազմակերպել Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտում: Նոր ուղղագրությունից դժգոհությունը բխում էր նրանում տեղ գտած որոշ ծայրահեղություններից՝ ավելորդ տառերի զործածություն, այբուբենի փոփոխություն, բառապատկերի զգալի փոփոխություն, որից և՛ անցյալի ժառանգության յուրացման դժվարություններ: Հարկավոր էր ընդհանրապես օգտակար նոր ուղղագրությունն ազատել այդ ծայրահեղություններից:

Լուսավորության ժողկոմի կարգադրությամբ հիշյալ ինստիտուտի պատմական-հասարակական, գիտական և գեղարվեստական բաժինների 1926 թ. հոկտեմբերի 17-ի միացյալ նիստում ընտրվում է ուղղագրության և տառերի ձևերի բարեփոխության հանձնաժողով, հեռւյալ կազմով՝ Մ. Աբեղյան, Հր. Աճառյան, Թ. Ավդալբեգյան, Ա. Բաբախանյան (Լեո), Գ. Կեռնյան, Աս. Խաչատրյան, Ստ. Կանայան, Սիմ. Հակոբյան, Գ. Ղափանցյան, Հ. Մանանդյան, Շիրվանզադե: Հանձնաժողովը իր աշխատանքն ըսկրսել է 1926 թ. հոկտեմբերի 21-ին, վերջացրել 1927 թ. մարտի 27-ին: Ունեցել է երեսունհինգ նիստ, մանկավարժական, տպագրական և բժշկական ենթահանձնաժողովներ: Բոլոր նիստերին նախագահել է Հ. Մանանդյանը, քացի երկուսից, որ Ստ. Կանայանն է նախագահել: Քարտուղարությունը միշտ Գարեգին Լեոն-

յանն է վարել: Առաջին նիստում (21/X 1926 թ.), ուր քննվում էս կազմակերպական հարցեր, կարողացվում է Մ. Աբեղյանի հրաժարականը հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու մասին, որ նա գրել է հրավիրաթերթի վրա: Այդ նույն նիստում որոշում են Իիֆլիսից հրավիրել Ստ. Մալխասյանցին իբրև զեկուցողի և մտցնել նրան հանձնաժողով: Երկրորդ նիստում (26/X 1926 թ.) լսվում է Հր. Աճառյանի զեկուցումը: Որոշում են դիմում հղել հայ մտավորականությանը, որ իրենց կարծիքներն ուղարկեն հանձնաժողովին: Երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ նիստերում լսվում են Ա. Խաչատրյանի, Գ. Ղափանցյանի և Ստ. Մալխասյանցի զեկուցումները: Հաղորդվում են, որ ստացվել են Հակոբ Հարությունյանի, Լևոն Բունիաթյանի, Մ. Մարտիրոսյանի, Ա. Արագածունու, Մ. Տեր-Սարգսյանի, Լ. Մելիք-Աղամյանի, Ս. Զիթչյանի, Ս. Դավթյանի, Հ. Ղազարչյանի, Խ. Քարտաշյանի, բժիշկ Ա. Ղազարյանի կարծիքները, որոնք, սակայն, չեն տպագրվել: Որոշվում է կադմել ուղղագրական համադրական տախտակ:

Տասնչորսերորդ նիստում (28/XII 1926 թ.) որոշում են կազմել տառաձևերի համադրական տախտակ, որը հանձնարարվում է Լեոյին, Աճառյանին և Լևոնյանին: 25/I 1927 թ. (18-րդ նիստ) որոշում են շորս պրոֆեսորների զեկուցման հիման վրա կազմված ուղղագրական համադրական տախտակը կարծիքի ուղարկել հետևյալ հայազետներին՝ Ն. Ադոնց, Ս. Դավիթ-բեկ, Թորգոմ Գուշակյան (եպիսկոպոս), Եղ. Դուրյան (եպիսկոպոս), Յ. Կարստ, Ն. Մառ, Ա. Մեյս, Յ. Մարկվարտ, Մակլեր, Լ. Մսերյան, Ա. Չոբանյան, Հ. Օրբելի, Տոմսոն, Բոթթ և Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյաններ:

Նախ ծանոթանանք այդ զեկուցումների բովանդակությանն ու զեկուցողների առաջարկներին:

Նշենք այն ընդհանուր դրույթները, որ արտահայտել են նրանք՝ հարցը քննելով գիտական, մանկավարժական և տեխնիկական տեսանկյունից:

Գրության հնչյունային փոփոխությունները մնում է միակ ճշմարիտն ու գիտականը և պիտի ձգտել, որ այն գեթ բավարար չափով կատարվի: Այս իմաստով ուղղագրության բարեփոխման պահանջն զգում են գրեթե բոլոր լեզուները, բայց ամենաքաղաքակիրթ ժողովուրդներն էլ չեն կարողանում այդ հարցը լուծել: Դրան խանգարում են երեք հանգամանք. 1. Բառի ընդունված ձևի որևէ փոփոխություն քանդում է բառապատկերը, դանդաղեցնում մտապատկերի վերարտադրությունը, խանգարում իմաստի հետ զուգորդություն կազմելուն, այդ պատճառով էլ մարդը լեզվի հարցում պահպանողական

է, դժվար է ընդունում նոր ձևերը: 2. Յուրաքանչյուր գրականություն տվյալ ժողովրդի երկար ջանքերի նյութական ու բարոյական աշխատանքի արդյունք է, լեզվական հին ձևերը մեզ կապում են այդ հարուստ ժառանգության հետ: Փոխել հին ձևերը, ուղղագրությունը, նշանակում է խզել կապերը հին գրականությունից, որը ցանկալի չէ, ահա թե ինչու ավանդականությունը զորեղ ուժ է: 3. Յուրաքանչյուր լեզու խոսվածքներ ու բարբառներ ունի, ուստի և՛ ոչ միասնական արտասանություն: Այս դեպքում ժողովրդին միացնողը միասնական գրական լեզուն է՝ իր միասնական ուղղագրությամբ:

Գրական լեզուն, սակայն, կտրված չէ կենդանի լեզվից, նրանից թարմություն ու կենսունակություն է ստանում: Երբ մեծանում է արտասանության և գրության տարբերությունը, կարիք է զգացվում փոխել վերջինիս կանոնները: Ճիշտ է, հին սերնդին դժվար է ավանդականից հրաժարվել, բայց կա մի զորեղ ուժ՝ նոր սերնդին դյուրություն ընծայելու պահանջը, հասարակության շահը: Ուղղագրական բարեփոխումները, սակայն, չպիտի միանգամից կատարել, չի կարելի բառապատկերը անճանաչելի դարձնել, ինչպես արել է Աբեղյանը: Բարեփոխելիս պիտի հաշվի առնել նաև ստուգաբանությունը, գրության տեխնիկական կողմը: Աբեղյանն իր առաջարկները փաստարկել է գիտական, մանկավարժական և հնչական տեսակետով, ասում է Աճառյանը և հիշեցնում, որ ինքը դեռ իր «Ասլանբեկի բարբառի քննութիւնը» (1898) և «Բարբառագիտութիւն» (1911) աշխատություններում բարբառային բնագրերը հրատարակել է հնչական ուղղագրությամբ, միայն թե ինքն օգտագործել է է, օ տառերը, իսկ Աբեղյանը՝ ե, ո: Աբեղյանի առաջարկներից շատերը, օրինակ, բառավերջի անձայն յ-ն չգրելը, լ-ի և վահնչյուն ու-ի փոխարեն վ տառն օգտագործելը, վազուց են իրագործվում, այնպես որ հնչական տեսակետից նրա բարեփոխության մեծ մասն արդարանում է: Բայց նոր ուղղագրությունը, ասում են Աճառյանը և մյուսները, այնպես է կազմված, որ հինը մոռացվում է, սա է նրա ամենախոցելի տեղը, որովհետև դրանով ոչնչացման ենք դատապարտում մեր դարերի գանձ գրականությունը, իսկ հանուն ինչի՞ կատարենք այդ դարհուրելի զոհաբերությունը, հարցնում է Աճառյանը:

Իրենց առաջարկներում զեկուցողները մերժում են բառասկզբի յե (յերեալ, յեկել), վո (վոխակալ, վորքան) գրությունները, դեմ են իւ, եա փոխել յու, յա տառակապակցություններով, ե տառից հետո յ գրելուն, ինչպես՝ գրելու յեմ, գրելի ձևերում: Առաջարկում

են բառասկզբում ye հնչյունակապակցությունն արտահայտել ե տառով, ո յո հնչյունակապակցությունը՝ ո (երազ, ռխակալ, որքան, երևալ), օ հնչյունը՝ է տառով, օ հնչյունը՝ օ, բառաբարդման կամ ածանցման ժամանակ պահպանելով է-ն ու օ-ն (էական, օրական, ամենաէական, ամենօրեա)։

Համաձայն են Վ հնչյունն ամենուրեք արտահայտել վ տառով, բառավերջից գցել անձայն յ-ն, ույ հնչող ոյ տառակապակցության փոխարեն գրել ույ, օտար բառերի բառասկզբի օ-ն արտահայտել օ տառով։ Առաջարկում են միօրինակության բերել կրկնակի գրություն ունեցող բառերը և արևելահայ ու արևմտահայ տառադարձությունը։

Մնացած հարցերում կարծիքները տարբերվում են։ Հր. Աճառյանն առաջարկում է բարեփոխել նաև բաղաձայնների ուղղագրությունը։ Եթե որևէ բաղաձայն երկու գրական լեզուներում և բարբառների մեծ մասում հնչում է մի կերպ, գրվում մի ալլ կերպ, պետք է գրությունը փոխել հնչման համապատասխան, օրինակ, հաջել, խաբել, ամեն բառերը ամենուրեք արտասանվում են՝ հաչել, խափել, ամմեն, ուրեմն պիտի այդպես էլ գրել։

Աս. Խաչատրյանը հակասության մեջ է ընկնում. հակառակ մյուս երեքի, առաջարկում է, մի կողմից, պահպանել նախնյաց՝ եի, եիւ, հեի, մարգարեի, թե, եթե, գրեի, գիտեւ, Վաչեի ձևերը, մյուս կողմից՝ բառասկզբի Ե-ն արտահայտել է տառով։ Համաձայն է բառասկզբի ո յո հնչյունակապակցությունն արտահայտել վո տառակապակցությամբ, ավելին, նրա կարծիքով բառամիջում էլ այդպես պիտի գրել, օրինակ, վորոգայթ, վոլորել, չվոլորեց, կըվոլորի և այլն, մինչդեռ Աբեղյանն այս դեպքում վ-ն չի գրում (չոլորեց, կոլորի)։ Առաջնությունը տալով բառերի կարճ ձևերին՝ Խաչատրյանն առաջարկում է օգտագործել բարբառային հնչյունափոխ ձևվերը՝ ձուն, գեղ, քուր, լուս, բուն, աղբուր, ալուր և այլն, փոխանակ ձին, գիւղ, քոյր, չոյս, բոյն, աղբիւր, ալիւր ձևերի։ Համաձայն է Աբեղյանի, Մալխասյանցի առաջարկին՝ չգրել որոշ բառերի բառասկզբի յ-ն՝ առաջաբան, աջողովթին, ավելված, անձնել, արգո, արձակել, իրավի, ուշարար, ուղարկավոր, ետ, ետո, անդուզն և այլն։ Դրանք այն բառերն են, որոնց յ-ն հավելում է, արմատինը չէ, ինչպես՝ առաջ—յառաջ, ավելված—յավելված, աջողություն—յաջողություն և այլն։ Այս առաջարկն, իհարկե, հարազատ է աշխարհաբարի ոգուն, բայց ոչ բոլոր բառերն առանց յ-ի տարածվեցին, մեծ մասամբ յ-ն պահեցին, որը մտավորականության ցանկությունն էր։

Ղափանցյանն առաջարկում է Լ-ն պահել իւ երկհնչյունում (ալիւր) և օտարազգի Ա-ն արտահայտելու համար (Յւրիս, Մւն-խեն), հունարեն Վ-ն արտահայտել ու տառով (ոկիանոս, Ոսաննա, Թոմաս, Յոսեփ), փոխառյալ բառերում պահպանել կրկնակ բաղաձայնները, և փակագիրն օգտագործել միայն իբրև շաղկապ, եթէ հնարավոր է ու-ի փոխարեն ստեղծել մեկ տառ, օտարազգի Վ-ն արտահայտել լ տառով, գրել Անգլիա, Գալիա, ոչ Անգլիա, Գաղիա: Ղ-ն պահել հին բառերում՝ Պողոս, Ղուկաս, Ղազար:

Մալխասյանցի կարծիքով՝ Է-ն պիտի պահել նաև բառամիջում ձայնավորին նախորդող դիրքում (պաշտոնէական), բէր, գէր, գէտ, հէր, մէր, սէր բառերում, տարբերելու համար բեր, գեր, հեր, մեր, սեր բառերից, բառավերջում (րոպէ, բազէ), բայերում (էիր, գրէի, գրեցէք): Առաջարկում է իբրև բացառութիւն օտարազգի ՎՕ հնչյունակապակցութիւնը բառասկզբում տառադարձել ՎՈ տառակապակցությամբ (Վոլգա, Վոլտեր), ճշակել գիտական ալբուբեն բարեւոները ճիշտ գրի առնելու համար:

Այս տարակարծութիւններից և ոչ մեկը չընդունվեց, որովհետև ծայրահեղ էին: Դիշտ չէր լինի ձեռք տալ բաղաձայնական համակարգին, այս հարցում Արեղյանն էր իրավացի: Ուղղագրութիւնը խճողող ավելորդ շեղումներ են հաշատրյանի առաջարկները ե—է հնչյունների, բարբառային ձևերի, ՎՕ հնչյունակապակցության գրութիւն վերաբերյալ, Ղափանցյանի առաջարկները Լ-ի և Ո-ի, օտարազգի բառերի կրկնակ բաղաձայնների գրութիւն մասին, Մալխասյանցի առաջարկները ե—է, օտարազգի հնչյունների գրութիւն մասին: Դրանք հակասում են հայերենի արտասանութիւնը և ավանդական ուղղագրութիւնը, ուստի, քնականաբար, չընդունվեցին:

Հանձնաժողովի նիստում հայերենի ուղղագրութիւն անցած ուղու մասին հետաքրքիր զեկուցումով հանդես է եկել պրոֆ. Առաքել Բաբախանյանը (Վեո):

Ահա շորս զեկուցողների առաջարկութիւնների հիման վրա կազմված այն ուղղագրական համադրական աղյուսակը, որ հանձնաժողովի որոշմամբ ուղարկվել է վերը հիշատակված գիտնականներին:

ՀԱՄԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ, ՈՐ ԱՐԵՆ ԵՆ ԶՈՐՍ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ

Հր. Անաոյան, Աս. Խաչատրյան, Գր. Ղափանցյան և Ստ. Մալխասյանց^{34ա}

Առաջարկություն	Կողմնակից	Հակառակ
1	2	3
I. Եվրոպական e հնչումը		
1. Բառասկզբում գրել լ և ոչ թե ե, ինչպես՝ էգ, էություն, էդիստե, էքսպերտ	չորսն էլ	
2. Բառի մեջ ձայնավորից առաջ գրել է և ոչ եյ, ինչպես՝ բուպեական, մարգարէություն, բէալական	Անաոյան Ղափանցյան Մալխասյանց	Խաչատրյան
3. Բառավերջում գրել լ, ինչպես՝ մարգարէ, գիտլ, հնէլ, վալէ	Անաոյան Ղափանցյան Մալխասյանց	Խաչատրյան
4. Բառի մեջ բաղաձայնից առաջ միշտ գրել ե, ինչպես՝ հանդես, հրավեր, սեր, կեստ	չորսն էլ	
5. Բայական թեքման ժամանակ հին է-երը պահել, ինչպես՝ գիտէք, գիտլք, գիտցէք	Ղափանցյան Մալխասյանց	Անաոյան Խաչատրյան
II. Եվրոպական ye հնչումը		
6. Բառասկզբում գրել ե և ոչ թե յե, ինչպես՝ ես, երկու, եզ	չորսն էլ	
III. Եվրոպական o հնչումը		
7. Բառասկզբում գրել o և ոչ ո, ինչպես՝ օդ, օգուտ, օր	չորսն էլ	
8. Բարդությանց և ածանցմանց մեջ պահելով ստորագրանական ճշտությունը, գրել o կամ ո, ինչպես՝ անօգուտ, տնօրինւլ, միջբրէական, անողորմ, անողոր	Ղափանցյան Մալխասյանց	Անաոյան Խաչատրյան
9. Բառամիջում գրել միշտ ո, ինչպես՝ Պողոս, կշիկ, կոալիցիոն, կոռուբերացիա, Պարոտ	չորսն էլ	
10. Բառավերջում գրել ո, ինչպես՝ Սաքո, Մկո, այո	չորսն էլ	
IV. Եվրոպական ov հնչումը		
11. Բառասկզբում գրել oլ և ոչ թե ով. այսպես՝ օլ, օվկիանոս, օվագիս	Անաոյան	Խաչատրյան Ղափանցյան Մալխասյանց
12. Հոնական օմեգա տառը արտահայտել ո տառով բառամիջում և օ տառով բառասկզբում և ոչ թե ով, ինչպես՝ Թոմաս, Յոսեփ, Օսաննա, օկիանոս	Ղափանցյան	մյուսները համարում են լեզվական խնդիր

1	2	3
V. Եվրոպական ՎՕ հնչումը		
13. Բառասկզբում գրել ո և ոչ թե վո. ինչպես՝ ու, սորդ, որդի, որ, որպիսին, որքան, որտեղ, ոչ-նաշար	Աճառյան Ղափանցյան Մալխասյանց	հաշատրյան (առաջարկում է վո)
VI. Եվրոպական Վ հնչումը		
14. Ամեն դեպքում գրել վ և ոչ թե մերթ ւ, մերթ ու, մերթ վ, ինչպես՝ ավազ, աղնիվ, հողված, նվաստ շորան էլ		
Մանեթուրյուն.— և փակազրի գործածությունն ընդունել, ինչպես՝ արևելք, տերև, թեև	Աճառյան հաշատրյան Մալխասյանց	Ղափանցյան (ընդունում է և-ը միայն իրբև շաղկապ)
VII. Եվրոպական սյ (ույ) հնչումը		
15. Ամեն դեպքում գրել ույ, ինչպես՝ բույս, լույս, կույր, և ոչ թե՝ բոյս, լոյս, կոյր Մանեթուրյուն.— Ոյ գրությունը կարգալ միշտ ոյ, ինչպես կոյուղի, գոյական, նոյ, խոյ . . .		շորան էլ
VIII. Յ գրի մասին		
16. Յ գիրը բառասկզբում վերածել ե-ի, ինչպես՝ հարմար, հղի, հուլիս	Աճառյան հաշատրյան	Ղափանցյան Մալխասյանց (պահել յ-ն)
17. Բառասկզբում դեն գցել որտեղ կարելի է, ինչպես՝ ետ, առաջ, եսան	Ղափանցյան հաշատրյան Մալխասյանց	Աճառյան (համարում է լեզվական)
18. Բառավերջում անձայն յ չգրել, ինչպես՝ վկա ծառա, պաշտոնյա		շորան էլ
19. Զգրել ա և ի ձայնավորների միջև, ինչպես՝ վկաի, ազգաին	հաշատրյան Մալխասյանց	Աճառյան Ղափանցյան
IX. Իւ		
20. Իւ գրությունը սլահել անփոփոխ, ինչպես՝ միութին, գիւղ, թիւրք, և ոչ թե՝ միություն, գյուղ, թյուրք		շորան էլ
X. Եա		
21. Եա գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ կեանք, մեծութեան, պաշտոնեա, Մամիկոնեան շորան էլ		
XI. Եօ		
22. Եօ գրությունը վերածել եօ-ի, ինչպես եօթը, արգեթք, և ոչ թե՝ յոթը, արգյոթք, կամ՝ եօթը, շորան էլ		

1	2	3
արդեօք		
XII. Բաղաձայնների մասին		Մալխասյանց
23. Եվրոպական բառերի կրկնակ բաղաձայնները հայերենի մեջ պահել, ինչպես՝ կոլլեկտիվ, ապարատ, մասսա, կոմմունա	Չափանցյան	Աճառյան Խաչատրյան (համարում են լեզվական)

1927 թ. ապրիլի 5-ին (29-րդ նիստ) հանձնաժողովում կարգացված է Ա. Մեյեի պատասխանը՝ ֆրանսերեն գրված, որի թարգմանությունը տպագրված է «Տեղեկագրում» (էջ 164—165): Մեյեն գրում է, որ սկզբունքային մի հաշց պիտի որոշել՝ արդյո՞ք հայերեն գրում են այնպես, ինչպես երբեք չեն գրել: Ազգը պիտի հաշվի առնի, որ 1500 տարուց ավելի է, ինչ հայերենը գրվում է: Հաշվի պիտի առնել ավանդականը՝ հարմարվելով արդի պահանջներին: Ընթերցողը շատ անվարժ չպիտի զգա իրեն՝ բարեփոխումից առաջ տպագրված գրքերը կարդալիս: Այս ընդհանուր ճիշտ դրույթից հետո Մեյեն պատասխանում է հարցերին: 1. Տարակույս չկա, որ բառասկզբում պիտի գրել է, 2. բառամիջում եյ չգրել, այլ՝ է, 3. բանի որ է տառը կա, բառավերջում նույնպես գրել է, ինչո՞ւ ջնջել ավանդականը, 4. համաձայն է բառամիջում բաղաձայնից առաջ գրել ե (կես, հանդես), 5. դեմ է բայերի մեջ հին է-ն պահել, պիտի հավատարիմ մնալ 4-րդ կետի սկզբունքին, ունենալ ընդհանուր կանոն, 6. բառասկզբում գրել ե, ոչ՝ յե, ըստ ավանդության, որը շատ պարզ է, 7. կասկած չկա, որ բառասկզբում պիտի գրել օ, իսկ բառամիջում՝ օ—ո (8—9), 10. բառավերջում գրել ո, 11. տրամաբանությունը պահանջում է բառասկզբում գրել օվ, ոչ՝ ով, 12. համաձայն ընդհանուր կանոնի հունական օմեզան բառասկզբում պիտի գրել օ, բառամիջում՝ ո, 13. ավանդության համաձայն բառասկզբում գրել ո տառը, 14. վ՝, Վ տառերի տարբերությունն այլևս իմաստ չունի, ես կգրեմ՝ տերեվ և ալլն, 15. հնարավոր է ույ գրել, բայց ոյ-ը պարզ է, քաղաձայնից առաջ երկիմաստ չէ: Այս հարցում պրոֆեսորն ուզում է պահպանողական լինել, 16. բառասկզբում, անկասկած, պիտի ն գրել, յ-ն պահելը շատ վատ կլինի, 17. բառավերջի անձայն յ-ն չգրել, 18. գրել վկա և ալլն, 19. եթե հնչում մենք vkayi, պիտի գրենք վկայի, 20, 21. իւ, եա-ն պահել անփոփոխ, 22. սկզբունքը պահանջում է եօ-ի տեղ գրել

ևո, 23. ու, իւ, ևա երկհնչյունները պարզ են, ուստի նոր տառերը բոլորովին ավելորդ են, 24. պետք է հետևել հայկական արտասանութեանը, որտեղ պարզ է հնչում, պիտի պարզ բաղաձայն դնել: Վերջում գրում է, թե ինքը հետևում է հնչյունային սկզբունքին, բայց ավանդականից էլ հետևում է միայն անհրաժեշտութեան դեպքում:

Իր պատասխանում ն. Մառը նախ դժգոհում է, որ հանձնաժողովը աղյուսակը կազմելիս իր հայացքները հաշվի չի առել³⁴, հետո գրում է իր առաջարկները. 1. եվրոպական Ե հնչումը կա՛մ պահել պատմական ուղղագրութեամբ, կա՛մ միշտ և ամենուրեք դրել և տառով, 2. եվրոպական յԵ հնչումը միշտ և ամենուրեք գրել յև տառակապակցությամբ, 3. եվրոպական օ հնչումը գրել մեկ տառով՝ օ կամ ո, 4. եվրոպական ՕՄ հնչումը գրել կա՛մ օվ, կա՛մ միայն ով ձևով, 5. եվրոպական ՎՕ հնչումը դրել կա՛մ միայն վօ, կա՛մ միայն վո տառակապակցությամբ, 6. եվրոպական Վ հնչումը միշտ գրել վ տառով, բնավ չպահել փակագիր և-ը, 7. եվրոպական ԱԿ (ույ) հնչումը գրել ոյ, ու-ի փոխարեն՝ Վ տառը, 8. բառասկզբի յ-ի փոխարեն գրել և, 9. իւ-ն գրել իւ, 10. եա-ն գրել յա, 11. եօ-ն՝ յօ կամ յո, 12. ստեղծել միատառ գրություն, ու-ի փոխարեն գրել Վ տառը:

Հանձնաժողովի նիստում հայտնվում է, որ Վիեննայի Մխիթարյանները երեք հմուտ միաբաններից կազմել էն մասնաժողով, որի որոշումը կողարկվի տպագիր: Սակայն այդ որոշումը ըստ երևույթին, տեղ չի հասել: Փարիզից ստացվել է պրոֆ. Նիկ. Ադոնցի նամակը՝ մի ընդարձակ գիտականորեն հիմնավորված պատասխանով, որը, սակայն, ուշացման պատճառով չի տպագրվել: Որոշվել է առաջիկայում այն տպագրել Ստ. Կանայանի ղեկուցման հետ, այդ էլ չի արվել:

Այդ պատասխանը հրապարակվում է միայն 1967 թվականին, պրոֆ. Պ. Հակոբյանի կողմից³⁵, երբ այդ հարցն արդեն վաղուց օրակարգից հանված էր, և «Հանդեսի» խմբագրությունն էլ զգուշացնում է, թե տպագրելով այդ նամակը՝ «նպատակ չունի վերարժարծել հայոց լեզվի ուղղագրության խնդիրը»: Համառոտ ներկայացնենք Ադոնցի սկզբունքներն ու առաջարկները:

Ուղղագրությունը սահմանելիս հաշվի է առնվում հնչական հավատարմությունը, միօրինակությունը և լեզվապատմական կողմը: Նոր գրական լեզվի դայակներից մեկը (բարբառները) չկա, մնացել է մեկը՝ գրաբարը: Գրական լեզուն, իր ինքնուրույնությունը պահելով հանդերձ, բնավ պետք չունեցավ հրաժարվելու իր պատ-

մական ժառանգությունից և լաջնարձակ շահավետեց հին լեզուն։ Արդի լեզուն կիսով չափ գրաբար դարձավ, և հին շտեմարանը դեռ սպառնալից է նոր գրականի համար։ Այս նկատառումով էլ խոստելի է այն ամենը, ինչ խտրոց է ծառայում հնի և նորի միջև։ «Եթե աշխարհաբարը սևփական ուղղագրություն մշակե, որպիսին է Կոմիտասի պաշտոնական նորածն ուղղագրությունը, բնական է, որ արտաքուստ պիտի անջատվի իր մորից, պիտի դժվարեցնե հնի ուսուցումը, որով ամենից առաջ և մեծապես վնասելու է աշխարհաբարի շահերին» (ՊԲՀ, 158)։ Ահա թե ինչու չի կարելի բարեկամ լինել այն ուղղագրական հեղաշրջմանը, որը բռնություն է Հայերենը իր հասակակիցներից հղակիններից է, որ կարիք չունի արմատական փոփոխություն։ Գրեթե բոլոր քաղաքակիրթ լեզուներում սոսանցանելի խորխորատ կա գրի և հնչյունի միջև, բայց պահում են հին գրությունը, որ չեղծեն լեզվի պատմական պատկերը, մոռացության շտան այդ լեզվով ամրացված դարավոր հարստությունը, անցյալի ճոխ զրականությունը։ Եթե զորավոր լեզուներն սյգքան զգույշ են և կառչած են մնում իրենց անցյալին, մեր տկար և անպաշտպան լեզուն, որի գոյության միակ զորեղ խարխախտ անցյալն է, ավելի իրավունք ունի։ Ադոնցն իր ուրախությունն է հայտնում, որ «հանձնաժողովը ջանացել է վերականգնել Մեսրոբյան ուղղագրությունը ընդդեմ նորամուլ ոտնձգությունների»։

Խոցելի է 14-րդ կետը։ Ապոփինի է այդ աշառու վեմապիրությունը։ Վ-ն քիչ գործածական է, Ե-ը՝ շատ, ինչու՞ շատ գործածականը փոխարինենք քիչ գործածականով։ Անընդունելի է հաև Վ հնչում ունեցող ու-ի փոխարեն վ տառը գրելը։ «Անցյալներում ուրիշների թվում ևս ևս կարելի էի գտնում ձայնավորից նախադաս ու-ն սղել Ե-ի»։ Այս թեթև նորածնությունն անգամ ժողովրդակա-նություն չգտավ և նախկին ու-ն պահեց իր դիրքը։ Ու-երի սղումը Ե-երի կարծես խճողում է լեզուն նոր բուղաձայնով և վնասում նվագայնությանը։ Տարբեր հնչում ունեն հատված կամ հատած և հատում բառերը, մեկը ակամայից պիտի հնչվի հատված, հատած, մյուսը՝ հա-տում, ա-տում։ Եթե ստիպված են թողնել պապե-նական հատում-ը, հատած-ը գերադասելի է հատված-ից, Վ հնչյունի երեք գրով արտահայտությունը՝ բառակզբում և ու-ից հետո վ, ձայնավորին նախորդող դիրքում ու, մնացած դեպքերում Ե, մեկուկես հաղարամյակ իրար հետ հաշտ ապրում են։ Եթե բուն ցանկություն կա տառերի թիվը կոճատելու, զոհ պիտի վ-ն լինի, այդ դեպքում բառակզբում գրելու է Ե, իսկ ու-ից հետո ու, ինչպես ֆրանսերեն ai :

Խոտելի է համարում ոչ-ը ուչ-ով փոխարինելը: Ավելի հասկանալի կլինեն ուչ-ի փոխարեն ժողովրդական ու-ն գրել՝ լոյս>լուս, բոյս>բուս, գուցե և հավանելի: Դժվար է համոզել, որ երեքտառ ուչ-ը երկտառ ոչ-ից հաճելի է: Եթե ուչ>ուչ փոփոխությունը նրա համար է, որ ուչ կապակցությունը միայն **օյ** կարդացվի, կարիք չկա, որովհետև ուչ-ով միայն մի բառ կա՝ խոչ-ը: Հայերենը հնուց խուսափում է ուչ գրությունից, զենու-յ-ը գրվում է զենույր և ոչ զենույր: Ուչ-ը վաղուց է ուչ հնչում, ուրեմն պահենք հին հնչումը:

Հնդունելի է բառավերջի անձայն յ-ն չգրելը: Բայց չի եւրելի բառամիջում ձայնավորների միջև չափող յ-ն չգրել: Ինչպե՞ս կարելի է գրել վկաի, Սաքոի, վկաից, Սաքոից, բայց՝ վկայով, Սաքոյով: Այս անհետևողականությունը սխալների դուռ է բաց անում: Հայը չի հանդուրժում ձայնական հորանջ (hiatus), նա չի կարող երկու ձայնավոր իրար ետևից արտասանել, նրանց միջև չ է արտասանում, ինչպես որ երկու բաղաձայնի միջև ը է արտասանում: Նշանակում է պիտի հրաժարվել 19-րդ կետից և գրել վկայի, վկայից, վկայով:

Եթե հետևողական լինենք, բառավերջի է-ն պիտի փոխարինենք ե-ով, որովհետև է>եյ, վկայ-ը դարձնում ենք վկա, մարգարեյ-ն էլ պիտի դարձնենք մարգարե, և վկայի, վկայով ձևերի հետևությամբ էլ գրենք մարգարեյի, բազեյի: Այս դեպքում էլ հետևողականության համար պիտի գրել բազե, մարդարե, և ոչ՝ բազե: Եթե գրաբարի սիրելի, սիրելի ձևերի նման գրենք բազեի, մարգարեի, բազեով, մարգարեով, մարգարեական, բազեակիր, այդ դեպքում եռ (էռ), եա (էա) հնչյունները պիտի շփոթի տեղիք տան, քանի որ եռ=yo, իսկ եա=ya համաձայն 21, 22 կետերի: Միակ լուծումն է հաշտվել ավանդական գրության հետ:

Գրաբարում բայերի է, էք վերջավորությունները ստուգաբանական հիմք ունեն՝ սիրելյր (նման աղայր) տալիս է սիրէր, սիրեյ-ը (նման աղայ)՝ սիրէ: Աշխարհաբարում այդ հիմքը չկա՝ աղար և ոչ՝ աղայր, ուստի՝ սիրե՜ր և ոչ՝ սիրելյր, սիրէ: Որոշակի չի ասված՝ աղա պիտի գրել, թե՛ աղայ, եթե պիտի աղա գրել, այդ դեպքում կգրվի սիրե, ոչ՝ սիրէ, հակառակ 3-րդ կետի: Է-երի խընդիրը, մանավանդ վերջահանգ, պետք ունի վերաքննության:

Որքան հնարավոր է կրճատել է-երի գրությունը, բայց դա այնքան կտրուկ չանել, որ շփոթվեն սեւ և սէւ, գետ և գէտ և նման բառերը: Մի շարք բառեր բարվոք է ե-ով գրել, ինչպես՝ երբեք, մեկ, հեք, աղետ, քերես և այլն:

Տասնմեկերորդ կեսը ծանր վճիռ է մի հատիկով ղերանվան նկատմամբ: Քանի որ ուլ-ը բացարձակ եզակի է, կարելի է թողնել հին գրությունը:

23-րդ կետի միատառ գրերը, ու, իւ, եա հնչյունների համար, ինչպես և և փակագիրը ավելորդ են: Պիտի գրել՝ եւ, ու, իւ, եա, նոր տառի կարիք չկա:

«Ո՛չ զուտ լեզվագիտական, ո՛չ մանկավարժական և ո՛չ անգամ գործնական որևէ լուրջ հիմք չեմ տեսնում շեղվելու ավանդական ուղղագրության սկզբունքներից: Եթե արդի մանուկ լեզվի շահը պահանջեր, կանցնեի առանց տատանվելու բոլոր հիշյալ կամուրջները: Սակայն հենց այդ շահի գիտակցությունն է, որ հակառակն է թելադրում: Պահել, պահպանել ամեն կարգի կապեր մայր լեզվի, հին գրական լեզվի հետ՝ աշխարհիկ լեզվի կենսական շահերից էականն է: Նոր գրականում չկա ոչ մի հնչական տարր, որ անծանոթ լինի գրաբարին: Այս մի հաստատուն հիմ է ուղղագրական համերաշխության»: «Արդի ուղղագրության մեջ ներելի են այնպիսի սրբագրություններ և գուցե հարկավոր, որոնք ընդունելի են նաև գրաբարի տեսակետից, որոնք չեն խախտում, չեն կտրում նորը հնի հետ կապող օղակները: Միայն ծայրահեղ ստիպողական հարկը կարող է արդարացնել այս սկզբունքի խաթարումը» (էջ 162): Բառակազմի 3-երի ղեղը կամ փոխարինումը հ-ով (16 և 17 կետեր), ինչպես և սեր—սէր, հօտ—հոտ և նման հոմանունների հավասարեցումը (4 և 9 կետեր) հետևանք են շաբլոնականության, ուր իմաստն անգամ ղոհվում է ձևին:

Անդրադառնալով օտար բառերի ուղղագրությանը՝ Ադոնցը դժգոհում է, որ հայ բառերը «խոնարհվում են եկվորների առաջ, որ նրանց հաճույքով միևնույն գիրն ստանան»: «Հաճելի չեն,—ասում է նա,—ցուցակի վերնագիրները՝ «Եւրոպական» այս կամ այն հրնչյունը, որ կարող է կարծել տալ, իբր թե վերաքննությունը նպատակ ունի համակերպել, հարմարացնել հայ այբուբենը եվրոպական հնչյուններին» (էջ 163): Մինչդեռ քննվում է հայ հնչյունների և նրանց գրերի փոփոխությունը և ոչ թե օտար հնչյունները: «Յուրաքանչյուր լեզու ուղղագրական ներդաշնակ սիստեմ կարող է մշակել միայն իր սեփական բառամթերքի հնչական շրջանում: Օտարամուտ բառերը եթե միջամտեն ուղղագրական կանոններ մշակելիս, շփոթ կառաջացնեն, քանի որ ծագում են ուրիշ լեզվական և հնչական մթնոլորտից և կարող են հաճախ անմարսելի լինել հյուրընկալող լեզվի համար: Օտար բառը պիտի հնչել այնպես, ինչպես ներում է սեփական լեզվի կարողությունը: Երբ օտար բառը ժո-

դովորդից է անցնում դրականություն, տաշվում, չղկվում է, հայացվում, ինչպես հունարեն *ἔχκελγαι* բառից հայերեն եկեղեցին, իսկ եթե գրականության միջոցով է անցնում լեզվին, պահպանում է իր օտար տարազը: Պիտի փոխառյալ բառերը հայացնել, ենթարկել հայերենի օրենքներին: Այսպես, ֆրանսիացիք կարող են արտասանել շ, ց տառեր, բայց իրենց նեղություն չեն տալիս և Черновец-ը արտասանում են շերնովիշ, իսկ մենք ուզում ենք Горький արտասանել Գորեկիյ, ծամածոկոկ մեր լեզուն, մինչդեռ եվրոպացիք բավականանում են Gorki ձևով:

Օ, Ե գրերի տառադարձությունը քմահաճությանը նյութ է դարձել գրողների գրչի տակ: Շատերը խարվելով օտար օ-ի և հայերեն օ-ի (=աւ) նմանությունից, ամեն տեղ գրում են օ: Կարծելով, թե ե-ն յե հնչյունի տառն է, օտար Ե-ն ամեն տեղ դարձնում են է: Այս խառնակ դրությունը վերջ տալու համար պիտի հիմք ընդունել հայերեն բառերի համար հանձնաժողովի առաջարկությունը՝ բառասկզբում գրել օ, է, բառամիջում՝ ո, ե, բառավերջում՝ ո, է: Եթե հայերեն բառերի համար սա ինչ-ինչ չափով վիճելի է, ապա օտար բառերի համար անխոցելի է: Մեր նախնիք գրում էին եկեղեցի, եպարքոս, եպիսկոպոս, եղեսիա, եղիսէ, այժմ էլ կարելի է ե-ով գրել, բայց զգուշացնել, որ կարդան էղեսիա, էպարքոս, էղիսն, թեև հանձնաժողովն առաջարկում է գրել էվրիպիտ, էվտիբես, Դպրոցն է բառասկզբի վո և յև հնչումն ստեղծել, ժողովուրդը խուսափում է դրանից, նա նախընտրում է օ և է հնչումը: Պիտի գրել՝ Եղանդ, Ետրուկ, Որմիդդ, Ողիսև, Որիգեն, Որեստ կամ Ովրեստ, Որիոն կամ Ովրիոն, ինչպես և որդան, ոպերացիա, կոոպերացիա և այլն:

Վերջում Ադոնցն զգուշացնում է հաշվի առնել նաև մի հանգամանք, նոր ուղղագրությունը արևմտահայությունը ընդունեց, նույնիսկ մի հետևող շունեցավ, կասկած չկա, որ այդպես է վարվելու նաև այժմ: «Նորապես ցավալի է, եթե այն պահին, երբ հայրենիքն իր կառավարչական և հասարակական ուժերով ջանալու է իրեն քաշել աշխարհահալած զավակները, ուղղագրության խնդիրը նոր անջրպետ հանդիսանար և փոխանակ մերձեցնելու երկու գրական լեզուները, ուղղագրական սեպով ընդլայնել եղա՞ պառակտումը» (էջ 165): Նոր ուղղագրությունը ընդունելի է, եթե շահել է հանրության հավանությունը: Այս բոլորից հետո Ադոնցը եզրակացնում է.

1. Նորալուր ուղղագրությունը... ջնջելու է իսպառ և վերականգնելու ավանդականը: Այս անկասկած է:

2. Հանձնաժողովի աշխատանքի արդյունքը չպիտի ստիպողական լինի, պետությունը նույնպես ձեռնպահ պիտի մնա վաղաժամ միջամտությունից: Ուղղագրությունը միայն մասնագետների գործ չէ, այլև համայն մտավորականության, ընթերցող և գրող հասարակության: Հանրության վերաբերմունքը պիտի որոշի գործի ելքը:

3. Անհրաժեշտ է հրատարակել մի ժողովածուի մեջ բոլոր դեկուցումները, կարծիքները և այն հիմքերը, որոնցով հանձնաժողովը եղրակացություն է եկել, հանձնել հասարակության, հանրության քննությանը և լսել նրա կարծիքը:

Հանձնաժողովի հարցերին պատասխանել է նաև բեյրութահայ բանասեր Խ. Պ. Քարտաշյանը, որը հարբերդի հայրենակցական միության վարչությունը հրատարակել է առանձին գրքույկով³⁶: Հեղինակը՝ 1. անընդունելի է համարում բառամիջում բաղաձայնից առաջ միշտ և գրելը, որովհետև իր կարծիքով հաճախ բառամիջում են ու է-ն հնչումով տարբերվում են: է-ն թեքման ժամանակ ի-ի է փոխվում: Քանի որ օ-ով սկսվող բառերը բարդության կամ ածանցման ժամանակ բառամիջում պահպանում են օ-ն, թող է-ն էլ պահպանվի: Ունենք օր—միջօրե, ունենանք նաև էջք—վայրէջք: 2. Պահպանել բայերի մեջ էք. էի, էիր (խոսէի, խոսէիր, նստէ, նստէիր) և մյուս ձևերը: 3. Ընդունելով սլարո բառերի օ-ն ու-ով փոխելու առաջարկը, քննադատում է վենետիկի միաբանության հանձնաժողովի (Գ. Վ. Նահապետյան, Վ. Հացունի, Ա. Ղազիկյան) առարկությունը, թե սլարո պահել նաև այն օ-երը, որոնք աւ-ից են գոյացել, ստուգաբանական ճշտությունը պահելու համար: Բառամիջում օ-ն ու ո-ն միատեսակ են հնչում, կոշիկ և կոշիկ միանման են կարդացվում, օգուտ ձևից անօգուտ գրելը երեխային էլ է հասկանալի, դրան օգնում է տեսապատկերը: Իսկ կոշիկ գրելու համար երեխան պիտի հիշի հնագույն՝ կաշիկ ձևը, որը երեխային անծանոթ է. մի անծանոթ բան՝ կոշիկ, մի այլ անծանոթ բանով ինչպե՞ս սովորեցնել: Միայն իրավացի են Վենետիկցիները՝ պահանջելով, որ հոգնակի գործիական հոլովը գրվի օ-ով (արդեօք, ընտանեօք): Օտար բառերի սկզբի օվ-ը, հունական օմեգան բառասկզբում օ-ով, բառամիջում ու-ով արտահայտելու վենետիկցիները սրան առարկում են, թե հարկ չկա միևնույն հնչյունը (օ) երկու տառով արտահայտել:

4. Առաջարկում է բաղաձայնական ու-ի փոխարեն գրել տառը (նեւր): Դրանով կազատվենք ուտ կուտակումից (գրուում>

գրում): Վենետիկցիների առարկումը, թե դրանով բազի ստուգաբանությունն է մթագնվում, ճիշտ չէ: Դա հեշտ է բացատրել հրնշյունափոխության օրենքով: Ճիշտ են Վենետիկցիները այս ու-ի փոխարեն վ գրելուն (աստված, լեղվական, թթված, հերվան) դեմ լինելով: Վենետիկցիները դեմ են ոչ>ույ փոփոխությանը, բայց ճիշտ չեն: Եթե ոչ-ը միայն այդ հնչման համար գործածենք (խոյ), այդ դեպքում նոր սերունդը նախնայաց գրքերի ոչ-ն էլ ոչ կկարդա, կարծելով, թե նրանք ույ չեն ունեցել: Այս խզումը լավ չէ: Կողմ է ոչ-ը ույ դարձնել:

5. Սխալ է համարում բառասկզբի յ-ն ի դարձնել:

6. Վենետիկցիները բառասկզբի յ-ն գրելը թողնում են հեղինակի հայեցողության, ինքը համաձայն է գցելուն (որ որ կարելի է), դեմ են բառավերջի անձայն յ-ն գցելուն՝ սլատճառաբանելով յ-ով վերջացող բառերի սահմանափակությամբ և դարավոր պատմությամբ: Քարտաշյանը չի ընդունում այս պատճառները, կողմ է գցելուն, նույնիսկ բառամիջում, ինչպես ը-ն:

7. Եւ-ի փոխարեն նոր տառ չի կարելի ստեղծել, ճիշտ են Վենետիկցիները: Հակառակ Վենետիկցիների ինքը համաձայն է ու-ի և իւ-ի տեղ միատառ նշան հնարելուն: Դեմ է եւ>եւ փոփոխությանը:

8. Համաձայն է Վենետիկցիների հետ՝ օտար կրկնակ բաղաձայնի հարցը թողնել գրողի հայեցողությանը:

Հեղինակն առանձնակի անդրադառնում է Վենետիկցիների առարկումներին և հակասություն տեսնում նրանցում: Օտար լեզուները օրինակ բերելու, բազմադարյան սովորությամբ պատճառաբանելու միջոցը շարաշահում են նրանք, բացառություններից խուսափելով՝ իրենք թույլ են տալիս բացառություններ կամ ընդունում են հնից եկած բացառությունները: «Աբեղյան և Վենետյանները երկու ծայրահեղ բևեռներ են», — գրում է նա (էջ 24): Վերջում բերված են արևմտահայ մտավորականներից մի քանիսի կարծիքները: «Նոր ուղղագրութիւնը որքան որ լեզուական խեղաթիւրում մը ըլլայ, ունի իր բարիքը... ան իր ժամանակաւոր վնասներէն զատ պիտի ունենայ իր օգտակար մասերը»: (Հ. Ս. Երամյան): «Անուրանալի է, որ մեր հայերէնի արդի ուղղագրութեան մեջ սրբագրելի կետեր կան» (Թաբգէն եպիսկ.): «Պ. Մ. Աբեղեան ուզած է պարզել ու դիւրացնել հայերէնի կնճռոտ ուղղագրութիւնը, նպատակը շատ գովելի է, այլ գործադրութիւնը շատ պակասաւոր» (Մինաս Զեւրազ): Ուղղագրության բարեփոխությունը ոչ թե մասնագետների համար է, այլ ժողովրդի, նրա մանուկների:

Հեղինակը բուն վտանգը հայերենի բաղաձայնների եռաստի-
ճանի կորուստն է համարում, հին տառադարձությունից շեղվելը:
Սրա մասին պիտի մտածել, ասում է նա:

1926 թ. նոյեմբերից սկսել է գործել վերը նշված մանկավար-
ժական ենթահանձնաժողովը՝ նախագահությամբ Մ. Տեր-Մարտի-
րոսյանի, քարտուղարությամբ Արշակ Մեհրաբյանի:

Երկրորդ նիստում որոշվում է՝ ամեն դեպքում օ լսելիս գրել
ո, բառասկզբում լսվող վ-ն գրել (վոր, վորքան):

Երրորդ նիստում՝ բառասկզբում է լսելիս գրել է (էջ, էգուց.
էշ), իսկ յե լսելիս՝ ե (Երևան, երես, երեխա, ես, երբ), պաբզ բա-
ռերի բառամիջում գրել ե, կարդալ է (խենթ, չենք, բազե, շենք,
թեք): Օժանդակ բայը գրել ե-ով, եզակի երրորդ դեմքում պահել
է-ն (եմ, ես, է, եի, եիր, էր, եինք, եիք և այլն): Հանել Աբեղյանի
առաջարկը՝ ձայնավորին հաջորդելիս եմ, ես օժանդակ բային յ ա-
վելացնելու մասին, գրել՝ գնալու ևմ, գյուղացի էս, փոխանակ՝
գնալու յեմ, գյուղացի յես ձևերի:

Չորրորդ նիստում միաձայն (18 հոգի) որոշում են՝ ամենուրեք
և բաղաձայնի փոխարեն գրել վ տառը, լ-ն թողնել միայն ու և իւ
տառակապակցություններում, և-ը թողնել իբրև շաղկապ և սղա-
գրության նշան, տողադարձի ժամանակ, սակայն, գրել եվ (թեա-
վոր, բայց թե-վավոր): Վահնչյուն ու-ի փոխարեն գրել վ տառը
(աստված, նվեր): Ու-ն պահպանել այն դեպքում, երբ պահպանում
է իր ձայնավորական հնչյունը՝ երկուական, տիրացուական, վե-
րարկուի, վերակացուի և այլն:

Ույ հնչող ոյ-ի փոխարեն գրել ույ տառակապակցությունը
(լույս, հույս, կույս), ոյ-ը գրել միայն խոյ և նման արտասանու-
թյուն ունեցող բառերում: Մի շարք բառերում ոյ-ի փոխարեն գրել
ու, նկատի ունենալով արտասանությունը՝ զգուշ, մեղուշ, ուժ, ան-
ուշ և այլն: Բառասկզբի և հնչում ունեցող յ-ի փոխարեն գրել և
տառը: Ընդունել նախառեֆորմյան եա, իւ, եւ գրությունը (փոխա-
նակ եօ-ի):

Հաջորդ նիստում որոշվում է բառամիջում ա, ո ձայնավոր-
ներից հետո յ-ն գրել, իսկ ե, ի, ու տառերից հետո չգրել: Գրել՝
մարգարէական: Բառավերջի անձայն յ-ն չգրել:

Տեխնիկական տեսակետից հետաքրքիր զեկուցում է կարդա-
ցել Գարեգին Լևոնյանը՝ «Խնայողության հարցը հին և նոր ուղղա-
գրական սխատեմների մեջ» թեմայով:

Աբեղյանը «Արտիստ»-ի 16 էջը հաշվել է՝ համեմատելով հին
և նոր ուղղագրությունը, ստացվել է հետևյալ պատկերը: Էջը 30

տող ունի, տողը 30 տառ: Տասնվեց էջում ավելացել է վ տառը 66 հատ, յ-ն (յե) 89 և յ-ն էյի, էյու, յու կապակցություններում 50, ու-ն (լույս, փոխանակ լոյս) 26, ընդամենն ավելացել է 231 տառ: Պակասել են՝ յ-ն (ծառայ—ծառա) 36 հատ, ու-ն (զուարթ—զվարթ) 65. ընդամենը 101 տառ: Ուրեմն ավելացել է ընդամենը 130 տառ, որ հավասար է $4\frac{1}{2}$ տողի: Բառամիջում եա-ի փոխարեն յա գրելը շահեկան է, նույնպես և ու-ի փոխարեն վ գրելը (աստված), բայց յ-ի փոխարեն և գրելը շահեկան չէ, ինչպես և լ-ի փոխարեն վ գրելը:

Գ. Լեոնյանը նույն հաշվումները կատարել է «նորհրդային Հայաստանի» 1926 թ. № 262-ում: Ստացվել է, որ այդ համարում ավելի են օգտագործվել 844 յ, 395 վ, 93 լ, ընդամենը 1332 տառ: Նորով յ և ե տառերը պակասել են 52-ով (բառավերջի յ-ն և եա երկհնչյունի ե-ն): Մնում է ավելի օգտագործված 1280 տառ: Թերթըն ունի 4 էջ, էջը՝ 7 սյունակ, սյունակը՝ 140 տող, տողը՝ 27 տառ: Ուրեմն թերթն ունի 28 սյունակ, 3920 տող, 105,640 տառ, դրանց մեջ ավելորդ է 1280 տառ, որն անում է 47 տող 11 տառ, դա կազմում է թերթի $1/83$ մասը, նշանակում է յուրաքանչյուր 83-րդ համարը հին, նախաաբեղյանական ուղղագրությամբ ձրի կլինե, տարեկան 3—4 համար: Գրաշարը 1000 տպանշանը շարում է մեկ ժամում, ուրեմն 1280 ավելորդ տպանշանը կշառի 1 ժամ 17 րոպեում, 19 րոպե կորչում է սրբագրության համար, ընդամենը 1 ժամ 36 րոպե: 25 օր աշխատելիս բանվորը կորցնում է 40 ժամ, այսինքն 5 օր, որի դիմաց ստանում է լրացուցիչ 20 ռուբլի, որը տարեկան անում է 480 ժամ կամ 60 օր, 240 ռ. (ժամը 50 կոպեկով): Ահա թե ինչու Մալխասյանցը թուղթ ու թանաքի և ժամանակի հարցն էլ է առաջ քաշում:

Ուղղագրության և տառերի բարեփոխության հանձնաժողովի երկրորդ հարցը տպանիշների բարեփոխումն է եղել: Այս առթիվ լսվել են Լեոյի, Գ. Լեոնյանի, Հր. Աճառյանի զեկուցումները, կազմված են բժշկական հանձնաժողովի և գրաշարների առաջարկությունները: Այս հարցի մանրամասներին կարելի է ծանոթանալ հիշյալ «Տեղեկագրի» էջերում:

Այս բոլոր զեկուցումներից ու ընթերցումներից հետո կազմվել է ուղղագրության համադրական աղյուսակ, որը և քվեարկվել է հանձնաժողովում երկու անգամ: Ավելորդ չենք համարում հիշյալ տեղեկագրում տպագրված քվեարկության աղյուսակը ներկայացնել ընթերցողներին:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովի լրիվ կազմը եղել է 11 հոգուց՝ Հ. Աճառյան, Թ. Ամիրջանյան, Ա. Բաբախանյան (Լեո), Գ. Լեոնյան, Ա. Խաչատրյան, Ս. Կանայան, Ս. Հակոբյան, Գ. Ղափանցյան, Ս. Մալխասյան, Հ. Մանանդյան, Շիրվանդադե: Առաջին քվեարկությունը կատարվել է մարտին, երկրորդը՝ մայիսին: Քաղաքից բացակա լինելու պատճառով առաջին քվեարկությանը չի մասնակցել Շիրվանդադեն, երկրորդին՝ Ս. Մալխասյանը, քվեարկողների թիվը երկու դեպքում էլ եղել է 10:

№	Առաջարկներ	Առաջին քվեարկությանը դեմ են եղել	Երկրորդ քվեարկությանը դեմ են եղել
	1	2	3
I. Եվրոպական Ե հնչումը			
1. Բառակազմի գրել է և ոչ թե ե, ինչպես՝ էջ, էութին, էդիսոն	միաձայն	միաձայն	
2. Բառի մեջ, ձայնավորից առաջ գրել է և ոչ՝ եչ, ինչպես՝ բուպէական, մարգարէական, ուշական	Խաչատրյան Հակոբյան Խաչատրյան Հակոբյան	Պաշտոնյան, Հակոբյան, վերջինս է-ն միայն ա-ից առաջ է բնդուհուսմ	Պաշտոնյան, Հակոբյան, վերջինս է-ն միայն ա-ից առաջ է բնդուհուսմ
3. Բառավերջում գրել է. ինչպե՛ս, մարգարէ, դիտէ, դիտէ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ
4. Բայական թիքման ժամանակ՝ հին է-երը պահել, ինչպես՝ գիտէք, դիտէր, գիտց'ք	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ
5. Բարդությունք և ածանցմանք մեջ պահելով ստուգաբանական ճշտությունը՝ գրել է կամ ե, ինչպես՝ վալրէջք, վերելք	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ
6. Այլ դեպքերում բառի մեջ գրել է, ինչպես՝ հանդես, հրավեր, կետ, պոեմա	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ
Մանր.— է-ով գրությունը պահել համաձայն բառերը գանա-գանելու համար՝ սկիւններ, մկմեզ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ	Աճառյան, Պաշտոնյան, Հակոբյան, Ամիրջանյան, վերջինս միջինս միայն գիտէր ձեն է բնդուհուսմ
II. Եվրոպական ye հնչումը			

7. Բառասկզբում գրել է և ոչ թիվ, ինչպես՝ եզ, երկու, եղբայր	միաձայն	միաձայն
III. Եվրոպական օ հնչումը		
8. Բառասկզբում գրել օ և ոչ թիվ, ինչպես՝ օդ, օգուտ, օր . . .	միաձայն	միաձայն
9. Բարդությանց և ածանցմանց մեջ պահելով ստուգաբանական ճշտությունը՝ գրել օ կամ ո, ինչպես՝ անօգուտ, տնօրինեմ, անողորմ, անողորմ, հոգեորդի, Տուտե որդի	Անառյան Խաչատրյան Հակոբյան	Անառյան Խաչատրյան Հակոբյան Շիրվանզադե
10. Բառամիջում այլ դեպքերում գրել ո, ինչպես՝ կոշիկ, Պողոս, կոուպերացիա, կուպիցիա . . . Մանրություն.— Բառամիջում համաձայն բառերը տարբերելու համար օ գրությունը պահել՝ հօր—հոր, աղօտ—աղուտ և նման բառերում .	միաձայն Անառյան, Խաչատրյան, Ղափանցյան, Հակոբյան	միաձայն Անառյան, Խաչատրյան, Ղափանցյան, Հակոբյան
11. Բառավերջում գրել ո, ինչպես՝ քո, այո, Մկո, Սաքո, Կարո .	Լեոն և Լեոնյանը կոզմ են հին ուղղագրությանը	Լեոն, Լեոնյանը և Շիրվանզադեն կոզմ են հին ուղղագրությանը
IV. Եվրոպական օՎ հնչումը		
12. Բառասկզբում գրել օվ և ոչ թիվ, ինչպես՝ օվկիանոս, օվագիս Մանրություն.— Հայերեն օվ բառը գրել օ-ով	միաձայն Անառյանը, Ավդալբեգյանը, Հակոբյանը դեմ են բացառությանը	Շիրվանզադեն, Լեոնյանը կոզմ են հին ուղղագրությանը Անառյանը, Ավդալբեգյանը, Հակոբյանը դեմ են բացառությանը
13. Հունական օմեզա տառը արտահայտել բառասկզբում օ-ով, իսկ վ տառը գրել կամ չգրել ըստ արտասանության, ինչպես՝ Հովսեփ, Քոմաս, Հոռոմ . . .	Լեո, Ղափանցյան	Լեո, Ղափանցյան
V. Եվրոպական օՎ հնչումը		
14. Բառասկզբում գրել օ և ոչ թիվ, ինչպես՝ որսորդ, որդի, ոսկի	Խաչատրյան	Խաչատրյան
VI. Եվրոպական Վ հնչումը		
15. Ամեն դեպքում գրել վ և ոչ թիվ	Լեո, Կանայան, Մա- Լեո, Կանայան, Լե-	

1	2	3
մերթ վ, մերթ ւ, մերթ ու, ինչպես՝ վանկ, վնաս, ավազ, աղ-նիվ, նվաստ, հողաված, «և» փակագրի գործածությունն ընդունել՝ արևելք, տերև, վերև VII. Եվրոպական սյ (ույ) հնչումը 16. Ամեն դեպքում գրել ույ, ինչպես՝ բույս, լույս, կույս, կույր և ոչ թե բոյս, լոյս, կոյր, կույ Մանրություն.— ույ գրությունը կարդալ միշտ ույ (օյ), ինչպես՝ կոյուղի, գոյական, նոյ, խոյ VIII. Յ գրի մասին 17. Յ գիրը բառասկզբում վերածել ճ-ի, ինչպես՝ հաթմար, հդի, հուլիս 18. Բառասկզբում յ-ն դեն գցել, որտեղ կարելի է, ինչպես՝ ետ, առաջ, եսան (թեև համարվում է լեզվական խնդիր) . . . 19. Բառավերջում անձայն յ չգրել, ինչպես՝ վկա, ներկա, ապագա, պաշտոնյա, խոստանա . . . 20. Զգրել ու և ի ձայնավորենշի միջև, ինչպես՝ վկաի, ազգաին IX. Ի գրությունը 21. Ի գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ միութիւն, գիւղ, թիւրք, և ոչ թե՝ միութուն, գյուղ, թյուրք X. Ծա գրությունը 22. Ծա գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ կեանք, մեծութեան, գործունեա, Մամիկոնեան, և ոչ թե կյանք և ալն XI. Ծօ գրությունը 23. Ծօ գրությունը վերածել ռ-ի՝ եոթը, արդեոք, ոչ թե եօթը, արդեօք	նանդյան (ձեռնպահ) Ղափանցյանը և-ն ընդունում է միայն իբրև շաղկապի միածայն Աճառյան Խաչատրյան Ավդալբեգյան Հակոբյան Ավդալբեգյան Ավդալբեգյան Կանայանը (թող մնայ, խոստացայ) Հակոբյան, Խաչատրյան, Մալխասյանց միածայն միածայն միածայն Իանայան	վոնյան, Մանանգյան (ձեռնպահ) Ղափանցյանը և-ն ընդունում է միայն իբրև շաղկապ, ինչպես՝ Լեոն փակագիւր չի ընդունում միածայն Աճառյան, Խաչատրյան, Ավդալբեգյան, Հակոբյան Ավդալբեգյան Ավդալբեգյան Կանայանը նույն կարծիքին է Խաչատրյան, Հակոբյան միածայն միածայն միածայն Իանայան

Այս տախտակից երևում է, որ միաձայն են անցել.

1. բառասկզբում **Ե** հնչյունն արտահայտել է տառով (էջ, էակ),

2. **յԵ** հնչյունն արտահայտել է տառով (Երևան, երեխա, ես),

3. բառասկզբում **օ** հնչյունն արտահայտել **օ** տառով (օդ, օր, օղ),

4. պարզ բառերում **օ** հնչյունն արտահայտել **ո** տառով (կոշիկ, Պողոս, կոռպերացիա, կոալիցիա և այլն),

5. բառասկզբում գրել **օվ**, ոչ **թե՛** **ով** (օվկիանոս, օվագիս),

6. ամեն դեպքում գրել **ույ** (բույս, լույս, կույս, կույր),

7. իւ, եա գրությունները պահել անփոփոխ (դիւղ, միութիւն, կեանք):

Մեկ դեմ են ունեցել՝ բառասկզբում **վո-ի** փոխարեն **ա** գրելու առաջարկը (որսորդ, որդի, ոսկի), և փակագրի գործածության, բառասկզբի **յ-ն** հնարավորին չափով դեն գցելու, բառավերջի անձայն **յ-ն** չգրելու և եօ գրության փոխարեն եո-ն գրելու (եոթ. արդեոթ) առաջարկները:

Հանձնաժողովը որոշում է նաև մերժել լատինաձև տառեր. նոր տեսակի այբուբենն ստեղծելու առաջարկները: Պահել ընդհանրապես հայկական տառերի բնույթը, իրար նմանվող տառերի մեջ որոշ փոփոխություն մտցնել, գեղարվեստական տպագրությունների համար նոր տառանիշեր ստեղծել:

Սակայն հանձնաժողովի այս երկարատև, բազմակողմանի (գիտական, մանկավարժական, տնտեսական-տեխնիկական, բրժըշկական) ու մանրազնին քննությամբ որոշումները, որ կայացել են միաձայն, ոչ մի հետևանք չեն ունեցել: Հուսավորության ժողկոմատը, որի հրամանով է կազմվել ու շուրջ երկու ամիս գործել այս հանձնաժողովն իր ենթահանձնաժողովներով, ոչ մի վճիռ չի կայացրել: Գուցե ժողկոմատը չի՞ սպասել, որ հանձնաժողովի որոշումը նպաստավոր կլինի նոր ուղղագրության համար կամ որևէ մեկը խանգարել է, մեզ համար դա մնում է մութ: Փաստն այն է, որ հանձնաժողովի որոշումը մնում է թղթի վրա, շարունակում է գործել 1922 թ. նոր ուղղագրությունը:

1932 թ. լուսժողկոմատը նորից է անդրադառնում ուղղագրության հարցերին: Առաջարկվում է, օրինակ, բոլոր դիրքերում **օ** հնչույթն արտահայտել **օ** տառով (օրօր, Կաթօ), է հնչույթը՝ է տառով (ցէրէկային, էակ, պողպատէ): Այս մասին գրողների միութիւնում զեկուցում է լուսժողկոմ Դր. Սիմոնյանը: Ա. Բակունցը, Ե. Չարենցը, Մ. Մազմանյանը, արեղյանական ուղղագրությունը համարելով հեղափոխության նվաճումներից մեկը, առաջարկում են

պահպանել այն, վերացնելով նրա «չնչին թերությունները», օրինակ՝ գրելու յեմ, գրելի ձևերի յ-ն³⁷,

Գր. Ղափանցյանը 1933 թ. իր «Մի սխալ ուղղություն մեր լեզվաշինության մեջ» հոդվածում, հենվելով ժամանակակից արտասանության վրա, պաշտպանում է Արեղյանի առաջարկով ընդունված՝ վորակ, վորոշ, վորոնել, վորդի, յերեույթ, յերգում եմ, յերկար ու նման գրությունները և նույնիսկ պահանջում այդ վ-ն ու յ-ն պահպանել նաև բարդության, ածանցման ժամանակ, գրել՝ վատ-վորակ, անվորակ, անվորոշ, անյերեույթ, կյերգեմ (կամ կր յերգեմ), կյերկարեմ: Պահանջում է պահպանել օտարազգի բառերի կրկնակ բաղաձայնները՝ կոլլեկտիվ, կոմմունա և այլն: Ղափանցյանի կարծիքով՝ հետևել ավանդական գրությանը և գրել՝ կերգեմ անորոշ, կոմունա, նշանակում է հագուրդ տալ ռեակցիոն ազգայնական միտումներին³⁸:

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երեսնական թվականների սկզբներին ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահության որոշմամբ կազմվում է ՀՍՍՀ Կենտգործկոմին առընթեր հայկական գրականության լեզվի նորմաների և տերմինաբանության հանձնաժողով՝ հետևյալ կազմով. Լ. Արիսյան (նախագահ), Ե. Զուբար, Մ. Արեղյան, Գ. Աբով, Հր. Աճառյան, Հ. Պողոսյան, Գ. Ղափանցյան, Ա. Տոնոյան, Հ. Գյուլիքեմվիսյան, Հ. Մանանդյան, Ա. Ղարիբյան, Լ. Հովհաննիսյան, Հ. Կարապետյան, Պ. Քալանթարյան, Գ. Սևակ (գիտ. քարտուղար): Հետո լրացուցիչ հրամանով հանձնաժողովում ընտրվել են Սիմոն Հակոբյանը և Արամ Շահվերդյանը³⁹:

1936 թվականի մայիսի 10-ին կայացած նիստին (ներկա են եղել՝ Ա. Եղիազարյան, Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Ա. Ղարիբյան, Սիմակ, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գասպարյան) Գ. Սևակը ներկայացրել է մի շարք բառերի ուղղագրության նախագիծ: Որոշել են հաստատել ներկայացված բառերի հետևյալ ուղղագրությունը՝ այս, այդ, այն, այսպես, այդպես և այլն (էս, էդ և այլն թույլ տալ միայն բարբառը արտահայտելու համար), ճանապարհ, ճամփա (մերժել ճամպա, ճամբա ձևերը), ուժ (մերժել ույժ ձևը), զգուշ. սառույց և այլն (մերժել՝ սառուց, զգուշ ձևերը), ասացի, ասացիր և այլն, թույլատրել նաև ասեցի, ասեցիր և այլն (մերժել՝ ասի, ասավ ձևերը), աշխարհ, աշխարհք (մերժել աշխարք ձևը), վոտք

վոտքեր, նաև՝ վոտ, հեքիաթ (մերժել՝ հեքյաթ, հեքաթ ձևերը), Բաքու (մերժել Բագու ձևը), շնորհ, շնորհք (ոչ՝ շնորք), չեմ գնա (ոչ՝ չեմ գնալ), չեմ գալիս (ոչ՝ չեմ գալի), շոգ (ոչ՝ շոք), երդիկ (ոչ՝ երթիկ), վոչ վոք, վոչ մի (մերժել վոչվոք, ոչմի, վոչոք ձևերը), չոքել (ոչ՝ չոգել), մի քիչ, մի քանի (մերժել միքիչ, միքանի կպած ձևերը), փնտռել (ոչ՝ փնտրել), Համասփյուռ (ոչ՝ Համասփյուր), Վոլոդյա (ոչ՝ Վալոդյա կամ Վալոդիա)։ Ռուսական հատուկ անունների փաղաքշական ձևերը տառադարձել յա-ով, ոչ՝ իա-ով (Սոնյա, Մանյա), գրել բոլշևիկ (ոչ՝ բոլշեիկ), գարթնել (ոչ՝ գարթել)։ մի՛ վախենա (ոչ՝ մի՛ վախենալ), հորեղբայր, աներկյուղ, տասներեք (մերժել՝ հորյեղբայր, անյերկյուղ, տասնյերեք ձևերը), անորոշ, անորակ, անողորմ (ոչ՝ անվորոշ, անվողորմ), թույլատրել միայն անվորակ⁴⁰ ձևը իբրև շատ տարածված ձևի, հագուստ, թաքուն (նաև՝ թագուն), առաջ, առջև, հառաջ, նա չէ, նա չի գալիս, ունեմ (մերժել՝ ունիմ), արեմ, սեմ, բեմեռ (մերժել սե, արե, բեեռ ձևերը), և միացյալ գիրք գրել միայն այն դեպքում, երբ շաղկապ է (նաև, ևս, այլև, ինչևէ), զարդարվի՛ր (ոչ՝ զարդարվի՛), բողկ (ոչ՝ բոխկ), բախտ (ոչ՝ բաղղ)։ Առականների, հեքիաթների մեջ անձնավորված կենդանիների անունները գրել մեծատառով։ Արձանագրությունն ստորագրել են նախագահ Ա. Նղիազարյանը, քարտուղար Գ. Սևակը⁴¹։

Հայաստանի պետական արխիվում պահպանվում է տերմինաբանական հանձնաժողովի 1936 թ. հուլիսի 22-ի նիստի արձանագրությունը՝ գրված գիտնական քարտուղար Գ. Սևակի ձեռքով։ Նիստը վայացել է լուստողկոմ Ա. Նղիազարյանի առանձնասենյակում։ Հրավիրված են եղել՝ Լ. Արիսյան, Դր. Սիմոնյան, Ս. Դավթյան, Մ. Աբեղյան, Հր. Աճառյան, Հ. Գյուլիքեմիսյան, Գ. Ղափանցյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Ղարիբյան, Հ. Պողոսյան, Վ. Կոստանյան, Ն. Մակինցյան, քարտուղարել է Գ. Սևակը։ Քննվել է Հ. Հովհաննիսյանի ներկայացրած բժշկական տերմինների ցուցակը և օտար բառերում փափկեցնող յ-ն օգտագործելու հարցը։

Որոշել են օտար բառերում յ-ն իբրև փափկեցման նշան և ձայնակապ չգործածել, գրել՝ պոետ, ալումին, ռեժիսոր, դիրիժոր և ոչ՝ պոյետ, ալյումին, ռեժիսյոր, դիրիժյոր։ Աբեղյանի բացակայության պատճառով որոշել են այս մասին հարցում անել նրան, եթե համաձայն է, համարել ընդունված և գործադրել⁴²։

1940 թ. օգոստոսի 15-ին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը հաստատում է տերմինաբանական նոր կոմիտեի կազմած նախագծով լուստողկոմի առաջարկությունը՝ հայերենի ուղղագրության մեջ մասնակի փոփոխություն մտցնելու մասին⁴³։ Որոշման

ներածական մասում ասված է, թե կոմիտեն արձանագրում է, որ 1922 թ. ընդունված նոր ուղղագրությունը առաջադիմական մի խողոր քայլ էր մեր ավանդական ուղղագրության քարացած անկանոնությունների վերացման և մեր ազգաբնակչության լայնագույն զանգվածներին գրագետ դարձնելու գործի հեշտացման ուղղության մը: Իբրև բարեփոխման նվաճումներ նշված են բառավերջի անձայն յ-ի վերացումը, յ, վ հնչյունների գրության կայունացումը, եա, եօ, իւ տառակապակցությունների փոխարեն յա, յու, յո տառակապակցությունների ընդունումը, պարզ բառերում է-ի փոխարեն ե գրելը: Կոմիտեն արձանագրում է այդ բարեփոխման նաև թերությունները:

1. Նոր ուղղագրությամբ փոփոխություն կատարվեց նաև մեշայբուբենում, գործածությունից հանվեցին է, օ տառերը, որի հետևանքով պարտադիր դարձավ բառասկզբում ե-ին և ո-ին նախորդող յ և վ տառերը գրել:

2. Անտեսվեց ուղղագրության ստուգաբանական պահանջն ու պատմականությունը: Ելնելով սրանցից՝ կոմիտեն որոշում է ազատել այդ ուղղագրությունը ծայրահեղություններից, չափավորել այն՝ վերականգնելով է և օ տառերը: Այդ որոշումով առաջարկվում է մամուլին, հրատարակչություններին, դպրոցներին ու հիմնարկ-ձեռնարկություններին.

1. Վերականգնել հայոց այբուբենի և գրության մեջ «է» և «օ» տառերը, որպես սխալ հանված, գործածելով բառասկզբում իբրև «է» (ռուսերեն Э) և «օ» (ռուսերեն О), օրինակ՝ էպոխա, էվոլյուցիա, օր, օպերա և այլն:

Մանրություն.— Բառամիջում և բառավերջում գործածել միայն «ե» և «ո» տառերը, ինչպես ընդունված է այժմ (տեսնել, ռոպե, բազձ, այո, խելոք և այլն):

2. Ե, ո տառերը բառասկզբում գործածել միայն իբրև յե (ռուսերեն е) և վո (ռուսերեն во), օրինակ՝ ես (ес), երբ (ерб), Եգիպտոս (Египтос), ոսկի (воски), որակ (ворака) և այլն: Իբրև բացառություն ով, ովքեր դերանունները գրելով ո-ով:

3. Բարդ և ածանցաձևեր բառերում պահել ստուգաբանական գրությունը (լուսնոսկի, կեօր, աներես, ամենաէական, չէր և այլն):

4. Յ-ն իբրև ձայնակապ գործածել ա-ից և ո-ից հետո: Օրինակ՝ կայանալ, գոյանալ, նայել, շոյել և այլն:

5. Սահմանել եմ օժանդակ քայի տարբեր ձևերի հետևյալ ուղղագրությունը՝ եմ, ես, է, ենֆ, եֆ, են, էի, էիր, էր, էինֆ, էիֆ. էին, չէր, չէր և այլն:

վերը հիշատակված բոլոր փոփոխությունները Գ. Սևակն առաջարկել է դեռ 1932 թ. իր «Մեր ուղղագրության վերափոխության մասին» հոդվածում («Գր. թերթ», 1932 թ., 10-ր հունիսի):

Այս փոփոխությունը կայացնող տերմինաբանական կոմիտեի կազմում եղել են Բ. Մարտիրոսյանը (նախագահ), Ստ. Զորյանը, Գ. Դեմիրճյանը, Մ. Աբելյանը, Գ. Ղափանցյանը, Գ. Սևակը, Ա. Ղարիբյանը և Ս. Ղազարյանը (գիտնական քարտուղար): Սույն կազմը հաստատվել էր 1939 թ. հոկտեմբերի 22-ի լուսժողկոմատի կոլեգիայի նիստում⁴⁴:

1940 թ. հուլիսի 28-ին լուսժողկոմատի կոլեգիան հաստատում է տերմինաբանական կոմիտեի որոշումը հայոց լեզվում մի շարք փոխառյալ բառեր կիրառելու մասին: Որոշում են հայերեն բառերի փոխարեն գործածել հետևյալ փոխառյալ բառերը՝ պարտիա (ոչ՝ կուսակցություն), ռեսպուբլիկա (ոչ՝ հանրապետություն), սովետ (ոչ՝ խորհուրդ), սեսիա (ոչ՝ նստաշրջան), ռեուլյուցիա (ոչ՝ հեղափոխություն), դեկգացիա (ոչ՝ պատվիրակություն), կոնստիտուցիա (ոչ՝ սահմանադրություն): Սրանց համապատասխան էլ գործածել սրանց բաղադրյալ ձևերը՝ ռեուլյուցիոն, ռեուլյուցիոնացենել, կոնստիտուցիա (նաև հակառեուլյուցիա), ռեսպուբլիկյան ռեսպուբլիկական, անպարտիական, ոչ պարտիական, կոնստիտուցիոնալիստ և այլն⁴⁵: Այս որոշումը օրենքի ուժ է ստանում Մինիստրների սովետի 1940 թ. օգոստոսի 15-ի վերը հիշատակված նիստի հաստատումով:

Այժմ օգտագործվում են մեծ մասամբ հայերեն ձևերը:

Այդ նույն ամսին տերմինաբանական կոմիտեն պարզաբանում է մտցնում վերոհիշյալ տերմինների գործածության մասին: «Սովետ» բառը գործածել Սովետական իշխանության պետական-վարչական օրգանները (ընտրովի) անվանելու համար, իսկ գիտական, ուսումնական և այլ խորհրդակցական հաստատությունները կոչել «խորհուրդ» բառով, օրինակ՝ մանկավարժական խորհուրդ, գիտական խորհուրդ, պաշտ-ավիաքիմի կենտրոնական խորհուրդ և այլն: «խորհուրդ» բառի սովորական իմաստը պահպանել, օրինակ՝ խորհուրդ տալ, խորհրդակցել և այլն: Հայոց լեզվում մնում են՝ հեղափոխել, հեղափոխություն բառերը, իսկ «ռեուլյուցիա» տերմինը պիտի օգտագործել միայն այն հասարակական-պատմական իրադարձությունը նշելու, երբ պետական կյանքում արմատական հեղաշրջում է կատարվում, տապալվում են շահագործողական կարգերը: Պետական ներքին կյանքում կատարված տեղա-

շարժերը, պետական կազմի փոփոխությունը «հեղաշրջել» բառով պիտի արտահայտել («Ուղեցույց», էջ 20—22):

Գիտության, տեխնիկայի, ընդհանուր մշակույթի զարգացման հետ մեծանում է փոխառությունն պահանջը, նորանոր օտար բառեր են մտնում մեր բառապաշար: Սակայն օտարազգի բառերը գրում էին թե՛ ըստ փոխատու լեզվի արտասանության (Ճալստոյ, բալլե-վիզմ, Գոգրլ, Հայնե, իայպցիզ, Յվայզ, Ֆոյերբախ և այլն), թե՛ ըստ գրության (Տոլստոյ, Գոգոլ, Հեյնե, Յվեյզ): Զկա, օրինակ, անդերենի W-ի միասնական տառադարձություն, մերթ գրում են՝ Վաշինգթոն, Վիրսոն, Վիլյամ, մերթ էլ՝ Ուիլյամ, Ուիլսոն, Ուալդ, Ուելս և այլն: Այդպես էլ մի կողմից գրում են Ցիցերոն, Սիցիլիա, ցիբկ, մյուս կողմից՝ Կեսար, կիտրոն, կենտրոն և այլն⁴⁶:

Ահա այդ փոխառությունների գրությունը կարգավորելու համար կոմիտեն որոշում է, թե ե՞րբ կարելի է փոխ վերցնել օտար լեզուներից և ինչպե՞ս տառադարձել: Կոմիտեն հաստատում է տառադարձության հստակալ կարգը⁴⁷:

1. Ռուսերեն Ե-ով (եվրոպական Ե-ով) սկսվող բառերը հայերեն արտահայտել ու տառով՝ ռադիո, ռեակցիա, ռուբլի: Նույնը բառամիջում արտահայտել Ե տառով: Երբ Ե (R)-ն նախորդում է արմատական լ, և հնչյուններին, արտահայտել Ե-ով (Առնոլդ, Բեռլին):

2. Բառամիջում և բառավերջում կրկնակ Ե-ն արտահայտել Ե-ով (Մառ, տեռոր): Ռուսերենից վերցրած բառերում ե և ի ձայնավորներին նախորդող Ե-ն արտահայտել Ե-ով (տեքիտորիա):

3. Հունարեն Յ-ն արտահայտել Բ տառով (Բարսեղ, բարբարոս): Միջին և նոր շրջանում հայերենին անցած բառերում Յ-ն արտահայտել Վ տառով (Վասիլ):

4. Օտարազգի կրկնակ քաղաձայնների դիմաց (պպ, կկ, սս, լլ) հայերենում մեկը գրել (վոմոնիստ, կոլեկտիվ, կլասիկ, ապարատ, ակորդ): Եթե օտարազգի կրկնակ քաղաձայնները հայերենում պարզ լսվում են, պահպանել կրկնակի ձևով՝ մասսա, կասսա, վիլլա և այլն: Բառավերջի վրկնակ քաղաձայնների դիմաց մեկը գրել (Բարբյուս):

5. Օտարազգի Վ-ն (Մե) հայերեն գրել լ տառով, առանց ապաթարցի և փափկացնող յ-ի (ասֆալտ, կուլտուրա, բոլշևիկ): Պահպանել հնուց ընդունված և մեր լեզվում մերված բառերի Պ-ով գրությունը՝ Պողոս, Նիկողոս և այլն: Օտարազգի լա, լու (ռուս. ла, лю) արտահայտել լա, լու տառակապակցություններով՝ լապսուս, տրանսլացիա, լուքսեմբուրգ, ռևոլուցիա, ինչպես նաև՝ բրոշուր. պարաշուտ և այլն⁴⁸:

6. Օտարազգի X, KS (ռուս. КС) արտահայտել էս գրությամբ՝ Մարքս, էքսկուրսիա, տաքսի, քուրսիր և այլն: Բուն ռուսերեն КС-ն տառադարձել կս տառակապակցությամբ (Ակսակով):

7. Հատինական լեզուների K, P, T (ռուս. К, П, Т) տառադարձել կ, պ, տ (կոնվենտ, տերմին, պրոբլեմ և այլն):

8. Օտարազգի հ-ն հայերեն միշտ գրել հ տառով: Հատուկ անունները գրել ըստ ընդունված արտասանության, օրինակ՝ Գերցեն, Անրի Բարբյուս և ոչ՝ Հերցեն, Հենրի Բարբյուս:

9. Օտարազգի О հնչյունը հայերենում բառակզբում արտահայտել о տառով, բառամիջում և բառավերջում՝ ո: Կրկնակ о-ն գրել ո-ով, եթե արտասանությունը պահվում է՝ կոոպերացիա, կոորդինացիա և այլն: Բառակզբում օտարազգի VO-ն (ռուս. ВО) արտահայտել վո տառակապակցությամբ՝ Վոլտեր, Վոլգա, Վորոշիլով, վոկալ, վոլտ և այլն⁴⁹:

10. Բառավերջի ա-ն պահպանել հունա-լատինական ika վերջավորություն ունեցող և հնուց փոխառված բառերում՝ ֆիզիկա, պրակտիկա, դիալեկտիկա: Բառավերջում ադդ ա-ն պահել նաև թեորեմա, դելեմա և նման ձևերում: Առանց ա-ի գրել այն բառերը, որոնք այդպես տարածված են, ինչպես՝ պրոբլեմ, սիստեմ և այլն: Եթե հունական բառը վերցվել է լատիներենից, որտեղ նա ա է ստացել, պահել ա-ն (միոմա, սարկոմա):

11. Հատինական с-ն (կ և ց) հնուց փոխառած բառերում պահպանել հին (կ) տառադարձությամբ՝ կրկես, կենտրոն, կիկերոն և այլն: Նույնը նոր ընդունվող բառերում արտահայտել ց տառով՝ ցինկ, ցիտրուս:

12. Օտարազգի ch-ն տառադարձել ի-ով՝ քիմիկոս, քլոր, քիմիա: Մի քանի տարածված բառերում պահպանել նույն ch-ի խ գրությունը՝ խոլերա, մեխանիզմ, սիսեմա և այլն:

13. Օտարազգի th-ն տառադարձել ք-ով՝ թեորեմա, թատրոն, էսթետիկա, մաթեմատիկա, անթոլոգիա և այլն:

14. Օտարազգի ia (ռուս. ия, я) անշեշտ վերջավորություն ունեցող հատուկ անուններում տառադարձել յա, իսկ երկրների ու աշխարհամասերի անուններում՝ իա: Օրինակ՝ Վոլոդյա, Ասյա, Օֆելյա, Անգլիա, Ասիա, Գերմանիա և այլն: Շեշտ ունեցող ia (ия)-ն տառադարձել իա (Հիա, Մարիա):

15. Անգլերենի on, son վերջավորությունները տառադարձել ոն, սոն, և ոչ՝ ըն, սըն (Նյուտոն, Վիրտոն):

16. Ռուսերեն բառակզբի e-ն արտահայտել ե-ով, իսկ э-ն՝ է-ով (Եֆիմ, Ենիսեյ, էստոնիա):

17. Օտարազգի ph-ն տառադարձել ֆ-ով (ֆոնոգրաֆ): Նույնը

հնուց փոխառյալ բառերում պահել փ գրությամբ (փիլիսոփա, Փիլիպոս)։

18. Հին փոխառություններում թողնել վերջնականկ ես, ու, ուս, իս, իուս գրությունները (Իգնատիոս, Պետրոս, էսփրես)։ Նոր փոխառություններում խուսափել նման գրություններից։ Առհասարակ հատուկ անունները տառադարձել հնարավորության շափով փոխատու լեզվի արտասանության համաձայն։

19. Անգլերեն W-ն տառադարձել վ-ով, ոչ թե ու-ով, օրինակ՝ «Դեյլի վորկեր»։ Միայն մի քանի տարածված բառերում պահել ու-ն՝ Ուելս, Ուալդ, Ուիթման և այլն։

20. Արևելյան լեզուներից հայերենին անցած տերմիններն ու բառերը տառադարձել ըստ տեղական արտասանության՝ Թեհրան, Ղազվին, Ահմադ, Ղուրան, Էֆենդի և այլն։

Կոմիտեն հետազայում այս տառադարձության մեջ մասնակի փոփոխություն մտցրեց՝ նպատակ ունենալով փոխառյալ բառը մոտեցնել փոխատու լեզվի արտասանությանը։ 1953 թ. որոշվեց օտարազգի la, lu (ռուս. ла, лу) հնչյունակապակցություններն արտահայտել լյա, լյու, տառակապակցություններով, գրել՝ ռեուլուցիա, ալյումին, տրանսլյացիա, լյապսուս, ինչպես և բրոշուր և ոչ՝ ռեուլուցիա, ալումին, տրանսլացիա, լապսուս, բրոշուր⁴⁹։

Որոշվեց գրել օբյեկտ, սուբյեկտ՝ նախկին օբեկտ, սուբեկտ ձևերի փոխարեն*։

Չորրորդ կետը, որով հնարավոր է համարվում օտարազգի բառերի կրկնակ բաղաձայնը պահպանել, թե երկար է արտասանվում, նոր սխալների տեղիք է տալիս։ Եթե կրկնակ բաղաձայն գրելը արտասանության հարց է, մեկը արտասանում է Ռուստո, Բոկկաչիո և այդպես էլ գրում է, մյուսն արտասանում ու գրում է Ռուստ, Բոկաչիո։ Այդ պատճառով էլ հանդիպում են Դիկկենս—Դիկենս, Մուսսորգսկի—Մուսորգսկի, Ռուսսո—Ռուսո, Բոկկաչիո—Բոկաչիո (նաև Բոկաչո) զուգահեռ ձևերը։ Նշանակում է պիտի խուսափել քացառություններից։ Օրինակ՝ ի՞նչ կարիք կա բացառություն անել և օտարազգի բառասկզբի VO տառակապակցությունն արտահայտել վո-ով և գրել Վոլտեր, Վորոշիլով, Վոլգա, վոկալ, այն դեպքում, երբ բառասկզբի VO-ն հայերենում արտահայտվում է ո տառով՝ ոհմակ, ռիսկալ, ոգնի, որակ և այլն։ Ինչպես որ գրում ենք Ոստանիկ, կարդում Vostanik, այնպես էլ կգրենք Որոշիլով, ոկալ, Ոլտեր, կկարդանք՝ Vorosilov, vokal, Volter։ Սրանով գրությունն էլ միատեսակ կլինի և կհեշտանա՝ ազատվելով ա-

* Նախագիծը կազմել է է. Աղայանը։

վելորդ բացառությունից: Մանավանդ որ օտարազգի բառերը հայերենի ուղղագրությամբ ենք արտահայտում:

Ինչպես միշտ, այժմ էլ փոխառյալ բառերին տրվում է հայերենի արտասանական և ուղղագրական ձևը, որը, իհարկե, չի բացառում հնարավորության սահմաններում բառը մոտիկ պահելու փոխառու լեզվի արտասանությանը, հատկապես անձնանունները դեպքում: Ռուսերենի միջոցով այլ լեզուներից անցած բառերը ընդունում են ռուսերենի ձևը, հայերենին են անցնում ռուսերենի ձևով, բայց եթե հայերենի լեզվական միջոցները հնարավորություն են տալիս, պիտի ամեն կերպ փոխառյալ բառը մոտիկ պահել փոխառու լեզվի արտասանությանը: Օրինակ՝ ռուսերենը *h* տառ չունի և օտար *h*-ն արտահայտում է *г* տառով, գրում են Гаванна, մենք *h* ունենք և գրում ենք Հավաննա, նրանք գրում են Ганнибал, մենք՝ Հաննիբալ և այլն:

Հաջորդ նիստում կոմիտեն աստիճանաբար ճշգրտում է օտար բառերի տառադարձությունը, վերացնում երկակի գրությունները: Ռուսերեն *жѐ, шѐ, шѐ, чѐ* տառակապակցությունները երկակի գրությամբ էին տառադարձվում, ստացվել էին *խրուչչով—խրուչչվ, կիխաչով—կիխաչել, Տելեշով—Տելեշվ* զուգագրությունները: Կոմիտեի 1955 թ. հոկտեմբերի նիստում Ար. Ղարիբջանի նախագծով որոշվել է սահմանել միասնական գրություն, այդ տառակապակցությունները տառադարձել *ժո, շո, շո, շո* և գրել Хрущев-ը՝ *խրուչչով, Лихачев-ը՝ կիխաչով, Телешев-ը՝ Տելեշով: Պրոֆեսորի նախագծով 1957 թ. մայիսին որոշվում է ռուսերեն ъ-ն տառադարձել ին կապակցությամբ՝ Вьетнам> Վիետնամ, премьер> պրեմիեր, премьера> պրեմիերա, Поволжье> Պովոլժիե, Мольер> Մոլիեր, фелъетон> ֆելիետոն և այլն: Որոշվում է Ճապոնիա—Յապոնիա, Պակիստան—Պակիստան, Տաջիկական (ՍՍՌ)—Թաջիկական (ՍՍՌ), ատլետիկա—աթլետիկա, Բայազետ—Բայազեդ, բացականչել—բացազանչել, պարաշյուտ—պարաշուտ, կոլեջ—կոլեժ, տոննա—տոնն, Վիլյամ—Վիլիամ, Թուրքիա—Թյուրքիա, Թուրք—թյուրք, Թուրքական—թյուրքական զույգ գրություններից ընդունել առաջինները՝ Ճապոնիա, Պակիստան, Տաջիկական (ՍՍՌ), ատլետիկա, Բայազետ, բացականչել, պարաշյուտ, կոլեջ, տոննա, Վիլյամ, Թուրքիա, Թուրք, Թուրքական: Թյուրք բառարմատում չ տառը պահել միայն պան-թյուրքիզմ, Թյուրք-թաթարական, Թյուրքական (լեզուներ) և նման բառաձևերում, որոնք իրենց իմաստով վերաբերում են ոչ միայն Թուրքերին, այլև Թյուրքական ժողովուրդներին ընդհանրապես⁵⁰: Մեր*

կարծիքով՝ միանգամայն ամբլոդդ քացառութիւնն է սա և միայն գրութիւնը դժվարացնող հանգամանք:

Նույն այդ թվին դարձյալ Ար. Ղարիբջանի նախագծով որոշվում է էլեկտր փոխառոյալ արմատով բարդւած բառերում օգտագործել ա հոդակապը՝ էլեկտրակայան, էլեկտրատեխնիկա, էլեկտրացանց, էլեկտրաէներգիա: Եթե բարդութեան բաղադրիչները հաշիւներնում իբրեւ առանձին արմատներ չեն գիտակցվում, ա հոդակապը չի դրվում, օրինակ, էլեկտրոլիզ, էլեկտրիֆիկացիա: Այս բառերը հայերենում իբրեւ պարզ բառեր են գիտակցվում:

Տառադարձութեան մասին տերմինաբանական կոմիտեի 1939 թ. որոշումից շուրջ երեսուն տարի անց, երբ արդեն նկատելի էին փոփոխութիւններ տառադարձութեան մեջ, երբ զգացվում էին հիշյալ որոշման թերի կողմերը, առանձին հոդւածով իր առաջարկութիւններն է անում պրոֆ. Գ. Զահուկյանը⁵¹: Հոդւածում առանձնապէս նշվում է, որ 1. թերի է արեւելյան լեզուներից անունների ու տերմինների տառադարձութեան սահմանում: Անհրաժեշտ է մանրամասն կանոններ սահմանել շինարներից, հնդկերներից, կորեական, վիետնամական լեզուներից կատարւած փոխառութեան տառադարձութեան համար: Օրինակ՝ կորեական շնչեղ խուլերը, որոնց զուգահեռն են հայերեն փ, ք, ֆ, շ, տառադարձվում են ըստ ուսերենի՝ փխ, քխ, ֆխ, շխ (пх, тх, кх, чх), փոխանակ փ, ք, ֆ, շ: Գրում են՝ Փխենյան, Չխուշխոն-Պուկդո (փոխանակ՝ Փենյան, Չունշոն-Պուկդո), հնդկական շնչեղ ձայնեղները պիտի տառադարձել հայերեն բհ, դհ, զհ, ճհ տառակապակցութիւններով, ուստի պիտի գրել՝ բհայ-բհայ, բհիլայի, գհոշ և ոչ թե՝ բխայ-բխայ, բիլիայի, գխոշ:

2. Վերջին ժամանակներս հակում կա օտարազգի բառերի հատկապէս անգլերենի, տառադարձութիւնը մոտեցնել փոխատու լեզվի արտասանութեանը՝ դրանով որոշ չափով շեղվելով տերմինաբանական կոմիտեի այն որոշումից, թե օտարազգի ք, տ, կ-ն տառադարձվում է պ, տ, կ: Անգլիական ք, տ, կ-ն սկսել են արտահայտել փ, ք, ֆ տառերով: Երբեմն ծայրահեղութեան հասնելով, ֆրանսերենի, գերմաներենի ք, տ, կ-ն էլ են փ, ք, ֆ-ով արտահայտում, թեւ սրանց ք, տ, կ-ն շնչեղ չեն: Միտում կա անգլիական ա-ն վ-ի փոխարեն արտահայտել ու տառով: Մյուս կողմից էլ հաճախ ռուսերենի ազդեցութեամբ աղավաղում են անգլերենի հնչույնային համակարգը, բառի արտասանութիւնը, կամ հայերենի փ, ք, ֆ-ի փոխարեն օգտագործում են պ, տ, կ, իսկ վերջինների փոխարեն՝ փ, ք, ֆ, գրում են, օրինակ, էթիկա, փոխանակ էտիկա:

3. Երբեմն տերմինաբանական կոմիտեն շեղվել է իր սկզբ-

բունքից, օրինակ՝ ԵԵ-ն (յԵ-ն) մի դեպքում արտահայտում է ինտառակապակցությամբ (Վիետնամ, պրեմիեր), մյուս դեպքում՝ յե (օրյեկտ, սուբյեկտ)։ Հեղինակն անհրաժեշտ է համարում ի մի բերել տերմինաբանական կոմիտեի որոշումները, վերացնել եղած հակասությունները, միատեսակ դեպքերը համադրել և կայացնել մի ընդհանուր ու կոռ որոշում։

Ելնելով վերը նշված և մի շարք այլ փաստերից՝ հողվածագիրն առաջարկում է տառադարձության ընդհանուր սկզբունքներ ու նորմաներ՝ ընդգրկելով նաև տերմինաբանական կոմիտեի մինչ այդ կայացրած որոշումները՝ որոշ կանոններ փոխելով ու լրացնելով։

Թողնելով, որ այդ կանոններին ընթերցողը մանրամասն ժանոթանա հիշյալ հողվածում, ուզում ենք երկու խոսք ասել նրանց մասին։ Ամենից առաջ տեղին ու ժամանակին է Ջահուկյանը տառադարձության հարցը բարձրացնում և պահանջում ստեղծել մի ընդհանուր որոշում։ Իր առաջարկներում հեղինակն ամեն կերպ ձգտում է տառադարձությունը մոտեցնել փոխատու լեզվի արտասանությանը, ուստի կանոններ սահմանելիս նկատի է ունենում առանձին լեզուների, օրինակ, անգլերենի, չինարենի, հնդկերենի, արտասանական առանձնահատկությունները և յուրաքանչյուրի համար երբեմն առանձին տառադարձություն սահմանում՝ միանգամայն արդարացիորեն քննադատելով այն հեղինակներին, որոնք օտար բառերը տառադարձում են ռուսերենի հնչյունային օրենքներով։ Խրախուսելի է հեղինակի ձգտումը՝ ստեղծել տառադարձության միասնական սկզբունք։ Օրինակ, եթե օտարազգի օ, Ե տառերը տառադարձում ենք հայերենի օ, է տառերի ուղղագրության համաձայն, ապա ՎՕ-ն էլ պիտի տառադարձենք օ-ի ուղղագրության համաձայն, ուստի պետք է օտարազգի ՎՕ-ն բառասկզբում արտահայտել ու տառով, բառամիջում՝ վո (Որոշիլով, Ուտեր, Ոկալ, Կովալսկի, Պետլով)։

Թեև առաջարկություններում շատ են բացառությունները, որը դժվարացնում է գրությունը, կան և խորհելու, քննելու առաջարկներ, բայց հեղինակը արժեքավոր ուղղումներ ու լրացումներ է անում տառադարձության գործող կանոններում։

Գ. Ջահուկյանի այս առաջարկությունների շուրջը «Գրական թերթ»-ը 1972 թ. (№ № 39, 42, 48 և այլն) մտքերի լայն փոխանակություն սկսեց, որը ամփոփվեց 1973 թ. փետրվարին (№ 8) բանավեճի մասնակիցների (Լ. Հախվերդյան, Ն. Մուրադյան, Ռ. Իշխանյան, Խ. Դաշտենց, Գ. Վիրապյան) հողվածներով, որոնք

կրկնում էին իրենց արդեն հրապարակված մտքերը, և Գ. Զահուկյանի եզրափակիչ հոդվածով:

Ինչպես նշում է Զահուկյանը, հիշյալ հոդվածներում երկու ծայրահեղ կարծիք է հայտնվում՝ կամ պահանջվում է ուղեցույց ընդունել առավելագույն չափով փոխատու լեզվի հնչումը, ալն տարածելով նաև հնագույն փոխառությունների վրա, կամ պահպանել ավանդական գրությունը՝ այն տարածելով նաև նորագույն փոխառությունների վրա:

Ճիշտը, սակայն, այն կլինի, որ պահպանենք ավանդույթով ընդունված բառերի ուղղագրությունը, մի սկզբունք, որը վաղուց ընդունված է արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում: Այլ բան է նոր փոխառությունների գրության հարցը: Այս դեպքում էլ ծայրահեղությունը (կա՛մ միայն ըստ փոխատու լեզվի արտասանության, կա՛մ միայն ըստ գրության) սխալ կլինի: Յուրաքանչյուր լեզու ձգտում է օտարամուտ բառերում պահպանել փոխատու լեզվի հնչյունային, արտասանական առանձնահատկությունները բաց իր՝ փոխառու լեզվի, հնչյունային կազմի սահմաններում, այնպես, որ չխախտվի այն: Այդ սկզբունքով էլ մենք պիտի առաջնորդվենք: Եթե հայերենում բնորոշ չէ կրկնակ բաղաձայնների գրությունը, ինչո՞ւ օտար բառերում պահպանենք կրկնակ բաղաձայնները, ինչո՞ւ գրենք կոմմունիստ, կոմմունա: Այս հարցում ճիշտ է տերմինաբանական կոմիտեի վերը հիշատակված որոշումը: Հայերենում վերջին շրջանում զգալի է ռուսերենի միջոցով անցած բառերի քանակը, այդ տեսակետից որոշ դեպքերում պիտի հաշվի առնել նաև ռուսերենի տառադարձությունը:

Տերմինաբանական կոմիտեն աստիճանաբար միօրինակություն է ստեղծում երկակի ուղղագրություն ունեցող բառերի գրությունում:

Միասնական ուղղագրություն հաստատելու հարցում զգալի է Ար. Ղարիբյանի «Հայերենի ուղղագրական նոր բառարան»-ի դերը, որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 1947 թվականին:

1958 թ. որոշումով շուրջ 800 աշխարհագրական տեղանունների և անձնանունների գրություն է ճշգրտվել և սահմանվել նրանց միասնական գրությունը Վ. Փոթեյանի նախագծով⁵¹:

Երկակի գրություն ունեցող բառերում միասնական գրություն է սահմանվում նաև արևմտահայերենում: Ս. Պալյանն իր «Ուղղագրական կանոններ» գրքում (1962 թ.) բերում է հին, հնացած գրությամբ մի շարք բառեր՝ ցույց տալով նրանց նոր, ըն-

դունելի ձևը: Օրինակ՝ բաղխել—բախել, բաղխում—բախում, սպան-
նել—սպանել, սպաննություն—սպանություն, շեզոք—շեզոք, յա-
ւերժ—յաւերժ, փառայեղ—փառահեղ, մանրազնինին—մանրազնին,
անտերունջ—անտերունչ, երբէք—երբեք, քնքոյշ—քնքուշ, սրտա-
կեղէք—սրտակեղեք, դժբաղտ—դժբախտ, նժդէհ—նժդեհ, խոշըն-
դոտ—խոշընդոտ, ուղղեցոյց—ուղեցոյց և այլն:

Նկատի ունենալով, որ արտասանութեան մեջ դեռ հանդի-
պում են կոստյում—կաստյում, կոնֆետ—կանֆետ, պոմիդոր—
պամիդոր, միկրոֆոն—միկրաֆոն, դիրեկտոր—դիրեկտօր, Ռոս-
տով—Ռաստով, Նապոլեոն—Նապալեոն, Խարկով—Խարկով գույգ
ձևերը, որը ազդում է նաև գրավորի վրա, 1963 թ. հուլիսին Հ.
Բարսեղյանի նախագծով սահմանափակում է միասնական գրութիւն և
արտասանութիւն՝ ակորդեոն, կոստյում, կոնֆետ, միկրոֆոն.
մոնտյոր, մորալ, պոմիդոր, պրոպագանդա, բուլշեիկ, սովխոզ, դի-
րեկտոր, պրոֆեսոր, տրակտոր, ռեկտոր, Սևաստոպոլ, Մոսկվա,
Վորոնեժ, Կոսիգին, Վիկտոր, Վիլսոն, Տոլստոյ և այլն:

Խախտվել էր վրացական տեղանունների հայկական ավանդա-
կան գրութիւնը, գրում էին Բաթում—Բաթումի, Բորժոմ—Բորժո-
մի, Ախալքալաք—Ախալքալաքի և այլն, որը հետևանք էր նույն
կոմիտեի անցյալում կայացրած սխալ որոշման: 1960 թ. սեպ-
տեմբերի որոշմամբ Ի-ով գրութիւնը պահպանվում է միայն
Թբիլիսի բառում, որի մասին եղել է կառավարական հատուկ որո-
շում, մնացած վրացական անունները դրվում են առանց վերջնա-
հանգում Ի-ի՝ Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Թելավ, Կարզախ,
Մցխեթ, Սուխում, Սուրամ, Քութայիս և այլն, դրանով վերականգ-
նվում է այդ անունների ավանդական գրութիւնը⁵⁴:

Մեր գրութեան ամենադժվար բնագավառներից մեկը բաղա-
դրյալ հատուկ անունների ուղղագրութիւնն է: Մինչև 1963 թվա-
կանը գործում էր այդ անունների ուղղագրութեան հետևյալ կա-
նոնը.

1. Բոլոր բաղադրիչները սկսել մեծատառով՝

ա) պետութեան անուններում (Սովետական Սոցիալիստական
Ռեսպուբլիկաների Միութիւն),

բ) ռեսպուբլիկաների անուններում (Հայկական Սովետական
Սոցիալիստական Ռեսպուբլիկա),

գ) ինքնավար մարզերի անուններում (Լեռնային Ղարաբաղի
Ավտոնոմ Մարզ),

դ) սովետական պետութեան գերագույն մարմինների անուն-
ներում (ՍՍՌՄ Գերագույն Դատարան),

ե) հանրապետական գերագույն կազմակերպությունների անուններում (Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիա),

զ) եզակի բնույթի պետական բարձրագույն պաշտոնների անուններում (Գերագույն Գլխավոր Հրամանատար),

է) բարձրագույն պատվավոր կոչումների անվանումներում (Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, Սովետական Միության Հերոս),

ը) համաշխարհային եզակի երևույթի կամ կազմակերպության անուններում (Անվտանգության Խորհուրդ, Խաղաղության Պակտ),

2. Մեծատառով սկսել միայն առաջին բառը, մյուսները գրել փոքրատառով, եթե դա պետական կամ հասարակական հիմնարկի անուն է (ՀՍՍՌ Լուսավորության մինիստրություն):

3. Աշխարհագրական անուններում լրացումը գրել մեծատառով, իսկ լրացյալը՝ փոքրատառով (Սև ծով, Մեծ կամ Խաղաղ օվկիանոս),

4. Եթե աշխարհագրական անվան լրացյալը հատուկ անուն է, երկուսն էլ սկսվում են մեծատառով (Մեծ Պարնի, Նոր Արաբկիր, Հին Հունաստան և այլն)⁵⁵:

Սրանք դեռ լրիվ չեն ներկայացնում քաղաղրյալ հատուկ անունները: Բայց այսքանն էլ բավական է, պատկերացնելու համար, թե որքան դժվար է, մանավանդ դպրոցականի համար, հիշել այդ դեպքերը: Եվ ահա տերմինաբանական կոմիտեն 1957 թվականին հրապարակում է քաղաղրյալ հատուկ անունների ուղղագրության շորս նախագիծ՝ լսելու հայ մտավորականության խոսքը: Առաջին նախագծում առաջարկվում է⁵⁶:

Ա. Քաղաղրյալ անվան բոլոր բառերն սկսել մեծատառով.

1. պետությունների ընդարձակ և համառոտ հատուկ անուններում: Օրինակ՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկանների Միություն, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկա, Հունգարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկա, Սովետական Հայաստան, Սովետական Միություն: Ավտոնոմ (ինքնավար) հանրապետությունների անուններում (Բուրյատ-Մոնղոլական Ավտոնոմ Ռեսպուբլիկա, Նախիջևանի Ավտոնոմ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա և այլն):

2. Սովետական Միության և միութենական ռեսպուբլիկանների պետական ու պարտիական գերագույն օրգանների և ժողովրդագեմոկրատական երկրների պարտիական գերագույն մարմինների հատուկ անուններում: Օրինակ՝ Գերագույն Սովետ, Ազգություններ

Սովետ, Մինիստրների Սովետ, Գերագույն Սովետի նախագահություն, Գերագույն Դատարան, Զինաստանի Կոմունիստական Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Քաղաքական Բյուրո և այլն:

3. Անհատական բնույթ կրող գերագույն պաշտոնների և պատվավոր կոչումների հետևյալ անուններում՝ Գերագույն Գլխավոր Հրամանատար, Գերագույն Դատախազ, Մարշալ, Հերոս և այլն:

4. Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, պրոֆմիտիթենական և հասարակական մարմինների հատուկ անուններում: Օրինակ՝ Պրոֆեսիոնալ Միությունների Համաշխարհային Ֆեդերացիա, հաղաղության Կողմնակիցների Համաշխարհային Կոնգրեսի Մշտական Կոմիտե, Միավորված Ազգերի Կազմակերպություն, Անվտանգության հորհուրդ և այլն:

Բ. Միայն լրացումներն սկսել մեծատառով, լրացուցիչները գրել փոքրատառով.

1. աշխարհագրական և աստղագիտական հատուկ անուններում (Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս, Մեծ Արջ համաստեղություն),

2. Սովետական Միության Կոմունիստական պարտիայի⁵⁷ և ժողովրդական դեմոկրատական երկրների պարտիաների անունները (ՍՍՌՄ Կոմունիստական պարտիա, Լեհաստանի Միացյալ Բանվորական պարտիա, Զինաստանի Կոմունիստական պարտիա և այլն),

3. համաշխարհային նշանակություն ունեցող պայմանականորեն եզակի անցքերի բաղադրյալ հատուկ անուններում (Հայրենական Մեծ պատերազմ, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիա),

4. շքանշանների անվանումներում, բացի «շքանշան» և «աստիճան» բառերից (Կարմիր Աստղի շքանշան, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան, Երկրորդ աստիճանի Փառքի շքանշան և այլն): Եթե շքանշանի անունը տրվում է չակերտներով, մեծատառով սկսվում է առաջին բառը «Պատվո նշան» շքանշան):

Գ. Միայն առաջին բառն սկսել մեծատառով.

1. Սովետական Միության, ռեսպուբլիկանների մինիստրությունների, նրանց գերատեսչությունների, գիտահետազոտական հիմնարկների, գրադարանների և այլ ռեսպուբլիկանների հաստատությունների հատուկ անուններում (օրինակ՝ Երևանի Պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Հայկ. ՍՍՌ Լուսավորության մինիստրություն, Պետական հանրային գրադարան, Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիա և այլն),

2. Ժողովրդա-դեմոկրատական երկրների և արտասահմանյան այլ պետությունների պետական բարձրագույն հաստատությունների, հիմնարկների ու կազմակերպությունների հատուկ անուններում (Հնդկաստանի Ժողովրդական պալատ, ԼԺՄ Պետական խորհուրդ, Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ժողովրդական ժողով): Արտասահմանյան երկրների պետական բարձրագույն հաստատությունների և պարտիաների օտարալեզու անունները գրել փոքրատառերով (գոմինդան, լեյբորիստների պարտիա, ռեսպուբլիկականներ, մեջլիս, պառլամենտ),

3. չակերտներում առնված գրական երկերի, լրագրերի, ամսագրերի, հիմնարկ-ձեռնարկությունների անուններում («Մեծ տան զավակները», «Փարիզյան կոմունա» կոլտնտեսություն, «Մուրճ ու մանգաղ» գործարան),

4. ռեդյուցիոն տոների և նշանավոր թվականների հատուկ անուններում (Մայիսի մեկ, Նոր տարի, Կանանց միջազգային օրը): Բաղադրյալ աշխարհագրական անուններում մեծատառով են գրվում փոխաբերական իմաստով գործածված անունները (Կրիվոյ Ռոգ, Յասնայա Պոլյանա, Կարմիր Հովիտ, Մեծ Արջ, Մեծ Շուն համաստեղություն):

Դ. Բաղադրյալ հատուկ անունների տառային հապավումները գրել մեծատառով (ՍՄԿՊ, ՀԼԿԵՄ, ՍՍՌՄ և այլն), իսկ բառամասերից բաղկացած հապավումների միայն առաջին բառը (Հայմատառ, Պետպլան):

Ե. Սույն որոշումը չի տարածվում դիվանագիտական թղթերում գործածված հատուկ անունների վրա, նրանք ունեն հատուկ ուղղագրություն:

Մյուս երեք նախագծերը առանձին տարբերություններով կրրկրնում են այս առաջինը: № 2 նախագծում առաջարկված է միայն պետությունների անունների բոլոր բառերն սկսել մեծատառով, մնացած անունների՝ ինքնավար հանրապետությունների, մարզերի, գերագույն մարմինների, հիմնարկների, կոչումների և այլն, միայն առաջին բառն սկսել մեծատառով, այդ թվում և նրանցից կազմված հապավումները: Այստեղ մի ծայրահեղություն էլ կա՝ եթե հիմնարկ-ձեռնարկության տեղը չի նշված, պիտի սկսել մեծատառով, օրինակ՝ Երևանի պետական համալսարան, բայց՝ Պետական համալսարան, Հայկական ՍՍՌ լուսավորության մինիստրություն, բայց՝ Լուսավորության մինիստրություն: Երրորդ նախագիծում առաջարկված է փոքրատառ գրել երկրորդ բաղադրիչը նաև Մեծ արջ, Կրիվոյ ռոգ և նման անուններում: Զորքորդ նախա-

